Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5142

059
Թ - 83

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

| | | | | |
|---|---|---|---|---|
| 092 | 26/II 38 | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

.10

[illegible]2001

059
P-83

Ե. ԹՈՓՉԵԱՆ

529
25-ԹՈ

# ԼՈՅՍ

պատկերազարդ օրացոյց հանդէս

## 1904

ԹՈՒԱԿԱՆԻ

Տեղեկատու, վիճակագրական, առողջապահական, գրականական,
գիտական, գեղարուեստական եւ այլ յաւելուածներով:

1002
9387

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

9803

Тифлисъ.
Типографія „Вереичевъ и Каменмахеръ". Михайловскій просп., № 81.
1903.

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го апрѣля 1903 г.

80693

9-176-89

# ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ:

Շատ անգամ կրկնուած ճշմարտութիւն է, թէ գրականութիւնը ընթացիկ հասարակական կեանքի հայելին է, որը իր մէջ արտացոլացնում է նրա պէս-պէս երևոյթները, բազմազան ելևէջները: Որքան զարգացած և կուլտուրապէս բարձր է մի ժողովուրդ, նոյնքան բարձր է լինում նրա գրականութիւնը՝ թէ որակի և թէ քանակի կողմից: Որքան հասունացած է ընթերցող հասարակութեան գիտակցութիւնը, նոյնքան մեծ աջակցութեամբ է նա հետևում գրական պէս-պէս երևոյթներին և կարողանում է ըստ արժանոյն գնահատել նրա լաւ ու վատ հոսանքները:

Եւ այդպիսի հոսանքները մի ընդհանուր օրէնք են կազմում ամեն ազգերի, ամեն լեզուների համար: Բայց երջանիկ է այն հասարակութիւնը, որ աւելի վաղ, աւելի ուժեղ թափով է սկսում կռուել գրական վնասակար հոսանքների դէմ:

Ո՞րոնք են այդ հոսանքները: Այդ հարցին մանրամասնօրէն պատասխանելը մեզ շատ հեռուն կը տանէր, ուստի կանգ առնենք միայն այն կէտի վրա, որ անմիջական կապ ունի ներկայ հրատարակութեան հետ, որ մասամբ չարժաւիթ է եղել նրա երևան գալուն: Օգտուել հասարակութեան թոյլ կողմերից, շոյել նրա ստոր հակումները, ամրապնդել տգիտութեան ցանցերը և այդ բոլորը շահագործել սեփական նպատակների ու նիւթական օգտի համար—ահա այդ կէտը, որ իբրև մի չարիք միշտ հալածանքի է ենթարկուել իր կոչման բարձրութեան վրա կանգնած մամուլի կողմից:

Մեզանում այդ չարիքը ամենամեծ չափով արտայայտուել է մեր օրացոյցային գրականութեան մէջ: Իսկապէս օրացոյցը մի այնպիսի հրատարակութիւն է, որ ամենահեշտ միջոցով, ամենակարճ ժամանակում կարող է տարածուել շատ ու շատ լայն շրջաններում: Հէնց այդ պատճառով բարեխիղճ և ձեռնհաս հրատարակիչը օգտակար յաւելուածներ դնելով նրա մէջ, կարող էր օրացոյցը դարձնել կրթական մի ազդու գործօն՝ ժողովրդի մէջ գիտութեան լոյս և անհրաժեշտ տեղեկութիւններ տարածելու համար: Դժբաղդաբար այդպէս չէ մեզանում: Մեր «օրացոյցաբանները» այդպէս չեն անում, այլ ընդհակառակը՝ իրանց հրատարակութիւնների միջոցով տարածում են ժողովրդի մէջ այնպիսի նիւթեր, որոնք ամենայն իրաւամբ կարող են մտաւոր-բարոյական թոյն համարուել: Եւ այդ անում են մի խեղճ ու կրակ ժողովրդի մէջ, որ ամենից աւելի ծարաւ է գիտութեան, ամենից աւելի կարիք ունի գրական մաքուր խօսք լսելու:

Թերթում էք օտար լեզուներով օրացոյցները և գտնում նրանց մէջ պարունակուած օգտակար նիւթերը կարդալով. վերցնում էք հայերէն լեզուով օրացոյցները և նրանց յաւելուածները կարդալով, գալիս այն եզրակացութեան, որ հրատարակիչները կարծես նպատակ են դրել՝ տգիտութեան աւելի թանձր քօղով ծածկել միամիտ ժողովրդի մտաւոր հորիզոնը և սիստեմատիկ կերպով ամրացնել նրա սնոտիապաշտութիւնը, նախապաշարմունքն ու կուլտուրական յետամնացութիւնը: Ի՞նչեր են ասում

այդ յաւելուածները.—շատ պէս-պէս բաներ: Դրանք գալիս են ընթերցողին գուշակելու, որ յուլիսի 29-ին եղանակը լինելու է «անախորժ, անձրևային և ձիւնոտ, որոտումն և մթնդած», որ օգոստոսի 28-ին լինելու է «փայլումն արեգական» և այլն և այլն: Բայց դա միայն «օդոց գուշակութիւններն» են[1]). կան աւելի նշանաւորները. օրինակ «Երազահանը, որ հաւատացնում է ընթերցողին [2]), թէ երազում «ականջը աղջիկ է», «աղջիկ ծոցում տեսնելը խնդութիւն է», «այծ տեսնելը ճանապարհ է», «բարև տալը կռիւ է», «բահը լեզու է» «էշը նեղութիւն է», «չամիչը շատ վնաս է», «սխտոր բարի է» և այլն և այլն[3]): Պակաս նշանաւոր չէ և «վիճակարանը»: Մենք վրդովվում ենք, երբ գիւղում կամ քաղաքների յետ ընկած թաղերում ճարպիկ «ֆալճիները» տնից տուն շրջելով, խաբում են ժողովրդին, փող են դուրս կորզում և փոխարէնը «գիր բաց անում», «ապագան գուշակում»: Դատապարտելի է դա և ակներև խաբեբայութիւն, բայց չնայելով դրան՝ մեր օրացոյցարանները առանց խղճի խայթի, գրական խօսքի միջոցով նոյնն են անում իրանց «վիճակարանով» կամ ինչպէս իրանք են անուանում՝ «պարապ ժամերի զուարճալիքով» [4]), պատասխանելով, թէ ընթերցողը «Ե՞րբ բաղդաւոր կլինի», «ո՞վ է նրան վնասողը», «աջող կլինի՞ ձեռնարկած գործը», «կհարստանա՞յ արդեօք», «ե՞րբ կամուսնանայ» և այլն և այլն:

Կարելի էր առաջ բերել և ուրիշ նոյնանման զոհարներ այդ հրատարակութիւնների յաւելուածներից, բայց կարծում ենք նմուշի համար եղածն էլ բաւական է:

1) Ե. Գուլամիրեանց. «Օրացոյց 1903 թ.»:

2) Տես Կ. Եփինեանցի (1902 թ.) և Զմշկեանցի (1903 թ.) օրացոյցները:

3) Երազների գիտ. բացատրութիւնը տես «Լոյս» գրվ. օրացոյց 1904 թ. բժ. Բուդաղեանի յօդ.՝ «Ի՞նչ է երազը»:

4) Կ. Եփինեան. «Միրակ» օրացոյց 1903 թ. եր. 221.

Դրանց հետ միասին պատահում են, իհարկէ, և օգտակար նիւթեր, բայց դրանք այնքան չնչին են, այնքան աննշան, որ բոլորովին նըսեմանում են սնոտիապաշտութիւն և նախապաշարմունք տարածող յաւելուածների առաջ:

Այդ դառն իրողութիւնը վաղուց արդէն գժգոհութեան և բողոքի ձայներ է դուրս քաշել ընթերցող հասարակութեան կողմից, վաղուց արդէն ենթարկուել է անաչառ քննադատութեան յարձակումներին, բայց և այնպէս չարիքը դեռ չէ վերացել, օրացոյցների «թոյն յաւելուածները» դեռ շարունակում են իրանց գոյութիւնը, իսկ նրանց հեղինակ—հրատարակիչները արդարանալու համար բացականչում են, թէ այդպիսի նիւթեր տալիս են, որովհետև ինքը ժողովուրդն է պահանջում *):

Որպիսի ժողովրդասիրութիւն: Բայց չէ որ այդպիսի պահանջը միամտութիւնից ու տգիտութիւնից է բղխում, չէ՞ որ որոշ համոզմունք ունեցող գործիչը երբէք չի շարժուի, չի գործէ ամբոխային պահանջի համեմատ, այլ միշտ բարձր կպահէ իր բռնած դրօշակը: Հիւանդի մօտ կանչուած բժիշկը կատարելու է ոչ թէ հիւանդի պահանջը, այլ այն, ինչ որ գիտութիւնն է թելադրում, ինչ որ փորձառութիւնն է պահանջում: Նոյնն է անելու պարտաճանաչ գրողը—հրատարակիչը, եթէ նա ուզում է բուժել ժողովրդի մտաւոր ու բարոյական վէրքերը, եթէ ուզում է կանգնել իր կոչման բարձրութեան վրա:

Բայց ի՛նչ... Մեր ժողովուրդը գիրք չունի, դպրոց չունի և միշտ օգնութիւն է աղերսում, իսկ մեր օրացոյցները, որ ամենատարածուած հրատարակութիւններն են, նրան հացի փոխարէն քար են առաջարկում, ձկան փոխարէն—օձ... Եւ այդ բանը կրկնւում է իւրաքանչիւր տարի, պարբերաբար:

Ահա այդպիսի դառն իրողու-

*) Տես Մ. Զմշկեանի «Օրացոյցը»:

թիւնն էր, որ մեզ ստիպեց օգնութեան կանչել մեր մի շարք գրողներին ու մասնագէտներին և միահամուռ ուժերով հրատարակել «Լոյս»՝ սեղանի, պատի և գրպանի օրացոյցները, որոնց բուն նպատակն է՝ գիտութեան լոյս սփռել ժողովրդի խաւար խաւերում, օգտակար ու անհրաժեշտ գիտելիքներ տարածել հասարակութեան լայն շրջաններում և ընթերցանութեան օգտակար նիւթ մատակարարել...

Այդ նպատակին հասնելու համար մենք չենք խնայել ոչ ջանք և ոչ նիւթական միջոցներ, բոլոր երեք հրատարակութիւնները պատկերազարդել ենք յատուկ պատրաստել տուած նկարներով, իսկ բովանդակութիւնը դասաւորել ենք այնպէս, որ օրացոյցների իւրաքանչիւր տեսակը առանձին վերցրած մի ամբողջութիւն կազմէ և միևնոյն ժամանակ ցանկալի ու օգտակար լրացուցիչ լինի միւս երկուսի համար:

Իր բովանդակութեամբ ու արտաքինով սովորական օրացոյցներից մեծ չափով տարբերւում է մեր սեղանի օրացոյց-հանդէսը, որ իսկապէս մի ընդարձակ ժողովածու է: Այդ ուղղութեան հրատարակութիւններ շատ կան օտար լեզուներով և մենք մեր ձեռքի տակ ունեցել ենք դրանցից ամենայայտնիներն ու լաւագոյնները — (Գերմաներէն՝ պրոֆ. Կիւրշների, պրոֆ. Իւրաշէկի, պրոֆ. Հիլմանի, Մէյէրի, «Daheim»-ի, «Gartenlaube»-ի, Ռուսերէն՝ Սուվորինի, Գօպպէի, Կոնդրատենկօի, Ֆրանսերէն՝ Հաշետի, «Մեխիօներական ընկ.» հրատարակութիւնները, «Le bon almanach», «Almanach Romand» և այլն):

Բացի այդ բոլորից օգտուել ենք նաև ուրիշ նորագոյն հրատարակութիւններից ու լրագրական տեղեկութիւններից, մի շարք նիւթեր վերցրել ենք անմիջական աղբիւրներից և առհասարակ ամեն ջանք գործ ենք դրել, որ «Լոյսի» հաղորդած տեղեկութիւնները լինեն թարմ ու ճիշտ:

Ցանկանալով հայ ընթերցողներին որոշ չափով կապել եւրոպական գիտական-հասարակական հոսանքների հետ և արձագանք տալ ընթացիկ հարցերին, զետեղել ենք մի յատուկ բաժին «Հանրագիտարան» վերնագրով, որի մէջ տարեցտարի տալու ենք հակիրճ, կօնսպեկտիւ յօդուածներ գիտութեան զանազան ճիւղերի կամ գիտական մասնակի հարցերի մասին: Բայց որովհետև այդպիսի հոսանքներից ֆեմինիզմը — կանանց շարժումը — մի առանձին արժէք ու նշանակութիւն ունի և որովհետև հայ կանանց փոքրիկ շրջանում էլ արդէն սկսուել են այդպիսի շարժման առաջին նշանները, ուստի մի յատուկ բաժին ենք բաց արել «Կանանց հարցի շուրջը» վերնագրով, որ տարեցտարի արձանագրելու է այդ շարժման նորանոր երևոյթները և այդպիսով դառնալու է հայ կանանց մի փոքրիկ օրգան՝ իրանց ազատագրական շարժումն առաջ մղելու և աւելի ու աւելի լայն ծաւալ տալու համար:

«Լոյս»-ի միւս բաժինների մասին առանձին առանձին խօսելը մեզ շատ հեռուն կը տանէր. նկատենք միայն այսքանը, որ նրանց մէջ միշտ աշխատել ենք մեծ տեղ տալ այն ամենին, ինչ որ հայ ժողովրդին, նրա հայրենիքին, տնտեսական-սօցիալական դրութեանն է վերաբերում, ինչ որ կապ ունի նրա անցեալի ու ներկայի, նրա գրականութեան ու կրթութեան հետ:

Այդ ամենն իրագործելու համար մենք շատ դժուարութիւնների ենք հանդիպել, շատ ժամանակ ու աշխատանք ենք գործ դրել, բայց և այնպէս դեռ հեռու ենք այն մտքից, թէ մեր հրատարակութիւնները հէնց առաջին անգամից մի կատարելատիպ են ներկայացնում: Ապագայում անելու դեռ շատ բան է մնում և մենք ոչ մի ջանք խնայելու չենք տարեցտարի աւելի ու աւելի չքեղացնելու և հարստացնելու այդ գործը:

Ե. Թ.

«ԼՈՅՍ»

# ՏԱԽՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ

## 1904 Թ. *)

### ՅՈՒՆՈՒԱՐ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | **6** | 7 | 8 | 9 | 10 |
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 |

### ՓԵՏՐՈՒԱՐ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | **6** | **7** |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 29 | | | | | | |

### ՄԱՐՏ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | **25** | **26** | **27** |
| **28** | **29** | **30** | 31 | | | |

### ԱՊՐԻԼ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | **23** | 24 |
| 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | |

### ՄԱՅԻՍ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | **6** | 7 | 8 |
| **9** | 10 | 11 | 12 | 13 | **14** | 15 |
| **16** | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| **23** | 24 | **25** | 26 | 27 | 28 | 29 |
| 30 | 31 | | | | | |

### ՅՈՒՆԻՍ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 27 | 28 | **29** | 30 | | | |

### ՅՈՒԼԻՍ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | **22** | 23 | 24 |
| 25 | 26 | 27 | 28 | **29** | 30 | 31 |

### ՕԳՈՍՏՈՍ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | **6** | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23 | 24 | **25** | 26 | 27 | 28 |
| **29** | **30** | 31 | | | | |

### ՍԵՊՏԵՄԲԵՐ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | 6 | 7 | **8** | 9 | 10 | 11 |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| **26** | 27 | 28 | 29 | 30 | | |

### ՀՈԿՏԵՄԲԵՐ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **1** | 2 |
| 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | **21** | **22** | 23 |
| 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 31 | | | | | | |

### ՆՈՅԵՄԲԵՐ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| **21** | **22** | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 28 | 29 | 30 | | | | |

### ԴԵԿՏԵՄԲԵՐ

| Կր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ու. | Շբ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | **6** | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| **26** | **27** | 28 | 29 | 30 | 31 | |

*) *Ծանօթութիւն. Սև թւանշանները ցոյց են տալիս շաբաթուայ այն տօները, երբ պետական ատեաններում ու դպրոցներում պարապմունք չի լինում—* (неприсутственные дни).

## 1904 (ՆԱՀԱՆՋ) ԹՈՒԱԿԱՆԻՆ

Գիր տարւոյն . . . . . . . . . . ԸԷ
Եօթներեակ . . . . . . . . . . ԴԵ
Վերադիր . . . . . . . . . . . ԻԴ (24)
Իննևտասներեակ . . . . . . . 3
Տանուտէր . . . . . . . . . . Խեցգետին

Բուն ձայնքն ձախակողմեան դասուն են (աձ. բձ. գձ. դձ.) սկսեալ ՚ի բուն բարեկենդանէ։

### ՏԱՐԵՄՈՒՏՔ

Ազարիայի Ժ2 Թ. (289) մարտի . . . 21
Հայոց Ցայսմ և Տօմ. ՌՅԾԳ օգոստ. . 11
Հայոց բուն Թուականի 4396 » . 11
Մահմեդականաց 1322 ապրիլի . . . . 16
Հրէից 5663 սեպտեմբ. . . . . . . . 12
Նոր տօմար 1905 դեկտեմբ. . . . . . 19

—

### Շարժական տօները եւ միջոցները

**Օր Ծննդեան եւ Յայտնութեան Ք.Ջ.**
Միջոց ուտիք աւուրք . . . . . . . 13
Յառաջաւորաց բարեկենդան . յունվ. 18
Բուն բարեկենդան . . . . . փետր. 8
Օր Տեառնընդառաջի . . չրթ. փետր. 14
**Զատիկ** . . . . . . . . . . մարտ 28
Երևման Խաչի . . . . . . . . . ապր. 25
Համբարձումն . . . . . . . մայիս 6
Հոգեգալուստ . . . . . . . . մայիս 16
Բարեկենդան Ս. Լուսաւորչի պհց. յունիս 6
**Վարդավառ** . . . . . . . . յուլիս 4
Միջոց չաբաթք պահօք վեց չաբ. . . (6)
**Վերափոխ. ս. Աստուած** . օգոստ. 15
Միջոց չաբաթք պահօք չորս . . . (4)
**Ս. Խաչ** . . . . . . . . . սեպտ. 12
Բարեկենդան Վարագայ խաչի . սեպտ. 19
Միջոց ուտիք չաբաթք ութը . . . . (8)
**Գիւտ Խաչ** . . . . . . հոկտ. . . 24
Բարեկենդ. Յիսնակի . . . նոյեմբ. . 21
Բարեկ. Ս. Յակովբայ պահ. . դեկտ. . 12
Միջոց ուտիք աւուրք . . . . . . . (10)
Բարեկենդան Ծնընդ. պահոց. Չորեքշաբթի։

——

### Կայսերական տօներ

23 ապրիլ—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսրուհի Ալէքսանդրա Թէօդորովնայի։

6 մայիս—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկօլայ Ալէքսանդրովչի։

14 » —Թագադրութիւն Ն. Կ. Մ. Նիկօլայ Ալէքսանդրովչի և Ալէքսանդրա Թէօդորովնայի։

25 » —Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսրուհի Ալէքսանդրա Թէօդորովնայի։

22 յուլիս—Անուանակոչութիւն Այրի Թագուհի Մարիա Թէօդորովնայի։

21 հոկտ. Գահակալութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկօլայ Ալէքսանդրովչի։

14 նոյեմբ.—Ծնունդ Ն. Կ. Մ. Այրի Կայսրուհու Մարիա Թէօդորովնայի։

22 » Ծնունդ և Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Թագաժառանգ Միխայիլ Ալէքսանդրովչի։

6 դեկ.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկօլայ Ալէքսանդրովչի։

—

### Պսակի խորհուրդը արգելում է

Իւրաքանչիւր չորեքշաբթի (երեքշաբթի լոյս չորեքշաբթի) ուրբաթ մտին-(հինգշաբթի լոյս ուրբաթ) և կիրակնամտին (շաբաթ լոյս կիրակի)։ Տէրունական տօների նախընթաց երեկոներին։ Այն կիրակի գիշերները, որոնց հետևեալ օրը սրբոց տօն չի կատարւում։ Ծննդեան ութօրէից ընթացքում։ Ճարաթական պասերի, ամբողջ մեծ պասի և յինանց օրերի ընթացքում, մինչև Յարութեան առաջին կիւրակին (Նոր կիրակի)։ Վարդավառի 3 օրերը։ Վերափոխման 9 օրերը և ս. Խաչի ամբողջ շաբաթը։

—

### Տարուայ չորս եղանակների սկիզբը.

Գարունն սկսւում է Մարտի 8-ին.

Ամառն ,, Յունիսի 9-ին.

Աշունն ,, Սեպտ. 11-ին.

Ձմեռն ,, դեկտ. 9-ին։

——

# ՁՄԵՌ։

Ձիւն ձմեռ։ Երկու կարճ խօսք ասա՝ ու երեք չորս երկար ու ձիգ ամիսներ մտիր տունդ, դուռը պինդ փակիր, տաք քուրսու տակին, կամ տաւարի շնչով տաք բաղնիս դարձած գոմի օդայումը մի կողքի վրայ ձգուիր, արջի նման երեք քառասունք չըլայ մտիր։

Աշխատանքից փախչող, ծոյլ մարդի աչքը լոյս. ասած է՝ փալընքատին ծուխն էր մնանայ. տարուան եղանակները մեզ չունին, ծոյլը միշտ ծոյլ է. ծոյլը ծոյլ եկել է, ծոյլ ապրել է, ծոյլ էլ պիտի մեռնի. ծոյլը մարդի հաշւում չէ, ծոյլը թէկուզ մինուճար, թէկուզ աղից պահած, աղից մեծացած, բայց աշխարհքի համար ծանր բեռն է։

—Ձիւն ձմեռ. ասում է աշխատանք սիրող երկրագործը և մտքամոլոր տարակուսում։ Ի՞նչ պիտի անենք երեք չորս երկար ամիսներ, տխուր տրտում մտածում է նա, ջանս ցեց է մտել, գործելու սովոր եմ, աշխատել եմ ուզում՝ գործ չըկայ։ Ձիւնն եկել, հողի երեսը պինդ ծածկել է, պարզիկան ու սառնամանիքը կանաչ ու զուարթ ծառերին մերկացրել, չինել են չոր ցախ, ցուրտն ու բուքը իմ աշխատաւոր չորստոնանի ընկեր եզանը, իմ գոմշին, իմ ոչխարին, իմ կթան ու լծկանին կապերի մէջ է կոխել ու չի թողում, որ երկնքի երես տեսնեն, կէս գաղի հաստութիւնով սառուցը մեր գոչգոչան գետերին, մեր կչկչան առուներին պապանձացրել է, գործ չի մնացել՝ գործենք. անելիք չըկայ՝ անենք. ծոյլերի վրայ ծիծաղում ենք, էն օրի ենք հասել, որ ուզենք, չուզենք՝ պիտի մենք էլ ծուլանանք։

Ձմեռ։

—Է՛յ խելքի պտուկ, էդ ի՜նչ ես ասում, յուսահատութեան դուռը հասած ժրաջան ընկերի երեսը քորում, յանդիմանում է նրանից աւելի աշխարհ տեսած մարդամիջի ղոնուած, ծեր պապերի խրատները ականջին գինդ արած մի ուրիշ աշխատաւոր. ախար դու չըգիտես, որ աշխարհքիս դիրքն ու կանոնը բոլորը ստեղծողի կողմից չափած ձևած է, մեռնի՜մ ստեղծողի ողորմութիւնին, ինչ կըլինէր չունչ կենդանու հալը, եթէ ձմեռը չըլինէր։ Տարին 12 ամիս եզը կը դըմանա՞ր, եթէ ինն ամիս լծի ու բեռան տակ չարչարուելուց յետոյ՝ մի երեք ամիս չըհանգստանար, ջըրաղացի քարը, որ պինդ քար է, էն էլ իրար շատ քսուելուց մաշւում է, միս ու արիւնից շինուած մարդ, թէ անասուն, եթէ ձմեռը չըհանգստանային, երկու տարումը կըմաշուէին, ոյժ ու զօրութիւնից կընկնէին ու էլ պէտք չէին գալ։ Ծառ ու թփի, խոտ ու ծաղկի արմատները հողի տակին են, աշնանացան ցորենդ աշնան վերջին մի քիչ կանանչել, փշշել, բարձրացել էր. ցելդ գութանած, թողուած է, թէ որ ձիւնը չըգար, վերմակի պէս Աստծու ստեղծած էդ բոլոր կանանչեղէն ու արմատեղէնը չըծածկէր, ցուրտը սուր ասեղի պէս գետնի սըրտումը կը թաղուէր, ողջը ցըրտատար կանէր. էս օրուայ հաստ ձիւնը թէ որ գարունքը չըհալուէր,

ջուր չըկտրուէր, քո վարած ցելի հետ չըխառնուէր, քո ծառ ու տունկի արմատները չը կակղացնէր—քո ինն ամսուան աշխատանքդ փուչ կըլինէր։

Էսպէս են մտածել մեր խելացի պապերն ու տարուան երեք եղանակի հետ ձմրանն էլ ուրախ ու անտրտունջ դիմաւորել են և ան գործութիւնն անզգալի անելու հեռատես նպատակով՝ մարդի սիրտ ուրախացնող շատ հանդէսներ ու տօներ ձմրանն են թողել։ Հին հայը իր Նաւասարդը—իր հին տարեմուտը ձմրան բերանին՝ հորթա թողի պասովն է սկսել, պասի գըլխին է իր Խըղալի հարիսէն ու կըրկոտը վայելել. Նոր մարդիկն իրանց Նոր-տարին, իրանց կաղանդը ձըմռան են քցել, կախան արած խաղողներ, պահուճի տանձ, խնձոր գեղձ ու սերկեւիլներ, չիր ու փշատ, շուջուխ, ալանի, չոր ու թաց մըրգեր ձմեռուան սառսիկ ցրտին՝ յունվարի մէկին են լոյս աշխարհ գալիս, մեծ ու փոքրի կռուցները քաղցրացնում, աշնան վերջերի նըշանածների հարսանիքներն ու ուրախութիւնները ձմեռն են կատարում, մեր Փրկիչ Յիսուսի Ծընունդը, ուրախ Ջրօրհնէքը, բարեկենդանը, Տրնդէզը (Տեառնընդառաջ) խաշիլ, փոխինձ, մեծ պասի երկուշաբթի օրուան ճլորթու հանդէս, պաս չորհաւորէք, բոլորը-բոլորը հաշւով ու մտածելով ձըմեռն են թողուած։

Դէհ, շտապենք, կրկնում են միմեանց պարզամիտ և աշխատաւէր գեղջուկները, քանի տաքութիւնը հողի մէջ չի մտել, քանի ամբարներս չեն դատարկուել, քանի կարասներիս մէջ կատար տաքացնող Քրիստոսի արիւնը՝ վրան նայելու՝ երեսներիս ծիծաղում է, քանի սալանի կաթը (արաղ) տկերի մէջ լխլխում է, քանի իրար հետ նստել վեր կենալու, սուփրէն բաց անելու, սուփրէն չէն անելու ժամանակ ունինք, Աստծու տուած ազատ օրերից օգուտ քաղենք, Աստծու անունով եկած չքաւորին ու տնանկին կշտացնենք հոգևոր ու մարմնաւոր աշխատաւորներին շահենք ու սըրտերս ուրախ, խղճմտանքներս հանգիստ՝ ուտենք, խմենք, պարենք, երգենք, ամեն խէթ ու նախանձ մեր ներսերից դուրս շպրտենք, որ կարողանանք մեծ պասի երկուշաբթի օրը պարզ սրտով, պարզ երեսով ժամ գնալ, «Լուսաւորուչ սըրբեցարուքը» լսել ու էդ օրուանից սկսել մեր հոգու ճանապարհը մաքրել։ Եւ երբ որ աշխատանքի օրերը կըբացուին. մեր կապած տաւարը դաշտը հանենք, գութանը սարքի քցենք, բահ, հօտոց, կացին, ցաքատ, մանգաղ ու ամեն տեսակ դաշտի ու այգիների գործիքներ սրբենք, սրենք, պատրաստենք, որ ինչ ժամանակ օրը կըգայ բարին հետը՝ երեսներիս խաչ հանենք, մեր հալալ աշխատանքին կենանք։

Եւ ամակտար հողագործն այլևս տխուր չէ. նա ձմեռնամտին իր ձմրան կատարելիք ծրագիրը կազմեց և մինչև գարնանամուտը անթերի կատարեց։

Հմի, ընթերցող, քեզ եմ հարցնում, մեր նկարագրած եղանակից ինչ դուրս եկաւ։

Քո կարծիքը չըգիտեմ, բայց ես եկայ այն հաստատ համոզմանը, որ աշխարհս իւր ամբողջութեամբ կեանք է և տարին իր չորս եղանակներով կեանքի գործօնն է։

Եթէ կասկածում ես, աչքդ ձըգիր ծառերի տերևաթափ ճղներին թառած, ձմրան ցուրտն արհամարող, ձիւնի հիւսերն իւր կիսաբաց մարմնով, իւր ներսում բորբոքուած կրակով լացեցնող, համեստութեամբ երեսից նայող գեղեցկուհուն և նրա գլխավերևից թռչոտող ագռաւ ու տուրտուշներին. մի՞թէ սրանք կեանքի կենդանի նկարագիրը չեն, մի՞թէ սրանք պարզ ապացոյց չեն, թէ ձմեռն էլ կեանք է։

Պէրճ Պռօշեանց

# ՅՈՒՆՈՒԱՐ

31 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Եշ. դձ. գ. օր ծննդ. պահոց: **Տարեմուտ եւ կաղանդ:** Եւս Յ. և Թ., որոց տօն Նաև անուանակոչութեան Տեառն և յիշատակ Բարսղի հայրապետին: | 26 | 14 |
| 2 | Ուր. դկ. գ. օր ծննդ. պահոց: | 27 | 15 |
| 3 | Շբ. աձ. ե. օր ծննդ. պահոց: Սրբոյն Բարսղի հայրապ. և եղբ. նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ Հայրապ. և Սրբոյ Եփրեմի Խուրին Ասորւոյ: | 28 | 16 |
| 4 | ✠ Կիր. ակ. զ օր ծննդ. պահոց: | 29 | 17 |
| 5 | Բշ. բձ. **Ճրագալոյց** ծննդ. Քրիստոսի: Նախատօնակ: Մինչև ամսոյս 13 ամեն օր նախատօնակ: ☉ ծն. լուսնի 12 ժ. 8 ր. առ. | 1 | 18 |
| 6 | ✠ Գշ. բկ. **Տօն Ծննդեան եւ Մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:** Ջրօրհնէք: Միջոց ուտիք 13 օր է: Յ. և Թ. Մկրտութիւն Տեառն: | 2 | 19 |
| 7 | ✠ Դշ. դձ. բ. օր ծննդ. Յիշատակ մեռելոց: Յ և Թ. Յովհաննու Կարապետի: | 3 | 20 |
| 8 | Եշ. գկ. գ օր ծննդեան: ☉ 1 ժ. 42 առաւ. արեւը մըտնում է Ջրհոս համաստեղութեան մէջ: | 4 | 21 |
| 9 | Ուր. դձ. դ օր ծննդեան: | 5 | 22 |
| 10 | Շբ. դկ. ե օր ծննդեան: | 6 | 23 |
| 11 | ✠ Կիր. աձ. զ օր ծննդեան: ☾ առ. քառ. 9 ժ. 19 ր. երեկ.: | 7 | 24 |
| 12 | Բշ. ակ. է օր ծննդ: Նախատօնակ: | 8 | 25 |
| 13 | ✠ Գշ. բձ. ը. օր ծննդ. **Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:** | 9 | 26 |
| 14 | Դշ. բկ. պահք: Նախատօնակ: | 10 | 27 |
| 15 | ✠ Եշ. գձ. Տօն ծննդ. Յովհաննու Կարապետին: **Անուանակոչութիւն Վ.եհ. Հայրապետին ազգիս Տ.Տ. Մկրտչի Ա.** | 11 | 28 |
| 16 | Ուր. գկ. պահք: | 12 | 29 |
| 17 | Շբ. դձ. ս. Պետրոսի Հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Արիստոմայ սարկաւագին: | 13 | 30 |
| 18 | ✠ Կիր. ա գկնի ծննդ. Բարեկենդան առաջաւորի պահոց: Սկիզբն 50 օրեայ երկրորդ մասին ձմրան: | 14 | 31 |
| 19 | Բշ. աձ. ա օր առաջաւոր. պահոց: Նոր սօմար փետրուար: | 15 | 1 |
| 20 | Գշ. ակ. բ օր առաջաւոր. պահոց: ☉ լր. 4 ժ. 30 ր. առ. | 16 | 2 |
| 21 | Դշ. բձ. գ օր առաջաւոր. պահոց: | 17 | 3 |
| 22 | Եշ. բկ. դ օր առաջաւոր. պահոց: | 18 | 4 |
| 23 | Ուր. գձ. ե օր առաջաւոր. պահոց: Յիշատակ Յովնանու մարգարէին: | 19 | 5 |
| 24 | Շբ. գկ. ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինուորացն: | 20 | 6 |
| 25 | ✠ Կիր. դձ. բ գկնի ծննդեան: Հարսանիք: | 21 | 7 |
| 26 | Բշ. դկ. ս. Ատովմեանց զօրավարացն: ☾ վրջ. քառ. 3 ժ. 41 ր. երեկ.: | 22 | 8 |
| 27 | Գշ. աձ. ս. Սուքիասեանց վկայիցն: | 23 | 9 |
| 28 | Դշ. ակ. պահք: | 24 | 10 |
| 29 | Եշ. բձ. ս. Ոսկեանց քահանայիցն: | 25 | 11 |
| 30 | Ուր. բկ. պահք: | 26 | 12 |
| 31 | Շբ. գձ. ս. Իսահակայ Պարթևի հայրապետին մերոյ: Յունուարի 1-ից մինչև այսօր օրն աւելացել է 1 ժ. 55 ր.: | 27 | 13 |

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Б...
Мясник...
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

# ՓԵՏՐՈՒԱՐ

29 ՕՐ

| Օ | | Հ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | ✠ Կիր. գկ. գ կնի ծննդեան։ Հարսանիք։ | 28 | 14 |
| 2 | Բշ. գձ. ս. Մակարիոսի եպիսկոպոսին, Պիօնի քահանային, Կիւրղի և Բենեամինի սարկաւագացն և ս. Վկայիցն՝ Աբդլմսէհի, Որմզդանայ և Սայէնի։ ✠ Ց. և Ռ. Տեառնընդառաջ։ | 29 | 15 |
| 3 | Գշ. դկ. ս. Ղեւոնդեանց քահանայիցն։ ◉ Ծննդ. լուս. 10 ժ. 19 ր. երեկ. | 30 | 16 |
| 4 | Դշ. աձ. պահք։ | 1 | 17 |
| 5 | ✠ Եշ. ակ. ս. **Վարդանանց զօրավարացն** մերոց 1306 վկայիցն, որք կատարեցան ի մեծ պատերազմին։ Տօն ազգային և յիշատակ մեռելոց։ | 2 | 18 |
| 6 | Ուր. բձ. պահք։ ✠ Ց. և Ռ. բարեկենդ. եօթնեակի։ | 3 | 19 |
| 7 | Շբ. բկ. Կ.-Պօլսոյ ս. ժողովոյն 150 հայրապետացն։ Ցերեկոյին ծածկի սեղանն վարագուրաւ ի յիշատակ տրտմութեան Ադամայ ի դրախտէն։ ◌ 4 ժ. 10 ր. երեկ. մտնում է Ձուկ համաստեղութեան մէջ: *Օր իջանելոյ ջերմութեան արեւու յօդս:* | 4 | 20 |
| 8 | ✠ Կիր. դկ. Բուն բարեկենդան։ | 5 | 21 |
| 9 | Բշ. աձ. ա օր մեծի պահոց։ | 6 | 22 |
| 10 | Գշ. ակ. բ օր մեծի պահոց: ◑ առ. խառ. 7 ժ. 30 ր. առ. | 7 | 23 |
| 11 | Դշ. բձ. գ օր մեծի պահոց: | 8 | 24 |
| 12 | Եշ. բկ. դ օր մեծի պահոց։ | 9 | 25 |
| 13 | Ուր. գձ. ե օր մեծի պահոց։ Նախատօնակ. (բայց ի վարագոյրն և յետ վաղուան յերեկոյեան ժամին ծածկեսցի)։ | 10 | 26 |
| 14 | ✠ Շբ. գկ. զ օր մեծի պահոց։ **Տեառնընդառաջ:** *Օր իջանելոյ ջերմութեան արեւու 'ի ջուրն:* | 11 | 27 |
| 15 | ✠ Կիր. դձ. է օր մեծի պահոց։ Բ. Քառասնորդական պահոց։ | 12 | 28 |
| 16 | Բշ. դկ. ը օր մեծի պահոց։ | 13 | 29 |
| 17 | Գշ. աձ. թ օր մեծի պահոց։ Նոր տոմ. Մարտ։ | 14 | 1 |
| 18 | Դշ. ակ. ժ օր մեծի պահոց։ ◌ լր. լուս. 4 ժ. 30 ր. առ.: | 15 | 2 |
| 19 | Եշ. բձ. ժա օր մեծի պահոց. | 16 | 3 |
| 20 | Ուր. բկ. ժբ օր մեծի պահոց։ | 17 | 4 |
| 21 | Շբ. գձ. ժգ օր մեծի պահոց։ Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին և միւս Կիւրղի եպիսկոպոսին և մօրն նորա Աննայի։ *Օր իջանելոյ ջերմութեան արեւուն 'ի հողն.* | 18 | 5 |
| 22 | ✠ Կիր. գկ. ժդ օր մեծի պահոց։ Գ Քառասնորդական պահոց **Անառակին:** | 19 | 6 |
| 23 | Բշ. դձ. ժե օր մեծի պահոց։ | 20 | 7 |
| 24 | Գշ. դկ. ժզ օր մեծի պահոց։ ☾ Վրջ. խառ. 1 ժ. 41 ր. երեկ.: | 21 | 8 |
| 25 | Դշ. աձ. ժէ օր մեծի պահոց։ Պառաւանց ցուրտ. որ տեւէ 7 օր և 8 գիշեր։ | 22 | 9 |
| 26 | Եշ. ակ. ժը օր մեծի պահոց։ | 23 | 10 |
| 27 | Ուր. բձ. ժթ օր մեծի պահո ։ | 24 | 11 |
| 28 | Շբ. բկ. ի օր մեծի պահոց։ Ս. Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին և ս. հայրապետացն մերոց Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն։ | 25 | 12 |
| 29 | ✠ Կիր. գձ. իա օր մեծի պահոց։ Դ. Քառասնորդական պահոց. **Տնտեսին:** Ց. և Ռ. Քառասուն մանկանցն։ | 26 | 13 |

*Փետրուարի 1-ից մինչեւ օրս օրն երկարացել է 2 ժ. 7 ր.:*

# ԳԱՐՈՒՆ

Գարուն է։ Օ՜հ, ինչքան սրտեր յանկարծ բաբախեցին այս կախարդիչ անունը լսելիս։ Ի՜նչ ուրախութիւն, որ կողմը կուզես՝ աչքդ դարձրու՝ սար ու ձորեր, դաշտ ու անտառներ, շնչաւոր ու անշունչ—բոլորն այսօր այն չեն, ինչ որ երեկ մէկէլ օրը։ Ո՞ւմ հոգսն է, թէ դեռ մարտի սկզբին ենք, ո՞վ է բանի տեղ դնում, թէ երկնքի սիրելի, երկնքի հետ քաղցր համբոյրներ առող, երկնքի հետ օր ու գիշեր առուլիսի բռնուած սարերը՝ սպիտակ պատանում կոլոլուած՝ դեռ խըռմփում են ու վախտ-վախտ իրանցից բաց թողած կատաղի քամիներով, քիչ է մնում, աշխարհքը տակով անեն։ Ո՞վ է գիժ մարտի փոփոխական բնութիւնից մաղաչափ երկիւղ անում։ Թէկուզ դաշտերի երեսին թղաչափ ձիւնը նստած է՝ Աստծու ստեղծած բոլոր արարածների համար՝ ոնց որ զամբարակի *) ուղտի ականջին մօծակի բզզոցը։

Համմեցէք, դուրս արի դաշտը, երեկուան երկաթից պինդ ձիւնը մատով չարժիր, մէկ էլ կըտեսնես մատդ մէջը թաղուեց. խեղճըն ալիւրի թեփի պէս փխրացել է ու թէ որ կանգնածդ տեղը քիչ աբեկող է, կասկած մի տանիր, ձիւնը յետ տուր։

—Ըհը, էս ինչ է տօ, ձիւնի տակից կանանչ խոտի ծլեր են գլուխները խլուչ խլուչ դուրս ցըցել։ Փառքիդ մեռնիմ Աստուած, խոտի տերեւների մէջ տեղից ինչ սիրուն դեղին ծաղիկ է կոկոնը պատռել ու բացուել։

—Չեմ հաւատում, ինչ էք ասում, ձիւն ու ծաղի՞կ։

—Այո՛, այո՛, սիրելիս, պինդ բռնիր, բաց չըթողնես, ձեռքով խառնածդ ձիւն է, իսկ տակինը՝ ծաղիկ, իսկական ծաղի՜կ։ Հապա՛ երկու բառը իրար հետ միացրու, տես, ինչ դուրս կըգայ—ձնծաղիկ—գարունքը մեզ աչքալոյս տուող ծաղիկ—ձնծաղիկ։

Գարուն։

Էսպէս է գարունը, էս օր ցուրտ, էգուց՝ տաք, էս օր մրրիկ ու մառախուղ, էգուց արեւ արքայութիւն. գիժ մարտի քամիների շնորհքը մեծ է, փչեց թէ չէ, ամպ ու թուխպ սրտաճաք կըլինին, գլուխ կառնեն կըկորչեն, կապոյտ երկնքի միջից Աստծու աչք-պայծառ արեւը կը փայլի, ձիւն ու սառույցի հոտն ու հետքը չի թողալ։ Բոլորը կըհալուին, ջուր կըկտրուին, գետ ու ձորերը կըլցուին, չորս ամսուան մեռած երկիրը չորեքօրեայ թաղուած Ղազարոսի նման յարութիւն կառնի։

Դէ՜հ, հիմի կացէք ու խնդացէք, Աստծու ստեղծուած արարածնե՛ր, գութանդ բան քցի՛ր, աշխատաւէր ռանչպա՛ր, հողը փափկել է, վարիր ու ցանի՛ր։ Հօտդ դաշտը քշի՛ր, դաշտի սիրահար հովի՛ւ, կանաչը դաշտի երեսին ցնծին է տալիս, արածացրու, հօտերդ գիրացրո՛ւ, մսակալցրո՛ւ։ Այգուտ թաղը վեր առ, խաղողից մատները հողի տակից հանի՛ր, ժրաջան այգեպա՛ն, կեռակտուց հօտոցդ [1]) սրի՛ր, կուզրա-

*) Զամբարակի ուղտ է կոչւում մի ժամանակուան թնդանօթ շալակին պատերազմներում լինող ուղտը, որի ականջը սովոր լինելով թնդանօթի թնդումին, մօծակի բզզոցն արհամարհում էր։

*) Այգում գործածելիք կեռակտուց դանակ։

կիդ [1] մատերն էտիր, կարատիր ու պապերի ասած յոյս ներշնչող առածն երգի՝ «Մարտի ինը մառը կտրի քցի ձի՞նը», եղանակով ուրախ ուրախ երգիր:

Բանջարքաղիներդ բան քցեցէք, որջ ձմեռը տներում փակուած, ազապ ու սիրուն աղջիկներ, հարիւր տեսակ բանջարեղէններ՝ գարնան դմակից փափուկ ու թարմ՝ ձեզ են դաշտերում սպասում, քաղեցէք երգելով ու խնդալով, գոգնոցներումդ պինդ կապեցէք, ցած դրէք, կանաչ խոտի վրայ բոլորուանքի ընկէք, ձուք ձուքի, կուռ կուռի տուէք. մի կողմից երգեցէք, մի կողմից եայլի պարեցէք ու իրիկնապահին՝ կչկչալով, հռհռալով, ձեր սիրած ազապ տղէքանց անունները աւ-աշկարայ իրար յայտնելով՝ տուն վերադարձէք: Մի վախէք, ոչ գայլ ու գազան կը համարձակուին ամայի դաշտումը ձեզ մօտ գալ ու ո՛չ անիրաւ թուրքերը սիրտ կանեն ձեր շուաքին մտիկ տալու: Ա՜յ դուք սատանի եափ տղեք, հօ՛ լաւ գիտէք, որ պահապան հրեշտակներդ խանչալները կապած, քարերի տակից, քարափների ճեղքերից, ծառաթփերի փոսերից որջ օրը ձեզանից աչք չեն հեռացնում, ձեր տուն ու գաղտնիքն իմանում են, ձեր երգերով մայիլ եղած՝ ձեզ վրայ հսկում են: Ի՞նչ ամաչեցիք ու կարմրեցիք, դուք որ սիրտ ունիք, դուք որ սիրում էք, հապա ազապ տղէքը միթէ քար ու պողպատից են, չէ՞ որ նրանց կրծքի տակ ձեր սրտերի պէս մի մին պստիկ բունդքաշափ պինդ մսեր ձեր սիրովը տրոփում, տրոփում են: Վա՜յ էն գայլ ու գազանին, էն թուրք աւազակին, որ ձեր շուաքիցը եօթն օրէն ճանապարհ հեռու չի փախչիլ: Մեր կտրիճ երիտասարդների ձեռից՝ նրանց օրն ու արեը սև կըլինի:

Այո՛, այո՛, գարուն է և գարունը տարուան չորս եղանակներից աւելի սիրելին, աւելի կեանք տուողն է: Ծառ ու ծաղիկ. երգող ու չըերգող թռչուններ, ուլ ու գառներ գարնան կեանքի բերքն ու պտուղն են, մարտ, ապրիլ, մայիսը տարուան 12 ամսի անմեղ մանկութիւնն են: Կիսամեռ ծերունին էլ գարունը դաշտն է դուրս գալիս, լիքը կրծքով անուշ օդ ու անուշ հոտ է ներս շնչում ու երիտասարդանում, կեանք է առնում, որովհետև գարուն է:

Իսկ այս բոլորի աւիթը յուսահատեցնող ձմրան սատկութիւնն է: Գարունը յոյս է, գարունն էն բժիշկն է, որի դեղով շունչը փչող հիւանդը յոյս ունի, թէ պիտի նորից առողջանայ, նորից կեանք վայելի: Այդպէս էլ լինում է. հաւատը հրաշքներ է գործում, յոյսն երբէք անհետեւանք չի մնում:

Թող, ուրեմն, ամեն ճնշուած ու հարստահարուած, ամեն խեղճ ու տնանկ յուսով ապրի և յոյս ունենայ, թէ իրան սեղմող, իրան կուչ ածող, իր կեանքի թշնամի ձմրան դէմ իրան թև ու թիկունք, իրան պաշտպան կը լինի կեանք տուող գարունը:

—Որովհետև գարունը յոյս է, գարունը կեանք է: Ինչպէս չէ՞, որ այս պատկերում նկարուած, կուրծքը բաց, կարմիր յաւերժահարսն էլ ծաղիկների մէջ փաթաթուել է ու մեզ գարուն է աւետիս տալիս: Այ դու չարաճճի, կեանքիդ գարունի մէջ ես, նոր ես ուզում ոտք դնել չափահաս պատանեկութեան արբունքի մէջ: Օրինակը ձեռքիդ բռնած՝ աչքիդ առաջին է կտուց կտցի տուած խանդավառ աղաւնիները քեզ սիրել ու սիրուել են սովորեցնում, շուրջդ բոլորած անմեղ հրեշտակները սիրոյ սրբութիւնն են հաստատում, իսկ գլխավերևդ, օդում թև տուող թռչունն ու իր ձագուկը սուրբ սիրոյ շնորհիւ ընտանեկան երջանիկ ապագան են քեզ քաղցրացնում:

Սիրիր ուրեմն, սիրուն ու չքնաղ դիցուհի, արիւնդ եռ է եկել, որովհետև գարուն է:

Պերճ Պռօշեանց.

1) Խաղողի վազի հատա կողմը:

# ՄԱՐՏ

31 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Բշ. գկ. իբ օր մեծի պահոց: | 27 | 14 |
| 2 | Գշ. գձ. իգ օր մեծի պահոց: | 28 | 15 |
| 3 | Դշ. դկ. իդ օր մեծի պահոց: Միջինք: Վերջ պառաւանց ցրտին: | 29 | 16 |
| 4 | Եշ. աձ. իե օր մեծի պահոց: ● Նն. լուս. 10 ժ. 45 ր. երեկ.: | 1 | 17 |
| 5 | Ուր. ակ. իզ օր մեծի պահոց: | 2 | 18 |
| 6 | Շբ. բձ. իէ օր մեծի պահոց: Ս. քառասուն մանկանցն, որք 'ի Սեբաստիա կատարեցան: | 3 | 19 |
| 7 | ✠ Կիր. բկ. իը օր մեծի պահոց: Ե. քառասնորդական պահոց. **Դատաւորին:** Վերջ յիսներեայ երկրորդ մասին ձմրան: | 4 | 20 |
| 8 | Բշ. գձ. իթ օր մեծի պահոց: ☉ 3 ժ. 47 ր. մտնում է խոյ համաստեղութեան մէջ: Գարնանամուտ 3 ժ. 4′ ր. երեկոյեան: Ցերեկ եւ գիշեր հաւասար են: Ցերեկն սկսում է երկարիլ, գիշերը կարճանալ: | 5 | 21 |
| 9 | Գշ. գկ. լ օր մեծի պահոց: | 6 | 22 |
| 10 | Դշ. դձ. լա օր մեծի պահոց: ☽ առ. քառ. 5 ժ. 56 ր. երեկ.: | 7 | 23 |
| 11 | Եշ. դկ. լբ օր մեծի պահոց: | 8 | 24 |
| 12 | Ուր. աձ. լգ օր մեծի պահոց: Նախատօնակ: Բացցի վարագոյր պատարագի սեղանոյն: | 9 | 25 |
| 13 | ✠ Շբ. ակ. լդ օր մեծի պահոց: **Ս. Գրիգորի Լուսաւորչին** մերոյ սոսկալի չարչարանացն և մտին 'ի վիրապն: | 10 | 26 |
| 14 | ✠ Կիր. բձ. լե օր մեծի պահոց: Զ քառասնորդական պահոց. **Գալստեան:** | 11 | 27 |
| 15 | Բշ. բկ. լզ օր մեծի պահոց: | 12 | 28 |
| 16 | Գշ. գձ. լէ օր մեծի պահոց: | 13 | 29 |
| 17 | Դշ. գկ. լը օր մեծի պահոց: | 14 | 30 |
| 18 | Եշ. դձ. լթ օր մեծի պահոց: ◎ լր. լուս. 4 ժ. 56 ր. առ.: | 15 | 31 |
| 19 | Ուր. դկ. խ օր մեծի պահոց: Ն. տ. ապրիլ: | 16 | 1 |
| 20 | Շբ. աձ. խա օր մեծի պահոց: Յիշատակ յարութեան Ղազարու: | 17 | 2 |
| 21 | ✠ Կիր ակ. պահք: **Ծաղկազարդ:** Երեկոյեան դռնբացէք: | 18 | 3 |
| 22 | Աւ. Բշ. բձ. պահք: | 19 | 4 |
| 23 | Աւ. Գշ. բկ. պահք: Յիշատակ տասն կուսանաց: | 20 | 5 |
| 24 | Աւ. Դշ. գձ. պահք: | 21 | 6 |
| 25 | ✠ Աւ. Եշ. գկ. պահք: Յիշատակ **Ոտնլուայի:** ✠ Յ. և Ռ. Աւետումն ս. Աստուածածնի: ☾ վերջ. քառ. 2 ժ. 7 ր. և րեկ. | 22 | 7 |
| 26 | Աւ. Ուր. դձ պահք: **Յիշատակ չարչարանաց եւ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի** (Թափոր թաղման): | 23 | 8 |
| 27 | Աւ. շբ. դկ. **Ճրագալոյց** Յարութեան: Նաւակատիք: Նախատօնակ: | 24 | 9 |
| 28 | ✠ Կիր. աձ. **Զատիկ:** Ուտիք է անմիջոց մինչև Համբարձում: Եւս Յ. և Ռ. որոց ուտիք է մինչև Նոր-կիրակէ: | 25 | 10 |
| 29 | ✠ Բշ. ակ. բ օր Զատկի: Յիշատակ մեռելոց: | 26 | 11 |
| 30 | Գշ. բձ. գ օր Զատկի. | 27 | 12 |
| 31 | Դշ. բկ. դ օր Զատկի: Մարտի 1-ից մինչև օրս օրն երկարացել է 2 ժ. 24 ր. | 28 | 13 |

—

# ԱՊՐԻԼ

30 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Եշ. գձ. ե օր Զատկի։ | 29 | 14 |
| 2 | Ուր. գկ. զ օր Զատկի։ | 30 | 15 |
| 3 | Շբ. դձ. է օր Զատկի։ Յիշատակ գլխատման ս. Յովհաննու Կարապետին։ | 1 | 16 |
| | ● Նն. լուս. 11 ժ. 57 ր. երեկ. | | |
| 4 | ✠ Կիր. դկ. ը օր Զատկի։ Նոր-կիւրակէ (Կրկնազատիկ)։ | 2 | 17 |
| 5 | Բշ. աձ. թ օր յինանց։ | 3 | 18 |
| 6 | Գշ. ակ. ժ օր յինանց։ | 4 | 19 |
| 7 | ✠ Դշ. բձ. ժա օր յինանց։ **Աւետումն ս. Աստուածածնի։** | 5 | 20 |
| 8 | Եշ. բկ. ժբ օր յինանց։ | 6 | 21 |
| 9 | Ուր. գձ. ժգ օր յինանց։ | 7 | 22 |
| | ☉ 3 ժ. 34 ր. արեւը մտնում է Ցուլ համաստեղութեան մէջ։ ☽ առ. քառ. 8 ժ. 8 ր. առ.։ | | |
| 10 | Շբ. գկ. ժդ օր յինանց։ | 8 | 23 |
| 11 | ✠ Կիր. դձ. ժե օր յինանց։ Աշխարհամատրան կիւրակէ (Կանաչ կիւրակէ)։ | 9 | 24 |
| 12 | Բշ. դկ. ժզ օր յինանց։ | 10 | 25 |
| 13 | Գշ. աձ. ժէ օր յինանց։ | 11 | 26 |
| 14 | Դշ. ակ. ժը օր յինանց։ | 12 | 27 |
| 15 | Եշ. բձ. ժթ օր յինանց։ | 13 | 28 |
| 16 | Ուր. բկ. ի օր յինանց։ | 14 | 29 |
| 17 | Շբ. գձ. իա օր յինանց։ | 15 | 30 |
| | ☉ լր. լուս 6 ժ. 8 ր. առ. | | |
| 18 | ✠ Կիր. գկ. իբ օր յինանց։ (Կարմիր կիւրակի)։ Նոր տօմ. մայիսի 1. | 16 | 1 |
| 19 | Բշ. դձ. իգ օր յինանց։ | 17 | 2 |
| 20 | Գշ. դկ. իդ օր յինանց։ | 18 | 3 |
| 21 | Դշ. աձ. իե օր յինանց։ | 19 | 4 |
| 22 | Եշ. ակ. իզ օր յինանց։ | 20 | 5 |
| 23 | ♔ Ուր. բձ. իէ օր յինանց։ Յ. և Ռ. ս. Գէորգ։ | 21 | 6 |
| 24 | Շբ. բկ. իը օր յինանց։ | 22 | 7 |
| | ☾ Վրջ. քառ. 3 ժ. 19 ր, երեկ.։ | | |
| 25 | ✠ Կիր. գձ. իթ օր յինանց։ **Տօն Երեւման Խաչի։** | 23 | 8 |
| 26 | Բշ. գկ. լ օր յինանց։ | 24 | 9 |
| 27 | Գշ. դձ. լա օր յինանց։ | 25 | 10 |
| 28 | Դշ. դկ. լբ օր յինանց։ | 26 | 11 |
| 29 | Եշ. աձ. լգ օր յինանց։ | 27 | 12 |
| 30 | Ուր. ակ. լդ օր յինանց։ | 28 | 13 |

Ապրիլի 1-ից մինչև օրս, օրն երկարել է 2 ժ. 8 ր.։

# ՄԱՅԻՍ

31 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Շբ. բձ. լե օր յինանց։ | 29 | 14 |
| 2 | ✠ Կիր. բկ. լզ օր յինանց։ Զ կիր. Զատկի։ | 1 | 15 |
| | ☻ ծն. լուս. 0 ժ. 19 ր. ստ.: | | |
| 3 | Բշ. գձ. լէ օր յինանց։ | 2 | 16 |
| 4 | Գշ. գկ. լը օր յինանց։ | 3 | 17 |
| 5 | Դշ. դձ. լթ օր յինանց։ | 4 | 18 |
| 6 | ♔ Եշ. դկ. խ օր յինանց։ **Համբարձումն Քրիստոսի**։ Եւս Յունաց և Ռուսաց։ | 5 | 19 |
| 7 | Ուր. աձ. խա օր յինանց։ Պահք։ | 6 | 20 |
| 8 | Շբ. ակ. խբ օր յինանց։ | 7 | 21 |
| | ☽ առ. քառ. 9 ժ. 30 ր. առ.: | | |
| 9 | ✠ Կիր. բձ. խգ օր յինանց։ Բ Ծաղկազարդ։ Ռ. Նիկողայոսի սքանչելագործին։ | 8 | 22 |
| | ☉ 3 ժ. 24 ր. մտնում է Երկուորեակ համաստեղութեան մէջ։ | | |
| 10 | Բշ. բկ. խդ օր յինանց։ | 9 | 23 |
| 11 | Գշ. գձ. խե օր յինանց։ | 10 | 24 |
| 12 | Դշ. գկ. խզ օր յինանց։ Պահք։ | 11 | 25 |
| 13 | Եշ. դձ. խէ օր յինանց։ | 12 | 26 |
| 14 | ♔ Ուր. դկ. խը օր յինանց։ Պահք։ | 13 | 27 |
| 15 | Շբ. աձ. խթ օր յինանց։ | 14 | 28 |
| 16 | ✠ Կիր. ակ. **Հոգեգալուստ** (Պենտէկոստէ)։ Եւս Յ. և Ռ. բարեկենդան եղիական պահոց։ | 15 | 29 |
| | ☉ լր. լուս. 6 ժ. 30 ր. երեկ. | | |
| 17 | Բշ. բձ. բ օր Հոգեգ. պահք։ ✠ Ռ. 2 րորդ օր Հոգեգալ. | 16 | 30 |
| 18 | Գշ. բկ. գ օր Հոգեգ. պահք։ | 17 | 31 |

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 19 | Դշ. գձ. դ օր Հոգեգ. պահք։ Ն. Տ. Յունիս։ | 18 | 1 |
| 20 | Եշ. գկ. ե օր Հոգեգ. պահք։ | 19 | 2 |
| 21 | Ուր. դձ. զ օր Հոգեգ. պահք։ | 20 | 3 |
| 22 | Շբ. դկ. է օր Հոգեգ.։ | 21 | 4 |
| 23 | ✠ Կիր. աձ. ա կիր. Յարութեան։ Յիշատակ Եղիայի մարգարէին։ Նախատօնակ։ Լուսջին պսակ։ Հարսանիք։ | 22 | 5 |
| | ☾ վերջ քառ. 3 ժ. 41 ր. առ.: | | |
| 24 | Բշ. ակ. ս. կուսանացն Հռիփսիմեանց։ Նախատօնակ։ | 23 | 6 |
| 25 | ♔ Գշ. բձ. ս. կուսանացն Գայեանեանց։ | 24 | 7 |
| 26 | Դշ. բկ. պահք։ Նախատօնակ։ | 25 | 8 |
| 27 | Եշ. գձ. ս. Յովհ. Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին։ | 26 | 9 |
| 28 | Ուր. գկ. պահք։ Նախատօնակ։ | 27 | 10 |
| 29 | ✠ Շբ. դձ. **Ս. Գրիգորի Լուսաւորչին** մերոյ ելն ի Վիրապէն. | 28 | 11 |
| 30 | ✠ Կիր. դկ. բ կիրակի Հոգեգ. **Տօն Կաթուղիկէ ս. Էջմիածնի**։ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում կատարւում է հանդէս։ Հարսանիք։ | 29 | 12 |
| 31 | Բշ. աձ. ս. Մանկանցն Բեթղեհէմի, Սկովկիոսի վկային. Մովկիմայ քահանային, Կոդրատիոսի զինուորին։ | 30 | 13 |

Մայիսի 1-ից մինչև օրս, օրն երկարացել է 1 ժ. 23 ր.

# ԱՄԱՌ։

—Ո՞վքեր են նրանք, որ մի մեն ափսոս կապոց են արել, գլխներին դրել ու դաշտի երեսն ընկած՝ գընում են։

—Նրանք մեր գիւղի ջահել ու սիրուն հարսներն են, մեր տների տնարար ու աշխատաւոր տանտիկինները։ Նրանք առաւօտը վաղ վաղ վեր են կացել, իրանց տանու գործը վերջացրել, իրանց սկեսուրների եփած փլաւը մեծ պղնձներով սուփրի մէջ կապել, գլխներին դրել, մի ուրիշ կապոցով էլ թղթից սախտակ, ջուր ցնցղած լաւաշներ, աղ դրած, Սեւանայ ծովի ախորժակ բաց անող կողակ ձկան խոտացներ (կտոր), մի քանի կտոր պանիր հացերի մէջ փաթաթել, իրանց աջեւից վազող 10—12 տարեկան երեխաների շալակներն են կապել ու հարեւան հարեւանի հետ քաղցր զրոյց անելով, տաժան շոգը չըհարցնելով՝ շտապում են արտերը։

Աչքերը լոյս հնձւորների. նրանք հեռուից տեսան իրանց համար ճաշ բերողներին, մանգաղ, գերանդի, դէն շպրտեցին ու բոլորուանքի շարուեցին արտի ափերի կանաչների վրայ։

—Կերէք, ձեզ մատաղ, հալալ ձեր մօր կաթի պէս իմ քէյվանու (տանտիկին) ձեռով եփած իւղալի փլաւը, դալար մնայ կռներդ…

Արեւը թէպէտ այրում-խանձում է ամեն ինչ, բայց արեւի թէժութիւնից վախեցողները կեանքները հովերում անցկացրած քաղաքայի վաճառականներն են ու աղա մարդիկը. առուտրականները հիմի իրանց խանութներում թմրած՝ քնի ու աչքերն ուտող ճանճերի հետ են կռիւ տալի և սպասում, թէ որտեղից որտեղ մի կորած մոլորած գիւղացի մուշտարի տուն պիտի ընկնի, որ խաբեն՝ փթած ապրանքները գլուխը կապեն, գըրպանը դատարկեն. աղա գրագիրներն էլ սարերի ու անտառների հով ու զովերումն են անգործութիւնից օրերը մթնացնում։ Իսկ մեր շարքաշ մշակն արեւի տաքութիւնից երկիւղ անողը չի, հակառակը պէս՝ քանի արեգակը զօռ է անում, նրանք կրակ են կտրում ու իրանց ներսը բորբոքւող բոցով սկսած գործերը լափում, վերջացնում։

Ամառ։

Էստեղ՝ կալ են կասում, էնտեղ՝ խոտ են հնձում, կամ կրում, այգիներում հօ աչքդ բարին տեսնի, սկսել են իրար ետեւից հասնել թութը, կեռասը, բալը, ծիրանը, շլոր ու դամբուլը, շաքարկենի, մեղրակենի, թթուաշ ու քաղցր, դեղին ու կարմիր խնձորները, մալաշի ու քոլի տանձերը. էս բոլորը թափ գալ, քաղուիլ, ժողովուել են պահանջում. խելքը հացի հետ է կերել ուրեմն գործաւորը, որ շոգից վախենայ, կռները ծալի, պարապ նստի։

Կեա՛նք է, կեա՛նք ամառը, էն էլ՝ մի ուրիշ կեանք։

Եթէ չես հաւատում, աչքդ ցած թող, թղթի վերայ նկարուած, ծիծառների հետ օդի մէջ սաւառնող, խոտ ու ծաղիկ տրորող, մէջք ու կուրը բաց, ցորենի փունջը ձեռքին բռնած, ծաղկեայ պսակով գլուխը զարդարած աղջկանը, որ իր հասած հասկերով քաղցածներին աւետիս է տալիս, թէ ամառն է, ամառը կեանք է, դուք էլ կեանք վայելեցէք։

Պերճ Պռօշեան.

# ՅՈՒՆԻՍ

30 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Գշ. ակ. ս. կուսանացն Նունեայ և Մանեայ: | 1 | 14 |
| | ● ծն. լուս. 0 ժ. 45 ր. առ.: | | |
| 2 | Դշ. բձ. պահք: | 2 | 15 |
| 3 | Եշ. բկ. ս. իշխանացն Սահակայ և Յովսէփայ և սրբոց վկայից Սարգսի և Բագոսի: | 3 | 16 |
| 4 | Ուր. գձ. պահք: | 4 | 17 |
| 5 | Շբ. գկ. ս. Ներսէսի Մեծի հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին: | 5 | 18 |
| 6 | ✠ Կիր. դձ. գ. գկնի Հոգեգ.: Բարեկենդան Լուսաւորչ. պահոց: | 6 | 19 |
| 7 | Բշ. դկ. ս. Եպիփանու Կիպրացւոյն, Բարսեղայ հայրապետին և երից աշակերտացն նորին: Պահք: | 7 | 20 |
| 8 | Գշ. աձ. ս. Կոստանդիանոսի թագաւորին և մօրն նորա Հեղինեայ. պահք: | 8 | 21 |
| | ◐ Առ. քառ. 9 ժ. 56. ր. | | |
| 9 | Դշ. ակ. պահք: | 9 | 22 |
| | ☉ մտնում է Խեցգետին համաստեղութեան մէջ առ. 11 ժ. 45 ր. Ամառնամուտ 11 ժ. 45 ր. առաւ. ցերեկն սկսում է կարճանալ, գիշերն երկարել: | | |
| 10 | Եշ. բձ. Ս. Թէոդիտոնի Գաղատացւոյն և Թալիլեայ բժշկին և եօթն կուսանացն, որք յԱնկիւրիա կատարեցան: | 10 | 23 |
| 11 | Ուր. բկ. պահք: Նախատօնակ: | 11 | 24 |
| 12 | ✠ Շբ. գձ. **Տօն Գիւտի Նշխարաց Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ:** | 12 | 25 |
| 13 | ✠ Կիր. գկ. դ գկնի Հոգեգ.: Հարսանիք: | 13 | 26 |
| 14 | Բշ. դձ. ս. վկայից Անտոնիոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փատինոսի: | 14 | 27 |
| 15 | Գշ. դկ. ս. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն (Սեդրաքայ, Միսաքայ և Աբեդնագովի): | 15 | 28 |
| | ☉ լր. լուս. 7 ժ. 7 ր. երեկ.: | | |
| 16 | Դշ. աձ. պահք: | 16 | 29 |
| 17 | Եշ. ակ. ս. թարգմանչացն մերոյ **Սահակայ և Մեսրովպայ:** | 17 | 30 |
| 18 | Ուր. բձ. պահք: Ն. տ. Յուլիս: | 18 | 1 |
| 19 | Շբ. բկ. ս. Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովիդխտոյն: Նախատօնակ: | 19 | 2 |
| 20 | ✠ Կիր. գձ. ե գկնի Հոգեգ. Գիւտ տփոյ ս. Աստուածածնի: Հարսանիք: | 20 | 3 |
| 21 | Բշ. գկ. ս. Պալիատրոսի և 49 վկայից և Ղունկիանոսի քահանային: | 21 | 4 |
| 22 | Գշ. դձ. ս. Զաքարիա մարգարէին. | 22 | 5 |
| 23 | Դշ. դկ. պահք: | 23 | 6 |
| | ◑ վրջ. քառ. 4 ժ. 18 ր. առ.: | | |
| 24 | Եշ. աձ. ս. Եղիսէի մարգարէին: | 24 | 7 |
| 25 | Ուր. ակ. պահք: | 25 | 8 |
| 26 | Շբ. բձ. ս. Երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Պօղոսի երեքտասան առաքելոյն: | 26 | 9 |
| 27 | ✠ Կիր. բկ. Զ գկնի Հոգեգ. Բարեկենդան Վարդավ. պահոց: | 27 | 10 |
| 28 | Բշ. գձ. ա օր Վարդավ. պահոց: | 28 | 11 |
| 29 | Գշ. գկ. բ օր Վարդավ. պահոց. | 29 | 12 |
| 30 | Գշ. դձ. գ օր Վարդավ. պահոց: | 1 | 13 |
| | ● ծն. լուս. 12 ժ. առ. | | |

Յունիսի 1-ից մինչև օրս—օրը կարճացել է 0 ժ. 22 ր.:

# ՅՈՒԼԻՍ

31 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Եշ. դկ. դ օր վարդավ. պահոց. | 2 | 14 |
| 2 | Ուր. աձ. ե օր. վարդավ. պահոց. | 3 | 15 |
| 3 | Շբ. ակ. Յիշատակ տապանակին հնոյ և տօն նորոյն ս. եկեղեցւոյ. Նաւակատիք. | 4 | 16 |
| 4 | ✠ Կիր. բձ. այլակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: **Վարդավառ**: Միջոց ուտիք 5 շաբաթ է: | 5 | 17 |
| 5 | ✠ Բշ. բ օր. վարդվ. Յիշատակ մեռելոց. | 6 | 18 |
| 6 | Գշ. գձ. գ օր վարդվ. | 7 | 19 |
| 7 | Դշ. գկ. դ. օր վարդվ. | 8 | 20 |
| | ☽ առ. խառ. 9 ժ. 11 ր. երեկ. | | |
| 8 | Եշ. դձ. ե օր վարդվ. | 9 | 21 |
| 9 | Ուր. դկ. զ օր վարդվ.: Նախատօնակ: | 10 | 22 |
| 10 | ✠ Շբ. աձ. ս. **Թադէոսի** առաքելոյն և **Սանդխտոյ** կուսին: ☉ 10 ժ. 40 ր. մտնում է Առիւծ համաստեղութեան մէջ: | 11 | 23 |
| 11 | ✠ Կիր. ակ. բ. զկնի վարդավ. Հարցանիք: | 12 | 24 |
| 12 | Բշ. բձ. ս. Կիպրիանոսի եպիսկոպոսին և 45 վկայիցն և ս. կուսանացն Հուստիանեայ, Եւփիմեայ և Քրիստինեայ: | 13 | 25 |
| 13 | Գշ. բկ. ս. Աթանագինեայ եպիսկոպոսին և 10-ն աշակերտացն և հինգ վկայիցն. | 14 | 26 |
| 14 | Դշ. գձ. պահք. | 15 | 27 |
| | ☉ լր. լուս. 6 ժ. 11 ր. առ.: | | |
| 15 | Եշ. գկ. ս. Նախահարցն՝ Ադամայ, Աբէլի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ, Յովսէփայ, Մովսէսի, Ահարոնի. Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէոնի և այլոց սրբոց նախահարցն: | 16 | 28 |
| 16 | Ուր. դձ. պահք. | 17 | 29 |
| 17 | Շբ. դկ. ս. որդւոց և թոռանց ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակեսի, Վրթանեսի, Յուսկանն, Գրիգորիսի, և Դանիէլի: | 18 | 30 |
| 18 | ✠ Կիր. աձ. գ զկնի վարդավ. Հարցանիք: | 19 | 31 |
| 19 | Բշ. ակ. ս. Մակաբայեցւոյն Եղիազարու քահանային և Շամունեայ և եօթն դստերաց նորին: Ն. Տ. Օգոստոս: | 20 | 1 |
| 20 | Գշ. բձ. ս. երկոտասան մարգարէիցն՝ Ովսեայ, Ամովսեայ, Միքեայ, Յովելայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յովնանու. Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ. | 21 | 2 |
| 21 | Դշ. բկ. պահք. | 22 | 3 |
| | ☾ վրջ. խառ. 3 ժ. 22 ր. երեկ. | | |
| 22 | ♔ Եշ. գձ. ս. Սոփիայ և երից դստերացն՝ Պիստոսի, Ելպիսի և Ագապի: | 23 | 4 |
| 23 | Ուր. գկ. պահք. | 24 | 5 |
| 24 | Շբ. դձ. ս. Անտոնի ճգնաւորին. | 25 | 6 |
| 25 | ✠ Կիր. դկ. դ. զկնի վարդավ. Հարցանիք: | 26 | 7 |
| 26 | Բշ. աձ. ս. Թէոդոսի թագաւորին և մանկանցն Եփեսոսի: | 27 | 8 |
| 27 | Գշ. ակ. ս. Կիւրակոսի և Ջուղիտայի: | 28 | 9 |
| 28 | Դշ. բձ. պահք: | 29 | 10 |
| 29 | Եշ. բկ. ս. Վահանայ Գողթնեցւոյն և Գորդիոսի, Պօղիքտոսի և Գրիգորիսի: | 30 | 11 |
| 30 | Ուր. գձ. պահք: | 1 | 12 |
| | ● ծն. լուս. 0 ժ. 33 ր. առ.: | | |
| 31 | Շբ. գկ. ս. Հայրապետացն Աթանասի և Կիւրղի և Գրիգորի աստուածաբանին: | 2 | 13 |

Յուլիսի 1-էն մինչև օրս, օրն երկարացել է 1 ժ. 47 ր.

# ՕԳՈՍՏՈՍ

31 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | ✠ Կիր. դձ. Ե. կնի վարդավ. Հարսանիք։ | 3 | 14 |
| 2 | Բշ. դկ. ս. Եւգինեայ կուսին և հօրն նորա Փիլիպպոսի և մօրն Կղօդեայ և երկուց եղբարցն Սերգիայ և Ապիտօնի և երկուց ներքինեացն։ | 4 | 15 |
| 3 | Գշ. աձ. ս. Տրիփօնի, Պարսամայ և Ոնոփրիոսի ճգնաւորացն։ | 5 | 16 |
| 4 | Դշ. ակ. պահք։ | 6 | 17 |
| 5 | Եշ. բձ. ս. Եւղինիոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կանդիտոսի և Ակիւղասայ։ | 7 | 18 |
| | ☽ առ. քառ. 9 ժ. ր. 44 առ. | | |
| 6 | Ուր. բկ. պահք. Յ. և Ռ. Վարդավառ։ | 8 | 19 |
| 7 | Շբ. գձ. Եփեսոսի ս. ժողովոյն երկու հարիւր հայրապետացն։ | 9 | 20 |
| 8 | ✠ Կիր. գկ. Զ. կնի վարդավ. բարեկենդան ս. Աստուածածնի պահոց։ | 10 | 21 |
| 9 | Բշ. դձ. ա օր ս. Աստուածածնի պահոց։ | 11 | 22 |
| 10 | Գշ. դկ. բ օր ս. Աստուածածնի պահոց։ | 12 | 23 |
| 11 | Դշ. աձ. գ օր ս. Աստուածածնի պահոց։ | 13 | 24 |
| | ☉ 5 ժ. 23 ր. առաւ. մտնում է Կոյս համաստեղութեան մէջ։ | | |
| 12 | Եշ. ակ. դ օր ս. Աստուածածնի պահոց։ | 14 | 25 |
| 13 | Ուր. բձ. ե օր ս. Աստուածածնի պահոց։ | 15 | 26 |
| | ◯ Լր. լուս. 6 ժ. 55 ր. առ.։ | | |
| 14 | Շբ. բկ. Տօն Շողակաթի ս. Էջմիածնի, ըստ տեսլեան ս. Գրիգորի լուսաւորչին մերոյ. Նախատօնակ. Նաւակատիք։ | 16 | 27 |
| 15 | ✠ Կիր. գձ. **Վերափոխումն ս. Աստուածածնի** (Օրհնութիւն խաղողոյ). Ինն օր ամեն երեկոյ նախատօնակ. մինչեւ ուտիքը երեք շաբաթ։ Յ. և Ռ. վերափոխումն։ | 17 | 28 |
| 16 | ✠ Բշ. դկ. բ օր վերափոխման։ Յիշատակ մեռելոց։ | 18 | 29 |
| 17 | Գշ. դձ. գ օր վերափոխման։ | 19 | 30 |
| 18 | Դշ. դկ. դ օր վերափոխման։ | 20 | 31 |
| 19 | Եշ. աձ. ե օր վերափոխման։ Ն. տ. Սեպտեմբեր։ | 21 | 1 |
| 20 | Ուր. ակ. զ օր վերափոխման։ | 22 | 2 |
| | ☾ Վրջ. քառ. 4 ժ. 06 ր. առ.։ | | |
| 21 | Շբ. բձ. է օր վերափոխման։ | 23 | 3 |
| 22 | ✠ Կիր. բկ. ը օր վերափոխման։ | 24 | 4 |
| 23 | Բշ. դձ. թ օր վերափոխման։ | 25 | 5 |
| 24 | Գշ. գկ. ս. Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց ս. Աստուածածնի և կանանց իւղաբերից։ | 26 | 6 |
| 25 | Դշ. դձ. պահք։ Յիշատակ նուաճման Արեւելեան Կովկասու։ | 27 | 7 |
| 26 | Եշ. դկ. ս. Երեմեայ մարգարէին։ | 28 | 8 |
| 27 | Ուր. աձ. պահք։ | 29 | 9 |
| 28 | Շբ. ակ. ս. առաքելոյն Թովմայի Յակովբայ և Շմաւոնի. Նախատօնակ։ | 1 | 10 |
| | ● Ծննդ. լուս. 7 ժ. 22 ր. երեկ. | | |
| 29 | ✠ Կիր. բձ. Գ. կնի վերափոխման. Գիւտ գօտւոյ ս. Աստուածածնի. Հարսանիք. Յ. և Ռ. գլխատումն Յովհաննու Կարապետին։ | 2 | 11 |
| 30 | Բշ. բկ. ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և սրբոց վկայիցն Գոհարինեայ, Ծամիդէսի, Տուքիկոսի և Ռատիկոսի։ | 3 | 12 |
| 31 | Գշ. գձ. ս. մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի և Զաքարիայի՝ հօրն Յովհաննու Մկրտչին։ | 4 | 13 |

Օգոստոսի 1-ից մինչեւ այսօր օրը կարճացել է 2 ժ. 18 ր.։

# ԱՇՈՒՆ

—Հը՛, մեր տղա՛յ, գզգզուած պուրչերից տակից մխող է երեւում, երեսից խաղացող հանգստութիւնից սրտից ուրախութիւնն է գլուխ դուրս պրծացրել. էլ ո՛չ բարով, ո՛չ Աստծու բարին, ոնց որ տեսնում եմ՝ էս տարի աստղդ ծուացել է. էդ ո՞ւր ես շտապում, կանգնի տեսնենք:

—Ճաշ քուն տուող, նանի երես տուած, անգործ ու անբան, ուրիշի քրտինքն ուտող հօ չեմ, որ տարուայ էս ժամանակին գըրչերը թողած՝ բոխչամիջի չորերով զարդարուէի ու հով տեղերում չնթուկէի:

Փառք Աստծու, ամբարներս բերնէ բերան տըռզած են, մառանս մինչեւ չիմքը ձեռիս աշխատանքով լիքն է, կալ ու կուտս հաւաքել—վերջացրել եմ, եկող տարուան ցելերս արած պատրաստ են, քաղցուս կարասներում քաղցրութիւնից պճպճում, եփ է գալիս, մի քանի օրից եփը կը նստի, մաճար կը դառնայ, կատարներս կը տաքացնի, իւղ ու պանիրս, պաս ու ուտիսուան բռնուածքներիս ու թըլթուեղէնիս տարեկան պաշարը կապել եմ, ընչի՞ չեմ ուրախանայ:

Ահա այն խօսքերը, որ առատ տարուայ աշնանը լսում են ջանասէր գիւղացու բերանից: Այո՛, ռանչպարի, այգեգործի, անասնապահի իւն ամռուան քրտնքի կաթիլներն աշնան վերջերքին մարգարտի հատիկներ են, ալմաստ քարի շուաղ տուող ակներ են. գիւղացին իր աշխատանքի պտուղը քաղել է, նրա հոգին հանդարտ, նրա սիրտն ուրախ է:

Թող սկսուեն ձմեռուան ցուրտն ու բուքը, թող տերեւազուրկ եւ կանաչազուրկ լինին այգիներն ու դաշտերը, թող մեր աշխարհքը կեանք ու կենդանութիւնի մէջ պահող, գարնան բերանին մեզ հիւր եկած հաւքերը—կռունկը, արագիլը, սարեկը, ծիծեռնակը, բիւլբիւլն ու միւս երգիչ թռչնակները, մեր ծառկուտուտ—ալաշակչակները, մեր ներ կարարները, մեր տինոտինօնիլը, մեր բուբու-յոպոպները—մի մի զոյգ եկած, մի քանի զոյգ թեւաւորած, թռցրած ձագերով աշունքը թեւերին թափ տան, իրանց վերջին կչկչոց, կլկլոց, ճըռճըռոց, շըշըոց, սուսոց, ծլլոց, ճլվլոցով մեզ մընաս բարեւ ասեն, մեր աշխարհը թողան, հեռանան, տաք հարաւում, տաք ձըմեռներ անցկացնեն:

Աշուն:

Տէրն իրանց հետ, բարի ճանապարհ, բարեւ գընան, բարեւ գան, մենք իրանցից չենք նեղանում, մեզ համար հերիք են տարին բոլոր մեզ հետ մեր աշխարհում մեծացող, մեր աշխարհումը կեանք քաշող, մեր աշխարհումը կեանքերը վերջացնող ագռաւն ու կաչաղակը, կաքաւն ու սալամը, վայրի բադն ու վայրի սագը, մէկ էլ՝ մեր տնկէց, մեր հարեւան, մեր հաւերի կուտը փախցնող, մեր շներին ածած փըշրուանքներով ապրող ծտերը—ճընճղուկները. մենք սրանց սիրել ենք, դարձեալ կը սիրենք, սրանց հետ ուրախ կեանք կանցկացնենք, որովհետեւ աչքերս լի է:

Արդարեւ, ռանչպարի աչքը լի է, ձեռքն առատ, երբ իր աշխատանքն օրհնուել, իր ջանքերը պըսակուել են: Այդպիսի աշնանը՝

գիւղացու քրտինքով ապրուստ անողները բոլորեքեան անխնայ, լի ու լի ստանում են։ Սկսած դեղջուկի հոգու փրկութեան համար աղօթող, վանքերում փակուած, անքուն սաղմոս քաղող հայր սուրբերից, ժողովրդի ուրախութեանն ուրախակից, ցաւերին ցաւակից, նրան մկրտող, պսակող, թաղող տանու իրիցից, Աստծու անունով երկրագործի դուռն եկած մուրացկանից, ժամհարից, նախրապանից, հորթարածից, գլուխ խուզող, արիւն թողնող դալլաքից, մինչև թաջագլուխ 1) թուրք դարվիշները, ջինգեանէքը, գըբայ, տիրացու ու մօլլաները, նետ դնող, գարի քցող հմայութիւն անողները, աշուղներն ու փահլեանները, բոլորը, բոլորը, դատարկ ձեռքով ներս են մտնում ռանչպարի մօտ, լիքը ձեռքով դուրս գնում։ Այգետէրերից ժողոված էջմիածնապատկան պտղի կոչուած կամաւոր տուրքի աւելորդ գինին, բացի սուրբ Աթոռը ղրկուածը, մնացածը տէրտէրների, ժամհարների ու աչքածակ երեցփոխների կարասներն էլ է լցնում, թէպէտ վերջիններս իրանց բաժինն էլ յատուկ ստանում են։ Վանքին հասանելիք իւղ ու պանիրը վանքի միաբաններին էլ են լիացնում, կօնսիստորի գրագիրներին, հոգևոր կառավարութեան անդամներին ու ծառայողներին, մինչև իսկ ծառային էլ են ձուաձեղով կշտացնում։ Մի տէրտէրի տարած կալավարձը գիւղի առաջին համփայի ունեցածից շատանում է։ Հոգիները լոյս կտրուի վերջին տարուանս մէջ ժամանակի ու անժամանակ մեռնողների. Նրանք իրանցապատկան սուրբ խաչի խորովուն, եօթնի, քառասունքի, տարելիցքի ժամ պատարագները, գերեզմանօրհնէքներն ու հոգեհացերը անթերի տանում են. գիւղացին կուշտ թէ քաղցած, բերրի թէ անբերրի տարին իր բերանի պատառը կըկիսի, իր նոր վախճա-

1) Դարվիշի սրագլուխ գլխարկ։

նուածի հոգու փրկութեան հոգսը կըքաշի, իսկ առատ տարին՝ 800 տարուան մեռած պապ ու տատերն էլ են ժամ պատարագով, հոգեհացերով յիշւում, յիշատակւում։

Հայսմ մեր ազատ տղէքն ու հասած աղջիկները. գրողի մօքիցն ընկնիք դուք, քիչ էր մնում նրանց մոռանում էինք։

Ի՞նչ մոռանալու պտուղներ են։

Օ՛հ, սիրոյ կրակում էրւող ու մէրւող, բայց մոխիր չըկտրւող մեր ջահէլների սրտերը վառ է պառւում առատ տարին. ողջ մնան տատերն ու նաները, իրանց սան գլխաւոր աղամարդին էնքան ցեցի պէս կըխեթխեթեն, որ իրանց բալուկների ու թոռնիկների բաղդաւորութիւնը գլուխ կըբերեն։ Ամօթ չէ՞, միթէ, էս տեսակ բարեկից աշունքն ու նրա ետեից եկող հագար բարութիւններով լիքը ձմեռը ձեռքից բաց թողնել. չըկա՛ն սիրուն աղջիկներ. տղայ ունենամ՝ թէ չէ աղջիկը Բաղդադից կը բերեմ, ասում է թուրքական առածը։

Երկար չեն քաշում ընտանեկան խորհուրդները. անկողնում՝ գիշերը՝ կինը մարդի կակուղ տամարից բռնեց թէ չէ, մի երկու օրից տանու աղապրաշին 1) էս չարաթ՝ նշանածատէր, եկող չարաթ, կամ շատ շատ մի ամսից՝ սիրուն կնոջ տէր է դառնում։

Ի՞նչ դժուարութիւն կայ. գիւղացու ապրանք առնող չարչիներն ու մարդ խուզող առևտրականները աշունքը հարիւրներով գիւղերն են լցւում ու զնգզնգան ոսկիքը լցնում ցորնատիրոջ, գարետիրոջ, բրնձատիրոջ, այգետիրոջ, տաւար-ոչխարատիրոջ քսակները. հիմի ռանչպարի աչքում փողն ու հողը մէկ է. ընտանիքին ոտից գլուխ զարդարել, հարսանիքներ անել, ուզողին անխնայ տալ, իր կենդանու և մեռածի սիրան ու հոգին ուրախացնելը գիւղացու համար առատ աշունքը՝ խաղ ու պար է։ Թագաւորական ու գիւղական հարկ ու հասոյթները,

1) Սրբունքի հասած անդրանիկը։

վերջին գրչից մինչև գիւղական դատաւորների, տանուտէրերի, հարկաժողով գաղախների ու եասաւուլների, մեծաւորների ու նրանց փոքրաւորների սրտերը շահած պահելը՝ առատ աշնանը՝ ռանչպարի համար դարձեալ անզգալի հեշտ բան է, մինչև իսկ պարտականութիւն է։

Վայը կը գայ աշխատաւոր գեղջուկի գլխին, եթէ, բերանից թըռչի, քամին տանի, երաշտ ու անբերրի տարի լինէր ու մեր չարատանջ գիւղացի երբօր ցաւերի վըրայ հարկ առուած անտանելի ծանրութիւնն էլ աւելանար։ Բերանս չի զօրում եսման ջրի վրայ կարկտից սառը ջուր լցնել, պակասաւոր տարու դժուարութիւնները մէկ մէկ մատնահաշուի տակ դնել։ Թշուառ մարդ, հարկերի ու գիւղական արդար ու անարդար ծախսերի համար վերջին շապիկդ, օջախիդ պղինձը, երեխէքանցդ ցրտից պատսպարուելու հասարակ կտաւէ վերմակը քանի՞ ու քանի պակասաւոր աշունքներ գիւղամէջ է քաշ տրուել ու ծախուել։ Այս բոլորը քեզ ցաւ է եղել, բայց քո համբերատար հոգին չի ընկճուել, դու չես յուսահատուել, ապագայ տարուայ յուսով՝ քեզ և քո ընտանիքին այս խօսքերով ես յուսադրել.—«Աստծու կամքն էր, մեռնեմ Աստծու ողորմութիւնին, մեր սիրտն է նեղ, թէ չէ նրա սիրտը շատ լայն է. ողջ առողջութիւն լինի, եկող տարին էս տարուան վնասներն էլ կը հանենք, մենք էլ ուրախ կապրենք, ուրախ կեանք կը վայելենք։

Մենք մեղաւոր անարժաններ ենք, խնդրենք գութը շատ, երկնային Թագաւորից, որ արժանաւորաց աղօթքը լսի, իր քաղցր աչքը աշխատաւէր հողագործի վրայ պահի, նրա ձեռքի աշխատանքը կարկտից, խորշակից, մորեխից, թրթուրից, մկնից, առնէտից և ամեն ցասում պատահարներից ազատ պահի, մշակի կռանը զօրութիւն, անձին առողջութիւն տայ։

Էն ժամանակը քաղաքացի, գիւղացի, հարուստ, աղքատ, ամէնքն էլ կուշտ կը լինին, ամէնքն էլ մարդավայել կեանք կունենան»։

Որովհետև։

—Որովհետև տարին առատ է, իսկ առատութիւնը կեանք է։

Ուրեմն, առատ աշունը կեա՛նք է ու կեա՛նք։

Իսկ ի՞նչ է ասում մեր աչքի առաջև տնկուած կիսամերկ գեղեցկուհին [1])։

—Սուրբ և անարատ կանացիութեան մաքուր զգացմունքով ջահէլներին ոգևորող այս յաւերժահարսը մի ձեռքով երկնքի երեսին փռուած ծիծեռնակներին ու տարագրութեան սիրահար թռչուններին տաք հարաւի ճանապարհն է ցոյց տալիս, որ գնան այն աշխարհի արևի ջերմ ճառագայթների տակ կեանք անցկացնեն, իսկ միւս ձեռքով խաղողի հասուն ու կոխուն ճութն է առատ ողկոյզների հետ մեզ բաշխում, որպէս զի մզենք, միջի կեանք տուող նիւթը քամենք, աշխոյժ աւելացնող գինի պատրաստենք, մեր ազատ աղէքանցը ինչ նման ձիւնափայլ սիրուն աղջիկների հետ նշանենք ու երբ որ կըծպծան քաղցուն կըհասնի, արիւնի պէս կարմիր, կամ ոսկու պէս գեղնաշէկ գինի կըդառնայ, գինու քէֆով մեր գժատուս ջահէլների կարմիրը կապենք, թող գնան իրար հետ սէր անեն, իրար հետ կեանք վայելեն։

Պերճ Պռօշեանց

---

[1]) Տես էջ 41—42։

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

30 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Դշ. գկ. պահք: | 5 | 14 |
| 2 | Եշ. գձ. ս. Յովհաննու Կարապետին և Յովբայ արդարոյն: | 6 | 15 |
| 3 | Ուր. դկ. պահք. ◑ առ. քառ. 4 ժ. 33 ր. առ. | 7 | 16 |
| 4 | Շբ. աձ. Նիկիոյ ս. ժողովոյն 318 հայրապետացն. | 8 | 17 |
| 5 | ✠ Կիր. ակ դ. գկնի Վերափոխման. բարեկենդան ս. Խաչի պահոց: | 9 | 18 |
| 6 | Բշ. բձ. ա. օր ս. խաչի պահոց. | 10 | 19 |
| 7 | Գշ. բկ. բ օր ս. խաչի պահոց. Նախատօնակ | 11 | 20 |
| 8 | ✠ Դշ. դձ. գ օր ս. Խաչի պահոց. **Տօն Ծննդեան ս. Աստուածածնի** ի յԱննայէ. եւ Յուն. և Ռուսաց: | 12 | 21 |
| 9 | Եշ. գկ. դ. օր ս. Խաչի պահոց. | 13 | 22 |
| 10 | Ուր. գձ. ե օր ս. Խաչի պահոց: | 14 | 23 |
| 11 | Շբ. դկ. Տօն ս. Եկեղեցւոյ ի Նաւակատիս ս. խաչին: Նաւակատիք Աշնանամուտ 2 ժ. 26 ր. առաւ. ցերեկն սկսում է կարճանալ, իսկ գիշերն երկարել: ● լր. լուս 8 ժ. 44 ր. երեկ. ☉ 2 ժ. 26 ր. առաւ. մտնում է Կշիռ համաստեղութեան մէջ: | 15 | 24 |
| 12 | ✠ Կիր. աձ. **Խաչվերաց** (Թափօր) | 16 | 25 |
| 13 | ✠ Բշ. ակ. Տօն Խաչի. Յիշատակ մեռելոց: | 17 | 26 |
| 14 | Գշ. բձ. Տօն եկեղեցւոյ: Յ. և Ռ. Խաչվերաց. | 18 | 27 |
| 15 | Դշ. բկ. Տօն եկեղեցւոյ: | 19 | 28 |
| 16 | Եշ. գձ. Տօն եկեղեցւոյ. | 20 | 29 |
| 17 | Ուր. գկ. Տօն Խաչի. | 21 | 30 |
| 18 | Շբ. դձ. Տօն եկեղեցւոյ. Ն. Տ. Հոկտեմբեր. ☾ Վրջ. քառ. 5 ժ. 55 ր. առ. | 22 | 1 |

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 19 | ✠ Կիր. գկ. բ. գկնի ս. Խաչի Բարեկենդ. Վարագայ Խաչի: | 23 | 2 |
| 20 | Բշ. աձ. պահք. ս. Մամասայ և Փիլիկտիմոնի և Սիմէոնի սիւնակեցւոյն: | 24 | 3 |
| 21 | Գշ. ակ պահք. ս. Կուսանացն Փեփրոնեայ և Մարիանեայ և Շուշանայ՝ դստեր մեծին Վարդանայ: | 25 | 4 |
| 22 | Դշ. բձ. պահք. | 26 | 5 |
| 23 | Եշ. բկ. ս. Հայրապետացն Բարդղմու, Անթիմոսի և Երանոսի: | 27 | 6 |
| 24 | Ուր. գձ. պահք. | 28 | 7 |
| 25 | Շբ. գկ. ս. Գէորգայ զօրավարին Ազոկտոսի և Ռոմանոսի երգեցողին: | 29 | 8 |
| 26 | ✠ Կիր. դձ. գ. գկնի ս. Խաչի. **Տօն Վարագայ ս. Խաչի** միջոց ուտիքն ուժ չորաթ է. հարսանիք. 11-րդ **Տարեդարձ օծման** վեհ. Կաթուղիկոսին Ամենայն Հայոց **Տ. Տ. Մկրտչի ա.** ✠ Յ. և Ռ. Ննջումն Յովհ. աւետարանչին, ☉ Ծն. լուս 19 ժ. 6 ր. երեկ. | 30 | 9 |
| 27 | Բշ. դկ. ս. Դաւիթ Դւինեցւոյն և ս. վկայիցն Ղամբէոսի և Ղամբէուհւոյն: | 1 | 10 |
| 28 | Գշ. աձ. ս. Եւստաթէոսի և կնոջն նորա Թէոփիստեայ և երկուց որդւոցն և ս. Կուսանացն Երմոնեայ և Նկտարինեայ: | 2 | 11 |
| 29 | Դշ. ակ. պահք: | 3 | 12 |
| 30 | Եշ. բձ. ս. Իշխանացն Սահակայ և Համազասպայ. Սեպտեմբ. 1-ից մինչև այսօր օրը կարճացել է 2 ժ. 26 ր. | 4 | 13 |

# ՀՈԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Ուր. բկ. պահք. Ց. և Ռ. պաշտպանութիւն ս. Աստուածածնի: | 5 | 14 |
| 2 | Շբ. գձ. ս. Եօթանասուն և երկու աշակերտացն Քրիստ. | 6 | 15 |
| 3 | ✣ Կիր. գկ. դ. կկնի ս. Խաչի. հարսանիք. | 7 | 16 |
| | ☽ առ. քառ. 8 ժ. 17 ր. առ. | | |
| 4 | Բշ. դձ. ս. Փոկասու հայրապետին, Երանոսի հեռեւողին և առաքելոցն: | 8 | 17 |
| 5 | Գշ. դկ. ս. կուսանացն Թեկղի, Վարվառեայ և Պեղեգեայ: | 9 | 18 |
| 6 | Դշ. աձ պահք. | 10 | 19 |
| 7 | Եշ. ակ. ս. Պանդալէոնի բժշկին, Երմողեայ քահանային և Եւպրաքսեայ կուսին: | 11 | 20 |
| 8 | Ուր. բձ. պահք. | 12 | 21 |
| 9 | Շբ. բկ. ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովպայ, Եղիշէի, Մովսէսի քերթողին, Դաւթի անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսէսի Կլայեցւոյն. | 13 | 22 |
| 10 | ✣ Կիր. գձ. ե կկնի ս. Խաչին. հարսանիք: | 14 | 23 |
| 11 | Բշ. գկ. Գիւտ Նշխարաց ս. Գրիգորիսի աղուանից կաթուղիկոսի և ս. հարցն Թաթլոյ, Վարոսի և Թումասու, Անտօնի և Կրօնիդեայ և 7 խոստովանողացն որք յԻնդկաց Եւ, Նովեայ, կուսանաց վանաց կատարեցան. | 15 | 24 |
| | ⊛ լր. լուսնի 4 ժ. 28 ր. առ. | | |
| | ☼ 11 ժ. 6 ր. առաւ. մտնում է Կարիճ համաստեղութեան մէջ: | | |

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 12 | Գշ. դձ. ս. առաքելոցն Անանիայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Շիղայի և Սիղիանոսի: | 16 | 25 |
| 13 | Դշ. դկ. պահք: | 17 | 26 |
| 14 | Եշ. աձ. ս. Դիոնիսիոսի Արիսպագացւոյն և ս. առաքելոցն Տիմոթէոսի և Տիտոսի: | 18 | 27 |
| 15 | Ուր. ակ. պահք. | 19 | 28 |
| 16 | Շբ. բձ. ս. աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու: | 20 | 29 |
| 17 | ✣ Կիր. բկ. Զ կկնի ս. Խաչի. հարսանիք: | 21 | 30 |
| 18 | Բշ. գձ. ս. Ղունկիանոսի հարիւրապետին, որ հաւատաց ի խաչելութիւնն Քրիստոսի և Յովսէփայ աստուածահօրն, Յովսէփայ Արեմաթացւոյն և բարեկամին Քրիստոսի Ղազարու և քերց նորա Մարթայի և Մարիամու: | 22 | 31 |
| | ☾ Վրջ. քառ. 1 ժ. 32 ր. երեկ. | | |
| 19 | Գշ. գկ. ս. Թէոդիտոնի քահանային, Զենոնի զինուորին, Մակարայ, Եւդոքսեայ և Ռոմեայ: Ն, տ. Նոյեմբեր: | 23 | 1 |
| 20 | Դշ. դձ. պահք: | 24 | 2 |
| 21 | ♔ Եշ. դկ. ս. Խարիտեանց և ս. վկայիցն Արտեմեայ և Քրիստափորի և երկուց կանանցն Կալինիկեայ և Ակիւլինեայ: † Յ, և Ռ. Հրաշագործ պատկերին ս. Աստուածածնայ Ղազանու: | 25 | 3 |
| 22 | Ուր. աձ. պահք. | 26 | 4 |
| 23 | Շբ. ակ. ս. երկոտասան վարդապետացն՝ Ռեթէոսի, Դիոնիսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւր- | 27 | 5 |

| 0 | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| | ղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի Խուրին ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի Աղէքսանդրացւոյն: | | |
| 24 | ✠ Կիր. բձ. Է գկնի ս. Խաչի. **Գիւտ Խաչ.** հարսանիք: | 28 | 6 |
| 25 | Բշ. բկ. ս. Անաստասայ քահանային, Վարոսի և Թէոդորիտեայ և որդւոց նորա և որք ընդ նմա կատարեցան: | 29 | 7 |
| 26 | Գշ. գձ. ս. Հիպերեքեանց, որք ի Սամուսատ կատարեցան: | 1 | 8 |
| | ◉ Ծն. լուս. 2 ժ. 50 ր առ. | | |

| 0 | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 27 | Դշ. գկ. պահք. | 2 | 9 |
| 28 | Եշ. դձ. ս. Սեբրիանոսի Սեբաստացւոյն և Բաբելայ Ծերոյն և 84 աշակերտաց նորին: | 3 | 10 |
| 29 | Ուր. դկ. պահք. | 4 | 11 |
| 30 | Շբ. աձ. ս. Յովհաննու Ոսկեբերան հայրապետին: | 5 | 12 |
| 31 | ✠ Կիր. ակ. Ը. գկնի ս. Խաչի. Հարսանիք: | 6 | 13 |
| | Հոկտեմբ. 1-ից մինչև այսօր, օրը կարճացել է 2 ժ. 12 ր. | | |

# ՆՈՅԵՄԲԵՐ

30 ՕՐ

| Օ | | Լ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Բշ. բձ. ս. Ստեփաննոսի Հռոմայ հայրապետին և քահանայից, սարկաւագաց և ժողովրդոյն. ☽ Առ. քառ. 0 ժ. 01 ր. առ. | 7 | 14 |
| 2 | Գշ. բկ. ս. Եկեփորեայ եպիսկոպոսին և Յովսէփայ քահանային, Այիթալայ սարկաւագին և Պղատոնի վկային: | 8 | 15 |
| 3 | Դշ. գձ. պահք. | 9 | 16 |
| 4 | Եշ. գկ. ս. Հայրապետացն Միտրոփանոսի, Աղէքսանդրոսի և Պօղոսի խոստովանողին և Նոտարացն Մարկիանոսի և Մարտիրոսի: | 10 | 17 |
| 5 | Ուր. դձ. պահք. Նախատօնակ. | 11 | 18 |
| 6 | ✠ Շբ. դկ. ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն զօրացն: | 12 | 19 |
| 7 | ✠ Կիր. աձ. Թ. զկնի ս. Խաչի. Հարցանիք: | 13 | 20 |
| 8 | Բշ. ակ. ս. Մելիտոսի Անտիոքայ հայրապետին, Մինասայ եգիպտացւոյն և միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային և Զինու սարկաւագին: ☺ Լր. լուս. 11 ժ. 12 ր. երեկ. | 14 | 21 |
| 9 | Գշ. բձ. ս. Դիմիտրեայ վկային և Բասիլիկոսի քահանային. ☼ 8 ժ. 6 ր. առաւ. մտնում է Աղեղնաւոր համաստեղութեան մէջ: | 15 | 22 |
| 10 | Դշ. բկ. պահք. | 16 | 23 |
| 11 | Եշ. գձ. ս. Գուրիասայ, Սամոնասայ, և Աբիբայ սարկաւագին, Թամանոսի միայնակեցին, մանկանն խոստովանողին և Հիւքսոսի զինւորին: | 17 | 24 |
| 12 | Ուր. գկ. պահք. | 18 | 25 |
| 13 | Շբ., դձ. ս. Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի. ✠ Յովհաննու ոսկեբերանին. | 19 | 26 |
| 14 | ✠ ♔ Կիր. դկ. Ժ. զկնի ս. Խաչի. Հարցանիք. | 20 | 27 |
| 15 | Բշ. աձ. Անդրէի զօրավարին և բանակի նորին: | 21 | 28 |
| 16 | Գշ. ակ. ս. Անդրիանոսի և կնոջ նորա: ☾ վերջ. քառ. 8 ժ. 23 ր. առ. | 22 | 29 |
| 17 | Դշ բձ. պահք: | 23 | 30 |
| 18 | Եշ. բկ. ս. Աբրահամու և Խորենայ, Կոզմայի և Դամիանոսի և Աստուածատուրոյ վկային: Ն. Տ. Դեկտեմբեր: | 24 | 1 |
| 19 | Ուր. գձ. պահք: | 25 | 2 |
| 20 | Շբ. գկ. Տօն ամենայն սրբոց հնոց և նորոց, յայտնից և անյայտից: Նախատօնակ: | 26 | 3 |
| 21 | ✠ Կիր. դձ. ԺԱ. զկնի ս. Խաչի: Տօն ս. **Աստուածածնի** երից ամաց **ընծայման** ի տաճարն. ևս Յունաց և Ռուսաց: Բարեկենդան յիսնակի պահոց: | 27 | 4 |
| 22 | ♔ Բշ. գկ. ա օր. յիսնակի պահոց. | 28 | 5 |
| 23 | Գշ. աձ. բ. օր յիսնակի պահոց: | 29 | 6 |
| 24 | Դշ. ակ. գ օր յիսնակի պահոց: | 3 | 7 |
| 25 | Եշ. բձ. դ օր յիսնակի պահոց: ● Ծն. լուսնի 4 ժ. 34 ր. առ. | 1 | 8 |
| 26 | Ուր. բկ. ե օր յիսնակի պահոց: | 2 | 9 |
| 27 | Շբ. գձ ս. Գրիգորի սքանչելագործ հայրապետին, Նիկողայոսի և Միւռոնայ եպիսկոպոսացն: | 3 | 10 |
| 28 | ✠ Կիր. գկ. ա կիր. զկնի յիսնակին: Հարցանիք: | 4 | 11 |
| 29 | Բշ. դձ. ս. Յուլիանայ և Վասիլուհւոյ, Ինդոսի և Դոմնայի: | 5 | 12 |
| 30 | Գշ. դկ. ս. Ղունկիանոսի քահանային, Տարագրոսի, Պրօպոսի, Անդրոնիկոսի և Ոնեսիմեայ: Յ. և Ռ. Անդրէյ առաքելոյն: | 6 | 13 |

Նոյեմբերի 1-ից մինչև վերջը օրը կարճացել է 1 ժ. 24 ր.

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ

| Օ | | Հ | ՆՏ |
|---|---|---|---|
| 1 | Դշ. ժա. պահք: ☽ առ. քառ. 1 ժ. 45 ր. երեկ. | 7 | 14 |
| 2 | Եշ. ակ. ս. Կղեմայ հայրապետին, Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսին: | 8 | 15 |
| 3 | Ուր. ըձ պահք: Նախատօնակ: | 9 | 16 |
| 4 | ✠ Շբ. ըկ ս. առաքելոյն և առաջին լուսաւորչացն մերոյ **Թադէոսի եւ Բարդուղիմէոսի.** | 10 | 17 |
| 5 | ✠ Կիր. գձ ը. կիր. զկնի յինանկի | 11 | 18 |
| 6 | ♔ Բշ. գկ. Գենադիոսի եպիսկոպոսին: Մերկերիոսի զինուորին, Յակոբայ և Իրաւափառոյ. ✠ Յ. և Ռ. ս. Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին: | 12 | 19 |
| 7 | Գշ. գձ ս. հարցն եգիպտացւոց Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գրնեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմենի և այլոց սրբոց: | 13 | 20 |
| 8 | Դշ. գժ. պահք: Նախատօնակ: | 14 | 21 |
| 9 | ✠ Եշ. աձ **տօն յղութեան ս. կուսին Մարիամու ի յԱնեայէ** Եւս Յուն. և Ռուսաց: ☼ 11 ժ. 24 ր. գիշեր մտնում է Այծեղջիւր համաստեղութեան մէջ: Ձմեռնամուտ և արեւադարձ Այծեղջիւր: Ցերեկն սկսում է երկարել, իսկ գիշերը կարճանալ: | 15 | 22 |
| 10 | Ուր. ակ. պահք: | 16 | 23 |
| 11 | Շբ. ըձ. Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին: | 17 | 24 |
| 12 | ✠ Կիր ըկ. գ. զկնի յինանկ, բարեկենդան ս. Յակոբայ պահոց: | 18 | 25 |
| 13 | Բշ. գձ. պահք. ս. Մինասայ, Երմոգինեայ, Գրաթոսի և կամաւոր աղքատացն Յովհաննու, Աղէքսիանոսի: | 19 | 26 |
| 14 | Գշ. գկ. պահք ս. Կուռնէլիոսի հարիւրապետին և Շմաւոնի ազգականին Քրիստոսի,որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պօղիկարպոսին Զմիւռնիոյ: | 20 | 27 |
| 15 | Դշ. գձ. պահք: | 21 | 28 |
| 16 | Եշ. գկ պահք. ս. Եւստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգենիոսի, Ովրեստիսի և Մարդարիոսի: ☾ վրջ. քառ. 0 ժ. 7 ր. երեկ. | 22 | 29 |
| 17 | Ուր. աձ. պահք. | 23 | 30 |
| 18 | Շբ ակ. ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին | 24 | 31 |
| 19 | ✠ Կիր. ըձ. դ. կիր. զկնի յին. Ն. տ. ծունուար 1905 թ. | 25 | 1 |
| 20 | Բշ. ըկ. ս. Իգնատիոսի և Ագգէի հայրապետացն, Մարութայի և Թէոպոմպայ եպիսկոպոսացն և Թէովնայ վկային և չորից զինուորացն: | 26 | 2 |
| 21 | Գշ. գձ. Սրբոյն Արգարու թագաւորին մերոյ: | 27 | 3 |
| 22 | Դշ. գկ. պահք: Նախատօնակ: | 28 | 4 |
| 23 | Եշ. դձ. ս. Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն: | 29 | 5 |
| 24 | Ուր. գկ. պահք. Նախատօնակ: Յունաց և Ռուսաց ճրագալոյց Ծննդեան: ● Ծն. լուս 11 ժ. 12 ր. երեկ. | 1 | 6 |
| 25 | Շբ. աձ. ս. Ստեփաննոսի Նախավկային: ✠ Յունաց և Ռուսաց Ծնունդ Յիսուսի Քրիստոսի: | 2 | 7 |
| 26 | ✠ Կիր. ակ. Ե կիր. զկնի յինանկի: Նախատօնակ: Յունաց և Ռուսաց բ օր ծննդեան: | 3 | 8 |
| 27 | Բշ. ըձ ս. առաքելոյն Պետրոսի և Պօղոսի: Յունաց և Ռուսաց գ օր ծննդ. Նախատօնակ: | 4 | 9 |
| 28 | Գշ. ըկ. Որդւոցն Որոտման, սրբոցն Յակոբայ առաքելոյն և Յովհաննու աւետարանչին: | 5 | 10 |
| 29 | Դշ. գձ. պահք: Բարեկենդան Ծննդեան պահոց: | 6 | 11 |
| 30 | Եշ. գկ. ա օր Ծննդեան պահոց: ☽ առ. քառ. 8 ժ. 23 ր. առ. | 7 | 12 |
| 31 | Ուր. գձ. բ օր Ծննդ. պահոց: | 8 | 13 |

Դեկտեմբերի 1-ից մինչև այսօր օրն աւելացել է 0 ժ. 27 ր.

Կազմեց Ն. քահ. Նիկողոսեան:

# Մշտական օրացոյց.

Հետեւեալ աղիւսակների միջոցով կարելի է հեշտութեամբ գտնել, թէ շաբաթուայ որ օրուան է համապատասխանում որեւ է տարուայ այս կամ այն ամսաթիւը:

I Աղիւսակ

| Դարեր հին տոմարով | | | Շաբաթուայ օրերը | | | | | | | Դարեր նոր տոմարով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 8 | 15 | Շբ. | Կիր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ուր. | — | 18 | 22 | 26 |
| 2 | 9 | 16 | Ուր. | Շբ. | Կիր. | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | — | — | — | — |
| 3 | 10 | 17 | Եշ. | Ուր. | Շբ. | Կիր. | Բշ. | Գշ. | Դշ. | — | 19 | 23 | 27 |
| 4 | 11 | 18 | Դշ. | Եշ. | Ուր. | Շբ. | Կիր. | Բշ. | Գշ. | — | — | — | — |
| 5 | 12 | 19 | Գշ. | Դշ. | Եշ. | Ուր. | Շբ. | Կիր. | Բշ. | 16 | 20 | 24 | 28 |
| 6 | 13 | 20 | Բշ. | Գշ. | Դշ. | Եշ. | Ուր. | Շբ. | Կիր. | 17 | 21 | 25 | 29 |
| 7 | 14 | 21 | Կիր. | Բշ. | Գշ. | Դշ | Եշ. | Ուր. | Շբ. | — | — | — | — |

Նահանջ տարի-
ուած են երկու
ամսաթիւր յուն-
տրուարի մէջն
վերցնել համա-
սովորական թու
ներէ միւս ամի-
պէտք է վերցը-
անշաններից։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | **4** | 5 | 6 |
| 7 | 8 | **8** | 9 | 10 | 11 | 12 |
| **12** | 13 | 14 | 15 | 16 | **16** | 17 |
| 18 | 19 | 20 | **20** | 21 | 22 | 23 |
| 24 | **24** | 25 | 26 | 27 | 28 | **28** |
| 29 | 30 | 31 | 32 | **32** | 33 | 34 |
| 35 | 36 | **36** | 37 | 38 | 39 | 40 |
| **40** | 41 | 42 | 43 | 44 | **44** | 45 |
| 46 | 47 | 48 | **48** | 49 | 50 | 51 |
| **52** | **52** | 53 | 54 | 55 | 56 | **56** |
| 57 | 58 | 59 | 60 | **60** | 61 | 62 |
| 63 | 64 | **64** | 65 | 66 | 67 | 68 |
| **68** | 69 | 70 | 71 | 72 | **72** | 73 |
| 74 | 75 | 76 | **76** | 77 | 78 | 79 |
| 80 | **80** | 81 | 82 | 83 | 84 | **84** |
| 85 | 86 | 87 | 88 | **88** | 89 | 90 |
| 91 | 92 | **92** | 93 | 94 | 95 | 96 |
| **96** | 97 | 98 | 99 | 100 | **100** | — |

ները նշանակ-
անգամ։ Եթէ
ուարի կամ փե-
է, պէտք է
պատասխան
անշանը, իսկ
ամերի մէջն է,
նել սեւ թու-

ա) Օրինակ. չարաթուայ ո՞ր օրուան է համապատասխանում 1902 թ. Դեկտեմբերի 25-ը—հին տոմարով:

Դրա համար I-ն աղիւսակի 20-րորդ դարի հորիզոնական ուղղութեամբ և երկու տարուայ—(Ներքևի թուանշանների շարքում)—ուղղահայեաց ուղղութեամբ նայելով, գտնում ենք «երեքշաբթի» օրը: Ապա վերցնում ենք II աղիւսակը և դեկտեմբեր ամսի սիւնակում գտնում ենք 3, 10, 17, 24 և 31 թուանշանները, որոնք ցոյց են տալիս, թէ երեքշաբթին համապատասխանում է դեկտեմբերի այդ ամսաթուերին: Ուրեմն դեկտեմբերի 24—ը երեքշաբթի է, հետևապէս 25—ը՝ չորեքշաբթի:

II աղիւսակ

| Յունվ. Հոկտ. | Ապր. Յուլ. | Սեպ. Դեկտ. | Յունուար | Փետ. Մարտ Նոյեմ | Օգոստոս. | Մայիս |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 29 | 30 | 31 | — | — | — | — |

բ) Օրինակ. 1902 թ. Դեկտ. 25—ը չաբաթուայ ո՞ր օրուան է համապատասխանում նոր տոմարով:

Դրա համար I աղիւսակի նոր տոմարի 20 դարի հորիզոնական ուղղութեամբ և 2 տարուայ—(Ներքևի շարքում)—ուղղահայեաց ուղղութեամբ նայելով. գտնում ենք «չորեքշաբթին»: Յետոյ II աղիւսակի, դեկտեմբեր ամսի սիւնակում տեսնում ենք 3, 10, 17, 24 և 31 թուանշանները, որոնք ցոյց են տալիս, թէ դեկտեմբերի այդ ամսաթուերին չորեքշաբթի է: Եթէ 24-ին չորեքշաբթի է, ուրեմն 25-ին կը լինի հինգշաբթի:

Նոյն ձևով պէտք է վարուել և ուրիշ դէպքերում: Օրինակ՝ 1874 թ. յունուարի 5-ին հին տոմարով կլինի չորեքշաբթի, իսկ նոր տոմարով՝ շաբաթ ևայլն:

# ԵՐԿՈՒ ՈՐՈՇ ԱՄՍԱԹՈՒԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Ճշտութեամբ գտնելու համար կարելի է գործ ածել հետևեալ աղիւսակը.

| Ամիսներ | Յունուար | Փետրուար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Յունիս | Յուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յունուար | — | 31 | 59 | 90 | 120 | 151 | 181 | 212 | 243 | 273 | 304 | 334 |
| Փետրուար | 334 | — | 28 | 59 | 89 | 120 | 150 | 181 | 212 | 242 | 273 | 303 |
| Մարտ | 306 | 334 | — | 31 | 61 | 92 | 122 | 153 | 184 | 214 | 245 | 275 |
| Ապրիլ | 275 | 306 | 334 | — | 30 | 61 | 91 | 122 | 153 | 183 | 214 | 244 |
| Մայիս | 245 | 276 | 304 | 335 | — | 30 | 61 | 92 | 123 | 153 | 184 | 214 |
| Յունիս | 214 | 245 | 273 | 304 | 334 | — | 30 | 61 | 92 | 122 | 153 | 183 |
| Յուլիս | 184 | 215 | 243 | 274 | 304 | 335 | — | 31 | 62 | 92 | 123 | 153 |
| Օգոստոս | 153 | 184 | 212 | 243 | 273 | 304 | 334 | — | 31 | 61 | 92 | 122 |
| Սեպտեմբեր | 122 | 153 | 181 | 212 | 242 | 273 | 303 | 334 | — | 31 | 61 | 91 |
| Հոկտեմբեր | 92 | 123 | 151 | 182 | 212 | 243 | 273 | 304 | 335 | — | 31 | 60 |
| Նոյեմբեր | 61 | 92 | 120 | 151 | 181 | 212 | 243 | 273 | 304 | 334 | — | 30 |
| Դեկտեմբեր | 31 | 62 | 90 | 121 | 151 | 182 | 212 | 243 | 274 | 304 | 335 | — |

1) Օրինակ. Եթէ հարկաւոր է իմանալ, թէ քանի օր է անցել Մարտից մինչև Նոյեմբեր, դրա համար պէտք է վերցնել լուսանցքի միջի աղիւսակից Մարտը, իսկ վերևի աղիւսակից Նոյեմբեր, այդ երկուսի ուղղութեանը համապատասխանող թուանշանը, այսինքն 245-ը ցոյց կտայ որոնած թիւը: Նոյն ձևով կարելի է գտնել, որ Մայիսի 10-ից մինչև Սեպտեմբերի 10-ը 123 օր է անցել, Փետրուարի 15-ից Յուլիսի 15 ը 120 օր է և այլն:

2) Օրինակ. Եթէ ամսաթուերը միատեսակ չեն, օրինակ եթէ հարկաւոր է գտնել, թէ քանի օր է անցել Մարտի 1-ից մինչև Նոյեմբերի 20-ը, այն ժամանակ յիշեալ ձևով պէտք է գտնել համապատասխան թուանշանը, այսինքն 245 և դրա հետ գումարել աւելորդ 20 օրը, կստանանք 265. իսկ եթէ պէտք է գտնել օրերի թիւը Մարտի 20-ից մինչև Նոյեմբերի 1-ը, այն ժամանակ պէտք է գտած թուից՝ 245-ից հանել 20—կստանանք 225:

# Տօմարագիտութիւն.

Ինչ է տօմարը. Տօմար կոչւում է այն աղիւսակը, որի մէջ դասաւորուած են տարուայ բոլոր օրերը՝ ամիսների կարգով և ամիսները՝ օրերի բաժանած: Բացի դրանից նրա մէջ նշանակուած են լինում աստղագիտական մի քանի ծանօթութիւններ՝ արևի ծագման և մայր մտնելու, եղանակների, լուսնի, տօների մասին և այլն:

Հռոմայեցիները տօմարին Calendrier անունն էին տալիս, որ առաջ է եկել Galendae բառից: Հռոմի քրմապետը պարտաւոր էր հսկել նաև տօմարի կանոնաւորութեան վրա, ուստի իւրաքանչիւր լուսնի սկզբին ժողովրդին հաւաքում էր Ֆօրիւմը—հրապարակը և հաղորդում, թէ քանի օր է տևելու նոր ամիսը: Հէնց այդ գործողութիւնն էլ կոչւում է Calendae, այսինքն «հրաւիրում եմ», «ծանուցանում եմ»:

Հայերէն «Տօմար» անունը առաջ է եկել յունարէն «Թօմարիոնի» բառից, որի սկզբնական ձևը նշանակում է «Զեկուցագիր», ուստի և շատ մօտ է հռոմէական իմաստին:

Տօմարների տեսակները*) երեք են՝ կէս լուսնային, լուսնային և արեգակնային տօմար:

Կէս լուսնային տօմարով ամիսները սկսւում և վերջանում էին լուսնային երևոյթների համեմատ, ուստի տարին ունէր 12 ամիս, բայց որովհետև այդ հաշիւը ճիշտ չէր, ուստի հարկաւոր դէպքում աւելացնում էին նաև մի նոր-XIII-րորդ ամիս, որպէսզի տարեգլուխը հասնի իր բուն ժամանակին՝ գարնան գիշերահաւասարին: Այդպիսի աւելացում կատարւում էր 19 տարուայ ընթացքում 7 անգամ: Այդպէս ուրեմն այդ տօմարի հիմքը մասամբ արեգակն էր, մասամբ լուսինը, ուստի և նա կոչւում էր կէս լուսնային: Այդ տօմարը գոյութիւն ունէր հին յոյների, մակեդոնացիների և հռոմայեցիների—(Նումա Պոմպիլիոսից մինչև Յ. Կեսարի օրերը)—մէջ, իսկ այժմ շատ քիչ տեղերում՝ ընիկ հնդկացիների մէջ, Ճապոնիայում և Չինաստանում:

Լուսնային տօմարով տարին բաժանուած է լուսնի ընթացքի համեմատ և տևում է 354 օր, 8 ժամ, 48 վայրկեան: Լուսնային տարի գործ են ածում չինացիները թիւրքերը և արաբները:

Արեգակնային տօմարով տարին տևում է 365-366 օր՝ 12 ամիսների բաժանած:

---

*) Տեղեկութիւնները քաղել ենք Եղդ. Հիւանդանոցի «Ընդարձակ օրացոյցի» 1900—2 թ.:

Այժմ տեսնենք, թէ տօմարների այդ երեք տեսակները զանազան ժամանակներում, զանազան ազգերի մօտ ինչպիսի ձեւակերպութիւն են ստացել:

## ՔԱՂԴԷԱԿԱՆ—ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏՕՄԱՐ:

Քաղդէական տօմարը արեգակնային էր, ուստի և տարեկան 1/4 օր պակասորդ ունէր: Այդ պակասորդներից առաջացած սխալն ուղղելու համար իւրաքանչիւր 1460 տարուայ վրայ աւելացնում էին մի «լրման տարի»:

Քաղդէական տօմարից առաջ է եկել և Հայկական տօմարը, որ և ամբողջովին նման է նրան:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏՕՄԱՐ:

Հայոց հին տօմարն էլ արեգակնային էր՝ 12 երեսնօրեայ ամիսներով և հինգ աւելեաց օրերով: Այդ 12 ամիսներն էին.

| | |
|---|---|
| Նաւասարդ . . . . . . . | 30 օր |
| Հոռի . . . . . . . . . . | 30 օր |
| Սահմի . . . . . . . . . | 30 օր |
| Տրէ . . . . . . . . . | 30 օր |
| Քաղոց . . . . . . . . . | 30 օր |
| Արաց . . . . . . . . . | 30 օր |
| Մեհեկան . . . . . . . . | 30 օր |
| Արեգ . . . . . . . . . | 30 օր |
| Ահեկան . . . . . . . . . | 30 օր |
| Մարերի . . . . . . . . , | 30 օր |
| Մարգաց . . . . , . . . . | 30 օր |
| Հրոտից . . . . . . . : . | 30 օր . |

Աւելեաց 5 օր

Քրիստոսի 552 թուին, Հայոց համար նոր տօմարական ուղղութեամբ մի թուական սկսուեց, զատկական հինգհարիւրակի հաստատութեամբ: Նոյն թուականի կաթուղիկոսն էր Ներսէս Բագրեւանդացին, բայց որովհետև Մովսէս կաթուղիկոս Եղիվարդեցին եղաւ այդ տօմարական հաշիւը գործադրողը՝ 574-ին, դրա համար էլ պատմութեան մէջ Մովսէսի անունով է յիշուած թէ նորոգութիւնը և թէ թուականը:

Հայոց այդ տօմարական թուականը 551 տարուան տարբերութիւն ունի Քրիստոսի թուականից, այնպէս որ Քրիստոսի մի որև է թուականին համապատասխանող Հայոց տօմարական թուականը գտնելու համար պէտք է նրանից հանել 551: Օրինակ 1902 թ. համապատասխանում է Հայոց 1351 թ. (1902—551=1351):

Մովսէս կաթուղիկոսի այս տօմարական նորոգութիւնից 532 տարի յետոյ՝ 1084-ին Յովհաննէս վարդապետ Սարկաւագը երկրորդ նորոգութիւնը մտցրեց, ընդունելով նահանջի դրութիւնը, այսինքն չորս տարին մի անգամ փոխանակ հինգի՝ վեց աւելեաց օրեր սահմանելով: Այս դրութիւնը կոչուեցաւ Սարկաւագադիր տօմար:

Երրորդ նորոգութիւնը տեղի ունեցաւ 1616-ին, սարկաւագադիր տօմարից 532 տարի յետոյ, Ջուղայի մէջ, բայց ընդհանուր գործադրութիւն չգտաւ: Այդ թուականը կոչուեցաւ Ազարիայի թուական:

1774-ին Երևանցի Սիմէօն կաթուղիկոսը կազմեց մի տօնացոյց, որ գործածութեան դրուեցաւ 1777-ին: Նա, իւրաքանչիւր տարեգրի դրութեան համեմատ տօները դասաւորելով, կազմեց մի Մշտնջենական օրացոյց: Սիմէօն կաթուղիկոսի տօնացոյցը թիւրքահայերի մէջ գործածութեան դրուեցաւ 1799-ին, Դանիէլ պատրիարքի օրով:

## ՀՐԷԱԿԱՆ ՏՕՄԱՐ:

Հրէական տօմարը կազմուած է լուսնի և արևի շրջանների համեմատ: Տարին բաժանուած է լուսնային ամիսների՝ 29 կամ 30 օրերով: Սովորական կանոնաւոր տարին բաղկացած է 12 ամսից, այսինքն ունի 354 օր կամ մի օր աւել, կամ պակաս: Նահանջ տարիները ունեն նաև մէկ աւելեաց ամիս, այսինքն ընդամենը 13 ամիս, որ կազմում է 384 օր կամ մի օր պակաս:

## ԱՐԱԲԱԿԱՆ—ԹԻՒՐՔԱԿԱՆ ՏՈՄԱՐ

Արաբական տօմարի հիմքն է լուսնային տարին, որ բաղկացած է հետեւեալ 12 ամիսներից.

| | |
|---|---|
| Մուհարրէմ . . . . . . . | 30 օր |
| Սէֆէր . . . . . . . | 29 օր |
| Րէպիուլ էվվէլ . . . . . | 30 օր |
| » » ախըր . . . . | 29 օր |
| Ճէմաի իւլ էվվէլ . . . . | 30 օր |
| » » ախըր . . . . | 29 օր |
| Րէճէպ . . . . . | 30 օր |
| Շապան . . . . . . . | 29 օր |
| Րամազան . . . . . . . | 30 օր |
| Շէվվալ . . . . . . . | 29 օր |
| Զիլգատէ . . . . . . . | 30 օր |
| Զիլհիճճէ . . . . . . . | 29 օր |

Արաբական տարին երբեմն 354 օր ունի. իսկ երբեմն 355 օր: Արաբացիք ունեցել են նաև արեգակնային տարուայ հաշիւ, որով տարին բաժանուած է երկու մասերի՝ Գասըմ և Խըտրէլլէզ անուններով: Գասըմը միշտ հոկտեմբերի 26-ին է սկսւում (Յուլեան տօմար) և տեւում է 179 օր, իսկ նահանջ տարիները՝ 180 օր: Խըտրէլլէզը ապրիլի 23-ին է սկսւում և տեւում է 186 օր:

50- 60 տարի առաջ Թիւրքիայում էլ ընդունուած է, միայն առեւտրական հաշիւների համար, արեգակնային տարին՝ Յուլեան տօմարի համաձայն: Տարբերութիւնը այն է միայն, որ Թիւրքական տարին՝ փոխանակ յունուարից սկսուելու մարտից է սկսւում:

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏՕՄԱՐ

Պարսկական տօմարը բոլորովին նման էր Քաղդէականին, այսինքն ունէր 30 օրից բաղկացած 12 ամիս և 5 «աւելեայ» օրեր:

Պարսկական տօմարը նորոգութեան ենթարկեց Զրադաշտը դեռ Քրիստոսի ծննդից 400 տարի առաջ: Այդ նոր տօմարը գործածուեց մինչև 651 թ., այսինքն մինչև որ պարսիկների մէջ հաստատուեց արաբական տօմարը: Զրադաշտի տօմարը այժմ դեռ գործ է ածւում հնդկարնակ փարսիների մէջ:

## ՅՈՒԼԵԱՆ ՏՕՄԱՐ:

Հռոմուլոսի ժամանակ (754 Ք. ա.) տարին բաղկացած էր 10 ամսից = 304 օր: Առաջին ամիսն էր Մարս, որին յաջորդում էին Ապրիլ, Մայիս, Յունիս, Կուինտիլիս, Սեքստիլիս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր:

Նումա Պոմպիլիոսը (716 Ք. ա.) աւելացրեց երկու նոր ամիսներ՝ Յունուար և Փետրուար, տարին վերածելով 355 օրուայ:

Յուլիոս Կեսարը, ուրիշ գիտնականների խորհրդակցութեամբ ընդունեց տարին 365 1/4 օր հաշուելու սկզբունքը: Այս սկզբունքով տարին պէտք է ունենար 365 օր և ամեն չորս տարին մի անգամ 366 օր: Այս լրիւ տարիները կոչուեցան Նահանջ:

Յուլիոսը չփոփոխեց Նումայի 12 ամիսների շարքն ու ամիսները. միայն մի քանի ամիսների վրայ յաւելումներ արեց, որով Յունուար, Մարտ, Մայիս, Կուինտիլիս (որ ինքը Յուլիս փոխեց իր անունով), Սէքստիլիս (որ նրա յաջորդը Օգոստոս կայսրը Օգոստոսի փոխեց), Հոկտեմբեր և Դեկտեմբեր ունեցան 31-ական օր. Ապրիլ, Յունիս, Սեպտեմբեր, Նոյեմբեր 30-ական օր. իսկ Փետրուար 28 օր՝ սովորական տարիների և 29 օր՝ նահանջ տարիների համար: Յուլիական տօմարը, որ գործածութեան դրուեց Քրիստոսից 45 տարի առաջ, շատ ընդհանրացաւ իր դիւրըմբռնելի և կանոնաւոր ընթացքի համար: Այդ տօմարը, որ յայտնի է «հին տօմար» անունով, մինչև հիմա էլ գործ է ածւում հայերի, յոյների, ռուսների և ուրիշ արևելեան ազգերի մէջ: Թիւրքիան էլ նոյն տօմարը գործ է ածում ելմտական հաշիւների համար:

## ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՕՄԱՐ:

Յուլեան տօմարը, իւրաքանչիւր քառամեակում մի նահանջ տարի ընդունելով, աստղաբաշխական հաշիւներին բոլորովին չէր համապատասխանում, այնպէս որ ԺԶ դարի

վերջերը, աստղաբաշխական տարուայ և Յուլեան տոմարի տարուայ մէջ արդէն տասը օրուայ տարբերութիւն էր գոյացել: Զանազան գիտնականների առաջարկութեամբ Գրիգոր ԺԳ Պապը որոշեց ուղղել այդ սխալը: Նա 1582 թ. Հոկտեմբերի 5-ի վրա 10 օր աւելացրեց, որով և Հոկտեմբերի 5-ը եղաւ Հոկտեմբեր 15:

Գրիգորեան տոմարի համեմատ իւրաքանչիւր երեք դարից յետոյ հետևեալ չորրորդ դարի սկզբի տարին նահանջ է. այսպէս 1600-ը նահանջ էր, 1700-ը, 1800-ը, 1900-ը նահանջ չէին, իսկ 2000 դարձեալ նահանջ պիտի լինի, և այսպէս յաջորդաբար նահանջ պիտի լինին դարագլխի այն տարիները միայն, որոնք բաժանւում են 4-ի վրա: Յուլեան տոմարի և Գրիգորեան տոմարի մէջ եղած տարբերութիւնը 1582-ին—10 օր էր, 1700—1800՝ տասնըմէկ օր եղաւ, 1800—1900՝ տասներկու օր, իսկ 1900-ից 2000՝ տասներեք օր պէտք է լինի, որովհետև 2000 տարին նահանջ է երկու տոմարների հաշւով էլ:

Գրիգորեան կամ «Նոր տոմար» ընդունեցին՝ 1582 թ.-ին Իտալիան Ֆրանսիան, Սպանիան և Բելգիան, 1584-ին՝ Աւստրիան և Գերմանիայի հռոմէադաւան գաւառները, 1700-ին Պրուսիա և Հոլանդիա, իսկ 1752-ին Անգլիա:

Ս.

# Կրօնագիտութիւն:

## ԱՇԽԱՐՀԻՍ ԶԱՆԱԶԱՆ ԿՐՕՆՆԵՐԸ:

Կրօնը մարդուս սրտի ու խղճի անկեղծ ձայնն է, որ հաւատ, յոյս և սէր է ներշնչում դէպի Աստուած, որ ցոյց է տալիս մարդկանց և գերբնական զօրութեան—Աստծու յարաբերութիւնները:

Աշխարհումս ընհանրապէս չորս գլխաւոր կրօններ կան՝ հեթանոսական, հրէական, քրիստոնէական և մահմեդական·

Այս չորս կրօններից հեթանոսականն է, որ ամենաստոր աստիճանի վրա է կանգնած: Հեթանոսի մէջ կրօնը առաջին անգամ արտայայտուել է որպէս երկիւղ. այսպէս նա բնութեան ամեն մի երևոյթի մէջ մի անտեսանելի ուժ երևակայելով խոնարհուել է նրա առաջ և իբրև Աստուած պաշտել, երկրպագել երկրաշարժին, կարկուտին, որոտին. ժամանակի ընթացքում հեթանոսական կրօնն էլ զարգացել է և զանազան ճիւղերի է բաժանուել—աւելի կամ պակաս բարձր դաւանանքներով:

Մեծ քանակութեամբ հետևողներ ունի բուդդայականութիւնը (Տիբետ և Հնդկա-Չինաստան) — մօտ400 միլլիոն, բրահմականութիւնը (Հնդկաստան և Չինաստան) —180 միլլիոն, Կոնֆուցիոսականութիւնը (Ճապոնիա և այլն) —75 միլլիոն և այլն:

Մահմեդական կամ իսլամական կրօնը ինքնըստինքեան մի առանձին ինքնուրոյն կրօն չի ներկայացնում, այլ նա մի խառնուրդ է հրէական և քրիստոնէական կրօնների և լիքն է զանազան առասպելներով և նախապաշարմունքներով: Նրա դաւանանքով «Մէկ է Աստուած, չկայ Աստուած բացի Աստծուց» և Մահմեդը ամենամեծ մարգարէն է:

Մահմեդականութիւնն էլ բաժանւում է զանազան ճիւղերի, որոնցից գլխաւորներն են սիւննիները (թիւրքեր, արաբներ, հնդիկներ, բէրբէրներ և այլն) և շիիները (պար-

սիկներ և արաբների մի փոքրիկ մասը): Կան և բազմաթիվ աղանդավորներ (Նիամի, Վահաբի, Ճաֆերի, Սալիհի ևայլն):

**Հրեական կրոն:** Կրոնական ավելի բարձր աստիճանի վրա կանգնած են երևում հրեաները, որոնք բազմաստվածություն չ'գտնելով կուռքեր պաշտելու մեջ, հոգևով ընդունեցին ճշմարիտ Աստուծոյ գոյությունը և հավատացին, որ կայ մի ճշմարիտ Աստված, որը ստեղծել է ամբողջ աշխարհը և կառավարում է նրան: Հրեից ազգի մէջ Աբրահամըն ու Մովսէսն էին այն մեծ անձնավորությունները, որոնք իրանց ազգակիցների միտքն ու հոգին բացելով, նոցա առաջնորդեցին միաստվածության գաղափարով: Այժմ հրեական կրոնն ունի մի քանի ճյուղեր, որոնցից գլխավորներն են՝ ռաբբիականներ, թալմուդականներ, կարաիմներ, կուխզիմներ և այլն: Ընդհանուր առմամբ նա իր միաստվածության բարոյական գաղափարով և սիրոյ սկզբունքներով քրիստոնէական կրոնի արշալոյսն է կազմում:

**Քրիստոնեական կրոն:** Քրիստոս աշխարհ գալով գործնականապէս ցոյց տուեց, որ Աստուած կատարեալ ոգի է և ընդհանուր մարդկության սիրող Հայր. Նրա առաջ բոլոր մարդիկ հավասար են և իր կրոնն էլ ամբողջապէս սիրոյ կրօն լինելով ավելի լայն սկզբունքներ և գաղափարներ ունի իր մէջ քան առաջին կրօնները:

Քրիստոնէական կրօնի հետևող հավատացեալները ժամանակի ընթացքում կազմեցին եկեղեցիներ, որոնք ամփոփվեցին երկու գլխավոր անուան տակ՝ արևելեան և արևմտեան:

**Արևելեան** եկեղեցի համարւում է այն առաջին եկեղեցին, որը հիմնեց Յիսուս Երուսաղէմի մէջ և այնտեղից Նրա առաքեալները տարածեցին Հայաստանում, Փոքր և Մեծ Ասիայում, Յունաստանում, Եգիպտոսում և արևելքում գտնւող ուրիշ մանր ազգությունների մէջ:

Արևելեան եկեղեցու գլխավոր ներկայացուցիչները համարւում են Հայոց և Յունաց եկեղեցիները, որոնք թէև միմեանցից կատարեալապէս զանազանւում են ազգով, լեզւով, ծէսերով, արարողություններով և ունին առանձին—առանձին եկեղեցական անկախ իշխանություններ, բայց իրանց եկեղեցու գլուխ ընդունում են միևնոյն Յիսուս Քրիստոսին:

Իսկ **արեւմտեան** համարւում է այն եկեղեցին, որը հիմնուելով Հռոմի մէջ հետզհետէ դործածուեցաւ Եւրոպայում, Ամերիկայում... Այդ իսկ պատճառով այդ եկեղեցին կոչւում է Լատինական կամ Հռոմէական եկեղեցի, բայց այդ եկեղեցու սովորական տարածուած անունն է պապական եկեղեցի, որովհետև այդ եկեղեցին իր գլուխ է ընդունում Հռոմի եպիսկոպոսապետին, որը պապ է կոչւում:

Բացի արևելեան եկեղեցիների հետևողներից այժմ բավական մեծ թիւ են կազմում նաև **բողոքականութեան** հետևողները, որոնցից գլխավորներն են Լութերականները, Կալուինականները, Յունիգլեան եկեղեցի, անգլիական կամ եպիսկոպոսական եկեղեցի և այլն: Դրանք բոլորն էլ առաջ են եկել արևմտեան եկեղեցուց իրրև բողոքող տարր—նրա ներքին կազմակերպութեան և պապական իշխանութեան դէմ:

**Հայոց եկեղեցին** կազմուեց առաջին դարում Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների քարոզութեամբ, որոնք և կոչուեցան առաջին լուսաւորիչներ: Բացի այդ առաքեալներից Հայաստան են եկել և քրիստոնէութիւնը քարոզել ուրիշ երկու առաքեալներ ևս—Յուդա Յակոբեան, որ նահատակուել է Որմիզդում և Սիմոն Կանանացին, որ նահատակուել է Պարսկաստանում: Այս առաջին լուսաւորիչներից յետոյ երրորդ դարի վերջում, Տրդատ Թագաւորի ժամանակ, Հա-

յատանը ունեցաւ իր երկրորդ լուսաւորիչը՝ Սուրբն Գրիգոր, որը կաթուղիկոս դառնալով ամբողջ ժողովրդին իր թագաւորի հետ քրիստոնեայ մկրտեց և 303 թուին Վաղարշապատ քաղաքում իր հայրապետական աթոռը հաստատելով շինել տուեց իջման սուրբ տաճարը, որը կոչուեցաւ Էջմիածին։ Միայն երբեմն—երբեմն կաթուղիկոսական աթոռը քաղաքական զանազան հանգամանքների պատճառով այլ և այլ ժամանակներում զանազան քաղաքներ է փոխադրուել, որ հեռու լինի վտանգներից. այսպէս նա տեղափոխուել է Դուին, Անի, Հռոմկլայ, Սիս, իսկ Կիլիկիոյ թագաւորութեան վերջանալուց յետոյ 1441 թ. ընդհանուր ազգի ցանկութեամբ կրկին տեղափոխուել է Ս. Էջմիածին և մինչև այսօր էլ այնտեղ է մնում։

Արշ. Քհնյ. Մինասեան։

## ԿՐՕՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

—Շտուտգարդի վիճակագրական բիւրօյի Նախագահ Ցելլեր կազմել է կրօնների մի նոր վիճակագրութիւն։ Նրա հաշւով, ամբողջ երկրագնդի բնակիչների թիւը հասնում է 1,544,510,000-ի։ Դրանից 534,940,000-ը քրիստոնեայ են. 10,860,000—հրէական կրօնն են դաւանում. 175,290,000—մահմեդական են և 823,400,000 օտար դաւանութիւնների են պատկանում։ Վերջին թուից 300,000,000—կօնֆուցիւններ են, 214,000,000—բրահմանիստներ և 121,000,000—բուդդիստներ։ Ամեն մի 1000 հոգու վրա ընկնում է 346 քրիստոնեայ, 7 հրէայ, 114 մահմեդական և 423 մնացեալ դաւանութիւններից։

Իսկ եթէ այդ թուերը տոկոսների վերածենք, այն ժամանակ կստանանք հետևեալ պատկերը.

| | |
|---|---|
| Հեթանոսներ . . . . . | 57,1% |
| Քրիստոնեաներ . . . . | 31,1% |
| Մահմեդականներ . . . | 11։3% |
| Հրէաներ . . . . . . | 0,5% |

# Հայրապետութիւն ամենայն հայոց.

### Կաթուղիկոսներ։

**Ս. Էջմիածին** Տ. Տ. Մկրտիչ Ա Ծայրագոյն պատրիարք և **Կաթուղիկոս ամենայն Հայոց։**

**Կիլիկիայ** Տ. Տ. Սահակ—(Խապայեան)—կաթուղիկոս Կիլիկիայի։

**Աղթամար** Կաթ. տեղապահ Արսէն վ. Մարգարեան։

### Պատրիարքներ։

**Երուսաղէմի** Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեան։

**Կ. Պօլսի** Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան։

### Ս. Էջմիածնի սինօդ

Նախանդամ—Արիստակէս Արքեպիսկոպոս Դաւթեան։
Անդամ—Մակար եպ. Բարխուդարեան։
» —Յուսիկ եպ. Տէր-Մովսիսեան։
» —Աշոտ Վրդ. Ճախեան։
—Մխիթար վրդ. Տէր-Մկրտչեան։
Պրօկուրօր—Խ. Կանչելի։
Քարտուղար—Ս. Տիգրանեան։

### Թեմակալներ եւ յաջորդներ։

**Երևանի** փոխանորդ թեմակալ առաջն. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեան։

Ալէքսանդրապօլի յաջորդ Սահակ վարդապետ Բաղդասարեանց։
Տաթևի յաջորդ և վնհր. Ներսէս վ. Մելիք Թանգեան։
Ղարսի յաջորդ Կիւրեղ վ. Կիւրեղեան։
Հին Նախիջևանի յաջորդ Սիօն վարդապետ Տէր-Մանուէլեան։

**Վրաստանի եւ Իմերեթի** թեմ. առաջնորդ Գէորգ արքեպ. Սուրէնեանց։
Գօրու յաջորդ—Յովհաննէս վրդ. Տէր Գէորգեան։
Ախալցխայի յաջորդ—Բարկէն վրդ. Աղաւելեան.
Գանձակի յաջորդ—Բենիկ վարդապետ։

**Ղարաբաղի** թեմ. առաջն.—Գրիգորիս եպիս. Գառնակերեան։
Նուխու յաջորդ—Սահակ վ. Տէր Միքայէլեան։

**Աստրախանի** թեմ. առաջն. Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան։
Ղզլար—Նախանդամ կառավ.—Թովմա վրդ. Բաղդասարեան։

**Տամախու** թեմ. առաջն.—Անանիա եպիս. Համազասպեան։
Բագուի գործակալ՝ Բագրատ վրդ. Մատթէոսեան։

**Բեսարաբիայի** թեմ. առաջն. Ներսէս արքեպ. Խուդավերդեան։
Նոր Նախիջևան-յաջորդ Մուշէ վարդապետ։

**Ատրպատականի** թեմ. առաջն.—Եղիշէ վ. Մուրադեան։
Սալմաստի յաջորդ—Ընձակ վարդապետ։

**Պարսկաստանի եւ Հնդկաստանի** թեմ. առաջնորդ Սահակ եպիս. Այվազեան։
Թէհրան—փոխանորդ—Բագրատ վ. Բաղդասարեան։
Հովուող քահանաներ՝ Կալկաթայում, Մադրասում, Բոմբէում և Պագաւիայում։

—

**Եգիպտոս**—առաջն. Յովսէփ եպ. Այվազեան։
**Կրետէ** կղզի—հոգևոր հովիւ—Ղևոնդ քահանայ Ռափայէլեան։
**Կիպրոս** կղզի—տեսուչ—Պետրոս վրդ. Սարաճեան։
**Բուլղարիա**—այցելու հովիւ։ Կան 10 եկեղեցիներ և մի քանի քահանայ։
**Ռումինիա**—16 եկեղեցի և 5 քահանայ։

## Եւրոպա

**Եւրոպայի** առաջնորդ—Գէորգ եպ. Իւթիւճեան—Նստում է Մարսէյլ քաղաքում, որտեղ և Հայոց մատուռ կայ՝ Ս. Յարութիւն։ Բացի դրանից առանձին հովիւներ կան՝ Պարիզում, Մանչեստրում և Սուչօվայում։

## Ամերիկա

**Ամերիկայի** առաջնորդ Յովսէփ եպ. Սարաճեան—Նստում է Ուսթըր քաղաքում, որտեղ կայ Հայոց եկեղեցի՝ Ս. փրկիչ։ Բացի առաջնորդից առանձին հովիւներ կան՝ Նիւ-Եօրկում—Մաշթոց վրդ. Փափազեան. Բոստոնում—Ղևոնդ վրդ. Մարդուկէսեան. Պրօվիտէնսում—Խադ վրդ. Մարգարեան, Լօրէնսում—Արսէն վրդ. Վեհունի, Չիկագօյում—Վահրամ քհնյ. Մորլեան, Ֆրեզնօյում—Ահարոն վրդ. Սահրոյեան։

---

## Հայ կաթոլիկ համայնք:

**Կ. Պօլսի**—Կաթուղիկոս—Պատրիարք Պօղոս Պետրոս Ժա. Էմմանուէլեան։
**Կովկասի**—Հայ կաթոլիկները Սարատովի կաթ. եպիսկոպոսի իրաւաս. տակ են։

## Մխիթարեան միաբանութիւն։

**Վենետիկ**—Աբբահայր Հ. Իգնատիոս արքեպիսկոպոս Կիւրեղեան։
**Վիէննա**—Աբբայական փոխանորդ՝ Հ. Թադէոս վ. Թոռնեան։

## Հայ բողոքական համայնք։

Կ. Պօլիս—Ազգապետ Յակոբ էֆ. Պոյաճեան։
**Կովկասի**—Հայ բողոքականները Մոսկվայի բող. կոնսիստորիայի իրաւասութեան տակ են։

# Տեղեկատու:

## ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ:

Խնայողայական գանձարանների բուն նպատակն է գլխաւորապէս չունեւոր մարդկանց խնայողութիւնը պահպանել: Ընդունուած կարգ ու կանոնները չափազանց պարզ ու հասարակ են և իւրաքանչիւր մարդ հեշտութեամբ կարող է յանձնել իր փողը գանձարանին:

Խնայողական գանձարաններ բացուած են բոլոր պետական բանկերին, նահանգական և գաւառական գանձարաններին և մաքսատներին կից, բացի դրանից նաև պօստ-հեռագրական գրասենեակներում: Այս վերջին տեսակի խնայողական գանձարանները մի տեսակ միջնորդի դեր են կատարում, այսինքն ստանում են փողը և ուղարկում պետական խնայողական գանձարաններին:

Խնայողական գանձարաններին կարելի է յանձնել 25, 50, 75, կոպէկ և 1 ռուբլուց մինչև 1000 ռուբլի: Ընկերութիւնների և հիմնարկութիւնների համար այդ գումարը կարող է հասնել 3000 ր., իսկ եկեղեցիների համար սահման չ'կայ:

Ընդունելութիւնը լինում է ամեն օր, նոյն ժամերին, երբ պօստատանը ընդունում են նամակներ: Խնայողական գանձարանը իր ընդունած գումարների համար վճարում է տոկոս հետեւեալ չափով.

1) Մինչև 1000 ր. տարեկան $3\,^{6}/_{10}\,^{0}/_{0}$
2) Ընկերութ. և հիմնարկութ. 1000 ր. աւելի գումարների համար $2\,^{4}/_{10}\,^{0}/_{0}$

Հայրը կամ մայրը կարող են իրանց անչափահաս երեխաների անունով փող դնել գանձարանում և այդ փողը մինչև երեխաների չափահասութիւնը միայն իրանք կարող են ստանալ: Նոյնպէս և խնամակալները կարող են իրանց խնամած որբերի անունով փող յանձնել գանձարանին: Ամեն մէկն իրաւունք ունի ուրիշի անունով փող դնել և փողի տէրը կ'դառնայ նա, որի անունով գրուած է: Փող դնողը, եթէ ուզենայ, կարող է իր անունը ծածուկ պահել: Գանձարանի պաշտօնեաները առհասարակ պարտաւոր են խիստ գաղտնի պահել բոլոր հաշիւներն ու տեղեկութիւնները:

Խնայողական գանձարանը իր ընդունած գումարները գրում է առանձին տետրերի մէջ, որը և տալիս է փող յանձնողին: Այդ տետրի համարը լաւ պէտք է յիշել կամ մի ուրիշ տեղ էլ նշանակել, որովհետև տետրը կորցնելու դէպքում գանձարանի վարչութիւնը ոչ մի յայտարարութիւն չի ընդունի, եթէ կորած տետրի համարը յիշուած չէ:

Անգրագէտ մարդուց չի պահանջւում, որ ուրիշին խնդրէ իր տեղը ստորագրելու. բաւական է եթէ յայտնէ, որ ինքը անգրագէտ է: Եթէ մեռնում է այն մարդը, որի անունից ընդունուած է աւանդը, խնայողական գանձարանը այդ աւանդը կարող է տալ միայն մեռածի ժառանգներին: Ամեն ժամանակ փող յանձնողը կարող է յետ պահանջել իր փողը կամ նրա միայն մի մասը և խնայողական գանձարանը պիտի իսկոյն կատարէ այդ պահանջը:

## ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԵՐ

Որպէսզի իւրաքանչիւր անհատ հնարաւորութիւն ունենայ հեշտ ձև-

ռով խնայել նոյն իսկ ամենափոքր գումարները, ֆինանսների նախարարը, ներքին գործոց նախարարի համաձայնութեամբ 1900 թ. սահմանեց, այսպէս ասած՝ խնայողական մարկաներ՝ 5 կոպէկանոց և 10 կոպէկանոց:

Խնայողական մարկաները վաճառւում են բոլոր խնայողական գանձարաններում, պօստային գրասենեակներում:

Խնայողական մարկաները պէտք է պահուեն մաքուր, հակառակ դէպքում նրանք չեն ընդունուի:

Խնայողական մարկաները կըպցւում են առանձին կարտերի վրա որոնք ձրի են տըւում: Երբ լրացւած մէկ ռուբլին, կարելի է կարտերը ներկայացնել մօտակայ խնայողական գանձարանին և գումարը մուտք գրել տալ խնայողական տետրի մէջ, իսկ եթէ ներկայացնողը դեռ տետր չունի, նրան կտրուի, այդպիսով նա հնարաւորութիւն կունենայ, կոպէկ-կոպէկ խնայած փողից մի գումար կազմելու, որը կարող է պէտք գալ սև օրուայ համար:

## ՉԱՓԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ:

Արշինը=0,71118696104 մետրի=28 դիւյմի=0,(7) եարդի.
Ռուս. և անգլ. ոտնաչափը=0,30479441616 մետրի=6,857142 վերշօկի=0,(3) եարդի:
Մետր=3,2808992 ոտնաչափի=1,09362355 եարդի=22,49759792 վերշօկի:
Եարդը=1,(285714) արշինի=36 դիւյմի=0,9143911428 մետրի:

---

Ռուս. ֆունտը=0,90281878 անգլ. ֆունտի=0,40951196 կիլօմետրի:
Անգլիակ. ֆունտը=0,911431 ռուս. ֆունտի=373,241948 գրամի:
Անգլ. avoir du-poids ֆունտը=1,107642 ռուս. ֆունտի=453,5926525 գրամի.
Կիլօգրամ=2,4419334 ռուս. ֆունտի=2,204621 անգլ. av. d. p. ֆունտի:

---

Վեդրօն=2,70696663 գալլօնի=12,29892 լիտրի:
Գալլօնը=0,3694258 վեդրօյի=4,543458 լիտրի=0,1731672 չետվերիկի:
Լիտրը=0.08130788 վեդրօի=0,2200967 գալլօնի=0,03811307 չետվերիկի:
Չետվերիկը=5,7747968 գալլօնի=26,23771935 լիտրի:

---

## ՌՈՒՍԱԿԱՆ ՉԱՓԵՐ

Երկարութեան չափեր: Մղոնը=7 վերստի: Վերստը=500 սաժ.=1500 արշինի=3500 ոտնաչափի: Սաժէնը=3 արշինի=48 վերշօկի=7 ոտնաչափի=84 մատնաչափի=840 գծաչափի: Արշինը=16 վերշօկի=$2\frac{1}{3}$ ոտնաչափի=28 մատնաչափի: Վերշօկը=$1\frac{3}{4}$ մատնաչափի=$17\frac{1}{2}$ գծաչափի: Ոտնաչափը=12 մատնաչափի=$\frac{3}{7}$ արշինի=$6,^{86}$ վերշօկի: Մատնաչափը=10 գծաչափի=$\frac{4}{7}$ վերշօկի: Գծաչափը=10 կէտերի:

Մակերևոյթի չափերը: Դեսեատինը=2400 քառ. սաժէնի=0,0096 քառ. վերստի=117,600 քառ. ոտնաչափ: Քառակ. սաժէնը=9 քառ. արշ. =2304 քառ. վերշ.=49 քառ. ոտնաչ.: Քառ. արշինը=256 քառ. վերշ.= $5\frac{1}{9}$ քառ.. ոտնաչ.=784 քառ. մատնաչ.:

Բովանդակութեան չափեր։ Խորանարդ մղոնը=343 խոր. վերստի։ Խոր. վերստը=125000000 խոր. սաժ.։ Խ. ս.=27 խոր. արշինի=343 խ. ոտնաչափի=110592 խ. վերշ.=592704 խ. մատնաչ.։ Խորան. արշինը=4096 խ. վերշ =127037 խ. ոտնաչ.=21052 խոր. մատնաչ.։ Խոր. ոտնաչափը=1728 խ. մատնաչ.=0,0787172 խ. արշ.=322425 խ. վերշ.։

Ընդեղէնների չափեր: Լաստը ունի 12 չետվերտ: Չետվերտը՝ 8 չետվերիկ: Չետվերիկը՝ 8 գարնից: Չետվերտն իր մէջ պարունակում է՝ 380 ֆունտ ցորեն կամ 354 ֆունտ հաճար կամ 290 ֆ. գարի:

Հեղուկների չափեր: Տակառն ունի 40 վեդրօ: Վեդրօն՝ 8 շտօֆ կամ 10 կրուժկայ: Վեդրօն=30 ֆունտ ջրին:

Ծանրութեան չափեր: Բերկովեցն ունի 10 փութ: Փութը՝ 40 ֆունտ: Ֆունտը՝ 32 լօտ կամ 96 մսխալ կամ 9216 դօլիա: Լօտը՝ 3 մսխալ: Մսխալը՝ 96 դօլիա:

Դեղատան չափեր: Գրուանքան ունի 84 մսխալ կամ 12 ունցիա: Ունցիան՝ 8 դրախմ: Դրախման՝ 3 սկրուպուլ: Սկրուպուլը՝ 20 գրամ:

## ՋԵՐՄԱՉԱՓԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

| Ցելսիուս | Ֆարենհեյտ | Ռէօմիւր | Ցելսիուս | Ֆարենհեյտ | Ռէօմիւր | Ցելսիուս | Ֆարենհեյտ | Ռէօմիւր | Ցելսիուս | Ֆարենհեյտ | Ռէօմիւր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 100° | 212,0° | 80,0 | 86 | 186,8 | 68,8 | 72 | 161,6 | 57,6 | 58 | 136,4 | 46,4 |
| 99 | 210,2 | 79,2 | 85 | 185,0 | 68,0 | 71 | 159,8 | 56,8 | 57 | 134,6 | 45,6 |
| 98 | 208,4 | 78,4 | 84 | 183,2 | 67,2 | 70 | 158,0 | 56,0 | 55 | 132,8 | 44,8 |
| 97 | 206,6 | 77,6 | 83 | 181,4 | 66,4 | 69 | 156,2 | 55,2 | 55 | 131,0 | 44,0 |
| 96 | 204,8 | 76,8 | 82 | 179,6 | 65,6 | 68 | 154,4 | 54,4 | 54 | 129,2 | 43,2 |
| 95 | 203,0 | 76,0 | 81 | 177,8 | 54,8 | 67 | 152,6 | 53,6 | 53 | 127,4 | 42,4 |
| 94 | 201,2 | 75,2 | 80 | 176,0 | 64,0 | 66 | 150,8 | 52,8 | 52 | 125.6 | 41·6 |
| 93 | 199,4 | 74,4 | 79 | 174,2 | 63,2 | 65 | 149,0 | 52,0 | 51 | 123,8 | 40,8 |
| 92 | 197,6 | 73,6 | 78 | 172,4 | 62,4 | 64 | 147,2 | 51:2 | 50 | 122,0 | 40,0 |
| 91 | 195,8 | 72,8 | 77 | 170,6 | 61,6 | 63 | 145,4 | 50,4 | 49 | 120,2 | 39,2 |
| 90 | 193,0 | 72,0 | 76 | 168,8 | 60,8 | 62 | 143,6 | 49,6 | 48 | 118,6 | 38.4 |
| 89 | 192,2 | 71,2 | 75 | 177,0 | 60,0 | 61 | 141,8 | 48,8 | 47 | 116,6 | 37,6 |
| 88 | 190,4 | 70,4 | 74 | 165,2 | 59,2 | 60 | 140,0 | 48,0 | 46 | 114,9 | 36,8 |
| 87 | 188,6 | 69,6 | 73 | 163,4 | 58,4 | 59 | 138,2 | 47,2 | 45 | 113,0 | 36,0 |
| 44 | 111,2 | 35,2 | 20 | 68,0 | 16,0 | — 4 | 24,8 | — 3,2 | —28 | —18,4 | —22,4 |
| 43 | 109,4 | 34,4 | 19 | 66,2 | 15,2 | — 5 | 23,0 | — 4,0 | —29 | —20,2 | —23,2 |
| 42 | 107,6 | 33,6 | 18 | 64,4 | 14,4 | — 6 | 21,2 | — 4,8 | —30 | —22,0 | —24,0 |
| 41 | 105,8 | 32,8 | 17 | 62,6 | 13,6 | — 7 | 19,4 | — 5,6 | —31 | —23,8 | —24,8 |
| 40 | 104,0 | 32,0 | 16 | 60,8 | 12,8 | — 8 | 17,6 | — 6,4 | —32 | —25,6 | —25,6 |
| 39 | 102,2 | 31,2 | 15 | 59,0 | 12,0 | — 9 | 15,8 | — 7,2 | —33 | —27,4 | —29,4 |
| 38 | 100,4 | 30,4 | 14 | 57,2 | 11,2 | —10 | 14,0 | — 8,0 | —34 | —29,2 | —27,2 |
| 37 | 98,6 | 29,6 | 13 | 55,4 | 10,4 | —11 | 12,2 | — 8,8 | —35 | —31,0 | —28,0 |
| 36 | 96,8 | 28,8 | 12 | 53,6 | 9,6 | —12 | 10,0 | — 9,6 | —36 | —32,8 | —28.8 |
| 35 | 95,0 | 28,0 | 11 | 51,9 | 8,8 | —13 | 8,6 | —10,4 | —37 | —34,6 | —29,6 |
| 34 | 93,2 | 27 2 | 10 | 50,0 | 8,8 | —14 | 6,8 | —11,2 | —38 | —36,4 | —30,4 |
| 33 | 91,4 | 26,4 | 9 | 48,2 | 7,2 | —15 | 5,0 | —12,0 | —39 | —38,2 | —31,2 |
| 32 | 89,6 | 25,6 | 8 | 46,4 | 6,4 | —16 | — 3,2 | —12,8 | —40 | —32,0 | —40,0 |
| 31 | 87,8 | 24,8 | 7 | 44.6 | 5,6 | —17 | — 1,4 | —13,6 | —41 | —32,8 | —41,8 |
| 30 | 86,0 | 24,0 | 6 | 42,8 | 4,8 | —18 | — 0,4 | —14,4 | —42 | —33.6 | —43,6 |
| 29 | 84,2 | 23,2 | 5 | 41.0 | 4,0 | —19 | — 2,2 | —15,2 | —43 | —34,4 | —45,4 |
| 28 | 82,4 | 22.4 | 4 | 39,2 | 3,2 | —20 | — 4,0 | —16.0 | —44 | —55,2 | —47,2 |
| 27 | 80,6 | 21,6 | 3 | 37,4 | 2,4 | —21 | — 5,8 | —16,8 | —45 | —36,0 | —49,0 |
| 26 | 78,8 | 20,8 | 2 | 35,6 | 1,6 | —22 | — 7,6 | —17,6 | —46 | —30,8 | —36,8 |
| 25 | 77,0 | 20,0 | 1 | 33,8 | 0,8 | —23 | — 9,4 | —18,4 | —47 | —52,6 | —37,6 |
| 24 | 75,2 | 19.2 | —0 | 26,0 | —0,0 | —24 | —11,2 | —19,2 | —48 | —54,4 | —38,4 |
| 23 | 73,4 | 18,4 | —1 | 32.2 | —0,8 | —25 | —13,0 | —20,0 | —49 | —56,2 | —39,2 |
| 22 | 71,6 | 17,6 | —2 | 30.4 | —1,6 | —26 | —14,8 | —20,8 | —50 | —58,0 | —40,0 |
| 21 | 69,8 | 16,8 | —3 | 28,6 | —2,4 | —27 | —16,8 | —21,6 | | | |

# ԴՐԱՄՆԵՐԻ ՀԱ

*Նրանց մէջ եղած զուտ ոսկու*

| | 1 ռուբլով | 1 ֆունտ ստեռլինգով | 1 ֆրանկով | 1 գերման. մարկով |
|---|---|---|---|---|
| I. Ռուբլի և կոպէկ—(Ռուբլին=իմպերիալի 1/15-ին և իր մէջ պարունակում է 17,424 դոլիա մաքուր ոսկի) | 1,00 | 9,45758222 | 0,37498022 | 0,43855629 |
| II. Անգլիական պենս—(1 ֆունտ ստեռլինգը ունի 20 շիլլինգ. շիլլինգը՝ 12 պենս) . . . . . . . . . . | 25,376464 | 240 | 9,5157 | 11,74774 |
| III. Ֆրանկ—(1 ֆրանկը=100 սանտիմի և իր մէջ պարունակում է 9/31 գրամ զուտ ոսկի) . . . . . . . . . . | 2,666807 | 25,22155 | 1,00 | 1,2345679 |
| IV. Գերմանական մարկ—(1 մարկն ունի 100 պֆենիգ) . . . . . . . . . . | 2,160113 | 20,429455 | 0,81 | 1,00 |
| V. Հոլլանդակ. գուլդեն—(10 գուլդէնը պարունակում է իր մէջ 6,048 գրամ մաքուր ոսկի) . . . . . . . . . . | 1,2801494 | 12,1071186 | 0,4800307 | 0,5926305 |
| VI. Աւստրօ-Ունգարական կրոնը—(գուլդէնը=100 կրէյցերի=2 կրոնի. կրոնը=100 հելլերի) . . . . . . . | 2,5394891 | 24,0174277 | 0,9522582 | 1,1756274 |
| VII. Դանիական, շուեդական եւ նորվեգիական կրոնը—(կրոնը=100 էօրի) | 1,9201007 | 18,159516 | 0,72 | 0,888889 |
| VIII. Թիւրքական պիաստր—(լիրան կամ մեջիդիէն=100 պիաստրի, պիաստրը=40 փարայի) . . . . . . . . . | 11,713332 | 110,7798 | 4,3923 | 5,42255 |
| IX. Պօրտուգալական միլրէյս—(պօրտուգալ. կրոնը=10 միլրէյսի, միլրէյսը=1000 րէյսի) . . . . . . . . . | 0,476244 | 4,504 | 0,178858 | 0,22047 |
| X. Ամերիկ. Միաց. Նահանգ. դոլլարը—(1 ոսկէ դոլլարն ունի 1,564,631,611 գրամ զուտ ոսկի) . . . . . . . . | 0,5145673 | 4,866564 | 0,192952 | 0,23821 |
| XI. Եապոնական իէն—(իէնը=100 սէնի. սէնը=10 րինի) . . . . . . . | 1,0323228 | 9,76327806 | 0,38710064 | 0,477902 |
| XII. Եգիպտական պիաստր—(լիրան=100 պիաստրի, պիաստրը=40 փարայի) . | 10,409874 | 98,4522396 | 3,9033 | 4,819132 |

# ՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

*օրինական չափի համաձայն*

| 1 հոլլանդ. գուլդէնը | 1 աւստրօ-ունգարակ. կրոնը | 1 դանիակ. կրոնը | 1 Թիւրքակ. լիրան | 1 պօրտուգալ. կրոնը | 1 դօլլարը (Ամերիկ.) | 1 ճապոն. իէնը | 1 եգիպտաց. լիրան |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0,781158 | 0,393779 | 0,520806 | 8,5372804 | 20,997625 | 1,943379 | 0,968689 | 9,606264 |
| 19,82305 | 9,992743 | 13,216212 | 216,646 | 532,84549 | 49,316 | 24,581907 | 243,773 |
| 2,0832 | 1,050135 | 1,388888 | 22,767282 | 55,997 | 5,18262 | 2.583307 | 25,618055 |
| 1,687392 | 0,850609 | 1,125 | 18,441498 | 45,357262 | 4.19792 | 2,092479 | 20,750625 |
| 1,00 | 0,504097 | 0,66671 | 10,929 | 26,880098 | 2,4878 | 1,240066 | 12,297 |
| 1,983744 | 1,00 | 1,3225808 | 21,680331 | 53,323242 | 4,935192 | 2,459975 | 24,395004 |
| 1,499904 | 0,756097 | 1,00 | 16,39244 | 40,31757 | 4,731486 | 1,859981 | 18,445 |
| 9,15 | 4,612475 | 6,1004 | 1,00 | 245,95 | 22,763 | 11,346578 | 112,52126 |
| 0,372022 | 0,187535 | 0,24803 | 4,0658 | 1,00 | 0,9255 | 0,461332 | 4,574929 |
| 0,402 | 0,202626 | 0,26799 | 4,393 | 10,8047 | 1,00 | 0,498455 | 4,943 |
| 0,80640806 | 0,406508 | 0,537639 | 8,81322 | 21,676327 | 2,0061 | 1,00 | 9,916765 |
| 8,13176 | 4,0992 | 5,4215 | 88,872 | 218,58263 | 20.2303 | 10,083932 | 1,00 |

# Բնակարանների հարկ:

Բնակարանների հարկ վերցնելու համար կառավարութիւնը բաժանել է բոլոր քաղաքներն ու գիւղաքաղաքները 5 կարգի: Կովկասեան քաղաքներից պատկանում են.

II Կարգին—Բագու, Բաթում, Թիֆլիս:

III Կարգին — մնացած բոլոր նահանգական ու գաւառական քաղաքները, որտեղ մտցրած է քաղաքային ինքնավարութիւն:

IV Կարգին—Ալէքսանդրապոլ, Անապա, Արմաւիր, Գրօզնի, Դերբենդ, Եյսկ, Մայկօպ, Շուշի, Պետրօվսկ, Տեմիր-Խան-Շուրա:

V Կարգին—Ախալցխա, Ախալքալակ, Գօրի, Լէնքօրան, Ղզլար, Ղուբա, Մօզդօկ, Նախիջևան, Նուխի, Շեմախի, Սղնախ, Թելաւ:

Բնակարանների հարկից ազատ են՝ 1) այն շինութիւնները, որոնք ծառայում են պետական, հասարակական, գիտական կամ դպրոցական հիմնարկութիւնների, հիւանդանոցների և վաճառատների համար—մի խօսքով՝ այն բոլոր տները, որտեղ մարդիկ չեն բնակւում. 2) Վանքերը, առաջնորդարանները, ապաստարանները, առհասարակ բարեգործական նպատակների ծառայող բնակարանները, զինւորանոցները (казармы)՝ բացի օֆիցէրների բնակարաններից, բանւորների բնակարանները՝ գործարանին կից և այլն:

Հարկը վերցւում է բնակարանների քրեհի համեմատ, այն է.

| II կարգի քաղաքներում բնակարանի քրեհը. ռուբլի | Հարկ ր. | կ. |
|---|---|---|
| 225— 270 | 3 | 50 |
| 270— 360 | 6 | — |
| 360— 450 | 8 | — |
| 450— 540 | 11 | — |
| 540— 630 | 14 | — |
| 630— 720 | 17 | — |
| 720— 810 | 21 | — |
| 810— 900 | 25 | — |
| 909—1,000 | 29 | — |
| 1,000—1,100 | 33 | — |
| 1,100—1,200 | 37 | — |
| 1,200—1,300 | 41 | — |
| 1,300—1,400 | 46 | — |
| 1,400—1,500 | 52 | — |
| 1,500—1,600 | 58 | — |
| 1,600—1,700 | 64 | — |
| 1,700—1,800 | 71 | — |
| 1,800—1,900 | 79 | — |
| 1,900—2,000 | 86 | — |
| 2,000—2,100 | 95 | — |
| 2,100—2,200 | 103 | — |
| 2,200—2,300 | 112 | — |
| 2,300—2,400 | 122 | — |
| 2,400—2,500 | 132 | — |
| 2,500—2,600 | 143 | — |
| 2,600—2,700 | 154 | — |
| 2,700—2,900 | 165 | — |
| 2,900—3,100 | 181 | — |
| 3,100—3,300 | 201 | — |
| 3,300—3,500 | 225 | — |
| 3,500—3,700 | 253 | — |
| 3,700—3,900 | 285 | — |
| 3,900—4,100 | 320 | — |
| 4,100—4,300 | 360 | — |
| 4,300—4,500 | 403 | — |

| III կարգի քաղաքներում: բնակարանի քրեհը | Հարկ ր. | կ. |
|---|---|---|
| 150— 180 | 2 | 50 |
| 180— 240 | 4 | — |
| 240— 300 | 5 | 50 |
| 300 - 360 | 7 | — |
| 560— 420 | 9 | — |
| 420— 480 | 11 | 50 |
| 480— 540 | 14 | — |
| 540— 600 | 16 | 50 |
| 600— 700 | 19 | — |
| 700— 800 | 23 | — |
| 800— 900 | 28 | — |
| 900—1,000 | 33 | — |
| 1,000—1.100 | 39 | . |
| 1,100—1,200 | 46 | — |
| 1,200—1,300 | 53 | — |
| 1,300—1,400 | 61 | — |
| 1,400—1,500 | 70 | — |
| 1 500—1,600 | 79 | — |
| 1,600—1,700 | 89 | — |
| 1,700—1,800 | 100 | |
| 1,800—2.000 | 111 | — |
| 2,000—2,200 | 129 | — |
| 2,200—2,400 | 152 | — |
| 2,400—2,600 | 181 | — |
| 2,600—2,800 | 215 | — |
| 2,800 —3,000 | 255 | — |

| IV կարգի քաղաքներում բնակարանի քրեհը | Հարկ ր. | կ. |
|---|---|---|
| 120— 144 | 2 | — |
| 144— 192 | 3 | — |
| 192— 240 | 4 | 50 |
| 240— 288 | 6 | — |
| 288— 336 | 7 | 50 |
| 336— 384 | 9 | — |
| 384— 432 | 11 | — |
| 432— 480 | 13 | 50 |
| 480— 500 | 15 | 50 |
| 500— 600 | 16 | 50 |
| 600— 700 | 21 | — |
| 700— 800 | 26 | — |
| 800— 900 | 31 | — |
| 900—1,000 | 38 | — |
| 1,000—4,100 | 46 | — |
| 1,100—1,200 | 54 | — |
| 1,200—1,300 | 63 | — |
| 1,300—1,400 | 73 | — |
| 1·400 . 1,500 | 84 | — |
| 1,500—1,600 | 96 | — |
| 1,600—1,700 | 109 | — |
| 1,700—1,800 | 122 | — |
| 1,800—1,900 | 136 | — |
| 1,900—2,000 | 152 | — |
| 2,000—2,100 | 168 | — |
| 2,100—2,200 | 184 | — |
| 2,200—2,300 | 202 | — |
| 2,300—2,400 | 221 | — |
| 2,400 . . . . բնակարանի քրեհից | 10% | — |

| V կարգի քաղաքներում բնակարանի քրեհը | Հարկ ր. | կ. |
|---|---|---|
| 60— 72 | 1 | — |
| 72— 96 | 1 | 50 |
| 96— 120 | 2 | — |
| 120— 144 | 3 | — |
| 144— 168 | 3 | 50 |
| 168— 192 | 4 | 50 |
| 192— 216 | 5 | 50 |
| 216— 240 | 6 | 50 |
| 240— 300 | 8 | — |
| 300— 400 | 11 | — |
| 400— 500 | 16 | — |
| 500— 600 | 23 | — |
| 600— 700 | 32 | — |
| 700— 800 | 42 | — |
| 800— 900 | 54 | — |
| 900—1,000 | 68 | — |
| 1,000—1,100 | 84 | — |
| 1,100—1,200 | 101 | — |
| 1,200— . . . բնակարանի քրեհից: | 10% | — |

Բնակարանային հարկ որոշելու համար իւրաքանչիւր քաղաքում կազմւում է «Քաղաքային վարչութիւն հարկերի համար», որ ունենում է 4—6 անդամ բնակարանատէրերից և մի նախագահ—տեղական հարկային վերատեսուչը (податной инспекторъ):

Իւրաքանչիւր տնատէր պարտաւոր է տարին մի անգամ— մինչև Յունուարի 7-ը տեղեկութիւններ տալ այդ վարչութեանը, թէ իր տանը քանի բնակարան կայ և դրանցից իւրաքանչիւրը տարեկան որքան քրեհ է բերում: Եթէ նա այդ տեղեկութիւնները իր ժամանակին չներկայացնէ կամ կեղծ տեղեկութիւններ տայ, այն ժամանակ պատժի կենթարկուի, վճարելով առաջին դէպքում մինչև 50 ր., իսկ երկրորդ դէպքում մինչև 300 ր. տուգանք:

Բնակարանային վարչութիւնը մինչև Մարտի 7-ը ուղարկում է բնակարանատէրերին յայտարարութիւն հարկերի քանակի մասին: Ով որ դժգոհ է, կարող է այդ մասին բողոքել «Նահանգական վարչութեանը» 1 ամսուայ ընթացքում:

# Իրաւաբանական տեղեկութիւններ.

## Ռուսաստանի օրէնքները:

Ռուսաց կայսրութեան բոլոր օրէնքները ամփոփուած են «Օրէնսգրքի» (Сводъ Законовъ) 16 հատորի մէջ, որոնց բովանդակութիւնն է հետեւեալը (բերուած են հատորների այն մասերը, որոնք կարող են հետաքրքրական լինել հայ ընթերցողի համար).

I. Կայսրութեան հիմնական օրէնքները: Պետական խորհուրդ: Մինիստրների խորհուրդ և մասնաժողով (Комитетъ): Կառավարիչ սենատ: Քաղաքացիական աստիճանաւորներ: Բարձրագոյն անունով տրւող խնդիրների դիւանատուն:

II. Նահանգական, զեմստվօյական և քաղաքային հաստատութիւններ: Կովկասի, Անդրկասպեան երկրի, Թուրքեստանի կառավարութիւն:

III. Պետական ծառայութիւն, կենսաթոշակի, միանուագ նիւթական օժանդակութեան վերաբերեալ կանոնագրութիւններ:

IV. Զինուորագրական օրէնքներ:

Y. Ուղղակի հարկերի և տուրքերի, աքցիզային տուրքի, բնակարանային հարկի վերաբերեալ կանոնագրութիւններ:

YI. Մաքսային կանոնագրութիւն:

YII. Դրամական կանոնագրութիւն:

YIII. Անտառային կանոնագրութիւն:

IX. Օրէնքներ հասարակական վիճակների (о состоянiи) մասին-(ազնուականներ, քաղաքացիներ, գիւղացիներ). առանձին յաւելուած,— գիւղականների վերաբերեալ կանոնագրութիւն:

X. Մասն ա) քաղաքացիական օրէնքներ: Մասն բ) Հողաբաժանային (մեժեվօյ) օրէնքներ:

XI. Մասն ա) Օրէնքներ օտար դաւանութեանց — (կաթոլիկների, բողոքականների, հայ լուսաւորչականների, հրէաների, մահմեդականների և այլն): Օրէնքներ գիտական և դպրոցական հիմնարկութիւնների մասին և մասն բ) Օրէնքներ արդիւնագործութեան, վաճառականութեան, մուրհակների, հիւպատոսների մասին:

XII. Մասն ա) Երկաթուղիների, առհասարակ ճանապարհների, պօստի, հեռագրի, շինութիւնների և նրանց ապահովագրութեան մասին: Մասն բ) Գիւղատնտեսութեան, գիւ-

դական բանուորներ վարձելու, պանդակների մասին և այլն:

XIII. Հասարակական բարեգործութեան, բժշկութեան մասին:

XIV. Անցագրի, գրաքննութեան, տպարանական գործի, աքսորեալների մասին և այլն:

XV. Քրէական յանցանքների օրէնսգրքեր՝ ընդհանուր և հաշտարար դատարանների համար:

XVI. Դատարանական հաստատութիւններ: Քրէական դատավարութիւն: Նոտարական օրէնքներ:

## Պայմանաժամեր (Сроки).

### 1) ԲՈՂՈՔ:

ա. Վճռափոխ բողոք (ապելլացիա)

—Քրէական (ուգոլովնի) գործեր: Հաշտարար դատաւորի վճռի դէմ—երկու շաբաթ՝ սկսած վճիռը կայացնելու օրից: Նահանգական դատարանի վճռի դէմ—երկու շաբաթ՝ սկսած վճիռը վերջնական կերպով (մանրամասն) յայտարարելուց յետոյ (վճիռը կայացնելուց և կարճառօտ կերպով յայտնելուց յետոյ դատարանը նոյն օրը յայտնում է, թէ երբ պատրաստ կլինի վճիռը վերջնական կերպով: Այդ օրը մեղադրեալը կարող է վերցնել և վճռի պատճէնը: Այդ օրը սովորաբար նշանակւում է վճիռը կայացնելուց երկու շաբաթ յետոյ):

—Քաղաքացիական գործեր: Հաշտարար դատաւորի վճռի դէմ—մի ամիս՝ սկսած վճիռը կայացնելու օրից: Նահանգական դատարանի վճռի դէմ—մի ամիս, եթէ գործը քննուել է կրճատ կարգով և չորս ամիս, եթէ գործը քննուել է ընդհանուր կարգով —(սկսած վճիռը վերջնականապէս յայտարարելու օրից, որ սովորաբար նշանակւում է վճիռը կայանալուց երկու շաբաթ յետոյ):—Վճռափոխ բողոքի պատճէնը ստանալու օրից մի ամսուայ ընթացքում կարելի է դատարանին ներկայացնել բացատրութիւն այդ բողոքի դէմ: Այդ բացատրութեան մէջ կարելի է ոչ միայն պատասխանել բողոքին, այլ և որոշ պահանջներ յայտնել, օրինակ եթէ վճռի մի մասը բողոքողի օգտին է եղել և հակառակորդը վճռի այդ մասի դէմ իր ժամանակին բողոք չէ տուել, կարելի է բացատրութեան մէջ խնդրել, որ վճռի այդ մասը փոխուի:

բ. Վճռաբեկ կամ վճռաջինջ բողոք (կասսացիա): Քրէական գործերի համար—երկու շաբաթ: Քաղաքացիական գործերի համար—հաշտարար դատաւորի վճռի դէմ (երբ գործը 100 րուբլուց պակաս է)—մի ամիս, Նահանգական դատարանի վճռի դէմ (երբ գործը հաշտարար դատարանից է անցել)—երկու ամիս, դատաստանական պալատի վճռի դէմ—չորս ամիս:

### 2) ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ:

Եթէ երաշխաւորը երաշխաւորել է և պայմանաժամի վերաբերմամբ (на срокъ), նա պատասխանատու է միայն այն դէպքում, եթէ երաշխաւորի դէմ գանգատ սկսուի պայմանաժամից յետոյ, մի ամսուայ ընթացքում: Իսկ եթէ հասարակ երաշխաւորութիւն է, երաշխաւորը պատասխանատու է միայն այն դէպքում, եթէ գանգատ սկսուի իսկական պարտատիրոջ դէմ, վեց ամսուայ ընթացքում:

## ԹԱՓՈՒՄՆ (выкупъ)

Տոհմական անշարժ կալքը կարելի է թափել (յետ գնել) երեք տարուայ ընթացքում վաճառման թղթի (купчая крѣпость) հաստատման օրից: Անչափահասների համար այս դէպքում ոչ մի արտօնութիւն չկայ:

## ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԸ:

1. Գործը երկու ինստանցիաներում վարելու համար՝ երբ պահանջագումարը (искъ) 500-2000 ր. է 10%. եթէ 2000-5000 ր. է առաջին 2000 ր. համար 200 ր.

իսկ մնացած գումարից 8%. երբ 5000-25000 ր. է—առաջին 5000 ր. համար 440 ր., իսկ մնացածից 4%. երբ 25000-50000 ր. է—առաջին 25 հազարից 1240 ր., իսկ մնացածից 2%, երբ 50000-75000 ր. է առաջին 50 հազարից 1740 ր. իսկ մնացածից 1%. վերջապէս երբ 75 հազարից աւելի է պահանջագումարը—առաջին 75 հազարից 1990 ր., իսկ մնացածից 1/2%:

Առաջին ինստանցիայում գործը վարելու համար՝ հաւատարմատարը ստանում է վերոյիշեալ վարձատրութեան 2/3-ը, իսկ երկրորդ ինստանցիայի համար՝ 1/3 ը:

Երբ վարած գործի գումարը չի կարելի որոշել, այն ժամանակ դատարանն ինքն է վճռում վարձատրութեան քանակը՝ 50-ից մինչև 1200 ր.:

Երբ գործի տէրը, առանց օրինաւոր հիմքի, լիազօրութիւնից զրկում է իր հաւատարմատարին, կամ թէ երբ հաշտութեամբ է վերջացնում գործը, այն ժամանակ հաւատարմատարը կարող է դատաստանով լրիւ ստանալ իր վարձատրութեան առաջին կամ երկրորդ ինստանցիայի և կամ երկու ինստանցիաների համար, նայելով թէ որտեղ է վարել գործը:

5. Գործը տարուելու դէպքում հաւատարմատարը կարող է ստանալ սահմանեալ վարձատրութեան միայն 1/4-ը, սակայն այդ 1/4-ը չի կարող լինել աւելի, քան 200 ր. առաջին և աւելի, քան 100 ր. երկրորդ ինստանցիայի համար:

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՐԻՍՏԱՒՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԸ.

1. Ծանուցագրեր կամ այլ թղթեր յանձնելու համար, երբ պահանջագումարը 2000 ր. աւելի չէ՝ 25 կոպ., երբ 2000—5000 ր. է՝ 50 կոպ., իսկ 5000-ից բարձր՝ 1 ր., երբ գումարը յայտնի չէ—50 կոպ.:

2. Շարժական կայքը ցուցակագրելու և գնահատելու համար մինչև 26 ր. գումարը—25 կոպ., 25—50 ր.—50 կոպ., 50—100 ր.—1 ր., 100—200 ր.—2 ր., 200—300 ր.—3 ր., 300—400 ր.—4 ր., 400—500 ր.—5 ր., իսկ 500—5000 ր. առաջին 500 ր. համար 5 ր., մնացած գումարին իւրաքանչիւր 100 ր.—50 կոպ.:

3. Ցուցակագրած առարկաները կնքելու և կնիքը բաց անելու համար 3-ական կոպ. մինչև 50 առարկան, 2-ական կոպ. մինչև 100 առարկան, 1-ական կոպ. 100-ից աւելի առարկաների համար:

Անշարժ կայքը ցուցակագրելու համար

| | | |
|---|---|---|
| մինչև | 500 ր. գումարը | 2 ր. 50 կ. |
| 500—1000 | . . . . . . | 5 ր. |
| 1000—2000 | . . . . . . | 6 ր. |
| 2000—3000 | . . . . . . | 7 ր. |
| 3000—4000 | . . . . . . | 8 ր. |
| 4000—5000 | . . . . . . | 9 ր. |

իսկ 5000-ից բարձր գումարին՝ առաջին 5000 ր.—9 ր., իսկ մնացածից իւրաքանչիւր 1000 ր.—50 կոպ.:

## ՆՕՏԱՐՆԵՐԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ՉԱՓԸ

1. Նօտարական արձանագրութիւն (актъ) կազմելու համար պէտք է վճարել մինչև 500 ր. գումարը 2 ր., 500—1000 ր.—3 ր., 1000 ր. աւելի գումարին 4 ր. և բացի դրանից պայմանագումարի իւրաքանչիւր 100 ր.—10 կոպ.:

2. Մուրհակներ վաւերացնելու և նրանց մասին բողոք գրելու համար մինչև 500 ր. գումարը—50 կ., 500-ից բարձր գումարին—1 ր. և բացի դրանից մուրհակագումարի իւրաքանչիւր 100 ր.—10 կ.:

3. Պայմաններ վաւերացնելու համար մինչև 500 ր.—1 ր., 500—1000 ր.—1 ր. 50 կ., 1000-ից բարձր գումարին—2 ր. և բացի դրանից պայմանագրի իւրաքանչիւր 100 ր.—10 կոպ.:

4. Երբ արձանագրութեան կամ պայմանագրութեան գումարը չի կարելի որոշել, այն ժամանակ պէտք է վճարել այնքան, որքան վճարւում է 1000 րուբլիանոց արձանագրու-

թեան կամ պայմանագրութեան համար:

5. **Պատճէն** վաւերացնելու համար առաջին թերթին—25 կ., հետեւեալ թերթերի իւրաքանչիւրին—10 կ. (թերթը հաշւում է 25 տող):

6. **Ստորագրութիւն** վաւերացնելու համար—10 կոպ. ամեն մի ստորագրութեան համար:

7. **Հաւատարմագրեր** (довѣренность), հաշտութեան թղթեր (мировая запись) և միջնորդական թղթեր (третейская запись) կազմելու կամ վաւերացնելու համար—1 թերթին 1 ր., հետեւեալ թերթերին 50-ական կոպ:

8. Փաստաթղթերի ներկայացման ժամանակը վաւերացնելու համար—25 կոպ.:

9. Մէկի կողմից մէկ ուրիշի յայտարարութիւն տալու և դրա մասին վկայաթուղթ տալու համար—50 կոպ.:

10. **Զանազան թղթեր** նոտարական գրքի մէջ անցկացնելու համար իւրաքանչիւր տողին—2 կոպ.:

11. Պետական գանձարանից կենսաթոշակ ստացողի կենդանութեան մասին վկայելու համար—3 կոպ.՝ երբ կենսաթոշակի գումարն է տարեկան մինչև 30 ր., 10 կ.՝ երբ 30—300 ր. և 20 կ.՝ երբ 300-ից աւելի է: Իսկ ուրիշ դէպքերում նոյնպիսի վկայութեան համար 50 կ.:

12. **Փաստաթղթեր** պահելու համար (փողային թղթերից) իւրաքանչիւր թղթին ամսական 25 կ. և փակած ծրարին ամսական—50 կ.:

13. Նոտարական մի որև է արձանագրութեան ժամանակն իմանալու և այդ մասին **վկայագիր** ստանալու համար—50 կ..

14. Երկրորդ կամ աւելի անգամ քաղուածք (выпись) տալու համար տողին—1 կոպ.:

15. **Նոտարական գրասենեակից** դուրս կատարած գործողութիւնների համար պէտք է վճարել բացի վերևում նշանակած գումարներից եւ 3 ր.—մայրաքաղաքում, 2 ր.—նահանգական քաղաքում, 1 ր.—գաւառական քաղաքում, իսկ քաղաքի սահմանից դուրս տանելու համար պէտք է վճարել և ճանապարհածախս վերստին 10 կ.՝ թէ գնալու և թէ վերադառնալու համար, իսկ երկաթուղի եղած տեղերում, II կարգի տոմսակի արժէքը: Բացի այդ՝ ճանապարհորդութեան ժամանակի համար պէտք է վճարել օրական 5 րուբլի—մայրաքաղաքում, 3 ր.—նահանգական քաղաքներում և 2 ր.—գաւառական քաղաքներում:

## ՄՈՒՐՀԱԿ

Մուրհակ (вексель) տալ կարող են այն բոլոր անձինք, որոնք իրաւունք ունին պարտաթուղթ տալու: Պարտաթուղթ չեն կարող տալ անչափահասները, խելագարները, վատնիչ յայտարարուածները, բոլոր քաղաքացիական իրաւունքներից զրկուածները և այլն:

Մուրհակ տալ չեն կարող. 1) հոգևորականները, 2) այն գիւղացիները, որոնք ոչ անշարժ կայք ունեն, բացի իրանց հողաբաժնից (նադել) և ոչ էլ առևտրական վկայական:

Պսակուած կանայք կարող են միայն ամուսնու թոյլտւութեամբ մուրհակ տալ, իսկ օրիորդները (նոյն իսկ չափահասները) ծնողների թոյլտւութեամբ, եթէ նրանցից բաժանուած չեն: Բայց եթէ նրանք իրանց անունով մի որև է առևտրական հաստատութիւն կամ գործ ունին, այն ժամանակ կարող են և առանց ամուսնու կամ ծնողի համաձայնութեան մուրհակ տալ:

Մուրհակ տալու իրաւունք չունեցողների տուած մուրհակները չեն կարող իսկական մուրհակի ոյժ ունենալ, սակայն նրանք առ ոչինչ չեն համարւում, այլ նոյն ոյժն ունին, ինչ որ հասարակ պարտաթղթերը:

Մուրհակները գրւում են առանձին մուրհակաթղթի վրա, որոնց արժէքն է.

| Մուրհակի գումարը մինչև | Մուրհակաթղթի արժէքը | | Մուրհակի գումարը մինչև | Մուրհակաթղթի արժէքը | |
|---|---|---|---|---|---|
| Րուբլի: | Ր. | Կ. | Րուբլի: | Ր. | Կ. |
| 50 | — | 10 | 3000 | 4 | 50 |
| 100 | — | 15 | 4000 | 6 | — |
| 200 | — | 30 | 5000 | 7 | 50 |
| 300 | — | 45 | 6000 | 9 | — |
| 400 | — | 60 | 7000 | 10 | 50 |
| 500 | — | 75 | 8000 | 12 | — |
| 600 | — | 90 | 9000 | 13 | 50 |
| 700 | 1 | 05 | 10000 | 15 | — |
| 800 | 1 | 20 | 20000 | 30 | — |
| 900 | 1 | 35 | 30000 | 45 | — |
| 1000 | 1 | 50 | 40000 | 60 | — |
| 1500 | 2 | 25 | 50000 | 75 | — |
| 2000 | 3 | | | | |

Եթէ մուրհակը հասարակ թղթի վրա է գրած, այն ժամանակ նա չի համարւում մուրհակ և չունի մուրհակի ոյժ:

Մուրհակները լինում են երկու տեսակ. 1, հասարակ մուրհակ և 2, փոխանակագիր: Առաջին դէպքում մուրհակ տւողը ինքը պիտի վճարէ գումարը, իսկ երկրորդ դէպքում—նա մէկ ուրիշին է յանձնարարում վճարել:

Մուրհակները գրւում են երկու տեսակ. «ըստ առաջին պահանջման (по предъявленію) կամ որոշ ժամանակով (срочные): Առաջին դէպքում պարտապանը իր պարտքը պիտի վճարէ իսկոյն, երբ որ պահանջեն: Երկրորդ դէպքում որոշած ժամանակը լրանալուց յետոյ:

Եթէ այդ ժամանակամիջոցներում պարտապանը իր պարտքը չըվճարէ, պէտք է մուրհակը ներկայացնել նոտարին, որը օրինական ձևով մակագրում է չվճարման մասին (протестъ): Դրանից յետոյ պարտատէրը դատարանի միջոցով կարող է պահանջել գումարը:

Մուրհակները իրանց ոյժը կորցնում են. 1) երբ գրւած են «ըստ առաջին պահանջման», բայց 12 ամսւայ ընթացքում չեն ներկայացրած նոտարին՝ բողոքելու (протестованіе) համար: 2) Եթէ գրւած են «որոշ ժամանակով» կամ «ըստ առաջին պահանջման», բայց բողոքելուց յետոյ 5 տարւայ ընթացքում չեն առաջարկւած վճարելու: Այդ երկու դէպքում էլ մուրհակները պահպանում են իրանց նշանակութիւնը 10 տարի, իբրև պարտաթուղթ (долг. обязат.):

Մուրհակները գրւում են որոշ ձևով. օրինակ.

ա. Հասարակ մուրհակ.

Բագու. 4 նոյեմբերի 1903 թ.: Մուրհակ 2000 ր.: Այս օրից վեց ամիս յետոյ պարտաւոր եմ այս մուրհակով վճարելու Երևանցի պ. Վարդան Մարտիրոսեան Ջահինեանցին երկու հազար րուբլի: Բագուեցի 2-րդ կարգի վաճառական Սահակ Բդնունի:

—

Թիֆլիս. 1904 թ. 25 յունուարի: Մուրհակ 100 րուբլու: Առաջիկայ 1905 թ. յունուարի քսան և հինգին այս իմ մուրհակով պարտաւոր եմ վճարել Թիֆլիսի վաճառական Գ... Մ... հարիւր րուբլի:

. . . Կար. Առաքելեան:

բ. Փոխանակագիր.

Կարս, 12 մայիսի 1903 թ.: Մուրհակ 100 ռուբ.: Ըստ առաջին պահանջման—(կամ վերոյիշեալ թըւից քառասուն օր յետոյ)—վճարեցէք այս մուրհակի համեմատ Ալէքսանդրապոլցի վաճառական Սըմբատ Մանուկեանցին հազար րուբլի: Արամ Աթայեանց:

2-րդ կարգի վաճառական Արամ Արշակունուն, Շուշի քաղաքում:

# Տոկոսների հաշուեցոյց:

100 րուբլի դրամագլուխը կ'բերէ*):

| օրեր | 3% | 3½% | 4% | 4½% | 5% | 5½ | 6½% | 7½% | 8½% | 9½% | 10% |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. | կոպ. |
| 1 | 0,83 | 0,97 | 1,11 | 1,25 | 1,39 | 1,52 | 1,80 | 2,08 | 2.36 | 2,64 | 2,77 |
| 2 | 1,66 | 1,94 | 2,22 | 2,50 | 2,77 | 3,05 | 3,61 | 4,16 | 4,72 | 5,27 | 5,55 |
| 3 | 2,50 | 2,91 | 3,33 | 3,75 | 4,16 | 4,58 | 5,41 | 6,25 | 7,08 | 7,91 | 8,33 |
| 4 | 3,33 | 3,89 | 4,44 | 5 | 5,55 | 6,11 | 7,22 | 8,33 | 9,44 | 10,55 | 11,11 |
| 5 | 4,16 | 4,86 | 5,55 | 6,25 | 6,94 | 8,63 | 9,02 | 10.41 | 11,88 | 13,19 | 13,89 |
| 6 | 5 | 5,83 | 6,66 | 7,50 | 8,33 | 9,16 | 10,83 | 12,50 | 14,66 | 15,83 | 16,66 |
| 7 | 5,83 | 6,80 | 7,77 | 8,75 | 9,72 | 10,69 | 12,63 | 14,58 | 16,52 | 18,47 | 19,44 |
| 8 | 6,66 | 7,77 | 8,89 | 10 | 11,11 | 12,22 | 14,44 | 16,66 | 19,89 | 21,11 | 22,22 |
| 9 | 7,50 | 8,75 | 10 | 11,25 | 12,50 | 13,75 | 16,25 | 18.75 | 21,25 | 23,75 | 25 |
| 10 | 8,33 | 9,72 | 11,11 | 12,50 | 13,89 | 15,27 | 18,05 | 20.83 | 23,61 | 26,39 | 27,77 |
| 11 | 9,16 | 10,69 | 12,22 | 13,75 | 15,27 | 16.80 | 19.86 | 22,91 | 25,97 | 29:02 | 30,55 |
| 12 | 10 | 11,66 | 13,33 | 15 | 16,66 | 18,33 | 21,66 | 25 | 28,33 | 31,66 | 33,33 |
| 13 | 10,83 | 12,64 | 14,44 | 16,25 | 18,05 | 19.83 | 23.47 | 27,08 | 30,69 | 34,30 | 36,11 |
| 14 | 11,66 | 13,61 | 15,55 | 17,50 | 19,41 | 21,38 | 25,27 | 29,16 | 33,05 | 36,94 | 38,89 |
| 15 | 12,50 | 14,58 | 16.66 | 18,75 | 20.83 | 22,91 | 27,08 | 31,25 | 35,41 | 39,58 | 41,66 |
| 16 | 13.33 | 15,55 | 17,77 | 20 | 22,22 | 24,44 | 28,88 | 33,33 | 37,77 | 42,22 | 44,44 |
| 17 | 14,16 | 16,52 | 18,89 | 21,25 | 23,61 | 25,97 | 30,69 | 35,41 | 40,13 | 44,86 | 47,22 |
| 18 | 15 | 17.50 | 20 | 22,50 | 25 | 27,50 | 32,50 | 37,50 | 42,50 | 47.50 | 50 |
| 19 | 15,83 | 18,47 | 21,11 | 23.75 | 26,38 | 29,02 | 34,30 | 39,58 | 4 ,84 | 50,14 | 52,77 |
| 20 | 16,66 | 19.44 | 22,22 | 25 | 27,77 | 30,55 | 36,11 | 41,66 | 47,22 | 52,77 | 55,55 |
| 21 | 17,59 | 20,41 | 23,33 | 26,25 | 29,16 | 32,08 | 37,91 | 43.75 | 49,58 | 55,41 | 58,33 |
| 22 | 18,33 | 21,39 | 24,44 | 27,50 | 30,25 | 33,61 | 39,72 | 45,83 | 51,94 | 58,05 | 61,11 |
| 23 | 19.16 | 22,36 | 25,55 | 28.75 | 31,94 | 35,13 | 41,52 | 47,91 | 54,30 | 60,69 | 63,89 |
| 24 | 20 | 23.33 | 26,66 | 30 | 33.33 | 36,66 | 43,33 | 50 | 56,66 | 63,33 | 66,66 |
| 25 | 20,83 | 24.30 | 27,77 | 31,25 | 36,11 | 38,19 | 45,13 | 52,08 | 59,02 | 65.97 | 69,42 |
| 26 | 21,66 | 25,27 | 28,89 | 32,50 | 34,72 | 39.72 | 46,94 | 54,16 | 61,38 | 68,61 | 72,24 |
| 27 | 22,50 | 26,25 | 30 | 33.75 | 37,50 | 41,25 | 48,75 | 56,25 | 63,75 | 71,25 | 75 |
| 28 | 23,33 | 27,22 | 31,11 | 35 | 38,89 | 42,77 | 50,55 | 58,33 | 66,11 | 73,89 | 77,77 |
| 29 | 24,16 | 28,19 | 32,22 | 36,25 | 40,27 | 44,30 | 52,36 | 60,41 | 68,47 | 76,52 | 80,55 |
| 30 | 25 | 29,16 | 33,33 | 37,50 | 41,66 | 45,83 | 54,16 | 62,50 | 70,83 | 79,16 | 83,33 |

| Ամիսներ: | 3% | 3½% | 4% | 4½% | 5% | 5½% | 6% |
|---|---|---|---|---|---|---|---|
| | r. կոպ. | r. կոպ. | r. կոպ. | r. կոպ. | r. կոպ. | r. կոպ. | r. կոպ. |
| 1 » | — 25,000 | — 29,166 | — 33,333 | — 37,500 | — 41,666 | — 45,833 | — 50,000 |
| 2 » | — 50,000 | — 58,333 | — 66,666 | — 75,000 | — 83,333 | — 91,666 | 1 00,000 |
| 3 » | — 75,000 | — 87,500 | 1 00,000 | 1 12,500 | 1 25,000 | 1 37,500 | 1 50,000 |
| 4 » | 1 00,000 | 1 16,666 | 1 33,333 | 1 50,000 | 1 66,666 | 1 83,333 | 2 00,000 |
| 5 » | 1 25,000 | 1 45,833 | 1 66,666 | 1 87,500 | 2 08,333 | 2 29,166 | 2 50,000 |
| 6 » | 1 50,000 | 1 75,000 | 2 00,000 | 2 25,000 | 2 50,000 | 2 75,000 | 3 00,000 |
| 7 » | 1 75,000 | 2 04,166 | 2 33,333 | 2 62,500 | 2 91,666 | 3 20,833 | 3 50,000 |
| 8 » | 2 00,000 | 2 33,333 | 2 66,666 | 3 00,000 | 3 33,333 | 3 66,666 | 4 00,000 |
| 9 » | 2 25,000 | 2 62,500 | 3 00,000 | 3 37,500 | 3 75,000 | 4 12,400 | 4 50,000 |
| 10 » | 2 50,000 | 2 91,666 | 3 33,333 | 3 75,000 | 4 16,666 | 4 58,333 | 5 00,000 |
| 11 » | 2 75,000 | 3 20,833 | 3 66,666 | 4 12,500 | 4 58,333 | 5 05,166 | 5 50,000 |
| 12 » | 3 00,000 | 3 50,000 | 4 00,000 | 4 50,000 | 5 00,000 | 5 50,000 | 6 00,000 |

*) Ծանօթ. Այս տախտակի միջոցով կարելի է հեշտութեամբ հաշուել նաև 100 ր. տոկոսը 6%, 7%, 8%, և 9%-ով: Դրա համար պէտք է այդ թուերի կէսին համապատասխանող տախտակների գումարները բազմապատկել 2-ի վրա. օրինակ. 100 ր. տոկոսը 8 օրում, 3%-ով=6, 66 կոպ., ուրեմն 6%-ով կլինի 6, 66 կոպ.×2=13,32 կոպ., 20 օրում, 3½-ով =19,44 կ., ուրեմն 7% կլինի 19,44 կ.×2=38,88 կոպ. և այլն: Երկրորդ տախտակում էլ նոյն ձևով վարուելով, կարելի է հաշուել 100 ր. տոկոսը նաև 7, 8, 9, 10, 11, 12 %-ով:

## Ա Ն Ց Ա Գ Ի Ր:

Անցագիրը լինում է երկու տեսակ՝ 1) մշտական, 2) ժամանակաւոր: Մշտական անցատետր կարող են ստանալ՝ ա) չծառայող ազնուականները, բ) I և II կարգի վաճառակ., գ) պատ. քաղաքաց., դ) պետ. ծառ. ինքնակամ հեռացած պաշտ. և ե) զօնապան պաշտօնեաները:

Քաղաքացիական ծառայութեան մէջ գտնուող անձինք մշտական անցագրեր կարող են ստանալ այն վարչութիւնից, որտեղ ծառայում են, իսկ հոգևորականները — համապատասխան հոգևոր իշխանութիւնից:

Վաճառականները պարտաւոր են իւրաքանչիւր տարի մինչև փետրուարի 15-ը ոստիկանութեան ներկայացնել իրանց վաճառականական վկայականները և անցագրի մէջ նշանակել տալ այդ մասին:

Ժամանակաւոր անցագիր կարող են ստանալ մէշչանները, արհեստաւորները և գիւղացիները: Ժամանակաւոր անցագիրը լինում է 3 տեսակ՝ ա) անցագրատետր, բ) անցագիր և գ) վկայական: Անցագրատետրը տրւում է 5 տարով, անցագիրը 1 տարով, իսկ վկայականը աւելի կարճ ժամանակով:

Ռուսաց կայսրութեան բոլոր տեղերում, բացի Լեհաստանից, անցագրերը տրւում են բոլորովին ձրի, միայն անցագրատետր ստացողներից վերցնում են 15 կոպ. իբրև տետրի արժէքը:

Անցագիր ստանալ չեն կարող դատարանի վճռով բոլոր իրաւունքներից զրկուածները և ոստիկանական հսկողութեան տակ գտնուողները:

Արտասահմանեան անցագիր ստանալ կարելի է նահանգապետներից: Պէտք է վճարել իւրաքանչիւր վեցամսեակի համար 15 ռուբ.:

## ՊՕՍՏ:

Ընդհանուր գիտելիք: Պօստային և հեռագրական գործերը Ռուսաստանում ենթարկւում են Ներքին Գործերի Մինիստրին. այդ գործերի ընդհանուր ղեկավարութիւնը յանձնուած է պօստի և հեռագրի գլխաւոր վարչութեանը (Главное управленіе почтъ и телеграфовъ): Իսկ տեղական գործերը կենտրոնացած են պօստային-հեռագրական շրջանների վարչութեան մէջ: Ամեն մի շրջան բաղկանում է երկու կամ աւելի նահանգներից և ունենում է քաղաքներում պօստային և հեռագրական գրասենեակ—պօստատուն (почтово-телеграфная контора)․ իսկ երկաթուղու կամ պօստի ճանապարհների կայարաններում — պօստային և հեռագրական բաժանմունք (почтово-телеграфное отдѣленіе):

Պօստային հիմնարկութիւնների գործողութեան ժամանակը: Լի օրերը ընդունւում է և դուրս է տրւում ամեն տեսակ թղթակցութիւն և վաճառւում է նամականիշ (марки)՝ 1) մայրաքաղաքներում—ցերեկը ժ. 8—4, 2) նահանգական քաղաքներում և Օդեսսայում—ժ. 8—3, 3) մնացած բոլոր պօստային հիմնարկութիւնների մէջ ժ. 8—2: Բացի այս, լի օրերը նամակների ընդունելութիւն կատարւում է երեկ. ժ. 5—7: Երկաթուղու կայարաններում պօստային գործողութիւններն սկըսւում են գնացքի մեկնելուց առաջ:

Կիրակի և մի քանի տօն օրերը պօստային գործողութիւնները տեւում են միայն 9—11 ժ.:

Պօստային հիմնարկութիւնները բոլորովին փակ են՝ 1) Ն. Մ. Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհիների անուանակոչութեանը և 2) հետևեալ տօներին.—Նոր տարի, Աստուածայայտնութիւն (6 Յունուարի), Զատկի և Ս. Երրորդութեան, ա. և բ. օրը (Троицы) և Ծննդեան ա. օրը (Դեկտ. 25):

Նամակատուփեր բանալը, խըմբագրութիւններից լրագիրներ ստանալը. պօստը ուղարկելը, ստացածները ցրւելը կատարւում է կայարութեան մէջ ամեն օր:

Ներքին թղթակցութիւն: Բաց նամակը գրւում է մատիտով կամ թանաքով, ամեն լեզւով, պօստի վարչութեան կամ մասնաւոր կերպով պատրաստած բլանկի վրա, որի մէկ երեսը նշանակուած է միմիայն հասցէի համար: Հասցէն պի-

տի լինի ռուսերէն, պարզ և մանրամասն գրուած: Օրէնքի: բարոյականութեան հակառակ բովանդակութիւն ունեցող բաց նամակները տեղ չեն հասցնում: Բաց նամակն արժէ—3 կոպ., արտասահման—4 կոպ.: Բաց նամակ վճարած պատասխանով գրւում է առանձին բլանկի վրա, որ բաղկացած է երկու իրար վրա ծալած մասից՝ մէկը նամակի, իսկ միւսը պատասխանի համար: Երկուսը միասին արժեն 6 կոպ., արտասահմանի համար—8 կոպ.:

2) Նամակի ծրարի վրա կպցնում են համապատասխան նամականիշ—քաղաքային նամակին—5 կոպ., կայսրութեան մէջ—7 կոպ., արտասահման—10 կոպ.: Առանց նամականիշի կամ լրիւ չվճարած նամակն էլ ուղարկւում է նշանակած հասցէով և հասցէատիրոջից (адресатъ) առացւում է պակասորդի կրկնապատիկը: Նամակի հետ փակ ծրարի մէջ թոյլ է տրւում ուղարկել դօկումէնտներ, մարկա և այլն, բացի փողից: Պետական հիմնարկութիւններին ուղղուած նամակներն անպատճառ պիտի լրիւ վճարուած լինին: Քաղաքային նամակի քաշը կարող է լինել մինչև 1 ֆունտ. վճարը—3 կոպ. լօտին, իսկ կայսրութեան մէջ մինչև 5 ֆունտ. վճարը—իւրաքանչիւր լօտին (կամ լօտի մասին) 7 կոպ.:

Փաթեթ (Բանդերօլ): Բաց ծրարներով կամ փաթեթով բաց կարելի է ուղարկել՝ 1) ամեն տեսակ տպած երկեր—լրագիր, բրօշիւր, գիրք, նօտաներ, այցետոմս, յայտարարութիւններ, գրավիւր, լուսանկար, քարտէզ, ալբօմ, յուշատետր (մատիտով և ռետինով) և այլն: Յիշեալ առարկաների վրա թոյլ է տրւում անել կարճ մակագրութիւն՝ 5 բառից ոչ աւել, որ անձնական թղթակցութեան բնաւորութիւն չպիտի ունենայ. 2) գործի վերաբերեալ թղթեր, ապրանքների նմուշներ. Նմուշների վրա թոյլ է տրւում մակագրել ֆիրման, ֆիրմայի նշանը, ապրանքի համարը և գինը: Նմուշները կարելի է ուղարկել տոպրակի, արկղի մէջ՝ բաց:

Բանդերօլի մէջ արգելւում է դնել նամակ կամ փող, նամականիշ և առհասարակ տպուած արժէթղթեր: Բանդերօլի մէջ բռնուած փողի $1/4$ մասը գրաււում է յարքունիս. իսկ նամակի համար վերցւում է լօտին մէկ ռուբլի տուգանք:

Քաղաքային բանդերօլի համար վերցւում են՝ 1) տպած երկեր, մինչև 1 լօտ ծանր.—1 կոպ., 1—8 լօտ.—2 կոպ., ապա ամեն 8 լօտին (կամ մասին)—2 կ.:

2) Գործի վերաբերեալ թղթեր և նմուշներ՝ ամեն չորս լօտին (կամ չորս լօտի մասին)—2 կոպ.

Մի քաղաքից կայսրութեան մի ուրիշ տեղն ուղարկւող բանդերօլի համար վերցնում են ամեն չորս լօտին (կամ չորս լօտի մասին)—2 կոպ.:

Մեծութիւնը կարող է լինել թղթերի և տպած երկերի համար՝ երկարութիւնը 10 վերշ., լայնութիւնը 10 վերշ., հաստութիւնը 10 վերշ., իսկ քաշը—4 ֆունտ:

Ապրանքի նմուշների համար՝ երկար. 6 վերշ., լայն. 4 վերշ., հաստ. 2 վերշ., իսկ քաշը՝ 81 մսխալ:

Նոյնը կոլորած. թղթեր և տպած երկերի—երկարութ.—17 վերշոկ, տրամագիծը—2 վերշ.:

Նմուշների—երկարութիւնը 6 վերշ. հաստութիւնը 3 վերշ.:

Բանդերօլի ամենապակաս վճարը տարբեր տարբեր է մայրաքաղաքներում, քաղաքներում, կայսրութեան մէջ և արտասահման: Նմուշների ամենապակաս վճարը կայսրութեան մէջ—3 կ., արտասահման—4 կ.:

Բաց և փակ նամակները և բանդերօլները կարելի է ուղարկել պատուիրած (заказное) կամ ապահոված եղանակով. դրա համար հարկաւոր ուղարկելիքի վրա մակագրել заказное և տանել պօստատնից անդորրագիր. պատուէրի համար առանձին վճարում են 7 կոպ.:

Պատուիրած նամակը կարելի է ուղարկել, պահանջելով հասցէատիրոջից ստացագիր՝ ստանալու մասին:

Դրա համար հարկաւոր է հասցէի հետ գրել՝ կայարութեան մէջ. «съ обратной распиской»—արտասահման —avis de reception. առաջնի համար վճարում են 7 կ., իսկ երկրորդի համար 10 կոպէկ:

**Դրամական կամ արժէքաւոր ծրարներով** (денежные и цѣнные пакеты) ուղարկում են թղթադրամ, ոսկի և արծաթ դրամ, տոկոսաբեր թղթեր. կուպոններ, տալոններ, դրուագաւոր թղթեր (гербовыя бумаги), մուրհակներ, դօկումենտներ և այլն: Այսպիսի ծրարը բաց ներկայացնում են պօստատանը ստուգելու համար: Եթէ ծրարի մէջ դրւում է մի քանի արժէքաւոր թղթեր, պահանջւում է կազմել առանձին ցուցակ ներկայացնողի ստորագրութեամբ: Դրամական ծրարի վրա անպատճառ գրւում է денежный: Ծրարը կնքւում է հինգ տեղով կնքամոմով. մէջ տեղը պօստատան կնիքն է. միւս չորսը ուղարկողինը. ուղարկողը եթէ չի ներկայացնում զմուռ, վճարում է 5 կոպ.: Չրի տրւում է անդորրագիր:

**Արժէքաւոր ծրարներով** ուղարկում են բացի դրամից (ոչ աւելի 1000 ր.) զանազան թղթեր, որոնց արժէքը գնահատում է ուղարկողը (օր. մետրիքական, դիպլոմ, վկայական, հաշիւ և այլն). արժէքաւոր ծրարը կարող է գնահատուել մինչև 15 հազար րուբլի (առանց կոպէկների): Արժէքաւոր ծրարը, եթէ նրա արժէքը 500 րուբլուց չէ անցնում, կարելի է ներկայացնել փակ. միայն այդպիսի ծրարի մէջ արգելւում է փող դնել: Արժէքաւոր ծրարի քաշը կարող է լինել մինչև 10 ֆ: Դրամական ծրարինը—մինչև 20 ֆ.. արժէքաւոր ծրարի վրա նշանակւում է ЦѢННЫЙ և արժէքը՝ տառերով: Արժէքաւոր ծրարի մէջ բռնուած փողի 1/4 մասը դրաււում են յարքունիս:

Արժէքաւոր և դրամական ծրարների համար վճարում են. կայարութեան մէջ՝ ամեն լոտին (կամ լոտի մասին) 7 կոպ.:

Պատուէրի համար ամեն ծրարին 7 կոպ.:

Արտասահման—ամեն 15 գրամին ($1^{1}/_{6}$ լոտ) 10 կոպ.:

Պատուէրի համար ամեն ծրարին 10 կոպ :

Դրամական ծրարների ապահովութեան համար մինչև 600 րուբլին ամեն մի րուբլուց ½ կոպ.:

600 րուբլուց—1600 ռուբ.՝ 1/4 կ. + 1 ր. 50 կ.:

1600 րուբլուց աւելի, առանց սահմանափակութեան 1/8 կ. + 3 ր. 50 կոպ.:

**Դրամական պարկերով կամ կապոցներով** ուղարկւում է բացառապէս փող (մետաղ): Դրամի քանակն ու ծրարի արժէքը սահմանափակ չէ: 25 րուբլուց աւելի գումարի համար պահանջւում է ցուցակ, թէ ինչ տեսակ դրամ (օրինակ ռուբլիանոց, իմպերիալ, պօլուիմպերիալ, 5-անոց և այլն) և որքան է ուղարկւում. իսկ կապոցի գնահատութիւնը պէտք է լինի կամ իսկականը (ոչ պակաս) և կամ կրկնակի (ոչ աւելի): Ցուցակի մէջ ընդհանուր գումարը նշանակւում է տառերով, ուղարկողի ստորագրութեամբ: Դրամական կապոցի քաշը կարող է լինել մինչև 60 ֆ.: Դրամական կապոցների վճարը նոյնն է, ինչ որ ծանրոցներինը:

**Ծանրոցներ** (посылки). պօստի միջոցով ծանրոցների մէջ ուղարկւում է տեսակ տեսակ իրեղէն, այլ և գրքեր, թղթեր և դօկումենտներ. արգելւում է ուղարկել դիւրավառ, սուր հոտ ունեցող իրեր, ընթացիկ դրամ, ծխախոտ առանց բանդերօլի և փակ նամակ: Ծանրոցի մէջ բռնած դրամի 1/4-ը գրաււում է յարքունիս. ծխախոտը յանձնւում է ակցիզային վարչութեան, իսկ նամակը տրւում է հասցէատիրոջ՝ լոտին մի րուբլի տուգանք ստանալուց յետոյ:

Պօստային վարչութիւնը ոչ մի դէպքում պատասխանատու չէ, եթէ ծանրոցը ճանապարհին վնասուի. ուստի պէտք է հոգ տանել լաւ կապել և ամրացնել:

Ծանրոցը կարելի է գնահատել, կամ ոչ. գնահատութիւնը կախուած է ուղարկողից և պէտք է նշանակուի րուբլիներով (առանց կոպէկների) իսկ վրան պէտք է գրուի цѣнная: Հասցէն գրւում է ծանրոցի չապկի կամ չապկին կարած կաշուի քաթանի վրա: Արգելւում է թըղթի վրա հասցէն գրել և կպցնել ծանրոցին:

Ծանրոցի քաշը կարող է լինել մինչև 3 փութ., գնահատութիւնը—մինչև 20 հազար ր.:

Ծանրոցների և դրամական կապոցների վճարը

Եւրոպ. Ռուսաստանում

1) Մինչև 2 Փ.—20 կոպ.
2) Մինչև 7 Փ.—40 կոպ.

Արևմտ. Սիբ. և Թուրքեստ.

1) Մինչև 2 Փ.—30 կոպ.
2) Մինչև 7 փ.—60 կոպ.

Արևելեան Սիբ.

1) Մինչև 2 Փ.—40 կոպ.
2) Մինչև 7 Փ.—80 կոպ.

7 փունտից աւելի ծանրոցների համար մինչև 14 փունտը վճարում են վերի աղիւսակի համեմատ կըրկնակի. իսկ դրանից էլ աւելի՝ ամեն մի փունտի համար առանձին վճարում են:

1) Տեղական կամ միևնոյն նահանգի սահմանների մէջ ուղարկելիք ծանրոցից Եւրոպական Ռուսաստանում (և Կովկասում) և Արևմտեան Սիբիրում—5 կոպ., Արևել. Սիբիրում և Թուրք.—10 կ.

2) Մի նահանգից միւսը՝ տարածութեան նայելով—

մինչև 500 վերստը—5 կոպ.
500 վ.—1000 վ.—10 կոպ.
1000 վ.—2000 վ.—20 կոպ.
2000 վ—3000 վ.—25 կոպ.
3000 վ.—4000 վ.—30 կոպ.
4000 վ.— աւելի —35 կոպ.

Տարածութիւնը հաշւում են ընդունող պօստի նահանգի նահանգական քաղաքից՝ մինչև նշանակած տեղի նահանգական քաղաքը:

Ապահովութեան համար առանձին վճարում են նոյնքան, որքան դրամական ծրարների համար:

Ծանրոցի քաշի ամենապակաս վըճարն է 20 կոպ :

Դրամի փոխադրութիւն պօստով Եւ հեռագրով ընդունւում է կայսրութեան մէջ բոլոր պօստային և հեռագրական հիմնարկութիւնների մէջ: Մի փոխադրական թերթով կարելի է փոխադրել 100 րուբլուց ոչ աւելի. բայց միևնոյն հասցէով միևնոյն անձը կարող է փոխադրել որքան կամենայ, միայն ամեն մի թերթով 100 րուբլուց ոչ աւելի:

Պօստով փոխադրելիս մինչև 25 ր. գումարին վճարում են 15 կոպ., մինչև 100 րուբլին—25 կոպ. (մարկայով): Իսկ հեռագրով փոխադրելիս—Եւրոպական կամ Ասիական Ռուսաստանի սահմաններում—1 ր. 15 կ. իսկ Եւրոպական Ռուսաստանից (և Կովկասից) Ասիական և ընդհակառակը—2 ր. 15 կոպ.:

Փոխադրել կարելի է նաև մասնաւոր կերպով պատրաստած բըլանկով, միայն վերջինս իր չափով, գոյնով և բովանդակութեամբ պիտի համապատասխան լինի պօստի վարչութեան պատրաստած բլանկին, առանց պետական դրօշմի: Այդպիսի բլանկի վրա պէտք է կպցնել համապատասխան մարկա:

Եթէ փոխադրած դրամը չհասնի հասցէտիրոջ, ուղարկողը ներկայացնելով իր ստացած անդորրագիրը, կարող է յետ ստանալ գումարը, իսկ եթէ անդորրագիրը կորցրել է, պէտք է ներկայացնէ պօստատան գլխաւորին յայտարարութիւն այդ մասին և դօկումենտ իր անձի մասին: Հասցէտիրոջ չվճարած և ուղարկողին չվերադարձրած գումարը պահւում է տասն տարի, տրուած օրից հաշւելով, որից յետոյ փոխադրական թերթերը ոչնչանում են:

Էստաֆետ: Այսպէս է կոչւում մասնաւոր մարդու ցանկութեամբ և ծախքով հանած առանձին սուրհանդակը՝ ծանրոցը (մինչև 6 փութ), դրամական կամ ապահոված ծրար և կամ նամակ ցանկացած տեղը տանելու համար: Պօստային հիմնարկութիւնների մէջ այդպիսի պատուէր ընդունւում է ամեն ժամանակ՝

թէ ցերեկը և թէ գիշերը, և անմիջապէս առանց յետաձգութեան ուղարկւում է: Դրա համար պէտք է տալ առանձին վճար:

**Վերադիր վճար**: Ուղարկողը՝ ցանկանալով ստանալ հասցէատիրոջից իրեն հասանելի գումարը, մակագրում է ուղարկելիքի վրա այդ գումարը, որ կոչւում է վերադիր վճար (наложенный платежъ): Այդ գումարը պօստին վճարելուց յետոյ միայն հասցէատէրն ստանում է իրեն ուղարկուած ծանրոցը կամ ծրարը. վերադիր վճարը կարող է լինել միևնոյն քաղաքում և կայսրութեան մէջ: Արտասահման այդպիսի ուղարկելիք չի ընդունւում: Վերադիր վճարը նշանակւում է միայն կայսրութեան մէջ շրջանառութիւն ունեցող դրամով և ոչ աւելի քան 200 րուբլի: Վերադիր վճարի համար ստացւում է առանձին միջնորդութեան տուրք (Комиссіонныя) մէկ րուբլուն (կամ րուբլու մասին) 2 կ.: Ամենապակաս վճարն է 10 կոպ. պօստն իր ստացած վերադիր վճարն անմիջապէս ձրիաբար փոխադրում է ըստ պատկանելոյն: Ոչ մի դէպքում միջնորդութեան համար վճարած գումարը յետ չի վերադարձւում:

Պօստատներում վաճառւում են բացի **նամականիշներից** (1, 2, 3, 4, 5, 7, 10, 14, 20 կոպէկանոց և այլն) նաև **ծրարներ** մարկայով—5, 7, 10, 14 և 20 կոպէկանոց, փակ նամակի համար **բլանկներ**—5, 7 և 10 կոպէկանոց. բաց նամակի բլանկներ—1/4, 3, 4, 6 և 8 կոպէկանոց: Ծրարները և փակ նամակի բլանկները վաճառւում են ¼ կոպէկ աւելի վրայի գնից: Իսկ բանդերօլի համար պատրաստի փաթեթը՝ փոքր դիրքովը—1½ կոպ., միջակը և մեծը 2½ կոպ.:

**Դրամական և արժէքաւոր ծրարներ** (որոնք չունին վերադիր վճար) հասցէատիրոջ ցանկութեամբ կարելի է **տուն հասցնել** առանձին վճարով: Դրա համար հարկաւոր է ծանուցագրի վրա մակագրել — «прошу доставить на домъ», ստորագրել և տալ գցել պօստարկղը. այդպիսի ամեն մի ծրարի համար պէտք է վճարել 15 կոպ.: Ծրարն յանձնւում է իսկական հասցէատիրոջ, որ պիտի լինի գրագէտ: Այդ դէպքում դրամական ծրարը կարող է լինել մինչև 50 ր., իսկ ծանրոցը՝ 15 ր. արժէքով և ոչ աւելի քան 5 ֆունտ ծանրութեամբ:

Զանազան պատճառներով **տէրերին չհասցրած ծրարները** (այլ և до востребованія մակագրութեամբ եղածները) պահւում են ոչ աւելի քան 6 ամիս. իսկոյն յետ են ուղարկւում սկզբնական (ընդունելութեան) տեղը՝ եթէ 1) հասցէատէրը մեռած է, 2) կամ հիմնարկութիւն է, որ այժմ նոյն տեղում գոյութիւն չունի, 3) պարբերական հրատարակութիւն է, որ դադարեցրած է և 4) եթէ հասցէատէրը չի կամենում ստանալ: Մնացած ամեն տեսակ նամակները, ծրարները, ծանրոցները, որոնք չեն կրում ուղարկողի հասցէն, պահւում են 3 ամիս, յետոյ ուղարկւում են այն տեղ, ուր կայ վերստուգող պալատ (контрольная палата): Այստեղ հասարակ ծրարները պահւում են մի տարի, իսկ պատուիրածները ու ապահովածները մինչև 2 տարի՝ տրուած օրից հաշուելով: Ապա բաց են անում: Դրանց մէջ գտնուած արժէքաւոր իրերը հրապարակական աճուրդով վաճառւում են և ստացած փողը, ինչպէս նաև արժէքաւոր թղթերը պահ են տրւում գանձարան: Իսկ մնացածները (թղթեր, նամականիշ և այլն) ոչնչացնում են: Գտնուած դօկումենտները ուղարկւում են նահանգական վարչութեան՝ տիրոջը յանձնելու: Դրամը և արժէքաւոր թղթերը կարելի է ստանալ տաս տարուայ ընթացքում: Հարկաւոր է դիմել այն սկզբնական պօստատան վարչութեանը, որին յանձնուած էր ուղարկելիքը:

**Ուղարկածը յետ պահանջելը, արգելելը և հասցէն փոխելը** կարելի է, եթէ նա դեռ չէ յանձնուած հասցէատիրոջը. դրա համար պէտք է գրաւոր յայտարարութիւն տալ ըս-

կցրնական տեղը, յայտնելով՝ ինչքան էր ուղարկածը և ինչ հասցէով. կարելի է պահանջել, որ հեռագրով հաղորդուի կարգադրութիւնը, վճարելով հեռագրի ծախսը: Այս տեսակ յայտարարութեանը պէտք է կպցնել 14 կոպ. մարկա: Պօստատան անդորրագիրը կորցնելու դէպքում յետ ստացած ծրարը կամ ծանրոցը, որ 25 րուբլուց աւելի չէ գնահատուած, եթէ վրան կրում է ուղարկողի հասցէն, յետ է տրւում տիրոջը, երբ սա ներկայացնում է վկայութիւն իր անձի մասին. իսկ երբ արժէքը 25 րուբլուց աւելի է, պահանջւում է երկու անգամ յայտարարել կորած անդորրագրի մասին տեղական պաշտօնական թերթի մէջ:

**Ապահոված ծրարի կորուստը**: Կորցրած (կամ սխալմամբ ուրիշին տրուած, կամ յափշտակուած և կամ հրդեհի մէջ այրուած և այլն) ապահոված ծրարի կամ ծանրոցի փոխարէն պօստային վարչութիւնը տալիս է ուղարկողին վարձատրութիւն նշանակած գնահատութեան համեմատ. իսկ պատուիրած նամակի կամ փաթեթի համար—10 րուբլի: Վարձատրութիւնն ստանալու ժամանակամիջոցն է 2 տարի տրուած օրից սկսած: Դիմել կարելի է կամ պօստի և հեռագրի գլխաւոր վարչութեան և կամ այն շրջանի մեծաւորին, որին ենթակայ հիմնարկութեան մէջ տրուած է եղել ծրարը: Հարկաւոր է ներկայացնել պօստատան անդորրագիրը և պատճէնը:

**Միջազգային պօստ**: 1897 թուի յունիսի 3/15-ին Վաշինգտօնում կայացաւ աշխարհիս առանձին երկրների ներկայացուցիչների դաշնադրութիւնը և կազմուեցաւ «Համաշխարհային պօստային միութիւն» всемірный почтовый союзъ, Union postale universelle): Այդ դաշնադրութեան մասնակցում են եւրոպական բոլոր տէրութիւնները և Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի և Աւստրալիայի երկրների մեծ մասը:

Այդ դաշնագրութեամբ յիշեալ երկիրները ազատ փոխանակում են իրար հետ բաց գիր (պատասխանով), նամակ, ծրար, տպած երկեր, գործի վերաբերեալ թղթեր և ապրանքի նմուշներ: Փոխանակութեան ազատութիւնը և ապահովութիւնը երաշխաւորուած է Միութեան ամբողջ տարածութեան մէջ:

Հասցէն պիտի գրուած լինի ֆրանսերէն. Ռուսաստանից ուղարկուածների հասցէն պիտի գրուի նաև ռուսերէն. Գերմանիա և Աւստրիա ուղղուած ծրարների հասցէն կարելի է գրել միայն գերմաներէն:

## ՀԵՌԱԳԻՐ:

**Ընդհանուր կանոններ**: Հեռագիրը լինում է ներքին և միջազգային: Ներքին են կայսրութեան մէջ փոխանակւող հեռագրերը. միջազգային կոչւում է Ռուսաստանից արտասահման և ընդհակառակն տրւող հեռագիրը. այլ և Ռուսաստանի վրայով անցնողը (տրանզիտ):

**Հեռագրատան պատասխանատուութիւնը**: Հեռագրի բովանդակութիւնը մնում է անպայման գաղտնիք: Հեռագրատունը ամեն միջոց գործ է դնում, որ հեռագիրն իսկութեամբ և անյապաղ տեղ հասնի: Բայց պատասխանատուութիւն չի յանձն առնում անսխալ հաղորդել և նշանակած ժամանակին հասցնել տիրոջը:

**Հեռագիր կազմելը**: Հեռագիրը գրւում է կամ սովորական թղթի վրա, միայն մի երեսը կամ սահմանուած բլանկի վրա, որ տրւում է ձրի: Մասնաւոր հեռագիրներ տրւում է այն լեզուներով, որոնց համար կայ թոյլտուութիւն: Հեռագիր տուողից կարող են պահանջել իր հասցէն՝ հէնց իր օգտի համար առանց վճարի:

Պետութեան՝ օրէնքներին և բարոյականութեան հակառակ բովանդակութիւն ունեցող հեռագիր չի կարելի տալ: Այդպիսի հեռագիրն արգելւում է կամ հէնց ընդունելութեան տեղում, կամ ճանապարհին և կամ վերջին կայարանում, որտեղից նա դուրս պիտի տրուի: Որ-

գեւող հիմնաւորութեան ներկայացուցիչը անմիջապէս հաղորդում է պօստի և հեռագրի գլխաւոր վարչութեան մեծաւորին հեռագրի բովանդակութիւնը և խնդրում է թոյլտւութիւն։ Եթէ մերժուի, անմիջապէս հաղորդւում է այս մասին ընդունելութեան տեղը՝ տւողին յայտնելու համար։ Տւողն էլ կարող է բողոքել այս մասին՝ ներքին գործերի մինիստրին։

**Հեռագրի հասցէն** պէտք է գրել պարզ և որոշ, մանաւանդ եթէ կան նման անուններ։ Հեռագիրը կարելի է ուղարկել ցպահանջ, նշանակելով վրան до востребованія. առանց վճարելու այդ բառերի համար։ Եթէ հեռագիրը ուղղուած է մի տեղ, ուր չկայ հեռագրատուն, կարելի է հասցնել. 1) պօստով, 2) էստաֆէտով (տես. վերևը) և 3) յատուկ ձիաւորով (нарочнымъ). և այս պիտի նշանակուի հեռագրի վրա։

**Պայմանական հասցէն** լինում է համառօտութեան համար։ Այդպիսի հասցէ ունենալ ցանկացողը խրնդրագրով դիմում է տեղական հեռագրատան մեծաւորին, նշանակելով իր իսկական և պայմանական հասցէն և վճարում է տարեկան (Յունուարից—Յունուար) 10 րուբլի։

**Բառերի հաշիւ։** Հեռագրի մէջ ինչ որ գրուած է և հաղորդւելու է, հաշուի է առնւում վճարը որոշելիս. այսպէս՝ отвѣтъ уплаченъ, вслѣдъ և այլն։ Մի բառ է հաշւում. 1) Տեղերի բաղադրեալ անունը (օր. Нахичевань Эриванск.) 2) Նահանգների և երկաթուղիների կարգ անունները, միայն հասցէի մէջ. 3) ամեն մի նշան կամ տառ, որ ջոկ է գրուած, 4) այն գիծը, որով ընդգծած է բառը, 5) փակագիծը, 6) չակերտը, 7) ամեն մի սովորական բառ, կամ բարդութիւն, որ 15 տառից աւելի չէ. իսկ 15 տառից աւելին հաշւըւում է այնքան բառ, որքան անգամ 15 է պարունակում. 8) բարդ բառի մասը, եթէ նա գծերով անջատուած է. 9) թւերի մէջ ամեն հինգ թւանշանը։

Կէտադրութեան և առողանութեան նշանների համար վճար չեն վերցնում։

**Հեռագրի դադարեցնելը** կարելի է. դրա համար հարկաւոր է ներկայացնել անդորրագիրը։ Այս դէպքում 1) եթէ հեռագիրը դեռ չէ տրուած, չի տրւում, վճարը վերադարձնւում է, դուրս գալով 20 կոպ. 2) եթէ հեռագիրը սկսել են տալ, բայց չեն վերջացրել, ընդհատում են տւողի գրաւոր յայտարարութեան համաձայն—բայց վճարը չեն վերադարձնում. 3) եթէ հեռագիրը տրուած է, բայց կարելի է ենթադրել, որ դեռ չէ հասցրած տիրոջը, տւողը պարտաւոր է տալ նոր հեռագիր այն հիմնարկութեան վրա, ուր ուղարկուած էր հեռագիրը։ Իսկ եթէ ցանկանում է հետևանքի մասին ևս գիտենալ, պէտք է վճարէ նաև պատասխանի համար։

**Հեռագիր վճարած պատասխանով.** (Отвѣтъ уплаченъ) Հեռագիր տւողը կարող է վճարել արժէքն այն պատասխանի, որ նա սպասում է հասցէատիրոջից. կարող է պահանջել, որ պատասխանը ուղղուի ուրիշ տեղ և նոյն իսկ ուրիշ մարդու հասցէով. այս դէպքում նա հեռագրի մէջ պիտի յիշէ տեղն ու հասցէն, ինչպէս նաև իր հասցէն։ Պատասխանի բառերի թիւը կարող է տւողը որոշել։ Չ'որոշելու դէպքում յատկացւում է 10 բառի արժէք։ Հեռագրի հասցէատէրն ստանում է անդորրագիր, որով նա իրաւունք ունի վեց շաբաթուայ ընթացքում մի հեռագիր տալ, ուր և ում կամենայ՝ նշանակուած բառերի քանակութեամբ։ Եթէ հասցէատէրը չգտնուի կամ չուզենայ ստանալ վճարած պատասխանով հեռագիրը, այդ դէպքում հեռագրատունը ի հաշիւ վճարած պատասխանի՝ պաշտօնական հեռագրով հաղորդում է տեղեկութիւն սկզբնական տեղը՝ հեռագիր տւողին յայտնելու համար։

**Տեղեկութիւն հեռագրի տեղ հասցնելու մասին։** Հեռագիր տւողը կարող է պահանջել, որ իրեն հաղորդուի պօստով կամ հեռագրով՝

տեղեկութիւն այն մասին, թէ երբ է տրուած հասցէատիրոջ հեռագիրը (ամսաթիւը և ժամը)։ Դրա համար նա վճարում է սահմանուած տուրքը, իսկ հեռագրի վրա մակագրում է. «Извѣщеніе оплачено по телеграфу» (եթէ հեռագրով է կամենում) կամ почтовое извѣщеніе оплачено (եթէ պօստով). հեռագրատունը անմիջապէս պօստով կամ հեռագրով հաղորդում է տեղեկութիւն։

**Հասցէտիրոջ հետապնդող հեռագիր.** Телеграмма вслѣдъ адресату. Ուղարկողը հեռագիրը տալիս կարող է պահանջել, որ եթէ հասցէատէրը նշանակած հասցէով չգտնուի, նրան ուղարկուի հեռագիրը ուրիշ հասցէով։ Այս դէպքում տուողը կարող է նշանակել ուրիշ հասցէ, նոյն իսկ հասցէներ, որոնցով պէտք է որոնել հասցէատիրոջը։ Այդպիսի հեռագրի վրա գրւում է «вслѣдъ»։ Հասցէատիրոջ չգտնուելու դէպքում հեռագիրը պահւում է ցպահանջ

**Հեռագիր մի քանի հասցէով։** Միեւնոյն հեռագիրը կարելի է ուղարկել 1) մի քանի մարդու՝ միեւնոյն տեղում և 2) մի մարդու միեւնոյն տեղում՝ մի քանի հասցէով։ Այդպիսի հեռագրի վրա գրւում է столько-то (թւով) адресовъ. բառերը հաշուելիս ի նկատի են առնում և այդ խօսքերը և բոլոր հասցէների բառերը։ Ամեն մի պատճէնի հանելու համար ստացւում է վճար։

**Անյետաձգելի**—срочная **հեռագիր։** Այդպիսի հեռագրի վրա գրւում է срочная. Մասնաւոր անյետաձգելի հեռագիրները տրւում են սովորական հեռագրներից առաջ։ Անյետաձգելի հեռագիրը կարելի է տալ վճարած պատասխանով. այդ դէպքում գրւում է՝ отвѣтъ срочный уплаченъ.

**Երբ գիծը վնասուած է,** հեռագրատունը իր հաշւով՝ պօստով կամ էստաֆէտով հեռագրի պատճէնն ուղարկում է հետեւեալ հեռագրատունը, որտեղից կարելի է տալ։

**Հեռագիրը հասցէտիրոջ հասցնելը.** Հեռագրները ցրւում են տէրերին հետզհետէ, հերթով և նայելով, թէ ինչ կարգի կամ տեսակի են պատկանում։ Բարձրագոյն, կառավարչական, պաշտօնական, արտակարգ և մասնաւոր անյետաձգելի հեռագրները ցրւում են անմիջապէս՝ հերթից դուրս, առանձին ցրիչների ձեռքով։

До востребованія մակագրութեամբ հեռագիրը տրւում է հասցէտիրոջ կամ նրա հաւատարմատարին ընդ ստորագրութեամբ։

**Տեղ չհասած հեռագիրները,** ինչպէս նաև до востребованія մակագրութեամբ եղածները, վեց շաբաթ պահւում են հեռագրատանը և փակ ի ցոյց են դրւում ընդունարանում կամ պահւում են. այդ դէպքում կախում են այդպիսի հեռագրների այբբենական ցանկը։ Ցիշեալ ժամանակը լրանալուց յետոյ հեռագրներն ուղարկւում են պօստի և հեռագրի գլխաւոր վարչութեան։

**Ներքին հեռագիր.** առանց ընագրի՝ միայն հասցէով հեռագիր չի ընդունւում։ Չի կարելի հեռագիր տալ սնոտի, պետական խորհրդի և մինիստրների կոմիտեի անունով։ Եթէ հարկաւոր է հեռագիրը տալ անմիջապէս հասցէատիրոջը իրան, հասցէից առաջ գրւում է «въ собственныя руки»։

Հեռագրի տալու **ժամանակը,** այսինքն ամիսը, օրը, ժամը և րոպէն նշանակւում է Պետերբուրգի հաշւով։

**Հեռագրի վճարը** կազմւում է բլանկի արժէքից և բառավճարից։ Բլանկի համար Եւրոպական Ռուսաստանում և Կովկասում ստացւում է 15 կոպ.։ Բառին առնում են 1) Եւրոպական Ռուսաստանում (և Կովկասում) այլ և Ասիական Ռուսաստանում—5 կոպ.։ 2) Եւրոպական Ռուսաստանից և Կովկասից Ասիական Ռուսաստան և ընդհակառակը—10 կոպ.։ 3) Քաղաքային հեռագրի բառին 1 կոպ.։ 4) Ստուգութեան (провѣрка) համար վճարում են հեռագրի արժէքի 1/4 ը։ 5) Անյետաձգելի՝ срочная հեռագրի համար վճարում են սովորականից

երեք անգամ աւելի. մի քանի հասցէով ուղղուած հեռագրի ամեն մի պատճէնի համար (մինչև 100 խօսքը) վճարում են 20 կոպ. իսկ անյետաձգելիի (срочная) համար 40 կոպ.:

Սխալմամբ առացուած վճարի պակասորդը պահանջւում է հասցէատիրոջից, իսկ եթէ նա չգտնուի կամ չվճարէ, ուղարկողից. աւելին վերադարձնում են, ում հարկն է:

Հեռագրի վճարը կարելի է յետ ստանալ. 1) եթէ հեռագիրը տեղ չէ հասել հեռագրատան զանցառութեան պատճառով. 2) եթէ գիծը խանգարուել է և այս պատճառով հեռագիրը յետացել է, ուստի տէրը պահանջել է ոչնչացնել իր հեռագիրը: Կարելի է յետ ստանալ նաև 1) սխալմամբ բաց թողած խօսքերի վճարը. 2) լրացուցիչ վճարը, եթէ նա չէ ծառայել նպատակին և այլն:

Գրաւոր պահանջը պէտք է ներկայացնել պօստի և հեռագրի «Գլխաւոր Վարչութեան» կառավարչին, ներկայացնելով անդորրագիրը:

Երկաթուղու հեռագիրը: Երկաթուղու հեռագիրը ենթարկւում է հաղորդակցութեան ճանապարհների մինիստրին և գործում է ընդհանուր կանոնների համեմատ, շատ չնչին տարբերութեամբ:

Ճանապարհորդներից ընդունւում է հեռագիր առանց բացառութեան երկաթուղու բոլոր կայարաններում՝ սահմանած ժամանակը. իսկ ընդհանուր բնաւորութիւն ունեցող հեռագիր տրւում է այն կայարանում, ուր այդ կարելի է:

Ճանապարհորդական հեռագրերը պէտք է ուղղուին երկաթուղու կայարանները և այն մարդկանց հասցէով, որոնց կարելի է գտնել կայարաններում կամ գնացքի մէջ:

Եթէ հեռագիրը նշանակուած է հասցնելու երկաթուղու կայարանից դուրս, այդ դէպքում պէտք է համաձայնութիւն կայանայ ուղարկողի կամ հասցէատիրոջ և երկաթուղու կայարանի գլխաւորի մէջ լրացուցիչ վճարի մասին: Եթէ այդպիսի համաձայնութիւն կայացած չէ, հեռագիրը մնում է ցպահանջ (до востребованія):

Միջազգային հեռագիր կարելի է տալ ֆրանսերէն կամ այն տերութեան լեզուով, ուր ուղղուած է հեռագիրը: Եթէ հեռագիրը պէտք է տալ ուղղակի հասցէատիրոջ, պիտի նշանակուի հասցէից առաջ համառօտ (MP)—«á remettre en mains propres»: Կարելի է հեռագիրը բաց տալ տիրոջը, հասցէից առաջ պէտք է նշանակել (RO)—remettre ouvert: Վերջինս չէ թոյլատրւում Անգլիա, Թիւրքիա, Սերբիա և Չերնօգորիա ուղղուած հեռագրի նըկատմամբ:

Հեռագրի առանձին տեսակները նշանակւում են միայն ֆրանսերէն, և կարող են գրուել համառօտ ձևով այսպէս. отвѣтъ уплаченъ=Réponse payée—RP. Повѣрка оплачена=Collationnement — TC. Передать вслѣдъ=Faire suivre—FS. Нарочный уплаченъ=Exprés payée—XP. Срочная = Dringend կամ Urgent —D. Почтовый заказъ уплаченъ=Poste reccommandée—PR. Телеграмма съ почтовымъ извѣщеніемъ о доставленіи=Télégramme avec accusé de recéption postal—PCP. Телеграмма съ телеграфнымъ извѣщеніемъ о доставленіи=Télégramme avec accusé de recéption Télégraphique—PC. Нарочный оплаченъ по телеграфу=Exprés payé Téiègraphique XPT. Нарочный оплаченъ по почтѣ=Exprés lettre—XPP. Телеграфъ до востребованія=Télégraphe restant—FR. На почту до востребованія=Poste restante—PG. На почту до востребованія заказнымъ порядкомъ=Poste restante recommandèe. (PGR).

Столько адресовъ=TM. (M տառից յետոյ գրւում է թիւը). Իւրաքանչիւր կրճատած նշան հաշւում է մէկ խօսք և պէտք է անպատճառ գրուի փակագծի մէջ և հասցէից առաջ:

Հեռագրի տալու ժամանակը

նշանակւում է Նոր տոմարով:

Միջազգային հեռագրերի վըճարը. Այս կարգի հեռագրներից չի ստացւում բլանկի վճար. այլ միայն բառավճարն է, որ Եւրոպական Ռուսաստանից և Կովկասից ուղարկած հեռագրների համար—իւրականչիւր բառին—ստացւում է հետեւեալ աղիւսակի համաձայն.

1) Անգլիա . . . . . . . . 22 կ.
2) Աւստրիա . . . . . . . 11 կ.
3) Բէլգիա . . . . . . . . 17 կ.
4) Բուլղարիա . . . . . 15 կ.
5) Բօսնիա և Հերցոգովինա 17 կ.
6) Գերմանիա . . . . . 11 կ.
7) Դանիա . . . . . . . . 15 կ.
8) Եգիպտոս . . . . . . . 51 կ.
9) Շուեցարիա . . . . . 17 կ.
10) Թիւրքիա . . . . . . . 26 կ.
11) Սպանիա . . . . . . . 21 կ.
12) Իտալիա . . . . . . . 18 կ.
13) Հոլլանդիա . . . . . 14 կ.
14) Ճապոնիա . . . . 1 ր. 95 կ.
15) Յունաստան . . . . . 23 կ.
16) Յունական կղզիներ . . 24 կ.
17) Շուէդիա . . . . . . . 14 կ.
18) Չերնոգորիա . . . . 18 կ.
19) Չինաստան . . . 1 ր. 13 կ.
20) Պարսկաստան (Թէհրանից հիւսիս) . . . . 24 կ.
21) Պարսկաստան (հար.) 36 կ.
22) Ռումինիա . . . . . 8 կ.
23) Սերբիա . . . . . . 15 կ.
24) Պօրտուգալիա . . . . 23 կ.
25) Ֆրանսիա . . . . . . . 15 կ.

Այս աղիւսակի մէջ նշանակած է ամենապակաս վճարը կարճ և անմիջական ճանապարհով: Եթէ հեռագիր ուղարկողը պահանջէ տալ իր ցանկացած մի այլ գծով, վըճարը կաւելանայ:

# Նաւագնա  ցուցիչ

## Սեւ ծով:

«Россiйское Общество»-ի նաւերը Բաթումից հեռանում են՝ երեքշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան ժամի 5 ին։

| Բաթումից մինչև | II կարգ | | III կարգ | | 1 փութ բաղաժ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ռուբլի | Կոպեկ | Ռուբլի | Կոպեկ | Ռուբլի | Կոպեկ |
| Փոթի | 1 | 40 | — | 50 | — | 10 |
| Օչեմչիր | 2 | 40 | — | 75 | — | 13 |
| Սուխում | 2 | 60 | 1 | — | — | 14 |
| Նոր Աֆօն | 3 | 40 | 1 | 30 | — | 15 |
| Գուդաուտ | 3 | 60 | 1 | 40 | — | 13 |
| Սօչի | 4 | — | 1 | 60 | — | 20 |
| Տուապսէ | 4 | 50 | 2 | — | — | 20 |
| Նօվօրօսիյս. | 5 | — | 2 | 25 | — | 23 |
| Ան փա | 6 | — | 2 | 75 | — | 25 |
| Կերչ | 6 | 50 | 3 | — | — | 25 |
| Թեօդօսիա | 7 | 50 | 3 | 40 | — | 30 |
| Սուդակ | 7 | 50 | 3 | 40 | — | 30 |
| Եալթա | 8 | — | 3 | 60 | — | 35 |
| Սեւաստօպօլ | 8 | 50 | 3 | 90 | — | 35 |
| Օդեսսա | 12 | — | 5 | 50 | — | 45 |

## Կասպից ծով:

«Кавказъ и Меркурiй» ընկերութեան նաւերը պտոյտ են անում Բագուից — Դերբենտ, Պետրովսկ, Աստրախան: Ընկերութիւնն ընդունում է ապրանքներ մինչև Վօլգա, Կասպից ծովի նաւահանգիստները, Անդրկասպեան երկիրը և Մոսկուա, Վարշաւայ, Լօձ և Ռօստով հասցնելու համար:

Ընկերութեան գրասենեակը Թիֆլիսում, Բարեատինսկայա փ., № 8, տելեֆօն 415։

«Надежда» ընկերութեան նաւերը որոշ կամ անորոշ ժամանակներում պտոյտ են անում Պետրովսկ—Աստրախան և Բագու—Ուզունադա գծերով:

Ընկերութեան գրասենեակը՝ Թիֆլիսում, Դւորցովայա փողոց, Վրաց ազնւ. տան մէջ։

## Սեւ ծով:

### Տոմսակների արժէքը «Русское Общество»-ի նաւերի համար:

| Բաթումից մինչև | Պոստ-մարդատար նաւերի վրա: Ուտելիքով: I կարգ. Ռուբ. | Կոպ. | II կարգ Ռուբ. | Կոպ. | Առանց ուտելիք: II կարգ Ռուբ. | Կոպ. | III կարգ Ռուբ. | Կոպ. | Ապրանքա.-մարդատար նաւ. առանց ուտելիքի II կարգ Ռուբ. | Կոպ. | III կարգ Ռուբ. | Կոպ. | Բագաժ 1պ. Կոպ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Օդեսսա | 39 | — | 30 | 50 | 19 | 85 | 9 | 80 | 15 | 90 | 5 | 50 | 60 |
| Եւպատորիա | 31 | — | 23 | 50 | 14 | 80 | 7 | 20 | 11 | 85 | 4 | 50 | 55 |
| Սեւաստոպոլ | 30 | — | 22 | 50 | 14 | — | 7 | 20 | 11 | 20 | 3 | 90 | 55 |
| Եալթա | 30 | — | 22 | 50 | 14 | — | 7 | 10 | 11 | 20 | 3 | 60 | 50 |
| Ալուշթա | 29 | — | 21 | 50 | 13 | 75 | 7 | — | 11 | — | 3 | 40 | 50 |
| Սուդակ | 27 | 50 | 20 | — | 13 | 75 | 7 | — | 11 | — | 3 | 40 | 50 |
| Թէոդոսիա | 26 | 50 | 19 | — | 13 | — | 6 | 40 | 10 | 40 | 3 | 40 | 50 |
| Կերչ | 21 | 50 | 16 | — | 11 | — | 5 | 20 | 8 | 80 | 3 | — | 40 |
| Նովորոս. | 16 | — | 12 | 50 | 8 | 70 | 4 | — | 7 | — | 2 | 25 | 25 |
| Անապա | 21 | 50 | 16 | — | 11 | — | 5 | 20 | 8 | 80 | 3 | — | 40 |
| Ջուբգի | 16 | — | 12 | 50 | 8 | 70 | 4 | — | 7 | — | 2 | 25 | 25 |
| Տուապսէ | 12 | — | 9 | 10 | 6 | — | 3 | 20 | 4 | 80 | 2 | — | 25 |
| Սօչի | 12 | — | 9 | 10 | 6 | — | 3 | 20 | 4 | 80 | 2 | — | 25 |
| Ադլէր | 12 | — | 9 | 10 | 6 | — | 3 | 20 | 4 | 80 | 2 | — | 25 |
| Գուդաուտա | 9 | 50 | 7 | 50 | 5 | 60 | 2 | 40 | 4 | 50 | 2 | — | 25 |
| Նոր Աթօն | 9 | 50 | 7 | — | 5 | 10 | 2 | — | 4 | 10 | 1 | 30 | 25 |
| Սուխում | 5 | 50 | 4 | 50 | 3 | 25 | 1 | 20 | 2 | 60 | 1 | — | 20 |
| Օչեմչիր | 5 | — | 3 | 50 | 2 | 35 | 1 | 20 | 1 | 90 | 1 | — | 20 |
| Փօթի | 2 | 80 | 1 | 80 | 1 | 50 | — | 80 | 1 | 20 | — | 50 | 20 |

### Դէպի արտասահման:

Ֆրանսիական «Мессажери Маритимъ» ընկերութեան շոգենաւերը կանոնաւոր կերպով երթեւեկում են Լոնդոնի, Մարսելի և Բաթումի միջև: Լոնդոն գնացող նաւերը մտնում են նաև Կ. Պօլիս, Մարսել և Հավր: Նոյն ընկերութեան նաւերով կարելի է գնալ և Եաֆֆա, Աղէքսանդրիա, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա, Մադագասկար, Եաւա, Ցէյլօն, Աւստրալիա, Զանզիբար, Նոր-Կալեդոնիա և այլն:

Գործակալութիւնը Թիֆլիսում—Դւորցօվայա. Վրաց ազն. տուն:

—

Ֆրանսիական «Н. Паке и Ко» ընկերութեան շոգենաւերը կանոնաւոր երթեւեկում են ուղղակի Բաթումից—Մարսել և հակառակ—Մարսելից—Բաթում: Նաւերը մեկնում են իւրաքանչիւր երկու շաբաթը մի անգամ, Բաթումից, չորեքշաբթի օրը—ժամը 4 ին, ճանապարհին մտնում են Տրապիզօն, Սամսոն և Կ. Պօլիս:

Ամեն տեսակ տեղեկութիւններ ստանալ կարելի է Թիֆլիսում պ. Յ. Բարեկենդանեանից:

Սիօնի փողոց, Խօջապարուխօվի քարվանսարայ:

—

## ՊՕՍՏԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԿՈՎ-ԿԱՍՈՒՄ։

| | | |
|---|---|---|
| Ախալցխայից—Բորժոմ— | 50 3/4 | վ. |
| Ախալցխայից—Ախալքալակ | 66 1/4 | վ. |
| Ախալքալակ.—Ալէքսանդր. | 89 1/2 | վ. |
| Արդահանից—Օլթի | 124 3/4 | վ. |
| Ախալցխայից—Արդահան | 72 | վ. |
| Ախալցխայից—Բաթում | 147 | վ. |
| Ալէքսանդրապ.—Ջարիչատ | 52 1/2 | վ. |
| Բաշնորաշէնից—Նախիջևան | 62 1/2 | վ. |
| Բաթումից—Արդահան | 150 | վ. |
| Գանձակից—Հաջիքենդ | 27 1/4 | վ. |
| Դիլիջանից—Երևան | 62 3/4 | վ. |
| Դիլիջանից—Ղարաքիլիսա | 19 1/2 | վ. |
| Երևանից—Բաշնորաշէն | 89 3/4 | վ. |
| Երևանից—Էջմիածին | 18 1/2 | վ. |
| Թիֆլիսից—Ջալալ-Օղլի | 135 | վ. |
| Հաջիկաբուլից—Սալեան | 50 1/2 | վ. |
| Ղարաքիլիսից—Դիլիջան | 38 | վ. |
| Ղարաքիլիսից—Ջալալ-Օղլի | 50 1/2 | վ. |
| Կարսից—Սարիղամիշ | 58 3/4 | վ. |
| Կարսից—Կաղզվան | 78 1/2 | վ. |
| Կարսից—Օլթի | 102 | վ. |
| Նախիջևանից—Օրդուբադ | 74 1/2 | վ. |
| Նուխուց—Շամախի | 158 1/2 | վ. |
| Շուշուց—Խանկենդ | 11 | վ. |
| Սարիղամիշից—Ղարաուրղան— | 37 3/4 | վ. |
| Սալեանից—Լէնքորան | 118 | վ. |

## ԵՐԹՆԻԵԿՈՒԹԻՒՆ ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐՈՎ։

1. Թիֆլիսից - Վլադիկաւկազ. տոմսակն արժէ՝ I կարգի տեղի համար—կառետի մէջ 14 ր., II կարգի տեղի համար—կառետի մէջ 9 ր., օմնիբուսում 8 ր., III կարգի տեղի համար կառետի կամ օմնիբուսի դրսի նստարանների վրա—4 ր.։

2. Թիֆլիսից-Մանգլիս. Կօջօրի վրայով օմնիբուս գնում է ամառը իւրաքանչիւր օր առաւօտեան ժամը 7-ին։ Մանգլիսից դուրս է գալիս առաւ. ժ. 7 ին, Կօջօրից —երեկոյեան 6-ին։ Արժէքը մինչև Կօջօր 1 ր., մինչև Մանգլիս 3 ր. 45 կ.։

Գրասենեակը՝ Երևանեան հրապարակ, քաղաքային տան մէջ։

3. Թիֆլիսից-Սղնախ. (100 1/4 վերստ) օմնիբուսը գնում է ամառը ամեն օր, դուրս գալով Թիֆլիսից առաւ. ժ. 6-ին։ Տոմսակի արժէքը 5 ր., իսկ դրսի նստարանի վրա—3 ր.։

Գրասենեակը Պեսկովսկայա փողոցում։

4. Թիֆլիսից-Թելաւ (93 1/4 վ.) օմնիբուսը գնում է առ. ժ. 6-ին։ Տոմսակի գինը 4 ր. 60 կ. և 3 ր.։

Գրասենեակը՝ Պեսկովսկայա, № 77։

5 Բորժոմից-Ախալցխա. օմնիբուսի ներսում 2 ր. 58 կ.
Աբասթուման . . . . . 3 ր. »
Ախալցխա օմնիբուսի դրսի նստարանի վրա . . . . . . 1 ր. 38 կ.
Աբասթուման . . . . . 2 ր. 8 կ.

6. Եւլախից-Շուշի. օմնիբուսի ներսում . . . . . 5 ր. 86 կ.
» » դրսի նստ. 3 ր. 40 կ.

7. Եւլախից-Նուխի (75 1/2 վերստ.) օմնիբուսի ներսում . . 4 ր. 21 կ.
դրսի նստարանի . 2 ր. 28 կ.

8. Երևանից-Նախիջևան (150 1/4 վերստ) օմնիբուսի ներս. 8 ր. 40 կ.
դրսի նստարանի վրա 4 ր. 20 կ.

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՑ

### I Դէպի Թիւրքիա։

| | Վերստ |
|---|---|
| Սարիղամիշից—Հասան Ղալա— | 107 |
| Հասան Ղալայից—Էրզրում— | 34 3/4 |
| Էրզրումից—Բայբուրդ — | 114 1/2 |
| Իգդիրից—Բայազէտ — | 51 |
| Սարիղամիշից—Հասան Ղալայի վրայով Խնուս — | 185 |
| Խնուսից—Բիթլիս — | 143 1/2 |
| Իգդիրից—Վան Բայազէտի վրայով — | 239 |
| Սարիղամիշից—Մուշ Խնուսի վրայով — | 284 1/2 |
| Սարիղամիշից—Սըվաս Բայբուրդի վրայով — | 703 |

### II Դէպի Պարսկաստան

| | |
|---|---|
| Ջուլֆայից—Թաւրիզ — | 127 |
| Թաւրիզից—Ղազուին — | 396 |
| Ջուլֆայից—Թէհրան — | 402 |

—

## ԿՈՎԿԱՍԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ծանօթութիւն. Սևաստոպօլից—Փոթի և Բաթումից—Քութայիս հեռաւորութիւնները ցոյց են տրուած Թիֆլիսի վրայով:

| | Բաքու | Բաթում | Վլադիկավկազ | Եկատերինօդար | Գանձակ | Զաքաթալի | Կարս | Քութայիս | Նովոռոսիյսկ | Պետրովսկ | Փոթի | Սևաստոպօլ | Տեմիր-Խան-Շուրա | Երևան | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բաթում | 842 | | | | | | | | | | | | | | |
| Վլադիկավկազ | 625¼ | 485½ | | | | | | | | | | | | | |
| Եկատերինօդար | 1128¾ | 617 | 550 | | | | | | | | | | | | |
| Գանձակ | 345¼ | 509 | 382½ | 932½ | | | | | | | | | | | |
| Զաքաթալի | 415 | 518½ | 392 | 942 | 211½ | | | | | | | | | | |
| Կարս | 675¾ | 570½ | 479½ | 1029½ | 340½ | 470½ | | | | | | | | | |
| Քութայիս | 723¼ | 133½ | 365½ | 663 | 389 | 398½ | 398½ | | | | | | | | |
| Նովոռոսիյսկ | 1244¾ | 490 | 677 | 127 | 909½ | 919 | 919 | 536½ | | | | | | | |
| Պետրովսկ | 354¼ | 756½ | 271 | 776¾ | 653½ | 664 | 750½ | 636½ | 903¾ | | | | | | |
| Փոթի | 807¼ | 52½ | 448½ | 564½ | 472 | 481½ | 479½ | 99 | 437½ | 71[illegible]½ | | | | | |
| Սևաստոպօլ | 920¾ | 827½ | 342 | 272 | 721 | 734 | 821 | 707½ | 399 | 568¾ | 790½ | | | | |
| Տեմ. Խ. Շուրա | 399½ | 801½ | 315¾ | 821½ | 698½ | 707¾ | 795¼ | 681¼ | 950¾ | 44¾ | 764¼ | 613½ | | | |
| Թիֆլիս | 517¼ | 32[illegible] | 200½ | 750½ | 182 | 191½ | 279 | 207 | 727½ | 471½ | 290 | 542½ | 516¼ | | |
| Երևան | 601½ | 591½ | 165 | 1015 | 262 | 456 | 268 | 471½ | 992 | 736 | 554½ | 807 | 780 | 264½ | Թիֆլիս. |

## ԱՄԵՆԱԿԱՐՃ ՃԱՆԱՊԱՐՀ
## ԹԻՖԼԻՍԻՑ ԴԷՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

| Քաղաքներ | Ճանապարհի ուղղութիւնը: | Վերստ | I կարգ. | | II կարգ. | | III կարգ. | | 10 փ. բագաժի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ր. | կ. | ր. | կ. | ր. | կ. | կոպ. |
| Վարշաւա | Բալաջարի, Ռոստով, Գոմել, Բրեստ. | 3409 | 46 | — | 27 | 60 | 18 | 40 | $126\frac{3}{4}$ |
| Վիլնա | Բալաջ., Ռոս., Բախմաչ. | 3211 | 43 | 50 | 26 | 10 | 17 | 40 | $119\frac{1}{4}$ |
| Վլադիկաւկ | Բալաջ., Պետրովսկ. | 1112 | 22 | 50 | 13 | 50 | 9 | — | $56\frac{1}{4}$ |
| Վոլոչիսկ | Բալաջ., Ռոս., Զնամեն. | 3091 | 43 | — | 25 | 80 | 17 | 20 | $117\frac{3}{4}$ |
| Գրանիցա | Բալաջ., Ռոստ., Բրեստ. | 3688 | 49 | — | 29 | 40 | 19 | 60 | $135\frac{3}{4}$ |
| Գրօզնի | Բալաջարի. | 990 | 20 | 50 | 12 | 30 | 8 | 20 | $50\frac{1}{4}$ |
| Դերբենտ | Բալաջարի, Պետրովսկ. | 719 | 17 | — | 10 | 20 | 6 | 80 | $39\frac{3}{4}$ |
| Եկատերինոդ. | Բալաջարի, Պետրովսկ. | 1679 | 29 | — | 17 | 40 | 11 | 60 | $75\frac{3}{4}$ |
| Կազան | Բալաջ., Ցարիցին, Պենզ. | 3277 | 45 | — | 27 | — | 18 | — | $123\frac{3}{4}$ |
| Կիսլովոդսկ | Բալաջարի, Պետրովսկ. | 1318 | 25 | — | 15 | — | 10 | — | $63\frac{3}{4}$ |
| Կիև | Բալաջ., Ռոս., Վորոնեժ | 2743 | 39 | — | 23 | 40 | 15 | 60 | $105\frac{3}{4}$ |
| Քիշինև | Բալաջ., Ռոս., Դոլինսկ, Ելիսաւետգրադ. | 3035 | 42 | 50 | 25 | 50 | 17 | — | $116\frac{1}{4}$ |
| Լոձ | Ռոստ., Բրեստ, Վարշաւ. | 3583 | 48 | — | 28 | 80 | 19 | 20 | $132\frac{3}{4}$ |
| Մոսկուա | Ռոստ., Կոզլով, Վորոնեժ. Ռեազան. | 2588 | 38 | — | 22 | 80 | 15 | 20 | $102\frac{3}{4}$ |
| Նախիջևան | Բալաջարի, Ռոստով. | 1732 | 29 | 50 | 17 | 70 | 11 | 80 | $77\frac{1}{4}$ |
| Նովգորոդ | Ռոստ., Կոզլով, Մոսկ. | 3448 | 46 | 50 | 27 | 90 | 18 | 60 | $128\frac{1}{4}$ |
| Նովորոսիյս | Բալաջարի, Պետրովսկ. | 1806 | 30 | — | 18 | — | 12 | — | $178\frac{3}{4}$ |
| Նովոչերկ. | Բալաջարի, Ռոստով | 1771 | 30 | — | 18 | — | 12 | — | $178\frac{3}{4}$ |
| Օդեսսա | Ռոստ., Դոլինսկայա, Ելիսաւետգրադ. | 2992 | 42 | — | 25 | 20 | 16 | 80 | $114\frac{3}{4}$ |
| Պետրովսկ | Բալաջարի. | 847 | 18 | 50 | 11 | 10 | 7 | 40 | $44\frac{1}{4}$ |
| Պետերբուր. | Ռոստով, Մոսկուա. | 3493 | 47 | — | 28 | 20 | 18 | 80 | $129\frac{3}{4}$ |
| Պոլտաւա | Բալաջ., Ռոս., Մերեֆա. | 2363 | 36 | — | 21 | 60 | 14 | 40 | $96\frac{3}{4}$ |
| Պեատիգոր. | Բալաջարի, Պետրովսկ | 1282 | 24 | 50 | 14 | 70 | 9 | 80 | $62\frac{1}{4}$ |
| Ռիգա | Ռոս., Վորոժբա, Դվինսկ. | 3564 | 48 | — | 28 | 80 | 19 | 20 | $132\frac{3}{4}$ |
| Ռոստով | Բալաջարի, Պետրովսկ. | 1723 | 29 | 50 | 17 | 70 | 11 | 80 | $77\frac{1}{4}$ |
| Սեվաստոպ. | Բալաջ, Ռոս. Սինելնիկովօ | 2625 | 38 | 50 | 23 | 10 | 15 | 40 | $104\frac{1}{4}$ |
| Սիմֆերոպ. | Բալաջ., Ռոս., Սինելնիկ. | 2553 | 37 | 50 | 22 | 50 | 15 | | $101\frac{1}{4}$ |
| Ստաւրոպոլ | Բալաջարի, Պետրովսկ. | 1639 | 28 | 50 | 17 | 10 | 11 | 40 | $74\frac{1}{4}$ |
| Տագանրոգ | Բալաջարի, Ռոստով. | 1790 | 30 | — | 18 | — | 12 | — | $78\frac{3}{4}$ |
| Տուլա | Բալաջ., Ռոստ., Կոզլով | 2763 | 40 | — | 24 | — | 16 | — | $108\frac{3}{4}$ |
| Խարկով | Բալաջ., Ռոս., Գորլովկա | 2261 | 35 | — | 21 | — | 14 | — | $93\frac{3}{4}$ |
| Էսսենտուկի | Բալաջարի, Պետրովսկ. | 1298 | 24 | 50 | 14 | 70 | 9 | 80 | $62\frac{1}{4}$ |
| Իւրև | Ռոստով. Կոզլով, Մոսկուա, Պսկով | 3744 | 49 | 50 | 29 | 70 | 19 | 80 | $137\frac{1}{4}$ |

## ԿԱՆՈՆՆԵՐ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ։



1. Տոմսակների վաճառումը և բագաժի ընդունելութիւնը սկսւում է մայրաքաղաքներում 1½ ժամ, առաջնակարգ կայարաններում 1 ժ. և մնացած կայարաններում ½ ժ. գնացքը մեկնելուց առաջ։

2. Իւրաքանչիւր գնացքի համար վաճառւում են առանձին տոմսակներ, որոնց վրա յատուկ կնիքով նշանակւում է ամսաթիւը։ Առանց այդ կնիքի կամ ոչ այդ օրւայ ու գնացքի կնիքը կրող տոմսերը կորցնում են իրանց նշանակութիւնը։

Գնած տոմսակները պահում են իրանց ոյժը.

1— 200 վերստի համար 1 օր
200— 500 » » 2 »
500— 800 » » 4 »
800—1100 » » 4 »
1100—1500 » » 5 »

Դրանից յետոյ իւրաքանչիւր 400 վերստի համար աւելացնել 1 օր։

Իւրաքանչիւր տոմսակի վրա նշանակւած է լինում. թէ նա քանի օրւայ ոյժ ունի։ Օրը հաշւում են կէս գիշերից մինչև հետևեալ կէս գիշեր։

3. Ճանապարհորդութիւնը ընդմիջելու դէպքում, այսինքն երբ ճանապարհորդը դեռ տեղ չ'հասած ուզում է մի որև է կայարանում կանգառնել. պէտք է տոմսակը ներկայացնէ կայարանի գլխաւորին, որ համապատասխան չտեմպել խփէ։ Ճանապարհ ընկնելուց առաջ էլ պէտք է նորից չտեմպել խփել տալ, հակառակ դէպքում տոմսակը կ'կորցնէ իր ոյժը։

4. Իւրաքանչիւր հասակաւոր ճանապարհորդ իրաւունք ունի 1 փութ բագաժ տալու, իսկ երեխաները 20-ական ֆունտ. եթէ դրանից աւելի է բագաժը, այն ժամանակ աւելորդի համար պէտք է վճարել համապատասխան սակագնով։

5 Եթէ բագաժը վնասուած է կամ պակասել է, իսկոյն պէտք է յայտնել կայարանի վարչութեանը, բագաժն ստանալիս, իսկ եթէ կորել է, պէտք է վարձատրութիւն պահանջել, այդ մասին գրաւոր յայտարարութիւն տալով մի ամսւայ ընթացքում, հաշւելով ուղարկած օրից։

6. Հինգ տարեկանից փոքր երեխաները կարող են ճանապարհորդել հասակաւորների հետ առանց տոմսակի, իսկ 5-10 տարեկան երեխաները վճարում են իսկական տոմսակի ¼ գինը, 10-ից աւելի տարիք ունեցողները վճարում են նոյնքան որքան հասակաւորները։

Տոմսակի արժէքը կախուած է ճանապարհի երկարութիւնից։

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ

### 1 ԲԱԹՈՒՄԻՑ—ԹԻՖԼԻՍ—ԲԱԳՈՒ

| Կայարաններ | Երկարութիւնը վերստ. | Տոմսակների գն. I կ. | II կ. | III կ. | 10 ֆ. բագաժի գինը |
|---|---|---|---|---|---|
| | | ր. կ. | ր. կ. | ր. կ. | կոպ. |
| ԲԱԹՈՒՄ | | | | | |
| Չաքվա | — | 0 45 | 0 27 | 0 18 | 00.75 |
| Կոբուլետ | 20 | 0 80 | 0 48 | 0 32 | 01.37 |
| Նոթանեբի | 40 | 1 33 | 0 80 | 0 28 | 02.13 |
| Սուփսա | 50 | 1 88 | 1 13 | 0 75 | 02.99 |
| Լանչխութի | 68 | 2 55 | 1 53 | 1 02 | 04. 8 |
| Նիգոիթի | 75 | 2 75 | 1 65 | 1 10 | 04.43 |
| Սաջևախո | 88 | 3 25 | 1 95 | 1 30 | 05.18 |
| **Սամտրեդի** | 97 | 3 58 | 2 15 | 1 43 | 05.69 |
| Կոպիտնարի | 1 08 | 4 00 | 2 40 | 1 60 | 06.38 |
| Րիօն | 1 26 | 4 60 | 2 76 | 1 84 | 07.36 |
| Աջամեթի | 1 32 | 4 85 | 2 91 | 1 94 | 07.76 |
| **Կվիրիլի** | 1 54 | 5 60 | 3 36 | 2 24 | 08.97 |
| Շորապան | — | 5 75 | 3 45 | 2 50 | 09.20 |
| Ձերուլի | 1 67 | 5 95 | 3 57 | 2 38 | 09.72 |
| Բելոգորի | 1 76 | 6 15 | 3 69 | 2 46 | 10.24 |
| Մարելիսի | 1 84 | — | — | — | — — |
| Մալիտա | 1 94 | 6 50 | 3 90 | 2 60 | 11.10 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Միխայլովօ** | 213 | 7 00 | 4 20 | 2 80 | 12.36 |
| Գոմի | 223 | 7 23 | 4 34 | 2 89 | 12.94 |
| Կարելի | 237 | 7 55 | 4 53 | 3 02 | 13.80 |
| **Գորի** | 254 | 7 93 | 4 76 | 3 17 | 14.78 |
| Գրակալի | 267 | 8 23 | 4 94 | 3 29 | 15.53 |
| Կասպի | 279 | 8 50 | 5 10 | 3 40 | 16.22 |
| Քսանկա | 294 | 8 80 | 5 28 | 3 52 | 17.02 |
| Մցխեթ | 304 | 9 50 | 5 70 | 3 80 | 17.25 |
| Աւճալա | 315 | 9 50 | 5 70 | 3 80 | 17.25 |
| ԹԻՖԼԻՍ | 325 | 10 00 | 6 00 | 3 80 | 18.75 |
| Նաւթլուղ | — | — — | — | — | — |
| Աղ-Թալա | 345 | 10 00 | 6 00 | 4 00 | 18.75 |
| Կարայազ | 361 | 10 50 | 6 50 | 4 20 | 20.25 |
| Սօուղ-Բուլ. | 382 | 11 00 | 6 60 | 4 40 | 21.75 |
| Պօյլի | 399 | 11 50 | 6 90 | 4 60 | 23.25 |
| **Աղստաֆա** | 413 | 11 50 | 6 90 | 4 60 | 23.75 |
| Թօուզ | 432 | 12 00 | 7 20 | 4 80 | 24.75 |
| Զեգամ | 457 | 12 50 | 7 50 | 5 50 | 26.25 |
| Դօլլար | — | 12 50 | 7 50 | 5 00 | 26.25 |
| Շամքոր | 479 | 13 00 | 7 80 | 5 20 | 27 75 |
| **Գանձակ** | 501 | 13 50 | 8 10 | 5 40 | 29.25 |
| Գալ-Մամեդլի | 518 | 13 50 | 8 10 | 5 40 | 29.25 |
| Գերան | 541 | 14 00 | 8 40 | 5 60 | 30.75 |
| **Եվլախ** | 564 | 14 50 | 8 70 | 5 80 | 32.25 |
| Լաքի | 588 | 14 50 | 8 70 | 5 80 | 32.25 |
| **Ուջարի** | 607 | 15 00 | 9 00 | 6 00 | 33.75 |
| Մուսուսլի | 631 | 15 50 | 9 30 | 6 40 | 35.25 |
| Քիւրդամիր | 650 | 16 00 | 9 60 | 6 40 | 36.75 |
| Սագիրի | 673 | 16 00 | 9 60 | 6 40 | 36.75 |
| Ղարա-սու | 697 | 16 50 | 9 90 | 5 60 | 38.25 |
| **Հաջի-Կաբ.** | 721 | 17 00 | 10 20 | 6 80 | 39.75 |
| Նաւագի | 738 | 17 00 | 10 20 | 6 80 | 39.75 |
| Ալաթ | 762 | 17 50 | 10 50 | 7 00 | 41.25 |
| Սանգաչալ | 783 | 18 00 | 10 80 | 7 20 | 42.75 |
| Փութա | 808 | 18 00 | 10 80 | 7 20 | 42.75 |
| Բալաջարի | 826 | 18 50 | 11 10 | 7 40 | 44.25 |
| ԲԱԳՈՒ | 839 | 18 50 | 11 10 | 7 40 | 44 25 |

11 ԲԱԳՈՒԻՑ—ԹԻՖԼԻՍ—ԲԱԹՈՒՄ։

| ԲԱԳՈՒ | վ. | ր. կ. | ր. կ. | ր. կ. | կոպ. |
|---|---|---|---|---|---|
| Բալաջարի | 13 | 0 53 | 0 32 | 0 21 | 00.84 |
| Փութա | 32 | 1 15 | 0 69 | 0 46 | 01.81 |
| Սանգաչալ | 56 | 2 05 | 1 23 | 0 82 | 03.24 |
| Ալաթ | 77 | 2 83 | 1 70 | 0 82 | 04.48 |
| Նաւագի | 108 | 3 68 | 2 21 | 1 13 | 05.89 |
| **Հաջի-Կաբ.** | — | 4 28 | 2 57 | 1 47 | 06.87 |
| Ղարա-սու | 142 | 5 15 | 3 09 | 1 71 | 08.22 |
| Սագիրի | 166 | 5 90 | 3 54 | 2 03 | 09 60 |
| Քիւրդամիր | 189 | 6 43 | 3 86 | 2 57 | 10.93 |
| Մուսուսլի | 208 | 6 85 | 4 11 | 2 74 | 12.02 |
| Ուջարի | 232 | 7 43 | 4 46 | 2 97 | 13.46 |
| Լաքի | 251 | 7 83 | 4 70 | 3 13 | 14.49 |
| **Եվլախ** | 274 | 8 55 | 5 01 | 3 34 | 15.87 |
| Գերան | 298 | 8 88 | 5 33 | 3 55 | 17.14 |
| Գալ-Մամեդ. | 321 | 9 50 | 5 70 | 3 80 | 17.25 |
| **Գանձակ** | 338 | 10 00 | 6 00 | 4 00 | 18.75 |
| Շամքոր | 359 | 10 50 | 6 30 | 4 20 | 20.25 |
| Դօլլար | 370 | 10 50 | 6 30 | 4 20 | 20.25 |
| Զեգամ | 381 | 11 00 | 6 60 | 4 40 | 21.75 |
| Թօուզ | 407 | 11 50 | 6 90 | 4 60 | 23.25 |
| **Աղստաֆա** | 426 | 11 50 | 6.90 | 4 60 | 23.25 |
| Պօյլի | 439 | 12 00 | 7 20 | 4 80 | 24.75 |
| Սողուտ-Բուլ. | 457 | 12 50 | 7 50 | 5 00 | 26.25 |
| Կարայազ | 479 | 13 00 | 7 80 | 5 20 | 27.75 |
| Աղ-Թաղլա | 495 | 13 00 | 7 80 | 5 20 | 27 7 |
| Նաւթլուղ | 507 | — | — | — | — 5 |
| ԹԻՖԼԻՍ | 513 | 13 50 | 8 10 | 5 40 | 29.25 |
| Աւճալի | 524 | 13 50 | 8 10 | 5 40 | 29.25 |
| Մցխեթ | 535 | 14 00 | 8 40 | 5 60 | 30.75 |
| Քսանկա | 546 | 14 00 | 8 40 | 5 60 | 30.75 |
| Կասպի | 560 | 14 50 | 8 70 | 5 80 | 32.25 |
| Գրակալի | 572 | 14 50 | 8 70 | 5 80 | 32.25 |
| **Գորի** | 585 | 14 50 | 8 70 | 5 80 | 32.25 |
| Կարելի | 602 | 15 00 | 9 00 | 6 00 | 33.75 |
| Գոմի | 617 | 15 00 | 9 00 | 6 00 | 33.75 |
| **Միխայլով.** | 627 | 15 50 | 9 30 | 6 20 | 35.2 |
| Վարվարինօ | 636 | — | — | — | — 5 |
| Մալիտա | 646 | 15 50 | 9 30 | 6 20 | 35.2 |
| Մարելիսի | 665 | — | — | — | —5 |
| Զիօյզուրի | 664 | 16 00 | 9 60 | 6 40 | 36.75 |
| Բերուել | 673 | 16 00 | 9 60 | 6 40 | 36.75 |
| Ձորապան | — | 16 50 | 9 90 | 6 60 | 38.25 |
| **Կվիրիլի** | 686 | 16 50 | 9 90 | 6 60 | 38.25 |
| Էջամնեթի | 707 | 16 50 | 9 90 | 6 60 | 38.25 |
| Րիօն | 714 | 17 00 | 10 20 | 6 8 | 39.75 |
| Կոպիտնարի | 731 | 17 00 | 10 20 | 6 80 | 39.75 |
| **Սամտրեդի** | 743 | 17 00 | 10 20 | 6 80 | 39.75 |
| Ռուջեվախօ | 751 | 17 50 | 10 50 | 7 00 | 41.25 |
| Նիգօիթի | 765 | 17 50 | 10 50 | 7 00 | 41.25 |
| Լանչխութի | 771 | 17 50 | 10 50 | 7 00 | 41.25 |
| Սուպսա | 790 | 18 00 | 10 80 | 7 20 | 42.75 |
| Նօթանեբի | 804 | 18 00 | 10 80 | 7 20 | 42.75 |
| Կոբուլեթի | 819 | 18 50 | 11 10 | 7 40 | 44.25 |
| Չակվա | — | 18 50 | 11 10 | 7 40 | 44.25 |
| ԲԱԹՈՒՄ | 840 | 18 50 | 11 10 | 7 40 | 44.25 |

ՄԻԽԱՅԼՕՎԻՑ—ԲՈՐԺՈՄ

| | | ր. կ. | ր. կ. | ր. կ. | կոպ |
|---|---|---|---|---|---|
| Թիֆլիսից Միխայլօվի վրայով—Բորժոմ. | — | 5 05 | 3 03 | 2 02 | 8.11 |
| Միխայլօվից Բորժոմ . . | — | 0 98 | 0 59 | 0 39 | 1.55 |
| Բակուրիանից Բորժոմ . . | — | 1 03 | 0 62 | 0 41 | 1.67 |
| Փօթիից Սամտրեդի վրայով—Րիօն . | — | 3 25 | 1 95 | 1 30 | 5.18 |
| Փօթիից Սամտրեդի . . | — | 2 25 | 1 35 | 0 90 | 3.57 |
| Բաթումից Ձորապան . | — | 5 75 | 3 45 | 2 30 | 9.20 |
| Բաթումից Կօբուլետ . | — | 0 80 | 0 48 | 0 32 | 2.13 |

ԹԻՖԼԻՍԻՑ – ԿԱՐՍ։

| ԹԻՖԼԻՍ | վ. | ր. կ. | ր. կ. | ր. կ. | կոպ. |
|---|---|---|---|---|---|
| Նաւթլուղ | — | — | — | — | — |
| Սողանլուղ | 13 | 0 45 | 0 27 | 0 18 | 0.75 |
| Ջանդար | 35 | 1 28 | 0 77 | 0 51 | 2.01 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Սադախլօ | 62 | 2 25 | 1 35 | 0 90 | 3 75 |
| Ախթալա | 86 | 3 10 | 1 86 | 1 24 | 4.95 |
| **Սանահին** | 104 | 3 75 | 2 25 | 1 50 | 5.95 |
| Կալագերան | 119 | 4 28 | 2 57 | 1 71 | 6.84 |
| Ճահալի | 127 | 4 58 | 2 75 | 1 83 | 7.30 |
| **Ղարաքիլիս** | 142 | 5 13 | 3 08 | 2 05 | 8.17 |
| Համամլի | 161 | 5 78 | 3 47 | 2 31 | 9.26 |
| Ղալթաղչի | 179 | 6 18 | 3 78 | 2 47 | 10 29 |
| Ջաջուռ | 188 | 6 38 | 3 84 | 2 55 | 10.81 |
| **Ալէքսանդրապօլ** | 207 | 6 80 | 4 01 | 2 72 | 11.90 |
| Կարայալ | 229 | 7 30 | 4 38 | 2 92 | 13.17 |
| Բաշ-Գեադիքլ. | 248 | 7 73 | 4 66 | 3 09 | 14 26 |
| Մազրա | 266 | 8 13 | 4 80 | 3 25 | 15.20 |
| ԿԱՐՍ | 279 | 8 43 | 5 00 | 3 37 | 16.20 |

ԿԱՐՍԻՑ—ԹԻՖԼԻՍ

| | վ. | ր. կ. | ր. կ. | ր. կ. | կոպ. |
|---|---|---|---|---|---|
| ԿԱՐՍ | — | — | — | — | — |
| Մազրա | 13 | 0 45 | 0 27 | 0 18 | 0.75 |
| Բաշ-Գեադիքլ. | 31 | 1 13 | 0 68 | 0 45 | 1 78 |
| Կարայեալ | 50 | 1 80 | 1 08 | 0 72 | 2.88 |
| **Ալէքսանդ.** | 72 | 2 60 | 1 56 | 1 04 | 4.14 |
| Ջաջուռ | 91 | 3 28 | 1 97 | 1 31 | 5.23 |
| Ղալթաղչի | 100 | 3 60 | 2 16 | 1 44 | 5.75 |
| Համամլի | 118 | 4 25 | 2 55 | 1 70 | 6.79 |
| **Ղարաքիլիս** | 137 | 4 93 | 2 96 | 1 97 | 7.88 |
| Ճահալի | 152 | 5 48 | 3 29 | 2 19 | 8.74 |
| Կալագերան | 160 | 5 75 | 3 45 | 2 30 | 9.20 |
| **Սանահին** | 175 | 6 10 | 3 66 | 2 44 | 10.06 |
| Ախթալա | 193 | 6 50 | 3 90 | 2 60 | 11 10 |
| Սադախլօ | 217 | 7 03 | 4 22 | 2 81 | 12.48 |
| Ջանդար | 244 | 7 65 | 4 59 | 3 06 | 14.03 |
| Սողանլուղ | 266 | 8 13 | 4 88 | 3 25 | 15.30 |
| Նաւթլուղ | — | — | — | — | — |
| ԹԻՖԼԻՍ | 279 | 8 43 | 5 06 | 3 37 | '6.04 |

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ—ԵՐԵՒԱՆ.

| | վ. | ր. կ. | ր. կ. | ր. կ. | կոպ. |
|---|---|---|---|---|---|
| ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ | — | — | — | — | — |
| Աղին | 24 | 0 88 | 0 53 | 0 35 | 1.38 |
| Անի | 43 | 1 55 | 0 93 | 0 62 | 2.47 |
| Ալագեօզ | 60 | 2 15 | 1 29 | 0 86 | 3.45 |
| Կարա-քուրն. | 77 | 2 75 | 1 65 | 1 10 | 4.43 |
| Արաքս | 90 | 3 25 | 1 95 | 1 30 | 5.18 |
| Սարդար-Աբ. | 100 | 3 60 | 2 16 | 1 44 | 5.75 |
| **Էջմիածին** | 120 | 4 33 | 2 60 | 1 73 | 6.90 |
| Ուլուխանլու | 132 | 4 75 | 2 85 | 1 90 | 7.59 |
| ԵՐԵՒԱՆ | ·45 | 5 20 | 3 12 | 2 59 | 8.34 |

ԵՐԵՒԱՆԻՑ—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Երեւան** | — | — | — | — | |
| Ուլուխանլու | 14 | 0 53 | 0 32 | 0 21 | 0.81 |
| Էջմիածին | 25 | 0 90 | 0 54 | 0 36 | 1.44 |
| Սարդ.-Աբադ | 45 | 1 60 | 0 96 | 0 64 | 2.59 |
| Արաքս | 56 | 2 03 | 1 22 | 0 81 | 3.22 |
| Կարա-քուրան | 69 | 2 48 | 1 49 | 0 99 | 3.97 |
| Ալագեօզ | 86 | 3 10 | 1 86 | 1 24 | 4.95 |
| Անի | 103 | 3 70 | 2 22 | 1 48 | 5.92 |
| Աղին | 121 | 4 35 | 2 61 | 1 74 | 6.96 |
| ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ | 145 | 5 20 | 3 12 | 2 08 | 8.34 |

# Խորհրդատու.

## I ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

### ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ՀՆՁԻ ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԸ:

*Աւելի փութացրէք,*
*քան ուշացրէք հունձը:*
**Թրվարց**

Հնձելու գործողութիւնը պահանջում է լուրջ հսկողութիւն և գործօն աշխատութիւն: Ամեն մի յապաղում քաղցի ժամանակ կարող է պատճառել ցաւալի հետեւանքներ և անդարմանելի կորուստներ: Այժմ հարց է իմանալ, թէ երբ է հնձելու լաւագոյն և նպատակայարմար ժամանակը:

Երբեմն կարծում էին և այսօր էլ դեռ գտնւում են կարծողներ, որ այն ժամանակ միայն ցորենը ստանում է ծնելու և սնուցանելու կարողութիւնները, երբ բոլորովին հասունացած է լինում. Նոյն իսկ մի քանի հողագէտներ (ագրոնոմ) պաշտպանում են այս խնդիրը: Նրանց կարծիքով բուսականութեան վերջնական նպատակը հատիկն է, որ կարող է լաւ կազ-

մուած և վերջնականապէս կատարելագործուած լինել միայն այն ժամանակ, երբ բուսնելը աւարտում է իւր գործը, դադարում է աճումը, այսինքն բոլորովին հասունացած է լինում հացահատիկը։

Այս հետևութիւնները արդարև կարող են նշանակութիւն ունենալ, եթէ հարցը միայն սերմնացու հատիկների մասին եղած լինէր։ Սերմացուն հարկաւոր է հնձել բոլոր հասունանալուց յետոյ, որպէսզի նրանից ստացուած հատիկները ծիլու կարողութեամբ օժտուած լինին։

Բայց երբ հարցը գալիս է սպառելի հատիկներին, վերոյիշեալ դիտողութիւնները գործնական և տնտեսական տեսակէտով իրանց նշանակութիւնը բոլորովին կորցնում են։

Գրեթէ բոլորովին հաստատուած է, որ երբ արմատները չորանան և յարդը մասամբ դեղնի, բոյսի խողովակները գոցւում են և ցորենի հատիկն այլևս հողից ոչ մի սնունդ չի վերցնում. այս միջոցին նա ինքն իրան է կատարելագործում իւր ամբարած սնունդներով. քանի որ այլևս արմատը ոչ մի բանով չի նպաստում հատիկի կատարելագործութեան, հետևաբար հացաբոյսի հնձուելուց յետոյ էլ նա կարող է հասունանալ։

Մալինի և Բայլէի կարծիքով հացաբոյսերն աւելի հեշտութեամբ են հասունանում խուրձ կապած վիճակի մէջ, որովհետև հասկերը օդի չփումին, չորժող քամիներին և արեգակի ճառագայթներին, նպաստաւոր եղանակով ենթարկուելով, աւելի լաւ և արագ են չորանում։

Մաթիէ դը Դոմբալ նշանաւոր հողագէտը, որ միաժամանակ եղել է բարեխիղճ դիտող և յայտնի ժողովրդականացնող, յայտարարում է. «Հնձելու ժամանակ հարկաւոր չէ՝ որ հացաբոյսերի հատիկները բոլորովին հասունացած լինին. գտնում են նոյն իսկ ասողներ՝ թէ բոլորովին չ'հասունացած հնձուած ցորենները աւելի ծանր են կշռում, աւելի սահուն և աւելի ալիւրոտ են լինում»։

Զանազան վայրերում կատարուած փորձերը այժմ հաստատում են Դոմբալի կարծիքը։

Բայց դա միակը չէ։ Պ. Դեհէտէն ապացուցանում է, որ եթէ հասունացած հացաբոյսը չ'հնձուի արագութեամբ, նա տկարանում է և ուշ հնձուածները իրանց ծանրութիւնները կորցնում են։ Այսպէս՝ մի հեկտար տարածութեան վրա մը չակուած վարսակի հունձքի չոր նիւթերի ծանրութիւնը հասնում է Յուլիսի 31-ին 4843 կիլոգրամ
Օգոս (հունձք)13-ին 5321 »
Օգոստոսի 22-ին 2622 կիլոգրամի։

Ֆրանսիայի հողագործական ճեմարանի յանձնարարութեամբ Պալէն և Ֆուրնիէ, այս հարցի մասին փորձեր կատարելով, եկան այն եզրակացութեան, որ ամենաօգտակար և նպատակայարմար ձևը հացաբոյսերը կատարելապէս հասունանալուց քիչ առաջ հնձելն է։

Դատէ դը Վօ պնդում է, թէ «բոլորովին հասունանալուց առաջ հնձուած ցորենը իւրաքանչիւր հարիւրալիտրին 5 կիլօ աւելի է կշռում. միևնոյն է, եթէ ասենք, թէ կատարելապէս հասուն վիճակի մէջ քաղուած ցորենը իւրաքանչիւր հարիւրալիտրին 5 կիլօգրամ նուազ է կշռում։ Հէնց այդ պատճառով փորձառու հողագործները հացաբոյսերը սակաւ ինչ կանաչ են հնձում։

Վաղ հնձելու սովորութիւնը իւր շատ օգտակար կողմերն ունի, որոնց գլխաւորները հետևեալներն են.

Ա. Այլևս, հասկերից թափուե-

լով, հատիկ-հատիկ չեն կոլչում ցորենները:

Բ. Օր առաջ ակսելով քաղոցը, մշակներ գտնելու համար դժուարութիւն չի կրում հողատէրը:

Գ. Հունձքը նուազ ենթակայ է լինում փոթորիկների և կարկուտների, որոնք տարուայ այդ եղանակում յաճախ են սպառնում:

Դ. Վաղահունձ ցորենները գեղեցիկ տեսք ունին, առաւել ծանր են կշռում (իւրաքանչիւր հարիւրալիտրի վրայ 5—10 կիլօգրամ) և հեշտութեամբ են աղացւում:

Ե. Նոյն իսկ յարդը նուազ կարծր է լինում, նուազ կոտրւող և նրա սննդարար տարրերը առաւել դիւրամարս լինելու յատկութիւնն ունեն:

Զ. Կատարեալ հասունանալուց առաջ հնձելով, կարելի է խոզանի աշխատութիւնը և նախահերկը առաջ տանել, որով բաւական օրեր՝ մանաւանդ թանկագին օրեր է շահում հողագործը յաջորդ տարուան նախապատրաստութիւնը տեսնելու համար:

Հունձի նպաստաւոր ժամանակը համարւում է, երբ յարդը կորցնում է իւր կանաչ գոյնը և դեռ կարելի է հատիկի վրա եղունգով գծել, որպէս մեղրամոմի մի կտորի վրա:

Մի խօսքով, երբ յարդի արմատը և գագաթը դեղնում, նրա հանգոյցները սպիտակնում են և եթէ հատիկը բաւականին ուժեղ է (կարծր) սակայն ինչ դիմադրել կարողանալու համար եղունգի ճնշումին՝ հարկաւոր է իսկոյն սկսել քաղոցը:

Հնձեցէք ձեր հացաբոյսերը, մանաւանդ ցորենները, սակայն ինչ կանաչ, եթէ ցանկանում էք ձեր բերքի վրա 6 տոկոս առ հարիւր առաւել շահել:

Գարեգին Մեծատուրեան

Փարիզ

## II ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովի հիւանդոտ կաթի նշանները եւ նրանից զգուշանալու միջոցները: Կաթը շատ հեշտութեամբ կարող է այլ և այլ փոփոխութիւնների ենթակայ լինել. ամեն մի դէպք կարող է փոխել կաթի յատկութիւնները: Կաթը երբեմն փոփոխութեան է ենթարկւում կթելուց առաջ, ստինքների մէջ, երբեմն էլ հետոյ: Ծծից դուրս եկած կաթը երբեմն իր մէջ պարունակում է վնասակար սաղմեր, որոնք թէև կթելիս չեն նկատւում, բայց յետոյ վնասակար են դառնում. ինչպէս պանրագործութեան, նոյնպէս և մարդու առողջութեան համար: Կթելուց առաջ կաթի մէջ եղած պակասութիւնների պատճառը կարող են լինել անասունների վատ սնունդը, փչացած ջուրը և կենդանու ունեցած հիւանդութիւնները:

Նորագոյն ժամանակներում տեղի ունեցած հետազօտութիւնները ցոյց են տուել, որ կաթի մէջ առաջացած անկանոնութիւնների և պակասութիւնների պատճառը մանրիկ օրգանիզմներն են: Հին ժամանակներում կաթի մէջ այդպիսի պակասութիւններ շատ էին տեղի ունենում և անասնապահութիւնը զգալի վնասներ էր կրում: Ներկայումս այդպիսի երևոյթները պակաս նշանակութիւն ունին, որովհետև որոշ միջոցներ ձեռք առնելով կարելի է բոլորովին արգելք դառնալ կաթի պակասութիւնների զարգացմանը: Այդ միջոցներն են՝ տաքութեան բարձր կամ ցած աստիճանի գործադրութիւնը և կաթի շուտափոյթ մշակութիւնը: Թէպէտ կաթի մէջ առաջացած թերութիւնների գլխաւոր պատճառը մանրիկ օրգանիզմները—միկրօբներն են, բայց կան նաև կաթը բնական վիճակից շեղող ուրիշ պատճառներ. այդ պատճառներից են համարւում կենդանիների դժուարամարսողութիւնը, թթու և վնասակար խոտեր ուտելը,

այլող ալեփ տակ երկար ժամանակ մնալը և այլն: Անառողջ կաթի գըլխաւոր տեսակները հետևեալներն են.

1. Ջրալի կաթ. սրա պատճառներն են կլիմայական պայմանները, անկանոն սնունդը, վիժելը, թոքերի հին հիւանդութիւն և այլն: Պէտք է ուշադրութիւն դարձնել և բժշկել առաջացնող պատճառները:

2. Կարմրագոյն կամ արիւնախառն կաթ, որ իր մէջ շատ կամ քիչ քանակութեամբ արիւն է պարունակում: Սրա պատճառներն են՝ ա. ստինքի բորբոքումը, բ. կերի մէջ եղած կարմիր ներկող նիւթեր և գ. բոյսեր, որոնք պատճառ են դառնում նաև արիւնը մէզի հետ խառնուելուն:

Կաթին կարմիր գոյն տուող միկրօբներն ամենից աւելի լաւ զարգանում են 25° ջերմութեան մէջ: Այդ մանրիկ օրգանիզմները փչացնում են կաթը նախ նրանով, որ շուտով մակարդում, փոխում են նորա գոյնը և ապա մի տեսակ հոտ հաղորդում:

Խնամք: Ստինքի բորբոքման դէպքում պէտք է օրական մի քանի անգամ կթել ու ստինքը լուանալ տաք ջրով: Երբ կուրծքի վրա հանգոյցներ և կարծրութիւններ առաջանան, պէտք է բժշկել խաշիլներ (припарки) դնելով և օրական 3 անգամ չփել հաւասարաչափ քանակութեամբ վերցրած վուշի և հօշօշի (ромашка) իւղերից պատրաստած օծանելիքով (мазь)· Եթէ հիւանդութեան պատճառը զանազան վնասակար բոյսեր են, այն ժամանակ կարևոր է ուշք դարձնել կենդանու կերի և խմելիքի վրա, պէտք է տալ սննդարար և միևնոյն ժամանակ դիւրամարս կեր (լաւ տեսակի չոր խոտ): Կովերին արիւնամէզութիւնից ազատելու համար խորհուրդ ենք տալիս օրական 3 անգամ՝ ամէն անգամին 3 գրան կապարաշաքար (свинцовый сахаръ) տալ վուշի սերմերից պատրաստած լափի հետ խառն: Կաթը կարմիր գոյն տուող միկրօբներից ազատ պահելու համար ամենալաւ միջոցն է մաքրութիւնը:

3) Շուտ մակարդուող կաթ. շուտ մակարդուելու պատճառներն են՝ մարսողութեան զանազան տեսակ խանգարումներ (երբեմն կաթը մակարդւում է դեռ ստինքում եղած ժամանակ), վատ կերը և զանազան կլիմայական պայմանները:

Խնամք: Պէտք է անասուններին տալ լաւ կեր և ստամոքսը կանոնաւորելու համար պէտք է տալ օրական 5—6 հացի գդալ կարծր փայտի մոխիր կամ 3½ մսխալ կալաքար (поташъ) - (kalibicarbonicum):

4. Մածուցիկ կամ կպչող կաթը բաւական թանձր է լինում և թել թել: Այսպիսի կաթը կամ բոլորովին սեր չի բռնում և կամ քիչ է բռնում և ճեճսութեամբ էլ մակարդւում է: Կաթի կպչունութիւնը առաջելուց յետոյ միայն կարելի կըլինի իմանալ. ունենում է այդպիսի կաթը անախորժ, պղուելի համ, սերը միշտ պակաս է լինում և հարելիս նրանից դժուարութեամբ կարագ կստացուի: Կաթի այս հիւանդութեան պատճառներն են՝ կովերի հիւանդութիւնները (ամբակի և այլ հիւանդութիւններ), վատ կերը, կաթնատան անյարմարութիւնները և վերջապէս անմաքրութիւնը: Այսպիսի պայմաններում երևան են գալիս մի շարք այլ և այլ տեսակի միկրօբներ, որոնք և փոխում են կաթի բնական յատկութիւնը:

Խնամք. կաթի այս պակասաւորութեան առաջն առնելու համար հարկաւոր է կովերի մարսողութիւնը կանոնաւորել, որի համար հարկաւոր է նրանց տալ նախ ½—1 գրուանքայ գլաուբերեան աղ (натръ сѣрнокислый), իսկ յետոյ մի ամբողջ շաբաթ շարունակ, տալ մի տեսակ փոշի, որ պատրաստած լինի 3 հացի գդալ հօշօշի (ромашка), 21 մսխալ չամանի, 21 մսխալ խունկեղենի (եղեգնահամեմի) քարի (иркый камень) և 14 մսխալ հասարակ աղի խառնուրդից:

5. Դառն կաթ, որ առաջ է գա-

խս ներքին և արտաքին պատճառներից: Կաթի այս պակասութեան գլխաւոր պատճառը մի քանի սունկեր, բակտերիաներ են, որոնց մի տեսակը առաջացնում է նախ ծծի վարակիչ հիւանդութիւն և դրանով դառնացնում է կաթը:

Խնամք. կաթի այս պակասութեան առաջն առնելու համար հարկաւոր է նախ փոխել կովի կերը և լուը տալ, ամենայն օր աղբը վերցնելուց յետոյ գոմը սրսկել կարբօլի թթու, և ծծումբով ծուխ տալ. իսկ ծծի պտուկները երկու անգամ լուանալ նախ գոլ ջրով և ապա ջըրի հետ խառնած կարբօլաթթւով: 3 օրից յետոյ կաթի և սերի գառն համը բոլորովին կանցնի և սերից կրկին կարելի կլինի պատրաստել լաւ իւղ:

6 Կապոյտ կաթ. երբեմն կաթը 1—3 ժամ անցնելուց յետոյ կապոյտ գոյն է ստանում. սկզբում կաթի երեսին երևում են կապոյտ բծեր, որոնք գնալով հետզհետէ բազմանում և մեծանում են ոչ միայն կաթի երեսին, այլ և նրա ըստորին շերտերում, այնպէս որ ամբողջ կաթը կապտում է: Սովորաբար սառն օդի մէջ կաթի երեսին աւելի դանդաղ է առաջանում կապտաւուն գոյնը, քան տաք եղանակին:

Կապտաւուն գոյն ունեցող կաթը խիստ կծու հոտ և դառն համ է ունենում. թէպէտ այսպիսի կաթի սերից կարելի է իւղ հարել, բայց այդ իւղն էլ դառն համ է ունենում: Այն կարծիքը, թէ այսպիսի կաթը թունաւոր է լինում և գործածութեան համար անպէտք է, սխալ է:

Խնամք. կաթի այս հիւանդութիւնից նախազգուշանալու համար հարկաւոր է գործ դնել հետևեալ միջոցները. բնակարանները, ամանները և օդը, որոնք այնպէս թէ այնպէս շփւում են կաթի հետ, պէտք է վերին աստիճանի մաքուր պահել, որպէսզի այդպիսով կարելի լինի արգելք դառնալ մանրիկ կենդանիների զարգացմանը: Գոլորշով խաշել, լուանալ ամանները, եթէ միայն յարմարութիւն կայ: Պէտք է դռները և լուսամուտները փակել և ծծումբով մի լաւ ծուխ տալ կաթնատներում, որպէսզի այրելուց առաջացած ծծմբաթթուն ոչնչացնէ այնտեղ եղած վնասակար տարրերը: Կաթնատան պատերի, յատակի, առաստաղի, նաև կաթի վերաբերեալ գործիքների վրա պէտք է սրսկել գաճ (ГИПСЬ): Որ, պէտզի ստացած կաթը չկապտի հարկաւոր է սառն օդի մէջ պահել և որքան հնարաւոր է շուտ գործածել:

Խոնաւ, բորբոսնած, անբաւարար կերպով մաքրած օդը և տաք գոմերը, նաև կաթնատների օդի աղաքութիւնը բացիլների աճմանը նըպաստում են, կաթին կապտաւուն գոյն են տալիս և դժուարացնում այդ չարիքի դէմ կռուելու գործը:

7 Դեղին կաթ: Պակասաւոր է համարւում նաև դեղին կաթը: Եթէ եռացրած ջուր խառնենք դեղին կաթի հետ, 4 ժամ անցնելուց յետոյ կ'մակարդուի: Կաթը դեղին գոյն կարող է ստանալ ինչպէս մի քանի սունկեր, նոյնպէս և մի քանի տեսակ բոյսեր (առեպղենի քըքում, խաշընդեղ և ուրիշ բոյսեր ու տերևներ) ուտելուց յետոյ: Կաթի այս պակասութեան դէմ պէտք է գործադրել այն միջոցները, ինչ միջոցներ որ յիշուած են վերոյիշեալ դէպքում:

8 Աղի կաթի պատճառը գլխաւորապէս այն սունկերն են, որոնք ծծի բորբոքում են առաջացնում: Երբեմն պառաւած կովերն էլ մի քանի պտուկներից աղահամ կաթ են տալիս:

9 Մահացու տարափոխիկ հիւանդութիւններ առաջացնող կաթ. կաթն իր մէջ կարող է պարունակել զանազան վնասակար վարակիչ հիւանդութիւնների սաղմեր: Այդ սաղմերը կարող են գտնուել դեռ ստինքում եղած կաթի մէջ անասունների հիւանդութեան պատճառով, բայց աւելի յաճախ այդ սաղմերը ընկնում են կաթի մէջ նրա

չուրջն եղած ապականուած օդի միջից կամ անմաքուր ջրով լուացած ամաններից: Մահացու հիւանդութիւններ առաջացնող բացիլներից են՝ տուբերկուլօզի (թոքախտ), տիֆի և խոլերայի բացիլները:

Թոքախտաւոր կովերի կաթի մէջ սովորաբար լինում են տուբերկուլօզի բացիլներ: Ներկայումս ընդունում են, որ այդ հիւանդութիւնը ցոյց է տուել, որ այս բացիլները կարող են պահպանել իրանց կենսունակութիւնը թթու կաթի մէջ 10—40 օր, իսկ պանրի մէջ—35 օր: Ինչ վերաբերւում է բացիլի գոյութեանը իւղի մէջ, այդ մասին կարծիքները տարբերւում են, ոմանք իւղն էլ ընդունակ են համարում այդ բացիլների սաղմերով վարակուելու, ուրիշներն իրանց փորձերով ընդհակառակն են ապացուցանում և յայտնում են, որ դրանք թոքախտի բացիլներ չեն:

Տիֆի բացիլները կարող են պահպանել կաթի մէջ իրանց կենսունակութիւնը մինչև 25 օր, իւղի մէջ նրանց սաղմերը ոչնչանում են միայն 5—7 օր անցնելուց յետոյ:

Ինչ վերաբերում է խոլերայի բացիլներին, ոմանք կաթը այդպիսի բացիլների համար յարմար տեղ են համարում, որ միայն 12 ժամ մնալուց յետոյ ոչնչանում են, ուրիշները ապացուցանում են, որ նրանք կաթի մէջ կարող են իրանց գոյութիւնը պահպանել 4—6 օր: Իւղի և պանրի մէջ խոլերայի կենդանի սաղմերը ոչնչանում են· Այսպէս, թէ այնպէս կաթը խոլերայի ժամանակ չ'պէտք է այնքան վտանգաւոր համարել և վախենալ գործածութիւնից:

Կաթի միջոցով կարող են փոխադրուել սկարլատինա և դաբաղ (ящуръ) կոչուած հիւանդութիւնները, որոնց վարակիչ սաղմը դեռ անյայտ է· Նաև կատաղութիւնը, թանչը (дизентерія), ծաղիկը, դեղնախտը (желтуха) և ուրիշ հիւանդութիւններ: Դիֆտերիայի բացիլները եփած տաք կաթի մէջ շատ արագ են զարգանում, այնպէս, որ այս հիւանդութիւնը ևս կարող է կաթի միջոցով անցնել մարդկանց:

Խնամք: Տնային գործածութեան ժամանակ այս վտանգներից ազատ մնալու համար կաթը երբէք հում չ'պէտք է խմել, նախ լաւ եռացնել և ապա նոր գործածել, թէպէտ չեփած կաթը աւելի դիւրամարս է, քան եփածը, եթէ նոր կթուած է և ազատ է հիւանդութիւններից և վարակիչ սաղմերից:

10. Կաթի պակասելու պատճառները շատ քիչ են յայտնի մինչև այժմ դեռ ոչ մի ազդու միջոց չէ գտած սրա առաջն առնելու համար: Կաթի քանակը մեծացնելու համար խորհուրդ ենք տալիս գործածել 28 մսխալ չամանից, 28 մսխալ եղեգնահամեմի արմատից (ирный корень), 7 մսխալ հասարակ աղից և 7 մսխալ ծծումբից պատրաստած փոշի: Պէտք է տալ ջրով օրական 2 անգամ մէկ—մէկ հացի գդալ:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ յիշել համառօտակի, որ շատ կաթ տանալը կախուած ունի նաև կթելու արհեստից· Պէտք է կթել ճիշտ որոշ ժամանակներում և այնպէս, որ պտուկներից կաթը հաւասարապէս դուրս հոսի, հակառակ դէպքում, եթէ երբեմն արագ և երբեմն դանդաղ կթուի, կովը կըսովորի պահել, թագցնել կաթը իր ստինքի մէջ, որով և նուազում է նրա տուած կաթի քանակը և փոխւում յատկութիւնը:

Գ. Ղազարեան

## III ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

**Փեթակների տեղափոխելը եւ մաքրելը**: Գարունը գալուն պէս, երբ դաշտերի ձիւնը հալուել, վերջացել է և գարնանային վաղահաս մեղրաբեր բոյսերը, ուռենիները բացուել են կամ բացուելու մօտ են, մեղուներին պէտք է դուրս բերել ձմեռանոցներից: Բայց եթէ մեղուները յուզուած վիճակի մէջ են, եթէ փեթակներից դուրս են թռչում և նրանց պատերի արտաքին մասը կեղտոտում են իրանց կղտանքներով, այդ նշան է լուծութեան, ուստի առանց սպասելու ուռենիների բացուելուն, հէնց առաջին պատահած տաք օրում պէտք է դուրս բերել: Սովորաբար եթէ ստուերի մէջ + 5° տաքութիւնից պակաս լինի, ոչ մի դէպքում չը պէտք է դուրս բերել մեղուներին. պէտք է սպասել, որ տաքութիւնը բարձրանայ: Բայց եթէ մեղուներին դուրս բերելուց յետոյ եղանակը կրկին փոխուի, ցրտերը տեղի ունենան, փեթակները նորից ներս պէտք է տանել: Ձմեռը դուրսն անցկացնող փեթակների վրայի ծածկոցները պէտք է վերցնել: Երբէք չպէտք է բոլոր փեթակները միանգամից, 1 օրում դուրս բերել. նախ՝ յուզուած, անհանգիստ վիճակի մէջ եղած ընտանիքները և ապա միւսները մաս-մաս: Ամեն կերպ պէտք է աշխատել, որ փեթակները դըրուած լինին իրանց նախկին տեղերում, այսինքն այնտեղ, որտեղ դըրուած էին անցեալ ամառը:

Փեթակները դուրս բերելուց յետոյ, երբ մեղուները կսկսեն դուրս գալ, պէտք է բաց անել, մի առ մի զննել, թէ ինչ վիճակի մէջ են մեղուների ընտանիքները. նրանց բնակարանը չո՞ր է, արդեօք խարիսխները շատ հնացած չեն, մի որեւէ հիւանդութիւն չկա՞յ, ձուեր, թըրթուրներ կա՞ն փեթակի մէջ և ինչ վիճակի մէջ են, մայր մեղո՞ւն կենդանի՞ է և այլն և այլն:

Այսպիսի այցելութիւնը անհրաժեշտ է նոր ձեւի, այսինքն շրջանակաւոր փեթակների համար. հին-նախնական ձեւի, չբացուող փեթակների վերաբերմամբ կարելի է բաւականանալ միայն արտաքին դիտողութիւններով և միայն կասկածելի դէպքում, երբ մեղուապահը կարծում է, թէ ընտանիքը անբարեյաջող վիճակի մէջ է, անհրաժեշտ է տեսնել ձուերը, թրթուրները: Այսպիսի դէպքում անպատճառ պէտք է փեթակի միջից զգուշութեամբ մի կտոր խարիսխ հանել, նայել և յետոյ կրկին իր տեղը դնել:

Այս առաջին այցելութեան ժամանակ հարկաւոր է փեթակները մաքրել, դուրս բերել այնտեղից անմաքրութիւնները, մգլոտած և մեղուների կեղտոտած, փչացրած խարիսխները դանակով կտրել, հանել և եթէ այդպիսիները դուրս բերելուց յետոյ փեթակում խարիսխներ քիչ մնան, պէտք է աւելացնել: Անմաքուր, խոնաւ յատակը աւելի լաւ է փոխել և տեղը մի ուրիշ չորը, մաքուրը դնել, իսկ դուրս բերածը անմիջապէս լաւ չորացնել և կարեւոր դէպքում գործածել: Եթէ փեթակում մեղուներն այնքան քիչ են, որ մէջն եղած խարիսխները չեն կարողանում ծածկել, բաց մնացածները հարկաւոր է վերցնել. և առհասարակ գարնան սկզբներում պէտք է աշխատել մեղուների բնակարանը նեղացնել, որպէսզի նրանք կարողանան տաքութիւն պահել, որ մի անհրաժեշտ պայման է նրանց բազմանալուն, ձուերից թրթուր, թըրթուրներից էլ ձագ դուրս գալուն:

Գ. Դ.

# Վիճակագրութիւն

## ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎԻՉ, ինքնակալ համայն Ռուսաստանի, ծնուել է 1868 թ. մայիսի 6 ին (անուանակոչութիւնը դեկտեմբերի 6 ին)։ Նորին Կայսերական Մեծութիւն Մայր Թագուհի ՄԱՐԻԱ ՖԵՕԴՕՐՕՎՆԱ, ծնուել է 1847 թ. դեկտ. 14 ին (անուանակոչութիւնը յուլիսի 22 ին)։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի ԱԼԷՔՍԱՆԴՐԱ ՖԵՕԴՕՎՆԱ, Ծնուել է 1872 թ. մայիսի 25 ին (անուանակոչութիւնը ապրիլի 23-ին)։ Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ՝ Մեծ իշխան ՄԻԽԱԻԼ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎԻՉ Ծնուել է 1878 թ. Նոյեմբերի 22ի-ն) (անուանակոչութիւնը նոյեմբ. 22)։

### ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԴՈՒՍՏՐՆԵՐԸ։

Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլաեւնա։ Ծնուել է 1895 թ. նոյեմբերի 3-ին (անուանակոչութիւնը յուլիսի 11 ին)։

Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլաեւնա։ Ծնուել է 1897 թ. մայիսի 29 ին (անուան. Յունվ. 12 ին)։

Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Մարիա Նիկոլաեւնա։ Ծնուել է 1899 թ. յունիսի 14 ին (ան. յուլիսի 22-ին)։

Ն. Կ. Մ. Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլաեւնա, Ծնուել է 1901 թ. Յունիսի 5 ին (անուան. դեկտ. 22 ին).

### ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՔՈՅՐԵՐԸ.

Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրրօվնա։ Ծնուել է 1875 թ. մարտի25-ին (անուանակ. յունվարի 24-ին).

Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնա։ Ծընուել է, 1882 թ. յունիսի 1-ին (անուանակոչ. յուլիսի 11-ին)։

### ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐԻ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՀՈՐԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԵՒ ՀՕՐԱՔՈՅՐԵՐԸ

Ն. Կ. Բ. Մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրօվիչ, Ծնուել է 1847 թ. ապրիլի 10-ին (ան. յուլիսի 15 ին)։ Նորա Ամուսինը, Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնա, Ծն. 1854 թ. մայիսի 2-ին (ան. յուլիսի 22-ին)։ Սոցա Որդիքը՝ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Կիրիլ Վլա-

դիմիրօվիչ, Ծնուել է 1876 թ. սեպ. 30-ին (ան. մայիսի 11 ին), Մեծ Իշխան Բօրիս Վլադիմիրօվիչ, Ծն. 1877 թ. Նոյեմբերի 12 - ին, (անուանակոչ. մայիսի 2-ին). Մեծ Իշխան Անդրէյ Վլադիմիրօվիչ, Ծն. 1879 թ մայիսի 2-ին (անուան. նոյեմբեր 30-ին). Մեծ Իշխանուհի Ելենա Վլադիմիրօվնա, Ծն. 1882 թ. յունվ. 17 ին (ան. մայիսի 21-ին):

Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրօվիչ, Ծն. 1850 թ. յունվարի 2 ին (ան. մայիսի 20 ին):

Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Սէրգէյ Ալէքսանդրօվիչ, Ծն. 1857 թ. ապրիլի 29-ին (ան. յուլիսի 5-ին). Նորա ամուսինը Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Ելիսավետա Ֆեօդօրօվնա Ծն. 1864 թ. հոկտ. 20-ին. (ան. սեպտեմբերի 5 ին

Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Պավէլ Ալէքսանդրօվիչ, Ծն. 1860 թ. սեպտեմբերի 21-ին (ան. յունիսի 29-ին), ամուսնացած էր Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Գէորգիեվնայի հետ (†1891 թ. սեպտեմբերի 12-ին). Նորա որդիքը՝ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Դիմիտրի Պաւլովիչ. Ծն. 1891 սեպտեմբերի 6-ին (ան. սեպտեմբերի 21-ին). Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնա, Ծն. 1890 թ. ապրիլի 9-ին (ան. յուլ. 22-ին):

Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Մարիա Ալէքսանդրօվնա. Ծն. 1853 թ. հոկտեմբերի 5 ին (անուանակոչութիւն յուլիսի 22 ին). ամուսնացած է Նորին Արքայական Բարձրութեան—Էդինբուրգի դուքս Ըրինց Ալֆրէդ-Էրնէստ-Ալբէրտի հետ:

## ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսաց կայսրութիւնը տարածուած է աշխարհի երկու մասում՝ Ասիայում և Եւրոպայում: Այժմ այդ տարածութիւնը հասնում է.

Քառ. վերստ:

Եւրոպայում—48,46,088,4
=5,515,054,8 ք.կիլոմ.

Ասիայում —14,867,063,6
=19,919,337,5ք.կիլոմ.

Ընդամենը —19,713,152,0 վերստ
=22,434,392,3 ք.կիլոմ.

Այդպիսով Ռուսաստանի երկարութիւնը—հիւսիսից հարաւ կազմում է 42 աստիճան=4383 վերստ =4676 կիլօմետր. իսկ լայնութիւնը արևելքից արևմուտք՝ 167 աստիճան=10,060 վերստ=10,732 կիլօմետր:

Ռուսաստանի ազգաբնակութիւնն էլ բաւական խոշոր թիւ է կազմում, այն է.

I ժողովրդագրութեան ժամանակ 1722թ.14 միլ., II—1742—16 միլ., III—1762—19 միլ., IV—1782—28 միլ., V—1796—36 միլ., VI—1812 —41 միլ., YII—1815—45 միլ., VIII -1835—60 միլ., IX.—1851—68 միլ., X—1858— 74 միլ., XI—1897— —130 միլ.:

Անցեալ 1900 թ. այդ թիւը արդէն հասել էր 135 միլլիօնի, այնպէս որ այդ հաշւով կարելի է ենթադրել, թէ Ռուսաստանի ազգաբնակութիւնը կարող է հասնել՝ 1910 թ.—155 միլլիօնի, 1920 թ. —175 միլ, 1930 թ.—200 միլ., եթէ, իհարկէ, բացառիկ հանգամանքներ չխանգարեն բնական աճմանը:

Ամենավերջին (1897) ժողովրդագրութեան ժամանակ Ռուսաստանի ամբողջ ազգաբնակութեան 69,54% օրթօդոքսներ էին.

11,06—մահմեդականներ
9,09—կաթոլիկներ
4,13—հրէաներ
2,98—բողոքականներ
1,72—աղանդաւորներ:

Իսկ ազգաբնակութեան խտութեան կողմից Ռուսաստանը հետևեալ պատկերն էր ներկայացնում՝ իւրաքանչիւր քառակուսի կիլօմետրի վրա ապրում էին (1897 թ.)—միջին թւով.

| | | |
|---|---|---|
| Եւրոպական Ռուսաստ. | 19,7 | հոգի: |
| Լեհաստանում | 74,3 | » |
| Ֆինլանդիայում | 6,9 | » |
| Կովկասում | 20 | » |
| Սիբիրում | 0,5 | » |

Թիւրքեստանում 3,5 »

Իսկ ծնունդ և մահացութիւն եղել է հետևեալ չափով.

| Թ. | ծնուել են | մեռել են |
|---|---|---|
| 1889 | 5,128,841 հ. | 3,594,541 հ. |
| 1890 | 5,227,118 հ. | 3,790,681 հ. |
| 1891 | 5,369,209 հ. | 3,758,420 հ. |
| 1892 | 5,976,386 հ. | 4,403,901 հ. |
| 1893 | 5,314,807 հ. | 3.660,716 հ. |
| 1894 | 5,479,213 հ. | 3,774,488 հ. |
| 1895 | 5,651,063 հ. | 3.869,936 հ. |
| 1896 | 5,662,042 հ. | 3,743,356 հ. |
| 1897 | 5,890.818 հ. | 3,716,336 հ. |
| 1898 | 5,769,218 հ. | 3,845,268 հ. |

Ռուսաստանի պետական հասոյթները, 1903 թ. նախահաշուի համեմատ, հասնում են 2,071,667,472 րուբլու: Ծախքերն էլ նոյնքան մեծ գումար են կազմում, իսկ պետական պարտքը հասնում էր 1900 թ. 6,275,095,992 րուբլու:

Ռուսաստանն իր աշխարհագրական դիրքի ու երկրաբանական, կլիմայական յատկութիւնների շնորհիւ հաշւում է գիւղատնտեսական երկիր: Անա հէնց այդ պատճառով նրա տնտեսական կեանքում շատ մեծ դեր է խաղում Երկրագործութիւնը: Միայն մի տարում (1901) հացահատիկների բերքը հաւասար էր.

Եւրոպ. Ռուս. —2,552,212 500 փ.
Վիսլայի շրջանում—194,824,700 փ.
Հիւսիսային Կովկ.—191,337,100 փ.
Սիբիրում —75,046,800 փ.
Հարթավայր Նահա.—32 531,000 փ.

Այդպիսի առատ բերքը հնարաւորութիւն է տալիս Ռուսաստանին իւրաքանչիւր տարի ահագին քանակութեամբ հացահատիկներ արտահանելու դէպի արտասահման:

Անասնապահութիւն. 1900 թ. Ռուսաստանում եղել է՝70,647,322 այծ և ոչխար, 43,586 897 եղջիւրաւոր անասուններ, 25·961,706 ձի, 13,924,454 խոզ, 369,079 զանազան անասուններ, ընդամենը 154,489,458 գլուխ:

Անտառապահութիւն. Ռուսաստանի անտառների տարածութիւնն է. * Եւրոպական Ռուսաստանում —107,028,995 դեսեատին, Կովկասում—4,913,189 դես., Ասիական Ռուսաստանում—124,985,609դես.:

Հանքագործութիւն. անցեալ 1897 թ. հանքագործարաններում մշակուած է. **քարածուխ—651619 378 փ., մարգանեց—40.107,147 փ., չուգուն—150,860,654 փ., երկաթ—28936794 փ. պողպատ—64263295 փ., պղինձ—430,831 փ., ցինկ—386,233 փ., ոսկի—22,126 փ. արճիճ—10733փ.. արծաթ—84 1/2փ.:

Վաճառականութիւն. Ռուսաստանի արտաքին վաճառականութիւնը ամբողջ XIX—րորդ դարի ընթացքում ներկայացրել է հետևեալ պատկերը.

| | Արտահանում | Ներմուծում |
|---|---|---|
| | Հազար րուբլի | |
| 1861—1805 | 75,108 | 52,765 |
| 1812—1815 | 61,986 | 39,106 |
| 1816—1820 | 91,712 | 70,049 |
| 1821—1825 | 81,372 | 72,250 |
| 1831—1835 | 94,319 | 80,999 |
| 1841—1845 | 132,323 | 119,864 |
| 1851—1855 | 133,173 | 129.963 |
| 1861—1865 | 225.852 | 206,703 |
| 1871—1875 | 470,563 | 565.757 |
| 1881—1885 | 549,878 | 494,261 |
| 1891—1895 | 621.420 | 463,465 |
| 1896—1900 | 698,152 | 607,284 |

Վճառականութեան ամենամեծ մասը 86 0/0 կատարուել է եւրոպական սահմանների վրայով, 10 0/0—ասիական և 4 0/0—Ֆինլանդիայի: Ռուսաստանը անցեալ 1900 թ. գործ է ունեցել գլխաւորապէս հետևեալ պետութիւնների հետ. Ներմուծել է դէպի.

| | |
|---|---|
| Գերմանիա | 179,413,000 ր. |
| Անգլիա | 156,316,000 ր. |
| Հոլլանդիա | 84,628,000 ր. |
| Ֆրանսիա | 61,200,000 ր. |
| Միաց. Ամեր. | 30,270,000 ր. |
| Իտալիա | 37,911,000 ր. |
| Բելգիա | 20,965,000 ր. |
| Թիւրքիա | 21,349,000 ր. |
| Դանիա | 24,914,000 ր. |
| Եգիպտոս | 9,814,000 ր. |
| Ռումինիա | 10,120,000 ր. |

* «Отчеть по лѣсному управленію за 1900 г.»

** Նաւթի մասին տես «Նաւթային արդիւնագործութիւն» յօդուածը:

Շուեյցարիա 8,805,000 ր. նիւթ.
Նօրվեգիա 4,923,000 ր. նիւթ.
Հնդկաստան 9,091,000 ր. նիւթ.
Ամ. Միաց. Նահ. 3,986,000 ր. նիւթ.

Պօստ-հեռագրական գործը ներկայացնում է հետեւեալ պատկերը.* Անցեալ 1901 թ. հեռագրաթելերի երկարութիւնը եղել է 140322 վերստ—նախորդ տարուց 2829 վերստով աւել. հեռագրատների թիւը—2878. տրուած է 19,703,327 հեռագիր (Նախ. տար. 445871 աւել): Միջազգային հեռագրների քանակութեան կողմից Ռուսաստանը գրեթէ վերջին տեղն է բռնում մեծ պետութիւնների շարքում: Առաջինը Գերմանիան է (48, 5%), յետոյ Անգլիան (18.5%) և վերջապէս Ֆրանսիան (15,5%):

Պօստատների թիւը եղել է՝ 10,604, իսկ արկղների թիւը ամբողջ Ռուսաստանում եղել է՝ 17,927. ուղարկուած են ընդամենը 947574912 թղթակցութիւն, որի ամենամեծ մասը—845,500,000—ը ներքին, իսկ մնացածը արտասահմանեան թղթակցութիւն: Թղթակցութեան տեսակների մէջ առաջին տեղը բռնում են փակ նամակները (42,8%), ապա պարբերական հրատարակութիւնները (27,6%) և ապա փոխադրած դրամարների քանակը, որ հասել է 417,5 միլլիօն րուբլու:

Պօստ-հեռագրատներում ծառայողների թիւը 1901 թ. եղել է 41,674, որից 23,784—աստիճանաւորներ և 17,890—ը ստորին ծառայողներ: Ընդհանուր եկամուտը հասել է 52,4 միլլիօն րուբլու, իսկ զուտ արդիւնքը—16,7 միլլիօն:

Հեռախօսների ցանցերի թիւը եղել է 103, որից 91—ը կառավարութեան ձեռքում, իսկ 12—ը մասնաւոր ընկերութիւնների: Հեռախօսաթելերի ընդհանուր երկարութիւնը եղել է 7051 վերստ:

* «Почтово—телеграфная статистика за 1901» СПБ. 1903.

# ԿՈՎԿԱՍԻ

## ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ։

| Նահանգ | Տարածութիւն | | Ազգաբնակութիւն | | | Աւելացել է | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Քառ. վերստ | Քառ. կիլօմ. | 1886 թ. | 1897 թ. | 1 քառ. վերստ. | % | Քանի հոգի |
| Թիֆլիսի | 36626,54 | 41682.32 | 808143 | 958775 | 23,2 | 17 | 150628 |
| Քութայիսի | 32583,15 | 37080,44 | 923306 | 1075861 | 33,5 | 16 | 552555 |
| Գանձակի | 38949,25 | 44105,82 | 728943 | 871557 | 22,4 | 20 | 142614 |
| Բաքուի | 35017,09 | 39849.25 | 712703 | 789659 | 22,9 | 11 | 76956 |
| Երեւանի | 25012,04 | 28464,20 | 670405 | 804757 | 34,6 | 20 | 134352 |
| Դաղստանի | 26814,81 | 30514,28 | 592780 | 586636 | 22,4 | 1 | 6144 |
| Կարսի | 16869,17 | 19197,46 | 174044 | 292498 | 17,9 | 68 | 118454 |
| Սև Ծովեան | 5994,67 | 6822,02 | 18125 | 54228 | 8,4 | 200 | 36103 |
| Զաքաթալի շրջան | 3571,31 | 4064,23 | 74449 | 82168 | 21,8 | 9 | 7719 |
| Կուբանի | 82795,1 | 94222.05 | 1241363 | 1922773 | 23.5 | 55 | 681410 |
| Տերեքի | 64079,7 | 72924 — | 692494 | 933485 | 15,3 | 35 | 240991 |
| Ստաւրօպօլի | 47716 — | 54301 — | 666294 | 876298 | 16,6 | 32 | 210004 |
| Ընդամենը | 416028,83 | 473227,12 | 7303049 | 9248695 | 22,5 | 27 | 1945646 |

| Պետութեան անունը | Կառավարութեան ձեը | Երկրի պետը | Ո՞ր թուականին է: Ծնունդ | Գահ բարձ. | Երկրի տարածութ. քառ. կիլօմետր | Ազգաբնակութիւնը |
|---|---|---|---|---|---|---|
| Աբիսինիա | Կայսրութիւն | Մենել.(Նգ.) | 1842 | 1889 | 540000 | 4500000 |
| Աւստ.-Ունգ. | Կայսրութիւն | Ֆր.-Յովսէփ | 1830 | 1848 | 675912 | 47118767 |
| Անգլիա | Սահմ. կայսրու. | Էդուարդ VII | 1841 | 1901 | 28116162 | 397441560 |
| Աւգանիստ. | Էմիրութիւն | Հաբիբուլլա | 1872 | 1901 | 624000 | 4550000 |
| Բելգիա | Սահմ. թագաւ. | Լէօպօլդ II, | 1835 | 1865 | 29456 | 6693810 |
| Բօլգարիա | Սահմ. իշխան. | Ֆերդինանդ | 1861 | 1887 | 95706 | 3733189 |
| Գերմանիա | Կայսրութիւն | Վիլհելմ | 1859 | 1888 | 540743 | 56367178 |
| Դանիա | Սահմ. թագաւ. | Խրիստիան. | 1818 | 1863 | 233024 | 2577328 |
| Թիւրքիա | Կայսրութիւն | Աբդ.-Համիդ | 1842 | 1876 | 2971500 | 24188600 |
| Եւրոպայում | — | — | — | — | 169300 | 6090800 |
| Ասիայում | — | — | — | — | 1768800 | 17097800 |
| Աֆրիկայում | — | — | — | — | 1033400 | 1000000 |
| Իտալիա | Սահմ թագաւ. | Վիկտ. Էմ. III | 1869 | 1900 | 286682 | 32475253 |
| Հօլլանդիա | Սահմ. թագաւ. | Վիլհելմինա | 1880 | 1890 | 2078647 | 40437642 |
| Ճապոնիա | Սահմ. կայսր. | Մուսուհի խօ | 1852 | 1867 | 417412 | 46450911 |
| Յունաստան | Սահմ. թագաւ. | Գէորգ I | 1845 | 1863 | 64679 | 2433806 |
| Միաց. Նահ. (Ամերիկայի) | Հասարակապետ | Ռուզվելտ | 1858 | 1901 | 9806333 | 85551963 |
| Շուեցարիա | Հասարակապետ | Ցեմպ | — | 1902 | 41469 | 3325023 |
| Շուեց.-Նոր. | Սահմ. թագաւ. | Օսկար II | 1829 | 1872 | 770166 | 7357918 |
| Չինաստան | Կայսրութիւն | Կուանգ-Սի. | 1872 | 1875 | 11138880 | 330130000 |
| Կորէա | Կայսրութիւն | Ի-Խօւնգ | 1852 | 1864 | 218200 | 9670000 |
| Պարսկաստ. | Կայսրութիւն | Մուզաֆ. Էդ. | 1853 | 1896 | 1645 | 9000000 |
| Պորտուգալ. | Սահմ. թագաւ. | Կարլօս I | 1863 | 1889 | 2238624 | 14589103 |
| Չեռնոգոր. | Իշխանութիւն | Նիկոլայ I | 1841 | 1860 | 9080 | 227841 |
| Ռուսաստան | Կայսրութիւն | Նիկոլայ II | 1868 | 1894 | 22434392 | 135000000 |
| Սերբիա | Սահմ. թագաւ. | Պետր I | 1846 | 1903 | 48303 | 2493770 |
| Սպանիա | Սահմ. թագաւ. | Ալֆօնս XIII | 1886 | 1886 | 720767 | 18834068 |
| Ռումինիա | Սահմ. թագաւ. | Կարլ I | 1839 | 1866 | 131353 | 6001219 |
| Ֆրանսիա | Հասարակապետ | Լուբէ | 1838 | 1899 | 6623667 | 83367780 |

*) Անգլիայի այդքան մեծ պատքը գլխաւորապէս Բօէրական-(Հարաւ-
2 ծանօթ. Այդ թուերը միայն Եւրոպական Ռուսաստանի համար են.
պատերազմի հանել մօտ $3\frac{1}{2}$ միլլիոն զօրք:

## ԳԼԽԱՒՈՐ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

| Պետական պարտքերը | Զորքը | | Զինուորակ. նաւատորմը | | Առևտրական նաւատ. | | Քանի կիլոմետր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանի հազար ռուբլի | Խաղաղ ժամանակ | Պատերազմի ժաման. | Նաւ | Թրն-դանոթ | Նաւ | Տոնն | Երկաթուղի | Հեռագրաթել |
| — | 150000 | — | — | — | — | — | — | — |
| 6900 * | 329962 | 980000 | 146 | 1098 | — | — | 40024 | 65120 |
| 6330520 | 420470 | 944160 | 971 | 3146 | 19982 | 9304108 | 35164 | 71851 |
| — | 44000 | — | — | — | — | — | 500 շինում է | 6 |
| 988080 | 51219 | 147676 | — | — | 13 | 113259 | 4562 | 6402 |
| 108100 | 43055 | 126970 | 17 | — | 3 | 1407 | 1562 | 5275 |
| 1057310 | 605804 | 2549918 | 104 | — | 3883 | 1941645 | 51850 | 128315 |
| 71070 | 9769 | 61582 | 99 | 346 | 3500 | 394253 | 2914 | 3884 |
| 1132520 | 220000 | 1500000 | 72 | 390 | 2382 | 197038 | 4803 | 37745 |
| — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — |
| — | | — | — | — | — | — | — | — |
| 5762650 | 257615 | 1424693 | 352 | 2071 | 6074 | 873054 | 15787 | 44553 |
| 885132 | 28858 | 69000 | 125 | 803 | 638 | 981791 | 2778 | 6165 |
| 485714 | 640703 | -- | 70 | 1164 | 4543 | 796930 | 6550 | 25674 |
| 289754 | 21952 | 82125 | 72 | 171 | 6303 | 320917 | 1014 | 8379 |
| 2244202 | 103821 | 122213 | 103 | 723 | 24057 | 5524218 | 312663 | 382000 |
| 34403 | միլիցիա — | 516372 | — | — | — | — | 3859 | 6902 |
| 293000 | 58965 | 328652 | 143 | 489 | 9724 | 2095787 | 13377 | 29198 |
| 466808 | 500000 | — | 21 | 301 | 279 | 62945 | 1171 | 23000 |
| 460 | — | 17000 | 3 | — | 3 | 1168 | 42 | — |
| 22356 | 24000 | 60000 | 2 | 5 | 200 | 65000 | 54 | 7710 |
| 1696148 | 33446 | 175380 | 50 | 256 | 630 | 129522 | 2376 | 8334 |
| 377 | 37250 | — [2] | — | — | 17 | 3772 | — | 552 |
| 6275095 | 946656 [2] | 2823000 | 336 | 2613 | 2951 | 601293 | 58608 | 150000 |
| 157366 | 22448 | 160751 | — | — | — | — | 578 | 4110 |
| 363032 | 87193 | — | 63 | 411 | 1142 | 541964 | 13357 | 32021 |
| 533554 | 63668 | 173948 | 50 | 72 | 392 | 74604 | 3319 | 6996 |
| 11214018 | 598765 | 1200000 | 444 | 3739 | 15585 | 1037726 | 43046 | 145202 |

*ային Աֆրիկայում)-պատերազմի հետևանքն է։*
*իսկ ասիական տիրապետութիւնների հետ վերցրած Ռուսաստանը կարող է*

### ՆՇԱՆԱՒՈՐ ԳԵՏԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Նեղոսը—5,568 վերստ, Միսիսիպի և Միսուրի—5,514 վերստ, Ամազոնսկայա-5,437 վ., Օբ 4,880 վ., Եան-տսէ-կիանգ—4764 վ., Պարանա—4,406 վ., Լենա—4,311 վերստ, Ամուր—4,198 վ., Կոնգօ—3,937 վ., Նիգեր—3,900վ.. Ենիսէյ—3,760 վ., Վօլգա—3,180վ., Դունայ—2,672 վ.:

### ՆՇԱՆԱՒՈՐ ԼԵՌՆԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ

Էվերեսթ (Ասիա) 8840 մետր՝
Աքոնքակուա (Ամերիկա) 7020 մ.
Քլիմանճարոյ (Աֆրիկա) 6000 մ.
Լոկան (Ամերիկա) 5900 մետր.
Մեծ Արարատ կամ
Մասիս (Ասիա) 5171 մետր:
Մաունա Քէա (Հաւայի) 4210 մ.:
Ֆուժիեամա (Ճապոնիա) 3780 մ.:
Քուք (Նոր-Զելանդիա) 3769 մ.:

### ՆՇԱՆԱՒՈՐ ԼՃԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ

| | Տարածութիւն քառ. կիլոմ. | Բարձրութիւն մետր |
|---|---|---|
| Կասպից ծով | 438,690 | 26 |
| Վերին լիճ | 81,380 | 183 |
| Վիկտորիա լիճ | 68,500 | 1200 |
| Արալ » | 67,770 | 48 |
| Միչիկան » | 66,280 | 177 |
| Պայքալ » | 34,180 | 470 |
| Նեասսի » | 26,500 | 480 |
| Մեծ Արջ » | 20,650 | — |
| Աթապասքա | 11,000 | 210 |
| Նիքարակուա | 9,470 | 33 |
| Մեծ Աղի » | 4,690 | 1,344 |
| Ուրմիոյ » | 4,400 | 1,559 |
| Վանայ » | 4,000 | 1,668 |
| Սևանայ » | 1,393 | 1,932 |
| Կոստանդիոյ | 539 | 398 |

### ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

| | մետր |
|---|---|
| Փարիզ, Էյֆէլի աշտարակը | 300 |
| Նիւ—Եօրք, Հուտսընի կամրջի աշտարակները | 173 |
| Վաշինգթոն, Վաշինգթոնի արձանը | 169 |
| Թուրին, Ազգային Թանգարանը | 164 |
| Ֆիլադէլֆիա, Խորհրդարանը | 163 |
| Ուլմ, Մայր եկեղեցին | 156 |
| Ռուան, Մայր եկեղեցին | 150 |
| Համբուրգ, Ս. Նիկողայոսի գանգակատունը | 147 |
| Ստրասբուրգ, Մայր եկեղեցին | 142 |
| Սեվիլեա, Խիրալտայ աշտարակը | 141 |
| Եգիպտոս, Քէոպսի բուրգը | 138 |
| Հռոմ, Ս. Պետրոսի գմբէթը | 138 |
| Վիէննա, Ս. Ստեփաննոսի զանգակատունը | 137 |
| Համբուրգ, Ս. Միքայէլի զանգակատունը | 133 |
| Եգիպտոս, Քեփրենայ բուրգը | 133 |
| Լոնդօն, Ս. Պօղոսի եկեղեցին | 111 |
| Բերլին, Մայր եկեղեցին | 110 |
| Միլան, Մայր եկեղեցին | 109 |
| Փարիզ, Զինուորակ. անկելանոցը | 105 |

### ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՔԱՂԱՔՆԵՐԸ

| | | |
|---|---|---|
| Լոնդօն | 6,550,000 | բնակիչ |
| Նիւ—Եօրկ | 3,500,000 | » |
| Փարիզ | 2,900,000 | » |
| Բերլին | 2,500,000 | » |
| Կանտօն | 2,000,000 | » |
| Վիէննա | 1,700,000 | » |
| Չիկագօ | 1,700,000 | » |
| Պետերբուրգ | 1,440,000 | » |
| Տօկիօ | 1,440,000 | » |
| Կալկուտտա | 1,330,000 | » |
| Կ. Պօլիս | 1,150,000 | » |
| Մօսկվա | 1,040,000 | » |
| Պեկին | 1,000,000 | » |
| Բօմբէյ | 850,000 | » |
| Բու-էնօս Այրէս | 840,000 | » |
| Րիօ Ժանէյրօ | 830,000 | » |
| Վարշաւա | 640,000 | » |
| Բրիւսել | 570,000 | » |
| Մադրիտ | 510,000 | » |
| Մելբուրն | 500,000 | » |
| Օդէսսա | 410,000 | » |
| Լօձ | 320,000 | » |
| Րիգա | 285,000 | » |

### ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ 50-ԱՄԵԱԿՈՒՄ:

| | | |
|---|---|---|
| Միացեալ Նահանգներում աւելացել են | 53,113,000 հ. | 107% |
| Ռուսաստան. | 39,520,000 » | 46 » |
| Գերմանիայում | 20,948,000 » | 46 » |
| Աւստրո-Ունգ. | 14,380,000 » | 38 » |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ռուսաստանում | 39,520,000 | » | 107 | » |
| Գերմանիայում | 20,948,000 | » | 46 | » |
| Աւստրօ-Ունգ. | 14,380,000 | » | 38 | » |
| Անգլիայում | 14,115,000 | » | 41 | » |
| Իտալիայում | 8,833,000 | » | 31 | » |
| Փրանսիայում | 3,340,000 | » | 9 | » |

## ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Իւրաքանչիւր 10,000 հոգուն գալիս է միջին թւով

| | պսակ | ծնունդ | մահ | աճում |
|---|---|---|---|---|
| Անգլիայում | 76 | 283 | 185 | 86 |
| Աւստրիայում | 83 | 383 | 255 | 92 |
| Ունգարիա. | 90 | 392 | 271 | 99 |
| Բելգիայում | 82 | 287 | 184 | 112 |
| Գերմանիա. | 86 | 359 | 215 | 155 |
| Դանիայում | 74 | 295 | 171 | 115 |
| Իտալիայում | 74 | 343 | 222 | 59 |
| Հօլլանդիա. | 75 | 320 | 171 | 131 |
| Յունաստան. | 88 | 288 | 139 | 150 |
| Շուեցարիա. | 78 | 290 | 176 | 113 |
| Ռուսաստ. | 91 | 498 | 316 | 182 |
| Ֆրանսիա. | 76 | 220 | 212 | 8 |

## ԿԱՆԱՆՑ ԵՒ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԹԻՒԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Իւրաքանչիւր 1000 տղամարդուն գալիս է միջին թւով հետեւեալ քանակութեամբ կանայք.

Անգլիա.—1048, Աւստրիա—1044
Ունգարիա.—1015, Բելգիա.—1005
Գերմանիա —1032 Դանիա.—1053
Իտալիա.—995 Հօլլանդիա.—1025
Յունաստան—919 Շուեցար.—1056
Շուեդիա.—1050 Ռուսաստ.—1028
Սերբիա.—944, Ռումինիա.—974
Ֆրանսիա.—1014:

## ՊՕՍՏԱՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Անցեալ 1899 թ. ընթացքում իւրաքանչիւր 100 հոգուն ուղարկուած է միջին թւով

| | Լրագիր Քանի օրինակ | Նամակ | Հեռագիր |
|---|---|---|---|
| Անգլիա | 402 | 6553 | 227 |
| Աւ. Ունգ. | 464 | 4103 | 55 |
| Բելգիա | 1893 | 2787 | 100 |
| Գերման. | 2584 | 4583 | 80 |
| Դանիա | 3821 | 3815 | 90 |
| Իտալիա | 577 | 1033 | 33 |
| Հօլլանդիա | — | 2957 | 103 |
| Յունաստան | 320 | 347 | 45 |
| Շուեցար. | 3974 | 6681 | 136 |
| Շուեդիա | 2467 | 1624 | 53 |
| Ռուսաստ. | 178 | 358 | 13 |
| Սերբիա | 181 | 353 | 27 |
| Ֆրանսիա | 1676 | 2606 | 109 |

## ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՈՒՐԻՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ռուսաստանում տարեցտարի զարգանում է երկաթուղիների ցանցը: Այսպէս 1892 թ. երկաթուղիների ամբողջ գիծը հասնում էր 31,377 վերստի, իսկ 1901 թ. 60,000 վերստից աւելի է: Բայց ուրիշ երկրների համեմատութեամբ դա շատ չնչին երկարութիւն է: Իբրև ապացոյց բաւական է յիշել այն փաստը, որ իւրաքանչիւր միլլիօն բնակչին գալիս է՝

| | | | |
|---|---|---|---|
| Ռուսաստ. | —415 | վեր | երկաթուղի |
| Աւստ. Ունգ. | —716 | » | » |
| Անգլիայում | —796 | » | » |
| Գերմանիա. | —848 | » | » |
| Ֆրանսիա. | —1033 | » | » |
| Միաց. Նա. | —3622 | » | » |

Իւրաքանչիւր 1000 քառ. վերստ տարածութեան վրա կայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ռուսաստ. | —9,27 | վեր. | երկաթուղի |
| Միաց. Նա. | —35,3 | » | » |
| Աւստ Ուն. | —55,7 | » | » |
| Ֆրանսիա. | —84,4 | » | » |
| Գերմանիա | —100,4 | » | » |
| Անգլիա. | —118,4 | » | » |

## ՄԱՀԱՑՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ

Վիճակագրական տեղեկութիւնները * ցոյց են տալիս, որ անցեալ 1887—1896 թ. միջին թւով մեռել են իւրաքանչիւր 1000 հոգուց.

Շուեդիա.—16,3 Նորվեգիա—16,6
Իռլանդիա—18,1 Դանիա—18,2
Անգլիա—18,4 Շոտլանդիա—18,8
Բելգիա—19,6 Հօլլանդիա—19,7
Շուեցարիա —19,8 Ֆրանսիա—21,6
Գերմանիա—23,0 Իտալիա—25,4
Սերբիա—27,3 Աւստրիա—27,7
Ունգրիա—31,0 Ռումինիա—31,0
Եւրոպ. Ռուսաստ.—32,2

* Д. А. Соколовъ и Гребенщиковъ «Смертность въ Россiи и борьба съ нею».

# Հայերը

## ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Որևէ ժողովրդի հասարակական կեանքի մէջ տեղի ունեցող մտաւոր, քաղաքական ու տնտեսական գլխաւոր երևոյթները ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ ճիշտ վիճակագրութիւն, առանց որի ուսումնասիրութիւնը որևէ նշանակութիւն ունենալ չէր կարող: Հէնց այս տեսակէտից որքան էլ հետաքրքիր լինէր մեզ իմանալ հայերի ընդհանուր ճիշտ թիւը իրանց բնակավայրերում, կենցաղական ներկայ հանգամանքների մէջ, անկարելի է:

Միակ երկիրը, որտեղ ապրում է հայ ժողովրդի մի ստուար թիւ և որի մասին կարելի է մի քանի ճիշտ տեղեկութիւններ տալ, դա Ռուսաստանն է՝ յատկապէս Կովկասեան շրջանը: Ռուսաստանի միւս մասերում ապրող հայերի մասին վիճակագրութիւն ձեռքի տակ չունենք:

1897 թուի միօրեայ վիճակագրութեամբ ամբողջ Կովկասում ապրող հայերի թիւը* հաշուած է 1,128,673: Որպէսզի ցոյց տանք, թէ իւրաքանչիւր նահանգում ապրող հայ ժողովուրդը նահանգի ընդհանուր ազգաբնակութեան որ տոկոսն է կազմում, առաջ կբերենք հետևեալ աղիւսակը. (տես էջ 163, աղ. I)

Ինչպէս տեսնում էք, Կովկասում ապրող հայ ազգաբնակութեան մի խոշոր մեծամասնութիւնը ոչ միայն կենտրոնացած է մի երկու նահանգներում, այլ և կազմում է այդ նահանգների ընդհանուր ազգաբնակութեան մի շօշափելի մասը, ինչպէս է Կարսի, Թիֆլիսի, Գանձակի մանաւանդ Երևանի նահանգը, ուր հայերը կազմում են ազգաբնակութեան 52,3%, իսկ Կովկասում ապրող բոլոր հայերի 38,3%-ը:

Ախալցխացի հայուհի:

Տնտեսական և կուլտուրական առաջադիմութեան տեսակէտից շատ մեծ նշանակութիւն ունի մի ժողովրդի աճման պրօցեսը ընդհանուր ազգաբնակութեան աճման համեմատութեամբ:

Այդ համեմատութիւնը պատկերացնելու համար դիմենք հետևեալ աղիւսակներին. (էջ 163, աղ. II, III).

Ի՞նչ են ապացուցանում առաջ բերած թուերը: 1886 թուի ժողո-

*) Այս տեղեկութիւնները մենք վերցրել ենք երկու պաշտօնական հրատարակութիւններից. 1. Кавказскій календарь на 1903 г 2. Памятная книжка Эриванской губерніи на 1902 г.

Աղ. I.

| Նահանգները | Բոլոր բնակիչ. | Հայերը | Հայ. ու %-են |
|---|---|---|---|
| Երևանի | 829550 | 438682 | 52,2 |
| Գանձակի | 878185 | 293632 | 33,4 |
| Թիֆլիսի | 1054250 | 221033 | 21 |
| Կարսի | 290645 | 72967 | 25,1 |
| Բաքուի | 826806 | 50550 | 06,1 |
| Քութայիս. | 1057243 | 21107 | 01,9 |
| Դաղստան. | 571381 | 941 | 00,2 |
| Չերնօմոր. | 57478 | 6226 | 10.8 |
| Հիւս.-Կով. | 3725543 | 28835 | 02,5 |
| Ընդամենը | 9291081 | 1128973 | 12.1 |

Աղ. II.

Կովկասի ամբողջ ազգաբնակութ. աճումը 11 տարուայ ընթացքում:

| Նահանգներ | 1886 թ. | 1897 թ. | Աճել է % |
|---|---|---|---|
| Երևանի | 670405 | 829550 | 23,7 |
| Գանձակի | 728943 | 878185 | 20.4 |
| Թիֆլիսի | 882592 | 1054250 | 19.4 |
| Կարսի | 174044 | 290645 | 67 |
| Բաքուի | 721703 | 826806 | 16 |
| Քութայիսի | 923306 | 1057243 | 14,5 |
| Դաղստան. | 592780 | 571381 | 03,6 |
| Չերնօմոր. | 18125 | 57478 | 216 |
| Հիւս.-Կով. | 2600151 | 3725543 | 43,2 |
| Ընդամենը | 7303046 | 9291081 | 27 |

Աղ. III.

Կովկասաբնակ հայերի աճումը նոյն 11 տարուայ ընթացքում·

| Նահանգներ | 1886 թ. | 1897 թ. | Աճել է % |
|---|---|---|---|
| Երևանի | 375700 | 438682 | 15,4 |
| Գանձակի | 258324 | 293632 | 13,7 |
| Թիֆլիսի | 194131 | 221033 | 13,8 |
| Կարսի | 37094 | 72967 | 97 |
| Բաքուի | 55459 | 50550 | 00 |
| Քութայիսի | 16399 | 21107 | 28 |
| Դաղստան. | 1054 | 941 | 10,7 |
| Չերնօմոր. | 970 | 6226 | 54,2 |
| Հիւս.-Կով. | 31524 | 28835 | 08,5 |
| Ընդամենը | 970656 | 1128973 | 16,3 |

վիճակագրութիւնից մինչև 1897 թ. միօրեայ ժողովրդագրութիւնը Կովկասում ընդհանուր ազգաբնակութիւնը աճել է 27%, մինչդեռ հայ ազգաբնակութեան աճումը եղել է ընդամենը 16,3%, այլ խօսքով ընդհանուր ազգաբնակութեան համեմատութեամբ հայ ժողովրդի աճումը մի երրորդով պակաս է եղել: Այս երևոյթը բացատրելու համար վերցնենք հետևեալ համեմատութիւնը:

| Նահանգներ | 1897 թ. ազգաբնա. թիւը | Տարածութիւն քառ. վերստ | Մի քառ. վ. վրա ապրմէ |
|---|---|---|---|
| Երևանի | 829550 | 25012 | 33,2 |
| Գանձակի | 878185 | 38949 | 22,5 |
| Թիֆլիսի | 1054250 | 40197 | 26,2 |
| Կարսի | 290645 | 16869 | 17,2 |
| Բաքուի | 826806 | 35017 | 23,6 |
| Քութայիսի | 1057243 | 32583 | 32,4 |
| Դաղստան. | 571381 | 26814 | 21.3 |
| Չերնօմոր. | 57478 | 5994 | 9,6 |
| Հիւս.-Կով. | 3725543 | 194590 | 19 |
| Ընդամենը | 9291028 | 416028 | 22,3 |

Ազգաբնակութեան աճման աղիւսակից մենք տեսանք, որ Հիւսիսային Կովկասում աճումը հասել է մինչև 43,2%, այն ինչ Անդրկովկասում 19,4%-ից այն կողմը չի անցել. իսկ վերջին աղիւսակից երևում է, որ Անդրկովկասում ազգաբնակութիւնը աւելի խիտ է բնակեցրած, քան Հիւսիսային Կովկասում: Առաջինում իւրաքանչիւր քառակուսի տարածութեան վրա ապրում է 25 հոգի. իսկ երկրորդում միայն 19-հետևապէս որքան ազգաբնակութիւնը խիտ է բնակեցրած, այնքան նրա աճումը դժուարացրած է և ընդհակառակը*: Այսպէս լինելուց յետոյ դժուար չէ առաջին հայեացքից նոյն իսկ գուշակել հայերով խիտ բնակեցրած նահանգների ազգաբնակութեան դրութիւնը, մանաւանդ Երևանի, ուր խիտ բնակութիւնը առաջին տեղն է բռնում Կովկասում, այն է 33,2 բնակիչ մի քառակուսի վերստ տարածութեան վրա: Պարզ է, որ տարբեր պայմաններում ժողովրդի աճման պատճառներն էլ տարբեր պէտք է լինի:

*) Ծան. Բացի դրանից ազգաբնակութեան աճման տեսակէտից շատ մեծ դեր են խաղում նաև երկրի տեղագրութիւնը, կլիման, արդիւնաբերութիւնը, արդիւնագործութիւնն ու ժողովրդի կուլտուրան:

Հայ ազգաբնակութեան նուազ չափով աճումը Երևանեան նահանգում ունի և ուրիշ պատճառներ։

Նա բնակեցրած է նահանգի այնպիսի տեղերում, գտնւում է անտեսական այնպիսի պայմանների մէջ, որ նրա աճումը մեծ խոչնդոտների պիտի հանդիպէր՝ անկախ նահանգի ընդհանուր դրութիւնից։ Ալէքսանդրապոլի ամբողջ գաւառը, Էջմիածնի գաւառի մի մասը-Աբարանը և վերջապէս Նոր-Բայազիդի գաւառը, Դարաչիչագի գաւառամասով, որոնք լեռնային կլիմա և ապառաժոտ ու կարծր մակերևոյթ ունենալով, միանգամայն զուրկ են դաշտային բոյսեր աճեցնող յատկութիւնից, բնակեցրած են հայերով։ Այդ մասերի ժողովուրդը, որքան էլ աշխատող, չար քաշ կեանքին սովոր և դաժան բնութեան դէմ տոկուն կռւող է հանդիսանում, այնուամենայնիւ նրա անտեսութիւնը չի կանոնաւորւում, նրա դրութիւնը չի բարւոքւում և ընդհակառակը նա ենթակայ է անվերջ անտեսական քայքայման, ստիպւած է լինում յաճախ թողնել իր անհիւրընկալ արտն ու արօտը, տունն ու տեղը և դուրս գալ գիւղից դէպի գործարանական քաղաքներ — դէպի մշակութիւն, դէպի այն տեղ, ուր համեմատաբար աւելի դիւրին է մի կտոր չոր հաց ձեռք բերելը։ Բնական է, որ այդ տեղերում ազգաբնակութիւնը կնուազի, կամ աւելի ճիշտն ասած՝ կաճի աննշան չափով տալով այն ընդհանուր երևոյթը, որը մենք տեսնում ենք։

Ս.—Դօ.

Ղազախեցի հայեր։

Շամախեցի հայուհի։

# ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

(Ընդհանուր ակնարկ)

Նախկին լայնարձակ և հզօր Իրան ինքնակալութեան ողորմելի մնացորդը-այժմեան Պարսկաստանը, հազիւ 7 միլլիօն ազգաբնակութիւն ունի։ Այդ ազգաբնակութիւնը բաղկացած է զանազան տարրերից-բուն պարսիկներից, թիւրքերից, քրդերից, արաբներից, հրէաներից, ասորիներից և հայերից։ Հայերի թիւը բովանդակ Պարսկաստանում այժմ 100,000-ից աւելի չէ, ուրեմն հայերը հազիւ կազմում են ազգաբնակութեան 0,7%-ը։ 17 և 18-րդ դարերում հայերի մեծ բազմութիւն կար Պարսկաստանում, բայց 18-րդ դարի վերջին կիսից և 19-րդի սկզբում հայերը մեծ թւով գաղթեցին Հնդկաստան, Ռուսաստան և նոյն իսկ այժմ էլ գաղթում են ու նրանց թիւը հետզհետէ նուազում է։

Այդ 100,000 հայ ժողովրդի կէսը բնակւում է Ատրպատական կամ Ադրբէյջան կոչուած կուսակալութեան մէջ, իսկ մնացած կէսը բնակւում է բուն Իրանի նահանգներում, գլխաւորապէս Սպահանի կուսակալութեան մէջ և Գիլան կամ Մազանդարա նահանգներում։

Ատրպատականը ամենահին ժամանակներից յայտնի է եղել իբրև հայաշատ երկիր և մի ժամանակ կազմել է նոյն իսկ Հայաստանի մի մասը։ Սակայն այդ նահանգի հայ ազգաբնակութեան մի մասը, 19-րդ դարի սկզբին, ռուս-պարսկական պատերազմից յետոյ գաղթեց Երևանի նահանգը և հաստատուեց գլխաւորապէս Նախիջևան գաւառի գիւղերում։ Հայերի այդ գաղթականութիւնը կատարուեց 1828-ին և գաղթեցին 8249 ընտանիք, ուրեմն մօտ 70-80,000 հոգի։ Դրանից յետոյ, մի քանի անգամ էլ փոքր թւերով գաղթականութիւններ են եղել, օրինակ 1871 թուի սովի ժամանակ այնպէս որ 19-րդ դարի ընթացքում մօտ 100,000 հոգի հայ գաղթել են Ադրբէյջանի նահանգից՝ Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի գաւառները։ Դեռ 17-րդ դարին, 1665 թուին, Շահ-Աբբասի ժամանակ կատարուած մեծ գաղթականութեան ժամանակ Ադրբէյջանի գիւղերի և Թաւրիզ քաղաքի մի մասը նոյնպէս գաղթեց Սպահանի, Ատրպատականի հայերի գաղթականութեան հետ միասին։ Այդ փաստերը և մի քանի այլ տեղեկութիւններ ցոյց են տալիս, որ 17-րդ դարում Ատրպատականի նահանգում մօտ 300,000 հայ է եղել, իսկ այսօր այդ թիւը յանգել է 50.000-ի։

Բուն Իրանի հայերը մնացորդ են այն մեծ գաղթականութեան, որ 1665-ին կատարուեց Շահ Աբբաս I-ի ձեռքով. այդ բռնակալը դատարկեց Ատրպատական դաշտը Բասենի. Շիրակի, Գանձակի, Արտազի և այլ գաւառները հայերից և գաղթեցրեց բուն Պարսկաստան 24,000 ընտանիք կամ 200,000 հոգի, որոնց բնակեցրեց Սպահանում, Քեաշանում, Ղազվինում, Գիլանում և մանաւանդ Սպահան նահանգի գաւառներում—Ալինջան, Լինջան, Խանլըխան, Ջղախոս, Փերիալ Ալիագար, Քեարվանդ, Ղարաղան և այլն։ Հին Ջուղայի 8000 բնակիչներին էլ գաղթեցնելով, Սպահանի մօտ Զինդառուտ գետի միւս կողմը, շինեց Նոր-Ջուղա աւանը։ Նոր-Ջուղան շուտով մեծ հռչակ ստացաւ և բարգաւաճեց, ճոխացաւ ու աշխարհահռչակ անուն ստացաւ Արևելքում և Արևմուտքում։ Նրա բնակիչների թիւը դեռ 1665թ. հասնում էր 12,000-ի։ Նոր ջուղայեցիները, որոնց հովանաւորում էր Շահ Աբբաս Մեծը և նոյն իսկ իր դրամագլխով ընկերացել էր նրանց, իրանց լայնածաւալ վաճառականութեամբ ամբողջ Արևելքի առևտուրը Արևմուտքի հետ իրանց ձեռքն էին ձգել։

Նոր-Ջուղան ահագին դեր է խաղացել և հայոց պատմութեան մէջ. նա տուել է հայ ազգին շատ նշանաւոր անձինք-ազգային գործիչներ, գիտնականներ, հոգևորականներ: Սակայն նրա բարգաւաճումը տևեց մինչև աֆղանների արշաւանքը Պարսկաստանի վրա(1722թ.) թէ աֆղանները և թէ յետագայ տիրապետողները, մանաւանդ Նադիր-Շահը մեծ աղէտներ հասցրին Նոր-Ջուղայեցիներին և կործանեցին նրանց բարգաւաճ վիճակը: Նոր Ջուղայեցիները սկսեցին գաղթել Հնդկաստան, Ռուսաստան և այլ երկրներ և Նոր-Ջուղան ամայանալով, աղքատանալով, դարձաւ հետզհետէ մի խղճուկ գիւղաքաղաք. նրա 12,000 բնակիչներից այսօր մնում է 400 տուն, իսկ 24 եկեղեցիներից կանգուն են միայն տասը, որոնց մէջ հռչակուած է Ամենափրկչի վանքը, որ մի ժամանակ էջմիածնի հաւասար պատիւ և հեղինակութիւն ունէր:

Պարսկաստանի վերոյիշեալ երկու մասերում բնակւող հայերը կազմում են երկու առաջնորդութիւն՝ Ատրպատականի և Ամենափրկչի վանքի կամ Պարսկա-Հնդկաստանի առաջնորդութիւն: Ատրպատականի առաջնորդը նստում է Թաւրիզ քաղաքում, ուր մի ժամանակ նոյնպէս եղել է հայերի մեծ բազմութիւն և ունեցել է նշանաւոր եկեղեցիներ (այժմեան Մայր մզկիթը հայոց Ս. Յովհաննէս անունով եկեղեցին է եղել)-թէև առաջնորդները առաջ նստում են եղել Արտազի Ս. Թադէոս Առաքեալի վանքում մինչև 19-րդ դարի երեսնական թուականները: Պարսկա-Հնդկաստանի առաջնորդը նստում է Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքում:

Ատրպատականի առաջնորդական թեմը կազմում են՝ Թաւրիզ, Արդաբիլ, Աստարա, Խոյ, Ուրմի, Մարաղա, Սովուջբուլաղ քաղաքները և Ղարադաղ, Սալմաստ, Սուլդուզ, Մաքու գաւառները իրանց գիւղերով: Թաւրիզը ամբողջ Պարսկաստանի ամենամեծ հայաշատ քաղաքն է (600 տուն), իսկ Սալմաստը՝ ամենամեծ հայաշատ գաւառը: Այդ առաջնորդութեան մէջ կան երկու հռչակաւոր պատմական վանքեր՝ Նախավկայ Ստեփաննոսի վանքը՝ Արաքսի ափին և Արտազի Ս. Թադէոս Առաքեալի վանքը՝ Մաքուի խանութեան մէջ: Կայ և, այժմ կիսաւեր, Դէրիկի վանքը: Ինչպէս ասացինք, ամբողջ թեմի հայերի թիւը հազիւ հասնում է 50,000-ի:

Պարսկա Հնդկաստանի կամ Ամենափրկչի վանքի թեմը կազմում են Նոր Ջուղա կամ Սպահան, Շիրազ, Բուշիր, Թէհրան, Ղազվին, Համադան, Զէնջան, Րաշտ, Էնզելի, Մեշիդիսար քաղաքները և Համանուն գաւառները իրանց գիւղերով ու ամբողջ Հնդկաստանը, Ջաւա կղզին: Հնդկաստանի հայաբնակ քաղաքները և տեղերն են—Բոմբէյ, Սուրաթ, Մադրաս, Կալկաթա, Չիչրա, Դաքա, Սէյդաբադ, Սինգապուր, Պինանգ, իսկ Ջաւա կղզու հայաբնակ տեղերն են—Բատաւիա մայրաքաղաքը՝ Սուրաբայա, Չերբոն, Թգալ, Բանիւումաս, Ջպարա և Սամարանգ:

Հնդկա-Չինաստանը ևս ինչպէս և Աւստրալիան համարւում է թեմ Ամենափրկչի վանքի: Սակայն ամբողջ Հնդկաստանում և Ջաւայում հայերի թիւը 500 ից աւելի չէ, իսկ Ամենափրկչի վանքի կամ Պարսկա-Հնդկաստանի ամբողջ թեմի հայերի թիւը 50,000-ի է հասնում, ինչպէս ասացինք:

**Պարսկահայերի քաղաքացիական վիճակը:** Պարսկաստանը, չունենալով որոշ, հաստատ քաղաքացիական օրէնսդրութիւն, ազգաբնակութիւնը, որի հետ և հայ ժողովուրդը ենթակայ են շարունակ կառավարիչների, կալուածատէրերի կամայականութեան, մանաւանդ գիւղերում: Ժառանգական և կալուածական-հողային խնդիրների վերաբերմամբ ոյժ ունի Շարիաթը, որին ենթարկւում են և հայերը: Սակայն, համեմատելով այլ տարրերի հետ, հայերի վիճակը աւելի նախանձելի է. նախ՝ հայերը, իբրև ոչ-մուսուլմաններ, գտնւում են ար-

տաքին գործերի մինիստրութեան իրաւասութեան տակ և նրանց ունեցած դատերին, վճռերին վերահասութիւն են գործում այդ մինիստրութեան գործակալները: Սալմաստում կայ յատուկ մի պաշտօնեայ սարփարաուս անունով՝ հայերի և ասորիների համար: Երկրորդ՝ հայերի ներկայացուցիչ կամ ազգապետ են համարւում առաջնորդները և նրանց ներկայացուցիչները և շատ խնդիրներ, դատեր կարգադրւում են առաջնորդները և նոյն իսկ ինքը կառավարութիւնը յանձնում է նրանց դատաստանին ու վճռին որոշ խնդիրներ: Երրորդ՝ հայերը վայելում են քրիստոնեայ պետութիւնների, գլխաւորապէս Ռուսաստանի և Անգլիայի պաշտպանութիւնը. 1828-ի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, Թաւրիզի հայերը անգլիական դեսպանի միջնորդութեամբ, որով հայերը ճանաչւում են պաշտօնապէս Անգլիայի պաշտպանեալներ (protégés): Քաղաքներում և գիւղերում հայերը ունեն իրանց մելիքներն ու քեթխուդաները: Վերջապէս, չորրորդ՝ հանգուցեալ Նասրէդդին Շահից սկսած պարսից կառավարութիւնը առանձին խնամք և բարի վերաբերմունք է ցոյց տալիս դէպի հայերը և այդ հայասէր քաղաքականութիւնը շարունակւում է մինչև այսօր: Այդ բոլոր հանգամանքները ստեղծել են հայերի համար նպաստաւոր վիճակ, համեմատելով, իհարկէ, ընդհանուր ազգաբնակութեան վիճակի հետ: Այնուամենայնիւ հաստատ, մշտական օրէնքների բացակայութիւնը, ընդհանուր-բռնապետական ռէժի-

Թեհրանի դուռը:

մը դժար է տեղ-տեղ, մանաւանդ խոյ և հեռաւոր գաւառներում, նաև հայերի համար:

Հայերը Պարսկաստանում-(սակայն ոչ օտարահպատակ հայերը)-իրաւունք ունին անշարժ կալուածներ—տներ, գիւղեր, այգիներ ձեռք բերել Շէրիաթի օրէնքի համաձայն. նրանց առաջ բաց են զանազան քաղաքացիական ու զինւորական պաշտօններ և կարող են նոյն իսկ բարձր պաշտօնների հասնել: Այսպէս օրինակ, մի քանի տարի առաջ Ջհանգիր խան Ենիկոլոպեանը պատերազմական և արուեստների մինիստր էր. Նրա եղբայր Նարիման խանը ամբողջ 25 տարի Վիէննայի դեսպան էր. Միրզա Մելքոն խանը առաջ Լոնդոնի և այժմ Հռոմի դեսպան է. Յովհաննէս խան Մասեհեան՝ Շահի առաջին թարգմանը, առաջին կարգի քաղաքացիական զօրապետ և այժմ Բեռլինի դեսպանատան աւագ խորհրդական է. Միրզա Մարտիրոսեան Դաւիթ խանը՝ էմիր Թուման (մարաշալ). Իշխան Վահրամ խան Դատեանը՝ Շահի ադիւտանտ և գեներալ, Արշակ խան Գորոյեանը՝—Շահի ադիւտանտ: Թաւրիզում՝ Ծատուրեան Ալթինեան, Թադէոս խան Վահրամեան, Անտոնեան, Երուանդեան և Աւագ խան Աֆթանդիլեան—նոյնպէս պետական պաշտօններ են վարել և վարում են: Ոչ միայն զօրքի, այլ և վարչական զանազան պաշտօններում հայ երիտասարդները պաշտօն են ստանում: Բուշիրի մաքսատան կառավարիչը մի բողոքական հայ է—Յովսէփ Միրզայեանը, ոչ անյայտ և մեր գրականութեան մէջ, նրա եղ-

բայց Միրզա Միրզայեանը Թէհրանի կենտրոնական պօստատան վերատեսուչ է: Թաւրիզի մաքսատան մէջ էլ շատ հայեր պաշտօն ունին, թէեւ պէտք է ասել, որ եւրոպացիները հետզհետէ մուտք գործելով Պարսկաստան, դուրս են մղում հայերին և, յամենայն դէպս, առաջնակարգ պաշտօնները նրանք են գրաւում: Այս էլ պէտք է յիշել, որ հայերը պատրաստ չեն, շատ սակաւ կրթական ցենզ ունին, հետեւաբար մրցել եւրոպացիների հետ կարող են միայն այն ժամանակ, երբ նրանց հաւասար կրթական ցենզ ունենան:

Հայերի առաջ բաց է և առեւտրական ասպարէզը, ինչպէս և արհեստները, բացի հացագործութիւնից, նպարավաճառութիւնից և մսավաճառութիւնից: Այդ արհեստները, Շէրիաթի համաձայն, Մուսուլման երկրում կարող են վարել միայն մուսուլմանները: Թէեւ ի նկատի ունենանք և այն, որ հայերը քաղաքներում ազատ են պետական հարկից, պէտք է ընդունել, որ չընայելով Պարսկաստանի բռնապետական ռէժիմին, հայերը վայելում են որոշ քաղաքացիական իրաւունքներ ու արտօնութիւններ:

Հայերի տնտեսական վիճակը: Պարսկահայերի տնտեսական վիճակը շատ էլ նախանձելի չէ: Հայ ժողովրդի մեծ մասը գիւղական լինելով, պարապում է երկրագործութեամբ և այգեգործութեամբ, այն էլ բոլորովին նահապետական ձեւով: Մի փոքր մասը պարապում է արհեստներով—ոսկերչութիւն, հիւսնութիւն, դերձակութիւն, իսկ մի մասն էլ վաճառականութեամբ: Այդ ասպարէզում հայերը պատուաւոր և գրեթէ բացառիկ դիրք էին գրաւում մինչեւ վերջերս և դեռ այսօր էլ գրաւում են մասամբ: 19-րդ դարի առաջին կէսից սկսած, հայերը միակն էին, որ սկսեցին պարապել վաճառականութեամբ Պարսկաստանի մէջ և հաստատեցին առեւտրական յարաբերութիւններ Եւրոպայի, Ռուսաստանի և Հնդկաստանի հետ: Պարսկաստանից հայերը արտահանում են գլխաւորապէս չոր մրգեղէն—չամիչ, ծիրան, նուշ, սալոր, չիր և մազեղէն, բամբակ, մետաքս, գորգ, իսկ Եւրոպայից և Ռուսաստանից բերում են՝ մահուդ, չիթեղէն, ապակեղէն, մետաղեղէն և այլն: Բացի դրանից հայ վաճառականները պարապում են բանկային գործողութիւններով: Հայ առեւտրական տների մէջ անցեալ դարի 80-ական թուականներին նշանաւոր էին՝ Թումանեան, Նազարբէկեան, Վարդանեան, Տէր-Օհանեան տները, վերջին տարիները յայտնի դարձան Յրամեան, Աւան, Արաքս ընկերութիւնները, սակայն այսօր հանրահռչակ է և մեծ հեղինակութիւն է վայելում ամբողջ Պարսկաստանում Թումանեան եղբարց առեւտրական տունը, որ Պարսկաստանի գրեթէ բոլոր քաղաքներում ունի տներ և գործակալութիւն:

Սակայն երբ եւրոպացիները ըսկսեցին մուտք գործել Պարսկաստան—40 տարի առաջ—հաստատել առեւտրական տներ, երբ վերջերս հիմնուեցին անգլիական և ռուսական տներ, հայերը հետզհետէ յետ մղուեցան և այսօր առեւտրական ասպարէզում այլ եւս նշանաւոր դեր չեն խաղում, մանաւանդ, որ իրանք պարսիկները ևս, բանկերի աջակցութեան շնորհիւ, մեծ առաջադիմութիւն են սկսել ցոյց տալ այդ ասպարէզում:

Հայերի առեւտրական գործողութիւնները տարեկան հազիւ հասնին 4-5 միլիոնի:

Հայերի մի մասը ևս, գլխաւորապէս Ղարաբաղի հայերը, ամեն տարի անցնում են Կովկասի զանազան քաղաքները և պարապում են բեռնակրութեամբ՝ համալութեամբ:

Կրթական վիճակը: Գրեթէ բոլոր հայաբնակ քաղաքները դպրոցներ ունին, մեծ մասը երկսեռ: Կան դպրոցներ—Թաւրիզ, Մարաղա. Ուրմի, Արդաբիլ, Թէհրան, Համադան. Նոր-Ջուղա, Ղազվին, Ռաշտ, Էնզէլի քաղաքներում, Սալմաստի, Ղարադաղի և Նոր-Ջուղայի մի

քանի գիւղերում. բայց գիւղերի մեծամասնութիւնը, մանաւանդ Լօրիստանի կողմերում, զրկուած է դըպրոցից: Դպրոցները միդասեան և երկդասեան են. միայն Թաւրիզի դպրոցները 4-դասեան և 6-դասեան են, այսինքն ունին ուսման այնպիսի ծաւալ, ինչպէս մեզանում պրօգիմնազիաները և 4-դասեան քաղաքային ուսումնարանները: Ամբողջ Պարսկաստանի մէջ հայերը չունին գիմնազիական ծաւալով մի ուսումնարան: Բացի ազգային դպրոցներից կան և բողոքականների ու կաթոլիկների դպրոցներ, որտեղ յաճախում են հայ մանուկները և սովորում են գրագիտութիւն, անգլիերէն, գերմաներէն և ֆրանսերէն. այդ դպրոցներից աւարտողները, լեզուագիտութեան պատճառով կարողանում են լաւ պաշտօն և գործ գտնել:

Դպրոցները կառավարւում են ընտրուած հոգաբարձուների ձեռքով. նրանց նիւթական միջոցները, բացի մի քանիսից, ապահով չեն: Թէհրանի և Թաւրիզի դպրոցները նպաստ են ստանում Պարսից կառավարութիւնից 200-ական թուման (400 ր.): Թաւրիզի դպրոցը 400 ր. նպաստ է ստանում և Ռուսաց կառավարութիւնից՝ ռուսերէն լեզուի ուսուցման համար:

Մեր հաշւով Պարսկաստանի բոլոր հայ դպրոցների մէջ հազիւ 2500-3000 աշակերտ և աշակերտուհի լինին: Կրթական գործը կաղում է այն պատճառով, որ չըկայ ընդհանուր կրթական կազմակերպութիւն և վարչութիւն:

**Հոգեւոր վարչութեան եւ հոգեւորականութեան վիճակը:** Պարսկաստանի երկու հայ թեմերը գտնւում են Հայոց Կաթուղիկոսի անմիջական իրաւասութեան տակ և առաջնորդները նշանակւում են Կաթուղիկոսի կոնդակով և հաստատւում Շահի ֆիրմանով: Միայն Ատրպատականի թեմի վերջին առաջնորդական ընտրութիւնը, Կաթուղիկոսի կարգադրութեան համաձայն, կատարուեց թեմի ժողովրդի ձեռքով: Առաջնորդները ինքնագլուխ տնօրինում և ղեկավարում էին թեմի բոլոր գործերը: 1890թ. առաջին անգամ Նոր-Ջուղայի առաջնորդ Եսայի եպիսկոպոսը հաստատեց առաջնորդական խորհրդատու մարմին՝ բաղկացած քահանաներից, մեր կոնսիստորների նմանութեամբ:

Այս տարուանից կաթուղիկոսական հրամանով մտցնուեց Ատրպատականի թեմի մէջ թեմական կանոնադրութիւն, որի համաձայն Ատրպատականի թեմն էլ պէտք է ունենայ առաջնորդական խորհրդարան, որի անդամները պէտք է լինին աշխարհականներ՝ ընտրուած թեմի ժողովրդից: Ընտրողական սկզբունքը հետզհետէ մտնում է Պարսկաստանի հայերի մէջ և ազգային գործերի ղեկավարութիւնը դառնում է ժողովրդական:

**Ընդհանուր կուլտուրական վիճակ:** Բացի դպրոցներից, պարսկահայերը ունին բարեգործական հաստատութիւններ—Թաւրիզում, Թէհրանում, Րաշտում. ընթերցարան-գրադարաններ—Թաւրիզում, Թէհրանում, Մարաղայում, Սպահանում, Րաշտում. հակաալկոհօլական ընկերութիւն՝ Թէհրանում, խնայողական ընկերութիւն՝ Թէհրանում, տպարաններ՝ Նոր-Ջուղա, Թէհրան և Թաւրիզ: Լրագրութիւն չկայ,* թէև մի քանի տարի առաջ Թէհրանում հըրատարակւում էր „Շաւիղ" և „Աստղ արեւելեան" թերթերը: Հայերը հետզհետէ մասնակցում են ընդհանուր եւրոպական քաղաքակրթութեանը և թէև դանդաղ, բայց այնուամենայնիւ քիչ քիչ առաջադիմում են այդ օգտակար ճանապարհով:

Հ. Առաքելեան

* **Ծանօթ.** Այս տարուայ (1903) Օգոստոս ամսի 10-ին Թաւրիզում, լոյս տեսաւ «Գործ» պաշտօնական, գրական, գիտական և առեւտրական շաբաթաթերթի առաջին համարը, որը աւետեց հայ հասարակութեանը, թէ 1904 թուականից այդ նոր թերթը կանոնաւոր հրատարակուելու է շաբաթը մի անգամ: Ողջունում ենք հայկական նոր շաբաթաթերթի երեւան գալը և ցանկանում նրան լիուլի աջողութիւն՝ մեր պարսկահայ եղբայրների մտաւոր անդաստանը մշակելու և ընթերցանութեան օգտակար նիւթեր մատակարարելու համար: Խմբ.

## ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅԵՐԸ

Փոքր Ասիայի ափերի մօտ—(Կիլիկիայի ցամաքից 40 մղոն հեռաւորութեամբ)—գտնւող Կիպրոս կղզու վրա էլ հայեր են ապրում:* Մեծ չէ այդ կղզին. նրա երկարութիւնն է 144 մղոն, իսկ լայնութիւնը 60 մղոն: Բայց և այնպէս նա Միջերկրական ծովի կղզիների մէջ երկրորդն է իր պատմական ու տնտեսական նշանակութեամբ:

Դեռ շատ հին ժամանակներում այդ նշանաւոր կղզու վրա հաստատուել է հայ գաղթականութիւն, բայց «ոչ մէկ հայ կայ այժմ, որ սերուած լինի վաղեմի գաղթականութիւնէն»:

Վերջին մարդահամարի ժամանակ (1901թ.) Կիպրոսի հայերի թիւն էր 562 հոգի, որոնց մեծ մասը Նիկոսիայում, իսկ մնացածը՝ Լարնակա, Ս. Մակարի վանքը, Ֆամակուսթա, Լիմասոլ և Բաֆոս:

Նոյն իսկ բնիկ տեղացի համարուած ընտանիքները 150 տարուց աւելի հնութիւն չունին և դեռ աւանդաբար յիշում են իրանց պապերի կամ տատերի գաղթելը Կիլիկիայից, Իզմիրից և ուրիշ տեղերից: Գաղթականութեան վերջին հոսանքը—(1896-97)—5-6 հարիւր հոգի էր բերել Կ. Պօլսից, Այնթապից, Դիարբեկիրից և այլն, սակայն դըրանցից շատ շատերը անգործ մընացին, ուստի և ուրիշ տեղեր անցան ապրուստի միջոց գտնելու համար: Այնպէս որ այդ նորեկներից հազիւ թէ հարիւր հոգի մնացած լինին:

Նիկոսիայի Հայոց միակ եկեղեցին է Ս. Աստուածածին, որ մի քանի դարերի անցեալ ունի: Այդ եկեղեցու բակում կան մի քանի սենեակներ, որոնց երկուսը ծառայում են իբրև դպրոց: Աշակերտ-աշակերտուհիների թիւը հասնում է 50-ի:

Բացի այդ դպրոցից Նիկոսիայի հայերն ունին նաև մի մանկապարտէզ—(օր. Սարգսեանի)—և ,,Ազգային կրթական-որբանոց'', որը հիմնուել է 1897 թ. սկզբներում: Այդտեղ կրթւում են գլխաւորապէս Թիւրքիայի որբ ու չքաւոր աշակերտներ: Գիշերօթիկների թիւը հասնում է 30-ի: ,,Որբանոցը'' պահպանւում է զանազան երկիրներում ապրող մի քանի հայերի օժանդակութեամբ: Նրա գլխաւոր վարչութիւնը գտնւում է Անգլիայի Մանչեստր քաղաքում:

Եկեղեցու բակին մօտ կայ մի առանձին շինութիւն՝ «Հոգետուն» անունով: Այդ շինութեան մի քանի սենեակները յատկացրած են հայազգի չքաւոր ընտանիքների և անհատների համար, իսկ մի քանիսն էլ վարձով են տրւում:

Կիպրոսաբնակ հայերի բոլոր ազգային գործերն ու կալուածները կառավարւում են չորս հոգուց բաղկացած Թաղական խորհրդի ձեռքով՝ առաջնորդի նախագահութեամբ:

Եկեղեցական և վանքապատկան—(Ս. Մակարի)—հողերի, ջրաղացների ու տների տարեկան եկամուտը հասնում է մօտ 300 անգլիական ոսկու, որով և հոգացւում է առաջնորդի, քահանայի և դպրոցի ուսուցիչների թոշակները և այլ ծախսեր:

Կիպրոսի հայերի գլխաւոր պարապմունքն է՝ արհեստներ - (մեծ մասամբ ժամագործութիւն, թիթեղագործութիւն, ներկարարութիւն, պղնձագործութիւն և այլն)—երկրագործութիւն, վաճառականութիւն և ծառայութիւն:

Նիկոսիայից 5—6 ժամ հեռաւորութեան վրա գտնւում է Ս. Մակարի վանքը, որը միակն է իբրև ազգային հնութեան յիշատակարան: Վանքի դիրքը 1700 ոտնաչափ բարձր է ծովից և խորանիստ ձեւով ընկած է փոքրիկ լեռների մէջ, որտեղից քիչ հեռու, ծովի միւս ափին Կիլիկիայի մայր ցամաքն է և

*) **Ծանօթ.** Տեղեկութիւնները քաղել ենք գլխաւորապէս պ. Բակուրանի «Կիպրոս կղզի» գրքոյկից, որ տպուած է 1903 թ., Նիկոսիայում:

Տօրոսի բարձրունքը: Վանքի ամենահին նշանները են՝ 1) պղնձէ մի ծնծղայ ՌՁԳ (1633 թ.). 2) Ս. Աստուածածնի և Ս. Գէորգի պատկերները, որ նկարուած են պատերի վրա և կրում են ՌՄԲ (1752) թուականը. 3) Աւետարան — ՌՃԿ — (1711) և այլն: Իսկ արձանագրութիւններից ամենահինը մատուռի ճակատին է և ասում է. «վերստին նորոգեցի ս. տնապատս Մեծին Մակարայ ճգնաւորին ձեռամբ Յարութիւն վարդապետի: Ի թուին ՌՃՁԴ (1755)»:

Ս. Մակարի վանքն ունի 10000 դէօնիւմ *) սեփական հող, որի վրա աճում են ընտիր ցորեն, գարի, վարսակ, բամբակ, եգիպտացորեն, սալոր, նուշ, լիմոն, նարինջ, կաղին, տանձ, ընկոյզ, բալ, նուռ, թուզ և այլն:

Այդ ճոխ բուսականութեան վրա աւելացրէք առողջ օդն ու ջուրը, գեղանի տեսարանները և այն ժամանակ կարելի կլինի գէթ մի մօտաւոր գաղափար կազմել բնութեան այդ գեղեցիկ վայրի մասին:

*) Դէօնիւմը=14,000 քառ. ոտնաչափի:

## ՀԱՅԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ:

Բուն հայրենիքի դառն վիճակը, կեանքի ու գոյքի կատարեալ անապահովութիւնը հային դարձրել են տարագիր: Նա փախչում է իր երկրից—կրակ ու դժոխք դարձած երկրից: Նա գաղթում է, ուր որ բաղդի հոսանքը կտանի, ուր որ աւելի շահաւէտ կլինի: Աշխարհի բոլոր մասերում դուք կպատահէք հայերի: Հայկական մանր ու խոշոր գաղութներ հաստատուել են շատ բազմաթիւ ու բազմազան երկիրներում, բայց դրանց շարքում մի բացառիկ նշանակութիւն ունի Հիւսիսային Ամերիկան, որ իր ծոցում հիւրընկալել է մօտ 25,000 հայերի:*)

Հայերի գաղթականութիւնը դէպի Ամերիկա նոր չէ սկսուել: Արդէն քանի տարի կլինի, որ հայերը դիմում են դէպի այդ հեռաւոր երկիրը՝ բաղդ որոնելու: Սակայն ամենամեծ հոսանքն սկսուել է միայն իննըսունական թուականներից, երբ Թիւրքա-Հայաստանը արեան ու բացարձակ աւերածութեան վայր դարձաւ: Միայն Նիւ-Եօրկի վրայով 1896 թ. Ամերիկա մտել են մօտ 2000 հայեր: Հետևեալ տարիներում էլ հայ գաղթականները բաւական խոշոր թիւ են կազմել:

Գաղթում է մանր սեփականատէրը, փողատէրը, որպէսզի իր ունեցուածքը քիւրդի ու թիւրքի ձեռքից ազատէ և ազատ երկրում աւելի մեծացնէ:

Գաղթում են արհեստաւորն ու գիւղացին, որպէսզի օրական ապրուստ ձեռք բերեն: Դրանք մըտնում են ամերիկական գործարանները լոկ բանուոր համեմատաբար աւելի քիչ օրավարձով, քան ամերիկացի բանուորը: Այդ տեսակէտից նրանք մի վտանգաւոր մրցակից են դառնում տեղական բանուորների համար:

Ամերիկական հասարակութիւնը սիրում է հայերին: Պատճառը հասկանալի է. հայի վիշտը նկարագրել, նրա դառը վիճակը պատկերացրել և օգնութեան կոչ են արել այնպիսի նշանաւոր ամերիկացիներ, ինչպէս օրինակ պրօֆ. Գարրիսօն, Գօլլ, Րայմօնդ, տաղանդաւոր հրապարակախօսուհի miss Բլակուէլլ և ուրիշ շատերը:

Հայերը Հիւսիսային Ամերիկայում կենտրօնացած են գլխաւորապէս Ուսթըր, Բօստօն, Նիւ-Եօրկ, Չիկագօ, Լօրենս, Պրօվիտէնս քաղաքներում: Ուսթըր քաղաքում նրանք ունեն և սեփական եկեղեցի՝ Ս. Փրկիչ: Այստեղ նստում է և առաջնորդ՝ Յով. եպ. Սարաճեան: Միւս քաղաքներում կան հովուող վարդապետներ ու քահանաներ:

*) «Баку» 1903 № 81.

Ճրշապատող եռուն կեանքը, հասարակական ազատ հոսանքները զօրեղ ազդեցութիւն են արել հայ գաղթականների վրա։ Նրանք էլ ունեն մի քանի ընկերութիւններ։ Նրանք էլ հրապարակական ժողովներ են անում և պէս պէս հարցերի մասին վիճում, դատախօսում. գլխաւոր տեղը բռնում է, իհարկէ, մայր հայրենիքը՝ նրա ցաւերն ու վէրքերը, նրա ներկան ու ապագան։

Այդ ազատ երկրում հայկական մամուլն էլ բաւական մեծ ծաւալ է ստացել, բայց դժբաղդաբար ոչ թէ որակով, այլ միայն քանակով։ Միայն Կալիֆօրնիայում հինգ հայերէն թերթեր են լոյս տեսնում *) և իհարկէ բոլորն էլ փոքրիկ ու ողորմելի բովանդակութեամբ։ Համեմատաբար աւելի ազդեցիկ է համարւում «Քաղաքացի» թերթը։ Իսկ եթէ վերցնելու լինինք ամբողջ Ամերիկայի հայկական մամուլը, այն ժամանակ առաջին տեղը պէտք է տալ Բոստոնում լոյս տեսնող «Հայրենիքին», որը համեմատաբար բարձր է միւսներից թէ բովանդակութեամբ և թէ բազմակողմանիութեամբ։ Նրա շուրջն են խմբուած հայ գաղութի բաւական խոշոր մասը։

*) Jbid.

Կան մի քանի գրադարաններ զուտ հայկական գրքերով։ Բարեգործական նպատակների համար մերթ ընդ մերթ հանդանակութիւն է լինում և առանձին տուրք վերցնում հարուստներից, մկրտութիւններից և թաղումներից։

Շատ յաճախ տեղի են ունենում հայերէն ներկայացումներ գրական երաժշտական երեկոյթներ, հանդէսներ ու հրապարակական վիճաբանութիւններ։ Մի խօսքով բաւական կենդանի ու բազմակողմանի կեանք են վարում հայերն Ամերիկայում։ Բայց ի՛նչ օգուտ, երբ հեռու են մայր հայրենիքից։ Z.

## ՀԱՅԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Շատ հին ժամանակներից է ըսկիզբն առել հայկական այս գաղութը. դեռ Բիւզանդեան տիրապետութեան միջոցին այս երկրում հայեր են ապրելիս եղել, որի ապացոյցն են այժմ ոչ հայաբնակ տեղերում գտնուող աւերակ եկեղեցիները։

Թիւրքիայի տիրապետութեան միջոցին այստեղի հայերը, թւով մօտ տասը հազար, կենտրոնացած են եղել Ռուսչուկում, Ֆիլիպօպոլում և Շումլայում, որովհետև դրանք այն ժամանակ բազմամարդ և վաճառաշահ քաղաքներ էին։ Հայերը այս կողմերում զբաղուելիս են եղել միայն վաճառականութեամբ, թիւրքական պաշտօններ վարելով և արհեստներով։ Հայ գաղթականութիւնը, լինելով շատ փոքրիկ և միշտ թիւրքերի հետ շփուելով ու ճիգեր թափելով նրանց բարեկամութիւնը ձեռք բերելու համար բոլորովին մոռացել է իր մայրենի լեզուն ու ընտելացել թիւրքական բարքերին և նիստ ու կացին։

Այդպէս շարունակուել է բաւական երկար ժամանակ, բայց երբ տեղի ունեցաւ վերջին տարիների աղէտալի անցքերը Թիւրքիայում, երբ նոր գաղթականներ մտան Բուլղարիա, կեանքը որոշ փոփոխութեան ենթարկուեց, զարգացնելով ազգային ոգին։

Այժմ Բուլղարիայում ապրում են 15,000-ից աւելի հայեր։ Հայաբնակ գլխաւոր կենտրոններն են Վառնա, Ռուսչուկ, Ֆիլիպօպօլ—(իւրաքանչիւրում մօտ 4,000)—և ապա Սլիվէն, Դօբրիչ, Թաթարբազարճգ և Սօֆիա։

Վառնայում կայ երկու ազգային վարժարան 8 ուսուցիչներով և 200-ից աւելի աշակերտներով և մի մասնաւոր վարժարան՝ 71 աշակերտներով։ Ազգային վարժարանների տարեկան բիւջէն 9—10,000 ֆրանկի է հասնում, երկուսն էլ

գտնվում են ազգային շինութիւնների մէջ, տղայոցը նոր է և բաւական յարմար, իսկ օրիորդացը ընդհակառակը:

Դպրոցները պահւում են եկեղեցու օգնութեամբ, աշակերտների թոշակներով և ներկայացումներից ստացուած եկամուտներով: Նրանք ունեն մի քանի պատրաստականներ և հինգ հիմնական դասարան:

Կայ մի որբախնամ ընկերութիւն, որը 17 որբ է պահում Հայաստանում գտնուած զանազան որբանոցներում. այս ընկերութեան եկամուտը կազմւում է փոքրիկ անդամավճարներից, ներկայացումներից և նուէրներից:

Գոյութիւն ունի մի ընթերցարան, կազմուած Կովկասից նուէր ստացուած գրքերից: Հիմը այրուել է սրանից մի քանի տարի առաջ:

Հրատարակւում են չորս թերթեր — «Շարժում», «Իրաւունք», «Վերածնութիւն» և «Հայաթերթ» —իւրաքանչիւրը շաբաթական երկու անգամ:

Վառնայից յետոյ աչքի են ընկնում Փիլիպօպոլի հայերը: Պաշտամունքը նոյնն է. թիւը գուցէ պակաս: Ազգային վարժարաններում սովորում են մօտ 100 աշակերտներ. կան և երկու մասնաւոր վարժարաններ: Այս քաղաքում կայ մի „Թատերասիրաց ընկերութիւն“, „Երգեցիկ ընկ.“, „Գրասիրաց ընկ.“, որը պահում է մի հարուստ գրադարան:

Ռուսչուկում ապրում են գրեթէ նոյնքան հայեր. երկսեռ դպրոց ունին, մօտ 200 աշակերտներով և մի քանի ուսուցիչներով: Ունին մի գրադարան:

Շումլայում ապրում են մօտ 300 հայեր, որոնք ունեն երկսեռ դպրոց, մօտ 100 աշակերտներով և երկու ուսուցչով: Կայ մի ընթերցարան և „Կանանց ընկերութիւն“, որը պահում է տեղական օրիորդաց դպրոցը:

Սլիվէն—մօտ 300 հայ. կայ մի փոքրիկ դպրոց:

Թաթարբազարճիգ—նոյնչափ հայ և մի փոքրիկ դպրոց:

Դօբրիչ—մի քանի հարիւր հայեր և մի փոքրիկ դպրոց:

Սօֆիա—մօտ 200 հայ և շատ ողորմելի, մայրաքաղաքացիների համար անպատուաբեր մի դպրոց:

Այս վերջին չորս քաղաքների դպրոցները շատ անկանոն են. երբեմն փակւում, երբեմն բացւում են:

Բուլղարիայում հայերը պարապում են գլխաւորապէս վաճառականութեամբ: Բայց քիչ չեն և նաւահանգիստներում ու երկաթուղու կայարաններում աշխատող հայ մշակներ:

Հայ գաղութն ունի և հայ դերասանական խումբ, որ ներկայացումներ է տալիս գլխաւորապէս թիւրքերէն լեզուով: Այդ խումբը անցեալ աշնան երկու մասի բաժանուեց. մէկը կոչւում է „Վիտելօ“, միւսը „Նադէժդա“ բուլղարական անուններով: „Նադէժդա“ խումբը որոշել է միշտ եւրոպական և աւելի լուրջ խաղեր խաղալ: Երկուսն էլ միջակ են: Դրանք երբեմն հայերէն ներկայացումներ էլ են տալիս:

Գալով առհասարակ բուլղարա-հայերի հասարակական կեանքին, պէտք է ասել, որ նա վերջին տարիներում բաւական փոխուել ու կենդանացել է. բաւական ուժեղացել է ազգային հոսանքը և բաւական զգալի արդիւնքներ տուել:

Վարդօ

Վառնա

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ՔՒՒՐԴՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Պարսկահայերը, որպէս փշրանքներ. ցրուած են Պարսկաստանի գրեթէ բոլոր մասերում, մանաւանդ հիւսիսային Պարսկաստանի, այսինքն Ատրպատականի ընդարձակ նահանգում: Եւ այդ փշրանքները, հայ ազգի այդ բեկորները, լինելով հողագուրկ, ընկած բնիկ զօրեղ տարրի մէջ, մատնուած են սոսկալի թշուառութեան և անուշադրութեան:

Այո, այդպիսի դրութեան մատնուած հայեր շատ կան Պարսկաստանում, ընկած զանազան խուլ անկիւններում, բայց մենք այս յօդուածով խօսելու ենք միմիայն այդ անկիւններից մէկի մասին, որն աւելի դառն, աւելի քստմնելի պատկերով է ներկայանում մեզ, աւելի մօտիկ է կանգնած անդունդին, քան մնացած բոլոր անկիւնները:

Այդ անկիւնը պարսկական Քիւրդստանն է: Այս հին և պատմական Մարաստանում և նրա շրջակայքում կան մի բուռն հայեր, որոնք ցրուած են համարեա բոլոր մասերում և ապրում են հարիւրաւոր թիւրքերի և քիւրդերի հետ խառն: Դուք կպատահէք մի հեռաւոր անկիւնի դուտ քրդաբնակ գիւղում մի հայ ընտանիքի, ինարկէ, միայն անունով հայ. իսկ 4—10 հայ ընտանիք ունեցող գիւղեր շատ կան: Նրանք ապրում են գլխաւորապէս Ուրմիոյ լճի հարաւային և հարաւ-արեւմտեան մասերում, Բառանդուզ, Սուլդուզ, Սօուդ-բուլաղ եւ Միաընդուաբ գաւառներում:

Սկսենք Բարանդուզից, որը ունի 233 տուն և համարւում է ամենահայաշատ գաւառը: Բարանդուզի հայերը ցրուած են 15 գիւղերումահա այսպէս.

| | տուն | | տուն |
|---|---|---|---|
| Բարանի | 47 | Դարբանի | 35 |
| Թումաթար | 30 | Դիգա-թարա | 30 |
| Բալանիչ | 21 | Սարդարութ | 18 |
| Սհաթլու | 12 | Մալիքի-քեանդի (Թագա գեղ) | 11 |
| Քիւքա | 10 | Սարալան | 8 |
| Ղասմլու | 1 | Թասմալու | 1 |
| Ալիկեսոն գիւղ | 1 | Սարաջուբ | 1: |
| | | Գումար | 226 |

Այս գաւառում առաջ եղել են շատ հայեր, որոնք 1878 թուին ցրւել են շրջակայքում և գաղթել են Ռուսաստան: Քիւքա գիւղը, ինչպէս վկայում է մի ծերունի, առաջ ունեցել է մօտ 800 տուն հայ ժողովուրդ, այն ինչ այժմ, ինչպէս տեսանք, ունի միմիայն 10 տուն: Որ այդ գիւղում առաջ շատ հայեր են եղել, դրան ապացոյց կարող է ծառայել նաև մինչև այժմ գոյութիւն ունեցող գեղեցիկ եկեղեցին և զանազան քարերի վրա եղած արձանագրութիւնները:

Բարանդուզից ոչ հեռու, Սուլդուզից մի օրուայ ճանապարհի վրա գտնուած Ցուշնի գաւառի Առնա գիւղում կայ 2 տուն հայ բնակիչ, իսկ Դօլ գաւառի Չէյթանիա գիւղում 12 տուն:

Մինչև այժմ յիշած գիւղերից միմիայն Բարանին, Դարբանին, Թումաթարը, Բալանիչը և Դիգա-թարան եկեղեցիներ ունեն, այն էլ բոլորովին խարխուլ, երեսի վրա ընկած, իսկ միմիայն Թումաթար գիւղն է, որ ունի քահանայ: Ուրեմն 17 գիւղը ունի միայն մէկ քահանայ առ այժմ:

Բարանդուզից դէպի հարաւ, Ուրմիոյ լճի հարաւ-արեւմտեան ծայրը ընկնում է Սուլդուզ գաւառը, որը հայաշատութեան կողմից երկրորդ տեղն է բռնում: Հայերը ապրում են Սուլդուզ գաւառի հետեւեալ գիւղերում.

| | տուն | | տուն |
|---|---|---|---|
| Նաղադէյ | 42 | Մահմադեառ | 34 |
| Թօփուզաւա | 4 | Ռախտանա | 14 |
| Գեօռնաւա | 5 | Չայեանա | 3 |
| Գեօլ | 3 | Քեարվանսարա | 2 |
| | | Գումար | 107 |

Սուլդուզ գաւառում միմիայն Նաղադէյ գիւղը ունի եկեղեցի, որի տէրտէրն էլ ծերունի է:

Սուլդուզ և Միանդուաբ գաւառների մէջ ընկնում է Մուքրի գաւառը, ուր կան 35 տուն հայ և ապ-

բում են 3 գիւղերում.

| | տուն | | տուն |
|---|---|---|---|
| Դարալաք | 30 | Կջաւա | 3 |
| Լաճ | 2 | Գումարը | 35 |

Չկայ և ոչ մի քահանայ. եկեղեցի թէև կայ, բայց բոլորովին քանդուած. նա գտնւում է Դարալաք գիւղում:

Մխանդուար գաւառում, որը բռնում է Ուրմիոյ լճի հարաւային մասը, մի քիչ դէպի հարաւ-արևելք, կան 118 տուն հայեր այն է.

| | տուն | | տուն |
|---|---|---|---|
| Մխանդուար | 20 | Թազագեղ | 42 |
| Կարավերան | 8 | Թաղիապատ | 33 |
| Սօյլուղթափա | 2 | Սուղ-բուլաղ | 4 |
| Քեալբաղիղա-խան | 9 | | |
| | | Գումարը | 118 *) |

Այս շրջանում եկեղեցի կայ Մխանդուար և Սուղ-բուլաղ քաղաքներում, Թաղիապատ գիւղում, նոյնպէս և Թազագեղում, բայց չկայ և՛ ոչ մի քահանայ: Թազագեղը այս տաս տարի է, որ հաստատուել է. այս գիւղի հայերը գաղթել են Դարալաքից և Սուլդուզ գաւառից:

Ահա Պարսկաստանի այդ հետաքրքիր անկիւնի հայերը: Նրանք, ինչպէս տեսնում էք, 500 տուն են. տունը միջին թւով 6 հոգի հաշուելով, կստանանք 3,000 հայեր, որոնք ցրուած ապրում են 34 գիւղերում քիւրդերի հետ խառն: Քիւրդերը կազմում են ազգաբնակութեան մեծագոյն մասը: Կան այդ մասերում նաև կարափափախ թիւրքեր, ասօրիներ և հրէաներ:

Այդ բոլոր մասերումն էլ հայերը հողագուրկ և ռայեա ժողովուրդ են. Նրանք չունեն սեփական հողեր. չունեն ոչինչ. կեղեքւում, հարստահարւում են, տնքում են ծանր հարկերի տակ, որոնք հասնում են առասպելական աստիճանների: Այդտեղ հայ տարրը թշուառանում, քայքայւում է անտեսապէս և մի ցաւալի պատկեր ներկայացնում. շատ ընտանիքներ զուրկ են նոյն իսկ օրուայ չոր հացից: Այսպէս է բոլոր գաւառներում, բայց ամենից խեղճը, ամենից թշուառը Սուլդուզ գաւառն է.

Հարկերն են, որ Սուլդուզը թշուառացրել են և քայքայել տնտեսապէս: Ահա առաջ ենք բերում Սուլդուզի գլխաւոր գիւղի—Նաղադէյի հարկերը, որից որոշ գաղափար կարելի է կազմել ընդհանուրի մասին 1. տան հարկ 3-5 ղրան (ղրանը—19 կ.) 2. իւրաքանչիւր տանից 5 հաւ, իսկ իւղ, ձու և այլն ինչքան ուզէ գիւղատէրը, 3. կովից՝ 2 ղրան, 4. գոմէշից՝ 5 ղրան, 5. ձիուց՝ 3 ղրան, 6. սերմացուի կէսը գիւղատէրից և կէսը գիւղացուց, ամեն աշխատանքը գիւղացուց, արդիւնքի 2/3 գիւղատէրին, իսկ 1/3-ը գիւղացուն, 7. նոյնը և բրնձի, գարու վերաբերմամբ, 8. բամբակի ցանքի մէկ թանափին [1]) 12 ղրան 10 շահի: 9. Առւոյտի թանափին նոյնքան և ուրիշ ընդեղէններից:

Սուլդուզի Մահմադբէու գիւղում էլ աւելի են հարկերը. ցորենի, բրնձի, գարու աւելի քան երկու բաժինը գիւղատիրոջն է, բոլոր աշխատանքը և ծախսը գիւղացիներից: Բամբակից, գերչակից և այլն, բացի այն, որ սերմը և աշխատանքը գիւղացուց է և արդիւնքի կէսից աւելին գիւղատէրն է տանում, դեռ իւրաքանչիւր թանափից էլ վերցնում է 5 ղրան: Որպէս գլխահարկ իւրաքանչիւր տանից ստանում է 4 գլուխ շաքար:

Այսպէս են հարկերը Սուլդուզի բոլոր գիւղերում շատ աննշան զանազանութեամբ. և դա շատ հասկանալի է, որովհետև մի Էլ է իշխում, գլխաւորապէս կարափափախ-

*) Անհրաժեշտ ենք համարում ասել, որ այս թւերը վերցրել ենք այն անձնաւորութիւնից, որը առաջնորդարանի կողմից ուղարկուած էր այդ մասերը «պտոյտ» հաւաքելու և նա պտտուելով շրջել է գրեթէ բոլոր գիւղերը: Այս թւերը կարելի է եղածներից ամենաճիշտը համարել, որովհետև, ինչպէս նա է ասում, ամեն մի գիւղ այցելելիս, հաւաքել է գիւղի աղսաղկալներին և սկսել են գիւղի մի ծայրից սկսած համարել տները. այս դէպքում կարծում ենք, այնքան էլ սխալներ չի կարող լինել: Ն. Փր.

1) Թանափին—64 քառ. արշինի:

ներն են գիւղատէրերը: Սոլդուզից գրեթէ չեն տարբերւում նաև միւս գաւառներն իրանց հարկերով:

Բայց այդ չէ դեռ բոլորը. որքան ուրախ կլինէր այդ անկիւնի հայ տարրը և ամբողջ ազգաբնակութիւնը եթէ միայն հարկերը լինէին: Բայց աւելի անտանելին դեռ մնում է. դա բեգերն է, ձրի աշխատանքը: Սուլդուզ գաւառի Նաղադէյ գիւղի խրաքանչիւր բնտանիք պարտաւոր է տալ տարեկան 30-35 բեգեառ. դեռ սա ամենաքիչը կարելի է համարել: Մահմադեառ գիւղի ամեն մի տունը երբեմն տալիս է 200 բեգեառ:

Կատարեալ ճորտութիւն...

Գիւղացիները համարեա տարուայ մեծագոյն մասը աշխատում են ձրիաբար գիւղատէր աղաների և էգերի համար: Գիւղատէրերի արտերը գիւղացիներն են ջրում, նրանց շինութիւնների վրա գիւղացիներն են աշխատում. գիւղացիներն են ծեծում աղայի բրինձը, մաքրում նրա կտուրների ու բակի ձիւնը, փայտը բերում, (ի հարկէ, իրանց աայլերով) կոտրատում, և դարսում: Գիւղացի կանայք են մանում աղայի բուրդը և բամբակը:

Մի խօսքով, գիւղատէր աղաները և բէգերը, որպէս ազրուկներ, քամում, ծծում են թշուառ գիւղացու արիւնը և նետում թշուառութեան գիրկը: Միակ միջոցը, որ նա գիտէ, այդ պանդխտելն Եւ նա պանդխտում է: Այժմ էլ սուլդուզցիներ պաղթել և բնակութիւն են հաստատել Երևան, Մարաղա, Թաւրիզ և այլն:

Բայց այդ չէ բոլորը:

II

Այդ մի բուռն հայերը ցրուած լինելով զանազան քրդաբնակ և թիւրքաբնակ գիւղերում, կազմելով շատ չնչին տոկոս, հետզհետէ, տարիների ընթացքում, ազդուել են նրանցից, ընդօրինակել և ընդունել են նրանց սովորութիւնները, նրանց նիստ ու կացը, յարաբերութիւնները, միանգամայն կերպարանափոխել նոյն իսկ արտաքինը, նրանց նման ածիլւում, նրանց նման խուզւում և հագնւում. գրեթէ ոչնչով չեն տարբերւում: Հայերը մոռացել են նաև իրենց մայրենի լեզուն, խօսում են քրդերէն:

Այնտեղ, այսպէս ասած, կան ոչ թէ հայեր, այլ քրիստոնեայ քիւրդեր: Այդ գաւառամասերի և գիւղերի հայերը գրեթէ բոլորն էլ շատ աննշան բացառութեամբ քրդախօս և թըրքախօս են, մեծ մասը քրդախօս: Հասակաւորներից ոչ որ հայերէն չգիտէ, միայն նորերից, նոր սերնդից են մէկ-մէկ, որ հայերէն խօսել գիտեն, այն էլ վայ այդպիսի գիտնալուն, բոլորովին աղաւաղուած, այլանդակուած: Սուլդուզում թէև դպրոց-կարդացողներ կան, բայց նրանք էլ են քրդերէն կամ թիւրքերէն խօսում:

Այս գաւառակները 1898 թուին, ինչպէս ցոյց են տալիս առաջնորդարանի այդ թուին կազմած վիճակագրութիւնը, ունեցել են միմիայն 6 քահանայ, իսկ այժմ, ինչպէս տեսանք, ունեն միայն երկու քահանայ, որոնցից մէկն էլ բոլորովին ծեր է: 3000 բնակիչը, ցրուած 34 գիւղերում, ունի միայն երկու քահանայ: Այդտեղ երեխաները մեծանում են առանց կնունքի, մեռելները օրերով մնում են անթաղ, տանը, մինչև որ մօտակայ գիւղերից կամ Ուրմի քաղաքից քահանայ է գալիս: Շատ անգամ հէնց իրանք են թաղում առանց արարողութիւնների, կամ փոքր ինչ կարդալ գիտցող մի աշխարհական կարդում է աւետարանից մի գլուխ: Այդ անկիւնում, քահանան էլ քրդերէն կամ թիւրքերէն է խօսում, քրդերէն է լինում նրա քարոզը, Ս Գրքից մի գլուխ կարդալիս նա բացատրում է դարձեալ թիւրքերէն կամ քրդերէն:

Այդ քրդացած հայերը շատ մեծ եռանդով հետևում են պասպահելուն: Այդ մասին մի բնորոշ դէպք են պատմում: Մի տարի, դեռ երկու շաբաթ առաջ սկսում են պահել Ս. Սարգսի պասը, կարծելով, որ հէնց այդ շաբաթն է

պասը։ Անցնում է ամբողջ շաբաթը և յանկարծ մէկը յայտնում է, որ իրենք սխալուած են, այս շաբաթ չէր Ս. Սարգսի պասը, այլ առաջիկայ շաբաթ։ Եւ նրանք միւս ամբողջ շաբաթն էլ են պաս պահում դարձեալ վերջին օրը կասկածներ են առաջ գալիս և սխալուած մէկին ուղարկում են Մարաղա հաստատ բան իմանալու և, իհարկէ, ճիշտը իմանալով, պահում են նաև երրորդ շաբաթը։

Բացառութիւններ չեն անշուշտ այն օրինակները, որ հայը ամուսնանում է քրդի հետ, իսկ եթէ տան մէջ տղամարդ չկայ, այն ժամանակ քիւրդը կամ թուրքը ամուսնանում է, թէկուզ բռնութեամբ, տան կնոջ կամ աղջկայ հետ և այդ ընտանիքն էլ բնականաբար դառնում է քիւրդ կամ թուրք։ Գիւղացին այդտեղ սեփական ոչինչ չունի. շատ տեղերում տունն էլ գիւղացունը չէ. գիւղատէրն է տներ շինում և յանձնում իր ծառաներին, իսկ երբ քէֆն ուզենայ՝ կարող է թեւից բռնել և դուրս նետել։

Այդ բոլորը մի կողմից, քիւրդ աշիրաթների պարբերաբար կրկնուող աւարառութիւնները և կողոպուտները միւս կողմից, աւելի ու աւելի վէրքեր են առաջացնում և ստեղծում մի թշուառ ու սարսափած տարր։ Զանազան քիւրդ ցեղեր իրար հետ ընդհարուելիս խեղճ գիւղացիներն են մէջտեղում տուժում, նրանք են հարստահարւում և վնաս կրում։ Իսկ յաճախ կրկնուող բռնաբարումները և առևանգումները գալիս են պատկերի պակասը լրացնելու և ամեն ինչ կատարեալ կացուցանելու։ Վա՜յ նրան, ով ունի գեղեցիկ հարս կամ աղջիկ. գիւղատէրը ամեն միջոցներ ձեռք է առնում նրան տիրանալու, խլելու համար։

Բացի այդ բոլորից այդ կողմի հայերը, ընկած լինելով այդ խուլ անկիւնում, բոլորովին կտրուած են արտաքին աշխարհից, որոշ գիւղեր ոչ մի յարաբերութիւն չունեն դրսի հետ. նրանք չգիտեն, թէ ինչ է կատարւում մի քանի հարիւր վերստ հեռաւորութեան վրա և կարծում են, որ երկրագնդի վրա ապրում են միմիայն իրենք և քիւրդերը։

Խեղճ ժողովուրդ…

Բայց ինչ է ներկայացնում այդ անկիւնի հայերի կրթական գործը։ Գրեթէ ոչինչ. Բողոքական միսիոնարները վաղուց սկսել են այնտեղ իրենց պրօպագանդան և այժմ ունեն մի երկու դպրոց, բայց Աստուած դպրոց համարէ։ Այդ դպրոցները կառավարում են չարչի և տխմար ուսուցիչներ, որոնք իրենց ողորմելի մտաւոր պաշարով բոլորովին անկարող են կեանքի մէջ փոփոխութիւն մտցնել, օգուտներ տալ։ Նրանք առհասարակ, ձգտում են մարդիկ որսալ։

Կանանց բարեգործական միացեալ ընկերութիւնը Նարանդուզ գաւառի Բարառի, Դիզա-Թաքա գիւղերում և Մաքրի գաւառի Դարալաք գիւղում ունի դպրոցներ, որոնք, ինչպէս պատմում են ականատեսները, գրեթէ ոչնչով բարձր չեն խալիֆայական դպրոցներից։ Ի՞նչ սերունդ պիտի պատրաստեն դրանք։

Բացի դրանից մարաղեցի մի խումբ մարդիկ, որոնք մեծ եռանդով ղեկավարում են Մարաղայի ընթերցանութեան գործը, աշխատում են քրիստոնեայ քիւրդերի մէջ էլ տարածել գրագիտութիւն և ընթերցանութիւն։ Բայց այդ բոլորը միայն մի կաթիլ է կազմում կարիքի մեծ ովկիանոսում։ Կարծում ենք, իւրաքանչիւր հայի պարտականութիւնն է մտածել այդ մի բուռն հայերի մասին, միջոցներ ձեռք առնել, որքան հնարաւոր է, փրկել նրանց կորստից, կրթութիւն տարածել, սերունդ պատրաստել։ Ամենից շատ այդ պարտականութիւնը ծանրանում է Ատրպատականի առաջնորդարանի վրա, բայց ինչ է անում նա, կատարո՞ւմ է իր պարտականութիւնը։ Պէտք է ասել ցաւելով, որ առաջնորդները ընդհանրապէս շատ քիչ,

գրեթէ երբէք ուշադրութիւն չեն դարձրել այդ քրիստոնեայ քրդերի և թիւրքերի վրա և չեն դարձընում այժմ էլ։

Եթէ ուզում ենք տալ այդ անկիւնի հայերին օրինաւոր կեանք, եթէ ուզում ենք ստեղծել նրանց համար բարեկեցիկ վիճակ, պէտք է հիմնովին փոփոխել տիրող պայմանները, գնել այդ ժողովրդին բոլորովին այլ պայմանների մէջ, ազատել այդ աւատապետական հարկերից ու բեգերից վերացնել հարստահարութիւնները, ապահովել նրա սեփական աշխատանքը և այգին և այլըն։ Այս դէպքում նա և անտեսապէս կըբարւոքուի և կուլտուրապէս։

Ահա մի նուիրական, սրբազան գործ՝ ամբողջ մի ժողովրդի ազատագրութեան գործ. Թող առաջ գան մեր հարուստ բարերարները, թող չխնայեն իրենց նուէրները[1]։ Եթէ լինի փող, նիւթական միջոց, կարելի է հողեր գնել այդ թշուառ ժողովրդի համար, կենտրոնացնել նրանց մի տեղում և դրա հետ միասին զարկ տալ կրթական գործին, զարգացնել ազգային գիտակցութիւնը, տարածել հայ լեզուն — մի խօսքով հայացնել նրան։

Ահա մտածմունքի, լուրջ մտածմունքի արժանի առարկայ։

Եր. Ֆրանգեան։

Թաւրիզ

[1] Ցանկացողներին կարող ենք հաղորդել աւելի մանրամասն թիւեր և գործնական խորհուրդներ։
Իմ հասցէն՝ Тавризъ (Perse) Лиловая школа, учителю Ервану Франгянъ.



Յուզուած ծովը—Եկար Պենցանի

# Տնտեսագիտութիւն

(Յօդուածներ Ե. Թոփչեանի)

## ՆԱՒԹԱՅԻՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ։



Բալախանիի նաւթահորերը.

Երկար է նաւթի պատմութիւնը: Դեռ հին դարերում մարդկութեանը ծանօթ էր այս սև խղանրման հեղուկը, որը երբեմն դուրս էր հոսում երկրի ճեղքուածներից և յայտնի էր «նաւթ» անունով... Նաւթի մասին տեղեկութիւններ պատահում էր թէ Ս. գրքում և թէ Հերոդոտի գրուածքներում)։ *

Շատ ու քիչ որոշ տեղեկութիւններ մեր կովկասեան նաւթի մասին պատահում են արաբական պատմաբան Մասուդիի և Բեաթիր Ջերեարիի գրուածքներում: Դրանց ասելով «Բագուն ամուր քաղաք է. նրա շրջակայքը քարոտ է, քարերից շատերը փայտի նման վառւում են: Քաղաքի մօտակայքում 50-ի չափ հորեր կան. որոնցից սև և սպիտակ նաւթային իւղեր են ստացւում»։

Յայտնի ճանապարհորդ Մարկօ Պօլօն, XIII-րդ դարում այցելելով Բագուն, համառօտակի նկարագրում է տեղական նաւթի արդիւնաբերութիւնը, յիշում է, թէ ինչպէս են նաւթը ուղտերով կրում մինչև Բաղդադ ու ուրիշ հեռաւոր տեղեր, թէ ինչպէս են գործածում վառելիքի և լուսաւորութեան համար·

VIII-րդ դարում Բագուն այցելում են Կեմպֆեր, Գմելին, Լերխէ գիտնականները և աւելի մանրամասն նկարագրում Բագուի այդ անհատնելի հարստութիւնը—նաւթը): *

Գմելինի ասելով Բագուի խաները իրանց օգտին էին վերցնում նաւթից ստացուած ամբողջ եկամուտը, որ տարեկան 40000 րուբլու էր հասնում:

1813 թուականին Բագուի, Ղուբայի և Դերբենդի խանութիւնները անցան Ռուսաստանի իշխանութեան տակ և նաւթային հորերը պետական գանձարանի սեփականութիւնը դարձան: Չընայելով այդ հանգամանքին, կառավարութիւնը անուշադիր թողեց նաւթային հորերը, բայց ոչ երկար ժամանակով: 1820 թ. նա բոլոր նաւթահանքերը 4 տարի ժամանակով տուեց կապալով տարեկան 100,000

*) Hans Höfer: «Das Erdöl»

*) Տես Г. Старцевъ: «Бакинская нефт. промышленность.»

ռուբլի վճարով։) *

Այդ ժամանակաշրջանը լրանալուն պէս կառավարութիւնը սկսեց ինքը շահագործել նաւթահանքերը, սակայն նա հազիւ կարողացաւ տարեկան 76000 ռուբլի զուտ եկամուտ ստանալ։ Հետեւեալ տարին նորից սկսուեց կապալառութիւնը, որը շարունակուեց մինչև 1873 թըւականը։

Այդպիսով նաւթահանքերն անցնում էին մի կապալառուի ձեռքից միւսին և մնում էին անփոփոխ ու չըկատարելագործուած։ Ոչ ոք չէր մտածում նաւթի արդիւնագործութիւնը կատարելագործելու մասին։ Կառավարութիւնը տարեկան մօտ 85,000 ռուբլի կապալավարձ էր ստանում և շատ գոհ էր, իսկ մասնաւոր կապալառուները աշխատում էին միայն որքան կարելի է շուտ և շատ եկամուտ ստանալ, իսկ ապագայի մասին ոչ ոք չէր մտածում։

Շատ հասկանալի է, որ այդպիսի հանգամանքներում նաւթահանքերը բարեկարգուել չէին կարող և նրանց արդիւնաբերած նաւթի քանակութիւնն էլ չէր աւելանում։ Բոլոր նաւթահորերից տարեկան հազիւ 200,000 պուդ նաւթ էր ստացւում։

Նաւթի զտումը—առանձին գործիքներով մաքրելը—սկսուեց միայն XIX դարի սկզբում և այդ բանի առաջին փորձը պատկանում է Կովկասին։ 1823 թւին Դուբինին ազգանունով մի գիւղացի Գրօզնի քաղաքի մօտ հիմնեց մի փոքրիկ գործարան նաւթ զտելու համար։ Դրանից յետոյ երկրորդ փորձը պատկանում է ինժիներ Վօսկօբօյնիկովին, որը 1830 թ. Բագուի մօտ հիմնեց մի նոր գործարան։ Բայց այդ գործարանները նահապետական ձև ունէին և շատ քիչ արդիւնք էին տալիս, ուստի աջողութիւն չունեցան։

Նաւթի արդիւնագործութեանը մեծ զարկ տուեց Հիւսիսային Ամերիկայի նաւթի գիւտը, որը առաջ-

*) Jbid

բեց քաշեց հնարագէտ ամերիկացի կապիտալիստներին ու գիտնականներին։ Մինչև այդ ժամանակ ձեռքերով էին դուրս քաշում նաւթահորերի հեղուկը։ Ամերիկացիները հնարեցին հոր փորելու և նաւթ դուրս քաշելու գործիքներ և դրանով հեշտացրին ու շահաւէտ դարձրին նաւթային գործը։ Նրանք ըսկսեցին կանոնաւոր ձեւով զտել ըստացուած նաւթը և կերօսին պատրաստել։

Ամերիկական կերօսինը շուտով ամբողջ աշխարհի ուշադրութեանն արժանացաւ և մեծ վաճառականութեան առարկայ դարձաւ։ Նա առաջին անգամ 1860 թուին մուտք գործեց Եւրօպա և դրանից յետոյ արագ կերպով տարածուեց նրա զանազան կողմերը և հասաւ նոյնիսկ մինչև Ռուսաստան։

Ամերիկայի աջողութիւնը խթան դարձաւ Ռուսաստանի համար։ Այստեղ էլ սկսեցին ամեն ջանք ու աշխատանք գործ դնել, որպէսզի Ապշերօնեան հեղուկի հարստութիւնից մի համաշխարհային արդիւնագործութիւն ստեղծեն։ Սկզբնական փորձերն արին Կօկօրեւ և Վիտտէ կապիտալիստները։ Դրանցից առաջինը (1859 թ.) նաւթային գործարան հիմնեց Բագուի մօտ—կրակապաշտների հին տաճարի կշտին, որպէսզի հնարաւոր լինի գետնի ճեղքուածքներից դուրս եկող գազը իբրև վառելիք գործածել։ Երկրորդն իր գործարանը հիմնեց դարձեալ Բագուի մօտ—փոքրիկ «Սուրբ կղզու» վրա։ Բայց այդ երկու գործարաններն էլ անաջողութիւնից վնասուեցին և շուտով դադարեցրին իրանց գոյութիւնը։

Այնուամենայնիւ Կօկօրեւի և Վիտտէի փորձերը կրթիչ նշանակութիւն ունեցան։ 1863 թ. Ջաւադ Մելիքօվի նախաձեռնութեամբ Բագւում հիմնւում է մի նոր գործարան, որի ամբողջ դրամագլուխը հազիւ 300 ռուբլու էր հասնում։ Չափազանց պարզ էր այդ գործարանի կազմակերպութիւնը։ Խորանարդաձև մեծ կաթսայի մէջ տա-

քաշնում էին նաւթը, դալը հաւաքւում էր վերևի մասում և այդտեղից գնում խողովակի մէջ, որտեղ նա սառչում էր և իբրև կերոսին թափւում մի նոր կաթսայ: Ահա այդ էր ամբողջ գործարանը, որ զետեղուած էր բաց երկնքի տակ:

Շատերն սկզբում ծիծաղում էին Մելիքովի անմիտ ձեռնարկութեան վրա, բայց շուտով ծիծաղը նախանձ դարձաւ, որովհետև այդ տարօրինակ գործարանը անսպասելի աջողութիւն ունեցաւ: Միրզոյեանի նախաձեռնութեամբ մի նոր ընկերութիւն կազմակերպուեց 2,000 րուբլի դրամագլխով: Ընկերութիւնը բաւական նորանոր ձեռնարկութիւններ և միշտ էլ աջողութիւն ունեցաւ: Դրանից յետոյ նաւթի արդիւնագործութիւնն սկսեց աւելի ու աւելի լայն ծաւալ ստանալ և հետզհետէ կատարելագործուել...

Չը նայելով շրջապատող բարեպատեհ հանգամանքներին, այդ առաջադիմութիւնը սկզբներում կատարւում էր չափազանց դանդաղ կերպով: Վառելանիւթն էլ շատ վատ տեսակի էր ստացւում, թէև վաճառւում էր թանգ գներով, այն է՝ պուդը 4 րուբլի 50 կոպ. Բագւում և 6 րուբլի Մոսկուայում *):

Այդ ժամանակաշրջանում նաւթը հորերից ստացւում էր ամենանահապետական ձևով՝ թոկից կախած տիկը գցում էին հորի մէջ, նաւթով լցնում և ապա փայտէ անիւը պտտցնելով վերև բարձրացնում: Կատարելագործուած մեքենաների հետքն անգամ չկար: Ամեն ինչ կատարւում էր ձեռքով — ամենահասարակ ձևով:

Այդ դառն իրողութիւնը վերջապէս կառավարութեանը ստիպեց ուսումնասիրելու բոլոր այն պատճառները, որոնք արգելք էին դառնում տեղական նաւթային արդիւնագործութեան զարգանալուն ու կատարելագործուելուն: Այդ պատճառների շարքում առաջին տեղն էր բռնում ազատ մրցման բացակայութիւնը: Հարկաւոր էր ոչնչացնել կապալատուութեան սիստեմը, դրանով ասպարէզ քաշել նոր կապիտալիստներ, որոնք կկարողանային լարուած մրցում առաջ բերել: Իսկ այդպիսի մրցումը, ինչպէս յայտնի է, առաջացնում է կատարելագործուած տեխնիկա, արտահանութեան նոր ճանապարհներ ու միջոցներ:

Կառավարութիւնը բոլորովին ոչնչացրեց կապալատուութեան սիստեմը: 1872 թուականից իւրաքանչիւր անհատ ազատ իրաւունք ունէր հորեր փորել և նաւթ արդիւնաբերել: Բայց որպէսզի գանձարանը բոլորովին չզրկուի իր եկամուտից, կառավարութիւնը կապալավարձի փոխարէն ակցիզ նշանակեց զտուած նաւթի վրա: Դա երկու չարիքների փոքրագոյնն էր, որ դարձեալ բարերար ազդեցութիւն ունեցաւ: Ահա այդ օրուանից մեր երկրի նաւթային արդիւնագործութիւնը բռնում է կենդանանալ ու հետզհետէ բարեկարգուել:

Բոլոր նաւթային հողերը 1872 թ. աճուրդով վաճառուեցին մօտ 3,000,000 րուբլու և այդպիսով դարձան մասնաւոր սեփականութիւն: Ամենից շատ հողեր ձեռք բերին Միրզոյեվը, Կոկորեվը, Բենկենդորֆը, Թաղիեվը, Զուբալովը և այլն: Սկսուեց մրցում այդ հողատէրերի մէջ և այդ մրցումը զարկ տուեց նաւթի արդիւնաբերութեան բարգաւաճմանը:

Նաւթային գործարաններն աւելանում էին չտեսնուած արագութեամբ: Շուտով Բագուի ամբողջ մթնոլորտը լցուեց նաւթի հոտով ու ծխով: Հարկաւոր է ազգաբնակութեան առողջութեան մասին մտածել: Հէնց այդ նպատակով կառավարութիւնը առանձին տեղ նշանակեց գործարանների համար: Այդպիսով 1873 թուին հիմնուեց Սև քաղաքը: Վեց ամսից յետոյ այդտեղ արդէն 80 գործարաններ կային: Աշխատանքը առաջ էր գնում արագ-արագ, որովհետև նաւթային գները դեռ բարձր էին...

Սակայն այժմ էլ ակցիզային

*) Ibid.

սիստեմն էր ազատ արդիւնագործութիւնը կաշկանդում: Իւրաքանչիւր պուդի համար պէտք էր վճարել 15 կոպ. ակցիզ: Ծանրակշիռ էր ոչ այնքան այդ գումարը, որքան նրա հետ կապուած ձեւականութիւնները: Նոյն իսկ խոշոր ֆիրմաները չէին կարողանում այդ ձեւականութիւնների ճնշումից ազատ մնալ և տեխնիկայի կատարելագործման մասին մտածել: Շատ անգամ կառավարութիւնը բացարձակապէս արգելք էր լինում նոր մեքենաներ ու մշակման ձեւեր մտցնելուն:

Շատ հատկանշական է, որ այդպիսի պայմաններում կովկասեան նաւթըն էլ իր որակով երբէք համեմատուել չէր կարող ամերիկականի հետ, ուստի, չնայելով հեռաւորութեանը և գների թանգութեանը—(պուդը 3-4 րուբլի)—ամերիկական նաւթի ներմուծումը դէպի Ռուսաստան հետզհետէ աւելանում էր և վաճառանոցներից դուրս մղում տեղական նաւթը: Այդ բանը ապացուցանելու համար բաւական է առաջ բերել հետեւեալ համեմատութիւնը.

| Թ. | ներմուծուած է | նաւթ. |
|---|---|---|
| 1869 | » | 1,099,000 պ. |
| 1870 | » | 1,444,000 » |
| 1871 | » | 1, 720,000 » |
| 1872 | » | 1,790,000 » |
| 1873 | » | 3,400,000 » |
| 1874 | » | 4,400,000 » |

Անհրաժեշտ էր օր առաջ այդ չարիքի առաջն առնել, ուստի կառավարութիւնը դիմեց պրոտեկցիօնիզմի, այսինքն հովանաւորեց իր մայրենի արդիւնագործութիւնը, չափազանց թանգ (պուդին 55 կոպ.) մաքս նշանակելով ամերիկական նաւթի վրա:

Մասամբ այդ միջոցը, մասամբ էլ ուրիշ բարեբաստիկ հանգամանքներ նպաստեցին կովկասեան նաւթի տարածմանը և կամաց-կամաց կրճատեցին ամերիկական նաւթի ներմուծումը: 1883 թուականից ընդմիշտ դադարեց ամերիկական նաւթի ներմուծումը և Ռուսաստանի բոլոր վաճառանոցներում տիրապետեց միայն կովկասեան նաւթը:

* * *

Ճիշտ է կառավարութեան ձեռք առած արհեստական միջոցների շնորհիւ նաւթային գործը քիչ բարեկարգուեց և աւելի շահաւէտ դարձաւ, սակայն այդ բարեկարգութիւնը միայն արտաքին էր և երբէք նախանձի առարկայ չէր կարող դառնալ: Ճիշտ է, արդիւնաբերած նաւթի քանակութիւնը զգալի կերպով աւելանում էր և բաւական ձեռնտու պայմաններով ծախւում, բայց գործարանները մի ողորմելի պատկեր էին ներկայացնում և զտուած նաւթը շատ ստոր որակ ունէր: Կանոնաւոր ամբարներ գոյութիւն չունէին և նաւթը հաւաքում էին հասարակ հողէ փոսերի մէջ: Փոխադրելու միջոցներն էլ շատ վատ էին, չկար երկաթուղի,*) չկային կանոնաւոր ճանապարհներ: Նաւթը լցնում էին տիկերի մէջ և սայլերով կրում մինչև Սև քաղաք: 10,000 սայլ զբաղուած էր միայն այդ գործով: Հեռու տեղեր ուղարկելու համար նաւթը լցնում էին փայտէ տակառների մէջ և այդպէս տեղափոխում: Պարզ է, որ ճանապարհածախսն էլ շատ թանգ էր նստում, այն է՝ մինչև Նիժնի-Նովգորոդ պուդը—43 կ., մինչև Աստրախան—20 կ., մինչև Մոսկուա—91 կ, և այլն:

Նաւթային գործի այդպիսի դանդաղ առաջադիմութիւնը, այդպիսի յետամնաց վիճակը շարունակուեց մինչև խոշոր կապիտալիստների ասպարէզ գալը: Դրանց մէջ ամենագործունեան և ամենաազդեցիկը Նոբէլ եղբայրներն էին, որոնք Բագու գալուն պէս մի շարք համարձակ ձեռնարկութիւններ սկսեցին և նորաձեւութիւններ մտցրին նաւթի արդիւնագործութեան մէջ: **)

Ինչպէս վերևում նկատեցինք նաւթը սայլերով և տիկերով էին

*) Միայն 1878-79 թ. շինուեց Բալախանի երկաթուղին:

**) К. И. Лисенко. «Очеркъ дѣятельности Л. Э. Нобеля.»

-տեղափոխում: Նօբէլ եղբայրները իսկոյն ըմբռնեցին այդ միջոցի անյարմարութիւնն ու վնասակարութիւնը և սկսեցին նաւթային խողովակներ շինել: Միւս գործարանատէրերը մեծ յոռետեսութեամբ էին վերաբերւում դէպի այդ ձեռնարկութիւնը. սակայն շուտով նկատելով նրա առաւելութիւնները, իրանք էլ կամաց-կամաց հետեւեցին այդ օրինակին: Այժմ այդպիսի խողովակների թիւը հասնում է 38-ի, որոնց միջով միայն անցեալ 1900 թ. փոխադրած է 427,700,000 փութ նաւթ: Թէ որքան մեծ առաւելութիւններ ունի այս միջոցը--կարելի է եզրակացնել նրանից, որ սայլերով փոխադրելիս մէկ փութի քրէհը նստում էր 5 կոպ., իսկ այժմ 1/4 կոպ.:

Դրանից յետոյ Նօբէլ եղբայրները սկսեցին մտածել նաւթի փոխադրութեան միւս միջոցները հեշտացնելու մասին և հասարակ տակառները փոխարինեցին նաւթատար նաւերով: Առաջին անգամ 1878 թ. Կասպից ծովի վրա երեւաց «Զրադաշտ» մեծանուն նաւը և ապա դրան հետեւեցին միւսները: Կարճ միջոցից յետոյ Կասպից ծովում երթեւեկել սկսեցին մի շարք նաւթատար նաւեր՝ մարդկութեան մտքի և բարոյականութեան ղեկավարների—Բուդդայի, Բրամայի, Մահմեդի, Մովսէսի, Սոկրատէսի, Սպինօզայի, Լինէյի, Դարվինի անուններով կնքուած. *) Այդ նաւերը զարկ տուին նաւթային վաճառականութեանը, զգալի չափով էժանացնելով փոխադրութեան ծախսը: Այսպէս, օրինակ, տակառներով փոխադրելիս հարկաւոր էր մէկ ցենտների համար ճանապարհածախս վճարել մինչև Աստրախան 1 ր. 10 կոպ., Ցարիցին 1. 80 կ., Նիժնի-Նովգորոդ 2 ր. 40, իսկ նաւերով փոխադրելիս՝ մինչև Աստրախան 18 կոպ., Ցարիցին 24 կ., Նիժնի-Նովգորոդ 52կ.:

*) В. Ковалевскій: «Россія въ концѣ XIX вѣка».

Ահա այդքան բարերար ազդեցութիւն ունեցաւ Նօբէլի օրինակը: Ներկայումս Կասպից ծովի նաւթային նաւատորմը բաղկացած է 134 շոգենաւերից և 214 առագաստաւոր նաւերից, որոնք հարիւր միլիոնաւոր փութերով նաւթ են փոխադրում դէպի Ռուսաստան և ուրիշ հեռաւոր երկիրներ:

Այդ բարեփոխութեան հետ միասին Նօբէլը գործածութեան մէջ մտցրեց նաև ամերիկական ձևի նաւթատար վագօններ—(вагоны—цистерны), որոնք հեշտ ու էժան կերպով նաւթը հասցնում էին մինչև Պետերբուրգ, Վարշաւա, Կիեվ և ուրիշ հեռաւոր քաղաքներ:

Փոխադրութեան միջոցները բարեկարգելուց յետոյ Նօբէլին մնում էր վաճառանոցների մասին մտածել: Ռուսաստանի ներքին վաճառանոցներն անբաւարար համարելով, նա նպատակայարմար գտաւ նաւթը արտասահման արտահանել և դրա համար ընկերութիւններ կազմակերպեց նախ Գերմանիայում և ապա Աւստրիայում:

Մի կողմից խոշոր կապիտալիստների յայտնուելը, իսկ միւս կողմից Անդրկովկասեան երկաթուղու բացուելը (1883 թ.) ահագին զարկ տուին նաւթային արդիւնագործութեան ու վաճառականութեան և մի նոր դարագլուխ բաց արին Կովկասի տնտեսական կեանքի համար:

Նաւթի մեծ արտահանութեան շնորհիւ Բագուն ահագին գումարներ է դուրս կորզում զանազան երկրներից ու վաճառանոցներից: Օրինակ, եթէ վերցնելու լինենք անցեալ 1900 թուականը, այն ժամանակ կտեսնենք, որ միայն այդ տարուայ ընթացքում Բագուի կապիտալիստները ստացել են՝

| | րուբլի |
|---|---|
| Վառելանաւթի համար | 33,336,000 |
| Նաւթային մնացորդն. | 43,246,800 |
| Օծանելի զանազան իւղեր | 6.700,000 |
| Հում նաւթի | 6,123,000 |
| Բենզինի | 438,056 |
| Ընդամենը | 89,843,856 |

Այդ պատկառելի գումարի մեծ մասը ստացուել է արտասահմանեան վաճառանոցներից. պէտք է նկատել, որ վերջին տարիներում ռուսական նաւթի արտահանումը դէպի Եւրոպա և ուրիշ երկրներ զգալի չափով աւելանում է: Միայն մի քառամեակի ընթացքում արտահանած բոլոր նաւթային նիւթերի քանակութիւնն ու արժէքը ներկայացնում է հետեւեալ պատկերը *):

| Թ. | քանակը-պուդ | արժէքը ռուբ. |
|---|---|---|
| 1897 | 62,727,000 | 25,156,000 |
| 1898 | 67,016,000 | 26,084,000 |
| 1899 | 83,790,000 | 31,678,000 |
| 1900 | 86.687,000 | 45,973,000 |

Այդ նիւթերը ներմուծուել են (1900 թ.) գլխաւորապէս հետեւեալ երկիրները **).

| | պուդ | ռուբլի |
|---|---|---|
| Գերմանիա | 9,716,000 | 6,467,000 |
| Անգլիա | 18,009,000 | 7,729.000 |
| Ֆրանսիա | 800,000 | 2,912,000 |
| Աւստրո-Ունգ. | 320,000 | 149,000 |
| Բելգիա | 939,000 | 403,000 |

Բացի դրանից բաւական մեծ քանակութիւն ներմուծուել է նաև Պարսկաստան, Թիւրքիա, Չինաստան, Շվեցիա, Նորվեգիա և այլն:

Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ թէև մեր երկիրը նաւթի հայրենիքն է, բայց այնուամենայնիւ Կովկասի ազգաբնակութեան իւրաքանչիւր անդամը համեմատաբար աւելի քիչ նաւթ է գործածում, քան թէ ուրիշ երկրների բնակիչները:

* * *

Վերցնենք օրինակ. վերջին տասնամեակը և տեսնենք, թէ Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի և Կովկասի իւրաքանչիւր բնակիչը տարեկան միջին թւով քանի՞ փունտ նաւթ է գործածում ***):

| Թ. | Անգլիա. | Գերմ. | Ռուս. | Կովկաս. |
|---|---|---|---|---|
| 1891 | 34 | 30 | 10 | » |
| 1892 | 24 | 35 | 9 | » |
| 1893 | 28 | 36 | 12 | » |
| 1894 | 31 | 37 | 10 | » |
| 1895 | 31 | 38 | 10 | » |
| 1896 | 33 | 40 | 11 | 8 |
| 1897 | 29 | 41 | 11 | 8 |
| 1898 | 39 | 40 | 12 | 9 |
| 1899 | 42 | 40 | 13 | 9 |
| 1900 | 42 | 41 | 13 | 11 |

Ուրեմն անցեալ 1900 թ. իւրաքանչիւր անգլիացի գործ է ածել միջին թւով 42 փունտ նաւթ, իւրաքանչիւր գերմանացի - 41 ֆ., ռուսաստանցի—13 ֆ., իսկ իւրաքանչիւր կովկասցի—միայն 11 ֆ.: Աւելացրէք դրա վրա նաև այն հանգամանքը, որ Անգլիայում ու Գերմանիայում չափազանց տարածուած են գազն ու էլէքտրականութիւնը և այն ժամանակ հասկանալի կլինի, թէ Ռուսաստանը և Կովկասը որքան յետ են մնացել այդ տեսակէտից: Պատճառը մասամբ ակցիզի ճնշումն է *), մասամբ էլ ժողովրդի կուլտուրան և տնտեսական պայմանները:

Այժմ տեսնենք, թէ նաւթային գործը որքան մեծ գումարներ է կլանել միայն վերջին տասնամեակի ընթացքում: Այդ ժամանակաշրջանում ամբողջ Ապշերօնեան թերակղզու վրա ստացուած է 3157 միլիօն պուդ նաւթ, որի համար փորուած է 740 վերստ խորութիւն և ծախսած է 110 միլիօն ռուբլի միայն փորելու համար: Իսկ եթէ այդ գումարի վրա աւելացնենք գործարանական և միւս ծախսերը, այն ժամանակ կը ստանանք աւելի մեծ գումար, այն է 170 միլիօն ռուբլի: Միայն անցեալ 1900 թ. ծախսած է մօտ 38 միլիօն ռուբլի:

Ապշերօնեան թերակղզու վրա շահագործւում է (1900 թ.) ընդամենը 906 դեսեատին նաւթաբեր տարածութիւն, որից 379 դեսեատինը Բալախանիում, 275 դեսեատին—Սաբունչիում, 75 դեսեատին Ռօմանիում, 158 դեսեատին Բիբի-

*) «Обзоръ Бакинскій нефтяной промышленности за 1900 годъ».

**) Jbid.

***) Պարզութեան համար վերցնում ենք միայն ամբողջ թւերը:

*) «Труды XIV съѣзда нефтепромышленниковъ въ Баку. Дладъок М. Алибекова».

Հէյբաթում և 19 դեսեատին Բինագադիում: Իսկ ստացուած նաւթային նիւթերի քանակութիւնը այդ տեղերի համեմատ 1902 թ. դասաւորուած է եղել այսպէս *):

| | | |
|---|---|---|
| Բալախանի. | 101,504,267 | փութ |
| Սաբունչի. | 267,159,044 | — |
| Ռամանի. . | 139,943,833 | — |
| Բիբի-Հէյբաթ. | 127,433,285 | — |
| Բինագադի. . | 488,423 | — |
| Զաբրատ. . . | 302,268 | — |
| Ընդամենը | 636,831,120 | փութ |

Այդ միևնոյն թուականին նաւթարդիւնաբերող ֆիրմաների թիւը հասնում էր 167-ի, որոնց մէջ առաջնակարգ տեղը բռնում են Մանթաշև և Ընկ., Նոբէլ, «Бак. О-во рус. нефти», Ձիբաեվ և Ընկ., Թումաեվ և Ընկ., Թաղիեվ, Ասադուլաեվ, Փիթոյեվ և Ընկ., «Каспiйск. Т-во», Զուբալօվ և այլն: Իսկ նաւթահանքերի թիւը եղել է 1895 թ.— 604, 1896 թ.—736, 1897—թ. 917, 1898 թ.—1107, 1899 թ.—1357, 1900 թ.—1710, 1901 թ.—1924, 1902 թ.—1353:

Այստեղ անհրաժեշտ է արձանագրել մի հետաքրքիր երևոյթ, որ առանձնապէս աչքի է ընկնում վերջին ժամանակներս: Նաւթարդիւնաբերող մանր ֆիրմաները հետզհետէ դադարեցնում են իրանց գոյութիւնը, իսկ միւս կողմից աւելանում են ակցիոներական ընկերութիւնները և խոշոր ֆիրմաները: Այդպէս է կապիտալիստիկ արդիւնագործութեան ընթացքը, այդպէս է տնտեսական մրցման հետևանքը:

* * *

Խօսելով նաւթային արդիւնագործութեան մասին, մենք մինչև այժմ աչքի առաջ ունէինք գլխաւորապէս նրա արտաքին կողմը, ուր առաջնակարգ դերակատարներն էին նաւթային «տուզերը» — կապիտալիստները: Բայց որքան էլ որ մեծ կապիտալներ մտցնուեն գործի մէջ, որքան էլ որ կատարելագործուի տեխնիկան, այնուամենայնիւ նաւթահանքերի աջողութիւնը զգալի չափով կախուած է այն կենդանի ու անպաճոյճ էակներից, որոնք յայտնի են «բանւորներ» անունով: Իւրաքանչիւր հանքատիրոջ համար բանւորները աւելի մեծ դեր են խաղում, աւելի մեծ անհրաժեշտութիւն են կազմում, քան թէ շոգեկաթսան ու մեքենան, քան թէ նաւթային ամբողջ գործարանը, որը միայն բանւորների խելքով ու ջլուտ ձեռքերով է կենդանութիւն ստանում— շարժւում:

Դժբաղդաբար հանքատէրերից շատ քչերն են հասկանում այդ իրողութիւնը և հասկացողներն էլ միայն պալլիատիւ միջոցներով են իրանց պարտքը կատարում: Շատերի համար նաւթահանքի և գործարանի անշունչ իրերն աւելի մեծ խնամքի են արժանի, քան թէ շարժուն էակները—բանւորները: Երբ բանւորը հիւանդանում է, թէև նրան հնարաւորութիւն են տալիս ձրի բժշկուելու, բայց բաւականանում են միայն դրանով և այնուհետև նրա վիճակը թողնում են անգութ բաղդի հաճոյքին.

Երբ բանւորը մի որև է դժբաղդ դէպքում զրկւում է աշխատելու ընդունակութիւնից, կորցնում է իր ձեռքը, ոտքը կամ տեսողութիւնը, այն ժամանակ հանքատէրը միայն մի չնչին գումար է տալիս և վտանգուած բանւորին հեռացնում, թողնելով որ նա իր ամբողջ կեանքում սովից տանջուի, կարիքների լծի տակ հալ ու մաշ լինի...

Երբ բանւորն իր աշխատանքը կատարելիս յանկարծահաս մահ է ստանում, այն ժամանակ էլ նրա ընտանիքն է մնում թշուառ ու անօգնական վիճակի մէջ, նրա անմեղ զաւակներն են դեգերում աղքատութեան ճանկերում: Հանքատիրոջ փոյթն էլ չէ այդ ցաւալի վիճակը: Նա մտածել անգամ չի ուզում այդ անմեղ զոհերի մասին: Նրան հարկաւոր էին աշխատող ձեռքեր, չը կան այդ ձեռքերը՝—չը կայ և ոչ մի պարտականութիւն նրա համար: Ահա այդքան վատ է

*) «Обзоръ Бакинской нефтяной промышленности за 1902 годъ».

բանւորների դրութիւնը Նաւթային աշխարհում:

Բայց բանւորները վատ վիճակի մէջ են ոչ միայն մեզանում, ոչ միայն Նաւթային աշխարհում, այլ և ամենուրեք, նոյն իսկ քաղաքակիրթ երկիրներում. Անգլիան իր հարստութեամբ առաջին տեղն է բռնում, սակայն նրա աշխատաւոր դասակարգը միայն այդ հարստութեան փշրանքներն է վայելում: Տնտեսագէտ Գօբսօնի *) ասելով՝ Անգլիական ազգաբնակութեան տարեկան եկամուտը հասնում է 1,300,000,000 ֆունտ ստերլինգի, որը բաժանուած է այսպէս.

| | | |
|---|---|---|
| Հողավարձ | . 200,000,000 | ֆունտ |
| Տօկոսներ | . 250.000,000 | » |
| Օգուտ . | . 350,000,000 | » |
| Օրավարձ | . 500,000,000 | » |
| | 1,300,000,000 | |

Այդպէս ուրեմն ամբողջ գումարից միայն 500,000,000 ֆ. է աշխատաւոր դասակարգին բաժին ընկնում, թէև դրանց աշխատանքն է այդ ամբողջ եկամտի իսկական աղբիւրը, թէև դրանց դառն քրտինքն է տնտեսական կեանքի գլխաւոր գործօնը: Մնացած գումարը վայելում են մանր ու խոշոր կապիտալիստները և կալուածատէրերը: Այդպիսի պայմաններում այդ հարուստ երկրում էլ աղքատութիւնը բացառիկ երևոյթ չէ կազմում: Նրա 38 միլիօն ազգաբնակութիւնից միայն 11 միլիօնն է ունևոր: Բուտսի ասելով՝ Լօնդօնի բնակիչների 35% ամենաաղքատ վիճակի մէջ է: Միայն 1890 թուականին 31 հոգի մեռել են սովից:

Անհաւասարութեան նոյնպիսի երևոյթներ նկատւում են նաև ուրիշ երկրներում՝ Ֆրանսիայում, Բելգիայում, Ամերիկայում, Գերմանիայում և այլն. իսկ ապացոյց բաւական է կարդալ Վուրմի աշխատութիւնը—(«Жизнь нѣмецкихъ рабочихъ»), որի մէջ միմեանց ետևից անցնում են գերմանական բանւորների կեանքից վերցրած մռայլ և մութ պատկերները—նրանց ապրուստը, բնակարանները, հիւանդութիւնները, սնունդը, տնտեսութիւնը և այլն...

*) Д. Гобсонъ: «Проблемы бѣдности и безработицы».

Բայց պէտք է աչքի առաջ ունենալ, որ արտասահմանեան բանւորների վիճակը վատ է միայն տեղական պայմանների ու միւս դասակարգերի համեմատութեամբ: Իսկ եթէ նրանց համեմատելու լինենք մեր Կովկասեան և մանաւանդ Նաւթահանքերի բանւորների հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ նրանք իրանց կուլտուրական պահանջներով, իրանց նիստ ու կացով և մտաւոր կրթութեամբ անչափ բարձր են մեր բանւորներից և ամենայն իրաւամբ վերջիններիս «աղաները» կարող են համարուել:

Արտասահմանեան բանւորների մէջ չափազանց զարգացած է ընկերական ոգին, այդ պատճառով էլ նրանց կազմակերպութիւններն օրէցօր բազմանում են և անդամների թիւը մեծանում. Դեռ 1898 թուականին կազմակերպուած բանւորների թիւը հասնում էր *).

| | հոգի. |
|---|---|
| Անգլիայում . . . | 1,644,591 |
| Հիւսիսային-Ամերիկայում. | 1,000,000 |
| Գերմանիայում . . . . | 700,000 |
| Ֆրանսիայում . . . . | 419,761 |
| Աւստրօ-Ունգարիայում . | 105,855 |
| Շվէյցարիայում . . . . | 174,181 |
| Բելգիայում . . . . . | 70,000 |
| Հոլլանդիայում . . . . | 126,669 |
| Դանիայում . . . . . | 96,295 |
| Նորվեգիայում . . . . | 24,000 |
| Շվեցիայում . . . . . | 50,000 |

Պարզ է, որ կազմակերպութիւնների շնորհիւ արտասահմանեան բանւորները կարողանում են միմեանց փոխադարձ օգնութիւն հասցնել, ընդհանուրի շահերը պաշտպանել և այդպիսով իրանց համար աւելի բարւօք վիճակ ստեղծել: Մեր բանւորները զուրկ են այդ միջոցից. շրջապատող սօցիալական պայմաններն էլ աւելի վատ են, ուստի և նրանց համար ստեղծուել է մի աննախանձելի դրութիւն, որի մը-

*) Prof W. Sombart. «Dennoch!»

ռայլ պատկերը ցնցում կարող է առաջացնել ամեն մի զգայուն սըրտում: Սակայն դիմենք փաստերին:

Նաւթային արդիւնագործութեան զարգացման հետ զուգահեռաբար մեծանում է տեղական բանուորների թիւը: Իբրև ապացոյց վերցնենք հետևեալ աղիւսակը.

1896 եղել է 92 ֆիր. 8176 բանուորներով.
1897 » 100 » 10,952 »
1898 » 140 » 13,705 »
1899 » 160 » 16,895 »
1900 » 167 » 21,253 »

Այսպէս ուրեմն հինգ տարուայ ընթացքում բանուորների թիւը գրեթէ երեք անգամ աւելացել է: Դա միայն նաւթահանքերի բանուորների թիւն է. եթէ վերցնենք գործարանական բանուորներին էլ, այն ժամանակ աւելի մեծ թիւ կըստանանք, այն է՝ 1888 թ.—18,874, 1889թ.—մօտ 22,000, 1900 թ.—26,000 և 1901 թ. սկզբում—մօտ 33,000 բանուորներ: Դրանց ամենամեծ տօկոսը կազմում են հայերը և ապա պարսիկները: 1889 թ. բանուորները ըստ ազգութեան դասաւորուած են եղել այսպէս.

Հայեր . . . . . . . . . . 5314
Պարսիկներ . . . . . . . 4590
Ռուսներ . . . . . . . . . . 4123
Լեզգիներ . . . . . . . . . 2911
Թաթարներ . . . . . . . . 3517
Ուրիշ ազգութ. . . . . . . 723

Բայց ինչպէս յայտնի է, բանուորական դասակարգն էլ ունի իր որոշ գրադացիան, ունի որոշ աստիճաններ: Կան բանուորներ, որոնք միայն ամենապարզ, ամենակոպիտ աշխատանքներ են կատարում և դրա հակառակ կան այնպիսիները, որոնք շատ բարդ գործեր են վարում: Պարզ է, որ այս վերջին դէպքում բանուորը պիտի ունենայ որոշ պատրաստականութիւն, մտաւոր ու տեխնիկական որոշ վարժութիւն: Ահա հէնց այդ պատճառով բանուորի կատարած գործից կարելի է գաղափար կազմել նրա զարգացման մասին: Տեսնենք ուրեմն, թէ իւրաքանչիւր ազգութեան բանուորներն այդ տեսակէտից ինչպիսի տեղ են բռնում: 1898 թ. թէ նաւթահանքերի և թէ գործարանական բանուորների թիւը հասնում էր 18,874—ի, որոնք իրանց ազգութեան ու կատարած գործերի համեմատ դասաւորուած էին այսպէս.

| | Հայեր. | Պարս. | Ռուսն. | Լեզգի. | Թաթար. | Ուրիշ ազգութիւն. |
|---|---|---|---|---|---|---|
| Վարչ. մաս. և գրասենեակ | 445 | 6 | 172 | 13 | 46 | 120 |
| Հոր փորողներ | 1877 | 3606 | 1000 | 2162 | 2216 | 172 |
| Արհեստանոց | 1472 | 149 | 1862 | 109 | 143 | 331 |
| Մեքեն. մօտ. | 785 | 220 | 442 | 114 | 192 | 53 |
| Ուրիշ գործերի | 204 | 67 | 195 | 187 | 496 | 28 |
| Ընդամենը | 4783 | 4048 | 3671 | 2585 | 3122 | 668 |

Առաջ բերած թուերի համեմատութիւնից կարելի է եզրակացնել, որ նաւթային բանուորների մէջ ռուսները առաջին տեղն են բռնում իրանց կուլտուրայով, իրանց զարգացմամբ, որովհետև նրանք են կատարում ամենաբարդ, ամենապատասխանատու դերերը: Նրանց հետևում են հայերը և ապա միւս ազգութիւնները:

Բանուորական կրթութեան պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ ենք համարում յիշել նաև, թէ իւրաքանչիւր ազգութեան պատկանող բանուորների ո՞ր % է գրագէտ: Հաւաքած վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ հայ բանուորների 41% է գրագէտ (այսինքն 100-ից-41-ը), ռուսներից-65%, թաթարներից-2%, պարսիկներից-2%, լեզգիներից 3% և այլն: Իսկ ընդհանրապէս վերցրած բոլոր բանուորների 23%-ն է գրագէտ:

Գալով բանուորների առողջապահական վիճակին, պէտք է նկա-

տել, որ նա միանգամայն անտանելի է *)... Յատուկ վերլուծումից երևացել է, որ նրանց գործածած ջուրը-(թէ Կուրի և թէ ջրհորների)-միանգամայն վնասակար է առողջութեան համար: Նրանց շնչած օդն էլ իր մէջ պարունակում է մեծ քանակութեամբ մուր, այնպէս որ a priori կարելի է ասել, թէ նա վատառողջ ազդեցութիւն կարող է ունենալ շնչառութեան գործարանների վրա: Հապա բնակարանները... Ի՞նչ կեղտ, ի՜նչ հիւանդութեան միկրօբ ասես որ չըկայ այդտեղ: Հողերի թանգութիւնը մի կողմից և բանւորների բազմանալը միւս կողմից ստեղծել են մի նախանձելի դրութիւն բնակարանատէրերի համար: Նրանք իրանց տան ամեն մի խոռոչը սենեակ—բնակարան են դարձնում և ձեռնտու պայմաններով քրէհով տալիս: Այդ նեղ ու մութ խոռոչներում բանւորները թափւում են միմիանց վրա առանց ուշք դարձնելու առողջապահութեան և ուրիշ յարմարութիւնների վրա: Բժ. Գ. Տէր-Յովհաննիսեանցը, խօսելով մահմեդական բանւորների մասին, ասում է. «Կան բնակարաններ, որոնց միակ լուսամուտը դռան տեղ էլ է ծառայում: Դրանց բնակիչները մի արշին բարձրութիւնից վայր են թռչում ու վերև ցատկում.:. Կան բնակարաններ, որտեղ մարդիկ և աւանակները միասին են քուն մտնում, հանգիստ վայելում **)...»

Նրա զննած 256 բնակարաններից 130-ը միայն մի-մի լուսամուտ են ունեցել, 16-երկու, 65-ը փոքրիկ ծակեր՝ լուսամուտի փոխարէն, և 35-ը առանց մի որև է լուսամուտի կամ ծակի: Այդ բնակարանները ամենածայրահեղ աղքատութեան պատկերներ են պարունակում իրանց մէջ: Օրինակ, մի տան մէջ ապրում են 60 բանւորներ, որոնք բոլորն էլ—բացի մէկից—մի-մի շապիկ ունեն: Դրանցից երեքը անկողին չունենալու պատճառով քնում են մի ջեջիմի տակ:

Բայց աղքատութեան աւելի սարսափելի փաստեր կան. մի սենեակում 7 բանւոր են ապրել, բայց նրանց ամբողջ արդուզարդը բաղկացած է եղել մի հին վերմակից, մի կտոր խալից և չորեքի ցնցոտիներից: Դրան կից մի ուրիշ սենեակում 8 մարդու համար եղել է 4 վերմակ, 4 խալի և 2 բարձ: Հետևեալ սենեակում 9 հոգի միայն 5 վերմակ են ունեցել: Այդպիսի օրինակները անվերջ են, բայց բաւականանանք առաջ բերածով, որովհետև դրանցով էլ կարելի է պատկերացնել թշուառ բանւորների աննախանձելի կենցաղավարութիւնը:

Այդ երևոյթի պատճառներից գլխաւորը օրավարձի քչութիւնն է: Եւ իսկապէս. բանւորը ինչպէս կարող է այդ թանգութեան մէջ կոմֆորտի մասին մտածել, լաւ բնակարան ունենալ, լաւ սնունդ ստանալ, երբ նրա տարեկան եկամուտը հասնում է միջին թւով 268 րուբլու, երբ նրա կոպէկներին կարօտ է մի ամբողջ ընտանիք:

Եթէ նաւթային բանւորների օրավարձը համեմատելու լինենք միւս քաղաքների բանւորական օրավարձի հետ, այն ժամանակ գերադասութիւնը պէտք է տանք Բագուին, բայց եթէ աչքի առաջ ունենանք նաև տեղական թանգութիւնը և վատառողջ պայմանները, այն ժամանակ կտեսնենք. որ ոչ մի առիթ չկայ կարծելու թէ Բագւում ոսկու հանքեր են փռուած:

Նաւթային աշխարհն ունի իր սպեցիֆիկ պայմանները, որոնք նպաստում են դժբաղդ դէպքերի բազմանալուն, մարդկային զոհերի շատանալուն: Այսպէս օրինակ, 1895 թ. տեղի են ունեցել 38 դժբաղդութեան դէպքեր, 1896 թ—48, 1897 թ.—91. դրանցից մեռել են

*) «Труды XIII съѣзда нефтепромышленниковъ»

**) «Очеркъ жизненныхъ условій персидско—подданныхъ рабочихъ въ Баку».

1895 թ.—14 հոգի, 1896 թ.—14 և 1897 թ.—25: Անհասարակ իւրաքանչիւր հազար բանւորին դալիս է.

Մահացութիւն դժբաղդ դէպքից 2,1
Աշխատ. ընդուն. բոլորովին կորցնել 1,1
Աշխատ. ընդուն. մասամբ կորցնել 11,5
Ժամանակաւոր անընդուն. աշխատելու 213,—
Ընդամենը 227,7

Ուրեմն բանւորական ընդհանուր թուի 1/5-ից աւելին ենթարկուել է դժբաղդ դէպքերի:

* * *

Ամփոփելով մեր բոլոր տւածները նաւթային արդիւնագործութեան մասին, գալիս ենք այն եզրակացութեան, որ նա անտեսական մի խոշոր դէր է ընդհանրապէս Ռուսաստանի և առանձնապէս Կովկասի համար: Այդ իրողութիւնն աւելի լուսաբանելու համար վերցնենք մի շարք վիճակագրական տեղեկութիւններ ևս *):

Նաւթային արդիւնաբերութիւնն ու վաճառահանութիւնը 1880-1902 թ.

| Տարիներ | Ստացուած է ընդամենը | Արտահանուած մաքր. նաւթ. | Արտահանուած ընդամենը |
|---|---|---|---|
| | | Միլլիօն պդ. | |
| 1880 | 25 | 15,2 | 7,8 |
| 1881 | 40 | 23,4 | 11,6 |
| 1882 | 50 | 27,3 | 12,8 |
| 1883 | 60 | 29,5 | 14,2 |
| 1884 | 89 | 5?,7 | 21,7 |
| 1885 | 115 | 67,1 | 27,4 |
| 1886 | 123 | 71,9 | 32,4 |
| 1887 | 160 | 91,2 | 44,0 |
| 1888 | 182 | 114,9 | 50,0 |
| 1889 | 192 | 157,2 | 61,1 |
| 1890 | 226 | 175,5 | 67,3 |
| 1891 | 274 | 194,1 | 74,0 |
| 1892 | 286 | 212,8 | 78,7 |
| 1893 | 324 | 427,4 | 85,9 |
| 1894 | 297 | 287,6 | 71,2 |
| 1895 | 377 | 283,3 | 81,0 |
| 1896 | 386 | 305,3 | 86,4 |
| 1897 | 421 | 344,8 | 90,3 |
| 1898 | 486 | 391,3 | 94,6 |
| 1899 | 525 | 485,7 | 103,2 |
| 1900 | 600 | 439,6 | 123,5 |
| 1901 | 671 | 485,9 | 128,7 |
| 1902 | 6368 | 513 | 120 |

*) Քաղել ենք «Справочная книжка для нефтепромышлениковъ», «Труды съѣзда» и «Обзоръ Бакинской нефт. промышл.» աշխատութիւններից:

## Բագուի նաւթային արդիւնաբերութիւնը 1902 թուի ընթացքում

—

Անցեալ 1902 թուի ընթացքում արդիւնաբերուած է 636,800,000 պ. նաւթ, որից 541,900 000 պ. ֆոնտանի միջոցով: Նախընթաց 1901 թուի արդիւնաբերութեան հետ համեմատելով՝ պակաս է ստացուած մօտ 34,400,000 փութ: Անցեալ տարի ստացուած է 671,200,000 պ., որից 573.200,000 փութ քաշելով և 98,000,000 պ. ֆոնտանի միջոցով: Բագուից արտահանուած են Կասպից ծովի վրայով և երկաթուղիով կերօսին, ցիտելադ և նաւթային մնացորդներ 513,200,000 պ., 25 միլլիօն փութ աւելի, քան անցեալ տարի: Անցեալ 1901 թուին արտահանուած է 488,200,000 փութ: 1903 թ., յունուարի 1-ից մնում է մնացորդ նաւթ 33,800,000 պ., կէրօսին և դիստիլ. 20,300,000 պ., իւղ 3,800.000 պ., նաւթային մնացորդ 83.000,000 պ.—ընդամենը՝ 140,000,000 փութ մնացորդ: Նաւթի գինը տարուայ ընթացքում տատանուել է 4,6 կոպէկից մինչև 7,98 կոպ., այսինքն տարուայ արժէքի միջին գինը եղել է 6,72 կոպ.:

—

## Նաւթային արդիւնագործութիւնը Գրօզնիում

Ստացուած է *)

1898 թ. 18,320.000, փութ նաւթ
1899 » 25,195,666, » »
1900 » 30,687,948, » »
1901 » 34.852,271, » »
1902 » 34,072.271, » »

*) «Обзоръ Бакинск. нефт. промышл. за 1902 г.» ч. III, стр. 345.

*Ամերիկայի և Ռուսաստանի նաւթային արդիւնագործութեան համեմատութիւնը։*

*Ստացուած է օրական միջին թւով*

| Տարիներ | Ամերիկայում | Ռուսաստանում։ |
|---|---|---|
| | Հազար պուդ | |
| 1885 | 464 | 304 |
| 1886 | 597 | 397 |
| 1887 | 602 | 438 |
| 1888 | 539 | 497 |
| 1889 | 683 | 526 |
| 1890 | 880 | 620 |
| 1891 | 1069 | 752 |
| 1892 | 996 | 783 |
| 1893 | 970 | 889 |
| 1894 | 990 | 815 |
| 1895 | 1051 | 1034 |
| 1896 | 1197 | 1083 |
| 1897 | 1168 | 1153 |
| 1898 | 1036 | 1333 |
| 1899 | 1157 | 1439 |
| 1900 | 1152 | 1646 |
| 1901 | 1128 | 1839 |

## ՀԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Դեռ շատ հին ժամանակներից Կովկասն յայտնի էր իր հանքային հարստութիւններով, դեռ տասնեակ տարիներ առաջ եւրոպացի գիտնականները, ուսումնասիրելով նրա բնական հարստութիւնները գրել են.—Կովկասն իր ծոցում պարունակում է առատ հանքեր, բազմազան մետաղներ։ Հարկաւոր է օր առաջ շահագործել բնութեան այդ ձրի տուրքերը *)...

Դժբաղդաբար տեղական ազգաբնակութիւնը ցանկալի արձագանքը չէ տուել այդ նպատակայարմար կոչին, ցանկալի ջանքն ու եռանդը չէ նուիրել հանքային գործին։ Մեր երկրի շատ կողմերը դեռ մնում են առանց ուսումնասիրութեան, մի քանի վայրերն էլ, թէև յայտնի են իրանց հանքերով, բայց դեռ չեն շահագործւում, որովհետև չկայ նախաձեռնող համարձակ ձեռքը, չկան հարկաւոր կապիտալները...

Ահա այդպիսով տասը լայնածաւալ նահանգներից բաղկացած Կովկասը իսկապէս մի ողորմելի պատկեր է ներկայացնում իր հանքային գործով։ Իբրև ապացոյց վերցնենք հանքահանութեամբ զբաղուած բանուորների թիւը, որ մի նշանացոյց կարող է լինել արդիւնագործութեան այդ ճիւղի զարգացման համար, որովհետև այստեղ աւելի քան երկրորդական դեր են կատարում մեքենաները։ Անցեալ 1899 թ. Կովկասի բոլոր հանքային գործարաններում եղել են ընդամէնը 7103 բանուորներ, որոնցից 3282-ը արդիւնաբերել են մարգանեց, 2307-ը—պղինձ, 607-ը—արճիճ, 327-ը—քարածուխ և 28-ը—երկաթ։ Ուրեմն գլխաւոր տեղը բռնում է մարգանեցի և պղնձի արդիւնաբերութիւնը, իսկ վերջին տեղը—երկաթի արդիւնաբերութիւնը։ Այդ միեւնոյն 1899 թ. ստացուել է աւելի քան 27 միլիոն պուդ մարգանեց, որը արտահանուել է դէպի՝

1. Անգլիա . 8,502,000 պուդ
2. Հոլլանդիա 8,037,000 »
3. Ամերիկա . 5,927,000 »
4. Ռուսաստան 2,663,000 »
5. Գերմանիա 888,000 »
6. Ֆրանսիա 439,000 »
7. Բելգիա . . 55,000 »

Պղինձ էլ բաւական մեծ քանակութիւն է կազմել, որ արտահանուել է գլխաւորապէս դէպի Ռուսաստան։ Մնացած չնչին մասն է գործածուել տեղական կարիքների համար։

Միջանկեալ նկատենք, որ ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ բանուոր դասակարգը առանց զոհերի չէ ազատուել։ Մի տարուայ ընթացքում 77 դժբաղդ դէպքեր են տեղի ունեցել, որոնցից 21-ը մահացու հետեւանքով է վերջացել։

Այդպէս է եղել Կովկասի հան-

*) Abich: «Geologische Forschungen in den Kaukasischen Länder».

քային գործի գլուխինը 1899 թ. բայց ժամանակի ընթացքում այդ գործունէութիւնը որոշ փոփոխութեան է ենթարկուել, որով և ստացուել է հետեւեալ պատկերը.

1901 թ. Կովկասում եղել են *).

**Պղնձի հանքագործարան**

Թիֆլիսի. նահ. Բորչալուի գաւ. 3, արտադրել է 2052.000 պ. հանք.
Քութայիսի ն. Բաթումի շրջան 1, արտադրել է 505 500 պ. հանք.
Գանձակի ն Գանձակի գաւառ 2, արտադրել է 3 456,790 պ. հանք.
Գանձակի ն. Զանգեզուրի գ. 12, արտադրել է 325,418 պ. հանք.
Երևանի ն. Ալէքսանդրապոլի գ. 1, արտադրել է 42,650 պ. հանք.
Քութայիսի ն. Արթուինի գաւ. 9, արտադրել է 545,058 պ. հանք.

Ընդամենը 286,934,416 » »

**Արծաթի հանքագործարան**

Տերեկի նահանգ Վլադիկավկազի գաւառ 15, արտադրել է 286,626 պ. հ.
Քութ. Բաթ. շրջ. 1, արտ. 60 պ. հ.

Ընդամենը 286,686 » »

**Երկաթի հանքագործարան**

Գանձակի նահ. Գանձակի գաւառ 1, արտադրել է 132,800 պուդ հանք.
Քութայիսի ն. Քութայիսի գ. 1. արտադրել է 46,000 պ. հ.

Ընդամենը 178,800 » »

**Մարգանեցի հանքագործարան**

Քութայիսի նահ. Շորոպանի գաւ. 10 արտադրել է 19,443 550 պ. հ.

**Ծծումբի հանքագործարան**

Թիֆլիսի նահ Դուշեթի գաւառ 1, արտադրել է 600 պ. հ.
Դաղստանի ն. Անդեան գ. 1, արտադրել է 42.250 պ. հ.

Ընդամենը 42,850 » »

**Քարածուխի հանքագործարան**

Կուբանի ն. 3, արտ. է 38,000 պ. հ.
Քութայիսի ն. 2, 3,358,9000 պ. հ.

Ընդամենը 3,396,900 » »

**Նաւթի հանքագործարան**

| | | | |
|---|---|---|---|
| Բագ. նհ. արտ. է | | 670,116,000 | պ. հ. |
| Տերեկի | » | 3.467,000 | » |
| Կուբանի | » | 287,000 | » |
| Դաղստանի | » | 3,000 | » |
| Թիֆլիսի | » | 40,000 | » |
| Գանձակի | » | 4,000 | » |
| Ընդամենը | | 705,147,000 | պ. հ. |

**Աղի հանքագործարան**

Երևանի նահանգ արտադրել է

| | | | |
|---|---|---|---|
| Կողբ | » | 1,754 500 | փ. հ. |
| Նախիջևան | » | 82,659 | » |
| Սուսաինէ | » | 27,125 | » |
| Կարսի նահանգ | . | . | . . |
| Կաղզւան | » | 644,026 | » |
| Օլթի | » | 96 659 | » |

Բացի դրանից զանազան գաւառներում ստացուել է ապալճերից

| | | | |
|---|---|---|---|
| » | » | 501, 116 | » |
| Ընդամենը | | 106,085 | փ. հ. |

**Ինֆուզորիս քարի հանքագործարան**

Թիֆլիսի նահանգ Ախալքալաքի գաւառ 1, արտադ. է 18,960 փ. հ.

**Ծանր շպատի հանքագործարան**

Քութ. նհ. 4, արտ. է 1,026,000 փ. հ.

Այդ բոլոր հանքագործարաններում 1901 թ. եղել են 13,717 բանուորներ։ Այն է՝

| | | | |
|---|---|---|---|
| Պղնձահանքերում | | 3669 | հոգի. |
| Արծաթ-արճիճի հնք. | | 874 | » |
| Երկաթի | » | 8 | » |
| Մարգանեցի | » | 1401 | » |
| Քարածուխի | » | 384 | » |
| Ծծումբի | » | 47 | » |
| Ինֆուզորիայի | » | 72 | » |
| Շպատի | » | 82 | » |
| Անդիկի | » | 33 | » |
| Ցեմենտի | » | 450 | » |
| Քարահանք | » | 6697 | » |
| | | 13,717 | |

Դժբաղդութեան դէպքեր պատահել է 94 անգամ, վնասուել են 104 հոգի, որոնցից 15-ը մեռել են։

**Կովկասի հանքային արդիւնաբերութիւնը 1902 թ.**

Կովկասեան լեռնային վարչութեան պաշտօնական տեղեկութիւններին նայելով, 1902 թ. ընթացքում Կովկասում ստացուած է ընդամենը.

| | | |
|---|---|---|
| Նաւթ | 705,912,959 | պուդ |
| Քարածուխ | 2,974,208 | » |
| Պղնձահանք | 6,641,292 | » |
| Աղ | 3,083,082 | » |
| Մարգանեց | 24,943,415 | » |
| Ծծումբ | 160,000 | » |

*) Թուերը քաղել ենք գլխաւորապէս «Кавказскій Календарь» հրատարակութիւնից։

## ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Կովկասը, ընկած լինելով երկու ծովերի մէջ տեղը, ունի չափազանց նպաստաւոր աշխարհագրական դիրք, ունի բազմաթիւ բնական հարստութիւններ ու հում նիւթեր, բայց չունի զարգացած խոշոր արդիւնագործութիւն, չունի նախանձելի տնտեսական կեանք: Այդ դառն իրողութիւնը, իհարկէ, առաջացել է զանազան պատճառներից, որոնցից գլխաւորը կարելի է համարել՝ կապիտալների սղութիւնը, կանոնաւոր հաղորդակցութեան միջոցների պակասութիւնը և մի շարք պատմական—կուլտուրական հանգամանքներ:

Սակայն եթէ համեմատելու լինենք 80—ական և 90—ական թուականների Կովկասը, այն ժամանակ կը տեսնենք, որ նա բաւական առաջադիմել է տնտեսապէս, թէև ոչ այն չափով, ինչպէս ուրիշ երկիրներ: Իսկապէս խոշոր արդիւնագործութեան զարգացման նշանացոյցը կարող է համարուել գործարանների և բանուորների բազմանալը: Այդ տեսակէտից Կովկասը 1887 թ. ներկայացնում էր հետեւեալ պատկերը. այդ թուականին եղել են.

| Նահանգ | գործարան | բանուորներ |
|---|---|---|
| Թիֆլիսի | 2117 | 12,579 |
| Բագուի | 1071 | 7,675 |
| Գանձակի | 1517 | 7,795 |
| Քութայիսի | 409 | 4,097 |
| Երևանի | 3213 | 5,660 |
| Կարսի | 409 | յայտնի չէ |
| Դաղստանի | 74 | 2,478 |
| Տերեկի | 1840 | 4,023 |
| Կուբանի | 5604 | 13,737 |
| Ստաւրոպոլի | 2589 | 4,057 |
| Ընդամենը | 19,366 | 62,101 |

Ուրեմն իւրաքանչիւր գործարանի գալիս է մօտաւորապէս 3 բանուոր: Դրանցից արդէն կարելի է եզրակացնել, թէ այդ գործարանները որքան արժանի են «գործարան» անուներ կրելու: Դրանց մէջ ահագին քանակութիւն են կազմում մանր ջրաղացները, որոնք հազիւ թէ «գործարան» համարուեն, եթէ այդ բառը վերցնելու լինենք իր բուն մտքով: Վերոյիշեալ բոլոր գործարաններն ամբողջ տարուայ ընթացքում արդիւնաբերել են ընդամենը 40,013,870 ռուբլու նիւթեղէն, ուրեմն իւրաքանչիւր գործարան մօտաւորապէս 200 ռուբլու:

Այժմ տեսնենք, թէ Կովկասի արդիւնագործական դրութիւնն ինչ փոփոխութեան է ենթարկուել 11 տարիների ընթացքում.. Անցեալ 1898 թուականին նա ունեցել է.

| Նահանգ | գործարան | բանուորներ |
|---|---|---|
| Թիֆլիսի | 3899 | 11,300 |
| Բագուի | 1875 | 19,946 |
| Գանձակի | 1621 | 8,349 |
| Քութայիսի | 522 | 6,022 |
| Կարսի | 758 | 948 |
| Երևանի | 3386 | 9095 |
| Դաղստանի | 38 | 282 |
| Տերեկի | 3882 | յայտնի չէ |
| Կուբանի | 6233 | 14,587 |
| Ստաւրոպոլի | 3575 | 5,085 |
| Ընդամենը | 25,772 | 75,619 |

Այդ բոլոր գործարանները մի տարուայ ընթացքում արդիւնաբերել են 124,060,000 ռուբլու նիւթեղէն, ուրեմն իւրաքանչիւր գործարան միջին թւով—4,960 ռուբլու: Այդ թուերից երևում է, որ 11 տարուայ ընթացքում Կովկասի գործարանների թիւը աւելացել է 25,772 — 19,366=6406—ով, իսկ դրանցից իւրաքանչիւրի արդիւնաբերած նիւթեղէնի քանակը մեծացել է $\frac{4960}{200}=25$ անգամ: Ահա դրանով է արտայայտուել մեր երկրի արդիւնագործական առաջադիմութիւնը — մի առաջադիմութիւն, որը շատ աննշան կերևայ, եթէ աչքի առաջ ունենանք Կովկասի 10 լայնատարած նահանգներն իրանց բնական հարստութիւններով ու յարմարութիւններով և մօտ տասը միլիոնից բաղկացած ազգաբնակութիւնը:

Դժբաղդաբար չկան ճիշտ և մանրամասն տեղեկութիւններ Կովկասի արդիւնագործութեան ներ-

կայ վիճակի մասին: «Кавказскій календарь» (1903) տեղեկութիւնների համեմատ այդ վիճակը հետեւեալ պատկերն է ներկայացնում.

| | Գործարանների | | Արտադրութիւնը | Բանուորների |
|---|---|---|---|---|
| Նահանգ | Թուակ. | Թիւը | ռուբլի | Թիւը |
| Թիֆլիսի | 1899 | 3,361 | 9,629,000 | 11,061 |
| Քութայիսի | 1899 | 642 | 21,098,000 | 5,504 |
| Գանձակի | 1900 | 1,648 | 2,086,000 | 11,383 |
| Բագուի | 1901 | 1,546 | 9,017,000 | 10,794 |
| Երեւանի | 1901 | 3,394 | 1,160,000 | 6,489 |
| Կարսի | 1901 | 901 | 428,000 | 1,143 |
| Դաղստանի | 1901 | 64 | 1,352,000 | 2,159 |
| Ստաւրոպոլի | 1901 | 3,493 | 3,513,000 | 5,344 |
| Կուբանի | 1901 | 6,013 | 17,741,000 | 16,179 |
| | Ընդամենը | 21,062 | 76,025,000 | 60,063 |

Ուրեմն Կովկասի 9 նահանգում —(Տերեկի նահանգի մասին թուեր չկան) —եղել են 21,062 գործարան, 60,063 բանուորներով և 76,025 ռուբլու արդիւնաբերութեամբ:

Գինեգործութիւնը Կովկասում (1901)

| | Ստացուած է | |
|---|---|---|
| Նահանգ. | խաղող. պ. | գինի. վեդր. |
| Թիֆլիսի | 1,403,793 | 1,267,146 |
| Քութայիսի | 1,622,180 | 10,197,774 |
| Բագուի | 2,147,750 | 534,105 |
| Գանձակի | 851,118 | 607,222 |
| Երեւանի | 565,984 | 457,856 |
| Սև ծով. շրջան | 130,490 | 99,343 |
| Դաղս. նահ. | 7,836,271 | 4,936,554 |
| Կուբանի | 809,044 | 286,803 |
| Տերեկի | 1,962,327 | 1,352,703 |
| Ստաւրոպոլի | 660,590 | 280,836 |
| Ամբողջ Կով. | 11,278,232 | 6,856,896 |

Մեղուապահութիւնը Կովկասում (1901)

| Նահանգ. | Քանի- | Ստացուած է | |
|---|---|---|---|
| | փեթակ | մեղր պ. | մեղրամ. |
| Բագուի | 15,643 | 2,182 | 368 |
| Կարսի | 9,674 | 1,530 | 171 |
| Դաղստան. | 15,974 | 3,860 | 408 |
| Կուբանի | 331,240 | 67,749 | 5,931 |
| Տերեկի | 216,422 | 44,351 | 3 843 |
| Ընդամեն. | 588,953 | 119,679 | 10.721 |

Կովկասի միւս նահանգներում մեղուապահութիւնը աննշան չափով է կատարւում:

Շերամապահութիւնը Կովկասում (1901)

| | Ստացուած է կոկոն |
|---|---|
| Թիֆլիսի նահանգ. | 15.000 պ. |
| Քութայիսի » | 110,000 » |
| Բագուի » | 40,000 պ. |
| Գանձակի » | 250,000 » |
| Երեւանի » | 20,000 » |
| Սուխումի շրջան | 10,000 » |
| Հիւսիս. Կովկաս | 500 » |
| Կարսի և Դաղստանի նահանգներում | 1 000 » |
| Ընդամենը | 446,500 պ. |

Թթենիների բռնած տարածութիւնը հասնում էր 50,000 դես.

Ծխախոտի արդիւնագործութիւնը Կովկասում (1901)

| | Ծխախոտի արդիւնագործութեամբ պարապում են | |
|---|---|---|
| Նահանգում | գիւղ | արդիւնաբերել է |
| Թիֆլիսի | 58 | 18 998 |
| Քութայիսի | 319 | 154,917 |
| Բագուի | 63 | 3.686 |
| Գանձակի | 69 | 14,321 |
| Երեւանի | 91 | 7,129 |
| Սև ծովեան | 46 | 62.813 |
| Դաղստանի | » | 2,230 |
| Կարսի | 14 | 152 |
| Զաքաթալի շրջ | » | 2,725 |
| Կուբանի նահ. | » | 485,832 |
| | Ընդամենը | 752,803 փութ: |

## ԱՇԽԱՐՀԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Վիեննայի վիճակագրական սեմինարը վերջին ժամանակներս տեղեկութիւններ էր հաւաքում զանազան պետութիւնների պարտքերի և կապիտալների մասին: Ահա այդ տեղեկութիւնների հիման վրա «Zeitschrift für Socialwissenschaft»-ում (1903) հրատարակած էր մի

յօդուած, որից երեւում է հետեւեալը.

XIX—րորդ դարի զարգացման մէջ ամենագլխաւոր տեղը բռնել է շարժական կապիտալը: Այժմ դրա քանակը 450 միլիարդ ֆրանկից աւել է: Այդ գումարի ամենամեծ մասը արժէքաւոր թղթեր են, իսկ ոսկէ փողի գումարը աշխարհում հազիւ հասնում է 25 միլիարդ ֆրանկի:

Եւրոպայի շարժական կապիտալը հետեւեալ ձեւով է բաժանուած զանազան պետութիւնների վրա.

| | | |
|---|---|---|
| Անգլիան ունի | 18[illegible],4 | Տարեկան շահը միլիարդ |
| Գերմանիան | 92 | |
| Ֆրանսիան | 80 | |
| Աւստրիան | 27,1 | |
| Ռուսաստանը | 25,5 | |
| Իտալիան | 17,5 | |
| Հօլլանդիան | 13,6 | |
| Սպանիան | 9,5 | |
| Բելգիան | 8,3 | |
| Թիւրքիան | 4,3 | |
| Պօրտուգալիան | 3,7 | |
| Դանիան | 2,7 | |
| Ռումինիան | 1,8 | |
| Նորվեգիան | 0,8 | |

Ընդամենը 466 միլիարդ ֆրանկ

Վենգրիայի, Շուեդիայի, Շուեցարիայի. Սերբիայի, Բօլգարիայի, Յունաստանի եւ Չեռնօգօրիայի մասին տեղեկութիւններ չկան:

Իսկ պետական պարտքերը հետեւեալ պատկերն են ներկայացնում.

| | | |
|---|---|---|
| Ֆրանսիան ունի | 26,1 | Տարեկան շահը միլիարդ ֆրանկ |
| Ռուսաստանը | 16,2 | |
| Անգլիան | 16 | |
| Գերմանիան | 15,7 | |
| Աւստրօ-Ունգարիան | 13,9 | |
| Իտալիան | 12,9 | |
| Դանիան | 2,7 | |
| Բելգիան | 2,3 | |
| Հօլլանդիան | 2,2 | |
| Ռումինիան | 1,2 | |
| Նորվեգիան | 0,2 | |

Ընդամենը 109,4 միլիարդ ֆրանկ

Ժողովրդական հարստութիւնը՝

| | միլիօն ֆրանկ |
|---|---|
| Միացեալ-Նահանգ. | 322,300 |
| Անգլիայում | 243,000 |
| Ֆրանսիայում | 192,300 |
| Պրուսիայում | 147,000 |
| Իտալիայում | 52,000 |
| Վենգրիայում | 31,1000 |
| Հօլլանդիայում | 22,350 |
| Շուեցարիայում | 7.900 |

Բաւական ուշագրաւ են նաեւ Միացեալ-Նահանգների ֆինանսների նախարարի 1902 թ. հաշուետուութեան մէջ յիշուած տեղեկութիւնները, որոնցից երեւում է*), որ իւրաքանչիւր ֆրանսիացու գալիս է

| | դօլլար | ցենտ |
|---|---|---|
| | 37 | 38 |
| Սիամացու | 34 | 58 |
| Ամերիկացու | 29 | 4 |
| Աւստրիացու | 8 | » |
| Ռուսի | 6 | 25 |
| Գերմանացու | 19 | 92 |
| Անգլիացու | 18 | 29 |
| Սպանիացու | 53 | 98 |
| Իտալացու | 9 | 68 |
| Թիւրքի | 3 | 71 |
| Ճապօնացու | 8 | 9 |
| Սերբի | 2 | 72 |
| Բուլղարի | 1 | 91 |

Այդ պերճախօս թուերից կարելի է եզրակացնել, թէ մարդկային ազգերից ո՞րնէ հարուստը, որը՝ —տնտեսապէս զարգացածը:

*) Տես «Новое Время»—.9727

# Առողջապահութիւն եւ բժշկութիւն

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ:

### I

Սէրը շատ մեծ դեր է խաղում մեր առօրեայ կեանքում, նա մի զօրեղ գործօն է, մի մեծ ոյժ, ուստի և արժանի է յատուկ ուշադրութեան:

Ամենքն էլ ընդունում են, որ սէրը մի լուրջ ու դժուարին հարց է: Դաստիարակները այդ հարցում հեղինակաւոր են համարում ծնողներին, իսկ ծնողները—դաստիարակներին: Դժբաղդաբար դրանք բոլորն էլ շեղւում են նրանից և այդ նշանաւոր հարցը լուծւում է առանց նրանց մասնակցութեան: Այդպիսով պատանիները վտանգաւոր կեանքի մէջ են մտնում առանց ղեկավարի, առանց հարկաւոր նախապատրաստութեան:

Բայց մանկական հետաքրքրութիւնը վերջ ի վերջոյ իր բաւարարութիւնը պիտի ստանայ. Մի օր և է վատ ընկեր, նկար կամ տեսարան նրա առաջ բաց կանեն այն, ինչ որ սովորաբար կեանքի գաղտնիք է կոչւում: Դրանից յետոյ մանկական երևակայութիւնը սկսում է գործել մեծ առատութեամբ. խախտւում է նրա հաւատը դէպի ծնողներն ու դաստիարակները: Նրա սրտում բուն է դնում այն վտանգաւոր ոյժը, որը յետոյ շատ չարիքների պատճառ է դառնում, նրա վարք ու բարքի ղեկավար է հանդիսանում:

Չմոռանանք, որ երեխաները մարդկութեան ապագան են կազմում, չ՛մոռանանք, որ նրանցից է կախուած հասարակութեան ապագայ երջանկութիւնն ու առաջադիմութիւնը:

Հարկաւոր է ուրեմն լուրջ խնամք տանել նրանց մասին և խելացի խրատներով նախապատրաստել սեռային կեանքի համար:

Մանկական հասակն այն դրութիւնն է, երբ մի զգացմունք, առաւել մի նորութիւն խոր ազդեցութիւն է թողնում, երբ հնարաւոր է այդ ազդեցութիւնը թուլացնել կամ ուժեղացնել:

Այդ խնդրում շատ մեծ նշանակութիւն ունին՝ կենցաղը, սնունդը, միջավայրն ու անհատական յատկութիւնները:

Նստակեաց կեանքը, վնասակար գրքերն ու նկարները, պարապութիւնը—այդ բոլորը լարում են մանուկի երևակայութիւնը և առաջ են քաշում շատ և շատ վատ մտքեր ու հակումներ: Իսկ խելացի կենցաղավարութիւնը, լաւ սովորութիւնները, զուարճութիւնները և ֆիզիքական աշխատանքը այնքան բարեբար են, այնքան ազդու *), որ նրանց միջոցով կարելի է խեղդել վնասակար հակումները և գրեթէ աննկատելի կերպով անցկացնել ամենավտանգաւոր տարիները:

Իւրաքանչիւր անհատ բնական կենցաղավարութիւն պիտի ունենայ, որպէսզի նրա վարքն էլ միանգամայն բնական լինի: Շատ մոլորութիւններ առաջ են գալիս այն պատճառով, որ մենք չենք հետևում առողջապահական պահանջներին:

Մարդասիրութեան բարձր գաղափարը **), դէպի կեանքն ունեցած ազնիւ վերաբերմունքը և մեր

*) Բժ. Ա. Բուղուղեան. «Մարմնամարզութիւն» և «Մանկավարժական զրոյցներ».

**) Բժ. Ա. Բուղուղեան. «Երիտասարդութիւն և ծերութիւն».

արժանապատւութեան հասկանալը, այդ բոլորը ամենալաւ ղեկավարներ կարող են լինել սիրային խնդրում, ամենից լաւ կարող են պահպանել մեզ վատ խորհուրդներից, վնասակար գործերից։

Կան մարդիկ, որոնց կարծիքով սեռական սէրը կամ ուրիշ խօսքով ասած՝ սեռական յարաբերութիւնը ֆիզիքական մի մեծ պահանջ է. դրանք երիտասարդներին առաջարկում են չխեղդել այդ պահանջը, հետևել ներքին հակումին, որովհետև այդ է խելացիութիւնը։ 16-20 տար. պատանիների կուսութիւնը ծաղրի ու ծանակի առարկայ է դառնում նրա ընկերների կողմից։ Դառն ու սարսափելի է այդ փաստը, քանի որ «բնական պահանջ» կոչուած ցանկութիւնը միայն երեւակայութեան արդիւնք է. քանի որ գիտութիւնը ողջախոհութիւն է պահանջում։

Սիրային խնդրում անհրաժեշտ է որոշ համոզմունք և սկզբունք ունենալ և նրանցով առաջնորդուել։

Դժբաղդաբար մեր ժամանակակից հասարակութիւնը կամ թեթեւամտութեամբ է վերաբերւում դէպի սէրը կամ կեղծ խստութեամբ։

Եթէ հասարակութիւնը երիտասարդներին խորհուրդ է տալիս բնազդին ենթարկուել, նա դրանով ստորացնում է սէրը, նսեմացնում է աստուածային այդ կայծը։ Նրա աչքում սէրը դառնում է մի ստոր ու կասկածելի երևոյթ։

Ահա հէնց այդ մոլորութիւնն է, որ քանդում է հասարակութեան բարոյական հիմունքները, որ թուլացնում է սկզբունքներն ու գաղափարական ձգտումները

Եթէ դուք դեռ ջահիլ հասակում մեղանչում էք սիրոյ դէմ, դրանով վնաս էք հասցնում ամբողջ ժողովրդին ու ազգին։

Գիտութիւնն հաստատում է, որ իւրաքանչիւր երիտասարդի կեանքում ողջախոհութիւնն օրէնք պիտի դառնայ. այդ օրէնքից շեղուելը մեծ յանցանք է։

Եթէ պատանին իրա համար սկզբունք դարձնէ այդ ճշմարտութիւնը, այն ժամանակ նա կըկարողանայ կռուել իր ստոր ձգտումների հետ. կ՚կարողանայ խեղդել վատ ու վնասակար ցանկութիւնները։

Կեանքի գիրքն ասում է, որ ընկած մարդը պէտք է աշխատի բարձրանալ, որ այդ ձգտումը նոյնքան նշանաւոր է, որքան և ընկնելուց զգուշանալը։ Բայց երկու դէպքում էլ անհրաժեշտ է հաստատուն կամք, տոկունութիւն։ Ուրեմն ժողովրդի բարեկամները թող նրա վրա կենտրոնացնեն իրանց ուշադրութիւնը. ծնողներն ու դաստիարակները թող հաստատակամութիւն զարգացնեն մատաղ սերնդի մէջ։ Հաստատուն կամքը հրաշքներ կարող է գործել։

II

Միայն ճշմարիտ սէրը կարող է անհատին պաշտպանել պէս-պէս ախտերից։ Ահա հէնց այդ պատճառով յանուն այդ սիրոյ հարկաւոր է անողոք կռիւ մղել այն ամենի դէմ, ինչ որ նսեմացնում կամ թուլացնում է նրան։

Այդպիսով անարատ սէրը պիտի դառնայ մեր երիտասարդութեան իդէալը, նրան ոգևորողն ու գրաւողը։ Իսկ անարատ սիրոյ հիմքը ողջախոհութիւնն է։ Իսկական ողջախոհութիւնը օգտակար է ոչ միայն մարմնի, այլև սրտի--հոգու համար։ Բայց դատարկ սիրտը չի կարող ողջախոհ լինել. այնտեղ կինն իր տեղը պէտք է ունենայ, իր սրբութեան արժանի տեղը։

Աշխարհում որտեղ որ կեանք կայ, այնտեղ մենք տեսնում ենք երկու սեռերի՝ արականի և իգականի միացում։ Այդ միացման հետեւանքն է կենդանական ամբողջ կեանքը։ Բայց ձգողական այն ոյժը, որ քաշում է տղամարդուն դէպի կինը, աւելի լայն հիմունք ունի քանթէ այդ պահանջին յագուրդ տալու ցանկութիւնը։

Եթէ մենք ուզում ենք մարդկային կոչման բարձրութեան վրա կանգնել, եթէ ուզում ենք, որ կեանքն իր իսկական նպատակին հասնի, այն ժամանակ պարտաւոր

ենք յարգել ոչ միայն մեզ, այլ և կնոջը: Այդ յարգանքի հետևանքը պէտք է լինի անարատ սէրը:

Դէպի կինն ունեցած խոր յարգանքը սիրոյ սկիզբն ու աղբիւրն է: Նա գոյութիւն պէտք է ունենայ սիրոյ առաջ, սիրոյ հետ միասին և ամբողջ կեանքում:

Ցանկալի է, որ երիտասարդները մօտիկից շփուեն կանանց հետ, ճանաչեն նրանց բնական կեանքում և ոչ միայն երեւակայութեամբ ու գաղափարական գոյներով պատկերացնելով: Կնոջը չպէտք է հեռու պահել երիտասարդների շրջանից, չպէտք է փակել, ծածկել ու մի «արգելուած պտուղ» դարձնել, այլ ընդհակառակը հարկաւոր է հնարաւորութիւն տալ, որ երկուսեռները ճանաչեն ու հասկանան իրար:

Դժբաղդաբար մեր հասարակութիւնը չի քաջալերում, չի զարգացնում իր յարգանքը դէպի կին-արարածը, այլ ամեն կերպ աշխատում է բաժանել երկու սեռերին, որով և նրանց զրկում է միմեանց ճանաչելու հնարաւորութիւնից:

Դա մի մեծ չարիք է, որից առաջ է գալիս թեթեւամիտ վերաբերմունք դէպի սէրը: Անհրաժեշտ է դրա առաջն առնել, երկու սեռերի անդամներին էլ հնարաւորութիւն տալով միասին միեւնոյն դպրոցում սովորելու, միասին խաղալու, զուարճանալու, իրար հետ յաճախ պատահելու, միասին գրքեր ու լրագիրներ կարդալու, վիճելու, քննադատելու և այլն և այլն:

Եթէ մենք ուշի ուշով քննենք երիտասարդների կեանքը, կտեսնենք, որ կանանցից զրկել են գրեթէ այն բոլորը, ինչ որ իսկական ուրախութիւն կարող է պատճառել: Նրանք կարօտ են կանանց հետ շփուելու, մտքեր փոխանակելու, զուարճանալու կարօտ են այն ուրախութեանն ու երջանկութեանը, որ հնարաւոր է միայն հասակակից օրիորդների շրջանում:

Դեռ չփչացած ու չթառամած երիտասարդի մէջ այդ պահանջը աւելի շատ և աւելի ուժեղ կերպով է զարթնում, քան թէ այն բոլոր պահանջները որոնց մասին շարունակ խօսում են:

Մռայլ է մեր կեանքը և խաւարով պատած. հարկաւոր է մտերմութիւն, փաղաքշանք. քաղցր ժպիտ ու լոյս, որպէսզի այդ խաւարը փարատեն, մեր մտքի մթութիւնը վերացնեն, դառնութիւնը հեռացնեն և մեզ քաջալերելով առաջ մղեն:

Հասարակութիւնը չի տալիս երիտասարդութեանը այդպիսի հնարաւորութիւն, ուստի և նրանք գաղտնի միջոցներով, սուտ ճանապարհներով են դիմում դէպի «արգելուած պտուղը» և շատ անգամ կորցնում են իրանց առողջութիւնն ու երջանկութիւնը:

Նրանք վերջի վերջոյ հիասթափւում, նոյն իսկ զզւում են, հասկանալով, որ այսպէս ասած՝ թեթեւամիտ, անցողակի ու ծախու սէրը և առհասարակ ամուսնութիւնից դուրս սէրը նմանէ անապատի «սարօկս» ին:

Դրանից յետոյ հասկանալի պէտք է լինի, թէ մեր կեանքում որքան մեծ պարգև է իսկական սէրը, ու որքան մեծ երջանկութիւն է, երբ երիտասարդը գտնում է իր սրտի ուզած կնոջը և միանում է նրա հետ ամուսնական կապով:

Ուրեմն ով որ ուզում է երջանիկ ամուսնութիւն և արժանաւոր ծնող լինել, նա հէնց սկզբից պէտք է հոգ տանի, մտածէ այդ մասին ճիշտ այնպէս ինչպէս որ ազնիւ ու խելացի մարդը մտածում է իր գործունէութեան ու ապագայի մասին: Ով որ ուզում է առողջ սերունդ պատրաստել, երջանիկ ընտանիք կազմել, նա ամեն կերպ պէտք է ձգտի դէպի իսկական սէրը, որովհետև դա է բարձր բարոյականութեան ու երջանկութեան հիմքը:

Կեղտոտել կեանքի աղբիւրը, տալ մատաղ սերնդին խղճուկ ու հիւանդոտ կեանք, թոյլ ու դալուկ մարմին—ահա մի սարսափելի յան-

ցանք, մի մեծ ոճրագործութիւն, որից խօսք պէտք է տայ ամեն մի ազնիւ մարդ։ Իսկ այդ բոլորը հընարաւոր է, եթէ անհատը ունենայ ողջախոհութիւն և ձգտի դէպի անարատ սէր ու ամուսնական անբիծ կեանք։

Իհարկէ, այստեղ քարոզներն ու յորդորները մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ։ Հարկաւոր է ուշադրութեան առնել կեանքի անմիջական պահանջներն ու օրէնքները։

Նախ քան երիտասարդներին ողջախոհութիւն ու բարձր բարոյականութեան յորդորներ կարդալը անհրաժեշտ է միջոցներ որոնել կանանց ամենատարրական ողջախոհութիւնը պահպանելու համար. անհրաժեշտ է նրանց միջոց տալ ազնիւ ու բնական կեանք վարելու։

Մեր հասարակական կեանքն այնպէս է կազմակերպուած, որ մատաղահաս կանանցից շատերը ստիպուած են ընտանեկան յարկից դուրս ապրուստի միջոց որոնելու։ Եւ հասարակութիւնը փոխանակ նրանց քաջալերելու, փոխանակ համապատասխան աշխատանք տալու, շատ անգամ դատապարտում և նրանց հալածում է։

Այժմ շատ քիչ է պատահում, որ ամուսնութիւնը սիրոյ վրայ հիմնուած լինի, ամենագլխաւոր տեղը բռնում են նիւթական հաշիւները, շահասիրութիւնը։ Սէրը դարձել է վաճառքի առարկայ։ Հարկաւոր է ուրեմն վերջ դնել սիրոյ վաճառականութեանը. հարկաւոր է կնոջը հնարաւորութիւն տալ ազատ ու ինքնուրոյն կեանք վարելու, առանց տանջանքների, առանց կակածելի միջոցների։ Դրանով էլ կարելի է փրկել տղամարդուն և նրա հետ միասին ամբողջ մարդկային ցեղը բարոյական և ֆիզիքական այլասերումից։

Տղամարդու ողջախոհութեան խնդիրը մեծ կախում ունի կանանց աշխատանքի խնդրից։ Միայն այս վերջինը կարող է խելացի կերպով ծև [illegible] ժառայականու[illegible]ն հարցը։

Տղամարդկանց աշխատանքի բարելաւումն էլ կարող է որոշ դեր խաղալ այդ խնդրում։ Նա հնարաւորութիւն կտայ աւելի շուտ ամուսնանալու, աւելի առողջ ընտանեկան կեանք վարելու և աւելի լաւ սերունդ դաստիարակելու։

Այսպէս ուրեմն եթէ մենք կանանց հնարաւորութիւն տանք ազնիւ ու ինքնուրոյն աշխատանք ունենալու, եթէ բարելաւենք տղամարդկանց աշխատանքի պայմանները, այն ժամանակ կթագաւորէ ճշմարիտ սէրը՝ աշխարհի հոգին, մարդկութեան ամենաուժեղ զէնքը, ընտանիքի, հասարակութեան ու պետութեան հիմք կազմող սէրը։ Այդպիսի սէրը կարող է ազնուացնել անհատի բնաւորութիւնը, բարձրացնել բարոյապէս և զարգացնել նրա ամենալաւ հակումները։ Դա՛ բնական սէրն է։

III

Բայց կայ և հիւանդոտ սէր։

Մեր կեանքը այժմ այն չէ, ինչ որ առաջ։ Մենք ապրում ենք ոչ միայն նրա համար, որ կըշտանանք, այլ և նրա համար, որպէսզի համեղ կերակրից մի որոշ բաւականութիւն զգանք։ Մեր բնակարանների մէջ մենք որոնում ենք ոչ միայն պաշտպանութիւն ցրտի ու վատ եղանակի դէմ, այլ և որոշ յարմարութիւն ու գեղեցկութիւն։

Ուրեմն հիմնական պահանջը մնացել է նոյնը, բայց նա ձևափոխուել ու լայնացել է։ Այդ միևնոյնը կատարուել է և սիրոյ վերաբերմամբ։

Մի ժամանակ սէրը զուտ ֆիզիոլոգիական զգացմունք էր, որի անմիջական նպատակն էր նոր սերունդ առաջացնելը։ Ժամանակի ընթացքում այդ զգացմունքը հետզհետէ ձևափոխուել է և հասել է նոյն իսկ հիւանդոտ դրութեան։

Այսպէս ուրեմն սիրոյ հիմքը նոր սերունդ առաջացնելու ձգտումն է։ Բայց այժմ այդ ձգտումը շաղկապուել է ուրիշ զգացմունքների ու ձգտումների հետ, ուստի և սէրը դարձել է մի բարդ երևոյթ։

Այժմ սիրոյ մէջ նշանաւոր տեղ է բռնում հոգեկան տարրը,

որը գրեթէ անյայտ է կենդանիների համար։ Շատ անգամ հոգեկան պահանջները ծածկում են սիրոյ փիզիօլօգիական կողմը ճիշտ այնպէս ինչպէս որ վարդի ձեւերը ծածկում են սերմնարանը, որից զարգանում է պտուղը։ Ահա հէնց այդ պատճառով էլ «հիւանդոտ սէրը» բոլորովին այլ կերպ է բացատրւում։

Բայց նախ քան այդ խնդրին անցնելը որոշենք թէ այս դէպքում ինչ պէտք է հասկանալ «հիւանդոտ» ասելով։

Այդպիսի հիւանդները կլինիկների կամ հիւանդանոցների պացիենտներ չեն. քրոնիկական կամ սուր հիւանդութիւն չունին։ Ոչ, դրանք այսպէս ասած նեվրաստենիկներ են *) և առհասարակ այնպիսի մարդիկ, որոնց կեանքը աւելի մեծ կախում ունի ուղեղի գործունէութիւնից, քան թէ սրտի ու ստամոքսի գործողութիւններից։

Դրանք աննորմալ մարդիկ են, ուրեմն և հիւանդոտ։

Առողջ են միայն այն մարդիկ որոնք ունին լաւ ախորժակ, հեշտ մարսողութիւն և հանգիստ քուն։ Իսկ այդպիսիների համար սէրը մի ուժ է՝ բնական ախորժակն ու հանգիստ քունը պահպանելու համար։

Սէրը ամենալայն մտքով վեր առած՝ իր մէջ պարունակում է կիրք, իսկ կիրքը անկասկած ունի հիւանդոտ կողմեր։ Դա մի տեսակ մանիա է, որ շատ քիչ է տարբերւում խելագարութիւնից։ Սովորաբար խելագարը չի զգում իր դրութիւնը, իսկ սիրահարը ընդհակառակը միշտ գիտէ, որ գտնւում է սիրոյ զգացմունքի իշխանութեան տակ, որ այդ զգացմունքը հզօր է, որ նրանից ազատուելը չափազանց դժուար է, գուցէ և անհնարին։

Խելագարութիւնը երբեմն յանկարծակի է վրա հասնում. սիրոյ մէջ մենք շատ անգամ նկատում ենք նոյնպիսի աննորմալ դրութիւն։

Հոգեկան հիւանդը սովորաբար ֆիզիքապէս ճնշուած դրութեան մէջ է լինում, ունենում է սրտի բաբախում, անքնութիւն. կորցնում է հանգստութիւնն ու ախորժակը և այլն և այլն. ինչպէս յայտնի է այդ միենոյնը պատահում է սիրահարներին։ Շատ անգամ այդպիսի սէրը ոճրագործութեան պատճառ է դառնում։

Ահա այդպիսով ամենաազնիւ ու մաքուր զգացմունքը դառնում է ստոր և եսասիրական գործողութիւնների պատճառ։ Ո՜րպիսի դառն ու ցաւալի հակասութիւն... Ո՜րքան յաճախ է պատահում, որ մարդ իր սիրած կնոջ պատճառով զոհում է ոչ միայն իր, այլ ուրիշների հանգստութիւնը, պատիւն ու կեանքը։

Դրա վրա պէտք է աւելացնել, որ եթէ այդպիսի մարդը, հաւանականօրէն, արդէն բնութիւնից նշանակուած է ոճրագործ լինելու, այստեղ սէրը յանցաւոր չէ։ Բայց ոչ ոք չի կարող հերքել այն փաստը, որ թոյլ մարդուն հերոս դարձնող ուժը կարող է և ազնիւ մարդուն այնպէս մոլորեցնել, այնպէս կուրացնել կրքի ազդեցութեան տակ, որ նա վերջ ի վերջոյ կ'դառնայ մի ստոր արարած։

Ոճրագործութեան սատանան կիրքն է, որը առաջ է գալիս ատելութիւնից, իսկ չէ՞ որ ատելութիւնը սիրոյ հակադիր զգացմունքն է։

Հապա ինքնապահպանութիւնը... դա էլ բացատրւում է մեծ մասամբ սիրային պատճառներով։ Այդպիսի դէպքերում կանայք աւելի յաճախ են դիմում նրա օգնութեանը, քան թէ տղամարդիկ, թերևս այն պատճառով, որ սէրը կանանց համար միջնադէպ չէ, այլ կեանքի մի նշանաւոր երևոյթ։

Առհասարակ ամեն ինչ, երբ անցնում է սովորական չափ ու սահմանից, աննորմալ դրութեան մէջ է դնում մարդուն, հիւանդացնում է նրան։ Եթէ սէրն էլ այդ աստիճանին է հասնում, նա դառնում է հիւանդութիւն։ Հարկաւոր է առաջ բժշկուել այդպիսի հիւանդութիւնից։

—

Ի՞նչ է կատարւում մեր սովորական կեանքում. մեզ պակասում է այն, ,,ինչով որ մարդիկ ապրում են‘‘. պակասում է հոգեկան մրթ-

*) Տես Ա. Բուգ. «Մեր նեարդերը»։

նոլորդը, ուստի և մենք խեղդւում, տանջւում ու ոչնչանում ենք։ Մեզ պակասում է փոխադարձ ուշադրութիւն ու յարգանք, հաւատարմութիւն ու փաղաքշանք, պակասում է իսկական սէրը։

Եթէ մենք ուշի ուշով քննենք մեր կեանքը, այն ժամանակ կտեսնենք, որ չկայ սէր այնտեղ, որտեղ նա կարող էր կեանք տալ, հոգեկան վէրքեր բուժել, վէճ ու դառնութիւն վերացնել և հանդիստ ու խաղաղութիւն պարգեւել։

Սիրոյ բացակայութիւնը մեր կեանքի անբնական երեւոյթներից մէկն է կազմում, որի պատճառով վերացել է մարդկանց բարի յարաբերութիւնը, քաղցր վերաբերմունքը։ Ամենքն էլ գանգատւում են, թէ մարդիկ սիրում են միայն իրանց եսը, իրանց շահերն ու հաշիւները. Սառնութիւն է ամեն կողմ։

Մարած է շատերի հոգին, որովհետև չ'կայ սիրոյ կայծը, չ'կայ նրա աստուածային ազդեցութիւնը։

Իսկ որտեղ պակասում է սէրը, այնտեղ չկայ հոգեկան գիտակցութիւն, այնտեղ մեռած են հոգին ու մարմինը։

Եթէ մենք հասկանանք այդ ճշմարտութիւնը, եթէ հարկաւոր ջանքեր գործ դնենք, այն ժամանակ մեր կեանքում նորից յարութիւն կ'առնի սէրը և իր լուսաւոր ճաճանչները կսփռէ ամեն կողմ։

Ճիշտ է, մարդկութեան մէջ վաղուց գոյութիւն ունի սիրոյ պահանջը, բայց դա միայն մի կաթիլ է ընդարձակ ովկիանոսում։ Մեզ հարկաւոր է այնպիսի սէր, որ մոռացնէ առանձին անհատներին, ստեղծէ ընդհանուր բարեկամութիւն ու յարգանք, սրբէ թշուառների արտասուքը, մխիթարէ վշտահարներին, օգնէ կեանքի ծանրութեան տակ ճնշուածներին։

Հարկաւոր է սէր ցոյց տալ ամեն տեղ սիրով վերաբերուել դէպի բոլոր մարդիկ, ինչ շրջանից կամ դասակարգից էլ լինին նրանք. Հարկաւոր է սիրել բառիս բուն մտքով։ Եւ միայն այդ դէպքում սէրը կարող է յաղթանակել և իր փրկարար դերը կատարել.

Պէտք է սիրել, որովհետև սիրոյ մէջն է ամբողջ աշխարհի հոգին։

Բժ. Ա. Բուդաղեան

## ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

### I

Ահա մի նորաբողբոջ էակ. Նա առողջ է ծնուել. Նրա բոլոր գործարանները կանոնաւոր կազմութիւն ունին և կանոնաւոր կերպով գործում են նրա փոքրիկ սիրտը արագ բաբախում է և արեան հետ կեանք է մղում փոքրիկ մարմնի բոլոր անկիւնները։

Տեսէք ինչ ոյժով նրա փոքրիկ կուրծքը ներս է քաշում օդը կամ ինչ ագահութեամբ ծծում է մօր կաթը։ Նրա թաթիկներն ու ոտիկները արագ շարժւում են օդի մէջ. նրա լայն բացած աչքերը ճգնում են ընտելանալ անսովոր լոյսին ու ծանօթանալ այն նոր աշխարհի հետ, որտեղ նրան վիճակուած է այսուհետև ապրել։

Եւ նրա տաք, փափլիկ մարմինը մի բան է միայն պահանջում—ապրել։ Այո, նա ապրել է ուզում։ Իր սուր ճիչով նա սնունդ է պահանջում, որ աճի. մեծանայ ու վայելէ աշխարհիս բարիքները։ Եւ իրաւունք ունի, որովհետև նա ծնուած է ապրելու համար, որովհետև, կրկնում ենք, Նրա բոլոր գործարանները առողջ են եւ կանոնաւոր կերպով են գործում։

Բայց ահա մի օր այդ մանուկը մօր աչքի առաջ հիւանդանում է ու մեռնում։

Ի՞նչ պատահեց։

Ինչի՞ յանկարծ թառամեց այս հրաշալի տունկը, որը պիտի աճէր ու պտուղներ տար։ Ո՞ւր չքացաւ այդքան յուսատու կենսունակութիւնը։ Ո՞ր անգութ ձեռքը մի հարու-

ածով փլատակեց բնութեան այս հրաշալի շէնքը։

Մի աչք գցէք մեր թերթերի վրա—կոտորած, ամեն տեղ կոտորած։ Մանուկները դեռ աչքերը չ'բացած—փակում են յաւիտեան։ Եւ փոքրիկ դագաղներ է, որ կրում ենք դէպի գերեզմանատները։

Մանկական վարակիչ հիւանդութիւնները ս.Երեղեաս կերպով, ամառ-ձմեռ հնձում են ու հնձում մեր երկրի մատաղ ծիլերը, ամայացնում են հազարաւոր մայրերի սրտերը, կտրում են շատ աների «օջախի» ծուխը...

Չկարծէք, թէ ասածս չափազանցութիւն է։

Ռուսաստանում մանուկների մի երրորդականը մեռնում է.—երեքից մէկը։

Որպէսզի հասկանալի լինի, թէ որչափ զարհուրելի են այս մահերը, ենթադրէք, որ հասակաւորներըն են այսպէս կոտորւում, և կըտեսնէք, որ երեք տարուց յետոյ էլ ոչ մի մարդ չէր մնայ հողագնդի վրա...

Մի գիտնական (Հատերլէն) հաշուել է Եւրոպայում 16 միլլիոն մահուան դէպքեր, դասաւորել է նրանց մեռածների հասակի համեմատ և եկել է այն եզրակացութեան, որ մարդկային ցեղի կէսը մեռնում է դեռ 15 տարեկան չըդառած։

Եթէ աւելի մանրամասն քննելու լինենք այս վիճակագրական տեղեկութիւնները, կ'տեսնենք, որ քանի փոքր է երեխաների հասակը, այնքան մեծ է կոտորածը։

Այսպէս ծննդեան րոպէից մինչև 5 տարեկան հասակը ծնուած մանուկներից մեռնում է $33^0/_0$, 5-ից մինչև 10 տարեկանը միայն $9^1/_2{}^0/_0$։

Մոսկուայում բոլոր մահերից մանկական և պատանեկական (մինչև 15 տար) հասակին ընկնում էր 1895 թուին—$59^0/_0$, իսկ 1896—$56^0/_0$։

Դա նշանակում է, որ այդ քաղաքում 100 մեռածից 59-ը կամ 56-ը երեխաներ են եղել։

Այս թւից մի տարեկան չ'դառած մեռնում են 41-ից մինչև $43^0/_0$։

Այսպէս ամենասոսկալի մահացումը տեղի է ունենում մինչև մէկ տարեկան հասակը։ Ծնուած երեխաներից միայն կէսն է հասնում այս հասակին։

Ի՞նչ կարող է աւելի պերճախօս և միաժամանակ աւելի խրատական լինել։

II

Ի՞նչ է այս ահաւոր մահացման գլխաւոր պատճառը։

«Երեխաները կոտորւում են ճանճերի պէս, ասում է մի գիտնական, և կոտորւում են այն պատճառով միայն, որ մենք չ'գիտենք, թէ ինչպէս պէտք է կերակրել նրանց և ինչպէս մեծացնել։ Այդ գիտութիւնը մեզ համար մի անյայտ աշխարհ է։ Ինչի՞ է այդպէս, մի՞թէ մենք չենք սիրում մեր մանուկներին։ Մի՞թէ չի մաշւում մօր սիրտը, երբ նա տեսնում է իր երեխայի տանջանքները։

Ի՞նչ զոհաբերութիւն չի անի մի մայր իր զաւակին ցաւից ու տանջանքից փրկելու համար։ Ի՞նչ չի տայ նա, որ ազատ պահէ նրան հիւանդութիւններից ու մահից։

Իսկ ի՞նչ ենք տեսնում։

Նոյն իսկ զարգացած մայրեր անտեղեակ են մնում մանկատածութեան տարրական գիտելիքներից անգամ և ամենաչնչին տկարութեան միջոցին գլուխները կորցնում են ու յանձնում են իրանց փոքրիկներին ագէտ պառաւների. իսկ բժիշկ հրաւիրում են այն ժամանակ միայն, երբ արդէն բանը ծանրացել է...

Այսպէս են զարգացած կոչուած քաղաքացի կանայք։ Ի՞նչ ասեմ գիւղերի ու գաւառների մասին, որտեղ երեխաների ամբողջ կեանքը մի թելից է կախուած, որտեղ մի որ և է անգրագէտ խաբեբայ պառաւ և բժիշկ է, և առողջապահ, և հրաշագործ, և կախարդ—մի խօսքով մի անձնաւորութիւն, որը խորամանկ կերպով օգտւում է խեղճ

ժողովրդի տգիտութիւնից և շահագործում է դէպի իրան տածած կոյր հաւատը…

Այո, մայրերի տգիտութիւնը և, իբրև հետևանք, նրանց անհոգութիւնն է մանուկների այս սոսկալի կոտորածի պատճառներից մէկը…

Ոչ մի պատերազմ, ոչ մի արիւնհեղութիւն այնչափ զոհեր չի տանում, որչափ ծնողների այսպիսի տգիտութիւնն ու անհոգութիւնը:

Երեխան լուծ է ընկել, ստամոքսի ու աղիքների խանգարում ու բորբոքում է ստացել: Ո՞վ է մեղաւոր—մայրը, որը չ'գիտէ, թէ, ինչպէս պիտի կերակրել փոքրիկին:

Երեխան դիֆտերիտ կամ սկարլատինա է ստացել ու մեռել: Ո՞ւմ յանցանքն է—դարձեալ մօր, որը չ'գիտէ, թէ ինչպէս պէտք է մանուկներին վարակումից պաշտպանել

Երեխան թոքերի բորբոքում է ստանում—մայրն է մրսեցրել:

Սրանք մահ առաջացնող հիւանդութիւններ են, իսկ կան հազարաւոր մանր վնասումներ, որոնք թէև անմիջապէս մահ չեն առաջացնում, բայց և այնպէս ազդում են մանկան առողջութեան վրա, առաջացնելով մի շարք խանգարումներ: Սրանք նոյնպէս մօր տգիտութեան և անհոգութեան արգիւնքն են: Մօր մեղքն է, որ երեխան վտիտ է, կամ սակաւարիւն, որ նա վատ է զարգանում և այլն և այլն: Էլ չեմ խօսում, իհարկէ, նրա բարոյական թուլութիւնների մասին, որոնք արդէն ամբողջովին մօր տգիտութեան պտուղներն են կազմում:

Երբ մայրերը կըհասկանան մայրութեան վեհ կոչումն ու պատասխանատուութիւնը, այն ժամանակ ամեն տարի հազարաւոր փոքրիկ զոհեր փրկուած կ'լինեն վաղաժամ մահուան ճիրաններից:

III

Մանուկների յիշած սոսկալի կոտորածը, նրանց այդչափ դիւրին մահացման պատճառը հասկանալու համար, պէտք է միշտ յիշել, որ երեխայի մարմինը դեռ աճման շրջանում է. այդ նշանակում է, որ նրա կազմուածքը իր վերջնական հաստատուն կազմութեան չէ հասած:

Իբրև դեռ աճող օրգանիզմ, մանկան կազմուածքը զարմանալի տենդային գործունէութեան մէջ է անդադար. նրա իւրաքանչիւր գործարանը ծանր աշխատանք է կրում, որպէսզի գոհացում տայ մարմնի զարգանալու բնական ձգտումին:

Այսպէս, մարսողական գործարանները ահագին քանակութեամբ (համեմատելով ամբողջ մարմնի քաշի հետ) նիւթեր պիտի մարսեն, որպէսզի սնունդ մատակարարեն աճող մարմնին: Փոքրիկ սիրտը ահագին արագութեամբ ու ճիգով պիտի արիւն մղէ կազմուածքի բոլոր մասերը, որպէսզի կենդանութիւն ու ջերմութիւն տարածէ մարմնի մէջ: Մանկանը իրաւամբ համեմատել են նորաբողբոջ տունկի հետ:

Տունկի պէս նա նուազ է և հարուածելի (vulnéroble) և նրա պէս էլ ահագին խնամք ու քնքոյշ պահպանութիւն է պահանջում՝ առողջ ծառ և առողջ պտուղներ տալու համար:

Այսպէս փուխր է մանկիկի կազմուածքը և նրա վրա ազդում են այնպիսի պայմաններ, որոնք հասակաւորի համար անտարբեր են անցնում:

Օրինակ ամենաթեթև մրսումն անդրադառնում է մանկական օրգանիզմի բոլոր գործարանների մէջ: Այն ինչ աւելի սաստիկ ցուրտը աննկատելի կանցնէր հասունացած կազմուածքի համար:

Եւ այդ հասկանալի է, քանի որ երեխայի մաշկի (կաշու) մակերևոյթը աւելի լայն է (համեմատելով նրա մարմնի հետ) քան հասակաւոր մարդունը: Իսկ յայտնի է, որ մաշկի մէջ դրուած է նեարդերի խիտ ցանց, որի մրսելը ահագին դղրդին է գցում ամբողջ կազմուածքի մէջ:

Մի ուրիշ օրինակ էլ։

Երեխան երկար ժամանակ մընում է իբրև մի բուսական էակ, այսինքն ապրում է համարեա սոսկ բուսական կեանքով և նրա մարսողական գործարանները ամենակարևորն են։ Հիմա երևակայեցէք, որ երեխայի մարսողութիւնը խանգարուած է, հասկանալի է, թէ դրանից ինչպէս խոր և ինչպէս արագ պիտի տուժէ թոյլ օրգանիզմը։

IV

Տեսնենք այժմ, թէ ինչ հիւանդութիւններից են կոտորւում երեխաները։

Ամենից առաջ պէտք է յիշատակենք մարսողութեան խանգարումները։

Յայտնի է, թէ ինչպէս են առաջանում այդ խանգարումները - անկանոն կերակրելուց։

Նորածնի համար ամենաբնական սնունդը մօր կաթն է։ Յանցաւոր է այն մայրը, որը ծիծ տալու հնարաւորութիւն ունենալու դէպքումն էլ իր զաւակին յանձնում է ծծմօրը կամ անասունների կաթով է կերակրում,

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս հետևեալը․

Մօր ծծով կերակրուողներից մեռնում են հազարից—7-ը, անասունների կաթով կերակրուողներից —42 հոգի, անաս. կաթով և ուրիշ բաներով (միս, սուպ, հաց, ձու եայլն)—126 հոգի։

Հետաքրքրական են Իպպօլիտովի առաջ բերած թուերը, որոնք պարզ ապացուցանում են, որ մանուկները փոքր հասակում ամենից շատ փորացաւերից են կոտորւում։ Եթէ վերցնենք 100 մեռնող մանուկներ, կըտեսնենք, որ նրանցից ծնընդեան առաջին ամսում ստամոքսային հիւանդութիւնից մեռել են 64-ը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 ամսակ. | մինչև | 6 ամսականը | | 59-ը |
| 6 » | » | 1 տարին | | 35-ը |
| 1 տարեկան » | | 2 | » | 43-ը |
| 2 » | » | 6 | » | 24-ը |
| 6 » | » | բարձր | » | 25-ը |

Պարզ է ուրեմն, որ բանիմաց մայրը կարող է փրկել իր զաւակին։ Լաւ ու կանոնաւոր սնունդ, այս է առաջին մանկութեան գլխաւոր առողջապահիկ օրէնքը, որի ժխտումը առաջ է բերում յիշած սոսկալի կոտորածը։

Իւրաքանչիւր օրիորդ պիտի ճիշտ ու լուրջ տեղեկութիւններ ձեռք բերէ մանկան առողջապահութեան մասին, Եախ եան մայր դառնալը, նա պէտք է լաւ ծանօթանայ մանուկներին կերակրելու կանոնների հետ, որպէս զի ընդունակ լինի գիտակցօրէն և, որ գլխաւորն է, ինքնուրոյնաբար (առանց պառաւներին ականջ դնելու) կանոնաւոր սնունդ մատակարարելու իր զաւակներին։

Այդ գիտելիքը ձեռք բերելը այնչափ էլ հեշտ չէ։ Դպրոցը շատ քիչ բան է տալիս այս ուղղութեամբ։ Առողջապահութեան դասերը միայն գիմնազիաներում են աւանդւում, այն էլ մակերևոյթաբար։ Եւ միջնակարգ դպրոցն աւարտած օրիորդն էլ համարեա ոչինչ չի իմանում այն ամենի մասին, ինչ որ անձնական առողջութեան ու իր ապագայ մայրութեանն է վերաբերում։

Տանը ընթերցանութեան միջոցով պիտի պատրաստուի օրիորդը մայրութեան մեծ կոչման համար․ իհարկէ մեծ եռանդ ու աշխատութիւն է հարկաւոր դրա համար։

Մի հեղինակ իրաւամբ զարմանք է յայտնում, որ նոյն իսկ 8—10 տարի ուսում առած ու զանազան ինստիտուտներ աւարտած մայրերը իրանց մանկան կեանքը հաւատում են գռեհիկ, կեղտոտ ու չահասէր պառաւներին ու դայեակներին։

Սրանք ահագին հեղինակութիւն ունին տան մէջ. նրանց հպատակւում են նորատի մայրերը։

Ի՞նչպէս կռուենք այս սոսկալի չարիքի դէմ։

Միակ լուրջ միջոցն այն է, որ օրիորդը պատրաստուած լինի ամուսնական կեանքի համար։ Աղջկայ կրթութեան հիմնաքարը պիտի լինի այս նախապատրաստու-

թիւնը։ Եւ եթէ դպրոցը խուլ է մնում այդ մեծ պահանջին, ծնողները պիտի լրացնեն պակասը։

Բարեբախտաբար այժմ աւելի դիւրին է այդ անել, քան առաջ, երբ ձեռնարկներ ու ժողովրդական գրուածքներ չ'կային այդ կարեւոր հարցին վերաբերեալ։

Այսօր ռուսաց ժողովրդական գրականութիւնը լիքն է այդ նիւթին վերաբերեալ ընտիր գրքերով, կան մի քանի բաներ նաեւ մեր լեզուով գրուած *)։

V

Մանուկների մահացման մի ուրիշ զօրեղ պատճառն էլ—մրսելն է։

Ի՞նչ է մրսելը.

Սա մի բարդ ակտ է։ Մեր մաշկը որոշ ջերմութիւն ունի և արիւնն է, որ պաշտպանում է այդ ջերմութիւնը. բացի այդ, մեր մաշկի մէջ տարածւում է ներվերի մի զարմանալի խիտ ցանց։

Ցուրտը երկու տեսակ է ազդում մեր վրա. նախ կծկեցնելով արեան անօթները, դուրս է մղում արիւնը, որից մաշկը արնաքամ է լինում ու սառչում և յետոյ ներվային ցանցի գրգռումն, որն անցնում է նաեւ կենտրոնական ներվային համակարգութեանը և առաջացնում հարիւր տեսակ խանգարումներ ու վնասումներ։

Այստեղ տեղը չէ աւելի մանրամասն քննել մրսելու մեխանիզմը, կասենք միայն, որ մեծ քանակութեամբ հիւանդութիւններ ուղղակի նրա արդիւնքն են։

Երեխան աւելի շատ տրամադիր է մրսելու, քան հասակաւորը։

Ահա բացատրութիւնը։

Եթէ համեմատենք մանկան ու հասակաւորի մաշկի տարածութիւնը նրանց մարմնի ծաւալի հետ, կ'տեսնենք, որ մանկան կաշին մարմնի համեմատութեամբ աւելի լայն է և ընդարձակ, քան հասակաւորինը։

Հասկանալու համար ենթադրենք, որ հասակաւորը 10 անգամ երեխայից մեծ է իր մարմնի ծաւալով։ Պէտք էր կարծել, թէ նրա կաշին պիտի 10 անգամ մեծ լինի մանկան կաշուց։ Բայց իրապէս այդպէս չէ, զանազանութիւնը երկուսի կաշիների մեծութեան մէջ աւելի քիչ է։ Օրինակ հասակաւորինը ոչ 10 անգամ, այլ միայն 5—6 անգամ է մեծ երեխայի կաշուց։ Բացի այդ, մանկան կաշու մէջ տարածուած ներվային ցանցը աւելի խիտ է, քան մեծերինը, այնպէս որ եթէ երկուսից էլ մի-մի վերշօկ կաշի վերցնենք, կտեսնենք, որ երեխայի մաշկի այդ կտորի մէջ աւելի շատ ներվային թելեր կան, քան հասակաւորի, (երեխան մեծանալիս, կաշին լայնանում է և իհարկէ ցանցը նօսրանում է)։ Երեխայի մորթու այս երկու առանձնայատկութիւնները շատ աւելի զգայուն են դարձնում նրան դէպի ամենաթեթեւ ցուրտը (առհասարակ դէպի օդի ամենափոքր փոփոխութիւնները), քան հասակաւորինը։ Դրանով է բացատրւում այն իրողութիւնը, որ մանուկները այդքան յաճախ և այնչափ լուրջ կերպով հիւանդանում են մրսելուց։

VI

Կայ մի երրորդ վտանգ մանուկների կեանքի համար—այդ վարակուելն է։

Վարակիչ հիւանդութիւնները այնչափ բազմաթիւ են և այնքան տարածուած, որ երեխան ամենամատաղ հասակից մինչև հասունանալը հիւանդանալու սպառնալիքի տակ է։

Կարմրուկը, ծաղիկը, քութէշը, դիֆտերիտը և այլն Դամօկլեան սրի պէս միշտ, 10—15 տարուայ ընթացքում, կախուած են մանկան գլխին։ Հազուագիւտ են այն երեխաները, որոնք այս կամ այն հիւանդութեանը չեն ենթարկւել

Եթէ բոլոր վարակիչ հիւանդութիւնները մահացու լինէին, մի տարուայ մէջ աշխարհիս մանուկները համարեա բոլորը կը կոտորուէին։

*) Բժ. Վ. Արծրունի «Խնամատարութիւն առողջ երեխաների»։ Բժ. Ա. Բուդաղեան «Նուէր նորատի կանանց»։

Այսպէս՝ վարակիչ հիւանդութիւններից 100 մեռնողներից մինչև 80-ը երեխաներ են։

Բարեբախտաբար շատ երեխաներ հիւանդանում են, բայց վերջը առողջանում։ Այնուամենայնիւ պէտք է գիտենալ, որ յիշած հիւանդութիւնները առանց հետևանքի չեն անցնում. ընդհակառակը շատ երեխաներ, առողջանալուց յետոյ էլ մնում են նուաղ, թոյլ կամ արատաւորուած։ Մէկը սակաւարիւն է դառնում, միւսի գեղձերն ուռչում են, մի երրորդի թոքերը վնասւում, կամ մնում է երիկամունքների մէջ յարատև հիւանդութիւն, ականջի յարատև «ծնումն»—այսինքն թարախաւորումն, կամ աչքացաւ ու ոսկրացաւ և ուրիշ հարիւր տեսակ վնասումներ, որոնք գուցէ և աննկատելի կերպով, բայց և այնպէս կամաց-կամաց, մաշում են նրա կեանքը և աճը, չափազանց յաճախ դարձնում են նրան միանգամայն ապիկար ու անպէտք կեանքի համար։

Բաւական է յիշել, որ կոյրերի ու խուլերի մեծագոյն մասը վարակիչ հիւանդութիւնների զոհեր են։ Քանի-քանի երեխաներ է կուրացրել ծաղիկը ու քանիսին խլացրել սկարլատինան, կարմրուկը կամ ինֆլուէնցիան։

Ահա թէ ինչ են անում վարակիչ—թունաւորիչ կոչուած հիւանդութիւնները։ Նրանք կատաղի գազանի նման անխնայ լափում են հազարաւոր մանուկների կեանքը և այդ կրկնւում է անընդհատ՝ տարէց-տարի, օրէց-օր։

Բաւական է կարդալ մեր թերթերում յաճախ երևացող թղթակցութիւնները, որպէս զի մարդ սարսափ զգայ այն աւերման առաջ, որ կատարում են մեր երկրի բոլոր անկիւններում յիշած հիւանդութիւնները։

Այս սոսկումի առաջ հայրը մընում է ձեռքերը խաչած. ծնողը գլուխը կոր, կոշտ բռունցքներով թաց աչքերը սեղմելով ընկնում է իր զաւակի փոքրիկ դիակի յետևից և տանում նրան գերեզման, և երբ յուսահատ, կոտրուած սրտով վերադառնում է իր սառած օջախը, մի մխիթարութիւն է միայն գըտնում նա—այդ «փառք քեզ Աստուածն է»...

Եւ հայ ծնողը արևմտեան զարհուրելի փատալիզմով համակուած՝ «Աստծու կամքն է» ասելով, արդարացնում է իրան, նոյն իսկ այն ժամանակ, երբ մի քանի օր չանցած՝ մի ուրիշ դագաղ է տանում թաղում առաջինի կողքին...

Ի՞նչ սուր կսկիծ պիտի զգար այդ ծնողի սիրտը, եթէ նա հասկանար, որ իր զաւակների իսկական սպանողը ինքն է. եթէ գիտենար, որ կարող էր փրկել նրանց մահուան ճիրաններից, եթէ առանձնացնէր երեխաներին, եթէ թոյլ չտար, որ վարակուած տներից թոյնը բերեն—գցեն իր տունը...

VII

Մենք մատնանիշ արինք մանկան գլխաւոր թշնամիների վրայ։ Տեսանք որ նրանք անխուսափելի, անյաղթելի չեն։

Երեխան ինքն իրան անկարող է պաշտպանել, բնութիւնը նրան աշխարհ է գցել և, այսպէս ասած, հաւատացել է ծնողներին։ Ծնողը փոքրիկ էակի կեանքի ու մահուան տէրն է։ Ոչ մի կենդանու ձագ այնչափ թոյլ, այնչափ նրբակազմ ու անպաշտպան չէ ծնւում, որքան մարդկային էակը։ Հաւի ճուտը ինքը ծակում է ձուի կճեպը, դուրս է գալիս և դուրս գալուն պէս իսկոյն քայլում է, փնտռում, կտցում! իսկ երեխան!... Ո՜րքան ողորմելի է նա, որքան խղճալի!.. Մի ամբողջ տարի է հարկաւոր, որ նա ոտի կանգնի, մի քանի ամիս, որ նրա աչքերը լոյսին ընտելանան և ականջները—ձայներին։ Նրա ստամոքսը այնքան նրբակազմ է, որ հազիւ մօր կաթն է մարսում. մի կտոր հացը կարող է սպանել նրան...

Որչափ հմտութիւն ու գիտութիւն, զգուշութիւն, շրջահայեցութիւն է հարկաւոր այս փոքր էակին առողջ պահպանելու ու առողջ մե-

*ծացնելու համար, և որչափ, կըրկնում ենք, տգէտ են մայրերը դրա վերաբերմամբ:*

*Իր ընդունարանում տանտիկինը գեղեցկաղէմ է. սիրալիր, նազելի, խելօք, հիւրասէր, քաղաքավարի, հաճելի ու խելացի է դատողութեան մէջ, չնորհալի ու գրաւիչ յարաբերութիւնների մէջ: Նա նուագում է ու երգում, նա պարում է ու զուարճանում: Նա հասկացողութիւն, երբեմն նաև լուրջ տեղեկութիւններ ունի գրականութեան, գիտութեան ու գեղարուեստի մասին ու մի խօսքով նա մի վերջին աստիճանի զարգացած ու կրթուած կին է:*

*Այսպէս է նա սալօնում: Այժմ տեսէք նրան մանկանոցում. կատարեալ հակապատկեր:*

*Այստեղ նա մի գուեհիկ, մի տըգէտ է, մանկատածութեան մասին նա ոչ մի տեղեկութիւն չունի: Նա ապշած նայում է իր երեխայի վրա, երբ նա ճչում է. գլուխը կորցնում է իր ըմբռնողութիւնը, առողջ դատողութիւնը մի պատահարի, մի չնչին դէպքի առաջ, երբ խնդիրը երեխային է վերաբերում...*

VIII

*Մի ազգի ֆիզիքական ու տընտեսական բարօրութիւնը կնոջից է կախուած:*

*Կինը պիտի տայ առողջ սերունդ և առատ սերունդ: Այսինքն նա շատ պիտի ծնի և առողջ երեխաներ ծնի:*

*Անտարակոյս երեխաների քանակութիւնը, ուրիշ խօսքերով, մի ժողովուրդի աճման չափը սահմանափակւում է նրա տնտեսական բարդութեամբ, բայց այդ յարաբերութեան աստիճանը դեռ որոշուած չէ և Մալտուսի յայտնի օրէնքը այնքան էլ անհերքելի չէ, որքան կարծւում էր մինչև այժմ:*

*Մի ազգ, մի հասարակութիւն, որը չէ կամենում մեռնել, պիտի պահպանէ իր զաւակներին կոտորածից:*

*Մանուկների մահացման աստիճանով կարելի է մի երկրի քաղաքականութիւնը չափել, ասում է մի հեղինակ:*

*Քաղաքակրթուած երկիրներում աւելի քիչ են մեռնում երեխաները, քան անքաղաքակիրթ:*

*Այս տեսակէտից Նորվեգիան ամենից առաջադէմն է: Ահա մի ցուցակ, որը չափազանց խրատական է:*

1000 *ծնուածներից առաջի տարում մեռնում են:*

| | | |
|---|---|---|
| *Նորվեգիայում* | 100 | *հոգի* |
| *Շվեցիայում* | 106 | » |
| *Անգլիայում* | 137 | » |
| *Ֆրանսիայում* | 154 | » |
| *Պրուսիայում* | 169 | » |
| *Իտալիայում* | 220 | » |
| *Աւստրիայում* | 158 | » |
| *Բաւարիայում* | 329 | » |
| *Ռուսիայում* | 591 | » |

*Դժբաղդաբար չկան տեղեկութիւններ հայերիս վերաբերմամբ:*

*Ցամենայն դէպս մենք վստահօրէն կարող ենք ընդունել Ռուսաստանի թիւը* (591), *եթէ ոչ աւելի: Այսպիսով տեսնում ենք, որ մեր երեխաներից* կեսից *աւել* (100-*ից* 60-*ը*) *մեռնում են դեռ մի* տարեկան *չդարձած:*

*Եթէ հաշուենք նաև մի տարեկանից յետոյ մեռնողներն էլ, կըտեսնենք, որ հայ ժողովրդի զաւակներից մօտ* 3/4 *ոչնչանում են մանկական հասակում...*

*Այս զարհուրելի կոտորածը պիտի խորհել տայ ամեն մի հայի, որովհետև մի ազգ, որը այդպէս օտարամօլ է, որը չունի ինքնագիտութիւն, կարող է ջնջուել—ոչընչանալ, եթէ քանակով էլ պակասի, այսինքն, եթէ տարէց-տարի նուազի նրա թիւը:*

*Բժշ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ:*

## ՍԻՖԻԼԻՍԸ ԻԲՐԵՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՉԱՐԻՔ։

Պրօֆեսոր Ալֆրէդ Ֆուրնիէ, որ Եւրոպայում մեծ հեղինակութիւն է ձեռք բերել իբրեւ սիֆիլիսի մասնագէտ պրօֆեսոր, 1899 թուականին Բրիւսէլի մէջ գումարուած միջազգային կօնֆերենցիայում (վեներական ախտերի կանխապաշտպանութեան համար) սիֆիլիսի հասարակական չարիքների մասին մի ընդարձակ զեկուցում է կարդացել, որից քաղելով հետեւեալ համառօտ տեղեկութիւնը, հայ հասարակութեան ուշադրութեանն ենք յանձնում։

Սիֆիլիսը հայերի մէջ աւելի մեծ չարիքներ է առաջացնում, քան թէ քաղաքակիրթ Եւրոպայում, որովհետեւ այնտեղ հիւանդների մեծ մասը դարմանւում եւ կատարելապէս բուժւում է, ունի ձրի հիւանդանոցներ. իսկ մեզանում սիֆիլիսով վարակուած հիւանդների մեծագոյն մասը մնում է անդարման, կիսադարման, թէ տգիտութեան եւ թէ դարմանման միջոցների չգոյութեան պատճառով։

Իւրաքանչիւր հայ անհատ, ամուսնացած, թէ ոչ, պէտք է լաւ ճանաչէ մարդկութեան այս մեծ թշնամուն եւ իրան, իր ընկերոջը, իր սերունդը պաշտպանէ նրա դէմ. պէտք է շարունակ կարդայ բժ. Ա, Բուգուզեանի՝ «Վարակիչ հիւանդութիւններ», «Սիֆիլիս», «Ի՞նչ է ժուժկալութիւնը». «Ի՞նչ է անառակութիւնը», «Վեներական ախտեր», «Ուղեղի սիֆիլիսը» եւ բժկ. Վ. Արծրունու՝ «Սիֆիլիս», «Վարակիչ հիւանդութիւններ» գրքոյկները։

Սիֆիլիսը հասարակական մի մեծ չարիք է.

1. Անհատին պատճառած անհատական վնասներով։

2. Ընտանիքին պատճառած հասարակական վնասներով։

3. Ժառանգական հետեւանքներով, որոնց գլխաւորապէս զոհ են դառնում երեխաները

եւ 5. Այլասերումներով։

Առայժմ վերցնենք դրանցից առաջին երկուսը, այսինքն քննենք սիֆիլիսի պատճառած անհատական եւ ընտանեկան վնասները։

I

Անհատական վնասներ։

Սիֆիլիսը իր անհատական վնասով արդէն մի հասարակական չարիք է ստեղծում։ Անհատի համար սիֆիլիսը, լուրջ, կարեւոր, ծանր, յաճախ շատ վտանգաւոր մի հիւանդութիւն է։ Սիֆիլիսը երեք շրջաններ է բոլորում, իւրաքանչիւր շրջանն ունի իր որոշ երեւոյթները, բայց ամենավտանգաւորը երրորդ շրջանն է։ Հիւանդութիւնը այս վերջին շրջանի մէջ մտնելու համար որոշ պատճառներ կան, օրինակ՝ տարիքը, կազմուածքը, տէմպերամենտը, նախկին առողջութեան վիճակը, դարմանել տալ կամ չտալը։ Աւելացնենք, որ այս երրորդ շրջանն աւելի յաճախ է պատահում եւ աւելի վտանգաւոր է դառնում նրանց համար, որոնք կիսակատար կերպով են բժշկւում կամ բոլորովին չեն բժշկւում. կատարեալ դարմանւող սիֆիլիսը որեւ է վտանգ չի ներկայացնում։

Այս երրորդ շրջանում պատահած երեւոյթները աւելի են վտանգաւոր։ Պրօֆեսոր Ֆուրնիէ երրորդ շրջանի սիֆիլիսով 4,400 հիւանդներ է քննած (400-ը կին), որոնց ամենակարեւոր գործարանները վնասուած չեն, նեարդային դրութիւնը, ոսկորները, ներքին գործարանները, ամորձիքը, լեզուն, կոկորդը, աչքը, ականջը եւ այլն։ Նրա կազմած վիճակագրութիւնից միայն կարեւորները կը յիշենք. մորթային երեւոյթներ—1,451 դէպք, ողնածուծի եւ նեարդերի վնասներ—1,099, ուղեղի սիֆիլիս—758, ոսկորների վնասներ—748, բերանի եւ կոկորդի վնասներ—641, սեռական գործարանների վնասներ—271, ամորձիկների վնասներ—245, աչքի վնասներ—110 դէպք։

Պրօֆեսորի կողմից 39 տա-

բուայ ընթացքում տեսնուած 743 ուղեղի սիֆիլիսից 354-ի վերջաւորութիւնը յայտնի է (մնացածների մասին որոշ տեղեկութիւններ չկան, հիւանդների հեռանալու պատճառով):

Ի՞նչ է այս վերջաւորութիւնը:

Սրանցից 79-ը առողջացել են, 66-ը մեռել և 209-ը ապրել, բայց զանազան ծանր և լուրջ խանգարումներով, իբրև կենդանի մեռեալ:

Ուրեմն՝ ուղեղի սիֆիլիսով հիւանդներից 100-ից 22-ը առողջանում, 19-ը մեռնում և 59-ը իբրև կենդանի մեռեալներ են ապրում:

Այս երրորդ շրջանի հետևանքներից ամենավտանգաւորը տաբէս կոչուած հիւանդութիւնն է (631 դէպք), մի տեսակ անդամալուծութիւն, որի մէջ կամային շարժումներն են խանգարւում և որը բժշկական ներկայ միջոցներով անդարմանելի է:

Ահա այդպէս, սիֆիլիսով վարակւող անհամար վերոյիշեալ հիւանդութիւններով հասարական չարիք է դառնում:

II

Ընտանեկան վնասներ:

Սիֆիլիսի, ընտանեկան տեսակէտից՝ հասարակական վտանգը հետևեալ երեք կէտերումն է կայանում 1. կնոջ պղծութիւնը, 2. ամուսնական բաժանում, 3. ամուսնու ակարութեան պատճառով ընտանիքի նիւթական քայքայումը:

Այս պղծութեամբ կինը նախ իր ամուսնու սիֆիլիսով է վարակւում և ենթարկւում է այն անհատական վտանգներին, որոնց մասին վերևում խօսեցինք: Երկրորդ՝ այս զոյգից ծնուած երեխաները ենթարկուելու են սիֆիլիսի ժառանգական ամենածանր չարիքներին, որովհետև փորձերով ստուգուել է, որ երկու կողմի՝ հօր և մօր սիֆիլիսով վարակւող երեխան, ծնողներից միայն մէկի՝ հօր կամ մօր սիֆիլիսը ժառանգող երեխայից աւելի շատ է վնասւում:

Ամուսնացած կինը յաճախ ամուսնութեան մէջ իր ամուսնու սիֆիլիսով է վարակւում: Պրոֆեսորը իր հիւանդների շրջանում պատահել է սիֆիլիսոտ կանանց, որոնց 100-ից 14-ը վարակուել են իրանց ամուսիններից, այսինքն մէկ հինգերորդը: Այս թիւը, այս համեմատութիւնը հայերի մէջ շատ աւելի բարձր պիտի լինի. իրանց հայրենիքից պանդխտող երիտասարդների 100-ից 90-ը, վեներական ախտերով վարակուելով, հայրենիք են վերադառնում և ամուսնանալով պղծում և վարակում են մաքուր և կոյս կանանց:

Պատուաւոր կնոջ համար սիֆիլիսը ամօթալի, անարգ և վատ մի հիւանդութիւն է: Պատուաւոր ընտանիքից ամուսնացած մի ջահել կին, որ իր ամուսնուց էր վարակուել, պրոֆեսորին ասել է.— «Ինչ մեծ ամօթ ինձ համար: Թըշուառականն ինձ հետ մի պոռնիկի պէս վարուեց, ինձ տուեց պոռնիկների հիւանդութիւնը»:

Ամուսնու սիֆիլիսը Եւրոպայում ամուսնալուծութեան օրինաւոր մի պատճառ է: Բայց յաճախ խնդիրը կարգադրւում է ամուսինների մէջ, երբեմն կինը իր վարակուելը չի իմանում կամ չիմանալ է ձևացնում. երբեմն էլ ներում է կամ այնպէս ցոյց է տալիս: Սակայն շատ անգամ էլ այս համերաշխութիւնը կամ համակերպութիւնը սիֆիլիսով վարակուած երեխաների աշխարհ գալովն կամ մեռնելով խանգարւում է: Այս մասին պրոֆեսորը հետևեալ դէպքն է պատմում.

«Իմ յաճախորդներից մի կին, որ երեք երեխաներ էր վիժել և որի պատճառը մինչև այդ ժամանակ անյայտ էր մնացել, սիֆիլիսով վարակուած մի երեխայ աշխարհ բերեց. երեխան մեռաւ և նրա մահը կնոջ համար մի յայտնութիւն եղաւ:—«Երբէք», ասում էր նա ինձ մի օր իր խոր վշտի մէջ, իմ չորս երեխաների կորուստը ամուսնուս չպիտի ներեմ, որ իր սխալով տեղի ունեցաւ»—: Եւ մի քանի ժամանակից յետոյ, սիֆիլիսի հե-

տեանքներով տառապող այս կինը, երբ որ նորից երեխաներ ունենալու համար դարմանուելու օգուտների մասին էի պնդում, մի ճշմարիտ բարկութեամբ ինձ պատասխանեց.

—«Սիրելի բժիշկ, ինձ ինչու էք անարգում։ Ի՞նչպէս կարող էք հաւատալ, որ ես տակաւին տրամադիր լինեմ երեխաներ ունենալու մի մարդուց, որը նրանց չորսին արդէն սպանեց։ Ինձ համար չէ այդ մարդը և երբէք էլ չէ լինելու։ Ազնուութեամբ սպասիւ արէք ինձ— իբրև մի այրի կնոջ—։ Ճիշտ տաս տարի է անցել. կինը իր խօսքի վրա հաստատ է մնում»։

Սիֆիլիսից առաջացած երրորդ չարիքը ընտանիքի քայքայումն է։ Այս չարիքը առաջ է գալիս տան մեծի — տղամարդու հիւանդութեամբ, անկարութեամբ կամ մահով։

Տղամարդը վերջում յիշուած սիֆիլիսի անհատական վտանգներից մէկին ենթարկուելով աշխատանքի անկարող է դառնում. շատ քիչ անգամ է պատահում, որ մարդը հարուստ լինելով, կինը կարողանայ այդ հարստութեան հասոյթներով ապրել և ամբողջ ընտանիքը ապրեցնել։ Ընդհակառակը, շատ անգամ տղամարդիկ հասոյթի աղբիւրներ չունենալով և աշխատանքի անկարող լինելով, ընտանիքը թշուառութեան, նեղութեան և քայքայման է մատնում։

Պրոֆեսօրը այս մասին մի քանի օրինակներ է յիշում։

—Մի բանուոր 23 տարեկան հասակում սիֆիլիսով վարակուելով, շատ թեթև կերպով է բժշկւում։ Նա 30 տարեկան հասակում ամուսնանում է և շուտով երկու երեխաների տէր դառնում։ Իր արհեստի մէջ ճարտար լինելով, օրական 8—10 ֆրանկ ($2^1/_2$—$3^1/_4$ րուբլի) է շահում, իր ընտանիքի կարիքներին հեշտութեամբ բաւարարութիւն է տալիս։ Բայց շուտով իր նախկին հիւանդութեան հետևանքը եղող ուղեղի ծանր սիֆիլիս է ստանում, որը աջ կողմի անդամալուծութեամբ է վերջանում։ Այնուհետև աշխատանքը անկարելի է դառնում և դրա հետևանքն էլ թշուառութիւն է լինում, սոսկալի՜ թշուառութիւն։ Բարեբաղդաբար գթասիրտ մի ազգականուհի նրա երկու երեխաներին որդեգրում է։ Բայց կինը իր անդամալոյծ ամուսնու հետ անօգնական է մնում. և այս խեղճ կինը իր ասեղի ծանր աշխատանքով շահած օրական մէկ ու կէս ֆրանկով (50 կոպէկ) ապրեցնում է իր անդամալոյծ ամուսնուն։

Մի երիտասարդ ճարտարապետ սիֆիլիս ստանալուց 7 տարի յետոյ, որ լաւ չէր բժշկուած, ամուսնանում է։ 6 ամիս յետոյ ուղեղի և ողնածուծի հիւանդութեամբ մեռնելով՝ բացարձակ թշուառութեան մէջ է թողնում իր կնոջը և մի փոքրիկ երեխայ։

Ապագայ խոստացող մի տաղանդաւոր երիտասարդ նկարիչ սիֆիլիսով վարակուելուց և լաւ չբժըշկուելուց յետոյ ամուսնանում է։ Մի քանի տարի լաւ է ապրում. նկարները վաճառւում են և տունը ուրախութեան մի բոյն է դառնում. այդ ուրախութիւ՛նը մի երեխայի աշխարհ գալով կրկնապատկւում է։ Յետոյ սիֆիլիսի հետևանքով նկարչի երկու աչքերը կուրանում են։ Հետևանքը ընտանիքի քայքայումն է լինում։ Քաղցից չմեռնելու համար ստիպուած են լինում բարեգործական ընկերութեան դիմել և նրա նպաստով ապրել։

Այսպէս կործանիչ է սիֆիլիսը։

Ուրեմն անհրաժեշտ է ամեն կերպ զգուշանալ նրանից։ Իսկ դրա համար ամենալաւ միջոցը ժուժկալութիւնն է։

Դոկտ. Կ. ՓԱՇԱՅԵԱՆ։

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՉՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ։

Մեր զգայարաններից ամենակարեւորը՝ տեսողութիւնը պէտք է պահպանել մանկութեան հէնց առաջին օրուանից. հակառակ դէպքում յաճախ ամենաթեթեւ պատճառներից եւ զանցառութիւններից առաջանում են տեսողութեան թերութիւններ, որոնք անբուժելի կերպով յարատեւում են եւ շատ անյարմարութիւններ ստեղծում։

Երեխան ծնուեց թէ չէ, մանկաբարձուհին անմիջապէս պէտք է կաթեցնէ նորածինի աչքերը 2--3 կաթիլ լեապիսի լուծուածքից (2% Argenti nitrici), հակառակ դէպքում կարող է պատահել աչքերի թարախային բորբոքումն, որից բազմաթիւ երեխաներ կուրանում են. Եթէ ծննդեան երրորդ օրը երեխայի աչքերը սկսեցին ցաւել, առանց ուշացնելու անհրաժեշտ է ցաւագար երեխային բժշկի մօտ տանել, թէ չէ ծնողները պատասխանատու կլինեն իրենց երեխայի կուրանալուն։

Հարկաւոր չէ լոյսից խուսափել. նոյն իսկ նորածինները։ սակայն ուժեղ լոյսն ամենի, մանաւանդ երեխաների համար վնասակար է։

Երեխայի օրօրոցը չպէտք է դընել պատուհանի կամ լամպի մօտ, որ լոյսն ուղղակի աչքերին ընկնի։

Մանուկներին արգելեցէք, որ շարունակ ուղիղ չնայեն արեգակին, կրակին, կայծերին եւ փայլող ձիւնին։

Եթէ մարդ ստիպուած է լինում երկար ճանապարհորդել ձիւնապատ տեղերով, օգտակար է սեւ ակնոցներ դնել. թէ չէ կարող է աչքացաւ (ձմէթ, ղառըղ) առաջանալ։

Կարելոյն չափ խուսափել յանկարծակի խաւարից դէպի լոյս դուրս գալուց եւ ընդհակառակը։

Երբէք չպէտք է ննջարանում գիշերները ճրագը վառած պահել. Հարկաւոր է քնել մութ տեղ։ Սակայն սովորաբար ծծկեր երեխաների ննջարանում ճրագը վառած են պահում գիշերները, իսկ երբ երեխայի երկրորդ տարին լրացաւ, սովորեցրէք մթին սենեակում քնել։

Երեխաներին արգելեցէք, որ լաց լինելուց յետոյ անմիջապէս չկարդան կամ գրեն. Թողէք քիչ հանգստանան եւ աչքերը սառը ջրով լուանան։

Երբէք չկարդալ պլպլող կրակի լոյսի տակ, նոյնպէս եւ այն դէպքում, երբ արեւն ընկած է գրքի վրա եւ աղջամուղջին։

Չպէտք է երկար նայել շարժւող իրերին, օրինակ կառքի անիւներին, ժամացոյցի ճօճանակին, կարուսէլին եւ այլն։

Արգելեցէք երեխաներին, որ գիրքը կամ մի այլ առարկայ աչքերին մօտիկ երկար չպահեն, թէ չէ կարող է կարճատեսութիւն առաջանալ։ Նոյնպէս արգելեցէք, որ երեխաները խոշորացոյցով կամ ակնոցներով չխաղան։

Վնասակար է պառկած կարդալը։ Գրելիս և կարդալիս լոյսը պէտք է ձախ կողմից ընկնի տետրակի կամ գրքի վրա։ Գրքերի տառերը պէտք է բաւական խոշոր լինին, նամանաւանդ փոքրիկ երեխաներինը։

Առանց հանգստանալու, անընդհատ երկար կարդալը վնաս է, պէտք է ընդմիջումներ անել։ Երկար կարդալուց, առհասարակ, տեսողութիւնն երկար լարելուց յետոյ, անմիջապէս պէտք չէ աչքերը տրորել կամ թէ հուպ տալ աչքերի խնձորները։

Պէտք է խուսափել փոշիից, ծխից, փչացած օդից և սառը քամուց։ Օգտակար է ամեն օր աչքերը թարմ ջրով լուանալ, մանաւանդ աշխատելուց յետոյ. խիստ օգտաւէտ է սովորեցնել երեխաներին նայելու հեռու սարերին, կանաչ դաշտերին, անտառներին եւ ծովին. սրանով տեսողութիւնը սրանում է։

—

Դպրոցական անկանոն աշխատանքը յաճախ կարճատեսութիւն է առաջացնում աշակերտների մէջ։ Պրոֆէսսոր Կօն դեռ 1867 թուա-

կանից ուշադրութիւն դարձրեց աշակերտական կարճատեսութեան վրա։ Նա քննել է 10 հազար երեխայի աչքեր, որից երևացել է, որ կարճատեսները աւելի սակաւաթիւ են լինում գիւղական ուսումնարաններում, մինչդեռ քաղաքներում նրանց թիւն աստիճանաբար բարձրանում է տարրական դպրոցներից դէպի միջնակարգ ուսումնարանները։ Միևնոյն դէպքում կարճատեսների թիւը զուգընթացաբար բարձրանում է դասարանների հետ։ Դժբաղդաբար սրատեսութեան թերութիւնը միմիայն կարճատեսութիւնից չէ կարող պատահել. կան ուրիշ բազմաթիւ պատճառներ, օրինակ, հեռատեսութիւն, աչքի եղջրաթաղանթի տարակրութիւն (աստիգմատիզմ). աչքի թափանցիկ մասերի մթնելը կամ թէ ներսի թաղանթների հիւանդութիւնները։

Ուսուցիչները և ինտելիգենտ ծնողները պէտք է իրանք կարողանան քննել և իմանալ, արդեօք երեխայի տեսողութիւնը նորմալ է, թէ տեսողութեան թերութիւն կայ։ Քննողը կարող է չիմանալ թերութեան պատճառը, բայց երբ նկատէ, որ երեխայի տեսողութիւնը թոյլ է, այս դէպքում երեխային շուտով կուղարկէ բժշկի մօտ և այդպիսով կ'նախազգուշացնէ վնասակար հետևանքների երևալուց։

Թոյլ տեսողութիւն ունեցող աշակերտներին անհրաժեշտ է նստեցնել դասարանի լոյս տեղերում, գրատախտակից մօտիկ, մանաւանդ հետևել, որ նրանք ուղիղ նստեն և գրեն խոշոր տառերով, իսկ ծնողները տանը պէտք է հետևեն, որ այդպիսի երեխաները բացի իրենց դասերից ուրիշ ընթերցանութեամբ չ'պարապին։

**Սրատեսութեան քննութիւնը** կատարում են յատուկ «տառերի տախտակի» միջոցով *)։ Այստեղ տառերը տպուած են շարքերով, մէկը միւսի վրա։ Ամեն շարքի գլխին դրած է մի թուանշան, որը ցոյց է տալիս, թէ նորմալ աչքը քանի մետր (մետրը=1 արշինի և $6\frac{1}{2}$ վերշոկի) հեռաւորութիւնից պէտք է ջոկէ այդ տառերը։ Սրատեսութիւնն արտայայտւում է կոտորակով, որի յայտարարը շարքի վրա դրած թուանշանն է լինում, իսկ համարիչը — տարածութեան չափը։ Օրինակ, եթէ տառերի վերևի շարքը № 6 ջոկւում է 6 մէտր տարածութիւնից, այս դէպքում տեսողութեան սրութիւնը հաւասար է $6/6=1$, այսինքն տեսողութիւնը նորմալ է։ Բայց եթէ մի և նոյն տարածութեան վրա ջոկւում է միայն № 12 տողը, այս դէպքում սրատեսութիւնը հաւասար է $6/12=1/2$, ուրեմն տեսութեան սրութիւնը կիսով չափ պակաս է։

Քննելիս տառերի տախտակը պէտք է կախել պատից այնպէս, որ լաւ լուսաւորուած լինի և երեխային կանգնացնել տախտակից վեց մետր հեռաւորութեան վրա. թող նա սկսէ կարդալ վերևի շարքից նախ երկու աչքով, յետոյ առանձին-առանձին աչքերով։

Այս տեսակ քննութիւնը ոչ մի դժուարութիւն չէ ներկայացնում, պէտք է մի քիչ վարժուել։

Գերադասելի է, որ քննութեան հետևանքը նշանակուի ամեն տարի, այդպիսով միշտ կարելի կլինի համեմատութիւններ անել։

Բժիշկ Ք. ՕՀԱՆԵԱՆ։

*) Կարելի է գործածել այդ նպատակի համար հայերէն լեզուով հրատարակուած բժ. Լունկևիչի տառաթերթը։

# Կանանց հարցի շուրջը:

## ԿԱՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

«Մենք ապրում ենք սոցիալական յեղափոխութեան մի այնպիսի ժամանակում, ասում է Աւգուստ Բեբել *), որը իւրաքանչիւր օր նորանոր առաջադիմութիւն է կատարում: Հասարակութեան բոլոր խաւերում նկատելի է մի անհանգիստ շարժում, որը ձգտում է աւելի ու աւելի խոր ձեւափոխութիւններ կատարելու: Ամենքն էլ զգում են, որ իրանց ոտքերի տակի հիմքը դողդողում է: Առաջ է եկել հարցերի մի ամբողջ շարք, որ շարունակ աւելի ու աւելի լայն շրջաններ է զբաղեցնում, որի լուծման համար նորից ու նորից վէճեր են զարթնում: Ահա այդպիսի հարցերի շարքում ամենանշանաւորներից մէկն է կանանց հարցը, որը օրէցօր աւելի ու աւելի առաջաւոր տեղ է գրաւում:

Այդ հարցի նպատակն է՝ պարզել, թէ կինը ինչ դիրք պէտք է բռնէ մեր սօցիալական օրգանիզմի մէջ, թէ ինչպէս պէտք է զարգացնէ իր ոյժերն ու ընդունակութիւնները, որպէս զի մարդկային հասարակութեան մի օգտակար անդամը դառնայ՝ միւս անդամների հետ հաւասար իրաւունքներով ու արտօնութիւններով:»

Ահա այդ հարցն է, որ մի յաղթական զօրութեամբ անցել է երկրից-երկիր և կարճ ժամանակում իր կողմն է գրաւել համակրողների ստուար խմբեր, այդպիսով առաջացնելով մի մեծ շարժում, որ յայտնի է «կանանց շարժում» կամ «ֆեմինիզմ» անունով:

Տեղի սղութիւնը մեզ թոյլ չի տալիս մանրամասնօրէն պատկերացնելու այդ շարժման բազմազան ելևէջները բոլոր երկրներում, ուստի այս անգամ կանգ առնենք միայն վերջին ժամանակներս տեղի ունեցած երևոյթների *) վրա:

Ինչպէս յայտնի է, Անգլիայում կանայք համեմատաբար աւելի ազատութիւն են վայելում, քան թէ հարեւան երկրներում: Նրանք գործում են համարեա բոլոր ասպարէզներում, մանաւանդ քաղաքային, հասարակական հարցերում: Վերջին ուսումնարանական խորհրդի ընտրութիւնների ժամանակ ընտրուեցին 20 կին անդամներ:

Դուբլին քաղաքում ընտրուեց նաև մի կին—սանիտարական վերահսկիչ: Անգլիայի աղքատախնամ մասնաժողովը ունի 977 կին անդամներ, որոնցից միայն 110-ը Լօնդօնին են պատկանում:

Տղամարդիկ ամեն կերպ աշխատում են դժուարացնել կանանց գործունէութիւնը, մանաւանդ երբ նա կապուած է գոյութեան կռուի հետ: Օրինակ, երբ Շօտլանդիայի մի հիւանդանոցի վարչութիւնը հրաւիրեց Գլազգօի համալսարանն աւարտած և դոկտորութեան աստիճան ստացած մի կին բժշկի,

*) A. Bebel: «Die Frau». Einleitung.

*) Օգտուել ենք գլխաւորապէս հետեւեալ աղբիւրներից. «Kürschners Jahrbuch. 1903» Anna Plothow: «Das Buch der Frau» և N. Lange und G. Bäumer: «Handbuch der Frauenbewegung».

հիւանդանոցի բժիշկների մեծամասնութիւնը բողոքեց, աշխատելով արգելք լինել, բայց փաստերը ցոյց են տալիս, որ կին բժիշկները գործունէութեան ասպարէզում ոչնչով յետ չեն մնում տղամարդկանցից, իսկ մի քանի դէպքերում նոյն իսկ վերջիններից աւելի արդիւնք են ցոյց տալիս:

Լոնդոնի աղքատախնամ վարչութիւնը առաջին անգամ հրաւիրեց ծաղիկ պատուաստող մի կին բժիշկ և փորձը ցոյց տուեց, որ նրա ներկայութեամբ հիւանդներն իրանց աւելի հանդարտ էին պահում և աւելի գոհ մնում:

Զնայելով որ Անգլիայում կանայք արդէն մուտք են գործել զանազան ասպարէզներում և գործում են մեծ եռանդով ու աջողութեամբ, այնուամենայնիւ տղամարդիկ շատ անգամ փորձեր են անում նրանց դէմ արգելքներ դնելու: Այսպէս օրինակ, երաժիշտ կանայք երբ ուզեցին մասնակցել թատրոնի երաժշտական խմբի մէջ, բոլոր երաժիշտ տղամարդիկ ահագին աղմուկ բարձրացրին: Զնայելով այդպիսի հանգամանքներին, անգլուհիները առանց յուսահատուելու շարունակում են իրանց գործունէութիւնը և ձգտում են ձեռք բերել լիակատար ազատութիւն և իրաւունքների հաւասարութիւն:

Աւստրիայում կանանց շարժումը սկզբում վատ ընդունելութիւն գտաւ. շատ ուսումնարանների դռներ փակ էին կանանց համար, բայց որովհետև սովորող— երիտասարդների թիւը քիչ էր համալսարաններում, ուստի ստիպուած եղան ընդունել նաև կանանց, գրլխաւորապէս բժշկական ֆակուլտետում, որովհետև կին բժիշկների մեծ կարիք էր զգացւում: Համալսարանները մտնելու համար հիմնուեցին պատրաստական գիմնազիաներ կանանց համար: 1897 թ. սկսած թոյլ տուին կանանց յաճախել նաև փիլիսոփայական ֆակուլտետը և քննութիւն բռնել այդ առարկայից.

Գործունէութեան զանազան ասպարէզները հետզհետէ բացւում են կանանց առաջ:

1902 թ. առաջին անգամ մի կին ստացաւ կայարանի կառավարչուհու (Stationsschef)-պաշտօն. կան նաև զինուորական հիւանդանոցներում կին հիւանդապահներ, գրագրուհիներ և այլն:

Աւստրիայում կանայք կազմել են մի «Ընդհանուր աւստրիական կանանց ընկերութիւն», որի գործունէութեան առարկան է կազմում հասարակական զանազան խնդիրներ: Նրանք զբաղւում են աղախինների հարցով, ալկօհօլիզմը վերացնելու հարցով և այլն: 1902 թուից նրանք ունեն նաև իրանց սեփական թերթը «Կանանց Նոր կեանքը» անունով (Neues Frauenleben):

Ամերիկան կանանց շարժման օրրանն է ներկայացնում, կանանց ձգտումների ընդհանուր կենդրոնը: Միացեալ Նահանգներում անցեալ տարի տեղի ունեցաւ երեք տարին մի անգամ կրկնւող կանանց ազգային ժողովը, որտեղ խօսեց Կարմիր խաչի աշխարհահռչակ նախագահուհին—Կլարա Բարտօնը (Klara Barton)

«Ամերիկական կանանց ձայնատւութեան իրաւունքի ընդհանուր ընկերութիւնը» անցեալ տարի միանալով միւս երկրների այս օրինակ ընկերութիւնների հետ, վճռեց 1904 թ. Բերլինում կազմել մի կանանց միջազգային ժողով և հիմնել «կանանց ձայնատւութեան իրաւունքի մի միջազգային միութիւն»:

Ամերիկայում զանազան օգտակար միջոցներով աշխատում են թեթևացնել աշխատող կանանց դրութիւնը. Չիկագօյում հիմնուած է մսագործարան, որտեղ 5000—6000 բանւորուհիներ (75%) են աշխատում, մէկը միս է կտրատում, միւսը երշիկ պատրաստում, երրորդը փաթաթում, ամրացնում և այլն և այլն. շաբաթական նրանք ստանում են 9—10 դօլլար: Եւ փաստերը ցոյց են տըուել, որ կանայք այժմ աւելի լաւ են կատարում իրենց պարտականութիւնը, քան թէ տղամարդիկ:

Կան մի քանի վաճառատներ,

ուր միայն կանայք են ծառայողները: Մի քանի յայտնի կրթական հիմնարկութիւններում, վերջին ընտրութիւնների ժամանակ, դեկաններ նշանակուեցին կանանցից: Յայտնի փաստաբանուհի Միսս Ռօզալիա Լեվ (Miss Rosalie Loew) ընտրուեց որպէս հաւատարմատար Նիւ-Եօրկի իրաւունքների պաշտպան ընկերութեան (Schutzgesellschaft):

Աւստրալիայում կանայք համեմատաբար աւելի ազատ են, քան թէ ուրիշ երկրներում: Նրանք գործում են համարեա բոլոր ասպարէզներում: Իսկ 1901 թուականից նրանք ձեռք են բերել նաև ընտրողական իրաւունք:

Այդ տեսակ իրաւունք ունեցող կանանց թիւը հասնում է 850000-ի. Նրանք շատ լուրջ են վերաբերւում իրանց երկրի քաղաքական կեանքին: Daily Chronicle լրագիրը հաղորդում է այն ծրագիրը, որ Աւստրալիայի կանայք ներկայացնելու են առաջիկայ ընտրութիւններին: Այդ ծրագրի մէջ ամենաառաջին տեղը բռնում է կանանց և տղամարդկանց իրաւունքների լրիւ հաւասարութեան պահանջը, յետոյ նաւատորմի և զօրքի կազմակերպութիւնը միայն պաշտպանողական նպատակով. արգելել օփիումի և այս տեսակ առարկաների մուտքը դէպի երկիրը, բացի բժշկական գործածութեան համար. խիստ հսկողութեան տակ առնել Աւստրալիա բերւող ուտելիքի մթերքները:

Բելգիայում եւ Հոլլանդիայում էլ կանայք անգործ չեն նստել. Նրանք արդէն իրաւունք են ձեռք բերել համարեա բոլոր համալսարաններում սովորելու, հիմնել են բազմաթիւ միջնակարգ և գիւղատնտեսական դպրոցներ կանանց համար. բացի դրանից նրանք աշխատում են ձեռք բերել նաև իրաւաբանական ամբիօնը:

Բելգիայում կանայք հիմնել են մի քանի ընկերութիւններ որոնցից նշանաւորներն են «Բարոյական օրէնքները բարձրացնող կանանց ընկերութիւնը» որի գլխաւոր նպատակն է կռուել անբարոյական կանանց դէմ: Այդ ընկերութեան գործունէութեան շնորհիւ ոստիկանութիւնը խստիւ արգելեց «հասարակաց տներ» հիմնելը. այդպիսի փորձ անողները ենթարկւում են մեծ տուգանքի: «Հոլլանդական ազգային համախմբումը կանանց աշխատանքի համար» անցեալ 1901թ. բաց արեց մի բիւրօ, որտեղ քննւում և միջոցներ են ձեռք առնւում կանանց արհեստագիտութիւնը բարձրացնելու համար: 1902 թ. հիմնուեց մի ընկերութիւն՝ դեղատներում ծառայող կանանց համար, որի պարտականութիւնն է բարելաւել վերջինների դրութիւնը:

Թէ որպիսի եռանդով են գործում Բելգիայի կանայք, ցոյց է տալիս այն փաստը, որ նրանք հիմնել են ժողովրդի ստոր խաւերի հասակաւոր կանանց համար կրթական ուսումնարաններ, ուր շաբաթը երեք անգամ դասախօսութիւններ են կարդացւում ընդհանուր զարգացուցիչ առարկաների մասին: Այդտեղ յաճախում են 13 տարեկանից մինչև 70 տարեկան հասակ ունեցողները. Նրանք մեծ մասամբ լուացարարուհիներից, դերձակուհիներից, բանւորուհիներից և մայր դարձած կանանցից են բաղկացած:

Գերմանիայում կանանց շարժումը հետզհետէ աւելի ու աւելի զարգանում է և քաղաքական գոյն է ստանում: Շատ կուսակցութիւններ պաշտպանում են կանանց ձայնատուութեան իրաւունքը, որովհետև կանայք կարող են մեծ դեր խաղալ նրանց ծրագրի իրականացման մէջ: Ներկայումս գոյութիւն ունի «Կանանց ձայնատուութեան իրաւունքի ընկերութիւն» (Vereinzfür Frauenstimmrecht): Այդ ընկերութեան թէ հիմնադիրը և թէ կառավարիչները կանայք են. նրա գլխաւոր նպատակն է ձեռք բերել քաղաքական իրաւունքների հաւասարութիւն: Այդ նպատակին հասնելու համար այդ ընկերութիւնը աշխատում է վերացնել այն սառնութիւնն ու անտարբե-

բութիւնը, որ ունին գերմանացի կանայք դէպի քաղաքական հարցերըն ու գործերը: Կանանց կրթութեան հարցը նոյնքան նշանակութիւն ունի գերմանուհիների համար, որքան քաղաքական իրաւունքների հարցը: Ինչպէս յայտնի է, գերմանիայում բարձրագոյն շատ և շատ դպրոցներում կանանց ընդունում են ոչ թէ որպէս իսկական ուսանողուհիներ, այլ որպէս ազատ ունկնդիրներ: Կանայք աշխատում են զանազան միջոցներով վերակազմել իգական գիմնազիաները և բարձր դպրոցները. աշխատում են ձեռք բերել բոլոր համալսարաններում իսկական ուսանողուհի լինելու իրաւունքը: Իհարկէ շատերը հակառակ են այդ ձգտմանը. նոյն իսկ Պրուսական լուսաւորութեան նախարարը 1902 թ. մայիսի 1-ին Լանդտագում արտասանած ճառով, բոլորովին ընդդէմ էր սովորող կանանց այդ ցանկութեանը. նա ասում է. «Ոչ մի համալսարանական կրթութիւն կանանց համար»:

Բայց չնայելով այս հանգամանքներին, Գերմանական համալսարաններում սովորող կանանց թիւը բաւական շատ է. 1902—1003 թ. նրանց ընդհանուր թիւը 1,271 էր. սակայն այս տարի նրանց թիւը մի քանի քաղաքների համալսարաններում քչացել է շնորհիւ Պրուսական խիստ օրէնքների, որ հրատարակուեցին անցեալ տարի և որով դժուարացրել են արտասահմանեան կանանց ընդունելութիւնը: Այժմ նրանց ընդհանուր թիւը 850-է: Բերլինում առաջ ուսանում էին 560 կանայք, իսկ այժմ 293 (Բերլինի համալսարանում այժմ ոչ մի օտար երկրացի կին չեն ընդունում): Բրեսլաւում 114-էր առաջ, իսկ այժմ 61. Կենիգսբուրգում 59, իսկ այժմ 33. Մարբուրգում 29-էր, իսկ այժմ 9. Կեօլնում առաջ 7-էր, իսկ այժմ 14:

Ոչ Պրուսական համալսարաններում աւելացել են ուսանողների թիւը: Ֆրայբուրգում 17-էր, իսկ այժմ 22. Հայդելբերգում 42 էր, իսկ այժմ 92.

Գերմանական կանանց շարժումը միայն կանանց քաղաքական և կրթական իրաւունքների մասին հոգ չի տանում. Նա ուշադրութիւն է դարձնում նաև նրանց հասարակական, ներքին կեանքի վրա: Մեծ քաղաքներում լաւ կազմակերպուած օրիորդների և տիկինների խմբերը, լաւ շրջանիկ, օգնող ոյժ են ներկայացնում ամեն տեսակ կարիքների: Այդ կանայք կամաւոր ծառայութեան են մտնում որբախնամ և աղքատախնամ ընկերութիւնների մէջ և այնտեղ վարժուելով, սկսում են իրանց օգտակար գործունէութիւնը:

Գերմանական շատ և շատ գիւղերում հիմնուած են կանանց գիւղատնտեսական ուսումնարաններ, ուր կրթուած կինը գործնական աշխատանքի մէջ զարգացնում է իր ոյժերը: Այս բանը անշուշտ մեծ զարկ կըտայ նրա ճասարակական կրթութեանը եւ անկախութեանը:

Մօդան էլ չէ վրիպել կանանց շարժումից: «Կանանց շորերի ձևափոխութեան ընկերութիւնները» հիմնուել են ոչ միայն Բերլինում այլ և ուրիշ շատ քաղաքներում: Նրանց նպատակն է՝ բարելաւել ու գեղեցկացնել առողջապահական օրէնքների հիման վրա, կանանց հագուստը:

Եապոնիայում կանանց շարժումը զարմանալի առաջադիմական քայլեր է անում: Ներկայումս այնտեղ գոյութիւն ունին կանանց բազմաթիւ ընկերութիւններ, որոնց գլխաւոր նպատակն է նպաստել իգական սեռի կրթութեան ու առողջութեանը, խնամել անտէր և հիւանդ երեխաներին, բարեկարգել կանանց վնասակար հագուստը, վերացնել վատ բարքերն ու սովորութիւնները, բարձրացնել կանանց տնտեսական անկախութիւնը և առհասարակ ձեռք բերել իրաւունքների հաւասարութիւն:

Եապոնական կանանց շարժման հոգին ու սիրտը կազմում է տիկին Natogama, եապոնական նախկին նախարարի կինը:

Իտալիան չէ դաւաճանել իրա հին տրադիցիաներին: 1902 թ. մարտի 23-ին հրատարակուեց մի «օրէնք կանանց և երեխաների հովանաւորելու համար,» որ իր գոյութեամբ պարտական է մի ռուս կընոջ—Աննա Կուլիսկոյա (Anna Kuliscioff), որ դեռ մանուկ հասակից գաղթել էր Իտալիա: Նա որպէս բժշկուհի հասկացել էր աշխատող կանանց թշուառութիւնը և տարիների ընթացքում պրոպագանդ էր անում յօգուտ նրանց մարդասիրական իդէաների, մինչև որ հրատարակուեց վերոյիշեալ օրէնքը: Բացի դրանից հրատարակուեցին օրէնքներ՝ դժբաղդ դէպքերից ապահովելու, շաբաթուայ մէջ մէկ օր (բացի կիրակիից) հանգստանալու և այլ խնդիրների մասին, որոնք մեծ նշանակութիւն կարող են ունենալ կանանց համար:

Իտալիայում կանանց կրթութիւնը նոյնպէս բարձր է կանգնած. իտալուհիները յաճախում են համալսարանները, ունենալով տղամարդկանց հետ հաւասար իրաւունքներ: Ներկայումս ուսուցչուհիների թիւը գերազանցում է ուսուցիչների թուից:

Այդքանը շատ քիչ համարելով, իտալիայի կանայք աշխատում են ձեռք բերել աւելի մեծ իրաւունքներ, աւելի լայն ազատութիւն:

Հայ կանայք էլ հետզհետէ աւելի ու աւելի մեծ չափով են սկսում մասնակցել իրանց սեռի ազատագրական շարժմանը. այդ թարմ հոսանքը հայուհիների մէջ առաջացրել է մի փոքրիկ շրջան, որ լաւ հասկանում է իր կոչումը. բարձր ձգտումն է պատճառը, որ տարեցտարի աւելանում են դէպի Ռուսաստանի ու արտասահմանեան բարձրագոյն դպրոցները դիմող օրիորդների թիւը:

Կար ժամանակ, երբ ոչ միայն բարձրագոյն, այլ և միջնակարգ կրթութիւնը միայն տղամարդկանց սեփականութիւն էր կազմում, երբ յանցանք ու նոյն իսկ անբարոյականութիւն էր համարւում, երբ հայ կինն էլ ձեռք էր մեկնում դէպի այդ սեփականութիւնը: Բայց արդէն անդառնալի կերպով անցել են այդ ժամանակները և մենք հարիւրներով կարող ենք հաշուել միջնակարգ կրթութեան տէր հայ կանանց: Կան և համալսարանաւարտներ, կին բժիշկներ, ատամնաբոյժներ, բազմաթիւ մասնագէտ վարժուհիներ ու նոյն իսկ գրագիտուհիներ: Մեր ընթացիկ մամուլի էջերում մենք յաճախ հանդիպում ենք հայ կանանց թարգմանական և ինքնուրոյն յօդուածների, թղթակցութիւնների: Այդ կողմից աւելի առաջ են գնացել մեր թիւրքահայ քոյրերը: Նրանց շարքերից դուրս են եկել այնպիսի շնորհալի գրողներ, ինչպէս էր վաղամեռիկ Սրբուհի Տիւսաբ, Սիպիլը, որ այժմ այնքան յայտնի անուն ունի թիւրքահայ գրականութեան մէջ. նրանց շարքին է պատկանում և Մառի Պէյլերեան, որ հիմք դրեց (1902 թ.) և մինչև օրս իբրև տնօրէն ու խմբագիր շարունակում է «Արտէմիսը» որի նպատակն է՝ լինել «օրգան քսաներորդ դարու հայ կանանց»: Իհարկէ այդ թերթի խմբագրութիւնը դեռ շատ ջանք է գործ դընելու, որ «Արտէմիսը» դառնայ իսկական օրգան հայ կանանց, որ ղեկավար հանդիսանայ նրանց տենչերին ու ձգտումներին, բայց չընայելով այդ ամենին, հէնց միայն նրա գոյութիւնը մի ուրախալի երևոյթ է, մի յուսատու նշան, որ հայ կանայք էլ արթնում են դարաւոր ստրկութիւնից: Սակայն կանանց ազատագրական շարժումը այնքան լայն նպատակ ունի, այնքան շատ ուժեր է պահանջում, որ եղածով բաւականանալ չի կարելի «Մինչև երեխան լաց չլինի, մայրը ծիծ չի տայ»—ասում է ժողովրդական առածը. ուրեմն ամենից առաջ իրանք կանայք են բարձրացնելու իրանց արդար պահանջի ձայնը, իրանք են պաշտպանելու իրանց իրաւունքները, ազատութիւնն ու անկախութիւնը:

Նոյնիսկ մեր շուրջը, օրինակ

վերցնենք քաղաքակիրթ ազգերի կանանցից, հետևենք նրանց լաւ ու օգտակար գործերին և այն ժամանակ մենք էլ կ՚կարողանանք բարերար հետևանքների հասնել և աւելի ու աւելի բարւոքել մեր կեանքը, մեր դիրքը հասարակութեան մէջ։

Նորվեգիայում էլ կանայք յետ չեն մնացել. բացի այն, որ նրանց համար բաց են բոլոր գիմնազիաները և նրանք իրաւունք ունին համալսարանական քննութիւններ տալու, նրանց առաջ բաց են նաև գործունէութեան շատ և շատ ասպարէզներ, ի միջի այլոց՝ նրանք ստանում են նօտարի կոչում կին դեղավաճառները և բժիշկները սովորական երևոյթ են կազմում։ Ինչպէս և Շուեցիայում, այստեղ էլ կանայք ծառայում են պօստատան և հեռագրատան մէջ։ Բացի այս գործնական ասպարէզներից, Նորվեգացի կանայք գործում են նաև մարդասիրական լայն ասպարէզում. այսպէս օրինակ՝ նրանց ջանքերով մի օրէնք է հրատարակուել, որով ապօրինի զաւակներն էլ իրաւունք ունին օրինաւոր ժառանգ համարուելու, իրանց հօր անունը կրելու և այլն։

Շուեցիան 1870 թուականից սկսած բաց է արել կանանց առաջ իր երկու համալսարանի դռները և թոյլ է տալիս բժշկական ասպարէզում գործել։ Ներկայումս շուեցիական համալսարաններում կանայք ունին տղամարդկանց հետ միասին հաւասար իրաւունքներ։ Կան նոյն իսկ մի քանի կանայք, որոնք պրօֆեսօրի կամ դօցենտի պաշտօն են վարում համալսարաններում։ Վարժուհիները, որոնք ուսուցչական խմբի 63% են կազմում, 15 տարի է, ինչ իրաւունք ունին անդամ լինելու ուսուցչական վերահսկիչ հիմնարկութիւններում։ 1898 թուից Շուեցիայի կանայք ոտք են դրել նաև իրաւաբանական ասպարէզում կան կին փաստաբաններ։ Նրանք ընդունւում են նաև պօստային և հեռագրական ծառայութեան մէջ։

Շուեցարիան ամենից շուտ է բաց արել իր համալսարանների դռները կանանց առաջ։ Տարեցտարի շատանում են վարժուհիների թիւը։ 1871 թուականից նրանց թիւը մեծացել է 87%-ով, իսկ ուսուցիչներինը միևնոյն ժամանակամիջոցում միայն 9%-ով։ Շուեցարիայի կանայք պաշտօններ են վարում ոչ միայն կրթական, աղքատախնամ և գործարանական հիմնարկութիւններում՝ որպէս տեսուչուհիներ, վերատեսչուհիներ, այլ և նրանց համար բաց են համալսարանական ամբիոնները. կան բազմաթիւ կին պրօֆեսօրներ և դօցենտներ, իսկ 1899 թ. սկսած նրանք պարապում են և իրաւաբանական գործունէութեամբ։

Ռուսաստանում կանանց շարժումը շատ առաջ է գնացել. Պետերբուրգում գոյութիւն ունին կանանց բժշկական կուրսեր, որտեղից դուրս են եկել մեծ թւով կին բժիշկներ։ Նրանցից շատերը ծառայում են հասարակական հիւանդանոցներում։ Տեղական դումայի պաշտօնական զեկուցումից երևում էր, որ մէկ տղամարդ բժշկին գալիս է 5400-ից մինչև 8000 պացիենտ, իսկ մէկ կին բժշկին 7000—11,000. դրանից ուրեմն պարզ է, որ հասարակութիւնը առաւելութիւն է տալիս կին բժիշկներին։ Դրա մի ուրիշ ապացոյցն էլ այն է, որ անցեալ յունիսին Նօվգօրոդի նահանգական զեմստվօն միջնորդութիւն էր յարուցել լուսաւորութեան մինիստրութեան առաջ, որով խնդրում էր Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտում աւելի մեծ թւով ուսանողուհիներ ընդունել։ Լուսաւորութեան մինիստրութիւնը պատասխանեց, որ տեղի սղութեան պատճառով ոչ մի հնար չկայ նրանց թիւը աւելացնելու, իսկ նոր շինութիւն շինելու մասին չի էլ կարելի մտածել, որովհետև 1895 թ. յուլիսի 1-ին տեղի ունեցած բարձրագոյն հրամանի մէջ ասուած է, որ կանանց կրթութիւնը կարող է տարածուել միայն հասարակական և մասնաւոր նուի-

րատուութիւնների միջոցով: Իսկ թէ կարելի է, արդեօք, ընդունել կանանց համալսարանների բժշկական ֆակուլտետներում, կվճռուի համալսարանական նոր կանոնադրութիւն կազմելիս:

Բացի բժշկական ինստիտուտից՝ Ռուսաստանում կան նաև ուրիշ բարձրագոյն դպրոցներ, յատկապէս կանանց համար. Օրինակ՝ Պետերբուրգում «Կանանց բարձրագոյն կուրսեր», որ գրեթէ համալսարանի հաւասար դասընթաց ունի, «Ֆրէբելեան կուրսեր», որտեղ պատրաստում են մասնագէտ վարժուհիներ մանկապարտէզների համար, «Մանկավարժական կուրսեր», որտեղ գիմնազիաւարտ օրիորդները պատրաստում են վարժուհութեան համար, «Գիւղատնտեսական կուրսեր», որտեղ պատրաստում են մասնագէտ գիւղատնտես կանայք՝ իսկ 1903 թուակ. սեպտեմբերին, Լօխվիցկայա-Սկալօնի մասնաւոր գիմնազիային կից Պետերբուրգում բացուեցին կանանց բնապատմական-գիտական երկամեայ կուրսեր: Կուրսերի նպատակն է նախապատրաստել գիմնազիաների այն աշակերտուհիներին, որոնք ցանկութիւն ունին շարունակելու իրանց ուսումը կանանց բժշկական ինստիտուտում, նոյնպէս և բուժակնաչափ պատրաստութիւն տալ այնպիսիներին, որոնք ցանկութիւն ունին բնապատմական գիտութիւնների դասատուութիւն յանձն առնել զանազան դպրոցներում: Ներկայումս աշակերտուհիները աւարտում են իրանց ուսման ընթացքը գիմնազիաներում և ինստիտուտներում 17—18 տարեկան հասակում, այն ինչ մտնել բժշկական ինստիտուտ կարող են միայն 20 տարեկան ժամանակ, համաձայն ինստիտուտի կանոնների. այսպիսով նրանք 2—3 տարի ազատ ժամանակ ունին և կարող են օգտուել այդ ժամանակից՝ աւելի հիմնաւոր տեղեկութիւններ ձեռք բերելով ֆիզիկայից և մաթեմատիկայից, ինչպէս նաև բնապատմական այլ գիտութիւններից: Նոր հիմնած բնապատմական կուրսերում աւանդւում են, հետևեալ առարկաները. կենդանաբանութիւն, բակտերէօլօգիա, ֆիզիկա, մարդակազմութիւն, բնախօսութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, մաթեմատիկա, և լատինական լեզու՝ այն չափով, որքան պահանջւում է բժշկական ինստիտուտ մտնելու համար: Կուրսերում ընդունւում են այն անձինք, որոնք իրանց ուսման ընթացքն աւարտել են ինստիտուտներում, գիմնազիաներում կամ առանձին քննութիւն տալով ստացել են տնային ուսուցչուհու վկայական: Վճարը կէս տարուայ համար 75 րուբլի, իսկ լատիներէնի հետ միասին 100 րուբլի:

Բացի դրանից անցեալ 1903 թ. սեպտեմբերին Օդեսայում բացուեց «Կանանց մանկավարժական բարձրագոյն ինստիտուտ» 3 ամեայ դասընթացով և հետևեալ 5 բաժանմունքներով. 1. պատմական, 2. ռուս. լեզուի և գրականութեան 3. ֆրանսերէն լեզուի և գրականութեան, 4. գերմաներէն լեզուի և գրականութեան և 5. մաթեմատիկական:

Ընդունւում են գիմնազիական դասընթաց աւարտածները: Ինստիտուտ աւարտողներին իրաւունք է տրուած դասաւանդելու ընտրած մասնագիտութիւնից գիմնազիական բոլոր դասարաններում:

Ռուսաստանում մեծ դեր է խաղում կանանց մանկավարժական գործունէութիւնը: Իգական գիմնազիաներում դասաւանդութիւնը կատարւում է մեծ մասամբ կանանց ձեռքով: Կան նաև կին տեսուչուհիներ, միայն նրանք միշտ գտնւում են արական գիմնազիաների վերատեսուչների հսկողութեան տակ: Կանայք ընդունւում են նաև պօստ-հեռագրական, բանկային և այլ հիմնարկութիւնների մէջ:

Իսկ անցեալ տարուայ սկզբում ճանապարհների հաղորդակցութեան նախարարը ցանկութիւն յայտնեց, որ երկաթուղու կայարանների գըլ-

խաւորները, նրանց օգնականները և գանձապահները կանայք լինին: Այդպիսի պաշտօն ստանձնող կանայք պէտք է լինեն 25 տարեկանից ոչ պակաս և ունենալու են գիմնազիական կրթութիւն:

Բացի այս բոլորից գոյութիւն ունին նաև զանազան ընկերութիւններ բարեգործական և մարդասիրական նպատակներով: Այսպէս օրինակ՝ «Ռուսաց կանանց փոխադարձ բարեգործական ընկերութեան խորհուրդը» աչքի առաջ ունենալով, որ կնոջ կեանքի տնտեսական պայմանների մէջ տեղի են ունեցել փոփոխութիւններ և որ կինը յաճախ իր ընտանիքի միակ կերակրողն է, միջնորդութիւն է յարուցել՝ կանանց ժառանգական իրաւունքների մասին գոյութիւն ունեցող օրէնքները փոփոխելու վերաբերմամբ: Միջնորդութեան նպատակն է՝ հաւասարեցնել կնոջ ժառանգական իրաւունքները տղամարդու իրաւունքների հետ:

«Կանանց պաշտպանութիւն ցոյց տւող ռուսական ընկերութիւնը» աշխատում է մի գաղութ հիմնել Պետերբուրգում՝ չամուսնացած մայրերի համար: Գաղութի նպատակն է օգնութիւն ցոյց տալ այն չամուսնացած կանանց, որոնք դժբաղդ հանգամանքների բերմունքով մայր են դարձել և միջոց չունեն պահելու իրանց երեխաներին: Գաղութին, Բարձրագոյն հաճութեամբ, արդէն յատկացրած է 10 դեսետինից բաղկացած մի հողաբաժին, որի վրա և կառուցում են գաղութի համար անհրաժեշտ շինութիւնները: Ընդունելով իրանց երեխաների հետ գաղութի մէջ՝ կանայք կը դրուեն այնպիսի պայմանների մէջ, որ երեք-չորս տարուայ ընթացքում կարողանան հիմնաւորապէս ուսումնասիրել գիւղատնտեսութեան որ և է ճիւղ, որ և է արհեստ և գրագիտութիւն:

Գրական ասպարէզն էլ հեռու չէ մնացել կանանց ուշադրութիւնից. կան բազմաթիւ կին գրողներ ու բանաստեղծուհիներ: Առհասարակ ռուս կանայք շատ մեծ եռանդ են ցոյց տալիս հասարակական բարդ հարցերում...

Ֆրանսիայում կրօնական միաբանութիւնների դէմ հրատարակուած խիստ օրէնքը առաջացրել է կանանց քաղաքական մի նոր ընկերութիւն, որի նպատակն է ձեռք բերել կրօնական դասաւանդութեան լիովին ազատութիւն և դադարեցնել այն կուլտուրական կռիւը, որ սկսուել է յիշեալ օրէնքի պատճառով. գրեթէ դրա հետ միասին գոյութիւն ստացաւ մի ուրիշ ընկերութիւն, որը ագիտացիա է մղում կանանց համայնական ընտրողական իրաւունքի համար (Kommunalwahlrecht): 1902 թ. յունիսից մինչև հոկտեմբեր Պարիզում գոյութիւն ունէր մի համաշխարհային ցուցահանդէս, որտեղ և ցոյց էր դրուած կանացի գործունէութիւնը (Berufsthätigkeit) արհեստական և գործնական տեսակէտից: Ցուցահանդէսը բաղկացած էր 8 մասերից, իւրաքանչիւրը 30 սեկցիաների բաժանուած: Մասերը պարունակում էին. 1—Կինը պատմութեան և ազգագրութեան մէջ, 2—Կինը ընտանիքի մէջ (ամուսին, մայր, դաստիարակչուհի, տանտիկին), 3—բանւորուհի ընտանիքից դուրս. 4—Կինը տնային արդիւնագործութեան մէջ (ջուլհակութիւն, դերձակութիւն, ասեղնագործութիւն, ծաղիկների արդիւնագործութիւն և այլն. 5—Կինը գեղարուեստի մէջ (գեղարուեստական արդիւնագործութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն): 6—Կինը թատրոնական գործունէութեան մէջ: 8) Կինը քաղաքատնտեսութեան մէջ: Ցուցահանդէսը կազմակերպուած էր «կանանց ընկերութիւնների դաշնակցութեան կողմից»—(Fèdèration fèminale) և նրա նպատակն էր ցոյց տալ կանանց կատարած դերը հասարակական զանազան ասպարէզներում: Բաւական խրատական էր այդ ցուցահանդէսը թէ կանանց և թէ տղա-

մարդկանց համար, հէնց այդ պատճառով էլ յիշեալ «դաշնակցութիւնը» աշխատում է նոյն ծրագրով մի միջակային ու մնայուն մուզէում հիմնել Պարիզում։ **Տիկ. Հրանոյշ**

## ՊԱՏՈՒԱՆՁԱՆՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Դեռ շատ հին ժամանակներից քաղաքական աշխարհում սովորութիւն է դարձել շքանշաններ տալ նշանաւոր գործիչներին։ Կանայք էլ յետ չեն մնացել այդ խնդրում, թէև չափազանց սակաւաթիւ են նրանց համար սահմանած պատուանշանները. Անգլիայում առաջին անգամ կանանց պատուանշան հաստատուեց Վիկտորիա թագուհու օրով։ Նա իբրև Հնդկաստանի կայսրուհի հաստատեց «Հնդկաստանի թագը» պատուանշանը, որ տրւում է արքայադուստրներին և Հնդկաստանի բարձր շրջանի կանանց։ Այս պատուանշանից 80 հոգի ունին։ Կայ նաև «Արքայական կարմիր խաչը» որ կրում են 180 տիկնայք, բոէրական պատերազմին մասնակցող 69 հիւանդապահուհիները այս խաչից են ստացել։ Պատուանշանի ծայրին գրուած է «Հաւատ, Յոյս, Սէր,» իսկ տակը 1883 թիւը, որ ներկայացնում է պատուանշանի հաստատութեան թուականը։

Բացի Անգլիայից ուրիշ երկրներում ևս կան կանանց համար պատուանշաններ. դրանց թիւը հասնում է 20-ի։ Սպանիան առաջին Եւրոպական երկիրն էր, որ պատուեց կնոջը, նա դեռ 1792 թ. սկսած պատուանշան էր տալիս կանանց։ 1792 թ. հաստատուեց «Մարիա» պատուանշանը։ Սպանիայի այն տիկինները, որոնք կրում են այս պատուանշանը, պարտաւոր են ամիսը մէկ անգամ այցելել կանանց մի որևէ հիւանդանոց։

Աւելի հետաքրքրական է մի ուրիշ պատուանշան՝ «Աւստրիայի խաչ» պատուանշանը, որին արժանանալու համար հարկաւոր է ունենալ 16 ազնուական նախնիք, 8-ը հօր կողմից և 8-ը մօր կողմից, բացի դրանից պատուանշան ստացող կինը պէտք է խոստանայ վարել քրիստոնէական կեանք, այցելել բանդանոցները, հիւանդներին և աղքատներին օգնել գործով և լեզւով մաքուր լինել, տնանկին ապաստանարան տալ և վերջապէս պարտաւոր է ամէն օր մի քանի կարգ աղօթքներ անել և ամեն պատարագի ներկայ լինել։

Ռուսաստանում էլ գոյութիւն ունի կանանց համար «Ս. Կատարինէի» պատուանշանը։ Այս պատուանշանն ունեցող կինը պարտաւոր է աղօթք անել և խնդրել Աստծուց՝ երկար կեանք առողջութիւն և պատերազմի մէջ աջողութիւն կայսեր համար։ Բացի դրանից նրանք պարտաւոր են ամեն կիրակի երեք անգամ „Հայր մեր‟ ասել, անհաւատներին դարձի բերել, բայց ոչ թէ բռնի կերպով, այլ համոզեցուցիչ խրատներով։

Վերջապէս աւելորդ չի լինի յիշել Ֆրանսիայի ազգային մէկ պատուանշանը՝ „Պատուոյ լեգէօնը‟, որից ունեն 50 կանայք։

## ԿԱՐԾԻՔՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Կինը ամենից լաւ կարող է դաստիարակել, ամենից շատ մարդասիրութիւն կարող է ներշնչել մատաղ սերնդին։ Տղամարդը մարդկութեան ուղեղն է, իսկ կինը—սիրտը. տղամարդը բանականութիւնն է, իսկ կինը—զգացմունքը. առաջինն ոյժն է, իսկ երկրորդը վայելչականութիւնը, գեղեցկութիւնն ու մխիթարութիւնը։ Նոյնիսկ ամենալաւ կնոջ բանականութիւնը ըստ երեւոյթին գործում է գլխաւորապէս զգացմունքի միջոցով։ Ահա այդպիսով տղամարդը ուղղութիւն է տալիս խելքին, իսկ կինը զարգացնում է զգացմունքը, որից և գլխաւորապէս կախուած է բնաւորութիւնը։ Տղամարդը լցնում է յիշողութիւնը, իսկ կինը զբաղեցնում է սիրտը։ Տղամարդը ստիպում է հաւատալ այն բանին, ինչ որ կարող է հաւատ ներշնչել, իսկ կինը զարգացնում է բարութիւնն ու վեհ հակումները։

Ս. ՍՄԱՅԼՍ։

Երդւում եմ՝ կանայք անհամեմատ լաւ են մեզանից՝ տղամարդ-

կանցից։ Նրանց մէջ աւելի մեծահոգութիւն կայ, նրանք աւելի համարձակ են ազնիւ գործեր կատարելիս։ Դուք մի կարծէք, որ դատարկութեան և մօդայի հովերը մոլորեցրել են նրանց։ Եթէ դուք խօսէք նրանց հոգու լեզուով, եթէ կարողանաք կնոջ առաջ պատկերացնել այն բարձր ասպարէզը, որ աշխարհն սպասում է նրանից, այն ասպարէզը, որով նա կոչ է անելու մարդկանց դէպի ճշմարիտ, բարի և ազնիւ գործերը, եթէ դուք կարողանաք կատարել այդ բոլորը, այն ժամանակ նոյն իսկ ամենադատարկ համարուած կինը կզգայ իր ներքին ոյժը, կնայէ իր վրա, իր բաց թողած պարտականութիւնների վրա և կշարժուի դէպի ազնիւ գործերը, կստիպէ ամուսնուն պարտաճանաչ լինել և մի կողմ շպրտելով իր փալասները, կընուիրուի գործին, մաքուր,—ազնիւ գործին։ ԳՕԳՕԼ։

Տղամարդու կոչումը բազմակողմանի ու լայն է, իսկ կնոջ կոչումը միակողմանի ու նեղ, թէև աւելի խոր։ Հէնց այդ պատճառով էլ հարիւրաւոր պարտականութիւններ ունեցող տղամարդը, դաւաճանելով նրանցից մէկին, տասին, դարձեալ լաւ անվնաս մարդ է մնում, որովհետև կատարում է իր կոչման մեծ մասը։ Իսկ կինը, սակաւաթիւ պարտականութիւններ ունենալով, հարիւրից տասը պարտականութիւններ չկատարող տղամարդուց էլ ստոր է ընկնում բարոյապէս, երբ միայն մի պարտականութեանն է դաւաճանում. Այդպէս է եղել ընդհանուր կածիքը և այդպէս էլ կմնայ, քանի որ այդպէս է գործի էութիւնը, այդպէս է թելադրում երկու սեռերի անհաւասարութիւնը։ Լ. ՏՕԼՍՏՕՅ։

Կինը առաջին մարդկային էակն է, որ ընկել է ստրկութեան մէջ։ Նա ստրկուհի է դարձել այն ժամանակ, երբ ստրուկներ դեռ չկային բոլորովին։

Սոցիալական բոլոր ճնշումների ու անազատ կեանքի արմատական պատճառն այն է, որ ճնշուածը տնտեսական կախում ունի ճնշողից։ Այդպիսի վիճակի մէջ է եղել կինը ամենահին ժամանակներից սկսած մինչև այժմ. դրա ապացոյցն է մարդկային հասարակութեան զարգացման պատմութիւնը ամեն տեղ։

Ժամանակի ընթացքում այդ ճնշման ձևերը զանազան երկիրներում, զանազան փոփոխութեան են ենթարկուել, բայց ինքը ճնշումը մնացել է։ Ոչ անկախ կեանքի գիտակցութիւնը մերթ ընդ մերթ շարժել է ճնշուածներին, փոփոխել, մեղմացրել է նրանց վիճակը, սակայն միայն մեր օրերում է սկսուել մի հոսանք, որը հասկացել է ճնշման էութիւնը և ձգտում է չարիքն արմատից ոչնչացնել։

Դա կանանց շարժումն է։

Ա. ԲԵԲԵԼ։

Կնոջ դաստիարակութեան ամենագլխաւոր նպատակը պէտք է լինի հաղորդել կարելոյն չափ շատ գիտութիւններ, որոնք անհրաժեշտ են կեանքի և նրա գեղեցիկ երևոյթների համար։ Սակայն այդ դէպքում պէտք է աշխատել որքան կարելի է ուղեղային ոյժ չուայլել։ Կնոջ դերն ընտանիքում այնպիսի յատկութիւն ունի, որ նրանից երբէք չի կարող ազատուել՝ նրա պարտականութիւնն է կրթել երեխաներին բարոյապէս և ֆիզիքապէս։ Հէնց այդ պատճառով ամենից շատ այդ դերի համար պէտք է պատրաստենք կնոջը։

Պէտք է նկատել, որ մանկավարժութիւնը մարդկային զարգացման մի արուեստ է. հէնց այդ պատճառով էլ կինը պարտաւոր է իմանալ զարգացուցիչ առարկաները։ Բացի դրանից եթէ ընդունենք, որ երեխաներին ճիշտ տեղեկութիւններ հաղորդելու համար անհրաժեշտ է հիմնաւորապէս իմանալ նրանց հետաքրքրող նիւթերը, այն ժամանակ հասկանալի կդառնայ, որ կնոջ դաստիարակութեան ընթացքում ամենալայն չափով գիտութիւններ պէտք է հաղորդել։

Ահա այն դուռը, որ տանում է դէպի մեծ գործունէութիւն, դէպի մատաղ օրիորդների մտաւոր լայն զարգացումը։

Ժ. ԳԻՒՅՕ։

# Դ պ ր ո ց ա կ ա ն

## ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՈՒ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Շատ գիտնականներ մի որ և է երկրի քաղաքակրթութիւնը չափելու համար վերցնում են նրա գործածած թղթի քանակը, շատերը դրա փոխարէն վերցնում են երկրի հաղորդակցութեան միջոցները. բայց աւելի նպատակայարմար մաշտաբ, աւելի ճիշտ չափ կարող են լինել դպրոցները, որովհետև դրանց մէջ են կրթւում—դաստիարակւում ամբողջ սերունդներ, դրանց մէջ է արտայայտւում տեղական մանկավարժութեան ոգին ու բարձրութեան աստիճանը:

Դպրոցը, դաստիարակելով առանձին անհատներ, դաստիարակւում է և համապատասխան ժողովուրդ, որովհետև վերջինս բաղկացած է այդ անհատներից: Ժողովրդի գիտական և գեղարուեստական, կրօնական և քաղաքական կազմից կախուած է նրա դպրոցական դաստիարակութեան աստիճանը և ընդհակառակը դպրոցների վիճակից որոշ չափով կախուած է ժողովրդի քաղաքակրթութեան աստիճանը: Ահա հէնց այդ պատճառով բոլոր քաղաքակիրթ ազգերը ամեն ջան ու ճիգ գործ են դրել, որպէսզի իրանց դաստիարակչական գործը բարելաւեն, դպրոցների վիճակը բարեկարգեն և նրանց թիւն աւելացնեն: Վերցնենք մի քանի օրինակներ:

Անգլիայում, XIX դարի սկզբում, կրթական գործի գլխաւոր հոգացողութիւնն ընկած էր միայն հոգևորականութեան վրա. սակայն նոր դարը նոր պահանջներ ստեղծեց, նոր գործօններ առաջացրեց, դեմոկրատիական շարժումն ուժեղացրեց և այդ բոլորի շնորհիւ առաջ բերեց մի շարք ընկերութիւններ—(«Britich and foreigen school Society», National school Society» և այլն), որոնք ամենամեծ եռանդով սկսեցին գործել դպրոցական ասպարէզում:

1890 թուականին արդէն գոյութիւն ունէին 2,452 դպրոցական մասնաժողովներ 18,500,000 անդամներով *), 1890 թ. տարրական դպրոցներում սովորող սաների թիւը հասնում էր 5,539,285-ի, իսկ 1894 թւին—6,830,000-ի. Անգլիայում այժմ գոյութիւն ունեն 19,800 դպրոցներ՝ 30,100 դասարաններով: Դրանց պահպանութեան համար առաջին հոգաբարձութիւններ են անում թէ կառավարութիւնը և թէ մասնաւոր անհատներ ու ընկերութիւններ: Միայն 1894 թ. կառավարութիւնը դպրոցական գործի համար ծախսել է 62,287,719 րուբլի.

Շոտլանդիայում 1872 թ. կային միայն 1979 դպրոց—213549 աշակերտներով, իսկ 1894 թ.—3045 դպրոց—643,483 աշակերտներով: 1894 թ. Շոտլանդիայի բոլոր դպրոցների վրա ծախսուած է13,011241 րուբլի, որից 3,167,411 ր. դարձեալ անգլիական կառավարութիւնն է վճարել.

Իրլանդիայում 1894 թ. եղել են 8,505 դպրոց—1,028,281 աշակերտներով:

Ֆրանսիայում 1895 թ. գոյութիւն են ունեցել ընդամենը 83,242 դպրոց **)—5,540,095 աշակերտ—աշակերտուհիներով: Դրանց վրա ծախսւում է տարեկան 69,864,779,

---

*) Э. Левассеръ: «Народное образованіе въ цивилизованныхъ странахъ» т. I.

**) Ibid.

ռուբլի, որից 47,236,241 ռուբլի միայն կառավարութիւնն է վճարում:

Պրուսիայում 1891 թուականին գոյութիւն ունէին 34,742 միայն տարրական դպրոցներ 4,916,476 աշակերտ—աշակերտուհիներով, որոնց վրա տարեկան մի քանի տասնեակ միլիոններ են ծախսւում.

Աւստրիայում 1891 թ. կային մօտ 20,000 դպրոցներ—3,800,000 սովորողներով:

Բայց որպէսզի ընթերցողն աւելի բնորոշ գաղափար կազմէ, թէ կրթական գործը Եւրոպայում ինչ պատկեր է ներկայացնում, մենք առաջ կբերենք հետեւեալ համեմատական աղիւսակը *) 1897 թ.

| Պետութիւն | Քանի հոգուն | | |
|---|---|---|---|
| | Մի տար. դպր. վարժ. հաշուով | Մի միջնակ. դպր. աշակ. հաշուով | Մի համալսարան հաշուով |
| Շուեցարիա | 315 | 26550 | 428570 |
| Ֆրանսիա | 480 | 35400 | 935120 |
| Իտալիա | 530 | 21290 | 1476100 |
| Սպանիա | 590 | 42230 | 1760000 |
| Յունաստան | 710 | 56250 | 2250000 |
| Դանիա | 790 | — | 2310000 |
| Գերմանիա | 890 | 49670 | 2836360 |
| Բելգիա | 1020 | 37350 | 15[illegible]7500 |
| Հոլլանդիա | 1095 | 34530 | — |
| Անգլիա | 1260 | — | 580880 |
| Աւստր. Ունգ. | 1310 | 96050 | 4069500 |
| Ռումինիա | 1380 | — | — |
| Ռուսաստան | 2460 | 100250 | 10025000 |
| Բոլգարիա | 2820 | 132000 | 3300000 |

Անցեալ 1898—99 տարեշրջանի ընթացքում իւրաքանչիւր բնակիչ ծախսել է բարձրագոյն կրթութեան վրա.

| | | |
|---|---|---|
| Միաց. Նահանգներում | 22 | ցենտ |
| Գերմանիայում | 14,3 | » |
| Ֆրանսիայում | 11,4 | » |
| Իտալիայում | 7 | » |
| Ռուսաստանում | 3,7 | » |

Այդքան տարրական, միջնակարգ և բարձրագոյն դպրոցների վերաբերմամբ: Իսկ եթէ համեմատելու լինենք գրագիտութեան տարածման չափը զանազան երկրներում, այն ժամանակ կտեսնենք, որ

*) Prof A. Hickmann: «Universlsae Taschen Atlas» № 36.

իւրաքանչիւր հազար զինուորացուից անգրագէտ եղել են *).

| | | |
|---|---|---|
| Շուեցիայում | 1 | հոգի |
| Գերմանիայում | 1 | » |
| Դանիայում | 2 | » |
| Շուեցարիայում | 22 | » |
| Ֆրանսիայում | 49 | » |
| Հոլլանդիայում | 50 | » |
| Բելգիայում | 109 | » |
| Աւստր. Ունգարիայում | 220 | » |
| Յունաստանում | 300 | » |
| Իտալիայում | 390 | » |
| Ռուսաստանում | 708 | » |
| Սերբիայում | 793 | » |

Իսկ Անգլիայում իւրաքանչիւր 1000 բնակչից միայն 33 են անգրագէտ: Այդ թուերը այնքան պերճախօս են, որ կարօտ չեն ոչ մի բացատրութեան, ուստի այժմ մասնաւորենք մեր խօսքը, այսինքն դառնանք նախ ամբողջ Ռուսաստանին և ապա Կովկասին և տեսնենք, թէ վերոյիշեալ օրինակների համեմատութեամբ որպիսի պատկեր են ներկայացնում նրանք:

Ռուսաստանում դպրոցական գործը շատ դանդաղ է առաջադիմել, շատ խոչ ու խութերի հանդիպել: Միայն XIX դարի երկրորդ կէսից նա սկսել է զգալի կերպով բարեկարգուել: 1855 թ. վիճակագրական տեղեկութիւններից երեւում է, որ այդ ժամանակ ամբողջ պետութեան մէջ գոյութիւն են ունեցել ընդամենը 8,227 ժողովրդական դպրոցներ—450,000 աշակերտ—աշակերտուհիներով: **)

Ալէքսանդր II կայսրի մտցրած բարենորոգումները մեծ չափով զարկ տուին նաև դպրոցական գործերի բարգաւաճմանը, այնպէս որ 1880 թ. ժողովրդական դպրոցների թիւը արդէն հասել էր 22770 ի—1,140,915 սաներով,

Այդ օրուանից անցել են երկար տարիներ և դաստիարակչական գործը Ռուսաստանում համեմատաբար աւելի բարեկարգ վիճակի

*) O. Hübner: «Geogr.-statistische Tabellen» s. 87.

**) «Россія къ концу XIX вѣка» подъ редак. Ковалевскаго, стр. 477.

մէջ է մտել: Դեռ. անցեալ 1896 թուականին գոյութիւն են ունեցել 78,724 տարրական դպրոցներ— 3,801,133 սաներով—(2,948,274 արական և 831,544 իգական): Դրանցից 37,708 ենթարկուած էին լուսաւորութեան մինիստրութեան. 34,836-ը ռուսաց սինօդին, իսկ 10,270 զինուորական մինիստրութեան *)։ Այդ թուերն իսկապէս շատ ու շատ չնչին են, եթէ աչքի առաջ ունենանք Ռուսաստանի լայնարձակ տարածութիւնը և բազմամիլիօն ազգաբնակութիւնը:

Գալով միջնակարգ դպրոցներին, պէտք է նկատել, որ այդ կողմից էլ նախանձելի ոչինչ չըկայ: Ամբողջ պետութեան մէջ եղել են միայն 191 գիմնազիաներ, 115 րէալական դպրոցներ և 53 պրօգիմնազիաներ:

Ռուսաստանի բարձրագոյն դըպրոցների թիւը միայն մի քանի տասնեակի է հասնում։ Դրանցից իննը համալսարաններ են և 1899 թուականին ունեցել են միայն 19,497 ուսանողներ և 1,109 ազատ ունկնդիրներ:

Եթէ վերցնելու լինենք պետութեան զանազան մասերը, այն ժամանակ կըտեսնենք, որ դրանք դպրոցական գործի տեսակէտից զգալի չափով տարբերւում են միմեանցից: Այսպէս. օրինակ, Բալտիկ ծովի ափերին կից նահանգներում ամբողջ ազգաբնակութեան 5,7%-ն է դպրոց այցելում **):

Միջին նահանգներում . 2,9%-ը
Լեհաստանում . . . 2,2 »
Սիբիրում . . . . . . 1,6 »
Կովկասում . . . . . . 1,1 »
Թուրքեստանում . . . 0,1 »

Այժմ տեսնենք, թէ ռուսաց կառավարութիւնը դպրոցների պահպանութեան համար որքան զոհաբերութիւն է անում:

Ինչպէս յայտնի է, դպրոցական գործը ամենաբարգաւաճ վիճակի մէջ է գտնւում Անգլիայում և Միացեալ-Նահանգներում: Այդ երկու երկրում էլ կառավարութիւնները ամենաակտիվ կերպով մասնակցում են դպրոցական գործին:

Անգլիան տարեկան մի քանի տասնեակ միլիօններով նպաստ է տալիս դպրոցներին և դրա փոխարէն պահանջում է միայն, որ դըպրոցները ենթարկուեն պետական վերահսկողութեան և կատարեն նրա մի քանի պահանջները: «Սակայն, ասում է յայտնի մանկավարժ Ֆիշը *), Անգլիայում ժողովրդական լուսաւորութեան դեպարտամենտը գոյութիւն ունի ոչ թէ նրա համար, որ իւր ազգի վզին փաթաթէ իր սեփական մանկավարժական թէօրիաները և ցոյց տայ, թէ ինչպէս պէտք է ուսում առնել, այլ նրա համար, որ նիւթական և ուրիշ միջոցներով նպաստէ ժողովրդական լուսաւորութեան»:

Միացեալ - Նահանգներում էլ նկատւում է նոյնպիսի վերաբերմունք դէպի դպրոցական գործը: Կառավարութիւնը շատ լաւ հասկանում է, որ դպրոցը ժողովրդական սեփականութիւն է, ուստի և չէ կարելի նրա վրա այս կամ այն ձևով ճնշում գործ դնել և ժողովրդի ինքնուրոյնութիւնը սահմանափակել: Նա միայն աջակցում է ժողովրդին դպրոցական գործը բարեկարգելու և ընդարձակելու: Այդ հանգամանքի շնորհիւ Միացեալ-Նահանգներում այժմ դպրոցների թիւը հասնում է 235.426-ի— 14,846,858 **) աշակերտ-աշակերտուհիներով:

Դառնալով Ռուսաստանին պէտք է աչքի առաջ ունենալ, որ այստեղ հասարակական կեանքը բոլո-

*) «Статистическія свѣдѣнія по начальному образованію въ Россійской имперіи за 1896 годъ».

**) Э. Левассеръ: «Народное образованіе» т. II.

*) Мижуевъ: «Очеркъ развитія и современнаго состоянія народнаго просвѣщенія въ Англіи», стр. 34.

**) Այս թիւը Միացեալ-Նահանգների ամբողջ ազգաբնակութեան 22,5%-ն է կազմում:

բովին ուրիշ կազմ ունի, ուրիշ գործօններից և հանգամանքներից է կախուած: Ահա այդ պատճառով էլ նրա դպրոցական գործը բոլորովին ուրիշ կերպ է բնորոշւում: 1894 թ. ժողովրդական դըպրոցների վրա ծախսուել է ընդամենը 28,041,340 րուբլի, որից միայն 3,492,963 րուբլին է պետական գանձարանից դուրս եկել: Մնացած գումարները ստացուել են զանազան քաղաքներից և գիւղական հասարակութիւններից, եկեղեցիներից, ազնուականութիւնից և մասնաւոր մարդկանց նուէրներից:

Եթէ ժողովրդական լուսաւորութեան համար ծախսած գումարը բաժանենք ամբողջ ազգաբնակութեան վրա, կըստանանք 23 կոպ., այսինքն Ռուսաստանի իւրաքանչիւր բնակիչը տարեկան միայն 23 կոպէկ է ծախսում դպրոցի համար, իսկ միւս ծախսերի համար նա վճարում է տարեկան միջին թւով 11 րուբլի *): Եթէ այդ գումարը համեմատենք Ռուսաստանի տարածութեան հետ, այն ժամանակ կտեսնենք, որ իւրաքանչիւր դեսյատին տարածութեան վրա միայն $1^{1}/_{2}$ կօպէկ է ծախսւում ժողովրդական լուսաւորութեան համար, այն ինչ միւս ծախսերի գումարը դարձեալ մի դեսեատին տարածութեան վրա հասնում է 70 կոպէկի:

Դառնանք այժմ Կովկասին և տեսնենք, թէ Ռուսաստանի այդ մասը առանձնապէս ինչպիսի վիճակի մէջ է գտնւում: Վիճակագրական տեղեկութիւններից **) երեւում է, որ 1856 թուականին ամբողջ Կովկասում գոյութիւն են ունեցել ընդամենը 74 դպրոց—5,505 սովորողներով, այսինքն ազգաբնակութեան իւրաքանչիւր 100 հոգուց միայն 0,19 է դպրոց այցելել: 1863 թուականին այդ թուերի մէջ արդէն նկատւում է զգալի փոփոխութիւն-առաջադիմութիւն: Այդ ժամանակ կովկասեան դպրոցների թիւը հասնում էր 321-ի—9,650 սովորողներով: Իսկ 1903 թ. Յունուարի 1-ից Կովկասում գոյութիւն են ունեցել *).

| | | |
|---|---|---|
| 12 | արական | գիմնազիաներ |
| 2 | » | պրօգիմնազիա |
| 11 | րէալական | դպրոցներ: |
| 17 | իգական | գիմնազիաներ |
| 2 | » | պրօգիմնազիա |
| 1 | ուսուցչական | ինստիտուտ |
| 5 | » | սեմինարիա |
| 59 | քաղաքային | դպրոցներ |
| 4 | լեռնային | » |
| 21 | արհեստագիտ. | դպրոցներ |
| 6 | Մարիամեան | » |
| 171 | մասնաւոր | » |
| և 1875 | տարրական | » |

Ընդամենը 2186 զանազան դպրոցներ

Այդքանը միայն Կովկասեան շրջանի պ. Հոգաբարձուի վերահըսկողութեան տակ:

Ուրիշ նախարարութիւնների ու վարչութիւնների ենթարկուած են մի շարք միջնակարգ ու տարրական դպրոցներ:

Բացի դրանից գոյութիւն են ունեցել նաև 2026-ի չափ մահմեդական (մզկիթներին կից) և հրէական (սինագոգաներին կից) դպրոցներ, եթէ միայն դրանք արժանի են «դպրոց» անունը կրելու:

Լուսաւորութեան նախարարութեան վերահսկողութեան տակ գտնուած բոլոր միջնակարգ և տարրական դպրոցների աշակերտ-աշակերտուհիների թիւը 1901 թ. հասնում էր 199,144-ի որոնցից 16,915-ը (կամ 73,8% տղաներ, իսկ 52,229-ը (կամ 26,2%) աղջիկներ·

Միջնակարգ դպրոցներում

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ռուսներ | — | 11,412 | կամ | 46,6% |
| Հայեր | — | 5,983 | — | 24,5% |
| Վրացիներ | — | 3,464 | — | 14,2% |

*) Левассеръ: «Народное Образованіе» т. II стр. 137.

**) «Статистическія таблицы Россійской имперіи за 1856 годъ».

*) «Отчетъ» г. попечителя Кавк. уч. округа».

«Кавказскій Календарь за 1903 годъ».

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հրէաներ | — | 1,083 | — | 4,4% |
| Լեռնականներ | — | 585 | — | 2,4% |
| Թաթարներ | — | 560 | — | 2,2% |
| Ուրիշ ազգ. | — | 1,383 | — | 5,7% |
| Ընդամենը | — | 24,470 | — | 100% |

Ստորին դպրոցներում

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ռուսներ | — | 6,289 | կամ | 35 5% |
| Հայեր | — | 4,521 | — | 25,5% |
| Վրացիներ | — | 4,386 | — | 24,8% |
| Թաթարներ | -- | 961 | — | 5.4% |
| Լեռնականներ | — | 591 | — | 3,3% |
| Հրէաներ | — | 306 | — | 1,7% |
| Ուրիշ ազգ. | — | 668 | — | 3,8% |
| Ընդամենը | — | 17,722 | — | 100% |

Մասնաւոր եւ տարրակ դպր.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ռուսներ | — | 82,098 | կամ | 52,4% |
| Վրացիներ | — | 29,140 | — | 18,6— |
| Հայեր | — | 26,020 | — | 16,6— |
| Թաթարներ | — | 5,653 | — | 3,7% |
| Լեռնականներ | — | 4,0 4 | — | 2,6% |
| Հրէաներ | — | 1,399 | — | 0,6% |
| Ուրիշ ազգ. | — | 8,573 | — | 5,5% |
| Ընդամենը | — | 156,957 | — | 100% |

Եթէ Կովկասի դպրոցների որակն ու քանակը համեմատենք նրա անցեալի հետ, այն ժամանակ կընկատենք մեծ փոփոխութիւն-բարեկարգութիւն ու առաջադիմութիւն, իսկ եթէ նոյնը համեմատութեան դնենք մի որ և է քաղաքակիրթ երկրի հետ, այն ժամանակ ակներև կըդառնայ մեր երկրի յետամնաց վիճակը:

Եւ իսկապէս ինչ են ներկայացնում այդքան սակաւաթիւ դպրոցները մի երկրի համար, որի տարածութիւնը հասնում է 416,028 քառակուսի վերստի և որի ազգաբնակութիւնը 9,248,695 հոգուց է բաղկացած...

Ն.

## ՀԱՅԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Մի որև է երկրի կրթական վիճակը զարգանալ—բարւոքուել կարող է միայն այն ժամանակ, երբ չկայ բռնութիւն, չկան արգելքներ: Դժբաղդաբար Թիւրքիան այդ տեսակ երկիրներից չէ, քանի որ այնտեղ միշտ արիւն է հոսում, միշտ կոտորածներ ու խլրտումներ են տեղի ունենում: Ճիշտ է Թիւրք կառավարութիւնը շատ քիչ է հետաքրքրւում հայերի ներքին կեանքով. ճիշտ է նա չի հետևում, թէ իր հըպատակ հայ ժողովրդի մայրենի լեզուն որքան տարածւում, զարգանում է, թէ նրա կրթական մակերևոյթը որքան բարձրանում է, բայց և այնպէս հայերի դպրոցական գործը մի նախանձելի պատկեր չէ ներկայացնում: Դրա գլխաւոր պատճառները երկուս են՝ նախ կեանքի և գոյքի կատարեալ անապահովութիւնը և երկրորդ ժողովրդի անտարբերութիւնն ու անբաւարար ջանքերը: Այդ իրողութիւնն աւելի ակներև կդառնայ, եթէ դիմենք փաստերին:

Պատրիարքարանի հրատարակած վերջին վիճակագրական տեղեկութիւններից—երևում է, որ Թիւրքիայում երկու տեսակի հայկական դպրոցներ կան՝ միջնակարգ և տարրական: Զափազանց սակաւաթիւ են միջնակարգ դպրոցները—միայն չորս—Ղալաթայի «կենդրոնական վարժարանը» Կ. Պոլսում, «Պէրպէրեան վարժարան» Սկուտարիում, «Արմաշու դպրեվանքը»—Արմաշում և «Սանասարեան վարժարանը» Էրզրումում:

Կենդրոնական վարժարանը», բացուած է 1886 թ. և ունի 5 ամեայ դասընթաց:*) Այդտեղ աւանդւում են՝ հայերէն, թիւրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն, կրօնագիտութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, մաթեմատիկա, բնական գիտութիւններ, քաղաքական տնտեսութիւն, իրաւագիտութիւն, տոմարակալութիւն և այլն.

Վարժարանի ա դասարանն ընդունուելու համար հարկաւոր գըրաւոր քննութիւն տալ կրօնից, հայերէնից, թիւրքերէնից, ֆրանսերէնից, թուաբանութիւնից, եր-

*) 1900 թ. «Ընդարձակ օրաց. ազգ. Հիւանդ.» եր. 209:

կրաչափութիւնից, պատմութիւնից և աշխարհագրութիւնից: Իւրաքանչիւր աշակերտի տարեկան թոշակն է 12 օսմ. ոսկի:

Անցեալ, 1902 թ. վարժարանն ունեցել է Ա դասարանում 28 աշակերտ, Բ դասարանում 13, Գ դաս.—12 և Դ դասարանում—8. ընդամենը 61 աշակերտ:

«Պերպերեան վարժարանը» մասնաւոր հիմնարկութիւն է, որ բացուած է 1876 թ. Ռ. Յ. Պէրպէրեանի նախաձեռնութեամբ. ունի նախակրթարան՝ 3 ամեայ դասընթացով և դպրանոցական շրջան 5-ամեայ դասընթացով: Ուրեմն վարժարանի ամբողջ դասընթացը տեւում է 8 տարի:

Աւանդւում են հայերէն, թիւրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն, յունարէն, բնական գիտութիւններ, թուաբանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, տարերք մեքենագիտութեան և տիեզերագրութեան, աշխարհագրութիւն, պատմութիւն, գրականութիւն, կրօն, հոգեբանութիւն, տրամաբանութիւն, փիլիսոփայութիւն և այլն:

Ուսման վարձն է տարեկան 32 օսմ. ոսկի գիշերօթիկների համար և 8 կամ 10 օսմ. ոսկի երթևեկ սաների համար:

«Արմաշու դպրեվանքի» բուն նպատակն է «եկեղեցականութեան փափագ ունեցող երիտասարդների նոյն կոչման համար կրթել և նախապատրաստել»: Ընդունուելու համար ամենաքիչը 18 տար. հասակ պէտք է ունենալ: Դասընթացը տեւում է 6 տարի: Աւանդւում են՝ լեզուներ, մաթեմատիկա, բնական գիտութիւններ, գրականութիւն, պատմութիւն, փիլիսոփայութիւն, տրամաբանութիւն և աստուածաբանական գիտութիւններ՝ ներածական և պատմական, ծիսական և դաւանական, քննադատական և քարոզչական ճիւղերով 1901 թ. աշակերտների թիւն էր 33:

«Սանասարեան վարժարանը» հիմնուած է 1881 թ. Էրզրումում, բարեյիշատակ Մկրտիչ Սանասարեանի նուիրած գումարով: Նա ունի 2 բաժանմունք՝ Ա) ուսումնական և Բ) արհեստագիտական:

«Ուսումնական բաժանմունքը» իր ծրագրով համապատասխանում է գերմանական միջնակարգ վարժարաններին (Realschule) և ունի մէկ նախապատրաստական և 6 վարժարանական դասարան: Աւանդւում են կրօն, եկեղ. պատմ., հայերէն, թիւրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական գիտութիւններ, ստողութիւն — (թուաբանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն և տոմարակալութիւն) և այլն:

«Արհեստագիտական բաժանմունքը» ունի 4-ամեայ դասընթաց: Այստեղ սովորեցնում են արհեստներ—(կահագործութիւն և կօշկարարութիւն իրանց ճիւղերով)—և կրօն, հայերէն, թիւրքերէն, մի եւրոպական լեզու, առևտրական աշխարհագրութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, տոմարակալութիւն, բնական գիտութիւններ, փայտի և երկաթի արհեստաբանութիւն և այլն:

Վարժարանի «Ուսումնական բաժանմունքը» մտնել կարող են 11—13 տարեկան երեխաներ, որոնք գիտեն գրել, կարդալ և թուաբանական 4 գործողութիւններ, իսկ «Արհեստագիտական բաժանմունք» մտնել կարող են 13—15 տարեկան երեխաները:

Ուսման վճարն է 20 օսմ. ոսկի գիշերօթիկների համար և 6 օսմ. ոսկի ցերեկօթիկների (ուսումն և ցերեկուայ ճաշ)—համար. կան և ձրիավարժներ:

Անցեալ 1900—1901 տարեշրջանում վարժարանն ունեցել է 190 աշակերտ, որոնցից 34-ը ձրիավարժ, 72 զանազան բարերարների որդեգիրներ և 84-ը թոշակաւորներ:

Տաճկական վարժարանները երկու տեսակ են՝ մանկապարտէզ կամ ծաղկոց և ստորին վարժարաններ, որոնք իրանց ծրագրով շատ մօտ են

մեր նախկին եկ. ծխ. մի կամ երկդասեան դպրոցներին:

Պատրիարքարանի իրաւասութեան տակ գտնւում են Կ. Պօլսում (առ 1 յունվ. 1903 թ.)—40 թաղային երկսեռ վարժարաններ—3316 աշակերտներով, 2327 աշակերտուհիներով և 8491 ղրուշ ամսական ծախսով: Եթէ այդ թուերը համեմատենք նախկին տարիների թուերի հետ, այն ժամանակ կընկատենք որոշ առաջադիմութիւն: Այսպէս Կ. Պօլսի թաղային վարժարաններն ունեցել են՝

| թվ. | աշակ. աշակերտուհի | ամս. ծախս. |
|---|---|---|
| 1897 | 3765 | 85383 ղրշ. |
| 1898 | 4483 | 63953 » |
| 1899 | 4923 | 77300 » |
| 1900 | 5351 | 83556 » |
| 1901 | 5643 | 82915 » |
| 1902 | 5376 | 83915 » |
| 1903 | 5419 | 82865 » |

Իսկ գաւառական ազգային վարժարանները հետևեալ պատկերն են ներկայացնում *)

| ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ | Վարժարան | Աշակերտ | Աշակերտուհի |
|---|---|---|---|
| Ադրիանապօլիս | 6 | 314 | 250 |
| Թէքիրտաղ | 9 | 1017 | 856 |
| Իզմիտ | 38 | 3095 | 5412 |
| Պրուսա | 16 | 1532 | 620 |
| Պիլէճիկ | 10 | 1120 | 143 |
| Քէօթահիա | 8 | 825 | 349 |
| Իզմիր | 27 | 1640 | 1295 |
| Էնկիւրի | 7 | 895 | 395 |
| Գայսէրի | 42 | 3795 | 1140 |
| Ամասիա-Մարզուան | 9 | 1524 | 814 |
| Շապին-Գարահիսար | 27 | 2040 | 105 |
| Ճանիկ | 27 | 1453 | 252 |
| Տրապիզոն | 47 | 2184 | 718 |
| Էրզրում | 27 | 1956 | 178 |
| Քղի | 27 | 1336 | 367 |
| Սղերդ | 3 | 163 | 84 |
| Տիարպէքիր | 4 | 690 | 324 |
| Խարբերդ | 27 | 2048 | 496 |
| Ակն | 4 | 541 | 215 |
| Արաբկիր | 20 | 757 | 223 |
| Չմշկածագ | 12 | 456 | 268 |
| Չարսանճագ | 12 | 617 | 189 |
| Ուրֆա | 8 | 1091 | 571 |
| Պաղտատ | 2 | 68 | 46 |
| Այնթապ | 10 | 998 | 708 |
| Անթաքիա | 10 | 440 | 47 |
| Հալէպ Քիլիս | 2 | 438 | 249 |
| Եօզղատ | 12 | 1179 | 557 |
| Հաճըն | 4 | 508 | 69 |
| Կիւրին | 10 | 736 | 78 |
| Զէյթուն | 10 | 605 | 85 |
| Տարէնտէ | 2 | 260 | 70 |
| Տիվրիկ | 14 | 752 | 90 |
| Սեբաստիա | 46 | 4072 | 549 |
| Պրուսա | 16 | 1345 | 733 |
| Աղթամար | 32 | 1106 | 132 |
| Ադանա | 25 | 1947 | 808 |
| Մարաշ | 23 | 1361 | 378 |
| Մուշ | 23 | 1034 | 284 |
| Պուլգարիա | 10 | 534 | 413 |
| Կիպրոս | 3 | 63 | 37 |
| Եգիպտոս | 2 | 223 | 217 |
| Բաղէշ | 12 | 571 | 63 |
| Պանտրմա | 8 | 700 | 634 |
| Երզնկա | 22 | 1389 | 475 |
| Կամախ | 13 | 646 | 28 |
| Պայազէտ | 6 | 338 | 54 |
| Վան | 21 | 1323 | 554 |
| Լիմ և Կտուց | 3 | 203 | 56 |
| Դերջան | 12 | 485 | 10 |
| Սպեր. | 3 | 80 | — |
| Բասէն | 7 | 315 | — |
| Խնուս | 8 | 382 | 15 |
| Տիգրանակերտ | 2 | 180 | — |
| Բալու | 8 | 505 | 50 |
| Գասթէմունի | 3 | 110 | 50 |
| Գոնիա | 3 | 213 | 137 |
| Արմաշ | 2 | 190 | 110 |
| Սիս և շրջակայք | 7 | 476 | 165 |
| Ընդամենը 61 գաւառ | 818 | 60315 | 22380 |

*) «Վիճակացոյց ազգային վարժարանաց Թիւրքիոյ» 1901—1902 թ.

Այդ դպրոցներում դաս աւանդում են 1597 ուսուցիչ և 556 ուսուցչուհի. ամսական ծախս 362967 ղրուշ, այսինքն մօտ 3500 օսմ. ոսկի: Բացի ազգային վարժարաններից կան նաև մասնաւոր և օտար դաւանութեան դպրոցներ հայ աշակերտ-աշակերտուհիներով: Այսպիսի դպրոցներում սովորող աշակերտ-աշակերտուհիների թիւը հասնում է՝

| | |
|---|---|
| Պրուսա | 150 |
| Սեբաստիա | 2033 |
| Եւդոկիա | 445 |
| Բաղէշ | 551 |
| Մուշ | 385 |
| Վան | 2153 |
| Ադանա | 560 |
| Մալաթիա | 1025 |
| Մարաշ | 2814 |
| Ընդամենը՝ | 10,216 |

Ամբողջացնելով առաջ բերած

տեղեկութիւնները տեսնում ենք, որ Թիւրքիայում հայ սաների թիւն է՝ 1. Կ. Պօլսի 80 ազգ. վարժ. 3060 տղայ, 2359 աղջիկ, 2. Կ. Պօլսի այլ դպր. 1103 տղայ, 635 աղջ., 3. Գաւառակ. 818 ազգ. վարժ. 60,315 տղայ և 22,380 աղջ., 4. Գաւառ. մասն. և օտար. դպր. 5662 տղայ և 4554 աղջիկ: Ընդամենը 70,140 տղայ և 29,928 աղջիկ:

Այսինքն գումարը 100,068: Այդ թուերը խակականից քիչ պակասեն, որովհետև մի երկու գաւառների մասին տեղեկութիւններ չկան, եթէ այդ պակասորդը ենթադրաբար ընդունելու լինենք 1000, այն ժամանակ կըստանանք 101,068—ամբողջ Թիւրքիայի համար, ուրեղ հայերի թիւը 2½ միլիօնի է հասնում: Ուրեմն Թիւրքիայում հայ ազգաբնակութեան իւրաքանչիւր 2500000:101.000=մօտ 25 հոգուն դալիս է մի սովորող: Այդքան աննախանձելի է Թիւրքահայերի կրթական վիճակը, մանաւանդ եթէ համեմատելու լինենք մի որևէ քաղաքակիրթ երկրի հետ:

## ՂՐԻՄԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է՝ Հայերը Ղրիմ թերակղզու վրա էլ բնակութիւն են հաստատել, սակայն մեծ չէ այդ գաղութը: Ամբողջ Ղրիմ կամ ուրիշ խօսքով ասած՝ Տաւրիկեան նահանգի բնիկ հայերի թիւը (ռուսաւորչական) պաշտօնական տեղեկութիւնների համեմատ 1902 թ. հասնում էր 8249-ի (4634 արական և 3615 իգական), բացի դրանից կան և բաւականաչափ գաղթական բանւորներ, որոնք աշխատում են զանազան քաղաքների գործարաններում:

Ղրիմի հայերն ունեն ընդամենը 10 դպրոց *), որոնք հետևեալ պատկերն են ներկայացնում.

| Դպրոց | Ուսուցիչ և վարժուհի | Աշակերտ. | Աշակերտուհի | Եկամուտ ռուբլի. |
|---|---|---|---|---|
| Սեմֆերոպոլի հայ լուսաւ. | 8 | 42 | 39 | 4293 |
| Սեմֆեր կաթ. | 4 | 32 | 8 | 591 |
| Ղարասու Բազարի լուս. . | 2 | 20 | 20 | 1350 |
| Ղ. Բազ. կաթ. | 3 | 10 | 7 | 760 |
| Եւպատորիայի. | 1 | 10 | 5 | 610 |
| Հին Ղրիմի . . | 2 | 23 | 17 | 765 |
| Թէոդոսիայի. . | 2 | 9 | 18 | 700 |
| Կերչի . . . . | 2 | 23 | 8 | 500 |
| Արմեանսկի . . | 3 | 5 | 7 | 808 |
| Մելիտոպոլի . | 2 | 9 | 6 | 700 |
| Ընդամենը . | 29 | 173 | 135 | 11039 |

*) Տես «Մուրճ» 1903 № 6.

Ուրեմն միջին թւով իւրաքանչիւր դպրոցին՝ 1104 ր. եկամուտ: Ընդհանրապէս բոլոր դպրոցների եկամուտի աղբիւրն են՝ դրամագլուխների տոկոս, դպրոցապատկան շէնքերի արդիւնք, օժանդակութիւն հոգևոր վարչութիւնից, թոշակադրամ և թատրօն ու պարահանդէս:

## ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ:

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը 1902—1903 ուս. տարեշրջանում ունեցել է ընդամենը 15—(3 պատրաստական, 6 լսարանական)-դասարան՝ 620 աշակերտներով, այն է.

Թիֆլիս քաղաքից . . . 284 հոգի
Թիֆլիսի նահանգից . . 121 »
Գանձակի . . . . . . . 61 »
Երևանի . . . . . . . 46 »
Հիւսիս. Կովկ., Ղրիմ.
Բեսարաբ. . . . . . . 18 »
Թիւրքիայից . . . . 55 »
Պարսկաստանից . . . 19 »
Ուրիշ տեղերից . . . 16 »
Ընդամենը 620 հոգի

Ուսման դասընթացն աւարտել են 24 հոգի.

Ծնողների կոչման համեմատ բոլոր աշակերտները բաժանւում են հետևեալ կարգով.

Արհեստաւորների որդիներ 255
Վաճառականների » » . 187
Հոգևորականների » » . 48
Երկրագործների » » . 65
Սպորին ծառայողների . . 56
Ազնւականների . . . 6

| | |
|---|---|
| Ուսուցիչների . . . . . . . | 3 |
| Ընդամենը | 620 |

Դպրոցում դասաւանդել են 23 ուսուցիչներ, որոնցից 15-ը բարձրագոյն, իսկ 8-ը միջնակարգ կրթութեամբ: Ուսումնական տարուայ վերջը տեսուչ պ. Ս. Բալադեան հրաժարուեց իր պաշտօնից և Հոգաբարձութիւնը նրա փոխարէն պաշտօնակատար նշանակեց պ. Ս. Մալխասեանին:

Դպրանոցի գրադարանը (1901—1902 թ.) ունեցել է 4028 անուն գիրք, որոնք բաղկացած են 4745 հատորից՝ 17,153 ր. 48 կոպ. արժողութեամբ: Աշակերտները տարուայ ընթացքում վերցրել են կարդալու հայերէն՝ 3253 գիրք, ռուսերէն՝ 715, ֆրանսերէն՝ 15, ընդամենը 3983 գիրք:

Անցեալ 1902 թ. ընթացքում Ներս. Դպրոցն ունեցել է 75,227 ր. 75 կոպ. մուտք, որի ամենամեծ մասը՝ անշարժ գոյքերից (52,794 ր.). նոյն թուականին ծախս եղել է 77201 ր. 07 կոպ.

Արցախու (Շուշուայ) թեմական դպրոցը 1901—1902 տարեշրջանում *) ունեցել է 3 հիմնական պատրաստական, 4 շուգընթաց պատրաստական և 6 հիմնական դասարան. աշակերտների ընդհանուր թիւը եղել է 584, այն է՝

| | |
|---|---|
| Շուշի քաղաքից և գաւառից | 528 |
| Զանգեզուր գաւառից . . . . | 32 |
| Ջիւանշիր » . . . . | 23 |

Նուխի, Էջմիածին, Ջաքաթալ, ատրպատական և Մուշ գաւառներից 1—ական աշակերտ: Այդ տարին դպրանոցի դասնթացն աւարտել են միայն 6 հոգի: Ծնողների պարապմունքի համեմատ բոլոր աշակերտների թիւը դասաւորուած է եղել այսպէս՝

| | | |
|---|---|---|
| Արհեստաւորների | որդիներ | 180 |
| Վաճառականների | » | 119 |
| Երկրագործների | » | 76 |
| Ծառայողների | » | 44 |
| Եկեղեցականների | » | 34 |

Մնացածները որբեր կամ զանազան պաշտօնեաների, ատիճանաւորների և ուսուցիչների որդիներ են:

Որդեգիր աշակերտների թիւը հասել է 96-ի, որից—50 Իս. Թադէոսեանի հաշւով, իսկ 12-ը Ա. Ժամհարեանի, 10-ը Մ. Աւետիսեանի, 8-ը Մ. և Ս. Առաքելեանցի, իսկ մնացածները ուրիշ բարերարների հաշւով: Դպրոցն ունեցել է նաև մի «աղքատախնամ յանձնաժողով՝» չքաւոր աշակերտների մասին հոգալու համար: Այդ յանձնաժողովն ունեցել է եկամուտ 1493 ր. 85 կոպ., իսկ ծախսել է—(շորեր, թոշակի, նպաստի, դասական պիտոյքների և այլն)—566 ր. 12կոպ.

Արցախու թեմ. դպրանոցի գրադարանն ունեցել է (1901—2 տ.) հայերէն 2676 կտոր (1316 անուն), ռուսերէն 1595 կտոր (923 անուն) և ուրիշ լեզուներով 18 կտոր գիրք: Ամբողջ տարուայ ընթացքում աշակերտները կարդալու համար վերցրել են 2851 հայերէն և 440 ռուսերէն գիրք:

## ԳԷՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Անցեալ ուսումնական տարեշրջանում ճեմարանում եղել 251 աշակ., որոնցից 228 գիշերօթիկ և 24 երթևեկ:

Աշակերտները եղել են.

| | |
|---|---|
| Երևանի թեմից | 116 |
| Թիւրքիայից | 71 |
| Վրաստ. և Իմերէթ. | 18 |
| Արցախու | 15 |
| Պարսկաստանի | 14 |
| Բեսարաբիայի | 7 |
| Շամախու | 6 |
| Աստրախանի | 4 |
| Գումարը | 250 |

Դրանցից 182-ը եղել են դպրանոցական (6 դասարան), իսկ 40 մասնագիտական — ճեմարանական բաժնում: Աւարտել են դպրանոցական դասընթացը—19 և ճեմարանականը—13 հոգի, որոնցից 7-ը պատրաստակամութիւն են յայտնել հոգևոր կոչման մէջ մտնելու:

Ճեմարանի գիշերօթիկ 227 սաներից ամենամեծ մասը պահւում է Մայր աթոռի հաշւով: Թոշակ կամ նպաստ ստացել է միայն 46 որդեգիրների համար:

*) Տեղեկութիւնները քաղել ենք տեսչական վերջին տեղեկագրից:

# Վէպ եւ բանաստեղծութիւն

## ՎԻՇԱՊԱՁՈՐԸ

(Աւանդութիւն)

Մութ գիշեր էր, ճանապարհս խորդ ու բորդ: Կառապանս, մի բարի դէմքով խելացի ծերուկ՝ ամբողջ ճանապարհին ինձ զուարճացրել էր իր սրամիտ խօսակցութիւնով: Մութն ընկնելուն պէս նա կամաց-կամաց լռեց և այժմ հանգիստ նիրհում էր իր տեղում երասանակները բաց թողած: Վերջին հանգամանքը խիստ անհանգստացնում էր ինձ, որովհետև ձիերը մի անօրինակ յամառութեամբ անդադար դուրս էին քաշում կառքը ճանապարհի մէջ տեղից մերթ դէպի մէկ՝ մերթ դէպի միւս կողմի ձորամուտը:

— Ծերուկ, քնեցի՞ր...

— Հ՞ը... չէ պարոն, չեմ քնել, ո՞նց կը քնեմ, էհ՜, ըշ՜շ, հա՛յդա:

Ձիերը կառապանի ձայնից զգաստացած, փնչացնելով փոխում էին վտանգաւոր ուղին, կառքը մի առ ժամանակ առանց կասկածելի երերումների ընթանում էր ապահով տեղով: Սակայն այդ երկար չէր տեւում, շուտով կառապանի ծեր գլուխը կրկին կախւում էր կրծքին, ձիերը վերստին քաշում էին մեզ ճանապարհից դուրս, կառքը ցատկոտում էր վտանգաւոր դաբուվերներով և քիչ էր մնում շուռ գայ, փշուր-փշուր լինի:

— Ծերուկ, դու դարձեալ քնեցիր, նայիր, կառքը շուռ է գալիս:

Պատասխանը նոյնն էր, հետևանքը նոյնը: Յորդորներս նպատակին չէին հասնում: Ես լուրջ կերպով մտահոգ էի, ելք էի փնտրում, որ թէ ծերունուն չը վշտացնեմ և թէ վտանգի առաջն առնեմ:

Ճանապարհն անցնում էր մի մռայլ ու խոր ձորի միջով, որի երկու կողմերում բարձրանում էին քարերի ահագին չեղջակոյտեր, սև ու այլանդակ գծերով: Խաւարի մէջ թւում էր, թէ այնտեղ մի բանակ էր ջարդուած և դոռոզ յաղթողը դիակներից արիւնոտ փառքի ամբարդակ է կանգնեցրել:

— Լսիր, ծերուկ, այս ինչ ձոր է:

— Հ՞ը... չէ՛, չեմ քնել պարոն, էհ՜, ըշ՜շ, հայդա:

— Գիտեմ չես քնել. դրա համար էլ հարցնում եմ, թէ այս ինչ ձոր է ու այս քարերն ինչու են այնպէս իրար վրա շարուած:

— Էս ձորը… օ՜օ, սա ուրիշ ձոր է պա՛րոն, սրան Վիշապաձոր կասեն։

— Վիշապաձո՞ր… ինչո՞ւ, վիշապնե՞ր են եղել այստեղ։

— Հալբաթ եղել են, ասաց նա յօրանջելով ու լռեց։ Գլուխը կրկին քաշ ընկաւ կրծքին։ Անիծած ծերուկը կարծես միտքս հասկացաւ, դիտմամբ չէր ուզում խօսել քունը չը խանգարելու համար։ Իսկ ես մտածում էի նրան անդադար խօսեցնել, որ քունը չը տանի։ Ես յամառեցի։

— Այդ քարերը իրանք իրա՞նց են այդպէս կուտակուել, թէ՞ մարդիկ են շարել։

— Ուզում ես խօսեմ հա՞…, ասաց նա ծիծաղելով։ Չէ, չեմ քնի պարոն, բայց դէ որ ուզում ես, քո խաթրը ո՞նց կոտրեմ, լսի՛ր պատմեմ Վիշապաձորի պատմութիւնը։

Մեզնից շատ, շատ տարի առաջ, ասում են, էս տեղ մի մեծ գիւղ կար։ Աստծու աչքը վրան քաղցր էր, տները հազար բարիքով լի, ամենքը երջանիկ էին։ Մինչ էդպէս է, Աստուած որ տուեց՝ կտայ, որ առաւ՝ միանգամից կառնի.

Գիւղի մօտով անցնում էր մի մեծ ճանապարհ, կարաւաններ էին գնում գալիս դէպի հեռու աշխարհներ, օտարականներ էին անցնում, հազար ու մի ճանապարհորդներ, և ամենքը գիտէին էդ գիւղը, ամենքը էնտեղ հանգստանում, սառը ջուր խմում, ողորմի տալիս ու անցնում էին։

Մի օր էլ հեռու ճանապարհի վրայ փոշի բարձրացաւ և ամպերի պէս պատեց երկինքը. մի չը տեսնուած կարաւան էր գալիս։ Գիւղացիք նայում էին զարմացած. կարաւա՜նն եկաւ, եկաւ և ի՜նչ, փոշու մէջ կորած անտէր-անտիրական, խեղճ ու մոլորուած մարդկանց ահագին բազմութիւն, իրար յետեւից խումբ-խումբ, շարան շարան։ Գլուխները կախ, ձեռները ծոցը, լուռ, իրարից կախկխուած, ուժասպառ, յոգնած գալիս են փոշու միջից։ Հասան, գիւղի առաջ կանգ առան ու ասում են.

«Մենք գալիս ենք հեռո՜ւ, հեռո՜ւ տեղերից, օխտը սարից օխտը ձորից էն կողմն էր մեր վաթանը, նա էլ չկայ։ Մի չար քամի զարկեց, սրբեց ու տարաւ ամեն ինչ։ Տուն ու տեղ ունէինք՝ հիմա բնաւեր ենք. արտ ու արօտ ունէինք՝ հիմա քաղցած ենք. աշխատող ձեռքեր ունէինք՝ տեսէք փշրուած են. մարդ էինք՝ անասունից էլ վատ ենք. չէն դռները՝ փակ, մենք՝ մուրացիկ, մեր մէջքը՝ կոտրած, մի կտոր հաց, մի անկիւն, էլի Աստծու արարածներ ենք, թող Աստուած ձեզ մէկ սև օր չը տայ»։

Էսպէս խօսեցին խեղճերը ու լուռ սպասում էին։ Երջանիկ գիւղացիք էլ լուռ էին։ Նրանք մտածում էին, ընդունե՞լ, թէ՞ մերժել այս բազմաթիւ քաղցածներին։ Խորհուրդ արին, խօսեցին. վերջի վերջոյ գտան, որ ընդունել չեն կարող։ Մեզ ինչ օգուտ, որ էսքան մարդ մեր հացն ուտի։ Մտածում էին նր-

րանք, և դեռ ո՞վ գիտէ՝ կը հեռանա՞ն այնուհետև, թէ ոչ։

Խեղճերը գլխակոր ու լուռ սպասում էին։ Վերջապէս գիւղացիք առանց գլուխները բարձրացնելու, առանց խեղճերի երեսին նայելու ասացին.

— Աստուած ձեզ հետ, գնացէք, տեղ չունենք, հալբաթ մի մեղք էք գործել, որ էս օրին էք։

Խեղճերը անցան, չարան-չարան։ Գիշեր էր, և դեռ նրանք գնում էին՝ գիւղացիք իրենց տներում փակուած՝ լսում էին նրանց ծանր ոտնաձայնը, նրանց տնքոցը, նրանց ախ ու վախը։ Գիւղում այն գիշեր ոչ ոք քնել չը կարողացաւ։

Անցան օրեր, հասան խեղճերի նոր խմբեր. նրանց շարքերն ասես էլ վերջ չունէին, հեռու հեռու տեղերից զուլումը թափառած, սողում, գալիս էր մեծ ճանապարհով, ինչպէս ծըփծըփան ծովը, որ յանկարծ քամիների ուժով դուրս է ձգւում ափերից ու ծածկում չորս կողմը։

Գիւղը պղնձուած՝ կռապաշտ դարձաւ։

Ասում են, որ շատ թշուառութիւն տեսնելով, մարդու սիրտը կամաց կամաց քարանում է։ Դրանք էլ մերժում էին ամենքին, մերժում էին, բայց էլի հանգիստ չէին, գիշերները չէին քնում, իրանց տեղաշորը կըծոտում էր մարմինները։ Էսպէս էր, պա՛րոն, մարդ շատ անգամ իր տանը նստած մնում է երկու կրակի մէջ, որ նրան այրում են ներսից։ Ազատ մարդ ես քեզ համար, մի բան չես անում, բայց ներսդ փոթորւում է։

Գիւղացիք երկար, բարակ մտածեցին, ծանր ու թեթև արին, ճար չը գտան. ուզում էին էնպէս լինի, որ թէ իրանց դռները փակ մնան խեղճերի առաջ, թէ կարողանան հանգիստ քնել գիշերները։

Դէ պարոն, էդպէս ո՞նց կը լինի. հոգի կայ չէ՞... բայց նրանք մտածում էին հոգու ձայնը խլացնել։

—Հա՛յ դէ մէկը գար ու մեզ ազատէր մեր հոգուց, ասում էին նրանք իրար։

Ե՛ս կ՚ազատեմ.

Նայեցին, սատանան էր նրանց առաջը ցցուած։

—Ի՞նչպէս կ՚ազատես։

—Ծախեցէք ինձ ձեր խիղճը, ձեր կամքը, ձեր ազատութիւնը և դուք հանգիստ կը քնէք։

—Մենք հանգիստ կը քնե՞նք.

—Հա՛, բոլորովին հանգիստ.

—Դիմողներին կը մերժենք ու գիշերները կը քնե՞նք.

—Հա՛. կըմերժէք ու կըքնէք հանգիստ։

—Համաձայն ենք։

Եւ ծախեցին սատանային իրենց խիղճը, կամքը, ազատութիւնը։ Քահանան էլ ծախեց...

—Քահանա՞ն, բացականչեցի ես.

— Հա՛, ի՞նչ կայ որ, քահանայի խիղճը չի՞ ծախուի, կուզես էգուց մեր գեղի տէրտէրի խիղճը ուսի թուչունի պէս թրպրտալէն բերեմ, գցեմ առաջդ։ Է՛է, էդ թողնենք, պարոն, որտեղ մնացի․․․ Հա, ռէսն էլ ծախեց, իշխաններն էլ ծախեցին, բոլոր ժողովուրդը՝ մեծ ու փոքր, մարդ ու կին ծախեցին իրանց խիղճը, կամքը, ազատութիւնը։ Գեղը դարձաւ սատանայի փայ ու բաժին։

Հասաւ գիշերը. առաջին անգամ ամիսներից յետոյ գիւղացիք տները մտան հանգիստ և ուզում էին քնել։ Բայց հագիւ անկողինները փռեցին, պառկեցին, դրսից, փողոցներից կրկին լսուեցին նոյն ծանր ցաւոտ տնքոցները, նոյն հեծեծանքը։ Դռներին ձեռք էին տալիս, պատերը չանգռում, ո՜վ... ոչ ոք չգիտէր, ոչ ոք չէր կարող ասել, բայց քնել չէր լինում։ Այն գիշերն ամենից սարսափելի, ամենից ծանր եղաւ։

Միւս առաւօտ գիւղացիք հաւաքուեցին ու գնացին սատանայի մօտ.

—Տէ՛, անի՛րաւ, ասացին, դու մեզանից առար մեր հոգին, մեր ազատութիւնը, որ մենք գոնէ հանգիստ քնենք և դու մեզ խաբեցիր.

— Ես չեմ խաբել, դուք քնել չէք կարողանում, որովհետև ձեր գիւղից մէկը կայ, որ դեռ ազատ է։

—Ո՞վ է.

—Հովիւը։

Սատանան իրաւունք ունէր, գիւղացիք իրանց հովուին բոլորովին մոռացել էին։ Դէ ինչպէս չը մոռանային. հովիւը մի խեղճ ու կրակ հալւոր էր, մօտ հարիւր տարեկան. և իր բոլոր կեանքը անց էր կացրել չոլերում, սարերում—ձորերում, գիւղից, աշխարհի բաներից բոլորովին բէխաբար։ Տարին տասներկու ամիս նա գիւղ չէր մտնի. ապրում էր իր անասունների հետ. ունեցած չունեցածը մի հողէ աման էր, որով կաթ էր խմում, մի երկար ու հաստ մահակ, մի մաշուած սրինգ, որ իր մանկութիւնից ածում էր և մէկ էլ թաղիքէ ծածկոցը։

Ազատ, արդար մարդ էր, և ապրում էր իր համար անդարդ ու անցաւ։ Գիւղացիք մարդ ուղարկեցին, հովուին կանչելու։ Դէպքը զարմանալի էր. հալւորը մեծ դժուարութեամբ համաձայնեց սարերից գիւղ իջնել։

Ահագին մահակը ձեռքին, թաղիքէ ծածկոցը թիկունքին, սրինգը գօտին խրած, հովիւը եկաւ ու կանգնեց մէյդան։ Նրա երկար մազերը թափուել էին ուսերին, միրուքը, ձիւնի պէս ճերմակ՝ փռուում էր մինչև գօտին, և դէմքը, բարի ու արդար, երեխայի պէս նայում էր չորս կողմը և բան չէր հասկանում։

— Ի՞նչ էք ուզում ինձանից, ասաց նա։

— Ազատութիւնդ ծախիր սատանային։

— Չեմ ծախի, հոգիս էլ հետն է։

— Մենք բոլորս ծախել ենք, տէրտէրն էլ է ծախել, իշխաններն էլ, ռէսն էլ, երեցփոխն էլ։

— Դուք ծախել էք, էդ ձեր բանն է. ես էլ չեմ ծախում, իմ բանն է։ Իմ ընկերները բոլորն ազատ են, քամիները տէր չ՚ունին, գազանները վազվզում են ուզած տեղերը։ Հարիւր տարի է ես ազատ եմ, հիմա էս ծեր օրերիս իմ ազատութիւնը, իմ կամքը, իմ խիղճը չեմ ծախի սատանային։ Հոգիս թէ տալու լինիմ, Աստծուն կ՚տամ։ Դուք սատանայի փայ ու բաժին էք, ես ձեզ հետ գործ չ՚ունիմ։

Ասաց, երեսը դարձրեց ու ճանապարհ ընկաւ դէպի սարերը։

— Ի՞նչ անենք, հարցրին սատանային.

— Հալիւորին թաղեցէք, ուրիշ ճար չ՚կայ։

— Ողջ ո՞ղջ.

— Հա՛, ողջ ողջ թաղեցէք և դուք հանգիստ կ՚քնէք։

Սատանայի սուրուկներն էին, ազատութիւնն ու հոգիները ծախած, էլ ինչ կարող էին անել, վազեցին հասան ծեր հովուին, բռնեցին, յետ բերին ու կանգնեցրին ա՛յ էս ձորում։ Մեծ ու փոքր բահ ու թի առած՝ սկսեցին փորել և պատրաստեցին մի մեծ վիհ, խոր ինչպէս անդունդ։

Ծերունին հանդարտ կանգնած՝ նայում էր փոսին։

— Թաղել է՞ք ուզում ինձ։

— Հա՛, կամ ազատութիւնդ ծախիր, կամ քեզ կը թաղենք։

— Թաղեցէք, բայց թողէք ինձ վերջին անգամ ածեմ սրինգս։

— Մի՛ թողէք, ասաց սատանան։ Զարը մի բան գիտէր։

Եւ վրա պրծան ծերունուն. մէկը ոտներից բռնեց, մէկը ձեռներից, մէկը գլխից, մէկն ուսերից, մէկը մէջքից ու գլորեցին խոր փոսի մէջ, հողը թափեցին վրան, ծածկեցին։

Էս սարսափելի թաղումից յետոյ բազմութիւնը գոհ սրտով վերադարձաւ գիւղ։ Հասաւ գիշերը. ներս մտան քնելու։

. . . . , . . . . . . . . . . . . . .

Թրը՜խկ, թրը՜խկ.

— Ո՞վ ես.

— Զ՚վաճառուածը.

— Ի՞նչ ես ուզում.

— Ոչինչ, ես շրջում եմ, ես ազատ եմ։

— Չենք հասկանում, ազատ բան չկայ էս կողմերում, ազատ մարդ չ՚կայ մեր գիւղում։

— Սարերի ծերունին ազատ է։

— Թաղուած է։

— Թաղուած ազատութեան սուգն եմ անում։

Եւ հնչում էր սրինգի ձայնը, տխուր, հոգեհան, ասես սար ու քար լալիս էին, հեծեծում։

Եւ բոլոր գռների առաջ խօսում էր նոյն ձայնը և ամենքը լսում էին սրնգի ողբը, քամիներն էլ լալիս էին նրա հետ։ Մարդկանց վրա կարծես երկնքից կրակ էր մաղւում, նրանց մազերը գիզանում էին, նրանք կծկւում, իրար էին կպչում երկիւղից ու ցաւից և քնել չէր լինում։

Առաւօտը դարձեալ բոլորը հաւաքուեցին գնացին սատանայի մօտ.

— Տօ, չար անիրաւ, ասացին, դու մեզանից առար մեր խիղճը, մեր կամքը, մեր ազատութիւնը, մեր հոգին, որ մեզ գոնէ հանգիստ տաս. բայց մեր գռները գիշերները ծեծում են, մենք տանջւում ենք, քնել չենք կարողանում։

— Նա՛ է։

— Ո՞վ.

— Հովիւը.

— Ախր երէկ թաղեցինք։

— Քարեր դիզեցէք վրան.

— Չէ.

— Քարեր պէտք է շարել վրան, հէնց էս գիշեր։

Յուսահատուած, կատաղած գիւղացիք հէնց որ գիշերը վրա հասաւ, դուրս եկան և բոլորը վազեցին դէպի հովուի գերեզմանը։ Յանկարծ ինչ տեսնեն։ Գերեզմանի բարձր թմբի վրա, նստել է մի փառայեղ ծերունի, խոկ և խոկ հովուի նման. սրինգն ածում է հա՛ ածում, խոկ նրա չորս կողմը բռնել են անթիւ գազաններ, գայլեր, արջեր, աղուէսներ, առիւծներ, վագրեր. լսում են սրնգի ձայնը և սուգ անում։ Ողջ ձորը թնդում է նրանց ոռնոցից, քարերն էլ նրանց հետ տնքում են։ Ծերունին սրինգը ցած առաւ շրթունքներից, ոտքի կանգնեց, ինչ հասակ. մի հսկայ, մի ամպահայ, աչքերից կրակ էր թափւում, գազանները կծկուեցին նրա ոտների տակ։

Սարսափած բազմութիւնը քարացաւ իր տեղում։ Ծերունին իր ահագին բազուկները տարածեց օդի մէջ և ճչաց զարհուրելի ձայնով.

— Գնացէք անիծուածնե՛ր, սատանայի ծնունդներ, ձեր թաղածը՝ գազաններն են սգում, ձեր փոխարէն նրանք են լալիս։ Ձեր արցունքը նրանք են թափում։ Հեռո՛ւ էս տեղերից, գնացէք կրծոտեցէք ու չանգռեցէք իրար, սատանայի ստրուկներ։

Ասաց ու ծածկուեց գերեզմանում։ Գազաններն ոռնացին սարսափելի ձայներով ու յարձակուեցին բազմութեան վրա։ Ջարդանքը բռնեց ամենքին, նրանք շշկլած սարից քարից գլլորուեցին ու իրար վրա թափուեցին՝ շարան-շարան, շերտ-շերտ։ Մէկը միւսի կրծքին, մէջքին, ուսերին, թիկունքին։ Ամեն մէկը բաց աչքով տեսնում էր, թէ ինչպէս իր վրա ըն-

կածը տրորում, չանգռում, կրծոտում է իր կուրծքը և հաս-կանալ չէր կարողանում, թէ ինչու է էդպէս:

— Ի՞նչու ես կրծոտում, տրորում ինձ, մեռա՛յ.

— Չը գիտե՜մ... չը գիտե՜մ... ես ազատ չե՜մ...

Վերից, վերի՜ց հարցրու...

Եւ բոլոր մարմինները օձերի պէս գալարուած, փաթաթ-ուած իրար, մռմռում, տնքում, հեծեծում, մռնչում էին. և նը-րանց ոսկորները ճարճատում էին. և նրանց շրթունքները ա-րիւնէ փրփուրով ծածկուած, աչքերը բնից դուրս գալիս, մէջքե-րը տաս տակ ծալւում և վերից մի զարհուրելի, մի ծանր բան սղմում, սղմում էր անդադար: Էլ ելք ու փրկութիւն չ՛կար. Նրանք զարզանդից քարացան իրանց տեղերում: Այ էն ձորի քարերն էին, որ մենք տեսանք: Մի վիշապ էլ եկաւ, մտաւ էդ-քարերի մէջ, մինչև հիմա էլ նա այնտեղ է, ինքը չի երևում, բայց պոչը քաշ է ընկած ժայռի ճեղքից, քանի կտրում ես, էլի երկարում է: Ասում են, որ սատանան է, որ էն ժամանակ վի-շապ է դարձել ու իր փայ ու բաժին դարձած հոգիները պա-հում է էնտեղ: Վիշապաձորն է այն:

Անիծած ձոր է. չոր ու պղնձուած: Ոչ մի ծառ չի բուս-նում էնտեղ, ոչ մի ծաղիկ չի ծլում, խոտ չի կանաչում. ոչ մի թռչուն էնտեղ բուն չի դնում, ոչ մի սողուն չի մօտենում էդ-քարերին:

Ձորից վաղուց էինք հեռացել, ծերունին վերջացրեց իր պատմութիւնը, ձիերին շարժեց.

— Հէ՛, ըշ՛շ հայդա՛:

Կենդանիները փնչացրին ու առաջ սլացան: Ես մտախոհ էի, իմ աչքից էլ չէր հեռանում գազանների այդ զարմանալի սուգը այդ անօրինակ գերեզմանի վրա, ես տեսնում էի այն հսկայ ծերունուն. նրա բոցավառ աչքերը, նրա փառայեղ դէմ-քը, ես լսում էի կարծես նրա սպառնալի ձայնը, որով անի-ծում էր իր ոտների տակ սողացող բազմութիւնը, որ չ՛գիտէր, թէ ինչ է ծախել, ինչ է թաղել. ինչի՞ց է զրկուել:

— Պա՛րոն.

. . . . . .

— Պա՛րոն, հիմա էլ դու ես քնում, ասաց ծերունին. ե-րևի ես նրա առաջին կանչին չէի պատասխանել մտքերիս մէջ խորասուզուած:

— Չէ՛ ծերուկ, չեմ քնել միտք եմ անում:

— Ես էլ մի բան եմ մտածում:

— Ի՞նչ.

— Ես մտածում եմ, ու ինձ էնպէս է թւում, որ էն ծեր, արդար հովուի անէծքը դեռ աշխարհի վրա է:

— Ի՞նչու ես այդպէս կարծում ծերուկ:

— Ախր ո՞ր կողմ նայում ես աշխարհում մարդիկ իրար

կրծոտում, տրորում, չանգռտում են, ու իրանք էլ չը գիտեն ինչի՞ համար։ Ցաւ ու դարդ է չորս կողմերս։ Գազաններըը մեզ վրա էլ իրաւունք ունին արցունք Թափելու։

Ես լուռ էի... Ծերունին էլ չէր քնում։

— Է՞հ, էդ բաների մասին չ՛մտածելը լաւ է, մռմռաց նա ինքն իրան և երասանակները շարժեց Թափով.

— Հէ՛, ըշ՛շ, հայդա՛։

Ձիերը սլանում էին։

Արշալոյսը մօտ էր։

Պ. ԱՀԱՐՈՆԵԱՆ

## ԴՈՒ ՔՈ ՃԱՄԲԱՆ ԳՆԱ...

Դու քո ճամբան գընա, քոյրիկ,
Եւ Թող լինի նա պայծառ.
Ինձ մի ժպտար, ինձ մի սիրիր,
Ընկեր չեմ ես քեզ համար։

Ելած կեանքի ամեն ճամբից,
Կարօտներով անմեկին,
Ագահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին։

Մի ձեռք չըկայ, մի գիրկ չըկայ
Պահի նըրան իրեն մէջ,
Խենթ, խելագար գընում է նա
Տենչանքներով իր անվերջ։

Եւ ո՞վ գիտի՝ դեռ ես անմեղ
Քանի հոգի կըտանջի,
Եւ ո՞վ գիտի՝ ինչ մութն, ահեղ
Տըրտմութեան մէջ կըհանգչի...

Դու քո ճամբան գընա, քոյրիկ,
Եւ, երբ լինինք մենք հեռու,
Աղօթք արա, որ մի անգամ
Չըհանդիպենք իրարու։

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

## ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

Քաղաքներուն ժխորին մէջ անձկագին
Երջանկութիւնը փնտռելէ ձանձրացած,
Ես դուրս ելայ խաժամուժէն մարդկային,
Ու մեր կեանքին պիղծ բաւիղէն մըթամած։

Վեր սլացայ տափակ ռամիկ դաշտերէն,
Եւ ըսի՝ «Լեռն անշուշտ գիտէ բոյնն անոր.»
Բայց ինձ ճաղատ հսկան ըսաւ տրտմօրէն.
«Ես լոկ ձանձրոյթըս կըճանչնամ լայն ու խոր»։

Թողուցի լեռն ու հովերուն մօտեցայ,
Ազատ, թրթռուն ոգիներուն անսահման.
Բայց ինձ ըսին. «Մենք հառաչանքն ենք հսկայ
Ցաւերու, որ քեզ միշտ գաղտնիք պիտի մնան։

Հովերէն վեր ելայ ու վեր ամպերէն,
Գնացի երկինքն ու աստղերուն հարցուցի.
«Մեր նըշոյլներն արցունքի մեծ շիթեր են»,
Ըսին մութին այդ ծաղիկներն ալ ինծի։

Աստղերէն վեր, անհունին մէջ ամայի,
Տեսայ Աստուած, որ թաղծագին կը խորհէր.
Երջանկութիւնն ո՞ւր է, «ըսէ» գոչեցի.
Եւ Տէրն ինծի պատասխանեց՝ «Չեմ գիտեր»։

ԱՐՇԱԿ ՉՈԲԱՆԵԱՆ

## ԱՐՁԱՆԸ.

### I

Հրապարակի վրա, այնտեղ ուր մարդիկ միշտ ժողովւում են, կաղնի ծառի տակ, մերկ կնոջ մի պղնձեայ արձան կար կանգնած։

Մե՛րկ կնոջ!... Ա՛յդ էր սոսկալին։ Բոլորովին մերկ՝ ՚ի դայթակղութիւն այն պատկառելի մարդկանց, որոնք մերկ ոչինչ տեսնել չեն սիրում։

Թէ ո՞րտեղից էր այդ արձանը և որի՞ կերտած, կամ թէ ի՞նչ միտք ունէր և ինչո՞ւ թողած—ոչ ոք չգիտէր։

Ո՛չ ոք չէր յիշում նրան այդտեղ դնելու օրը։ Վաղո՜ւց էր, շա՜տ վաղուց։ Պատկառելի մարդիկ, երկա՜ր ժամանակ և դրեթէ միշտ, նրա մօտով անցնելիս՝ երեսը դարձնում էին, որ „անամօթ“ արձանը չտեսնեն. կանայք երբէք չէին անցնում նրա կողքից, անցնողն էլ „անբարոյական“ տիտղոսն էր ստանում. երբեմն միայն, հետաքրքրութեան համար, հեռուից և այն էլ գաղտագողի էին դիտում արձանը։

Եղան տարիներ, երբ հասարակութիւնը .քանիցս կամեցաւ փշրել արձանը, անամօթութիւնը մէջ տեղից վերացնել։ Վիճաբանութիւն, վէճ ու կռիւ, անէծք՝ կրօնաւորներից, բողոք՝ պառաւներից—ոչինչ չ՚ազդեց արձանին. և նա միշտ այնտեղ, իր համարձակ մերկութեամբ, պատուանդանի վրա անդրդուելի կանգնած, ակնարկը անհունութեան, կարծես հեգնօրէն ժպտալով, թողնում էր, որ մարդիկ կատաղեն, բռունցք ցոյց տան, դաւեր լարեն և սակայն անզօր նրա դէմ՝ նորից գան և շուրջը ժողովուին։

Բայց ի՞նչ էր ուրեմն այդ մերկ արձանը, ո՞վ էր նրան մէջ տեղ բերել, այդպէս բաց տեղ դրել և ինչո՞ւ ամեն ջանք նրան ոչնչացնելու՝ մնում էր ապարդիւն։

—

Արձանը պաշտպաններ ունէր։ Թէ ո՞վ էր նրան այնտեղ կանգնեցրել—այդ դեռ յայտնի չէր, բայց թէ ո՞վ էր նրա պաշտպանը—դա ակներև էր։

Կաղնին պատկանում էր ժողովրդին. և վաղուց ՚ի վեր, նուիրական դարձած, սերունդից սերունդ աւանդաբար մնացել էր մի համոզմունք, որ եթէ ծառը կտրուի, կամ մերկ կնոջ

արձանը տեղից շարժուի, բոլոր տների մէջ կռիւը պիտի մըտնի և հետզհետէ ամենքին անբաղդացնի։

Այդ աւանդութիւնը հաստատուած էր մանաւանդ նրանով, որ, ինչպէս հներն էին պատմում, մի անգամ մի ազդեցիկ մարդ, շատ տարիներ առաջ, կամեցել էր արձանը ոչնչացնել, բայց երբ շարժել էր նրան իր տեղից, նոյն գիշերն իսկ իր երկու սիրելի որդիները կռուի էին բռնուել և միմեանց սպանել։

Դրանից յետոյ էլ ո՞վ կ՛համարձակուէր ձեռք տալ արձանին։ Ո՛չ միայն ձեռք տալ չէին կարող, այլ և, ով հրապարակի շուրջն էր, նուիրական պարտք էր համարում հսկելու՝ որ արձանը չ՛անհետանար։

Եւ այսպէս, մերկ կինը բարձր 'ի գլուխ, հաստատ իր պատուանդանի վրա, մազերը թիկունքի վրա շքեղապէս փռած, ակնարկը երկնքին՝ այդտեղ էր դարերից ի վեր, անվրդով լուտանքների դէմ, անդրդուելի սպառնալիքների առաջ։

Անցան երկա՜ր տարիներ։ Գայլեր ոռնացին նրա դէմ, բարոյագէտներ պնդեցին, որ գոնէ պէտք էր հագցնել նրան, եզուիտներն առաջարկեցին մի տաճար շինել և այդպիսով արձանին մէջը ծածկել, բայց ժողովուրդը չ՛թողեց։ Ասուած էր.— ,,Թողնել արձանին ինչպէս կար. ժանդը միայն սրբել և այդպէս մերկ՝ հրապարակի վրա պահել»...

II

Մի գիշեր, չ՛գիտեմ ինչպէս եղաւ, անյայտ չարագործներ—ասում են, որ գայլերն ու բարոյագէտներն էին—անգըթաբար պոկ տուին արձանը իր պատուանդանից, և, առանց այլևայլութեան մօտակայ ջրհորը նետեցին։

Պէտք էր տեսնել սոսկումը, երբ առաւօտեան ժողովուրդը զարթնելով տեսաւ որ արձանը չ՛կար։

Ամբողջ քաղաքը տակն ու վրա եղաւ։ Գայլերը հրճուեցին, երիտասարդները կատաղած՝ ամեն կողմ ընկան չարագործներին փնտռելու. սոսկումը մտաւ ընտանիքների մէջ. ամէնքը րոպէ առ րոպէ, սրտատրոփ սպասում էին դժբաղդութիւնների, ժանդախտի կամ այլ տեսակ աղէտի։

Արձանին խիստ մօտ ապրում էր նահապետական մի մեծ ընտանիք։ Տան նահապետը ողջ առողջ էր. երբ արձանը անհետացաւ։ Թշուառ ծերունին նոյն օրն իսկ անկողին ընկաւ ապագայ աղէտների սոսկումը կաթուածահար արաւ նրան և նա գիշերը մեռաւ։

Տան մեծ որդին կատաղած՝ բարոյագէտներից մէկի հետ կռուի բռնուեց և արիւնաշաղաղ նրան տուն բերին։ Եղբայրները վրէժի ելան, բարոյագէտի բարեկամները պաշտպանուեցին և դեռ չէր անցել մի ամբողջ օր արձանի ջրհորն ընկնե-

լուց, որ հրապարակի շուրջը գտնուող տասն ընտանիքից չորսի մէջ վեց-եօթ սպանուած, չորս-հինգ վիրաւորներ էին հաշւում։

Բայց արձանը դեռ ջրհորումն էր, իսկ ճիչն ու լացը, ողբն ու կականը տիրել էր քաղաքին, օդի մէջ ձգել չտա ընտանիքներ։

—

Մինչ այդ, մի խումբ երիտասարդներ, ժողովուած ջրհորի եզերքին, մտածեցին արձանը դուրս հանել և նորից իր տեղը կանգնեցնել։

— Իսկ ո՞վ կարող է այդ ծանր բանը ջրհորից վեր հանել առանց փշրելու, գոչեց մէկը։

Փորձեցին նախ կառչող ունելիներ նետել, բայց արձանը իր ծանրութեամբ իջել էր ջրհորի տակ և դեռ կիսովին էլ խրուել հողի մէջ։

Մնում էր մի մարդ ներս կախել, արձանը գտնել, չուաններով կապել և ապա փորձել վեր հանելու։

Երկար խորհելուց յետոյ՝ մէկն իջաւ։ Ջրհորը խոր էր, ջրով էլ լի։ Երիտասարդը իջաւ, ջրի մէջ ընկղմեց, բայց հազիւ խեղդուելուց ազատուած՝ խնդրեց որ իրան վեր քաշեն։ Ջուրը սառն էր, գորտերով իբր թէ լի և արձանը շատ խոր, անմատչելի։

Մտաւ մի ուրիշը—աւելի յանդուգը։ Գնաց ջրի մէջ, հասաւ յատակին, շօշափեց, բայց արձանի նշոյլ անգամ չ՚տեսնելով՝ ետ եկաւ։

— Կորսուած է, արձանը չկայ։

— Կորսուա՜ծ է!

— Ի՞նչ սոսկում էր, որ պատճառեց այդ լուրը քաղաքին։ Բանն այն է, որ մերկ կնոջ անհետանալով՝ գժտութիւն սկսեց ժողովրդեան մէջ. ամբողջ քաղաքը սկսեց իրար անցնել. մարդիկ միմիանց վրա քայլեցին, իրար հարուածեցին. հայհոյանք, կռիւ, արիւն և չարիք...

— Արձանը պիտի գտնել, երևա՛ն հանել... մտածեցին խելօքները։ Երիտասարդները նորից փորձեցին, վիճեցին, վիճեցին, հանելու կերպի վրա երկուացան, կուսակցութիւններ կազմեցին, ապա, արձանի հանելու նպատակը երկրորդ պլանի վրա անցաւ և տեղի տուաւ անձնական հաշիւների, և այդպէս մինչև այժմ էլ նոքա վիճում են, միմիանց դէմ ելնում, միմիանց անգօսնում...

Վերջապէս հետզհետէ բոլորը ձանձրացան և մի առ մի հեռացան ոչ միայն ջրհորից, այլ և արձանի մասին մտածելուց։

Արձանը մնաց թաղուած ջրհորի յատակում, չարիքները մնացին մարդկանց սրտերում և քաղաքը դարձաւ ապականու-

Թեան մի այնպիսի վայր, ուր մարդիկ վարժւում էին միմիանց դէմ դաւեր լարելու, միմիանց ոչնչացնելու, եղբայր եղբօր դէմ, որդին իր հօրը, կինն իր ամուսնուն՝ ճգնում էին դաւել, խարդախել։ Այժմ ամէն ոք, բնականաբար սաստիկ եսասէր եղած, սաստիկ ինքնամօլ, սաստիկ աղտոտ հոգով և աղտոտ սրտով՝ իր շուրջը աւեր էր սփռում անձը պահպանելու համար, թշուառութիւն էր սերմանում՝ ինքը երջանիկ լինելու համար և սակայն ամէն ոք անապահով էր, աւազի վրա կանգնած և ապերջանիկ էր, ամէն ժամ վրդովուած, լալուած ջղերով, յոգնած ուղեղով...

Արձանի մասին վաղուց արդէն շատերը մոռացել էին. Նորանից մնացել էր միայն ժանգոտ պատուանդանը։ Ջրհորն էլ, թողած անխնամ, համարուելով փչացած, թունաւոր, ճահիճ էր դարձել նախ, գորտերով լեցուել, ապա չորացել և հուսկ արիւն աղբակոյտ եղել։

Մնում էր միայն կաղնին, այդ հին կաղնին, այժմ ծերացած և ճղակոտոր...

III.

Այդպէս անցել էր երկար տարիներ, երբ մի օր յանկարծ, մի տարօրինակ բան կատարուեց քաղաքում։

Հեռու, քաղաքի վերջին ծայրում ամէնքից ատուած, ամէնքից կասկածաւոր նկատուած ընտանիք կար. մի ծերունի, որի անցեալը ոչ ոք չ՚գիտէր, մի լուիկ պառաւ և երեք որդիք-կրտրիճ տղամարդիկ, որոնք յայտնի էին քաղաքին որպէս մաքսանենգ որսորդներ, տարօրինակ նիստ ու կացով, գրեթէ անտառների մէջ մեծացած, դաժան ու լուռ, «կոպիտ և վայրենի» մարդիկ։

Ոչ ոք նոցա հետ յարաբերութիւն ունենալ չէր կամենում. ճանապարհին նոցա հանդիպողը վախեցած՝ կամ երես էր դարձնում և կամ թէ փախչում։

Բանն այն է, որ այդ նոյն իսկ ընտանիքը, մի օր յանկարծ խմբովին քաղաք մտաւ, եկաւ վարձելու հրապարակի մօտ գտնւող մի խղճուկ խրճիթ և բնակութիւն հաստատեց այնտեղ։

Երեք որսորդները անտառից եկան. նոր բնակարանում հաստատուելուց յետոյ, այլ ևս որսի չէին գնում, այլ ընդհակառակն, իրենց ծնողների հետ կաղնու մօտ էին ժողովւում, խօսում էին մեղմ ձայնով, բայց երկար և տաք, ապա արձանի պատուանդանը զննում, ջրհորի շուրջը պտտում և նորից լուռ տուն մտնում, դուռը ետևից պինդ փակում։

Բնականաբար քաղաքացիք սկսեցին սաստիկ հետաքրքրուել այդ տարօրինակ երևոյթով։ Նախ հեռուից, ապա գաղտագողի, գիշերները, մօտենալով նրանց խրճիթի փակուած լուսամուտին,

աշխատում էին տեսնել, թէ ի՛նչով էին զբաղուած նոքա։ Երբեմըն, այդ լրտեսողները տեսնում էին խրճիթի մէջ մեծ կրակ վառուած, լսում էին մուրճի և սալի ձայն... և բոլորը այդ էր։

—

Բայց մի առաւօտ, արշալոյսը բացուելուն պէս, հրապարակի շուրջն եղողները խորին ապշութեամբ տեսան, թէ ինչպէս խրճիթի դուռը բացուեց, նախ դուրս եկան իրարու ետևից երեք եղբայրները՝ բահեր ուսերին, կացին ձեռքերին, յետոյ մայրը, ուտելիք առած և ապա հայրը՝ մուրճ և ունելիքով...

Եւ այդ թափորը լուռ դիմեց դէպի ջրհորը։

Քաղաքն իրար անցաւ։ Ի՞նչ, մի՞թէ այդ խենթերը ուզում էին արձանը վեր հանել։

Գայլերը նորից սկսեցին ոռնալ. բարոյագէտները, որոնք այժմ հաստափոր, ուռած խոզեր էին դարձել, աղմուկ հանեցին, պառաւները սկսեցին անէծք տեղալ, եզուիտները՝ բանադրանք...

—Մի՛ թողնէք, գոռում էին գայլերը—մի՛ թողնէք արձանը հանելու։

—Սպանեցէք այդ անբարոյականներին—ասում էին բարոյագէտները—դոքա ուզում են նորից այն մերկ կնոջը անամօթաբար՝ հրապարակի վրա դնել։

Բայց եղբայրները անվրդով ջրհորի մօտ կանգ առան և սկսեցին փորել։ Հայրը բահերն էր սրում, մայրը քաջալերում։

Մինչև երեկոյ երեք եղբայրները, առանց կանգ առնելու, դուրս տուին քաղաքացոց կուտած աղբն ու ցեխը, ջրհորը երեւան հանեցին, ապա սկսեցին պեղել։

Երեկոյեան, մթնելուն պէս, նոյն կարգով տուն մտան. գիշերը նորից լսուեցին մուրճի ձայներ և քաղաքացիք միւս օրը նորից տեսան նոցա ջրհորի մօտ։

Եւ այդ տևեց երկար օրեր, շաբաթներ, ամիսներ, մինչև որ եղբայրները դուրս տուին ջրհորից ամէն ապականութիւն և յատակին հասան։

Սակայն արձանը դեռ չէր երևում։ Տիղմը քարացել, գետինն ամրացել, արձանին իր մէջ շատ պինդ էր պահել։

Այդ բոլորը դեռ ոչինչ, եթէ դրսից էլ արգելքներ չլինէին։ Գայլեր, բարոյագէտներ, փչացած մարդիկ, կեղտի մէջ իրենց աւելի հանգիստ զգացող անձեր՝ աշխատում էին միշտ արգելք լինել։ Երբեմն, գիշերով, աղբով լցնում էին երիտասարդների փորածը, երբեմն դրսից քարեր էին շպրտել տալիս նոցա վրա և միշտ էլ ծաղր կարկտում նոցա գլխին։

Եղբայրներից մեծը սկսում էր ընկճուել այդ բոլորից. բազուկները թուլանում էին, բահը ձեռքի մէջ դողում. միջնակը, որ դիւրաբորբոք էր, սկսել էր զայրանալ արգելքների դէմ. հալածողների մշտատև լուտանքներից գրգռուած՝ կռիւ էր ելնում

նոցա դէմ, քարերին՝ քարով պատասխանում, ժամանակ կորցնում, գործը մոռանում։

Մնում էր կրասերը։ Սա էր միայն, որ հանդարտ, գլուխը կախ ձգած՝ բահում էր միշտ։ Ո՛չ տիղմի ամրութեան դէմ յուսահատւում էր, ո՛չ լուտանքները լսելու գնում և ոչ իսկ իր վրա տեղացող քարերի կամ ծաղրի դէմ պաշտպանւում։

Փորում էր նա, պեղում, անընդհատ և տոկունութեամբ։ Եւ այնքան փորեց, այնքան սառնարիւն իր գործին նայեց, որ վերջապէս արձանը երևան հանեց կարծր տիղմի տակից, շուրջը լաւ մաքրեց և ջանաց տեղից շարժել։

—

Արձանն այժմ գտնուած էր, մնում էր վեր հանել, տանել պատուանդանի մօտ և այնտեղ կանգնեցնել իր բոլոր մերկութեամբ։

Մեծ եղբայրը հաշմուած, գործին անընդունակ էր դարձել. միջնակը հալածողների դէմ կռուի մէջ ընկել, հայրը ծերացած՝ բահն իսկ սրել չէր կարողանում և մայրը յոգնած՝ ձայնը սպառած, այլ ևս խրախուսական խօսքեր չէր անում...

Մենակ, այժմ բոլորովին մենակ էր մնացել կրասեր եղբայրը. մի՞թէ պիտի յաջողուէր միակ իր ոյժով արձանը վեր հանել...

Եւ նա չը կասեց։ Շարժեց, հողից ազատեց, մէջքը դէմ տուաւ, մկանունքը ձգեց, արձանը շալակեց և սկսեց ջրհորն ՚ի վեր ելնել։

Քաղաքն ամբողջ այժմ ժողովուած՝ նայում էր նրան։ Ամէնքն այժմ սառել էին, ապշել. գայլերը իրենց ոռնոցը կտրել, բարոյագէտները չէին համարձակւում ձայն հանել։ Կամքի մեծ ոյժը եթէ չէր յաղթել, գոնէ լռեցնում էր, հալածողներին պատկառելի հեռաւորութեան վրա պահում։

—Ահա շալակեց... բարձրանում է !... հետեւում էին երիտասարդի արածին—ոտը առաջին աստիճանի վրա դրեց... բերում է !...

Լուռ, ամբողջապէս ոյժը կենտրոնացրած, քրտնաթոր, արձանը մէջքին, ոտները հաստատուն և ծանր դնելով, գլուխը կախ և առանց ոչ ոքի նայելու, երիտասարդը բարձրանում էր յամրաբար, բայց ամրապէս բարձրանում...

Ահա այժմ նա չորս աստիճանի վրա է։ Քիչ կանգ է առնում շունչ քաշելու, քրտինքն է սրբում, հևում, փռնչում, և նորից ոտքը բարձրացնում։

Լուռ է ամբոխը, սոսկումով լեցուած. լուռ է քաղաքը, լուռ՝ բնութիւնն իսկ և այդ խորունկ լռութեան մէջ լսւում է միայն բարձրացողի շնչառութեան ձայնը, խռպոտ, ուժեղ ձայն, որ թանձրացած շնչառութեան հետ՝ դուրս է գալիս ջրհորի խորքից...

Եւ նա իջնում է։ Այժմ ամբոխը տեսնում է նրան դրսից ներս լցուած աղօտ լոյս մէջ, հին հսկաների նման մկանունքնե-րըն ու երակներն ուռած, կարմիր, շքեղ գլուխը ողողուած լոյ-սով, հանդարտ ելնում է ու ելնում։ Եւ մէջքի վրայի արձանը՝ փոփոխեցնում է մաքրուած թեւերն ու մարմինը...

Ամբոխը, արձանի երեւալու հետ՝ ետ ետ է քաշւում դող-դոջիւն, սրտատրոփ։

Եւ ամէնքը սպասում են։ Ահա երեւաց ելնողի գլուխը ար-ձանի մեծ գլխի հետ. յետոյ, երկու գլուխները միմեանց կը-պած, ծանր, յամրաբար գետնի տակից, ոգու պէս, բարձրա-նում են. ամբոխը հեռուից նայում է սոսկումով։

Այժմ արձանը լոյս աշխարհումն է և նրան իր ուսերի վը-րա կրողը յոգնած, աչքերը մթագնած, երակները պայթելու չափ ուռած, ծնկները դողում են, մէջքը ջարդուած է, բայց չէ կամենում բաց թողնել վեր հանած գանձը...

Եւ երբ վերջին աստիճանին հասած ոտքը դնում է գետ-նի վրա, ծալւում են ծնկները, երերում է հերոսը, արձանը բաց թողնում և ինքն էլ երեսի վրա՝ փռւում նրա կողքին...

Վազում է ամբոխը սոսկման ճիչով, վազում են բոլորը, հերոսին բարձրացնել աշխատում...

Բայց նա մեռել է. արձանը լոյս աշխարհ հանած, տեղ-մից ազատած, դրել է նա բարձրութեան վրա և մեռել նրա կողքին, ճմլուած նրա ծանրութեան տակ...

Մերկ կնոջ արձանը այժմ դրսումն է, հրապարակում։

Վ. Փափազեան

«Գարնանային երգ» նկար Հ. Ցացկայի։

## ՄՈՒՐԱՑԿԱՆ

(Նեկրասովից)

Իրիկուան պահուն, թէ վաղ առաւօտ
Որբեր ու այրիք՝ պարկերը մէջքին,
Գալիս կանգնում են լուսամուտի մօտ
Եւ ողորմութիւն հայցում լալագին։

Անճարութի՞ւնն է արդեօք խեղճերին,
Թէ յօժար կամքը դարձրել մուրացիկ.
Ո՜հ, ձեր վիճակը դառն է, ծանրագին,
Ո՛վ անօթեւան, կիսամերկ մարդիկ։

Կրճարուին կեանքում ձեզ միշտ մեղքացող,
Ջրմեռուայ ցրտին չէք մեռնիլ անտուն,
Բայց ցա՜ւ է տեսնել կեղտո՜ւմ մուրացո՜ղ,
Աստուծոյ ստեղծած բանական մարդուն։

Բայց, ա՜խ, առաւել և՛ խեղճ, և՛ թշուառ
Կայ ա՛յլ մուրացկան։ Նա հաց չէ մուրում՝
Դրանէ—դուռ ընկած, բայց հացի համար
Մաշում է կեանքը ծանր հոգսերում։

Աղտոտ հիւղի մէջ, չոր յարդն անկողին,
Քընում է հերոսն անել տանջանքում,
Ամո՜ւր է քարից՝ խոնջութեան ժամին,
Ամո՜ւր—պողպատից՝ հոգսի կապանքում։

Մինչ մահ նա վարում, մինչ մահ սերմանում,
Աւա՜ղ, արդիւնքն է սպառում սև կարիք.
Թըխպոտ երկինքն է նորա սուգն անում,
Նորա ցաւերն է երգում փոթորիկ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

## ՊԱՆԴ

(Ժողովրդական մոտիվներից)

—Որսկան ախբէր, սարէն կուգաս.
Սարի մարալ կ՚փնտռես.
Ասա, եարմը դու չ՚տեսար
Իմ մարալս, իմ բալէս.
Դարդի ձեռքէն սարերն ընկաւ
Իմ ծաղիկս, իմ բալէս.
Գլուխն առաւ, քարերն ընկաւ
Իմ մարալս, իմ բալէս։

—Տեսայ, քոյրիկ, աղիզ բալէդ
Կարմիր պսակ էր կապեր.
Սիրած եարի համբուրի տեղ
Սրտին վարդեր են ծլեր։

—Որսկան ախբէր, ասա, եարմը
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը
Իմ մարալիս, իմ լալիս։

—Տեսայ, քոյրիկ, նխշուն բալէդ
Քարն էր դրեր բարձի տեղ.
Անուշ քնով տաք գնդակն էր
Սրտում գրկեր եարի տեղ։
Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղկունքներն են վերան սգում
Աղիզ բալիդ, խեղճ լալիդ...

ԱՒ.. ԻՍԱՀԱԿԵԱՆ

## ԱՂՔԱՏԸ ԵՒ ԱՄԵՆԱԲԱՐԻ ԿԻՆԸ.

(Ժողովրդական մոտիւներից)

Զրքաւորի դրան չէմքին
Կանգնած էր մի մուրացկան՝
Վիզը ծռած, ցուպը ձեռին,
Գունատ, ինչպէս ուրուական։

Արտասուագին աղերսանքով
Ողորմութիւն էր հայցում
Եւ Քրիստոսի սուրբ անունով
Տիրոջ օջախըն օրհնում։

Կարծես յանկարծ ծագեց արև
Կամ մի աստղիկ երկնային,
Երբ երևաց նըրա առջև
Այն խըրճիթի տիրուհին։

Հագած էր նա պարզ ու ճերմակ,
Առանց արդ ու զարդերի,
Բայց երեսը լոյս էր խտակ,
Բոյը—նման չինարի։

Պարկեշտ, համեստ և ամօթխած,
Աչքերն յառած յատակին՝
Մի պահ լռեց, յետոյ ասաց
Աստուածառաք իր հիւրին.

«Բայց ինչ տամ քեզ, խեղճ և թշուառ.
Եղբա՛յր, վըկա՛յ է Աստուած,
Տանըս նոյն իսկ դեղի համար
Չը կայ փարայ և ոչ հաց»։

—Գէթ մի համբո՛յր,—անհամարձակ
Խօսեց նա,—ա՛խ, քուրիկ ջան,
Թո՛ղ գէթ մի օր, հացի տեղակ,
Մարդու սիրով կըշտանամ...

Եւ, ո՛հ զարմանք, գըթոտ սըրտով
Նա իր այտը դէմ արաւ,
Եւ աղքատը, համբուրելով,
Այդ օր սիրով յագեցաւ։

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ

# *Օտար գրականութիւնից:*

## ՆՈՐ ՏԱՐԻ

(*Զանազան ձայներ*)

Է. ԴԷ ԱՄԻՉԻՍԻ։

**Ծերունի.** *Նոր տարի է։ Այսօր երիտասարդները ժպտալով նայում են ապագային, ինչպէս ուղևորը լեռան բարձրութիւնից իր առաջ բացւող հորիզոնին.—և տե՛ս նրանք ողջունում են արդէն նոր տարուն։ Իսկ ես մտքով փախչում եմ այն դարից, որի չէմքին, գիտեմ, ինձ սպասում է մահը։ Ինձ ինչ փոյթ, երբ ես համոզուած եմ, որ բոլոր գիւտերը, մարդկային հանճարի բոլոր մեծամեծ արդիւնքները և բոլոր զարմանալի գործերը, որոնք այդ դարի ընթացքում կը կերպարանափոխեն ամբողջ աշխարհի պատկերը, ինձ համար կլինեն իբրև չեղած։ Գիտեմ միայն, որ նորածին տարին աւելի ես կնսեմացնէ իմ տեսողութիւնը և յիշողութիւնը, կծալէ ծնկներս, կխոնարհէ գլուխս և կպոկէ կտանի իմ երևակայութեան չորացած ծառի թօշնած տերևները։*

*Երիտասարդներին նա պատկերանում է իբրև դիւթական արքայ, իսկ ինձ—իբրև մռայլ բանտապետ։ Ես նրանից չեմ սպասում և ո՛չ մի բարիք.—ես վախենում եմ նրա մահացու հարուածից։ Եւ եթէ նրան վիճակուած է ինձ հասցնել այդ հարուածը, ես նրանից կխնդրեմ միայն մի ողորմութիւն.—տալ ինձ մի հարուած, լաւ ուղղուած, որ ինձ տապալէր գետին այնպէս, ինչպէս գնդակը դինւորին ճակատամարտի մէջ։ Եւ եթէ դու իմ հաշիւս այդպէս կվերջացնես, արի, ով նոր տարի, որ ես էլ քո հանդէսը կատարեմ։ Եւ թող ննջեմ ես և իմ դարը, որ չտեսնեմ ապագայ դարի չարագուշակ պատկերը։*

**Տասնեւհինգ տարեկան օրիորդ.** *Ողջո՛յն քեզ, նոր տարի։ Զգում եմ, որ դու կլինիս ինձ համար այն ժամանակը, երբ «աղջկայ սրտին տիրում է»—ինչպէս ասած է «Նշանածների» մէջ (միակ վէպը, որ ինձ թոյլ են տալիս կարդալու),—այն խորհրդաւոր ոյժը, որ աճեցնում, գեղեցկացնում և հաստատում է բոլոր հակումներն ու մտածութիւնները։ Դու ինձ կտաս այն դիւթական համբոյրը, որից իմ հոգին կզարթնի կեանք վարելու. իմ գեղեցկութիւնը կծաղկի, ինչպէս վարդն արևի ճառագայթների տակ, և որն առաջին անգամ դէպի ինձ կհրաւիրէ ուշադիր հայեացք, սիրաուն ժպիտ և քաղցր խոհեր։ Արի. լրացրո՛ւ բնութեան գործը։*

*Սրտատրոփ սպասում եմ քեզ, ինչպէս որ մի թերի արձան սպասում է արուեստագէտին, որ իրան պարգևէ լրութիւն և կատարելութիւն։ Ամեն մի օր հետզհետէ աւելի ու աւելի հաճելի պիտի լինի ինձ հայելին, և աւելի ու աւելի հպարտութեամբ պիտի փայլէ իմ ծնողների հայեացքը։ Դու այժմ հանդիպում ես մի տհաս աղջկայ և հրաժեշտ կտաս նորահաս օրիորդի։ Եւ, կարելի է, այն քղամիտի տակ, որ ձգում են քո ուսերին արուեստագէտները, դու պահում ես ոսկեայ մատանի, որով մահիցդ առաջ կը զարդարես իմ մատը։*

*Եւ եթէ այդպէս լինի, ինձ համար նոր դարը կսկսուի քեզանով, և քո բոլոր եղբայրների մէջ, որոնք երկրի վրա կսահեն իմ առաջից, դու կմնաս ամենագեղեցիկն իմ յիշողութեան մէջ և ամենաթանկագինն իմ սրտի համար։*

**Երեսուն տարեկան օրիորդ։** *Մի տարի էլ անցաւ. մի ծաղիկ էլ ընկաւ իմ երիտասարդութեան տուն-*

կից, մի թռչնիկ էլ թռաւ իմ յոյսերի բոյնից... Ի՞նչ արժէ սիրտը, թէկուզ սիրով լցուած սիրտը, եթէ նա չէ փայլում ոսկեշող ճառագայթներով: Տղամարդն անց է կենում նրա մօտով՝ չնկատելով նրան: Նա աչքերով չէ տեսնում այն ներքին արժանիքները, որոնք կարող էին երջանկացնել նրան: Նա տեսնում է միայն շլացուցիչ գեղեցկութիւնը, որ խոստանում է նրան մի-երկու տարուայ արբեցութիւն. Նա տեսնում է միայն հարստութիւնը, որ ազատում է նրան գոյութեան կռուից և հարթում է նրա փառասիրութեան ճանապարհը:

Իսկ իմ երիտասարդութիւնս թառամում է առանց սիրոյ, առանց խնդութեան, հլու և թախծալի ակնկալութեան մէջ, որ տխրեցնում է նրանց, որոնք ինձ սիրում են, և ծածուկ թունաւորում է իմ հպարտութիւնը: Այսպէս կանցնիս դու էլ, ո՜վ Նոր տարի, և ոչ մի ձեռք չի որոնիլ իմը. և սիրոյ անվերջ շշուկների մէջ, որոնցով լի է աշխարհը, ոչ մէկը չի արտասանիլ իմ անունը, որ ասէր ինձ, թէ ես իզուր աշխարհ չեմ եկել և որ մայրութեան պսակն Աստծուց ուղարկուած է աշխարհիս վրա զարդարելու և իմ ճակատը: Եւ ահա իմ առաջ կանգնած է էլի մի տարի՝ խաւար ու ցուրտ, ինչպէս տասներկու ամսուայ ձմեռ: Ա՜խ, կարելի է, արդէն սլացաւ՝ հեռու անցաւ մարդկանց այն հոսանքը, որի մէջ էր ինձ կանչող սիրտը. և այս—անողոք ճակատագրի կամքն էր, որ ես կեանքի մէջ միմիայն հանդիսատես լինէի: Անցի՛ր, ուրեմն, Նոր տարի: Ես խոնարհում եմ գլուխս և այլեւս ոչինչ չեմ սպասում: Թող կատարուի ճակատագիրս:

**Երիտասարդ**: Ողջո՜յն քեզ, Նոր տարուայ անդրանիկ օր: Ի՞նչ պատգամ ես տալիս ինձ, խորհրդաւոր Նորեկ: Նոր տարուայ մէջ կգտնե՞մ այն կնոջը, որին փնտրում եմ, և ո՞վ կլինի նա... Արդեօք նա՞, որ կտիրէ իմ սրտին ընդմիշտ և կտայ ինձ ընտանիք և անդորր կեանք. թէ՞ նա, որ կյափշտակէ ինձ բուռն զգացմունքով, կարճատև տենդային սիրով և կթողնի ինձ կոտրուած սրտով և թունաւորուած հոգով: Այսպէս թէ այնպէս, սիրտս ինձ ասում է, որ քո ուրուականի յետեւից, ո՜վ Նոր տարի, գալիս է դէպի ինձ մի կին. ուրախութեան և տարակոյսի մի խառն զգացմունք նախազգուշացնում է ինձ, որ նա որոնում է և մօտենում ինձ, որ ամեն օր մենք կարող ենք իրար հանդիպել երես առ երես և որ հէնց առաջին հայեացքը մեզ կըմօտեցնէ իրար: Ինձ թւում է, որ իմ շնչած օդը լի է նրա շնչով և ամեն մի թեթև շշուկի մէջ ես զգում եմ նրա զգեստի շրշիւնը: Օ՜, եթէ ես կարողանայի մտքի թռիչքով թափանցել օրերի և ամիսների ծածկոյթը, որ, կարելի է, դեռ պիտի անցնեին, և տեսնէի նրան հէնց այժմ: Քո անունն արտասանելիս, ո՜վ Նոր տարի, ես անորոշ լսում եմ կանացի մի ձայն, որի վանկերը դեռ խուսափում են ինձանից և ես լսում եմ իմ բաղդի զանգի հարուածները: Ցոյց տուր ինձ շուտով իմ ընկերուհուն:

**Ծերունի մուրացկանը**: Նոր տարի է: Արդեօք այս տարի էլ բաղդս կբերէ՞: Անցեալ տարի մի հարբած մարդ գինետնից դուրս գալիս ինձ մի ոսկի տուեց: Բայց սա մի այնպիսի բաղդ է, որ վիճակւում է իւրաքանչիւրին տաս տարին մի անգամ: Ես նոր տարուց շատ բան չեմ սպասում, Ամեն բան դէպի վատն է գնում: Այս ձիաքարշները, որ սպառում են մարդկանց մանր փողերը. այս ժողովրդական ճաշարանները, բարեգործական ապաստանները ու աղքատութեան դէմ կռւող ընկերութիւնները—աւելի և աւելի վատացնում են մեր արհեստը: Գոնէ այս տարի էլի մի նոր բան չ'հնարէին: Ա՜խ, ինչ երկար է թւում մեզ տարին: Մինչև տարին վերջանայ, ո՞րքան դռներ կ'փակուին իմ երեսին, ո՞րքան յանդուգն խօսքեր կ'լսեմ դռնապաններից. ո՞րքան անգամ ,,գնա՛ աշխատի՛ր'' կասեն ինձ ան-

պլատանները և քանի քանի մարդիկ կանցնեն իմ մօտով առանց երեսս նայելու: Եւ նորից ցուրտ, դարձեալ անձրև, նորից շոգ, էլի անձրև և դարձեալ ցուրտ.. ու քարասիրտ մարդիկ ամեն ժամանակ: Կանայք քաղցաւոր են. նրանք մուրում են երեխայ գրկած: Երանի,թէ այս տարին բերէր ինձ համար այն տկարութիւններից մէկը, որոնք մեծ անհանգստութիւն չեն պատճառում, բայց զարթեցնում են մեծ կարեկցութիւն: Սակայն ոչ. այդ բաղդն ինձ չէ տուած: Բայց չէ՞ որ շատ քիչ բան եմ խնդրում Նոր տարուց:

**Երիտասարդ կին:** Յունուարի 1-ն է: Այս—տարի կլինի քո ծննդեան տարին, իմ անգին զաւակ, և շատ կարելի է նախ քան նրա վերջանալը ես կլսեմ, ինչպէս դու ինձ կըկանչես մարդկային լեզուի ամենաքաղցր անունով: Սա մի տարի է, որի թիւը անջնջելի կերպով կըդրա սաւորուի իմ յիշողութեան մէջ, իմ սրտում՝ քո անուան հետ միասին, իմ կաթոգին զաւակ: Այս տասներկու ամսուայ մէջ, կարելի է, երկրիս վրա կատարուեն ամենազարմանալի իրողութիւններ, որոնց մասին երբ և իցէ գրուած է պատմութեան մէջ. բայց ինձ համար ոչ մի դէպք չէ կարող լինել աւելի մեծ և հանդիսաւոր, քան քո առաջին ճիչը, որով դու կյայտնես քո աշխարհ գալը: Ողջո՜յն քեզ, Նո՛ր տարի, իմ երիտասարդական թեթևամտութեան վերջին և իմ գործունեայ ու բեղմնաւոր թագաւորութեան առաջին տարին:

Եղիր մարդկանց համար խաղաղութեան տարի, ինչպէս իմ տան համար՝ ուրախութեան: Եւ թող իմ ուրախութիւնը թունաւորուի հազար ու մի հոգսերով, միայն թէ ապրի և զօրանայ իմ զաւակը: Օրհնում եմ ձեզ, անքուն գիշերներ, անվերջ հոգսեր. օրհնում եմ ձեզ երկիւղի, ցաւի և տագնապի ժամեր: Յափշտակիր ինձանից իմ գեղեցկութիւնը, երիտասարդութիւնը—միայն թէ զաւակս մնայ ինձ հետ և ժպիտն երեսին փարուի իմ կրծքին: Այս նոր տարին քո տարին է, իմ մարմինն ու արիւնը, կեանքիս լոյսը, սիրոյս պսակը. երջանիկ տարի եմ ցանկանում քեզ, իմ խորհրդաւոր հրեշտակ, ո՛, իմ հոգուս հատոր... իմ անգին...

**Աստղաբաշխ:** (Զարթնելով ժամը 7-ին և նայելով ժամացոյցին): Երկիրն անցաւ իր նոր ձուածիր շաւիղով աւելի քան 750 հազար կիլօմետր, և նոր տարում արդէն մեռաւ մօտ 30 հազար մարդ: Մի տարի: Ի՞նչ է մի տարին: Աւելի պակաս, քան թէ մի ակնթարթ մարդկային կեանքի մէջ. ինչպէս և մարդու պատմութիւնը նա ոչինչ չէ, եթէ ոչ ժամանակի ահագին ովկիանոսի մէջ մի փոքրիկ ալիք: Մի տարի: Մէկհինգմիլիօներորդական մասն այն ժամանակի, որ հարկաւոր է լոյսին անցնելու յարդգողի ճանապարհի և այն միլիօնաւոր աշխարհներից մէկի մէջ եղած տարածութիւնը, որոնք մեզ թւում են իբրև պսպղուն փոշի երկնակամարի մոյգ կապուտակութեան մէջ: Այն ինչ այսօր կատարւում է նոր տարուայ տօնախմբութիւնը: Այդ ինչ տօն էք կատարում, ո՛վ խղճուկ ատոմներ, որ կպած էք անհունութեան մէջ թաւալւող աւազի հատիկին. մանրէների մի խղճուկ ցեղ՝ լի սնափառութեամբ, որ դեռ երէկ երևան եկաւ դալաւոր հողագնդի վրա, և որ վաղը դատապարտուած է տեղի տալու ուրիշ կենդանի էակների: Եւ, խոնարհուելով նրանց առաջ, դուք չէք թողնիլ աշխարհում ոչ մի հետք. իսկ եթէ թողնէք էլ, այդ միայն նրա համար կլինի, որ ձեր յետնորդները յիշեն ձեզ մի տեսակ խղճահարութեան և ամօթի զգացմունքով, ինչպէս մենք այժմ յիշում ենք մարդկային ցեղի առաջին անկատար և կոպիտ ձևերը:

**Գրականագէտ:** Գալիս ես՝ արի. Նոր տարի: Ես քեզ նայում եմ այնպէս, ինչպէս նայում են մի անյայտ անցորդի, որ չէ զարթեցնում ոչ մի հետաքրքրութիւն—թէ ո՛վ է նա, որտեղից է գալիս կամ ո՛ւր է գնում: Ես ոչ մի յոյս չունեմ. քեզանից ոչինչ չեմ սպասում. ես ոչ մի ցան-

կութիւն չունեմ, որ կարողանայի ասել: Քո գարունն ինձ համար կլինի նոյնպէս սառն և ցուրտ, ինչպէս և քո ձմեռը. քո ամառը նոյնպէս դժգոյն ու թախծալի, ինչպէս քո աշունը: Ո՛չ դու և ո՛չ էլ քո եղբայրները, որոնք պիտի քեզ յաջորդեն, ոյժ չեն ունենայ թուլացնել իմ հոգու ձգտումը դէպի գերեզման, որին նա պաշտում է: Դու դեռ կարող ես ինձ նուէր բերել այն ուրախութիւններից մէկը, որոնց ես մի ժամանակ համարում էի կեանքի վայելչութիւն. դու նոյնիսկ կարող ես ձգել նրան իմ ոտքերի առաջ—ես չեմ վերցնի: Քո մանգաղի ծայրով դեռ կարող ես փորձել—արդեօք չի՞ մնում իմ վրա որ և է անխոց տեղ՝ սնափառութեան, հպարտութեան կամ ակընկալութեան մտքով, որ դու կարողանաս վիրաւորել. բայց դու ամեն կողմից կզգաս անթափանց զրահի կարծրութիւնը: Դու կարող ես ակօսել իմ ճակատը կնճիռներով, մաշել իմ նկարգիրը, կորցնել իմ ոյժերը. բայց դու չես կարող իմ սրտից դուրս քաշել ափսոսանքի հառաչանք: Քո ամեն մի ժամը կարող է ասել,—ահա ես. տուր քո վերջին բարևը. Եւ իմ շրթունքներից ուրիշ բան չի դուրս գայ, եթէ ոչ—պատրաստ եմ: Իսկ այժմ գնա՛, խոստացի՛ր, վշտացրո՛ւ, մխիթարի՛ր, ցանի՛ր, աճեցրո՛ւ, սպանի՛ր և ծընեցրո՛ւ. ձևափոխի՛ր և կործանի՛ր: Այսօր միլիոնաւոր մարդիկ խընդրում են քեզանից ողորմութիւն և երջանկութիւն՝ բարձրացնելով իրանց բաժակը: Իսկ ես փշրում եմ իմը:

## ՎԱՐԴԻ ՍԷՐԸ:

*Արձակ բանաստեղծութիւն Ս. Սուխօտինի:*

Վաղ առաւօտեան արևի ճառագայթներն էին զարթեցնում նրան, արեգակի վերջին հայեացքով քուն էր մտնում նա երեկոները:

Սոխակն իր երգերով քաղցր քուն էր դնում նրան, լուսինը փայփայում էր իր ճառագայթներով, լուսադիմի ցօղը զովացնում էր նրան իր խոնաւութեամբ...

Նա վարդն էր, ծաղիկների թագուհին..

Սքանչելի՝ ինչպէս ցնորք, թարմ՝ որպէս գարնանային առաւօտ, ջինջ՝ ինչպէս մանկական հոգին, քնքոյշ, ինչպէս առաջին սէր...

Նրա բարձրիկ ցողունի ծայրին բացուել էր թաւշեայ ծաղիկը, նա դէպի իրեն էր գրաւում հայեացքները, ինչպէս մատաղ գեղեցկուհու դէմքը այն րոպէին, երբ նրա դըժգոյն այտերը ծածկւում են ամօթխածութեան և երջանկութեան վարդագոյն կարմրութեամբ, երբ առաջին անգամ ասում է իր սիրելուն—„սիրում եմ“...

Նա թագուհին է ծաղիկների և իշխում է իր դէմքի գեղեցկութեամբ ու անուշաբոյր հոտով: Նրա գլխիկըն ամենասքանչելին է ծաղիկների մէջ, բոյրն ամենաքաղցրը բոլոր բոյսերի մէջ, իսկ երկուսի միացումը դարձրել են նրան ամբողջ բուսական աշխարհի թագուհին, ամենահրաշալին գեղեցիկների մէջ, առաջինը հրճուանքի բոլոր առարկաների մէջ:

Նրան գուրգուրում էր արեգակն իր տաքիկ ճառագայթներով, մեղմիկ անձրևն էր զովացնում նրա թերթիկները, քամին շոյում էր ու ցամաքեցնում, և մեղուները թըռչում էին նրա մօտ հաղորդելու պարտիզի նորութիւնները...

Նարգիսն ու մեխակը, շուշանն ու յակինթը սքանչանում էին նրանով, նախանձում էին նրա գեղեցկութեանն ու անուշ բոյրին. արժանանալ նրա սիրուն աշխատում էին ամենքը ..

Բայց ծաղիկների թագուհին սառն էր...

Նախանձով նայում էր պատա-

տուկը միւս ծաղիկներին—նա նոյնպէս սիրում էր վարդին, բայց չէր վստահանում յուսալ—այն գեղեցիկները յաջողութիւն չէին գտնում, իսկ ինքը։

Ի՞նչ է որ ինքը։

Յանկարծ այգում լուր տարածուեց —թագուհու սիրտը շարժուել է։ Նա սիրում է...

Ո՞վ արդեօք, ո՞վ է այն բաղդաւոր ընտրեալը։

Վարդի թերթիկները վառուեցին ալ կարմիր կրակով, նա խոնարհեցրեց գլուխը պատատուկին, և սա հասկացաւ, որ երջանիկ է ինքը, որ ծաղիկների թագուհու սէրը իրեն է բաժին ընկել...։ Արագ խոնարհեցրեց դէպի նա իր թերթիկները, գրկեց նրա իրանը ցանցապատ կանաչով և այն վայրկենին, երբ պատատուկը փաթաթուեց նրան՝ վարդի բարձր ցօղունի վրա բացուեց վառվռուն ծիրանի ծաղիկը...

Երբ լսում է, որ մի կին կամ աղջիկ սիրելի է մէկին, կամ թէ սիրում են նրան, յաճախ հարցնում են՝ ինչո՞ւ համար, ո՞րտեղից առաջ եկաւ այդ սէրը։ Պատասխանը դըժուար է. անհնարին...

Սէրը մի որ և է բանի համար չէ առաջ գալիս։ Այդ ոչ թէ քըրիստոնէական, եղբայրական սէրն է, այլ սէր ամեն ինչ կլանող, եռական սէր, սէր—տէր եւ իշխող, հոգու իշխան, կամքի հրամայող, սէր—սկիզբ ու վերջ։

Նրան ոչինչ չէ ծնում և ոչ մի բան չէ կարող մեռցնել։

Ազատ, ինչպէս ծովային գուալիք, ինչպէս անապատների հուժկու մրրիկ—նա ծնւում է ինքնիրեն, իշխում է, ինչպէս անսահման բռնակալ և մեռնում է... ինքը իր մէջ կլանուելով... Նա ուժեղ է տարերքներից—նրան չկայ ոչ մի սահման ..

Նա թագաւորում է, որովհետև եկել է թագաւորելու, և այդ թագաւորութիւնը տեւում է քանի չէ դադարել կեանքը։

Ուրախութիւն, թէ վիշտ է այդ թագաւորութիւնը—նա չգիտէ։

Առանց դադարելու նա թագաւորում է աշխարհիս վրա, իբրև աղբիւր վշտի և ուրախութեան և ամեն ինչ լինում է յանուն նրա, կամ նրա համար...

Թագուհու գլուխը զարդարող թագը—կիրքն է. և, քանի նա իշխում է երկրի վրա—չկայ և չի լինի մարդկանց համար ոչ խաղաղութիւն, ոչ եղբայրութիւն, ոչ ազատութիւն...

Եւ ոչ ոք չգիտէ, նոյն իսկ ինքը վարդը, թէ ինչու նա սիրեց պատատուկին ..

Իսկ նա փաթաթւում էր նրան իր սողացող ճիւղերով ծածկում էր խանդոտ հայեացքներից...

Նա կամենում էր միայնակ հրճուել ..

Նա վառւում էր նախանձով դէպի սուլացող քամին, որ շնկշնկացնում էր նազելու թերթիկները, դէպի արևը, որ գգւում էր նրան իր քնքոյշ ճառագայթներով, դէպի լուսինը, որ դիտում էր նրան մելամաղձոտ հայեացքով... Աւելի ու աւելի խիտ ծածկեց պատատուկը նրան իր լայն տերևներով, ամբողջապէս գրկեց նրան, ծածկեց նըրան ցրտից ու քամուց, բայց և լոյսից, ինքը միայն տեսաւ նրան, միայնակ իշխեց նրա վրա...։

. . . . . . . . . . . . . . .

Առանց լոյսի ու ջերմութեան թափուեցին վարդի թերթիկները, թափուեցին ցօղունները, կծղեց ճղնիկը, և մեռաւ նա պատատուկի խիտ ու քնքոյշ ստուերի տակ...

Եկաւ նոր գարուն. պատատուկը իր լայն թերթիկներով ապահաբար փաթաթուեց հօր կաղնու բնին, բարձրանալով միշտ վեր ու վեր...

Իսկ դժբաղդ վարդը չորացաւ, պարտիզպանը կտրեց նրան արմատից և այնտեղ, ուր նա ծաղկել էր, սևին էր տալիս միայն փոքրիկ կոճղիկը...

Թ.ԱՐԴ. Բ. Ս.

# ՍԱՏԱՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Պատմուածք Մ. Գօրկիի

Այս ամենը պատահել է Մկրտութեան նախընթաց գիշերը։

Հալհլոց էր. կաթնագոյն թանձր մառախուղը լցրել էր փողոցները՝ ծածկելով տները ու իր ծածկոյթի տակ թաղցնելով ամեն բան—և լաւը, և վատը։ Մշուշապատ լապտերների շուրջը կազմուել էին թափանցիկ լոյսի անորոշ բծեր և—առանց ճառագայթի, առանց շարժողութեան—կանգնել էին օդի մէջ՝ չըլուսաւորելով երկիրը։ Մշուշի հեղձուցիչ պղտոր ալիքները իրանց մեռելատիպ անշարժութեամբ յուսահատութիւն էին ազդում. մարդիկ ուրուականների պէս երևում և անյայտանում էին նրանց մէջ. բոլոր ձայները, կարծես, խուլ էին դարձել և ճնշուած էին. մինչև անգամ զանգի հարուածները իրանց մէջ ծծուած խոնաւութիւնից ծանրացած, անզօր և արագ ընկղմւում էին մշուշի մէջ՝ ոչոքի ոչինչ չասելով. .

—Ոհ, թախիծ, իմ յաւերժահարսն Էգերիա *)։ Ո՜րքան ուրախ եմ, որ քո գրկախառնութեան զուարթ ցրտութիւնը թարմացնում է իմ յոգնած հոգին։ Ինչպէս անձրևաբեր ամպերն ամառուայ տօթին բարեբեր ջրով ոռոգում են այս խղճուկ՝ միշտ ծաղիկի կարօտ երկիրը, այնպէս էլ դու, ով թախիծ, զովացնում ես մենաւոր սիրտս, և քո շնչի թարմութիւնից բացւում են նրա մէջ իմ ատելութեան ծաղիկները դէպի այս մառախլապատ կիսամեռ աշխարհը, դէպի այս անհոգի մարդիկ՝ նրա հլու ստրուկները։

Այս էր ասում սատանան, և նրա խօսքերից ամեն մի նրբամիտ մարդ, ի հարկէ, իսկոյն կտեսնի, որ սա դեկադենտ է և Նիցշէի հետևող.—ապա ուրեմն ոչ միայն իսկապէս գոյութիւն ունեցող, այլ և նորագոյն սատանայ։ Մշուշի մէջ նա անցնում էր փողոցով և որոնում էր այնպիսի տուն, որի դրան վրայ չլինէր կաւիճով գծած խաչ։

—Ո՜րքան զզուելի է դարձել աշխարհը,—մտածում էր նա,—ինձ ոչընչից ոչինչ չի մնում անելու այնտեղ... չկայ մի հոգի ուշադրութեան արժանի։ Սոսկալի ապաշնորհ են դարձել մարդիկ, զզուելու չափ անհետաքրքիր և չնչին... Մանաւանդ այժմ, երբ նրանց մէջ նոր ուժով ծաղկում է անձի կատարելութեան և կրքերի հետ մաքառելու քարոզը։ Տխմարներ։ Նրանք կարծում են, թէ դեռ ունին կրքեր, այն ինչ նրանց մէջ մնացել է միայն տափանք... Բայց ահա մի օդանցք, որ իմ այցելութեան դէմ պատսպարուած չէ խաչով.—կմտնեմ։ Կարելի է, հետաքրքիր բան տեսնեմ...

Սատանան ձիւնի բիւրեղ դարձաւ և օդանցքից ներս թռչելով, անձայն ընկաւ լուսամուտի գոգը։

Լուսամուտի մօտ դրած էր սեղան. իսկ սեղանի առաջ նստած էր Իւան Իւանովիչ Իւանովը. իր հոգեկան կերպարանքով սա «ինտելիգենտ» մարդ էր, իսկ կոչումն էր—ձգտումն դէպի հոգեկան կատարելութիւն, որ և նա ամեն օր արմատացնում էր իր մէջ ծանօթների հետ ունեցած երկար զրոյցներով և հոգեշահ գրքերի ընթերցումով։ Որովհետև այս բոլորը կատարւում էր Մկրտութեան նախօրեակին—Իւան Իւանովիչը սեղանի առաջ նստած՝ ամփոփում էր անցած երկու շաբաթուայ ընթացքում իր կրածն ու զգացածը և խորասուզուած էր մտքերի մէջ։ Ինքնազննութեամբ զբաղուած մարդը մի քիչ նման է մի կողմից Նարկիսին *), միւս կողմից—ռուփի

*) Հնումը—Հռօմի Նումա Պոմպիլիոս թագաւորի խորհրդատու դիցուհին. այժմ—իշխանաւորի վստահելի խորհրդականը։ Ծ. Թ.

*) Հնումը—մի չափազանց գեղեցիկ մարդ, որ սիրահարուեց ինքն իրան վրա. այստեղից—իր արտաքինով զբաղուած մարդ. Ծ.Թ.

մէջ ընկած ճանճին. այդ պատճառով էլ Իւան Իւանովիչը չնկատեց ոչ օդանցքից ներս ընկած ձիւնի բիւրեղը, և ոչ էլ այն, թէ ինչպէս նա դարձաւ փոքրիկ սատանայ:

Աչքերը փակած՝ Իւան Իւանովիչը անձկութեամբ զննում էր մի պատկեր, որ նա մի անգամ տեսել էր մի թերթում և այժմ վերականգնեց իր յիշողութեան մէջ: Պատկերը ներկայացնում էր մի բազմոտանի սոլիպոդ (спрутъ), որ լափում էր խեցգեանին, պինդ գրկելով նրան իր շօշափուկներով:

— Ահա և ես.— մտածում էր Իւան Իւանովիչը,—ես էլ այնպէս, ինչպէս այս խեցգետինը... և կեանքը, ինչպէս այս պոլիպոդը, ծծում է իմ հիւթերը: Ես ձգտում եմ յաղթահարել նրա ապականիչ ազդեցութիւնը, կամենում եմ յաղթել կրքերիս... Իսկ նա իր կառչող սարսափելի շօշափուկներով բռնում է ինձ և տանում է այնտեղ, ուր եռում է բաքոսեան օրգիան, ուր մարդուս մէջ զարթնում է անասունը, ուր նրա մէջ հանգչում է ամեն սրբութիւն... Ես պիտի նուիրէի իմ բոլոր ոյժերս, բովանդակ խելքս՝ ինձնից դաստիարակելու մի մարդ, որ արձագանք տար գոյութեան ամեն ազնիւ և հոգին վսեմացնող ապաւորութիւններին: Պիտի լինէի քաջարի պաշտպան իմ իրաւունքների... մարդուս ոտնատակ տուած իրաւունքների... և այս բոլորի փոխարէն... ես երեք անգամ գնացի դիմակահանդէս... եղայ ճաշարանում և մինչև անգամ .. սատաբացրի կնո՞ջ..

...Շատ էլ—նա լաւն է: Աստուած իմ, ինչքա՛ն լաւն է... Բայց և այնպէս նա ուրիշի կին է... Օտարի կին... Ո՜րքան ստորութիւն իմ կողմից...

...Գոնէ լաւ է, որ ես միշտ խոստովանում եմ արատներս. այս հանգամանքը բարձրացնում է ինձ իմ աչքում... Այս շատ մխիթարական է... Բայց, սատանա՛ն տանի, երանի՜ թէ ես կարողանայի սրտիցս պոկել—հանել կրքերս:

— Փորձեցէք,—լսուեց մի քաղաքավարի ձայն:—Եթէ կամենաք, ես կարող եմ ձեզ օգնել այս բանում. .

Իւան Իւանովիչն արագ բարձրացրեց գլուխը և ցնցուեց—սատանայ տեսնելիս միշտ ցնցւում են:

— Ներողութիւն.. ես չնկատեցի, երբ մտաք այստեղ... Եթէ չեմ սխալւում—պատիւ ունիմ տեսնելու... սատանային:

— Ի՛սկ և իսկ,—ասաց սատանան:

— Հըմ... հը՜մ... Ինչին եմ պարտական այս հաճոյքն ունենալով...

— Հէնց այնպէս, պարապութիւնից մտայ ձեզ մօտ: Ախր այսօր—գիտէք էլի—Մկրտութեան նախընթաց օրն է, ու մեզ սատանաներիս ամեն տեղից խուկում են: Դուրսը մառախուղ է, խոնաւ... Շատ վատ ձմեռ է այս տարի: Եւ ահա ես՝ ճանաչելով ձեզ իբրև մի մարդասէր մարդու. .

Իւան Իւանովիչը շփոթուած էր: Նա երբէք լուրջ չէր վերաբերուել սատանայի գոյութեան խնդրին և այժմ նրան տեսնելով, իրան յանցաւոր էր զգում նրա առաջ:

— Ես... շա՜տ ուրախ եմ,—ասում էր նա՝ ցրուած ժպտալով:—Այդտեղ, կարելի է, անյարմար է: Խնդրե՛մ...

— Օ, հանգիստ եղէք, ես ինչպէս և դուք, շատ արագ համակերպւում եմ ամեն դրութեան, ինչքան էլ անյարմար՝ նոյն իսկ ամօթալի լինի...

— Ը՜մմ... Շատ հաճելի է.— ասաց Իւան Իւանովիչը և մտածեց ինքն իրան:—Սակայն սա... մի քիչ կոպիտ է... կամ, աւելի ճիշտ՝ ընտանեբար է վարւում...

— Դուք, կարծեմ, ցանկութիւն յայտնեցիք ձեր սիրտը մաքրելու, հա՞:

— Հա՛... Գիտէք, մարդս՝ որքան էլ մաքուր զարգացած լինի, դեռ ես թոյլ է կրքերի հետ կռուելու մէջ... Սակայն, ներեցէք, եթէ սխալ չլսեցի, դուք ինձ առաջարկեցիք ձեր օգնութիւնն այս .. ձեռնարկութեան մէջ:

— Առաջարկեցի և կրկնում եմ —պատրաստ եմ ձեզ ծառայելու:

— Բայց չէ՞ որ այս… հակառակ է ձեր մասնագիտութեանը.— զարմացաւ մարդը:

— Է՜հ, Իւան Իւանովիչ,—բացականչեց սատանան, ձեռքն անհոգ թափ տալով:—Դուք կարծում էք, ինձ չէ՞ ձանձրացրել իմ մասնագիտութիւնը:

— Հա—մ:

— Ի՞նչպէս չէ: Մարդն անգամ երբեմն ձանձրանում է չարունակ միայն լրբութիւն անելուց և նա երբեմն անկեղծ զղջում է…

,,Ի՞նչ վնաս կլինի, եթէ ես ընդունեմ նրա օգնութիւնը.-մտածում էր Իւան Իւանովիչը:—Նա, հաւանական է, կարող է ինձ կատարեալ դարձնել: Ա՛յ թէ կզարմանան ծանօթներս‘‘:

— Դէհ, ասացէք ինձ, ինչից էք քաշւում,—պնդում էր սատանան:

— Բայց… ը՜… Գիտէ՞ք ինչ… ախր, դա, երևի, շատ ցաւեցնող մի օպերացիա է:

— Միայն զօրեղ սիրտ ունեցողների համար. նրանց համար, որոնց զգացմունքներն առողջ են և խոր արմատացած սրտի մէջ:

— Իսկ ես:

— Ձեր սիրտը,—ներեցէք, չէ որ ես հանդէս եմ գալիս իբր բժիշկ,—ձեր սիրտը փափուկ է. գիտէ՞ք… մի տեսակ… թառամած է, ինչպէս, օրինակ, ժամանակին անցկացրած ամսաթուղկ: Երբ ես հանեմ ձեր սրտից ձեզ ճնշող կրքերը, դուք կզգաք նոյնը, ինչ որ կզգայ հաւը, երբ նրա ագիից փետրում են փետուրները…

Իւան Իւանովիչն ընկաւ մտածման մէջ և հարցրեց.

— Թոյլ տուէք հարցնելու, դուք ձեր… ծառայութեան փոխարէն կպահանջէ՞ք իմ հոգի՞ն:

Սատանան պատուհանի գոգից ցատկեց յատակին, և թաթիկները յուզուած թափ տալով խօսեց.

—. Հոգի՞ն: Օ, ո՛չ. ո՛չ. խնդրեմ… ինձ հարկաւոր չէ… Ի՞նչ էք հրամայում: Ի՞նչ եմ անում: Այսինքն— ներեցէ՛ք—ուզում էի ասել—ինչի՞ս է պէտք: Ա՛խ, այդ էլ չէ, այդ էլ չէ: Ես ուզում էի ասել…

Իւան Իւանովիչը տեսնում էր, թէ ինչպէս գլուխը կորցրել էր սատանան և իրան վիրաւորուած էր զգում:

— Ես նրա համար հարցրի այդ մասին, որովհետև առհասարակ ձեզանում ընդունուած է..

— Այդ առաջ էր, երբ գոյութիւն ունէին առողջ, ուժեղ հոգիներ…

— Դուք կարծես արհամարհում էք իմ հոգին…

— Օ, ո՛չ: Բայց ես… ես այսօր կամենում եմ ուղղակի անշահասէր լինել… Եւ յետոյ, համաձայնեցէ՛ք. միթէ ինձ հետաքրքիր չէ տեսնել մի կատարեալ մարդ:

— Հը՜մ… ուրեմն դուք ասում էք, որ ո՛չ ցաւ կայ և ո՛չ վտանգ:

— Հաւատացնում եմ ձեզ: Իմ օգնութեամբ ձեր կատարելութեան հասնելը ձեզ համար բնաւ ոչինչ չի արժենայ. . Ա՛յ, չէ՞ք կամենայ արդէօք, փորձի համար հանենք ձեր սրտից որ և է բան:

— Ը… խնդրե՜մ…

— Շատ գեղեցիկ: Ի՞նչն է առաւել նեղացնում ձեզ:

Իւան Իւանովիչն ընկաւ մտածման մէջ: Մի անգամից շատ դժուար է ասել, մեր կրքերից ո՞րն աւելի պակաս սիրելի է մեզ:

— Ձէ. դուք, խնդրեմ, սկսէք փոքրից:

— Ինձ համար միևնոյն է… որից կհրամայէք:

Իւան Իւանովիչը դարձեալ լռեց: Թէպէտ և նա յաճախ տրնտղում էր իր ներքինը, բայց այդ բանից—գուցէ իսկապէս հէնց այդ պատճառով—նրա մէջ թագաւորում էր կատարեալ քաօս: Այնտեղ ամեն բան տրորուած և խճճուած էր և այժմ որքան էլ եռանդով շուռ ու մուռ էր տալիս նրա պարունակութիւնը, չէր կարողանում նրա մէջ գտնել ոչ մի որոշ, լրիւ, կողմնակի խառնուրդից ազատ զգացմունք:

Սատանան յոգնեց սպասելով և առաջարկեց նրան.

— Եկէք հանենք ձեր սրտից փառասիրութիւնը. նա մեծ չէ…

— Դէհ, լա՛ւ.—ասաց Իւան Իւանովիչը, հառաչելով.—հանեցէք..

Սատանան մօտեցաւ նրան և հրպելով նրա կրծքին՝ արագ շարժուեց հեռու։ Իւան Իւանովիչը զգաց մի սուր, բայց հաճելի ծակոց, նման այն ծակոցին, որ առաջանում է մատից փուշը հանելիս։

— Ա՛յ, ինչպէս ցաւ չկայ..., հանգստանալով ասաց Իւան Իւանովիչը։—Թո՛յլ տուէք տեսնիմ՝ ինչպիսի փառասիրութիւն էր իմը...

Սատանան պարզեց նրան իր ձեռքը և ափի մէջ Իւան Իւանովիչը տեսաւ մի տեսակ անգոյն, փոքրիկ, տրորուած բան, նման ջնջոցի, որով երկար ժամանակ փոշի են մաքրել։ Նայեց Իւան Իւանովիչը իր փառասիրութեանը և, հառաչելով, կամաց ասաց.

— Գիտէք... երբ յիշում եմ, որ այդ այնուամենայնիւ իմ սրտի մի մասն է... խղճահարւում եմ։

— Արդեօք չէք կամենալ՝ հանեմ ձեր սրտից խղճահարութիւնն էլ.

— Ը-ը... Առանց նրան ինչպէս կարելի է։

— Ի՞նչ օգուտ կայ նրանից։

— Չէ, գիտէք, դա մարդկային մի լաւ զգացմունք է...

— Լա՛ւ, իսկ ինչ կասէք ոխի մասին։

— Ա՛յ, ա՛յդ թող կորչի. սատանա՛ն տանի։ Ա՛խ, նեղողութիւն...

— Զարժէ... անհանգիստ մի լինիք...

Սատանան նորից ձեռքը հպեց Իւան Իւանովիչի կրծքին, և սա դարձեալ զգաց ծակոց։ Ու նորից սատանանի ափին կար մի տեսակ բան, որ թթու հոտ ունէր և նման էր փալասի...

— Պա՜հ,-ասաց Իւան Իւանովիչը՝ քիթը կնճռելով.—ա՜յ թէ ինչ տեսակ բան է... իր բնական տեսքով...

— Սրա հետ խառն է շատ երկչոտութիւն,—ասաց սատանան։

— Ա՛յ թէ ինչ... հըմ... Բայց, ասացէք, խնդրեմ, այդ ինչու իմ բոլոր զգացմունքներս թանձրացած կազմութիւն ունին։

— Ձեր ճակատագիրն է այդ, բարի Իւան Իւանովիչ,—ասաց սատանան և զզուանքով յատակին գցեց իր հիւանդի սրտի մասը։

— Իսկ ես արդէն սկսում եմ ինձ զգալ մի ուրիշ տեսակ,—հաղորդեց Իւան Իւանովիչը, ականջ դնելով իր սրտի բաբախիւնին։

— Հաճելի՞ է։

— Թեթև է... աւելի ազատ է կուրծքս...

— Շարունակենք օպերացիան։

— Ես... հակառակ չեմ...

— Էլ ինչ ունիք։

— Կայ էլի... առհասարակ այն ամենը, ինչ որ ունին մարդիկ...

— Օրինակ, բարկութիւն։

— Օ, այո՛, իհարկէ... բարկութիւն... հա՛. այսինքն, ինչպէս ասած՝ բարկութիւն էլ չէ... այլ, գիտէք... մի տեսակ նեարդոտութիւն... գազազածութիւն... շատ անհանգիստ զգացմունք է։

— Հանենք։

— Պարզ բան է։ Միայն, խնդրեմ, զգուշութեամբ. ներսս մի քիչ խառնուած է... ա՛յ, երբ դուք ոխը հանեցիք, ես զգացի, ինչպէս ինձանում շարժուեց ամօթանքը...

— Այդ բնական է,—ասաց սատանան,—ես ինքս էլ ձեր զգացմունքները տեսնելով՝ ձեր փոխարէն ամաչում եմ... դուք արդէն շատ անմաքուր էք պահում ձեր սիրտը...

— Ի՞նչ արած. մի՞թէ այդ բանում ես մեղաւոր եմ,—հակառակեց Իւան Իւանովիչը.

— Չէ՞ որ սիրտն աման չէ. նրան կաւիճով ու խոզանակով չես մաքրիլ...

— Այդ էլ ուղիղ է... Ը՛հ. ինչպէս. շարունակեմ։ Հանենք այդ նեարդոտութիւնը։

— Ես պատրաստ եմ։

Ու սատանան երրորդ անգամ հպեց իր ձեռքն Իւան Իւանովիչի կրծքին։

Բայց երբ նա թափ տուեց— ձեռքին երևաց մի ամբողջ գունդ. մի տեսակ թեթև և անորոշ խառնուրդ։ Նա ոչ մի ձև չունէր. մի տեսակ նեխած հոտ ունէր և ներկած էր երկու գոյնով—մէկը՝ կա-

նաչաւուն—մոխրագոյն, որ յատուկ է խակ պտուղներին. միւսը՝ մոյգ—գորշագոյն, որ յատուկ է նրանց, երբ փտում են։

Սատանան բռնել էր այդ թանձրացած, պղպջուն գունդը բռի մէջ և շուարած նայում էր նրան՝ աշխատելով որոշել—ինչ բան է այդ։

— Էհ, Իւան Իւանովիչ,—շփոթուած ասում էր նա՝ առանց իր հիւանդի երեսին նայելու.

— Հանեցինք ձեզանից մի բան... բայց ինչ։ Չգիտեմ... Այ թէ դանձեր էք դիզել ձեր սրտի մէջ երեսնամեայ կեանքի ընթացքում։ Այստեղ, կարծեմ, ոչ մի քիմիկոս ոչինչ չի ջոկիլ... Սակայն ենթադրում եմ, որ այժմ ազատուելով այս բոլոր... աղտեղութիւնից, դուք կըլինիք մաքուր, ինչպէս հրեշտակը... Այ թէ ճարպիկ ախտահան եմ եղած, հը՞։ Չէի կարծում, թէ իմ մէջ այսպիսի շնորհք կայ։ Էհ, այժմ ինչպէս եսս։ Շնորհաւորում եմ ձեր հոգու սրբացումը, Իւան Իւանովիչ... և ձեր կատարելութեան հասնելը, կամ—ինչպէս է։ Յոյս ունիմ, որ այժմ դուք կատարելապէս կատարեալ էք։

Այստեղ սատանան վայր ձգեց Իւան Իւանովիչի սրտի պարունակութիւնը, նայեց նրան և—ապշեց։

Իւան Իւանովիչն ամբողջապէս մի տեսակ թուլացել, ջարդուել էր. նա նստած էր բազկաթոռին՝ բերանը փակ, և նրա դէմքին փայլում էր այն անբացատրելի երջանկութիւնը, որ ամենից աւելի յատուկ է ի ծնէ ապուշներին։

— Իւան Իւանովիչ —կանչեց սատանան՝ նրա թեը բռնելով։

— Ա...

— Ի՞նչ պատահեց ձեզ։

— Օ...

— Դուք մի՛ բան զգո՞ւմ էք։

— Ու...

— Վա՞տ էք զգում...

— Է...

— Ահա՛ ծննդեան եղելութիւն.—բացականչեց մոլորուած սատանան։ Մի՞թէ ես նրանից հանեցի նրա ամբողջ էութիւնը։—Իւա՛ն Իւանովիչ։

— Ա...

— Հէնց այդպէս էլ է։ Միայն ձայնարկութիւններն են մնացել այս մարդու մէջ, այն էլ առանց որևէ բովանդակութեան... ինչ անեմ սրան...

Սատանան թխկթըխկացրեց Իւան Իւանովիչի կուրծքը—նա հանում էր դատարկ տակառի ձայն։ Նա մատով թխկացրեց նրա գըլխին—սա էլ դատարկ էր։

— Ահա՛ քեզ կատարեալ մարդ։ Ա՛խ դու խղճուկ։ Կործանեցի քեզ... Բայց մի՞թէ ես գիտէի, թէ դու այդպէս վատ բաներով լցուն ես։ Սակայն վերջն ինչ պիտի լինի։

Ու սատանան ընկաւ մտածութեան մէջ՝ նայելով իր նպատակին հասած մարդու անշարժ և երջանիկ դէմքին։

Վա՛հ,—բացականչեց նա՝ մատները չխկացնելով.—Ա՜յ միտք։ Եւ սատանան շատ գոհ կլինի... Հիանալի բան մտածեցի։ Առաջ ես մի քիչ կչորացնեմ այս կատարելութիւնը. իսկ յետոյ մէջը սխեռ կըլցնեմ... և սրանից դուրս կգայ ինքնատիպ խաղալիք սատանայի զուարճութեան համար...

Սատանան բազկաթոռից վերցրեց Իւան Իւանովիչին, փաթաթեց, պունդ շինեց և, կռնատակը դնելով, անյայտացաւ սենեակից...

Մշուշն արդէն ցրուեց և լուսամուտից դժգոյն աչքերով նայեց ձմեռային առաւօտը... Փողոցից դատարկ սենեակն էր հասնում վաղորդեան զանգահարութեան հանդիսաւոր խաղաղ ձայնը և հառաչում ու հանգչում էր նրա մէջ...

Թարգմ. Զ. Զամբաղեան։

## ԱՍՏՂԵՐ ԵՒ ԱՉԵՐ

*Արձակ բանաստեղծութիւն—Կատուլլ Մենդեսի։*

Ես չէի ուզենայ նայել աստղերի այն կողմը... Ո՞վ գիտէ, ինչ է թագնուած նրանց տեսանելի հրաշալիքի տակ։ Գուցէ նրանց փայլը ծածկում է խաւար անդունդներ, հրաշէկ լաւաներ, մռայլ ու վայրի ժայռեր, քարոտ դաշտավայրեր, ամայի, անշարժ ու անկենդան աշխարհ՝ մահուան աշխարհ։

⁂

Գուցէ նրանք նման են պարահանդէսների փանտաստիկ դիմակներին, որ իրանց տակ ծածկում են ամենազզուելի դէմքեր։ Ես չէի ուզենայ նայել աստղերի այն կողմը... Ո՞վ գիտէ ինչ է թագնուած նրանց տեսանելի հրաշալիքի տակ։

⁂

Ձեր աչերն, իմ մանկիկ, նոյնպէս երկնային աստղեր են, որոնց մէջ փայլում է անմեղութեան կապուտակը և որոնք զարթեցնում են մատաղ յոյսեր ու յոյզեր։ Բայց գուցէ նրանց անթափանցելի պայծառութեան տակ թագնուած են անմիտ տենչեր, յանցաւոր ցնորքներ և նոյն իսկ խղճի խայթոցներ...

Ես չէի ուզենայ նայել աստղերի այն կողմը...

## Ծ Ի Ծ Ա Ղ

*Պատմուածք Լ. Անդրէեվի*

Ժամը վեց և կիսին ես համոզուած էի, որ նա կգայ, և խենթի պէս ուրախ էի։ Վերարկուս կոճկած էր միայն վերին կոճակով և փրփռում էր ցուրտ քամուց. բայց ես ցուրտ չէի զգում. գլուխս հպարտ յետ գցած, և ուսանողական գլխարկը ծոծրակիս։ Աչքերս՝ հանդիպող գիւղացիների նկատմամբ արտայայտում էին հովանաւորութիւն և քաջութիւն, կանանց նկատմամբ—հրապոյր և փաղաքշանք։ —Թէպէտ արդէն չորս օր էր, որ ես սիրում էի միմիայն մէկին, սակայն ես այնչափ երիտասարդ էի, և իմ սիրտս այնպէս լի էր զգացմունքով, որ ես չէի կարող բոլորովին անտարբեր մնալ դէպի ուրիշ կանայք։ Ու քայլերս արագ էին. համարձակ և թեթև։

Եօթից քառորդ պակաս՝ վերարկուս կոճկած էր երկու տեղով, և ես լոկ նայում էի կանանց, սակայն առանց հրապոյրի և փաղաքշանքի, այլ ուղղակի զզուանքով։ Ինձ հարկաւոր էր միայն մի կին. մնացածներին... գրողը տանի՜.—նրանք միայն խանգարում էին և իրանց կարծեցեալ նմանութեամբ իմ շարժումներին ազդում էին անվստահութիւն և անկայունութիւն։

Եօթից հինգ րոպէ պակաս—շոգ էր։

Եօթից երկուս պակաս—ցուրտ։

Ուղիղ եօթին ես համոզուեցի, որ նա չէ գալու։

Ութ և կիսին ամենաողորմելի արարածն էի աշխարհիս վրա։ Վերարկուս վերից վար կոճկած էր. օձիքս վեր բարձրացրած, և գլխարկս կապուտակած քթիս քաշած։ Քունքիս վրայի մազերը, ընչացքս և արտեւանունքներս սպիտակել էին եղեամից. իսկ ատամներս թեթևակի իրար էին դիպչում։ Ճխկացնող քայլուածքիս և կորացած մէջքիս նայելով, ինձ կարելի էր դեռ բաւականին ժիր ծերուկի տեղ դնել, որ քաղաքից վերադառնում էր աղքատանոց։

Եւ այս բոլորը նա արեց, նա՜։ Օ, սատան... ո՛չ. հարկաւոր չէ.

կարելի է, չժողին, կամ նա հիւանդ է, կամ մեռել է։ Մեռե՜լ է. —իսկ ես հայհոյում եմ։

II

— Այսօր այնտեղ է և Եւգենիա Նիկօլաեւնան,—ասաց ինձ ուսանող ընկերս առանց յետին մտքի. Նա չգիտէր, որ ես ցրտին սպասում էի Եւգենիա Նիկոլայեւնային՝ եօթից մինչև ութ և կէսը։

— Ա՛յ թէ ինչ,—խորհրդաւոր կերպով պատասխանեցի ես. իսկ սրտիցս դուրս թռաւ.—Օ, սատան...

Այնտեղ է. այսինքն Պօլօզովնեւրի երեկոյթին։ Պօլօզովներ—մարդիկ, որոնց տունը երբէք չեմ եղած։ Բայց այսօր ես այնտեղ կլինեմ։

— Պարոններ,—ուրախ բացականչեցի ես.—Այսօր ծնունդ է. այսօր ամենքն ուրախ են։—Մենք էլ ուրախանանք։

— Բայց ինչպէս,—տխուր ձայնով ասաց մէկը։

— Եւ ո՛րտեղ, — պաշտօպանեց առաջինին միւսը։

— Հագնուինք և գնանք բոլոր երեկոյթները, վճռեցի ես։

Եւ նրանք, այդ անզգայ մարդիկ, յիրաւի, ուրախացան։ Նրանք աղաղակում էին, թռչկոտում, երգում։ Նրանք շնորհակալութիւն էին յայտնում ինձ և հաշւում էին կանխիկ դրամի քանակութիւնը։ Իսկ մի կէս ժամից յետոյ մենք քաղաքում հաւաքեցինք բոլոր միայնակ, ձանձրացող ուսանողներին. և երբ ժողովուեցինք տասնի չափ ուրախ, ցատկոտող սատանաներ, գնացինք վարսաւիրի խանութը—որ հանդերձատուն էլ էր—և ներս լցրինք ցուրտ և դուարթ ծիծաղ։

Ինձ հարկաւոր էր մի որևէ մռայլ, սիրուն զգեստ՝ վայելուչ տխրութեան կնիքով, և ես խնդրեցի.

— Տուէք ինձ իսպանացի ազնուականի զգեստ.

Երևի, դա մի շատ բարձրահասակ ազնուական էր, որովհետև ես ոտից գլուխ կորայ նրա զգեստի մէջ և ինձ զգացի մենմենակ՝ իբր մի ընդարձակ և անընակ դահլիճում։ Զգեստի միջից դուրս գալով, ես խնդրեցի ուրիշը։

— Խեղկատա՛կ—չէ՞ք կամենայ։ Խայտաբղէտ զգեստ է բօժօժներով զարդարած։

— Խեղկատա՛կ,—արհամարհանքով բացականչեցի ես։

Ուրեմն աւազակ. այսպիսի մի գլխարկ և դաշոյն։

Դաշո՛յն—այդ համապատասխան է իմ դիտումներին։ Դժբաղդաբար աւազակը, որի զգեստն ինձ տուին, դժուար թէ չափահաս լինէր։ Իսկապէս դա մի փճացած տղայ էր՝ մօտ ութ տարեկան։ Նրա փոքրիկ գլխարկն իմ ծոծրակն էլ չէր ծածկում. իսկ թաւշեայ անդրավարտիքից՝ ասես թակարդից՝ զօրով ինձ դուրս քաշեցին։ Մանկլաւիկի զգեստն անպէտք էր, ամբողջապէս բծոտած, ինչպէս վագր. փարաջէն—մաշուած։

Դէհ, ինչ ես անում, ուշ է,—շտապեցնում էին ինձ արդէն հագնուած ընկերներս։ Մնում էր միակ զգեստը—մեծատուն չինացին։

Լա՛ւ, չինացին.—Թափ տուի ձեռքս, և ինձ տուին չինացու զգեստը։ Սատանան տանի՛։ Ես էլ չեմ խօսում զգեստի մասին։ Լռութեամբ եմ անցնում ապուշի՝ մի տեսակ գունաւոր կօշիկները, որոնք ոտքերիս փոքր էին և կիսով չափ ներս մըտան, իսկ մնացած աւելի էական մասերով կախ ընկան ոտքիս երկու կողմից իբրև մի անհասկանալի զարդ։ Ոչինչ չեմ ասում նաև վարդագոյն փալասի մասին, որ իբրև կեղծում ծածկում էր գլուխս և կապւում էր թելերով ականջներիս մօտ, որից վերջիններս տընկուեցին չըղջիկի ականջների պէս։

—Հապա դիմա՛կը։

Դա, այսպէս ասած, վերացական դէմք էր։ Կար քիթ, աչք և բերան, և այս բոլորը կանոնաւոր, ամենը իր տեղը. բայց նրա մէջ մարդկային ոչինչ չկար։ Մարդ դագաղումն էլ այդքան հանդիստ չի լինիլ։ Նա չէր արտայայտում ո՛չ տխրութիւն, ո՛չ ուրախութիւն, ո՛չ զարմանք. իսկապէս ոչինչ չէր ար-

*տայայտում: Նա հանդարտ և ուղիղ նայում էր ձեզ, և անդուսպ ծիծաղ պատճառում: Ընկերներս ծիծաղից գլորւում էին դիւանների վրա, թուլացած ընկնում էին աթոռներին և թափահարում էին ձեռքերը՝ Սա կլինի մեր ամենից ինքնատիպ դիմակը, ասում էին նրանք: Քիչ էր մնում լաց լինէի. բայց երբ հայելուն նայեցի, ծիծաղն ինձ էլ պաշարեց: Այո, սա կլինի ամենից ինքնատիպ դիմակը:*

*— Ոչ մի դէպքում դիմակ չհանել,—ճանապարհին ասում էին իրար ընկերներս:—Խօ՛սք տանք:*

*— Խօ՛սք տանք, խօ՛սք տանք:*

III

*Յիրաւի, սա ամենից ինքնատիպ դիմակն էր: Իմ յետևից քարշ էին գալիս խմբերով, շուռ ու մուռ էին տալիս ինձ, հրում, կմշտում էին —և երբ՝ ուժից ընկած, դալկացած ես երեսս շուռ էի տալիս դէպի իմ հետևորդները,—անդուսպ ծիծաղը տիրում էր ամենքին: Ուր գնում էի, ինձ շրջապատում և վրա էր տալիս ամպի պէս գոռգոռացող ծիծաղը և շարժւում էր ինձ հետ. իսկ ես չէի կարողանում դուրս պրծնել անդուսպ բերկրութեան այս օղակից: Երբեմն երբեմն ուրախութիւնը տանում էր և ինձ. ես բղաւում էի, երգում, պարում, և ամբողջ աշխարհը պտոյտ էր գալիս աչքիս առաջ հարբածի պէս: Եւ որքա՛ն հեռու էր ինձանից այդ աշխարհը: Եւ որքա՛ն ես միայնակ էի այդ դիմակի տակ:*

*Վերջապէս ինձ հանգիստ թողին: Բարկութեամբ և երկիւղով, վրէժխնդրութեամբ և քնքշութեամբ ես նրան նայեցի և ասացի.*

*— Ե՛ս եմ:*

*Թաւ արտևանունքները կամացուկ և զարմանքով վեր բարձրացան, սև ճառագայթների մի փունջիկ շողաց իմ վրա, և ծիծաղը, զուարթ, հնչուն ծիծաղն եղաւ պատասխան:*

*—Այո՛, ես եմ, ե՛ս,—կրկնում էի և ժպտում:—Ինչո՞ւ դուք չեկաք այսօր:*

*Բայց նա ծիծաղում էր, ուրախ—զուարթ ծիծաղում:*

*Ես այնպէս տանջուեցի: Սիրտս ա՛յնպէս տառապեց,—պատասխան էի խնդրում թախանձագին:*

*Բայց նա ծիծաղում էր: Նրա աչքերի սև փայլն հանգաւ, և աւելի պայծառ շողշողաց ժպիտը: Դա արև էր, բայց անողորմ, այրող, տոչորող արև:*

*— Ի՞նչ պատահեց:*

*— Այս դո՞ւք էք,—ասաց նա, ինքն իրան զսպելով.—Ի՜նչ... ծիծաղելի էք: Թևերս թուլացան. գլուխս քարշ արի. ու որքան յուսահատութիւն կար դիրքիս մէջ: Եւ մինչդեռ նա՝ ժպտի հանգչող ճառագայթը դէմքին, նայում էր մեր մօտով սլացող ջահիլ, զուարթ զոյգերին, ես ասում էի.*

*— Ամօ՛թ է ծիծաղելը: Միթէ դուք այս ծիծաղաշարժ դիմակի յետևը չէք տեսնում կենդանի, տանջւող դէմքը:—Չէ՞ որ ձեզ տեսնելու համար միայն ես դիմակ դրի: Դուք յոյս տուիք ինձ սիրելու և այսպէս շուտ, այսպէս անսիրտ կերպով խլում էք այդ սէրը: Ինչո՞ւ չեկաք:*

*Հակաճառութիւնը սիրալիր ժըպտուն շրթունքներին՝ առաջ դարձաւ նա դէպի ինձ, և անողոք ծիծաղը բոլորովին տարաւ նրան: Շունչը կտրած, գրեթէ լալով, դէմքը ծածկելով ժանեակէ անուշաբոյր թաշկինակով, նա դժուարութեամբ արտասանեց.*

*— Նայեցէք... ձեզ վրա: Յետևը՝ հայելու մէջ... Օ, այդ ինչ էք դուք:*

*Յօնքերս կիտած՝ վշտից ատամներս կրճտացնելով, պաղած դէմքով, որից արիւնը քաշուեց, ես հայելի նայեցի.—ինձ դիտում էր ապուշի պէս հանդարտ, միշտ անտարբեր, մեռելի պէս անշարժ դէմքը: Եւ ես... ծիծաղեցի: Ու դեռ ժպիտը դէմքիս, բայց բորբոքուող զայրոյթից դողալով, բուռն յուսահատութեամբ ասացի, համարեա՛, գոռացի.*

*— Դուք չպիտի՛ ծիծաղիք:*

*Եւ երբ նա հանդարտուեց, ես*

շարունակեցի շշնջալ իմ սիրոյ մասին: Եւ երբէք ես այնպէս բուռն սիրած չէի: Ես խօսում էի սպասողի տանջանքների, կարօտի և բուռըն խանդի թունալից արցունքների մասին, ես խօսում էի իմ հոգու մասին, որ լի էր սիրով: Ու տեսայ, թէ ինչպէս արտեւանունքները խոնարհուելով՝ թանձր ստուեր ձգեցին գունատ այտերին: Տեսայ, ինչպէս սրանց անփայլ ապիտակութեան վրա կարմիր շողք ձգեց բոցավառուող կրակը, և ինչպէս ճկուն մարմինն ամբողջովին՝ անզօր թեքուեց դէպի ինձ: Նա հագնուած էր՝ ինչպէս գիշերային աստուածուհի և,—բոլորովին անթափանցելի, սև ժանեակն հագին՝ ասես թէ մշուշով պատած, ադամանդներով փայլելիս,—գեղեցիկ էր, ինչպէս վաղանցուկ մանկութեան մոռացուած երազը: Ես խօսում էի, և արտասունքները խեղդում էին ինձ, սիրտս ուրախ բաբախում էր: Եւ ես տեսայ, տեսայ, վերջապէս, ինչպէս մի սիրալիր, արգահատելի ժպիտ խաղաց նրա շրթունքներին, և, ցնցուելով, վեր բարձրացան արտասունքները: Կամացուկ, վախենալով, անսահման վստահութեամբ նա շուռ տուեց գլուխը դէպի ինձ և...

Այդպիսի ծիծաղ ես լսած չէի:

— Ո՛չ, ո՛չ. չեմ կարող,—գրեթէ հառաչում էր նա, և գլուխը յետ ձգելով, նորից քրքրաց բարձր քրքիջով:

Օ՜, եթէ ինձ միայն մի րոպէ տային մարդկային դէմք: Ես կրծոտում էի շրթունքներս, արցունքը հոսում էր իմ բորբոքուած դէմքից: Իսկ նա, այդ ապուշի դէմքը, որի վրա ամեն ինչ կանոնաւոր էր—քիթը, աչքերը, շրթունքները—նայում է իր տխմարութեան մէջ սոսկալի մի անտարբերութեամբ: Եւ երբ գոյնզգոյն ոտքերիս վրա կաղալով, ես դուրս էի գնում, դեռ երկար իմ ականջին հասնում էր մեծահնչիւն ծիծաղը. ասես թէ ահագին բարձրութիւնից գահավիժում էր ջրի արծաթափայլ կոհակը և ուրախ կարկաչով ցայտում էր՝ դիպչելով կարծր ժայռին:

IV

Ցրուած՝ նիրհող փողոցի լայնութեամբ. ադմկելով գիշերուայ անդորրութիւնը խրոխտ և անհանգիստ ձայներով, մենք տուն էինք գնում, և ընկերս ինձ ասում էր:

— Դու հսկայական յաջողութիւն ունեցար: Ես երբէք այդպիսի ծիծաղ չէի տեսել... Սպասիր, ինչ ես անում: Ինչո՞ւ ես դիմակդ պոկում: Տղե՛րք, սա խելագարուեց. նայեցէք. պատառոտում է իր զգեստը: Նա լա՜ց է լինում:

Թարգմ Զ. Զ.

## Ո՞ՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ ՍԷՐԸ

(Լև Տօլստոյի մտքերից)

Իւրաքանչիւր մարդ գիտէ, որ սիրոյ զգացմունքի մէջ կայ մի ինչ որ առանձին բան, որ ընդունակ է վճռել կեանքի բոլոր հակասական խնդիրները և տալ մարդուն այն կատարեալ բարիքը, որին ձգտելու մէջ է կայանում կեանքը:

«Բայց այդ զգացմունքը շատ քիչ է պատահում, ասում են կեանքը չհասկացող մարդիկ, կարճատև է և նրա հետևանքը լինում է աւելի ծանր տանջանքներ»:

Սէրը այդ մարդկանց թւում է ոչ իբրև կեանքի միակ բնական և օրինական երևոյթ, ինչպէս որ նա ներկայանում է գիտակցող խելքին, այլ իբրև մէկը այն բազմազան պատահարներից, որոնցով լիքն է կեանքը:

Կեանքը չհասկացող մարդկանց համար սիրային տրամադրութիւնը կեանքի էութիւն չէ, այլ մի պատահական երևոյթ՝ նոյնպէս անկախ նրա կամքից, ինչպէս և բոլոր միւս երևոյթները:

Ճիշտ է, դրանք զգում են, որ սիրային դրութեան մէջ կայ մի ինչ որ ոյժ, աւելի կարևոր, քան

բոլոր միւսները: Բայց չհասկանալով կեանքը՝ չեն կարող հասկանալ և սէրը: Սիրային դրութիւնը ներկայանում է նրանց նոյնպէս խղճուկ, նոյնպէս խաբուսիկ, ինչպէս բոլոր միւս դրութիւնները:

«Սիրե՛լ... բայց ո՞ւմ. ժամանակաւորապէս—չարժէ ջանքը. Իսկ յաւիտեան սիրել կարելի չէ...»:

Այսպէս բացականչում են մարդիկ, ազատ կերպով ընդունելով, որ յիրաւի սիրոյ մէջ կայ մի ինչ որ բան, որ նման է երջանկութեան, բայց միևնոյն ժամանակ փրկութիւն չկայ դրա մէջ, որովհետև յաւիտենական չէ: Բայց ուսման մարդիկ ուրիշ կերպ չեն էլ կարող ըմբռնել կեանքը, որովհետև սովորել են նայել կեանքի վրա իբրև կենդանական գոյութեան վրա:

Սակայն իսկական սէրը հնարաւոր է դառնում միմիայն այն դէպքում, երբ մարդը ընդունակ է հրաժարուել կենդանական կեանքի բարիքներից: Իսկական սիրոյ հնարաւորութիւնը սկսւում է միայն այն ժամանակ, երբ մարդ հասկանում է, որ կենդանական կեանքի մէջ չէ նրա բարիքը:

Սիրել—կնշանակէ գերադասել ուրիշ էակներին իրենից, իր կենդանական կեանքից: Իսկական սիրոյ հիմքը կազմում է միշտ իր անձնական բարիքից հրաժարուելը և դրանից առաջացած սիրաշատ բարեացակամութեան վրա կարող է հիմնուած լինել սէր դէպի մերձաւորներն ու հեռաւորները: Եւ միայն այսպիսի սէրը կարող է տալ կեանքի իսկական բարիքը և վճռել կենդանական և խոհական կեանքի հակասութիւնը:

Եթէ սէրը հիմնուած չէ անձնազոհութեան վրա, նա միայն կենդանական կեանք է և ենթակայ է աւելի ևս մեծ դժբաղդութիւնների ու թիւրիմացութիւնների, քան թէ կեանքը առանց այդ կարծեցեալ սիրոյ:

Եւ չկայ մի այլ սէր, քան այն, երբ մարդ դնում է իր անձը ընկերի համար: Սէրը—միայն այն ժամանակ է սէր, երբ նա զոհաբերութիւն է, երբ մարդը տալիս է ուրիշին ոչ միայն իր ժամանակը, իր ույժերը, այլ և իր մարմինը, երբ նա զոհում է իր կեանքը: Այո՛, միայն այդպիսի սիրոյ մէջ կարող ենք գտնել բարիք և վարձատրութիւն: Աշխարհը կանգուն է միմիայն այդպիսի սիրոյ շնորհիւ:

Սէրը ինքը կեանքն է, բայց ոչ թէ անմիտ ու անպատակ կեանքը, այլ երջանիկ ու յաւիտենական կեանքը: Եւ մենք բոլորս գիտենք այդ: Սէրը ոչ թէ մտածողութեան կամ որոշ գործունէութեան հետեւանք է, այլ դա հէնց ինքը կեանքի ուրախաւէտ գործունէութիւնն է, որը ամեն կողմից շրջապատում է մեզ, որը ծանօթ է մեզ մեր մանկութեան հէնց առաջին օրերից, երբ աշխարհիս սուտ վարդապետութիւնները դեռ չեն խեղդել նրան մեր հոգու մէջ, դեռ չեն զրկել մեզ իսկական սէր զգալու հնարաւորութիւնից:

Կենդանի մարդկանցից ո՞ւմ արդեօք ծանօթ չէ այն քաղցր զգացմունքը, որ աւելի յաճախ երեխայութեան ժամանակ է պատահում, երբ մարդ կամենում է սիրել բոլորին՝ և հօրը, և մօրը, և երեխաներին, և չար մարդկանց, և թշնամիներին, և շանը, և ձիուն, և ամեն մի խոտին, ամեն մի բոյսին, երբ կամենում ես, որ բոլորի համար լաւ լինի, որ բոլորը լինեն երջանիկ:

Այսպիսի սիրոյ ժամանակ մարդ ինքն էլ ձգտում է այնպէս անել, որ երջանիկ լինին բոլորը. մարդ ուզում է իր անձը զոհել, իր կեանքը տալ ուրիշներին բաղդաւորեցնելու համար:

Հէնց դա է իսկական սէրը. դա է կեանքի հիմքն ու էութիւնը:

Թարգ. Բ.

# ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կ. Տեռմայէրից)

I

## ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

—

Խաւարեցին մեռնողի աչքերը: Նա զգաց, որ մօտենում է մահը և ուզեց յետ նայել, մի անգամ էլ տեսնել իր անցկացրած կեանքը:

Ահա կամաց-կամաց, անվերջ շարքերով անցնում են բազմազան դէմքեր և նրանցից իւրաքանչիւրը զարթեցնում է նրա մէջ թշուառութեան կամ ուրախութեան յիշողութիւն: Բայց որովհետև թշուառութեան և տանջանքների յիշողութիւնները աւելի շատ էին, քան թէ միւսները, ուստի նա մտածեց.

— Չարժէ ցաւել, որ ես այլես տեսնելու չեմ այդ դէմքերը:

Բայց ահա խաւարի միջից փայլեցին երկու աչքեր՝ լի երախտագէտ արցունքով: Մեռնողը իսկոյն ճանաչեց նրանց և նայեց սրտի բերկրանքով, լարուած ուշադրութեամբ:

Դրանք ծերուկ աղքատի աչքերն էին, աղքատի, որին նա ձմեռուայ մի ցուրտ օր տեսել էր փողոցում և հագցրել իր վերարկուն:

Եւ մեռնողը սաստիկ ցաւ զգաց, ափսոսալով, որ վերջին անգամն է յիշում այդ աչքերը, որ այլես երբէք տեսնելու չէ նրանց:

II

## ՍԷՐ

Երազում տեսայ ես կեանքիս մնացած օրերը: Կամացուկ անցնում էին նրանք իմ առաջից, ինչպէս արտոյտների երամը շող օրուայ վերջալուսին:

Տեսայ ես, որ այդ օրերի կուսական թևերը ցօղուած էին արիւնով՝ իմ սեփական արիւնով: Միայն մէկի թևերն էին մաքուր, սպիտակ:

Եւ ես մտածում էի, թէ գոնէ կեանքիս վերջին ժամը քաղցր ու հանգիստ կլինի:

Բայց ահա եկաւ նա—իմ սիրած կինը, տեսաւ, որ արիւնով են ներկուած կեանքիս բոլոր մնացած օրերը—բացի մէկից· տեսաւ և ասաց.

— Ուզում եմ, որ նա էլ լինի բոլոր միւսների նման:

Ես նոյն իսկ չհարցրի՝ ինչո՞ւ...

— Բայց ո՞րտեղից արիւն վերցնեմ, շարունակեց նա իր խօսքը:

Ես ցոյց տուի սիրտս և տալով նրան սուրը, ասացի.

— Խփիր:

Եւ երբ նա բարձրացրեց ձեռքը խփելու համար, ես միայն մի բան էի մտածում.

— Կարո՞ղ եմ արդեօք դսպել իմ ճիչը, որպէսզի նրան չվախեցնեմ:

Նա հասցրեց հարուածը սրտիս, ես լուռ ու մունջ տարայ սաստիկ ցաւը:

Սրտից թափուած արիւնը ներկեց իմ կեանքի վերջին օրուայ մաքուր ու սպիտակ թևերը: Եւ ես մտածեցի.

—Աւա՜ղ, իմ մահուան վերջին ժամն էլ դառն ու սարսափելի է լինելու:

Այնուամենայնիւ ես չհարցրի, թէ ինչո՞ւ այդպէս վարուեց կինն ինձ հետ:

Նա այդպէս էր ուզում, իսկ ես նրան սիրում էի:

# Ա Ն Հ Ո Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Լեգենդա)

(Հենրիկ Սենկեվիչից։)

«Ծխածան» նաւը այնպէս մեծ էր, այնպէս ուժեղ, որ երբէք չէր վախենում ոչ քամուց և ոչ էլ նոյն իսկ ամենասարսափելի փոթորկից։ Նա միշտ իր առագաստերն ամբողջապէս բաց արած սահում էր առաջ, բարձրանում էր փրփրադէզ ալիքների վրա և զօրեղ կրծքով փշուր փշուր էր անում ջրածածկ ժայռերը, որոնց դիպչելով ուրիշ շատ նաւեր խորտակուել էին։

Այսպէս նաւ լողում էր դէպի հեռուն։ Նրա առագաստները փայլում էին արևի ճառագայթների տակ, նրա արագ ընթացքը փրփուր էր առաջացնում ջրի երեսին և սպիտակ—փայլուն հետք թողնում իր յետևից·

— Հիանալի նաւ է, ասում էին ուրիշ նաւերի նաւորդները. Լեվիաթանի նման կտրատում է ջրի ալիքները։

Իսկ երբեմն նրանք հարցնում էին «Ծխածանի» նաւաստիներից։

— Է՜յ, բարեկամներ, դէպի ո՞ր կողմն է լողում։

— Ո՜ւր որ քամին կտանի, պատասխանում էին նաւաստիները։

— Զգոյշ եղէք, ահա այնտեղ յորձանքներ և ժայռեր կան։

Բայց իբրև պատասխան այդ նախազգուշութեան քամին բերում էր խրոխտ երգերի բառերը՝

Ուրախ առաջ սահենք, ընկերներ.
Ուրախ, միշտ ուրախ...

Եւ կեանքը միշտ ուրախ էր այդ նաւի վրա, միշտ անհոգ։ Նաւորդները, իրանց յոյսը դնելով «Ծխածանի» հզօր ուժի վրա, արհամարհում էին վտանգը։ Խիստ կարգապահութիւն էր տիրում ուրիշ նաւերի վրա, իսկ այստեղ ամեն մէկն անում էր ինչ որ ինքն էր ուզում, ինչ որ իր կամքն էր թելադրում։ Անցեալի աջողութիւնը աւելի ու աւելի զարգացնում էր նաւաստիների անհոգութիւնը։

— Չըկայ մի այնպիսի փոթորիկ կամ ժայռ, որը կարողանար ջարդել «Ծխածանը», ասում էին նրանք։ Թող փոթորիկը տակն ու վրա անէ ծովը—այդ ոչինչ, «Ծխածանը» կշարունակէ լողալ միշտ դէպի առաջ։

Եւ «Ծխածանը» իսկապէս շարունակում էր լողալ վեհութեամբ ու հպարտութեամբ։ Անցնում էին տարիներ, բայց նա անյաղթելի էր, փրկում—ազատում էր ուրիշ նաւերի և պատսպարում էր վնասուածներին։ Օրէցօր աւելի ու աւելի զօրեղանում էր նաւաստիների կոյր հաւատը դէպի նաւի անընկճելի ույժը։ Նրանք սովորեցին ծուլանալ և մոռացան իրանց արհեստը։

«Ծխածանն» ինքն իրան կլողայ· էլ ինչու աշխատենք, նայենք, պահպանենք կայմերը, առագաստները և թոկերը. ինչո՞ւ աշխատենք և քրտինք թափենք, երբ մեր նաւը աստուածութեան նման անմահ է։

Եւ այդպէս անցան երկար տարիներ, նաւաստիները բոլորովին մոռացան իրանց պարտականութիւնները և չէին նկատում, որ «Ծխածանը» վնասւում, փչանում է։ Աղի ջուրը մաշել էր գերանները, հզօր ամրութիւնները խարխուլ էին դարձել, ալիքները քայքայել էին նաւեզրը, կայմերը փտել էին և առագաստները ցեցոտուել—ոչընչացել։

Մերթ ընդ մերթ մի քանի նաւաստիների զգուշութիւնն ասում էր·

— Զգուշացէք։

— Ոչինչ, կը լողանք, պատասխանում էր մեծամասնութիւնը։

Բայց ահա ովկիանոսի վրա սկսուեց չըտեսնուած փոթորիկ, որը դժոխային ուժով միմեանց խառնեց

ամպերն ու ծովը։ Ջրի փրփրադէզ և եռացող ալիները սարսափելի ոռնոցով խփում էին «Ծիածանին», սուզում էին նրան ծովի յատակը և ապա դէպի ամպերը զցում, նորից սուզում, նորից վերև բարձրացնում։ Ջարդւում էին նաւի թուլացած ամրութիւնները. յանկարծ լսւում է մի սարսափելի ձայն՝ «Ծիածանը» խեղդւում է...

Եւ «Ծիածանը» իսկապէս սուզւում էր ջրի մէջ։ Ծովագնացութեան արհեստը մոռացած նաւաստիները չէին իմանում՝ ինչպէս փրկել նրան։ Առաջին երկիւղից յետոյ նրանց սրտերում բռնկւեց կատաղութեան կայծը։ Եւ դա հասկանալի է՝ նրանք սիրում էին իրանց նաւը։

Նրանք զէնքեր վերցրին և ըսկսեցին գնդակահար անել փրփրած ալիքները, ապա վերցրին ով ինչ որ կարող էր և սկսեցին ծեծել, հարուածել ծովին, որը ուզում էր կուլ տալ «Ծիածանին»։ Հիանալի կռիւ էր՝ մարդկային յուսահատութիւնը կռւում էր տարերքի դէմ։ Սակայն ալիքները մարդկանցից ուժեղ էին... Դադարեցին զէնքերը։ Կռւողներից շատերը ծովի անդունդն ընկան։ Հետզհետէ պակասում էր մարդկանց թիւը, բայց այնուամենայնիւ կենդանի մնացածները շարունակում էին կռուել յամառութեամբ. հանգստանում էին և ապա նորից կռիւն սկսում։

Բայց ահա նրանց ոյժերը դաւաճանեցին՝ ձեռքերը թուլացան։ Նրանք զգացին, որ մօտենում է մահը։

Վրա հասաւ խուլ յուսահատութեան րոպէն։

Նաւաստիները նայում էին միմեանց, ինչպէս խելագարներ։

Եւ ահա այն միենոյն ձայները, որ առաջ նախազգուշացնում էին, այժմ նորից հնչեցին ուժեղ ու ազդու և խեղդեցին ծովի ոռնոցը։

—Օ՜հ, կուրացածներ, ասում էին նրանք, հարկաւոր է ո՛չ թէ թնդանօթ արձակել կամ սրերով խփել ծովին, այլ նաւը կարկատել, գնացէք ներքև, այնտեղ աշխատեցէք։ „Ծիածանը“ դեռ կորած չէ։

Ցնցուեցին կիսամեռ նաւաստիները, վազեցին դէպի նաւի յատակը և ներքևից սկսեցին աշխատել։ Նրանք աշխատում էին առաւօտից մինչև գիշեր. տքնում էին ու քրտինք թափում, քաւելով առաջուայ անհոգութիւնը և ինքնամոռացութիւնը.....

# Հանրագիտարան

## ԻՆՉ Է ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Տարիներն ու դարերը, միմեանց յետեւից սահելով, կամաց-կամաց զարգացրել, հարստացրել են մարդկային գիտութիւնը և նրան ճիւղաւորել, մի շարք առանձին-առանձին մասերի բաժանել։ Գիտական այդ ճիւղաւորութիւններից շատերը հէնց իրանց անունով արտայայտում են այն, ինչով որ զբաղուած են, այսինքն առհասարակ ցոյց են տալիս իրանց բովանդակութիւնը։ Օրինակ՝ աստուածաբանութիւնը մի գիտութիւն է ընդհանրապէս Աստծոյ մասին. Ֆիզիկան գիտութիւն է բնութեան մասին, կենդանաբանութիւնը—կենդանիների, բուսաբանութիւնը—բոյսերի, հանքաբանութիւնը—հանքերի մասին և այլն։ Գիտական մի քանի ճիւղերն էլ, թէև իսկութեամբ չեն համապատասխանում իրանց անուանը, բայց այնուամենայնիւ արդէն յայտնի են և հասկանալի իրանց կողմով ու բովանդակութեամբ. օրինակ՝ մաթեմատիկան—(այդ բառը նշանակում է առհասարակ ուսողութիւն, գիտութիւն) — երկրաչափութիւնը, երկրաբանութիւնը և այլն։ Այդպէս են գիտութեան բազմաթիւ ճիւղերը։ Իսկ փիլիսոփայութիւնը մեծ չափով տարբերւում է դրանցից։

Փիլիսոփայութիւն բառը յունարէն է։

Հին աւանդութիւնը, որ արձանագրուած է Դիօգինէս Լաէրցիայի և Ցիցերոնի գրուածքներում, այդ բառի ծագումը Պիֆագորին է վերագրում։ Ահա թէ ինչպէս.

Պիֆագորը մի անգամ գալիս է Էլլիդայի Ֆլիօս քաղաքը և տեսնւում ու խօսակցում տեղական իշխանի—Լէօնի հետ։ Իշխանը հիանում է իր հիւրի խելքի ու ճարտարախօսութեան վրա և հարցնում, թէ Պիֆագորը «ինչ գիտութեան կամ արուեստի մասնագէտ է»։

— Ո՛չ մի գիտութեան, պատասխանում է Պիֆագորը. ես միայն փիլիսոփայ եմ։

— Այդ ինչպիսի մարդիկ են փիլիսոփաները և նրանք ինչով են տարբերւում միւս մարդկանցից...

— Մարդկային կեանքը, շարունակում է Պիֆագորը, կարելի է համեմատել մի մեծ սակարկութեան և Ոլիմպիական խաղերի հետ։ Սակարկութեան ժամանակ լինում են գնողներ և ծախողներ, որոնցից իւրաքանչիւրն աշխատում է մի որոշ շահ ստանալ։ Խաղերին մասնակցողները ձգտում են փառք ու հռչակ ձեռք բերել։ Բայց այդ երկու դէպքում էլ կան նաև դիտողներ, որոնք նայում են երկու կողմերին էլ և ուշադրութեամբ հետևում, թէ ինչ է կատարւում։ Նոյնն է մարդկային կեանքը. մարդկանց մեծ մասը հոգս է տանում միայն հարստութեան ու փառքի մասին. այստեղ ամեն ինչ եռւում է, շարժւում է։ Միայն սակաւաթիւ մարդիկ չեն մասնակցում այդ ընդհանուր աղմուկին ու իրարանցումին։ Նրանք դիտում են, ուսումնասիրում են հարցերի հիմքը. իրերի էութիւնը և ամեն բանից աւելի սիրում են ճշմարտութիւնը. դրանք իմաստութեան սիրողներ են՝ փիլիսոփաներ են։ Բայց նրանք կոչւում են ո՛չ թէ իմաստուններ այլ փիլիսոփաներ, որովհետև իմաստուն միայն Աստուած է, իսկ մարդը կարող է ձգտել և սիրել այդ իմաստութիւնը։

Այդ է փիլիսոփայութեան մասին եղած հնագոյն կարծիքը, որը դժբախտաբար շատ անորոշ է իր իմաստով, որովհետև գիտութեան իւրաքանչիւր ճիւղը իր չափով ձգտում է դէպի իմաստութիւն, սիրում է իմաստութիւնը։

Յետագայ ժամանակների կարծիքներն էլ շատ տարբեր ձևերով են բնորոշել փիլիսոփայութեան նշանակութիւնը։ Ահա նմուշները.

— «Փիլիսոփայութիւնը, ասում է Պլատոն, մի գիտութիւն է մտքերի, իդէաների մասին»:

— Փիլիսոփայութիւնը բանական հասկացողութիւնների ու դատողութիւնների վրա հիմնուած մի ձգտում է դէպի կեանքի երջանկութիւնը:—Էպիկուր:

— Փիլիսոփայութիւնը դրական գիտութիւնների սիստեմատիկան միացումն ու եզրակացութիւնն է:—Կօնտ:

— Փիլիսոփայութիւնը մի գիտութիւն է կարելիութեան մասին:—Վօլֆ:

— Փիլիսոփայութիւնը մի գիտութիւն է, որով մշակւում, լուսաբանւում և լրացւում են առանձին առանձին հասկացողութիւնները:—Հերբարտ:

— Փիլիսոփայութիւնը մի գիտութիւն է բացարձակ հասկացողութեան մասին, որ խտրութիւն չէ դնում իրականի ու գաղափարականի մէջ:—Շելլինգ:

Վերջապէս Հեգելի կարծիքով «փիլիսոփայութիւնը գիտութիւն է ինքն իրան հասկացող բանականութեան մասին»:

Կարելի էր ինարկէ շարունակել զանազան կարծիքների այդ շղթան, բայց կարծում ենք առաջ բերածն էլ բաւական է գաղափար կազմելու համար: Դրանցից պարզ երեւում է, որ փիլիսոփայական գիտութիւնն իր ամբողջ էութեամբ այնքան լայն ու բազմակողմանի է, որ չափազանց դժուար է նրան բնորոշելը: Թուցէ աւելի ճիշտ լինի, եթէ ասենք՝ փիլիսոփայութիւնը մի ընդհանուր գիտութիւն է, որի շնորհիւ մասնակի գիտութիւնների առանձին առանձին ճշմարտութիւնները միացնելով կարելի է դուրս բերել մի ամբողջ սիստեմ, առանձին գաղափարներից կազմել մի ամբողջութիւն, իբրև հիմունք և սկզբունք միւս գիտութիւնների համար:

Փիլիսոփայութիւնը իր բովանդակութեամբ շաղկապուած է միւս գիտութիւնների հետ, բայց նրա գլխաւոր ձգտումն է դրանց բազմազանութիւնից դուրս բերել տրամաբանական մի ամբողջութիւն, պարզել Աստծու, աշխարհի, մարդու, բարոյականութեան, իրաւունքի, գեղեցկագիտութեան մասին եղած հասկացողութիւնները:

Բայց նախ քան փիլիսոփայական մի որ և է եզրակացութիւն կամ հասկացողութիւն դուրս բերելը մենք պէտք է քննենք մեր մտածողութեան գործարանը, պէտք է իմանանք կանոնաւոր մտածելու և դատողութիւններ անելու—եղանակը: Այդ նպատակին հասնել կարելի է տրամաբանութեան միջոցով:

Սակայն դրանով էլ հարցը չէ վերջանում. մեր դատողութիւնները, գործունէութիւնը, գեղագիտական և բարոյական զգացմունքները մըշտական և անկախ երեւոյթներ չեն: Նրանք շաղկապուած են թէ արտաքին պայմանների ու ազդեցութիւնների և թէ ներքին՝ մեր հոգեկան կազմուածքի հետ: Հէնց այդ պատճառով պէտք է քննութեան առնել այդ կապը, այդ պայմանները, պէտք է իմանալ՝ թէ ինչ ձևով են կազմւում հոգեբանական այն գաղափարները, որոնցով բնորոշւում է մեր մտաւոր, բարոյական և գեղագիտական կեանքը, թէ ինչ չափով ու ձևով են ազդում հոգեկան գործունէութեան վրա ներքին ու արտաքին գործօնները: Այդ նպատակին է ծառայում հոգեբանութիւնը:

Բացի վերոյիշեալ երկու միջոցից կայ և երրորդը, որի օգնութեամբ կարելի է փիլիսոփայական աւելի ճիշտ հասկացողութիւններ ու եզրակացութիւններ կազմել: Տրամաբանութեան և հոգեբանութեան միջոցով մենք հիմնւում ենք գլխաւորապէս մեր սեփական հոգեկան և մտաւոր ուժերի վրա և նրանց օգնութեամբ ենք վերլուծում ու քննում փիլիսոփայական հասկացողութիւնները: Բայց այդքանը դեռ բաւական չէ: Փիլիսոփայութիւնը, ինչպէս և իւրաքանչիւր ուրիշ գիտութիւն, մի որև է մնայուն, անփոփոխ նիւթ չէ, որ ամեն անգամ առանձին անհատների խելքի ու մը-

տածողութեան շնորհիւ գոյութիւն ստանայ կամ վերակենդանանայ: Նա միշտ զարգանում—առաջադիմում է, ունի իր երկար անցեալը, իր բազմազան ուղղութիւնները, արմատներն ու ճիւղաւորութիւնները: Հէնց այդ պատճառով լրիւ հասկացողութեան ու կատարեալ ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ փիլիսոփայութեան յիշեալ արմատներն ու ճիւղաւորութիւնները, անցեալն ու ներկան—ուրիշ խօսքով ասած՝ անհրաժեշտ է իմանալ փիլիսոփայութեան պատմութիւնը:

Այդ երեք գիտութիւնները՝ տրամաբանութիւն, հոգեբանութիւն և փիլիսոփայութեան պատմութիւն, կարելի է փիլիսոփայութեան հիմքը համարել: Բացի դրանից կայ գիտութիւնների և մի ուրիշ համախմբում, որ նոյնպէս փիլիսոփայութեան բաղադրիչ մասն է կազմում: Դրանք են բնազանցութիւնը, իրաւունքի փիլիսոփայութիւնը, բարոյախօսութիւնը և գեղագիտութիւնը:

Բնազանցութիւնը (Metaphysik) մի վարդապետութիւն է ընդհանուր սկզբունքների մասին և շօշափում է ներկայի, ապագայի, կարելիութեան, իրականութեան և անհրաժեշտութեան հասկացողութիւնները: Նա հետեւում է երկու նպատակների, այն է՝ օնտօլօգիական (ontologische) և տիեզերախօսական (kosmologische) կամ աստուածաբանական (theologische):

Առաջինը ձգտում է պարզել, թէ ինչումն է կայանում գոյութեան էութիւնը: Այդ հարցին տարբեր պատասխաններ են տալիս ուստի և գոյութիւն են ստացել առանձին վարդապետութիւններ, այն է՝ 1) երկւորականութիւն-դուալիզմ (Dualismus), որ գոյացութեան (Substanz) երկու ձև է ընդունում՝ ֆիզիքական—մարմնական և հոգեկան—մտածողական. 2) միականութիւն—մոնիզմ, որը ձգտում է հաստատել, թէ գոյութեան բոլոր ձևերն ու երևոյթները միայն մի սկզբնապատճառից են առաջացել: Եթէ այդ պատճառը նիւթականին է վերագրում, այն ժամանակ վարդապետութիւնը կոչւում է—մատերիալիզմ, իսկ եթէ հոգեկանին—մտաւորականին, այն ժամանակ կոչւում է տեսալականութիւն—սպիրիտուալիզմ կամ իդէալիզմ:

Երկրորդը, այսինքն տիեզերախօսութիւնը կամ աստուածաբանութիւնը ձգտում է պարզել, թէ ինչ է տիեզերքը և ինչպէս է առաջ եկել նա: Այդ մասին էլ տարբեր վարդապետութիւններ կան, այն է՝ 1) Հիւլէականութիւն—ատոմիզմ, որի կարծիքով տիեզերքը բաղկացած է անթիւ—անհամար հիւլէներից, որոնք միանգամային անկախ, անսկիզբ ու յաւիտենական են. 2) Աստուածադաւանութիւն—թէյիզմ, որ ասում է, թէ տիեզերքը ստեղծուած է Աստուծու ձեռքով, որոշ ծրագրով և 3) համաստուածութիւն — պանթէյիզմ, որը ամբողջ բնութիւնն է համարում աստուածութիւն:

Այդքանը բնազանցութեան մասին: Գալով իրաւունքի փիլիսոփայութեանը, պէտք է ասել, որ նրա նպատակն է պարզել մեր գործնական, բարոյական և հասարակական գործունէութեան օրէնքները ու ձեւերը: Բարոյախօսութիւնը (Ethik) վերլուծում և լուսաբանում է լաւի և վատի, բարու և չարի և առհասարակ բարոյականութեան վերաբերեալ հասկացողութիւնները, իսկ գեղեցկագիտութիւնը (Esthetik) պարզում է գեղեցիկ ստեղծագործութեան ձեւերն ու օրէնքները:

Այսպէս ուրեմն բնազանցութիւնը, իրաւունքի փիլիսոփայութիւնը բարոյախօսութիւնը և գեղագիտութիւնը փիլիսոփայական բովանդակութեան երկրորդ մասն են կազմում:

Բայց դրանով էլ դժուար կլինէր լայն ու լրիւ հասկացողութիւններ կազմել, փիլիսոփայական հիմնաւոր աշխարհայցողութիւն ունենալ, եթէ ուրիշ գիտութիւնների օգնութեան չդիմենք: Հէնց այդ պատճառով փիլիսոփայութիւնը իր մէջ ընդունում է և մի քանի ուրիշ

օժանդակիչ գիտութիւններ, վերլուծութեան ու վերաբաղադրութեան միջոցով քննում է դրանց ճշմարտութիւնները: Այդ օժանդակիչ գիտութիւնների շարքում գլխաւոր տեղը բռնում են պատմութեան փիլիսոփայութիւնը և կրօնի փիլիսոփայութիւնը.

Այսպէս ուրեմն, ամփոփելով մեր բոլոր ասածները, գալիս ենք այն եզրակացութեան, որ փիլիսոփայութիւնը չափազանց լայն ու բազմակողմանի մի գիտութիւն է, որի մէջ մտնում են 1) Տրամաբանութիւնը, հոգեբանութիւնը և փիլիսոփայութեան պատմութիւնը, 2) բնազանցութիւնը, իրաւունքի փիլիսոփայութիւնը, բարոյախօսութիւնը և գեղագիտութիւնը, 3) պատմութեան փիլիսոփայութիւնը, կրօնի փիլիսոփայութիւնը և ուրիշ օժանդակիչ գիտութիւններ:

Հասկանալի է, իհարկէ, որ այդ քան բազմակողմանի գիտութիւններ ուսումնասիրելով, կարելի է ձեռք բերել մասնաւոր հարուստ պաշար և լայն աշխարհահայեացք, ուրիշ խօսքով ասած՝ կարելի է հասնել իմաստութեան որոշ աստիճանի:

Ե. Թոփչեան.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

(Կրթութեան վարդապետութիւն)

Մեր մանկավարժ բառը յունարէն պեդագոգոս, (մանկան առաջնորդ) բառի մօտաւոր թարգմանութիւնն է, սակայն ոչ մէկը և ոչ էլ միւսը այլեւս չեն համապատասխանում գիտութեան ժամանակակից գաղափարին: Պեդագոգիկան-մանկավարժութիւն բառը սակայն այնքան ընդհանրացել է, որ նոյն իսկ խորթ չէ թւում ընկերական-մանկավարժութիւն (Socialpedagogik) դարձուածը: Վերջինս հետազօտում է ընկերական կեանքի գիտակցական և անգիտակից ոյժերը կամ գործօններն ու նրանց ազդեցութիւնը, մի մասնաճիւղ, որ որքան կարեւոր, տարաբաղդաբար նոյնքան էլ անմշակ է տակաւին:

Հետեւաբար այստեղ համառօտ գաղափար պիտի տրուի միայն մանկավարժութեան մասին բառիս սովորական առմամբ, որ սակայն ժամանակակից գիտութեան տեսակէտից նաև պատանիների ու երիտասարդների կրթական գործն էլ իր մէջ ամփոփելով՝ այնուամենայնիւ չէ համապատասխանում գաղափարի ընդարձակութեանը:

Մանկավարժութիւնը ստորաբաժանւում է երկու մասերի՝ պատմական և սիստեմատիքական: (Ա. Պատմական մանկավարժութիւնը ներկայ կրթութիւնն ընդունելով իբրև դարաւոր ազդեցութեանց արդիւնք՝ հետամուտ է լինում վերակենդանացնել նրա զարգացման պատկերը նրա ծագումից մինչև մեր օրերը՝ կրթութիւնը տնտեսական ու քաղաքական շարժման հետ պատճառական հետեւողութեամբ կապակցելով: Այդպիսով պատմական մանկավարժութիւնը դառնում է սիստեմատիքական մանկավարժութեան ուսուցիչը. սիստեմատիքական մանկավարժութիւնն էլ իր կողմից սրում է մարդու միտքը կրթական անցեալը ըստ արժանւոյն ճանաչելու և գնահատելու համար:

Բ. Համակարգական կամ սիստեմատիքական մանկավարժութիւնը բովանդակում է իւր մէջ այն բոլոր գիտելիքներն ու հմտութիւնները, որոնք կարեւոր են ժողովրդի կրթական գործին, նրա ամեն ճիւղաւորութիւններով, նպատակայարմար կազմակերպութիւն տալու համար: Մանկավարժութիւնն, ինչպէս իւրաքանչիւր արուեստ՝ ունի իւր տեսական և գործնական մասերը:

I. Տեսական մանկավարժութիւ-

նը գրաւում է կրթութեան գաղափարի էութեամբ, նրա նպատակի անհրաժեշտութեամբ, կարեւորութեամբ ու իրագործման սահմանափակութեամբ, նրա միջոցներին ու ճանապարհներին վերաբերեալ խնդիրներով:

Կրթութիւնը մի նպատակաւոր ու կանոնաւոր ներգործութիւն է աշակերտի վրա, նրա հոգեկան կեանքին հաստատուն և որոշ կազմակերպութիւն տալու, ազնիւ բնաւորութիւն առաջացնելու համար:

Կրթութեան անհրաժեշտութիւնը ծագում է իրական կեանքի պահանջներից, որոնք պիտի ղեկավարուեն բարոյագիտութեան (էթիքայի) իդէալներով: Բայց բարոյագիտութիւնը մեզ իդէալներ առաջադրելով՝ չէ պարապում նրանց ինչ աստիճանի ու ինչպէս հասանելի լինելու խնդրով: Այդ հոգեբանութեան գործն է, որ հետազօտելով մտաւոր կեանքի երեւոյթները, օրէնքներ է հանում նրանցից ու այդ օրէնքների հիման վրա կրթական գործին ճանապարհներ ու միջոցներ է ցոյց տալիս: Այսպիսով մանկավարժութիւնը հանդիսանում է մի կողմից իբրև կիրառական բարոյախօսութիւն, միւս կողմից իբրև կիրառական հոգեբանութիւն: Հետևաբար տեսական մանկավարժութիւնը իր կողմից ստորաբաժանվում է երկու մասերի՝ մէկը ցոյց է տալիս կրթութեան նպատակը միւսը՝ միջոցները: Կրթութիւնը երկու տեսակ հիմնական միջոցներ ունի—դասաւանդութիւն (դիդակտիկա) և առաջնորդութիւն:

1. **Դասաւանդութիւն**: Դասաւանդութեան նպատակն է դէպի մարդկային ու բնական կեանքի երեւոյթները հարցասիրութիւն առաջացնել ու հարցասիրութիւնից՝ ազնիւ կամք: Այսպիսով ուսուցման ազդեցութիւնը դաստիարակչութեան գործում միջական է, իսկ առաջնորդութեանը անմիջական՝ խօսքով, օրինակով: Նախ քննութեան է առնում, թէ գիտելիքները ինչպէս ու ինչ չափով ընդհանրապէս կարող են ծառայել դաստիարակութեանը:

Դիդակտիկան որոշ սկզբունքներ է տալիս, որոնց ուղեցոյց ունենալով պիտի ղեկավարուել մարդու և բնութեան կեանքից ուսուցման նիւթեր ընտրելիս:

Ուսուցման նիւթերն ամբողջ դասընթացքի համար ընտրելուց, դասաւորելուց յետոյ վերածում են հատուածների, որոնց ամենասահմանափակ մասը կազմում է մի ամբողջական տարր՝ իբրև մի առանձին դասի (և ոչ անպատճառ ժամի) նիւթ:

Ուսուցման ծրագրի շղթայից վեր առած իւրաքանչիւր այսպիսի մեթոդական միութիւն մշակւում է հոգեբանական օրէնքների վրա հիմնուած այսպէս անուանեալ ձեւական հինգ աստիճաններով:

Ուսուցման պրօցէսը կատարւում է երկու գլխաւոր աստիճաններով, իւրացմամբ ու վերացմամբ: Նոր նիւթը սաների մտաշրջանի հետ միացնելու համար պէտք է նրանց մտապատկերներից վերարտադրել (վեր հանել գիտակցութեան խորքերից) իւրաքանչիւր անգամ այնպիսիները, որոնք այդ նորը իւրացնելու, ըմբռնելու կարողութիւն ունենային: Նախապատրաստութեան այս առաջին աստիճանին հետևում է երկրորդ աստիճանը՝ նոր նիւթի աւանդումը. դրանից յետոյ հնի ու նորի համեմատութեան ու կապակցութեան միջոցով տեղի է ունենում վերացումը, կամ գաղափարի մշակումը, (երրորդ աստիճանը): Չորրորդ աստիճանում համակարգութեան տակ են գրւում նոր մշակուած գաղափարները և վերջապէս հինգերորդ աստիճանը ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է գործադրել մեր ստացած գաղափարները, կանոնները, մտապատկերների շարքերը: Եւ որովհետև մտքի այս ընթացքը պէտք է առաջացնել անխտիր բոլոր առարկաներն ուսանելիս, ուստի և այս աստիճաններն անուանում են ձեւական:

Դաստիարակութեան վերաբերեալ այս ընդհանուր խնդիրները քննելուց յետոյ՝ անցնում են իւրաքանչիւր առարկայի նպատակի, նիւթերի ընտրութեան, կապակցութեան ու մշակութեան խնդիրներին, որոնք արդէն մասնաւոր դիդակտիկայի գործն է։

2. Առաջնորդութիւն (Zührung) Մանկավարժութեան մէջ առաջնորդութեան գործը ստորաբաժանւում է դաստիարակութեան (Zucht), կառավարութեան (Regierung) և մարմնատածութեան (Diätetik)։

Մինչդեռ դպրոցական կառավարութիւնը հետամուտ է լինում դաստիարակութեան արգելքներն ու խոչնդոտները վերացնելու կարգապահութեան միջոցով, իսկ դասաւանդութիւնը ազդում է երրորդ տարրի՝ գիտելիքների միջոցով, դաստիարակութիւնը անմիջական ազդեցութիւն է գործում մանկան զգացման (Gemüth), այսինքն նրա ախորժանքի (Begierde), կամքի ու զգացմունքի վրա։ Կառավարութիւնը մանկան ներկայ կեանքն ի նկատի ունի, իսկ դաստիարակութիւնը՝ նրա ապագան։

Առաջնորդութեան երրորդ գործն է մանկավարժական մարմնատածութիւնը, որ կրթական գործի էական մասերից մէկն է և հիմնւում է բնախօսութեան ու առողջապահութեան վրա, որով այս վերջինները մանկավարժութեան օժանդակ գիտութեանց շարքն են մտնում, թէև նրա համար բարոյախօսութեան (էտիկայի) և հոգեբանութեան չափ հիմնական նշանակութիւն չունեն։

III Գործնական մանկավարժութիւն։ Սիստեմատիքական մանկավարժութեան առաջին մասը՝ տեսականը ցոյց է տալիս հոգու ու մարմնի նպատակայարմար զարգացման ճանապարհներն առանց ի նկատի ունենալու, թէ իրական կեանքում ինչպիսի հանգամանքներում, ինչ եղանակներով ու ինչպիսի կրթական հաստատութեանց միջոցով կարելի էր հասնել մեր նպատակներին։ Կրթական գործի պահանջները, նայելով մի ժողովրդի ժամանակակից կեանքին՝ ստանում են զանազան կազմակերպութիւն, որոշ յարաբերութեան մէջ դնելով ընկերութեան արտաքին կազմակերպութեան տարրերի՝ ընտանիքի, հասարակութեան, եկեղեցու և պետութեան հետ։

Գործնական մանկավարժութիւնը ի նկատի ունենալով ընկերական ոյժերի գործադրութեան բազմակողմանի պահանջները և այդ ոյժերի հաւասարակշռութեան պէտքը, կրթական հաստատութեանց խմբեր է ծրագրում և վարչական օրէնքներ սահմանում։ Այդ հաստատութիւնները կամ զուտ կրթական կամ զուտ մասնագիտական բնաւորութիւն են ունենում։ Ուսումնարանների մնացած ստորաբաժանումները երկրորդական բնաւորութիւն ունեն։ Սակայն ժամանակի հոսանքը հետզհետէ պիտի վերացնէ ժողովրդական զանազան խաւերի համար գոյութիւն ունեցող տարբեր աստիճանի կրթական հաստատութիւնները և դրանք աւելի պարզ կազմակերպութեան պիտի վերածուին։ Երկդասեան, քաղաքային, միջնակարգ- տարրական, ժողովրդական և այլ, իրար հետ կապ չունեցող ուսումնարանները, համակերպութեան ենթարկուելով, առաջին տարիներում ժողովրդական բոլոր խաւերից եկած մանուկներին պիտի-միենոյն ծրագրով ուսմունք աւանդեն։

Դա է ցանկալի ապագան, որին ձգտում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։

Յով. Տէր Միրաքեան։

## ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼԸ:

Շատ հին ժամանակներից է սկիզբն առել բժշկական գիտութիւնը: Մարդկային գոյութեան հետ միշտ կապուած է եղել հիւանդութիւնը, ուստի մարդկութիւնը միշտ ձգտել է միջոցներ ձեռք բերել հիւանդութեան դէմ կռուելու համար: Սակայն բժշկութեան ճիւղերից միայն վիրաբուժութիւնն ու մանկաբարձութիւնն էին հէնց սկզբից իրական հողի վրա դրուած: Արիւնհոսութիւնը կանգնեցնելու, կոտրած կամ դուրս ընկած անդամը յուացնելու, ծննդկանին օգնելու համար դեռ շատ հին ժամանակներում մարդիկ գործ էին դնում մօտաւորապէս նոյն միջոցները, ինչ որ ընդունում է այժմեան բժշկականութիւնը: Բայց ժողովուրդը բոլորովին այլ կերպ էր վերաբերվում դէպի ներքին հիւանդութիւնները որոնց նշաններն ու հետեւանքները մատչելի չէին տեսողութեան համար: Նա կարծում էր, թէ այդ հիւանդութիւնները աստուածների կամ չար ոգիների բարկութիւնից են առաջ գալիս, թէ դրանցից ազատուելու համար անհրաժեշտ է զոհաբերութիւններով ու աղօթքներով մեղմացնել ոգիների բարկութիւնը: Քրմերն էին հիւանդի ու աստուածների միջնորդները. մեհեաններն էին բժշկութեան կենտրոնները: Յունաստանում այդ կողմից ամենայայտնի մեհեաններն էին՝ Էսկուլապ աստծու մեհեանները, որտեղ մի կողմից հիւանդներին էին բժշկում, իսկ միւս կողմից բժիշկներն իրանց արուեստն էին սովորում:

Այդպիսով բժշկութիւնը կենտրոնացած էր հոգեւորականութեան ձեռքում: Այդ հանգամանքի շնորհիւ քուրմերը նպաստում էին ժողովրդի սնոտիապաշտութեանը որպէսզի ամբոխից նիւթական շահ ստանան, ազդեցութիւն ձեռք բերեն:

Այս անբնական դրութեան դէմ դուրս եկաւ հռչակաւոր բժիշկ Հիպոկրատը, որը և համարւում է բժշկական գիտութեան հիմնադիր (IV դար Քր. առ.): Նա առաջինն էր, որ յայտնեց, թէ հիւանդութիւնների պատճառը ոչ թէ աստուածներն են, այլ բնական երեւոյթները՝ այսինքն տաքութիւնը, ցուրտը, խոնաւութիւնը և այլն: Նրա կարծիքով հիւանդութեան ժամանակ մարմնի մէջ գոյանում են վնասակար հիւթեր. որոնք և հիւանդութեան իսկական պատճառն են դառնում: Բժշկութիւնը կայանում է նրանում, որ այդ հիւթերը դուրս բերուեն օրգանիզմից:

Հիպոկրատը առանձին ուշադրութիւն դարձրեց առողջապահութեան վրա, որովհետեւ այդ միջոցով բժիշկը կարող է կանոնաւորել օրգանիզմի գործողութիւնը և ազդել հիւանդութեան ուղղութեան վրա:

Ահա այդպէս Հիպոկրատը ազատեց միանգամայն բժշկականութիւնը կրօնական նախապաշարմունքներից և դարձրեց ազատ ու անկախ գիտութիւն. սակայն դեռ շատ խակ էր այդ գիտութիւնը. Նա հիմնուած էր միայն այն տեսողութիւնների և ենթադրութիւնների վրա, որ բժիշկները կարող էին հաւաքել հիւանդին դիտելիս, դրանով կարելի էր ուսումնասիրել միայն հիւանդութեան արտաքին երեւոյթները, իսկ օրգանիզմի մէջ կատարւող փոփոխութիւնները մնում էին անբացատրելի մի հանելուկ:

Մարդկային միտքը չըկարողացաւ բաւականանալ այդպիսի անկատար գիտութիւնով. նա աշխատեց լուծել հանելուկը, բաց անելով մարմնի խորքերը և ուսումնասիրելով նրա կազմն ու գործողութիւնները:

Գիտական այդ նոր ուղղութեան օրօրոցը Եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքն էր: Երրորդ դարում, Քրիստոսից առաջ, այդ քաղաքում կար մի մուզէօն, որտեղ աշխարհի ամենայայտնի գիտնա-

կանները զբաղւում էին գիտութեան զանազան ճիւղերով, մասնաւորապէս և բժշկութեամբ: վերջինիս հիմքը մարդակազմութեան ուսումնասիրութիւնն էր. այդ դըպրոցի ուսուցիչները (Երազիստրատ, Գերոֆիլ) իրաւունք էին ստացել մարդկային դիակներ կտրատել գիտական հետազօտութիւնների համար. դա ահագին առաջադիմութիւն էր այն ժամանակուայ համար: Բայց Ալէքսանդրեան բժիշկները դրանով էլ չբաւականացան. կենդանի մարմնի գործունէութեան հետ ծանօթանալու համար նրանք իրաւունք ձեռք բերին փորձեր և անդամահատութիւններ կատարելու մահուան դատապարտուած ոճրագործների վրա:

Այդ հետազօտութիւնների շընորհիւ Ալէքսանդրեան դպրոցը զգալի առաջադիմութիւն արեց գիտական տեսակէտից. բժիշկները որոշ գաղափար ստացան մարդակազմութեան, այսինքն սրտի, նեարդերի, երակների և մարմնի այլ մասերի նկատմամբ, թէև նրանց տեղեկութիւնները յաճախ սխալ ու անկատար էին. օրինակ—երակները նրանց կարծիքով ծառայում էին արիւն անցկացնելու համար. իսկ զարկերակները—օդի համար:

Բժիշկները չբաւականանալով կատարուած համեստ առաջադիմութեամբ, սկսեցին հերքել նոր մեթօտի օգտակարութիւնը: Գոյացաւ երկու կուսակցութիւն, որոնք վէճերի, ներքին երկպառակութիւնների շնորհիւ բոլորովին քայքայւեցին և ցրւեցին զանազան կողմեր:

Այդպիսով ոչնչացաւ նոր շարժումը, և բժշկականութիւնը վերադարձաւ իր նախկին դրութեանը որ և տևեց մինչև վերածնութեան սկիզբը:

Այդ ժամանակուայ բժշկութեան ամենափայլուն ներկայացուցիչը Հըռոմէացի բժիշկ Գալէնն էր (II դար. Քր. յետոյ), որը իր գրուածքների մէջ ամփոփեց ամբողջ հին բժշկական գիտութիւնը: Այդ գրուածքները հանդիսացան ամբողջ միջին դարերում իբրև ամենաբարձր հեղինակութիւն, որից շեղուելը հերետիկոսութիւն էր համարւում: Այդ հանգամանքի շնորհիւ բժշկական գիտութիւնը բոլորովին չէր առաջադիմում: Միջնադարեան խաւարի մէջ նորից երևան էր եկել հաւատ դէպի հրաշագործ միջոցներն ու հմայքները. իսկ գիտնական հետազօտութիւններ անել և դիակները դիպչել-դա սրբապղծութիւն էր համարւում, դա արգելուած էր եկեղեցական օրէնքով

Իրերի այդ դրութիւնը տևեց մինչև XIV-րդ դարը, երբ առաջին անգամ գիտնական Մոնտանօ-դէ-լուցչին հրապարակով կտրեց մարդկային երկու դիակ և նկարագրեց մարդակազմութիւնը: Նրանից յետոյ նոյնանման փորձեր արին և ուրիշ բժիշկներ, որոնց շարքում նշանաւոր դարձաւ Վեզալին (XVI դար): Այդպիսով երկար դարերի անպայման տիրապետութիւնից յետոյ Հիպպօկրատի և Գալէնի հեղինակութիւնը առաջին անգամ կասկածի ենթարկուեց: Կարճ ժամանակ սրանից յետոյ Հարվէյը մի նոր գիւտ է անում-արեան շրջանառութիւնը—որով մի անգամ ևս ապացուցանում է հին բժիշկների տգիտութիւնը: Միջնադարեան բըժշկութիւնը անկարող էր այլևս դիմադրել նոր գիտութեան ճնշմանը:

Մանրադիտակի շնորհիւ հնարաւոր է դառնում ուսումնասիրել օրգանների նուրբ կազմը, քիմիայի, ֆիզիկայի և մանաւորապէս էլէքտրականութեան միջոցով յայտնի են դառնում մարդկային օրգանիզմի բազմաթիւ առանձնայատկութիւններ, նրա գործողութիւնը, կենսական պայմանները և այլն: Պարզւում է, որ ամբողջ մարմինը կազմուած է անհամար և չափազանց փոքր, աչքով աննշմարելի բջիջներից, որ իւրաքանչիւր բջիջը առանձին կենդանի միութիւն է իր առանձին կեանքով, որ այդ բջիջները զանազան վնասակար պատճառներից հիւանդանում և մեռնում են, իսկ բարեյաջող հան-

դամանքներում կազդուրվում և բարգաւաճում, որ բջիջների հիւանդութիւնից առաջ է գալիս դանազան օրգանների ու օրգանիզմի հիւանդութիւն և այլն: Ահա այդպիսով, գերմանացի գիտնական Վիրխովի ջանքերի շնորհիւ վերջնականապէս հերքվում է Հիպպոկրատի տեսակէտը և հիմնվում է «բջիջային ախտաբանութիւն», որը և տիրում է այժմեան բժշկականութեան մէջ: Բացի դրանից XIX դարի կէսին ֆրանսիացի գիտնական Պաստէօրի և ուրիշների աշխատանքներից յայտնի դարձաւ՝ որ մարդուս շրջապատող ամբողջ միջավայրը, օդը, ջուրը, հողը և այլն, պարունակում է իր մէջ չափազանց փոքր, մանրադիտակով միայն նշմարելի մարմիններ, որոնց անունը դրել են «միկրօբ», որ այդ միկրօբներից ոմանք անվնաս են մարդու համար, ոմանք էլ չափազանց վնասակար, որովհետև մտնելով մարդու օրգանիզմի մէջ առաջացնում են, իրենց արտադրած թոյներով, որոշ հիւանդութիւններ, որ այդ միկրօբների մի քանի տեսակները չափազանց տարափոխիկ են (դիֆթերիտ, կարմրուկ, ժանտախտ և այլն) և որ բոլոր վարակիչ հիւանդութիւնները միկրօբներից են առաջանում:

Այժմ գիտնական բժշկութիւնը հետևեալ եզրակացութեանն է եկել:

Առողջապահութիւնը օրգանիզմի բնական գործունէութիւնն է, որ հնարաւոր է որոշ պայմաններում երբ այդ պայմանները խախտվում են, օրգանիզմը ձգտում է յարմարուելու նոր պայմաններին, բայց այդ բանը կարող է կատարուել միայն որոշ սահմաններում, որոնցից դուրս օրգանների գործողութիւնը խանգարվում է և առաջ է գալիս հիւանդութիւն: Բժշկութեան նպատակն է ուրեմն—օգնել օրգանիզմին իր կռուի մէջ՝ հիւանդութեան դէմ: Հիւանդութեան պատճառները հետևեալներն են. 1) Հակառողջապահական կեանքը.—վատ սնունդը, վատ օդը և ջուրը, խոնաւութիւնը չափազանց յոգնածութիւնը և այլն.

2) Միկրօբները, որոնք առաջացնում են գլխաւորապէս վարակիչ հիւանդութիւններ:

3) Թոյները—օղին, հոտած միսը, ձուկը և այլն:

4) Օրգանիզմի բնական թուլութիւնը—(որը մասնաւորապէս արտայայտվում է ժառանգական հիւանդութիւնների մէջ) և ծերութիւնը:

5) Մի քանի դեռ ևս անյայտ պատճառներ:

Բժշկութիւնը երեք միջոցով է կռւում հիւանդութեան դէմ:

Նախ և առաջ նա աշխատում է առողջապահութեան միջոցներով հիւանդութեան առաջն առնել. Իսկ երբ որ մարդն արդէն հիւանդացած է, նա ձգտում է մի կողմից ոչնչացնել վնասակար գործօնը, իսկ միւս կողմից—բարձրացնել հիւանդի ուժերը, որպէսզի հեշտացնէ օրգանիզմի իրական կռիւը հիւանդութեան դէմ:

Այժմեան բժշկութիւնն ունի բազմաթիւ բուժիչ միջոցներ, որոնց նպատակայարմար գործադրութիւնը բժշկի հմտութիւնից է կախուած:

Բժ. Լ. Քալանթարեան

## ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Նկարչութիւնը գոյութիւն ունի հին ժամանակներից: Նա առաջ է եկել ճարտարապետութիւնից ու քանդակագործութիւնից բաւական յետոյ: Երբ յոյները արձանագործութիւնն այնքան առաջ տարան, որ ստեղծեցին Ապոլոնի, Վեներայի, Հերքուլեսի, Իւպիտերի նման հրաշալի գործեր, որոնք ընդունուած են գեղարուեստական աշխարհում իբրև կատարելութիւն, նկարչութեան մասին ունէին շատ մութ գաղափար: Ուրեմն գեղարուեստի այս ճիւղը համեմատաբար նոր է,

թէև գոյութիւն ունէր Քրիստոսից շատ առաջ: Նկարչութիւնը ծաղկեց գլխաւորապէս XV—XVI դարերում, իտալական աշխարհում՝ Ռաֆայէլի, Միքէլ-Անջելօի, Լէօնարդօ-դա-Վինչիի, Տիցիանի, Կօրրեջիօի և միւս փայլուն անունների օրով, որոնք մէկը միւսի յետևից աշխարհ էին գալիս, արտադրելով երևելի գործեր: Այդ բաղդաւոր դարերը համարեա միմիայն Իտալիայի համար էին: Վերոյիշեալ արուեստագէտները կաթօլիկ կրօնով ներշնչուած նկարում էին, կարելի է ասել. բացառապէս հոգևոր և վերացական ուղղութեամբ պատկերներ: Թէև, ինչպէս Ռաֆայէլ, այնպէս և միւս նկարիչները նկարել են պապի և այլ անձանց կենդանագիրներ (portrait), նոյնպէս պատերազմական և առօրեայ կեանքից վերցրած նկարներ, բայց համեմատաբար շատ քիչ: Իսկ ինչ վերաբերում է բնութեան տեսարաններին (պէյզաժ), բոլորովին չէին հետաքրքրւում, ուստի նկարչութեան այս ճիւղը ոչ զարգացաւ:

Նկարչութեան գլխաւոր նպատակը նոյնն է, ինչ որ գեղեցիկ գրականութեան և քանդակագործութեան, այսինքն արտայայտել ճշմարտութիւնը կամ ուրիշ խօսքով՝ հետևել բնութեան օրէնքներին: Ճարտարապետութիւնը և երաժշտութիւնը, որ իրար շատ նման են, տարբերւում են նրանցից նպատակի նկատմամբ:

Մենք թէև խօսեցինք իտալացի վարպետների մասին, սակայն չըպէտք է մոռանալ, որ սպանական և ֆլամանդական դպրոցները եւս լաւ դեր են կատարել, ժամանակին տալով Մուրիլլօի և Ռուբենսի նըման մեծ արուեստագէտներ:

Այլ բան ենք տեսնում XIX-րդ դարում: Այդ ժամանակ չափազանց առաջադիմեց Ֆրանսիան ստեղծելով նկարչութեան մէջ նոր հոսանք, որ զանազանւում էր հին կլասիքականից իր րէալ ուղղութեամբ: Դէլակրուա, Միլլէ, Կօրօ, Տրօյօն, Դօբինի, Կուրբէ և այլ համեմատաբար հին անուններից զատ, նոյնպէս Ժան-Պօլ-Լօրանս, Բէնժամին Կօնստան, Բօնա, Ադրիէն Դէմօնտ, Բայի, Բուգրօ և միւս տաղանդաւոր նըկարիչները այնպիսի զարկ տուին գեղարուեստին, որ Ֆրանսիան ոչ միմիայն ինքը ծաղկեց, այլ ահագին ազդեցութիւն ունեցաւ ամբողջ աշխարհի վրա:

Ի հարկէ պէտք է յիշել, որ Անգլիան, Գերմանիան, Պրուսիան, Բաւարիան և մի քանի ուրիշ եւրոպական երկիրները նոյնպէս մեծ զարկ տուին նկարչութեանը XIX-րդ դարում, բայց դարձեալ գլխաւոր առաջնորդութիւնը պատկանում է Ֆրանսիային, այսինքն Պարիզին:

Չպէտք է մոռանալ նոյնպէս, որ Ունգարացի Մունկաչի, Լեհաստանցի Մատէյկօ, սպանացի Պըրադիլլա, Անգլիացի Ալմա Տադէմա, Պրուսիացի Մակարտ, Գերմանացի Պիլօտի և Լենբախ Ֆրանսիայի վերոյիշեալ նկարիչներին համահաւասար գեղարուեստական մեծ անուններ են.

Ռուսաստանը նկարչութեան կողմից թէև դեռահաս է, բայց այնուամենայնիւ կարճ ժամանակամիջոցում մեծ քայլերով առաջ գնաց: Նա էլ ունեցաւ Բրիւլլովի, Իվանովի, Բրունիի, Այվազովսկու նման և մի քանի այլ խոշոր ներկայացուցիչներ:

Հայոց ազգը, չլինելով կենտրոնացած մի տէրութեան մէջ, բնականաբար չէր կարող մշակել ինքնուրոյն դպրոց, հետևաբար ստիպուած ենք խոստովանելու, որ հայկական նկարչութիւն գոյութիւն չունի: Իրաւ է, հայ արուեստագէտների թիւը օրէցօր աճում է և վերջերումս բաւականաչափ շատացել է, բայց նրանք իրենց նըկարչական առանձնայատկութիւններով նոյնչափ տարբերւում են միմեանցից, որքան այն երկիրները, ուր նրանք դաստիարակուել են: Նրանց կարելի է հանդիպել ոչ միայն Եւրոպայի բոլոր նշանաւոր կենտրոններում, այլ և Նիւ-Եօրկում, Ֆիլադէլֆիայում և այլն:

Հարկաւոր է այստեղ աւելացնել, որ դարեր առաջ ապրել են հայ նկարիչներ, որոնց աշխատութիւնները դեռ մնում են զանազան հին եկեղեցիների պատերի վրա և գրչագրերի մէջ: Հազիւ թէ սխալուած լինենք, եթէ այդ աշխատութիւնները անուանենք զուտ հայկական, բայց քանի որ մեր խօսքը վերաբերում է Եւրոպական արուեստին, այդ հանգամանքը ըստիպում է զատել նորը հնից՝ անցած գնացած ասխականից:

Նկարչութիւնը համամարդկային է, դա այն լեզուն է, որ մատչելի է բոլոր բանական արարածներին, նոյն իսկ երբեմն անասուններին ու թռչուններին: Նկարչութեան միջոցով հնարաւոր է լինում արտայայտել այնպիսի բաներ, ինչ որ յաճախ անկարելի է լինում անել գեղարուեստի միւս ճիւղերի օգնութեամբ: Օրինակի համար. գիշերային երկինք ճշտութեամբ արտայայտելու համար գրականութիւնը անզօր է, լոկ այն պատճառով, որ բոլոր գոյների համար բառեր չկան:

Ամեն մի գոյն հարիւրաւոր ելէջներ ունի, որ մատչելի է բացառապէս նկարչութեան: Ի հարկէ միւս արուեստները նոյնպէս ունին իրենց արժանաւորութիւնները և յատկութիւնները, որից զուրկ է նկարչութիւնը: Կարելի չէ վրձինի միջոցով արտայայտել արձագանք, ամպի որոտումն և այլն:

Նկարչութիւնն ունի զանազան ճիւղեր, որոնք իրարից զանազանւում են ուղղութեան կողմից:

Ամեն մի արուեստագէտ ընտրում է միմիայն մի ճիւղ և կատարելագործում ճիշտ այնպէս, ինչպէս այդ լինում է բժշկութեան մէջ: Սակաւ կըգտնուի գեղարուեստագէտ, որ երկու իրար հակառակ ճիւղեր հաւասար կերպով սիրէ և կատարելագործէ:

Պատմաբանները նկարում են պատմական բովանդակութիւն ունեցող պատկերներ, ժանրիստները առօրեայ կեանքից, պէյզաժիստները բնութեան տեսարաններ և երևոյթներ, բատալիստները պատերազմական անցքերից, պօրտրետիստները մարդկանց կենդանագրեր և նատիւր-մորտիստները մեռած բնութիւն, այսինքն մրգեր, պտուղներ, ծաղիկներ և այլն:

Գ. Բաշինջաղեան

## ՎԱՐԴԱՎԱ՞Ռ, ԹԷ ՎԱՐԴԱԽՈՐ.

Վերջին ժամանակներս Պ. Արշակ Զօրանեանի առաջարկութեամբ բացատրութեան առարկայ դարձաւ մեր Վարդավառ բառը, և քննողներից ամեն մէկը մի ջոկ նշանակութիւն տըւաւ նրան: Թող աւելորդ չըհամարուի և իմ բացատրութիւնը. գուցէ անցեալ և ապագայ քննութիւնների շարքում սա էլ մի անկիւն գտնի իր համար:

Մեր ժողովուրդը եկեղեցական տօների անունները աղճատելու սովորութիւն չունի. նա մաքուր արտասանութեամբ ասում է — Ծնունդ, Մկրտութիւն, Ջրօրհնէք, Աւետումն Զատիկ, Համբարձում: Ուրեմն եթէ մի քանի տօներ այնպէս չէ անւանում, ինչպէս գրաւորն է, այդ չպէտք է համարել գրաւորի աղճատւածը, ինչպէս սովոր են մեզանում նայել, այլ պէտք է ուսումնասիրել նրանց տարբերութիւնը և տեսնել որն է նրանցից ուղիղը:

Ժողովուրդը չի ասում «Տեառնընդառաջ», այլ՝ «Դրնդառանջ» (Ղարաբաղ) և «Դրընդէզ», որոնք չեն էլ նշանակում Տեառնընդառաջ, այլ պեծածան բոցը, որը բարձրանում է Տեառնընդառաջի նախատօնէքին վառած մեծ խարոյկից:

Չեն ասում «Ծաղկազարդ», այլ՝ Զառզարդար և Ծառզարդար, որոնց նշանակութիւնը Ծաղկազարդի բուն տօնից տարբեր է և Ծաղկազարդ բառի աղճատուածը չէ: Այդ բառերը յիշեցնում են մի վաղեմի սովորութիւն, երբ ժողովուրդը իր պաշտած Աստուածուհուն զարդարե-

լիս է եղել ոսկեթել զարդարանքներով և նորաբողբոջ ծառերի թարմ ոստերով։ Մինչդեռ ծաղկազարդ բառը մի ածական է, որ յատկացրել են Քրիստոսի Երուսաղեմ մտնելու յիշատակին, երբ դիմաւորել են նրան «Ծերքն ոստովք ձիթենեօք և տղայքն ոստովք արմաւենեօք»։ Այդ երկու տօները մի զարմանալի զուգադիպութեամբ միացել են միմեանց հետ շատ հաշտ և ներդաշնակ, բայց այնուամենայնիւ ժողովուրդը զարդարելու սովորութիւնը չէ մոռացել և իր ճաշակովն ու ճռուանովը մի հարսանեկան հանդէս է, որ կատարում է եկեղեցումը, որտեղից փեսացուներն ու հարսնացուները դուրս են գալիս նորանոր ընծաներով զարդարուած։

Խառնանք այժմ «Վարդավառ» բառին։ Այդ բառը «Վարդաւոր» բառի նոյնանիշը չէ։ Վարդաւոր նշանակում է վրան վարդ ունեցող, վարդ կրող, իսկ վարդավառ՝ վարդ և վառ բառերից կազմ ած լինելով, մի հակատրամաբանական խառնուրդ է ներկայացնում։ Այդ բառերի ինչպէս կազմութիւնը, նոյնպէս և դրա բացատրութիւնը բառարանում շատ է բռնազբօսիկ և անմիտ։ Մեր ոչ մի բարբառում այդ բառը գործածութիւն չունի, ամեն տեղ վարդ բառին կպցնում են ոչ թէ վառ, այլ՝ աւոր, ամեն մի տեղ իրանց բարբառին յատուկ ձևով, ինչպէս—Վարթաւոր, Վարթէւոր, Վարթիւոր. Վըրթէւուր. Վըրդէւիւր, Վարթէւուր եայլն։

Վարդաւոր անւը պատմական ստուգաբանութիւն էլ ունի, քանի որ այդ տօնը՝ իրաւի որ Վարդաւորի տօնն էր, որ էր Վարդամատն Անահիտը։ Իսկ Վարդավառը քրիստոնէական բառ է. դրանով ուզեցել են մի կողմից Քրիստոսի պայծառակերպութիւնը բնորոշել—(իբր բացուած վարդին կարելի է և վառուած վարդ ասել)—և միւս կողմից ժողովրդին հեռացնել իր Վարդաւորից՝ Սակայն ժողովուրդը չի էլ իմացել, որ իր սուրբ հայրերը մի այդպիսի հոգսի մէջ են և շարունակել է պաշտել ու պաշտպանել իր սիրելի Վարդաւորը։ Այսպէս ահա, իմ տեսութեամբ, այդ երկու բառերից ուղիղը և իսկականը Վարդաւորն է, իսկ «Վարդաւվառը» անյաջող կազմութիւն ունի և չի համապատասխանում ոչ հնին և ոչ նորին. ոչ Անահիտի վարդաւորութեանը և ոչ Քրիստոսի պայծառակերպութեանը։

Միշտ այն չէ ուղիղը, ինչ որ գրական է. երբեմն էլ ժողովրդականն է ճշմարիտը։

Մեր հին լեզւի մէջ անյաջող կազմւած բառեր շատ կան, որոնց մէկն է և մեր Բարեկենդան բառը, որը թէև բարի և կենդանութիւն բառերից կազմւած, զուրկ է տրամաբանական հիմքից, չընշանակելով այն, ինչի համար որ գործ է ածւում։ Սրա հակառակ աւելի ուղիղ են դրա ժողովրդական բարկէնդան (Թիֆլիս) և փըրքենդան (Ղարաբաղի) նոյնանիշ ձևերը, որոնք պարսկական ծագումն ունին և նշանակում են տօն օր, ազիզ օր։ Աշկարա է, որ մեր մատենագիրներից մէկը փըրքենդան և բարգէնդան բառերը, համարելով աղճատւած բարեկենդան բառից, սրբագան պարտականութիւն է համարել շտկել այդ սխալը։ Գուցէ սրա նման պատճառից է առաջ եկել և Վարդաւորի Վարդավառ լինելը։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

# Քաղաքներ

## ԹԻՖԼԻՍ

Վրացի մատենագիրների աւանդով, Թիֆլիս քաղաքը շինուած է Վախտանգ Թագաւորի օրերում (446—499): Սկզբում նա մի փոքրիկ գիւղ էր՝ «Թիֆիլիսի» անունով, որ նշանակում է «տաք ջրեր»: Այդ անունը, հետզհետէ աղաւաղուելով, դարձաւ Թիփլիսի և ապա Թիփլիս կամ Թիֆլիս:



Վանքի Մայր եկեղեցին:

Վախտանգ Թագաւորը նորահաստատ քաղաքը բաժանեց երեք մասերի, այն է՝ 1) Թիփլիսի, այժմեան տաք բաղանիքների շրջակայքը, 2) Կալիսի—թուրքերի մէյդանի մօտակայ բարձրաւանդակը և 3) Իսանի այժմեան—Հաւլաբարը:

Նա իր գահը տեղափոխեց Մցխէթից—Թիֆլիս, որը և այդպիսով մայրաքաղաք դարձաւ և արագ քայլերով զարգանալ սկսեց...

Սակայն արտաքին թշնամիները հանգիստ չէին տալիս Թիֆլիսին: Նրա անցեալը ներկայացնում է անվերջ աւերածութեան, հրի և սրի մի տխուր պատմութիւն: Նրա վրայով զանազան ժամանակներում հեղեղի նման անցել են արաբները, թաթարները և լեռնականների հրոսակային արշաւանքները: Միայն ռուսաց տիրապետութիւնը հաստատուելուց յետոյ (1801 թ.) Թիֆլիսն սկսում է քիչ ազատ շունչ քաշել և տնտեսապէս—կուլտուրապէս առաջադիմել:

XIX-րդ դարի սկզբում Թիֆլիսի եկամուտը հասնում էր հազիւ 7,250 րուբլու, այսինքն իւրաքանչիւր բնակչին—$36\frac{1}{4}$ կոպ., իսկ 1843 թ. եկամուտի գումարը հասաւ 89,276 ր., այսինքն իւրաքանչիւր բնակչին—1 ր. $69\frac{1}{3}$ կոպ.:

1803 թ. քաղաքի ազգաբնա-

կութիւնը 20,000 էր, իսկ 1843 թ.—52,791:

Ահա այդպէս 40 տարուայ ընթացքում Թիֆլիսի ազգաբնակութիւնը աւելացաւ 2½ անգամ, հարկերը 5 անգամ, իսկ քաղաքի ընդհանուր եկամուտը—12 1/2 անգամ:

Եւ այդ աճումը շարունակուեց նաև հետևեալ տարիներում: Այսպէս Թիֆլիսն ունէր.

1864 թ. 66,000 բնակիչ
1874 » 100,000 »
1897 » 162,354 »
1898 » 165,250 »
1899 » 172,726 »
1900 » 181,611 »
1901 » 186,653 »

Թիֆլիսը Կովկասի մայրաքաղաքըն է ոչ միայն աշխարհագրական, այլ և կրթական տեսակէտից:

Նա դպրոցների վրա ծախսել է՝

1875 թ. 4,000 ր.
1879 » 5,000 »
1880 » 18,000 »
1882 » 45 000 »
1884 » 63,000 »

Դրանից յետոյ դպրոցական գործի վրա ծախսած գումարները յանկարծ պակասում են, ամբողջ տասնամեակի ընթացքում տատանուելով 50-ից մինչև 54 հազար րուբլի: 1894 թուականից նրանք նորից բարձրանալ են սկսում, հասնելով՝

1894 թ. 66,000 ր.
1895 » 67,000 »
1896 » 72,000 »
1897 » 80,000 »
1898 » 83,000 »
1899 » 110,000 »
1900 » 130,000 »

Ուրեմն անցեալ 1900 թ. Թիֆլիսի իւրաքանչիւր բնակիչը կրթական գործի համար ծախսել է մօտաւորապէս 65 կոպ.

Գալով քաղաքային ընդհանուր ծախսերին, պէտք է նկատել, որ այստեղ էլ նկատւում են մեծ տատանումներ: Այսպէս.

Ընդհանուր ծախս եղել է՝

1879 թ. 505,000 ռ.
1883 » 905,000 »
1886 » 1,145,000 »
1892 » 1,195,000 »
1900 » 1,505,000 »
1902 » 1,401,086 »
1903 » 1,438,600 »

1901 թուականին Թիֆլիսն ունեցել է ընդամենը 154 դպրոցական հիմնարկութիւններ, այն է՝

1 ուսուցչական ինստիտուտ
1 օրիորդաց »
6 գիմնազիա
1 ռէալական դպրոց
22 զանազան դպրոցներ՝ միջնակարգ և միջնակարգից քիչ ցած դասընթացով:
32 քաղաքային դպրոցներ (1, 2, 3, 4 և 6 դասարանեան)
5 եկեղեց.—ծխակ. դպրոց
11 լուսաւորչական »
2 մահմեդական »
46 մասնաւոր »
2 մասնաւոր դասընթացներ
3 կիրակնօրեայ դպրոց

Սովորողների թիւը եղել է 12,783 արական և 8011 իգական, ուրեմն ընդամենը 20,794:

Թիֆլիսի ազգաբնակութիւն ըստ ազգութեան (1901)

| | Տղամարդ | կին |
|---|---|---|
| Հայ . . | 34,425 | 28,818 |
| Ասորի . | 951 | 677 |
| Յոյն . . | 840 | 541 |
| Վրացի . | 31,686 | 19,242 |
| Հրէայ . | 1,735 | 1,247 |
| Իմերեթ | 4,454 | 2,013 |
| Կարաիմ | 20 | 5 |
| Քուրդ . | 336 | 276 |
| Լեզգի . . . | 494 | 173 |
| Մինգրել . . . | 915 | 579 |
| Գերմանացի . | 1,674 | 1,578 |
| Օսեթին . . . | 1,308 | 928 |
| Պարսիկ . . . | 4,856 | 1,576 |
| Լեհացի . . . | 2,863 | 2,267 |
| Ռուս . . . . | 23,298 | 18,636 |
| Թաթար . . . | 2,031 | 1,484 |
| Թուրք . . . . | 252 | 117 |
| Թուշ . . . . | 69 | 59 |
| Ֆրանսիացի . | 197 | 295 |
| Խևսուր . . . | 30 | 10 |
| Չեչեն . . . . | 282 | 159 |
| Էստօն . . . | 65 | 49 |

| | | |
|---|---|---|
| Ուրիշ ազգութ. | 1,515 | 1,368 |
| Ընդամենը | 104, 396 | 82, 257 |

Բոլորը 186,653

Թիֆլիսի ազգաբնակութիւնն ըստ դաւանութեան

| | Տղամարդ | կին |
|---|---|---|
| Ուղղափառ . . | 51,193 | 40,691 |
| Աղանդաւորներ | 3,429 | 3,038 |
| Կաթոլիկներ . | 3,608 | 2,232 |
| Բողոքականներ | 2,187 | 1,756 |
| Հայ լուսաւորչ. | 30,129 | 25,740 |
| Հայ կաթոլիկ. | 4,296 | 3,078 |
| Հրէաներ . . | 1,735 | 1,247 |
| Կարաիմ . . . | 20 | 5 |
| Սուննիներ . . | 1,792 | 1,174 |
| Շիիներ . . . | 4,640 | 2,260 |
| Եզդիներ . . | 22 | 20 |
| Ուրիշ դաւան. | 1,345 | 716 |
| Ընդամենը | 104,396 | 82,257 |

Թիֆլիսի ազգաբնակութեան շարժումը 1901 թ.

| Պսակների թիւը: | Ծնունդների թիւը | | | | | | | | | Մեռածն. թիւը | | | Աճը 1 տարում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Օրինաւոր ծն. | | | Ապօրինի ծն. | | | Ընդամենը | | | | | | |
| | Արական սեռ. | Իգական սեռ. | Ընդամենը | Արական սեռ. | Իգական սեռ. | Ընդամենը | Արական սեռ. | Իգական սեռ. | Ընդամենը | Արական սեռ. | Իգական սեռ. | Ընդամենը | |
| 1160 | 2384 | 2244 | 4628 | 131 | 161 | 292 | 2515 | 2405 | 4920 | 1993 | 1206 | 3199 | 721 |

Ոգելից ըմպելիներ վաճառող հիմնարկութիւնների թիւը եղել է.
1896 թ.—736: 1897 թ.—809:
1898 թ.—841, 1899 թ.—762:
1900 թ.—796: 1901 թ.—758:
1902 թ.—805: 1903 թ.—879:

Թիֆլիսի գործարանները:

| Թ. | գործարան | բանւոր | արտադրութիւն |
|---|---|---|---|
| 1898 | 282 | 4698 | 6,031 593 ր. |
| 1899 | 286 | 4785 | 8,606,308 » |
| 1900 | 263 | 5377 | 8,059,000 » |
| 1901 | 240 | 5064 | 10,246,664 » |

Արհեստագործութիւնը Թիֆլիսում (1901 թ.)

Թիֆլիսում եղել է 53 համքարութիւն, 2225 արհեստանոց, 2409 վարպետ, 1960 կրտսեր վարպետ, 2365 աշակերտ, 386 բանւոր:

Անցեալ 1902 թ. Թիֆլիսում կային
14 դեղատուն
10 դեղախանութ
8 վիմագրատուն
16 տպարան
6 գրադարան
4 ընթերց. գրասենեակ
15 գրավաճառանոց

Թիֆլիսում լոյս են տեսնում հետեւեալ (26) պարբերական հրատարակութիւնները.—Ռուսերէն՝ (11) «Кавказъ», «Кавказскій Вѣстникъ практ. садоводства», «Кавказскій листокъ», «Новое Обозрѣніе», «Тифлисскій листокъ»- «Кавк. Сельск. Хозяйство», «Телефонъ», «Духовный Вѣстникъ Груз. Экз.», «Инженерное дѣло», «Листокъ попул. гигіены» և «Листокъ Кавк. Офицер. Экон. Общ.»: Հայերէն՝ (8) «Աղբիւր», «Ազգագրական Հանդէս», «Առողջապահիկ թերթ», «Լումայ», «Մըշակ», «Մուրճ», «Նոր-դար», և «Տարազ»: Վրացերէն՝ (6) «Իվերիա», «Կուալի», «Ջեջիլի», «Մոամբէ», «Մօգզաուրի», «Ցնօբիս-Փուրցելի»: Պարսկերէն՝ «Ձարկի Ռուս»:

# ԲԱԳՈՒ

Ով որ չափ ու քիչ ծանօթ է մեր երկրի տնտեսական կեանքին, ով որ ուշի ուշով հետևել է նրա զանազան երևոյթներին, նա անշուշտ կըվկայէ, որ վերջին ժամանակներս Կովկասում զգալի փոփոխութիւններ են տեղի ունենում... Գործարաններն աւելանում են, բանւորները բազմանում, արդիւնագործու-




Բագուի ծովափը:

թիւնը հետզհետէ բարեկարգւում է և հզօր կապիտալիզմն իր արմատները տարածում:

Այդ հարցում ամենանշանաւոր դեր խաղացողը նաւթի արդիւնաբերութիւնն է, ամենահզօր գործօնը Բագու քաղաքն է, որ իրաւամբ Կովկասի տնտեսական կեանքի սիրտը կարող է համարուել:

Բագուն մեծ նշանակութիւն ունի նաև ամբողջ Ռուսաստանի համար, որովհետև Կասպից ծովի ամենալաւ նաւահանգիստն է և ներկայացնում է մի տեսակ պահեստատեղ այն ապրանքների, որոնք Եւրոպայից և Ռուսաստանից արտահանւում են դէպի Պարսկաստան ու Անդրկասպեան երկիրը: Դրա վրա աւելացրէք նաւթային հարուստ արդիւնաբերութիւնը և այն ժամանակ հասկանալի կլինի նրա բարգաւաճման ու մեծութեան պատճառները:

Բայց ի՞նչ է եղել Բագուի անցեալը:

Նրա հնութեան մասին մի քանի ենթադրութիւններ կան*): Յայտնի է, որ Հին Հայաստանը ունէր Փայտակարան անունով մի նահանգ, որի տեղը ճշտութեամբ դեռ չէ որոշուել: Դա բոլոր հայկական նահանգների մէջ քիչ ծանօթ ու մութ պատմութիւն ունեցող տեղերից մէկն է: Նրա գոյութեան և կազմուածքի մասին կարճ յիշատակութիւն կայ Մովսէս Խորենացուն

*) «Արօր» 1894 թ.:

վերագրուած աշխարհագրութեան մէջ: Այդ աշխարհագրութիւնը բացատրողները (Հ. Ինճիճեան, Հ. Ալիշան, պրօֆէսօր Ք. Պատկանեան), հիմնուելով մեր պատմագիրների զանազան ժամանակ տուած ցուցմունքների վրա, հին Փայտակարանի տեղը որոշում են Կուրի և Արաքսի խառնուելուց գոյացած եռանկիւնու հարաւային մասում. Նահանգը մի կողմից անցնում էր Արաքս գետը, Մուղանի անապատը և հասնում էր Կասպից ծովին: Եւ այդ հանգամանքը հաստատւում է օտար մատենագիրների վկայութեամբ: Ստրաբօնը վկայում է, որ Կասպից ծովը Կասպիացոց երկրի հարաւային կողմում հասնում էր Հայաստանի սահմաններին և որ հէնց ծովի ափում բնակւում էին հայերը աղուանների հետ:—Այսպէս ուրեմն, Փայտակարան նահանգը իր սահմանների մէջ էր առնում այժմեան Բագուի նահանգի մասերը: Նոյն աշխարհագրութեան հեղինակը, որ Մովսէս Խորենացին է հաշւում, ասում է, որ Փայտակարան նահանգը բաղկացած էր 12 գաւառներից, որոնցից մէկն է Բագաւաճ: Ահա հէնց այդ Բագաւանն է ենթադրւում այժմեան Բագուի գաւառը, և այդ ենթադրութեան ոյժ է տալիս մի հանգամանք, որ յիշատակում է Խորենացին իր պատմութեան մէջ (Բ. գիրք. գլ. ՀԷ): Արտաշիր Սասանեան պարսից թագաւորը Արշակունի Խոսրով թագաւորին սպանել տալուց յետոյ սկսում է կարգ ու կանոն հաստատել Հայաստանում և ի միջի այլոց հրամայում է Որմզդական կրակը անշէջ պահել Բագաւանի բագինների վրա: Յայտնի է, որ այժմ էլ Բագուի մօտ, Սուրախանի գիւղում գոյութիւն ունեն մշտնջենական կրակները, որոնք դուրս են գալիս գետնից և որոնց մինչև վերջին տարիներս երկրպագում էին կրապաշտ գեբրները:

Բայց Փայտակարան նահանգը քիչ ժամանակ է եղել Հայաստանի հետ խառնուած, թէև նրա բնիկ երկրներից մէկն է կազմել. մենք տեսնում ենք, որ նրան պարբերաբար տիրում են կամ պարսիկները, կամ մարաց ազգը և կամ աղուանները:

Ենթադրութիւններից անցնելով պատմութեան, մենք տեսնում ենք, որ Բագուի անունը առաջին անգամ յիշատակում են արաբացի պատմագիրները, որոնք հիացմունքով են նկարագրում մշտնջենական կրակները: Այդ ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը Բագուն եղել է մահմեդական մի քաղաք: Մահմեդական տիրապետութեան յիշատակարաններից այժմ մնացել են՝ հին բերդի պարիսպների մեծ մասը, բերդի մէջ գտնւող Շիրուանեան շահի ապարանքը, դիւանատունը և մզկիթը. դրանք ներկայացնում են մահմեդական ճարտարապետութեան լաւ տեսակը: Բայց աւելի նշանաւոր է մի կլոր և բարձր աշտարակ, որ գտնւում է ծովափի վրա և այժմ փարոսի տեղ է ծառայում: Այդ աշտարակը կոչւում է Կոյսի աշտարակ (Կըզ—գալա): Աւանդութիւնն այս է ասում այդ աշտարակի մասին. Շիրուանի պետերից մէկը սիրահարւում է իր հարազատ աղջկայ վրա և արևելցու բուռն կրքերից յաղթահարուած՝ ուզում է անպատճառ տիրանալ նրան: Գեղանի աղջիկը խորամանկութեան է դիմում. հօր վաւաշոտ կրքից ազատուելու համար խնդրում է հօրը շինել իր համար մի բարձր աշտարակ: Հայրը սկսում է, իսկ խորամանկ աղջիկը յոյս ունի, թէ մինչև աշտարակի վերջանալը երկար ժամանակ կանցնի, կիրքը հօր մէջ կատաղի ուժգնութիւնից կըզրկուի և ինքը միջոց ու կարողութիւն կունենայ հասկացնել, թէ ինչ աններելի բան է պահանջում հայրը: Բայց բռնապետի կիրքը այդտեղի այրող արևից էլ տաք է եղել. աշտարակը նրա հրամանով վերջանում է շատ շուտ. աղջկանից պահանջւում է խոստմունքի կատարումն: Բայց աղջիկը այդ անբնական, կատարեալ գազանական կրքից միակ ապահով և հեշտ

միջոցն է ընտրում. այն ժամանակ երբ հայրը մօտենում էր իր սօսկալի դիտաւորութեամբ, աղջիկը դուրս է թռչում աշտարակի պատուհանից: Կասպիականի ալիքները այդ ժամանակ լիզում էին աշտարակի ստորոտները. նրանց սառը գրկում խեղդւում է գեղեցկուհին, նախապէս ջրերին յանձնելով իր կուսութեան պատիւը:

Բագուի շրջականներում էլ գըտնւում են հնութիւնների շատ հետքեր, որոնք ցոյց են տալիս, որ մի ժամանակ այս տեղերում եռացող կեանք է եղել: Եւ այլապէս անկարելի էր, մի կողմից ծովը, իսկ միւս կողմից նաւթային հարստութիւնը մարդկանց մեծ բազմութիւն են հաւաքել այս տեղերում:

Բագուն զգալի առաջադիմութիւն է ցոյց տուել գլխաւորապէս վերջին տասնամեակում (1890—1900): Այդ կարճ ժամանակաշրջանում նա չափազանց մեծացրել է իր տարածութիւնը և աւելացրել է ազգաբնակութիւնը: Այսպէս օրինակ՝ 1896 թ. նա ունէր 86,611 բնակիչ, 1897 թ.—112,253, իսկ ներկայումս—Բագուի նահանգական վիճակագրական մասնաժողովի տեղեկութիւնների համեմատ—մօտ 200,000 բնակիչ: 1898 թ. ամբողջ քաղաքում եղել են ընդամենը 5,895 շինութիւն*, իսկ այժմ այդ թիւը հասել է արդէն 8,000 ի:

Այդպիսի ինտենսիւ առաջադիմութեան ընթացքում քաղաքը բարեկարգել է նաև իր արտաքին տեսքըն ու նիւթական վիճակը: Իբրև ապացոյց բաւական վերցնել փողոցները. 1883 թ. քարած փողոցների տարածութիւնն էր միայն 1,257,4 քառ. սաժէն, իսկ այժմ—101,152,41 քառ. սաժ.: Չըքարած մնում է միայն 33,293,89 քառ. սաժ., որի համար արդէն նշանակուած է 100,000 րուբլի:

Բագուն ունի 62 կրթական հիմնարկութիւն, 14 տպարան, 9 դեղատուն, 12 դեղախանութ և այլն**:

Քաղաքի նիւթական վիճակի մասին գաղափար կարելի է կազմել միայն մի տարուայ (1903) բիւդջէից, որի մուտքն է 2,280,612 րուբլի, իսկ ծախքը նոյնքան խոշոր գումար:

Այդ պերճախօս թուերը ցոյց են տալիս, թէ Բագուն տնտեսապէս ո՛րքան բարձր է Կովկասի միւս քաղաքներից: Իր այդպիսի բարձրութեամբ նա պարտական է դարձեալ „օրհնեալ նաւթին“ և ահա թէ ինչու. նաւթային արդիւնաբերութիւնը, տարեց-տարի աճելով և ազգաբնակութեան համար օգտակար զբաղմունքներ մատակարարելով, Բագուն դարձրեց մի վաճառաշահ քաղաք և դէպի իրան գրաւեց բազմաթիւ կապիտալիստներ և աշխատաւոր ձեռքեր: Այդ հոսանքը զգալի կերպով թանգացրեց քաղաքային հողերի գինը: Այսպէս օրինակ.

| թ. | 1 սաժ. | տարած. | գինն է րուբ. |
|---|---|---|---|
| 1888 | » | » | » 2—3 |
| 1895 | » | » | » 4—25 |
| 1896 | » | » | » 5—66 |
| 1897 | » | » | » 5—100 |
| 1898 | » | » | » մինչև 205 |

իսկ 1899 թ. այդ գումարը հասաւ 252 րուբ:

Ահա այդ գումարներն էին, որ հարստացում էին քաղաքային գանձարանը և նորանոր ծախսերի հնարաւորութիւն տալիս: Տարեկան մօտ 500,000 րուբլի միայն այդ հողերից է ստացւում: Քաղաքի միւս եկամուտներն էլ պակաս չէին աւելանում: Այսպէս ազդում էր „նաւթի“ զօրութիւնը:

Իսկ եթէ դրա հակառակ աչքի առաջ ունենալու լինենք նաւթի հասցրած վնասը տեղական ազգաբնակութեանը, այն ժամանակ պիտի յիշենք միայն այն հանգամանքը, որ նա որոշ չափով նպաստել է հրդեհների շատութեանը: Կովկասի ոչ մի քաղաքում այնքան հրդեհներ տեղի չեն ունեցել, որքան Բագւում:

Յիշենք մի քանի թուեր.

1891 թ. տեղի են ունեցել 69

*) В. Бубновъ: „Къ планамъ гор. Баку“.

**) А. Суворинъ: „Вся Россія“ 1903.—стр. 2653.

հրդեհ, պատճառելով 276,650 ռուբլի վնաս, 1894 թուին 47 հրդեհ—164,345 ռուբլի վնասով, 1997 թուին 65 հրդեհ—896,920 ռուբլի վնասով և 1900 թուին 87 հրդեհ—1,236,086 ռ. վնասով։

Բագու քաղաքում լոյս են տեսնում ռուսերէն 9 պարբ. հրատ., այն է՝ «Баку», «Бакинскія извѣстія», «Каспій», «Бак. Торгово—промыш. листокъ», «Бак. Губ. Вѣст.».«Бак. Объвленія», «Кавказъ и средн. Россія», «Нефтянное дѣло», և «Труды Бак. отд. Импер. Рус Техн. Общ.».

## ԿԱՐՍ

Կարսը համանուն նահանգի կենտրոնը և ռուս-թիւրքական սահմանի վրա ամենակարևոր կէտն է։

Վերջին ռուս-թուրքական պատերազմից յետոյ, երբ Բեռլինի դաշնագրով (1878 թ.) Կարսն իր ընդարձակ նահանգով անցաւ Ռուսաստանին, կառավարութիւնն առանձին ուշք դարձրեց այս հինաւուրց բերդի վրա, որ նոր սահմանի վրա միակ կարևոր պատուարն էր։ Վերանորոգեցին միջնաբերդը, չինեցին բազմաթիւ մարտկոցներ (форты), որոնք ցրուած են Կարս-չայի երկու կողմը տարածւող բարձր՝ անմատչելի սարահարթի վրա. միացրին նրանց խճուղիներով, սանդուղքներով և կամուրջներով, չինեցին ընդարձակ զօրանոցներ, մթերանոցներ և այլն, այնպէս որ այժմ Կարսը համարւում է երկրորդ կարգի ցամաքային բերդ։ Քաղաքի հին մասը, գտնուելով էօպլանադա*) կոչուած տարածութեան վրա, մնում է անփոփոխ և կարող է գաղափար տալ թիւրքական Կարսի

*) Բերդի և գլխաւոր պատնէշի մէջ եղած տարածութիւնը։



Կարս քաղաքի ընդհանուր տեսքը

մասին: Նեղ, ծուռ ու մուռ փողոցներ, մի և երկու յարկանի անկանոն տներ, որոնք ամֆիթատրոնի ձևով բարձրանում են վերև՝ գետի երկու ափերին և դուրեկան տեսք են տալիս քաղաքին, տեղ-տեղ մզկիթներ, սրածայր մինարէթներ—ահա թիւրքական Կարսը:

Հէնց այս մասումն են Կարսի պատմական յիշատակարանները.—Առաքելոց եկեղեցին, որ չընայելով հազարամեայ հնութեանը, այսօր բերդի մայր եկեղեցին է: Միջնաբերդը, որ արևելքից արևմուտք ձգւում է մի բարձր ժայռի վրա՝ գետի աջ ափին, պարիսպները, որոնք մինչև ռուսաց տիրապետութիւնը կանգուն էին, ս. Նշան եկեղեցին և էլի մի քանի մատուռների աւերակներ:

Քաղաքի նոր մասն ընկնում է գետի աջ ափին՝ Միջնաբերդից հարաւ տարածւող տափարակի վրա և լաւ տպաւորութիւն է թողնում իր ընդարձակ փողոցներով և կանոնաւոր շինութիւններով, թէպէտ այս մասում էլ տեղ-տեղ դեռ կան դատարկ տարածութիւններ և հին խարխուլ շէնքեր: Նոր մասումն են բոլոր պետական հասարակական հիմնարկութիւնները և շուկան:

Ընդհանրապէս Կարսն իր արտաքինով լաւ տպաւորութիւն է թողնում. միակ պակասութիւնը, որ անմիջապէս աչքի է ընկնում, ծառերի, պարտէզների բացակայութիւնն է. բնութիւնը զարմանալի աղքատ է այստեղ. պատճառը խիստ կլիման և հողի վատ յատկութիւնն է: Քաղաքի միակ զբօսավայրը՝ կղզին, որ ամառը կենդանութիւն է ստանում, և Կուբինեան պարտէզը խղճուկ պատկեր են ներկայացնում իրանց ուռիներով, չնայելով որ նրանց վրա առանձին հոգս են տանում, և բաւականին ծախք է լինում:

Մինչև ռուսաց տիրապետութիւնը Կարսը, կարելի է ասել, բուն թիւրքական քաղաք էր, որ ունէր մօտ հինգ հազար տուն թիւրք բնակիչներ, որոնց հետ կային մօտ երեք հարիւր տուն հայեր: Թէ պատերազմից քիչ առաջ և թէ յետոյ թիւրք ազգաբնակութիւնը հետզհետէ մեծ խմբերով գաղթեց Թիւրքիա: Դրանց փոխարէն զանազան տեղերից, առաւելապէս Ալէքսանդրապօլ քաղաքից այստեղ գաղթեցին շատ հայեր, որոնք այժմ կազմում են ազգաբնակութեան գերակշռող տարրը: Հոգևոր կառավարութեան տեղեկութիւններով այստեղ հաշւում է 1800 ծուխ: Այս թւումն են և գաղթականները, որոնք անցեալ տարի գրւեցին ռուսահպատակ: Կան 50 տուն կաթոլիկ և մի քանի տուն էլ բողոքական հայեր: Երկրորդ տեղն են բռնում թիւրքերը, յետոյ ռուսները (պանդուխտները ևս), և յոյները. կան նաև վրացիներ, գերմանացիներ, հրէաներ և այլն:

Պաշտօնական տեղեկութիւններով* ազգաբնակութեան ընդհանուր թիւն է (չհաշւելով զօրքը) 11.708 հոգի, որոնցից—բնիկ՝ 832 տուն—2839 արական, 2622 իգական. գումարը 5461 հոգի: Վերաբնակիչ՝ 3104 արական, 2966 իգական. գումարը 6070 հոգի:

Զօրքի ընդհանուր թիւն է մօտաւորապէս 8200, ուրեմն Կարսում ապրումեն ընդամենը մօտ 20.000 հոգի:

Լինելով նոր գրաւած երկրի միակ աչքի ընկնող տեղը և գտնուելով Թիւրքիա տանող միակ բանուկ ճանապարհի վրա, Կարսը նահանգի առևտրի և արդիւնաբերութեան կենտրոնն է: Այստեղ է բերւում Ռուսաստանից և Թիւրքիայից ըստացուած ապրանքը. այստեղից է դուրս գնում նահանգի արտադրութիւնը—մացու,աղ, գարի, ցորեն, կտաւատ, շինութեան փայտ և այլն: Առևտրի և արդիւնաբերութեան գործը դիւրացնում է երկաթուղու գիծը, որով Կարսը միացած է Ռուսաստանի հետ: Ստորև բերած թըւերը, որոնք վերաբերում են 1897 թ., գուցէ մի գաղափար տան քաղաքի առևտրի և արդիւնաբերութեան մասին:

---

*) « Обзоръ Карсской области. 1901»

Գիւղական ձեռնարկութիւն՝ ընդամենը 10 ։ Շրջանառութիւն —698300 րուբլի։ Օգուտ 101315 րուբլի· Տուրք 6689 րուբլի։ Ազատ ձեռնարկութիւն՝ ընդամենը 29։ Շրջանառութիւն 454610 րուբլի։ Օգուտ 70005 րուբլի։ Տուրք 3027 րուբլի։

Առևտուրը և արհեստները մեծ մասամբ հայերի ձեռքն են, և պէտք է նկատել, որ եկւոր հայերը աւելի ձեռներեց և ընդունակ են, քան բնիկները։ Գաղթական հայերի մէջ աչքի են ընկնում Էրզրումի և նրա շրջակայքի հայերը, որոնց մէջ կան հմուտ վաճառականներ և լաւ արհեստաւորներ։ Պէտք է ասած, որ Թիւրքիայի հետ ունեցած առևտրական յարաբերութիւնը կարող էր շատ ընդարձակուել, եթէ հայերին չարգելուէր անցնել սահմանը։

Առևտուրն ու արդիւնաբերութիւնը զարգացնելու համար պակասում են նպաստող հանգամանքներ։ Քաղաքում չկայ ոչ մի փոխատու հիմնարկութիւն, որ դիւրացնէր առևտրականների գործը· Մի աննպաստ պայման է նաև կալուածական խնդիրը։ Կարսեցին օրէնքով իրաւունք չունի վաճառելու կամ գրաւ դնելու իր տունը, իր կալուածքը։

Իբրև նահանգական քաղաք Կարսը ժողովրդի կրթութեան տեսակէտից շատ յետ է մնացել։ Պակասում են տարրական դպրոցներ՝ մանչերի ՛ճարով՝ չքաւոր դասակարգի համար։ Չկայ նաև տղայոց միջնակարգ դպրոց, այնինչ հարիւրներով կարելի է հաշուել քաղաքից և նահանգից դուրս ուսանող տղայոց թիւը։ Մտադրութիւն կար բանալ տղայոց պրօգիմնազիա, սակայն մինստրութիւնը ցանկալի էր գտել բանալ Կարսում արհեստագիտական միջնակարգ դպրոց· սա մի մեծ բարիք կլինի Կարսի և իր նահանգի համար։

Ներկայումս (1903 թ.) Կարսում գոյութիւն ունեն հետևեալ կրթական հաստատութիւնները։

*) «Обзоръ Карсской области».

1) Աղջիկների պրօգիմնազիա (1902 թուից) 90 աղջ.։ 2) Քաղաքային երեքդասեան դպրոց 325 տղ.։ 3) Մարիամեան չորեքդասեան դպրոց 223 աղջ.։ 4) Տարրական արհեստագիտական դպրոց 32 տղ.։ 5) Քաղաքային տարրական դպրոց 280 տղ.։ 6) Ծխական դպրոց (Բերդի մայր եկ. գաւթում) 24 տղ. 17 աղջ.։ 7) Թեմական ծխական տղ. դպրոց 28 տղ.։ 8) Թեմական ծխական աղջ. դպրոց 23 աղջ.։ 9) Հայ-Կաթ. ծխ. երկսեռ դպրոց 55 տղ. 99 աղջ.։ 10) Մասնաւոր երկսեռ դպրոց 55 տղ. 18 աղջ.։ 11) Պանսիոն և ուսումնարան 12 տղ. 2 աղջ.։ Գումարը 811 տղ. և 472 աղջ.։

Չնայելով որ 25 տարի է անցել Կարսի միացումից յետոյ, սակայն դեռ այնտեղ չէ մտցրած քաղաքային ինքնավարութիւն։ Պատճառը մասամբ քաղաքացոց անտարբերութիւնն է, մասամբ էլ մեր երկրի բարձր կառավարութեան հայեացքը Կարսում և իր նահանգում տիրող վարչութեան ձևի (Военно-народное управленіе) մասին։ Քաղաքի գործերը կառավարւում են տեղական ոստիկանական վարչութեան ձեռքով. այդ վարչութեան մէջ քաղաքն ունի իր ներկայացուցիչները — դեպուտատները, որոնք պարտաւոր են վերահասու լինել քաղաքի եկամտին։ Քաղաքն ունի 7000 դեսեատինից աւելի հող և ուրիշ եկամուտներ։ Իբրև նոր քաղաք ունի նաև շատ կարիքներ։ 1901 թուին քաղաքի եկամուտն եղել է 57,827 ր, 96 կ. ծախքը—53,700 ր 88 կ.։ Եկամուտի գլխաւոր բիւներն են քաղաքի հողերը, որ կապալով տրուած են երկրագործներին, և քաղաքացոց անշարժ կալուածներից ստացուած տուրքը։ Հողերից ստացւում է մօտ 20.000 ր. իսկ տուրքերից 15.000ր., Կրթական գործի վրա նոյն թուին քաղաքը ծախսել 4100 ր., որ շատ աննշան է կարիքի համեմատութեամբ։

ՏԵՂԱՑԻ։

# Նշանաւոր դէպքեր ու դէմքեր

## ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԻ ԴԱՐԱԴԱՐՁԸ

Հայ անունը պատմութեան մէջ յայտնի է դառնում դեռ Քրիստոսից եօթ-ութ դար առաջ, և այս հին ժամանակներում աչքի ընկնող թագաւորներ են տիրել Հայաստանում և հռչակուել օտար ազգերի մէջ անգամ. բայց այս երկար ժամանակամիջոցում, մինչև հինգերորդ դարի սկիզբը Քրիստոսից յետոյ, մօտ 1200 տարուայ պատմական կեանքի ընթացքում, հայերը չեն ունեցել սեփական գիր ու գրականութիւն։ Հայաստանի զանազան կողմերում քարերի վրա փորագրուած բազմաթիւ սեպագրութիւններ կան. բայց նրանք հայերէն չեն և չեն գրուած հայերի ձեռքով, այլ այն ժողովուրդների, որոնք ապրում էին Հայաստանում դեռ հայերից առաջ։ Նախ-քրիստոնէական շրջանից մնացել են հայ թագաւորների շատ դրամներ, բայց նրանց վրայի մակագրութիւնը յունարէն է։ Քրիստոնէութեան դարերում էլ հայ թագաւորների գրագրութիւնները, կալուածական, ժառանգական և այլ տեսակ ակտերը գրւում էին պարսկերէն։ Քրիստոնէութիւն հայերն ընդունել էին դեռ չորրորդ դարի սկզբին. բայց եկեղեցական արարողութիւնները կատարւում էին մասամբ յոյն և մասամբ ասորի լեզուներով։ Վերջապէս ոչ մի հաւանական նշան, ոչ մի դրական փաստ մինչև այսօր չէ երևացել, որ ցոյց տար, թէ մինչև հինգերորդ դարի սկիզբը հայերն ունեցած լինեն սեփական այբուբեն։

Խիստ անմխիթարական վկայական է այս իրողութիւնը մեր նախկին անկուլտուրականութեան։ Մօտ 1200 տարի ապրել ինքնուրոյն ազգային կեանքով, սեփական թագաւորութիւն ունենալ, բազմաթիւ ազգ լինել, շրջապատուած լինել և անդադար շփուել հռոմայեցիների, յոյների, ասորիների և պարսիկների նման ազգերի հետ, որոնք բոլորն էլ ունէին սեփական գիր և ոմանք նաև հարուստ գրականութիւն, և չստեղծել ու չունենալ սեփական այբուբեն—սա ցոյց է տալիս «մեր նախնեաց անիմաստասէր բարքը», ինչպէս գանգատւում է խորագինին Խորենացին. ցոյց է տալիս նրանց դատապարտելի անտարբերութիւնը դէպի ազգայինը, բացակայութիւնը ազգային ինքնաճանաչութեան և պատուի։ Ժողովրդի ստորին խաւերը անշարժ, մտաւորական կեանքից բաւական հեռու. բարձր խաւերը զուարճութիւնների անձնատուր եղած և օտարամոլ.—այս է եղել հին հայոց պատկերը դարերի ընթացքում և դժբաղդաբար մինչև այժմ էլ չէ փոփոխուել։

Բարոյական ու մտաւորական այս թուլութեան շնորհիւ խիստ ցաւալի, ընկած դրութեան էր հասել Հայաստանը չորրորդ դարում։ Կարելի է ասել, որ նա, ունենալով հանդերձ սեփական թագաւորութիւն, ազգութիւն ու լեզու՝ համարեա կուլ էր գնացել միջձակայ աւելի զօրեղ ազգերին. Կուլ էր գնացել քաղաքականապէս՝ օտար ազգերի վասալը դառնալով,

կուլ էր գնացել ևս կուլտուրապէս՝ օտարներից, մանաւանդ պարսիկներից ստանալով ամեն ինչ, որ կրում է քաղաքակրթութեան որևէ նշան։ Տեսած կլինենք ճանապարհների վրա հողի խորունկ կտրուածքներ. այնտեղ ձեր աչքին կերևին զանազան շերտեր հողի մէջ—կաւի, աւազի, խճի, քարացած բոյսերի և այլն. երկրաբանը, այս շերտերին նայելով, ձեզ կպատմէ հողի այդ կտորի դարաւոր անցեալը և կրած փոփոխութիւնները։ Ազգերի քաղաքակրթութեան պատմութեան մէջ նոյն դերն է կատարում լեզուն։ Լեզուաբանը, քննելով որևէ լեզուի բառարանն ու քերականութիւնը, գտնում է այն մտաւոր ու քաղաքական յարաբերութիւնները, որ այդ ազգը դարերի ընթացքում ունեցել է օտարների հետ։ Այսպէս էլ մեր հինգերորդ դարի սկզբների լեզուի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ մեր այն ժամանակուայ ամբողջ քաղաքակրթութիւնը—կրօնը, օրէնքները, պետական կազմը, տնտեսական կեանքը, արհեստները և այլն—օտարամուտ է եղել, և եթէ այս եկամուտ քաղաքակրթական տարրը հեռացընենք՝ տակը մնացածը, բուն հայկականը (եթէ բուն հայկական է) կներկայանայ մեզ իբրև մի դրութիւն այնպիսի ժողովրդի, որ ապրելիս է եղել վայրենական կամ բարբարոսական վիճակում։

Մեսրոպ Մաշտոց

Թէ ո՞րքան թոյլ էին այն ժամանակ ազգայնական տարրերը՝ կարելի է եզրակացնել հետևեալ իրողութիւնից։ Հայոց նախարարները, կամ տոհմական խոշոր կալուածատէրերը, ձանձրանալով իրանց բնիկ թագաւորներից՝ դիմում են պարսից թագաւորին և խնդրում, որ հայոց թագաւորութիւնը վերցնէ և պարսիկ խան նշանակէ իրանց աշխարհը կառավարելու։ Մի ուրիշ իրողութիւն. ընդարձակ, միլիոնաւոր բնակիչներ, սեփական ազգային իշխանութիւն, եկեղեցական յատուկ նուիրապետութիւն ունեցող Հայաստանը, նոր կրօն (քրիստոնէութիւն) ընդունելիս՝ օտար աշխարհներից հրաւիրում է քահանաներ, որ իր եկեղեցիներում օտար, անհասկանալի լեզուով պատարագ մատուցանեն, և այս կարգը տևում է աւելի քան հարիւր տարի։ Դժուար է սրանցից աւելի ազդու օրինակներ երևակայել ազգային պատուի բացակայութեան, ինքնաճանաչութեան չգոյութեան, և սակայն սրանք հնարովի բաներ չեն. սրանք իրողութիւններ են, և իրողութիւններ՝ մեր մռայլ անցեալի պատմութիւնից։

Եթէ մի քանի դար էլ շարունակուէր այս դրութիւնը՝ տարակոյս չկայ, որ հայութիւնը ամբողջապէս կանհետանար, լուծուելով և ձուլուելով

ուելի հզօր և քաղաքակիրթ ազգերի մէջ. իր ինքնուրոյնութիւնը, իբրև հայ տարր, նա կարող կլինէր պահպանել միայն մի պայմանով—կորելով հաղորդակցութիւնը քաղաքակիրթ ազգերի հետ, վայրենանալով, նման այժմեան քրդերին։ Ուրեմն մեզ սպասում էր կամ քաղաքական մահ կամ վայրենական վիճակ—երկու հաւասարապէս կորստաբեր հեռանկարներ։

Բայց ահա հինգերորդ դարի սկզբներին Հայաստանի Տարօն (այժմեան Մշու)գաւառից դուրս եկաւ մի հայ մարդ, համեստ գիւղական ծագումից, որ մի ամբողջ ազգի վերածնողն ու փրկիչը դարձաւ, նրան սպառնացող երկու կորստաբեր անդունդներից ապահովող թալիսմանը գտաւ։ Ազգի այս մեծ բարերարն էր ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետ, և նրա փրկութիւնաբեր թալիսմանն էր՝ ազգային այբուբենի գիւտը, այն այբուբենի, որ ահա հազար հինգհարիւր տարի է կենդանի է մնում և որով այսքան ժամանակ հայերը գրել են և գրում են իրանց մշտական ցաւերն ու սակաւաթիւ ուրախութիւնները, իրանց ազգի ու եկեղեցու պատմութիւնը, իրանց բանաստեղծութիւնը։ Այս այբուբենը միջոց տուեց հայերէն թարգմանելու Ս. Գիրքն ու եկեղեցական արարողութիւնները և մեր եկեղեցիներում հայերէն լեզուով աղօթելու։ Նա միջոց տուեց հին և նոր Եւրոպայի լաւագոյն երկերը հայերին մատչելի դարձնելու, որոնց հետևողութեամբ առաջ եկան և հայ հեղինակներ ու ստեղծեցին ազգային գրականութիւն։



Սահակ պարթեւ

Որևէ ազգի այբուբենը և նրանից առաջ եկող բնիկ մատենագրութիւնը՝ այդ ազգի քաղաքակրթական կեանքի սկիզբն են կազմում. առանց սեփական այբուբենի, առանց ազգային մատենագրութեան ոչ մի ժողովուրդ արժանի չէ ազգ կոչուելու։ Բայց մեր այբուբենը բացի այս ընդհանուր, քաղաքակրթական նշանակութիւնից, ինչպէս տեսացինք՝ ունեցաւ և քաղաքական նշանակութիւն. նա մեզ ոչ միայն հանեց վայրենութիւնից ու քաղաքակիրթ ազգերի շարքը դասեց, այլ և փրկեց մեր գոյութիւնը իբրև հայ տարրի։ Եթէ այսօր երկրագնդի վրա ապրում է հայ անունը կրող ժողովուրդ՝ դա գլխաւորապէս Ս. Մեսրոպ—Մաշտոցի հնարած այբուբենի շնորհիւ է. եթէ այսօր ունինք ազգային եկեղեցի, մայրենի լեզու, բնիկ գրականութիւն, մամուլ, տոհմական պատմութիւն և փոքր ի շատէ հասել ենք ինքնաճանաչութեան—այս բոլորի սկզբնապատճառը հայկական այբուբենն է։

Եւ ներկայ 1904թուականին լրանում է այդ նշանաւոր գիւտի 1500 տարին. ներկայ թուականին հայ ժողովուրդը պէտք է տօնէ իր քաղաքակրթական ծննդեան 1500-ամեակը։ Պէտք էր խոշոր գրական ու բարեգոր-

ծական ձեռնարկութիւններով յաւերժացնել այս գիւտի հազուադէպ դարադարձը և Ս. Մեսրոպ—Մաշտոցի յիշատակը։ Սա ոչ միայն ցանկալի է, այլ և պահանջ է, ազգի բարոյական պարտականութիւնն է կազմում։ Մինչև այժմ, որչափ յայտնի է, ձեռնարկուել է մի ընդարձակ հրատարակութիւն, „Պատմագիրք Հայոց" ժողովածուն, որ բովանդակելու է բոլոր հին հայ պատմագիրների համեմատուած բնագիրները։ Նոյնպէս Լազարեան ճեմարանը նոյն առիթով մրցանակ է նշանակել Ս. Մեսրոպ—Մաշտոցի և հայոց գրերի գիւտի լաւագոյն պատմութեան համար։ Սակայն այս երկու ձեռնարկութիւնները շատ քիչ են ՝ տօնի մեծութեան համեմատութեամբ։ Եղան և ուրիշ առաջարկութիւններ—Ս. Գիրքը աշխարհաբար թարգմանել, նոր հեղինակները էժանագին հրատարակութեամբ տարածել ժողովրդի մէջ, գիտական գրքերի սերիա հրատարակել, մեր հին հեղինակները աշխարհաբար թարգմանել ևայլն։ Բայց ոչ առաջարկողները և ոչ ընթերցողները յանձն չառան նախաձեռնութիւն՝ նրանց իրագործելու համար։ Եւ շատ ափսոս։

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ.

## Ր Ա Ֆ Ֆ Ի

(Մահուան 15 ամեակի առիթով)

I

Ձեր աչքի առջև բերէք, ընթերցող, մի քանի գծեր մեր մտաւոր վերածնութեան պատմութիւնից։ Նրանք փայլուն են, նրանք կենսական ջերմութիւն ունին իրանց մէջ և գիտեն ոգևորել, կենդանացնել միտքը ամեն անգամ, երբ նա ներկայից քաշուած ու սառած՝ յիշողութիւնների է դիմում, անցնում է այն ժամանակին, երբ մենք զարթնում էինք…

Վերածնութեան պատմութիւն… Ազգերի դարաւոր կեանքի մէջ չկայ սրանից աւելի գեղեցիկ, աւելի սուրբ հասկացողութիւն։ Եւ մեր այդ պատմութիւնը հեռու չէ մեզանից։ Ընդամենը մի 50—60 տարի են բաժանում նրան մեր այսօրուայ օրից։

Դուք գիտէք ինչ էինք մենք, գիտէ մեր անցեալը—երկար, ցաւերով ու արցունքներով լի անցեալ, երբ մենք նստած էինք գերութեան մէջ, բութ, ծոյլ ու անզգայ էինք մեզ վրա տիրող խաւարից։

Յանկարծ մարդկութեան բարի հրեշտակը մեզ էլ այցելութեան է գալիս։ Զարթնում է և հայի միտքը։ Եւրոպական լոյսը իր ներկայացուցիչներն է յարուցանում մեր մէջ։ Պահանջներ են ծագում։ Ո՜րպիսի բաղդ։ Նշանակում էր, որ դարաւոր շղթաները մեզ չեն խեղդել, քանի որ պահանջներ ծնեցնել գիտենք։ Ուր պահանջներ կան, այնտեղ կեանք էլ կայ։ Ուր պահանջներ կան, այնտեղ չէ կարող քարացում լինել, այնտեղ անպատճառ կհաստատուի առաջադիմութիւնը։

Սակայն հրաշքներ չեն կատարւում մեր հողագնդի վրա։ Մարդկային երջանկութեան իւրաքանչիւր մասնիկը ձեռք է բերւում մրցութեամբ, տառապանքներով, կռւով։ Երկինքը մեզ նոր կեանքի լոյս էր ուղարկում, բայց ոչինչ գերբնական հրաշք չէր խոստանում։ Մենք էլ՝ ինչպէս բոլոր

մարդիկ: Հարկաւոր էին աշխատողներ, մշակներ: Եւ մենք ունեցանք այդ՝ հիացմունքի և երախտագիտութեան արժանի մարդկանցից:

Նրանցով մենք պարծենում ենք և դա մեր արդար իրաւունքն է, որովհետև այդ երախտաւորները գործ են կատարել մեզանում, մեզ համար: Թող նրանք համամարդկային մտքի հանդիսարանում շատ համեստ, նոյն իսկ աննշան ընդունակութիւններ լինեն, այդ բոլորովին չէ արգելում, որ նրանք մեզ համար լինեն պարծանքներ:



Րաֆֆի

Վերածնութեան յուսաւոր հայեացքներ, անդադար առաջադիմութիւն, ապագայի յոյսեր, ազատութիւն ճնութեան շղթաներից... Սրանք գեղեցիկ, սուրբ գաղափարներ են: Բայց ինչպէս իրագործել այդ բոլորը մեզ պէս մի ժողովրդի մէջ: Ոչինչ չունէինք մենք. ոչ պատրաստուած հա-

տարակութիւն, ո՛չ ինքնաճանաչութիւն, ոչ գործելու տրամադրութիւն։ Մեզանում պակասում էին հասարակական հիմնարկութիւնները. ո՛չ մեր դպրոցներն էին կարգաւորուած, ոչ մամուլ, հանրամատչելի գրականութիւն կար, ոչ գրադարաններ, ոչ ամբիոններ, ոչ օժանդակող, նպաստող հաստատութիւններ, ոչ նիւթական միջոցներ։

Մի միջանավայր, որ անապատի բոլոր յատկութիւններն ունի։ Սակայն պահանջները չխլացան այստեղ։ Նրանք քամու պէս եկող և քամու պէս էլ գնացող պատահական հնչիւններ չէին։ Մենք սկսեցինք կրթուել. կամաց-կամաց, քայլ առ քայլ սովորում էինք։ Նախ հարկաւոր էր խօսք, նախ քարոզութիւն, գաղափարների տարրացում, հասկացողութիւնների ժողովրդականացում։

Եւ այդ ծանր, այդ սրբազան պաշտօնը իր վրա վերցրեց մեր գրականութիւնը, որ նոր էր ծագել, որ յատկապէս նոր խօսքի համար էր աշխարհ գալիս։

Գրականութիւնը, ինչպէս գիտէք, ունի մի քանի ճիւղեր. մտքերի վրա ահագին ազդեցութիւն է անում մանաւանդ գեղարուեստական գրականութիւնը։ Եւ մեզանում, հէնց այն օրից, երբ վերածնութիւնը դարձաւ կեանքի և մահուան խնդիր, առաջ եկաւ այդ գրականութիւնը—խօսքի, քարոզի գրականութիւնը։ Այդ ասպարէզում գործողները պաշտելի անուն ստեղծեցին մեզանում, դարձան մեր ուսուցիչները, մեր ձգտումների ղեկավարողները։ Եւ այդ փայլուն համաստեղութեան մէջ իր կատարած գործի մեծութեամբ մի խոշոր երևոյթ է Րաֆֆին, մեր վիպասանութեան մէջ մինչև այսօր էլ առաջնակարգ գործիչ մնացող Րաֆֆին։

## II

Քննելով մեր վիպագրութեան թէ սկզբնաւորման և թէ զարգացման հանգամանքները, մենք հանդիպում ենք մի երևոյթի, որ կարող է առաջին անգամից զարմանալի զուգադիպութիւն թուել։ Մեր վէպի ծնողը Խաչատուր Աբովեանն էր, իսկ զարգացնողը, ծաղկեցնողը՝ Րաֆֆին։ Ո՞վ էր Աբովեանը։—Մի գիւղացի, որ լոյս աշխարհ էր եկել պարսկական լծի տակ, որ անձամբ կրել էր այդ լուծը, որ իրապէս զգացել էր, թէ ինչ է նշանակում լինել քրիստոնեայ հայ և մահմեդականի ստրուկ։ Նրա լեզուն բացեց, նրան աննման ոգեւորութիւն ներշնչեց հէնց այդ ստրկական իրականութիւնը, նրան բորբոքեց հէնց այն տանջանքը, որ կրում էր հայ ժողովուրդը։

Աբովեանից յետոյ անցան տարիներ։ Մեր վէպը սառած էր մնացել մի կէտի վրա, մինչև որ յայտնուեց Րաֆֆին, պարսկական իրականութեան մի այլ ծնունդը, որ զարգացրեց մեր վիպագրութիւնը, առանձին կենդանութիւն հաղորդեց նրան։ Եւ նրա լեզուն բացողն էլ, նրա գրչին կրակ հաղորդողն էլ նոյն տարրն էր—մահմեդական լուծը՝ ծանրացած քրիստոնեայ ժողովրդի վրա։

Մենք ասացինք, որ առաջին անգամից մի զարմանալի զուգադիպութիւն կարող է թուել այս երևոյթները, բայց դա պատահականութիւն չէ, այլ ունի իր խոր բնական պատճառները։ Հազարաւոր տարիներով մահմե-

դական լծի տակ ճնշուած, արնաքամ դարձած մի ժողովրդի համար ուրիշ բան չէր կարող այնքան իրական, այնքան ցաւեցնող, այնքան կարևոր լինել, ինչպէս այդ զարհուրելի ճակատագիրը. և բնական էր, որ հէնց այդ դարաւոր տարաբաղդ վիճակը լինէր նրա սրտի և զգացմունքի խօսքը, նրա հանճարի արտայայտութեան ամենագլխաւոր գործօնը։

Եւ այսպէս ահա, մահմեդականութեան երկաթէ ծանրութեան տակ տանջուած երկու փոքրիկ աննշան գիւղերից դուրս են գալիս երկու մարդիկ, որոնք տալիս են մեզ վէպ, ամբողջ դարագլուխներ են կազմում մեր գրականութեան մէջ։ Աբովեանի կեանքը, ճակատագիրը հանրածանօթ է և յուզում է մեզ իբրև լոյսի վրա սիրահարուած մի մաքուր էակի կեանք, որ սակայն շրջապատուած էր խաւարի դարաններով և ասիականութեան տանջանքներով։ Րաֆֆիի կեանքը թէև նոյնքան յուզիչ չէ, բայց նոյնպէս արժանի է ուշադրութեան, նոյնպէս շատ բաներ է ասում մի ինքնաբոյր տաղանդի մասին։

Խաւար ու ֆանատիկոս Պարսկաստանի մի խուլ մոռացուած անկիւնն էր այն տեղը, որ „Խենթի“, „Կայծերի“, „Դաւիթ-Բէկի“ հեղինակի հայրենիք պիտի կոչուէր։ Դա Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղն է, ուր 1835 թուականին, տեղական մէլիքի՝ Միրզա-բէկ Մէլիք Յակոբեանի ընտանիքում ծնուեց մի մանուկ, որին տուին Յակոբ անունը։ Մէլիք Միրզա-բէկը, բացի իր պաշտօնական դիրքից, յայտնի էր և նրանով, որ վաճառական էր և յարաբերութիւններ ունէր զանազան տեղերի հետ։ Րաֆֆիի մայրը այսօր էլ, երբ գրում ենք այս տողերը, կենդանի է և ապրում է նոյն Փայաջուկում խորին ծերութեան մէջ և, դժբաղդաբար, մոռացուած ամենից, կարօտ։

Միրզա-բէկի ընտանիքը, ուրեմն, հարուստ էր, իշխանաւոր։ Յակոբը կարող էր երջանիկ աստղի տակ ծնուած երեխայ համարուել. Սալմաստում շատ քչերն էին այդպիսի աստղ ունենում։ Բաւական չէր ունեւորութիւնը, կար և այն, որ ընտանիքի գլուխը իշխանաւոր էր, պաշտօն էր վարում, իսկ սա Պարսկաստանի պէս մի երկրում արդէն մի գրաւական է, թէ կամայականութիւններից, ճնշումներից ազատ կարելի է լինել մի յայտնի չափով։

Սակայն այսքանը բաւակա՞ն է մարդկային կատարեալ երջանկութեան համար։ Անհատական բաղդը դեռ ամեն ինչ չէ, կայ հասարակական կացութիւն, կայ մթնոլորտ, որոնց առաջացրած հանգամանքների դէմ ոչինչ չէ կարող անել անհատական բարեբաղդութիւնը։ Յակոբը մեծանում էր իր գիւղի մէջ. մի ուշադիր, վառվռուն երեխայ էր, որ բնութիւնից ստացել էր երևակայութեան մեծ ույժ։ Նրա գրուածքներից շատերը վկայում են, թէ ի՛նչպիսի ուշադրութեամբ, յափշտակութեան հասնող սիրով նա լսում էր իր տատից կամ մօրից ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող առասպելները, հէքիաթները, զրոյցները և ի՛նչ խոր տպաւորութիւն է թողել ժողովրդական բանահիւսութիւնը այդ մանուկ սրտի երևակայութեան մէջ։

Իսկ այսպիսի մի սուր միտք կրթելու համար ի՛նչ ունէր Փայաջուկը։ —Միայն մի խալիֆայական դպրոց, մի դժոխք, որը յետոյ այնպիսի վարպետութեամբ, այնքան մռայլ գոյներով նկարագրել է Րաֆֆին իր „Կայծերի“ մէջ։ Բաց արէք այդ վէպի այն երեսները, ուր նկարագրուած է Տէր—

Թոդլիկի դպրոցը. ինքը Րաֆֆին էլ հէնց այդ տեսակ մի դժոխքում է ստացել իր սկզբնական կրթութիւնը…

Սկզբնական կրթութիւն… Այս անունը պէտք է գործածել այնպիսի դէպքերում, երբ կրթութիւնը կատարւում է սխեմով, երբ կրթւողը աստիճանաբար բարձրանում է ցածից դէպի վեր: Րաֆֆիի դպրոցական կրթութիւնը այդ սկզբնականից շատ էլ չէ հեռացել: Ճիշտ է, նրա հայրը, առևտրական գործերով Թիֆլիս գալով, հասկանում է, որ այստեղի դպրոցները Տէր—Թոդլիկների դժոխքները չեն. ճիշտ է, նա Յակոբին Թիֆլիս է ուղարկում և մտցնում է գիմնազիա, բայց մի երկու—երեք տարուց յետոյ, 1857-ին, կանչում է նրան իր մօտ, Պարսկաստան և Յակոբը հարկադրուած է լինում կիսատ—պռատ թողնել ուսումը և գնալ իր հօր առևտրական գործերը կառավարելու: Թիֆլիսից նա մի առանձին մտաւոր պաշար չըտարաւ, բացի միայն նրանից, որ փոքր ի շատէ սովորեց ռուսերէն լեզուն:

Պարսկաստանում նա երկար մնաց և ինչ էր անում: Նստած էր խանութում, ծախում էր ապրանք, առնում էր: Բայց այդ չպիտի լինէր նրա կոչումը: Նա այդ զգում էր և հոգս էր տանում իր ինքնակրթութեան վրայ: Հայոց գրականութիւնը ինքնուրոյն ստեղծագործութիւնների հարստութիւն չունէր, բայց երիտասարդ վաճառականը կարդում էր ամեն ինչ, որ կարողանում էր ձեռք բերել: Հայերէն թարգմանութիւնների միջոցով նա ծանօթանում էր եւրոպական հեղինակների հետ. այդ հեղինակները կարող էին նրան միայն օրինակներ, ճաշակ տալ. մնացածը պիտի լրացնէր Մէլիք—Յակոբեանի սեփական, ինքնուրոյն աշխատութիւնը: Եւ նրա մէջ այնքան մեծ ընդունակութիւն երևան եկաւ, որ նա սեփական աշխատութեանը տուեց մի բոլորովին ինքնատիպ, ուժեղ կերպարանք:

Նա տեսնում էր իրան շրջապատող կեանքը և թափանցում էր կեանքի փիլիսոփայութեան խորքերը: Փոքրիկ ճանապարհորդութիւնները, որ նա սիրում էր կատարել Սալմաստի զանազան կողմերում, ոչ միայն յագեցնում էին նրա բանաստեղծական հոգու գեղասիրութիւնը, այլ և հարստացնում էին նրա առջև կանգնած կենսական փաստերը:

Ո՛րպիսի նուրբ գեղեցկութեամբ, ճաշակով է Րաֆֆին նկարագրում բնութիւնը իր վէպերի մէջ: Նա էր, որ առաջին անգամ ցոյց տուեց, թէ հայն էլ իր նոր գրական լեզւով կարող է բնութեան գեղարւեստական նկարագրութիւններ տալ, բնութեան անշարժ տեսարանները խօսեցնել. հոգի ու միտք հաղորդել նրանց: Այդ փայլուն ընդունակութիւնը Րաֆֆիի մէջ սկսեց զարգանալ այն ժամանակից, երբ նա չափչափում էր Սալմաստի լեռներն ու դաշտերը, երբ բնութեան գիրկն էր գնում իբրև սիրահար, իբրև ոգևորուած ուխտաւոր:

Բայց Րաֆֆին միայն բնութիւնը չէր տեսնում, միայն նրա զարդերը չէր տպաւորում իր սրտի խորքերում: Ինչպէս ասացինք, նա կեանքի փաստեր էլ էր որոնում, այդ փաստերի փիլիսոփայութիւնն էր վերլուծում իր մէջ: Չքեղ բնութիւն, այո. նա տուած է մարդուն, նա երջանկացնել կարող է, նա բարիք է, երկնքի օրհնութիւն է: Եւ մարդիկ էին ապրում այդ կապուտակ երկնքի տակ, այդ հողերի վրայ: Սակայն ինչ էին արել կեանքի պայմանները այդ մարդկանց, բնութեան այդ որդիներին: Հայը երկ

րագործ էր, իր քրտինքով հաց աշխատող. նրա կողքին ապրում էր քուրդը իր վրանի մէջ: Քուրդը քրտինք չէր թափում, չէր ցանում ու հնձում, բայց միշտ երջանիկ էր, միշտ բարեբաղդ: Որովհետև նա գիշատիչ էր, որովհետև քաջ էր նա, արեան պաշտամունքի երկրպագու, որովհետև նա խլում էր, յափշտակում էր և այդ բանը իր իրաւունքն էր համարում, քաջի, կռուողի իրաւունքը:

Ոյժը իրաւունք է—այսպէս էր բացականչում ալևոր արևելքը իր բոլոր անկիւններից, իր բոլոր խորշերից: Ուժեղը ապրում է, թոյլը տանջւում. ուրիշ արդարութիւն չկայ այս աշխարհի վրա: Միակ հասկանալի, միակ ճիշտ ու իրական օրէնքը բռնութիւնն է...

Եւ միթէ ամեն տեղ է այսպէս: Րաֆֆիին հարկաւոր են աւելի առատ փաստեր, ծանօթութեան աւելի լոյս շրջան: 1858-ին նա դուրս է գալիս Սալմաստի սահմաններից, հայ ուխտաւորների հետ գնում է Մուշի ս. Կարապետի վանքը: Մի շատ կարևոր ճանապարհորդութիւն էր դա, որ այնքան առատ նիւթեր տուեց մեր վիպագրողին:

Տեսաւ նա Թիւրքաց Հայաստանի մի նշանաւոր մասը, տեսաւ քաղաքներ, գիւղեր: Բռնութեան սխրահար բանաստեղծը հիացմունքի, յափշտակութեան որքա՜ն հարուստ, բազմազան առարկաներ է գտնում: Գեղեցի՜կ աշխարհ, դրա՜խտ: Նրան զարդարում են հայի համար նուիրական յիշատակներ, հին-հին, աւերուած, հռչակաւոր յիշատակներ, որոնք հայի հին պատմութեան ոգևորող էջերն են բաց անում ուղևորի առաջ: Եւ այդպիսի մի աշխարհում, այդքան գեղեցկութիւնների, այդքան սրբութիւնների մէջ նոյն սև, երկաթէ իրականութիւնը, ինչ որ էր Պարսկաստանում. այստեղ էլ հայը աշխատող, մշակ, գրաստ, իսկ քուրդը իշխող, վայելող: Այստեղ էլ միևնոյն անփոփոխ, յաւիտենական օրէնքն ու արդարութիւնը—բռնութիւն:

Եւ Րաֆֆին լցուեց մի դառն, թունաւոր ատելութեամբ այդ հրէշաւոր օրէնքի դէմ: Բանաստեղծի հոգին զգաց, որ բռնութիւնը չէ աշխարհի տէրը: Նա իր ամբողջ կեանքի ընթացքում դարձաւ մի կրակոտ բողոք բռնութեան դէմ, բողոք ասիական այն սոսկալի անարդարութեան դէմ, որ դարերից ի վեր իրագործել էր արեան, ստրկութեան պաշտամունքը: Մի ըմբոստ, կատաղի, յուզիչ բողոք: Ուր որ տեսնում էր Րաֆֆին բռնութիւն, այնտեղ նա բարձրացնում էր իր ձայնը. քրդի, թիւրք պաշտօնեայի բռնութիւնը, պարսիկ ֆէրրաշի բռնութիւնը, միթէ հայ ծնողի, ընտանեկան հասկացողութիւնների բռնութիւնը հաւասարաչափ ատելի և զզուելի էին նրա համար: Բռնութեան աշխարհից, կամայականութիւնների հայրենիքից դուրս եկած այդ ինքնուս մարդը գիտէր կրակել իր ընթերցողներին մի անդիմադրելի խաղաղութեամբ բռնութեան դէմ: Ոչ ոքին չէր տուած այդ երկնային շնորհքը: Րաֆֆին էր, որ հրաշալի կերպով բացատրում էր բռնութեան հին, ալևոր օրէնքները, նրա ամբողջ արիւնոտ փիլիսոփայութիւնը, նրա մռայլ հոգեբանութիւնը:

Դիտելով կեանքը, գտնելով նրա խորքերում թաղուած ասիական անարդարութիւնները, Րաֆֆին տեսնում էր և այն, որ բռնութիւնը և անարդարութիւնը ծանրանում է ժողովրդի վրա, բայց հասկանալի չէ

Նրան իբրև մարդկային բնութեան դէմ բողոքող մի զարհուրելի անարգանք։ Ժողովուրդը, ընդհակառակն, տանում է իր վիճակը, սովորած լինելով կարծել, թէ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, թէ այդ դրութիւնը միանգամայն արդար և օրինական է։ Ինչո՞ւ էր այդպէս։—Որովհետև ժողովուրդը ագէտ էր, որովհետև բնութեան ենթարկուած մարդը չգիտէր, թէ ինչ է ծանրացած իր վրա։ Նա ստրուկ էր և ստրկի դաստիարակութիւն էլ ըստանում էր։ Նրա աչքերը բացող չկար, նրա սիրտը կենդանացնող չկար։ Եւ Րաֆֆիի համար այդ դաստիարակութիւնն էլ այնքան ատելի դարձաւ, որքան ինքը, բնութիւնը։

Մելամաղձոտ, յուսահատ գանգատներով է նա առաջին անգամ գրական հրապարակ դուրս գալիս «Հիւսիսափայլի» էջերում։ Նկարագրում է Աղթամարի կղզին, նկարագրում է տեղացի հայերին, և մենք տեսնում ենք, որ այնքան սքանչելի բնութիւնը, սրբավայրի հին հուշակը չեն խօսեցնում նրան, որքան այն, որ ստրուկ ժողովուրդը իր առաջնորդների ձեռքով աւելի ես փաթաթւում է ստրկութեան ցանցերի մէջ։ Ոչ մի տեղից լոյս չէ մտնում այդ խուլ ու թշուառ անկիւնը, որովհետև լոյսը հալածուած է, ատելի է այդտեղ, քրդի նիզակից այնքան չեն վախենում, որքան միտք ու հոգի կենդանացնող լոյսից։ Եւ—յիշո՞ւմ էք—երիտասարդ վաճառականը իր տեսածը, իր գանգատները ամփոփում է ամենքին լաւ յայտնի տողերի մէջ.

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ…

III

Առաջին գրական գործը չափազանց անսովոր բան է մի երիտասարդ վաճառականի համար։ Վաճառականութիւնը չէ սիրում այդքան բարձր խորհուրդներ. նա իր առանձին պաշտամունքն ունի, որի հետ չէ կարող հաշտուել մանաւանդ այն տրամադրութիւնը, այն իդէալը, որ Մէլիք—Յակոբեանի մէջ հաստատուել էր պատանեկական հասակից։ Բնական էր, որ վաճառականութիւնը երես չտար մի այդպիսի երիտասարդի։ Եւ նա չսիրեց նրան, չարժանացրեց իր շնորհներին։ Մէլիք—Յակոբեանն ոչ միայն չհարստացաւ, այլ ունեցածն էլ կորցրեց։ Ինչքա՜ն լաւ էր, որ այդպէս եղաւ։ Կունենայինք մենք Րաֆֆի, եթէ խանութն ու վաճառականական գաղը Մէլիք—Յակոբեանին ոսկու կոյտեր տային, լցնէին նրա տունը մամոնայի բարիքներով։—Իհարկէ, չէինք ունենայ։ Վաթսունական թուականների վերջերին Մէլիք—Յակոբեանը մի վնասուած, նոյն իսկ բարեկամների ու ազգականների ձեռքով կողոպտուած վաճառական էր։ Առևտրի մարդ չկայ այլևս, նրա փոխարէն սկսում է կամաց-կամաց առաջ գալ գրական մարդը և ձեռք բերել աւելի գեղեցիկ դրութիւն։

Եւ ահա մենք տեսնում ենք ապագայ Րաֆֆիին սեփական գործից զրկուած, մի կտոր հացի համար ուրիշներին ծառայելիս։ Ճակատագիրը բարեհաճ է գտնում, բերելով նրան Թիֆլիս, ուր նա գործակատարի պաշտօնով մտնում է չորեր ծախողի մի խանութ։ Եօթանասնական թուականների սկիզբն էր, մեզանում գրական փառաւոր վերածնութեան թուականների ժամանակն էր պատրաստւում։ Եռանդով, յոյսերով լի մի ժամանակ. նա չէ թողնում, որ պարսկաստանցի երիտասարդը կորած մնայ չորերի խանութում, գտնում

դուրս է բերում նրան այնտեղից և վերածնութեան փայլուն սկզբներից մէկն է դարձնում, սիւներից մէկը: Խեղճ, համեստ գործակատարը ծանօթանում է Գրիգոր Արծրունու հետ. այդ ծանօթութիւնը պատճառ է դառնում, որ նա առևտրի աշխարհից մտնում է ժամանակակից գաղափարական երիտասարդութեան շրջանը, խրւում է գործի, ժողովրդական կենդանի գործի մէջ։ Նրան գնահատում են. նրան գրկաբաց ընդունում է հայ երիտասարդութիւնը և նա դառնում է «Մշակի» մշտական աշխատակից։ Եւ ահա ստեղծւում, կազմակերպւում, ուժեղանում է Րաֆֆին...

Առաջին իսկ քայլերից նա հանդիսանում է մի՝ վերին աստիճանի բեղմնաւոր գրիչ և առաջին իսկ քայլերից նա բերում է իր հետ մեր գրականութեան մէջ մի առանձին թարմութիւն, նորութիւն, ճաշակ։ Նկարագրում է Պարսկաստանը մի շարք նամակների մէջ իբրև ուղևոր, վառ գոյներով պատկերացնում է Կիւրոսների, Դարեհների հայրենիքը, ուր դարերը շատ քաղաքական փոփոխութիւններ էին կատարել, բայց հասարակական կարգերը անփոփոխ պահել էին մեծ, արիւնարբու բռնակալների հալածող ոգին ու ձևերը։ Նոյն այդ կեանքը լոյս է հանւում փոքրիկ, դեռ թոյլ ու անմշակ վէպիկների և պատկերների մէջ։ Եւ ամեն տեղ ծանրացած են նոյն զօրեղ շեշտերը—բողոք բռնութեան, հարստահարութիւնների դէմ։ Պարսկական նկարագիրների վրա Րաֆֆին աւելացնում է և այն իրական փաստերը, որ տուել էր նրան Թիֆլիսի կեանքը. և այնտեղ էլ նոյն մերկացումները, որոնց մէջ ծնողական բարբարոսութիւնը, վաշխառուի հարստահարութիւններն են երևան գալիս։ Կեղեքւող խղճի, անօգնական ժողովրդի դատն է բարձրանում։

«Մշակի» առաջին երեք տարիների ընթացքում Րաֆֆին արդէն յայտնի գրող էր։ Բայց գրականութեան ո՞ր ճիւղն էր նրա իսկական կոչումը։ Դեռ յայտնի չէր։ Ինքը, Րաֆֆին, կարծես ուզում էր ցոյց տալ, որ հրապարակախօսութիւնն է ընտրել, աւելի հասարակական և գրական հարցեր ուսումնասիրելն ու քննադատելն է սիրում։ Պարսկաստանում գրած մի քանի պատկերներ ու երկու հատոր «Փունջերը» հրատարակելուց յետոյ նա կանգ առաւ, վէպ համարեա այլևս չէր տալիս։ Մեր կեանքը խաղաղ էր, առօրեայ յուզիչ հարցեր չէր տալիս, ուստի մեր գրող երիտասարդութիւնը աւելի ընդհանուր մարդկային հարցերի, ինքնաքննութեան մէջ էր նիւթ և ոգևորութիւն որոնում։ Րաֆֆին գրեց «Հայ կինը», «Հայ երիտասարդութիւնը», կազմեց «Մարդը գոյութեան կռուի մէջ» թարգմանական յօդուածը, բայց չտուեց վիպական մի նոր, փոքր ի շատէ նշանաւոր գործ։ Նոյն իսկ գրական կեանքը Թիֆլիսում իր անապահովութեամբ այլևս այնքան գրաւիչ չէր. Րաֆֆին թողեց նրան, ընտրեց ուսուցչութեան գաղափարական ասպարէզը։ Այդ պաշտօնը տանում է նրան Թաւրիզ, ուր Րաֆֆին ընդհարւում է հայրենակիցների աղայական կամայականութիւնների հետ՝ և կռիւ է բացանում թէ խօսքով և թէ գրչով։ Յաղթւելով կամայականութիւնից, նորից վերադառնում է Թիֆլիս և այստեղից գնում Ագուլիս դարձեալ ուսուցչութեան պաշտօնով։

Բայց մինչդեռ Րաֆֆին գործում էր այդ ասպարէզում, մեր կեանքի մէջ առաջացաւ մի նոր, մեծ շարժում։ Արևելեան հարցը, որ 1876 նշա

նաւոր թուականին և նրան յաջորդած ռուս թիւրքական պատերազմի ժամանակ առաջնակարգ խոշոր իրողութիւն դարձաւ միջազգային կեանքի մէջ, մեզ համար էլ բարդ ու դժուար խնդիրներ ստեղծեց։ Թիւրքաց Հայաստանը դարձաւ խօսքի, մտածութեան առարկայ։ Րաֆֆին սկսեց մի գործունէութիւն, որ պիտի անմահացնէր նրա անունը մեր տարեգրութիւնների մէջ։ Պատերազմից յետոյ, եռման, անձկալութիւնների կարճ ժամանակամիջոցում միմեանց ետևից հրապարակ եկան նրա հռչակաւոր վէպերը— «Ջալալէդդին», «Խենթը», «Դաւիթ բէկ», ապա և «Կայծերը»։ Շատ չեն այն գրողները, որոնց վիճակւում է դառնալ իրանց ժամանակի ոգու և տրամադրութեան արտայայտութիւն։ Րաֆֆին այդ սակաւաթիւ բաղդաւորներից մէկն էր։ Նրա վէպերը մինչև այդ չտեսնուած, աներևակայելի ազդեցութիւն արին։ Կարդում էին յափշտակութեամբ, կարդում էին ոչ թէ մի անգամ, երկու անգամ, այլ անընդհատ, շարունակ։ Հայերէն գրքի ամենամեծ յաղթանակի ժամանակն էր։ Նա, այդ գիրքը ոգևորում էր, յուզում էր, ուղղութիւն էր ցոյց տալիս։ Նա պատասխանում էր այն բոլոր հարցերին և որոնումներին, որոնք՝ յուզում էին ընթերցող հասարակութեանը։ Րաֆֆին դարձաւ խօսքի կախարդ, նա նուաճեց երիտասարդութեան խելքն ու միտքը։ Նա տիրապետում էր։ Դեռ մինչև այդ՝ վէպը մեզանում հասարակական հոսանքներ չէր ղեկավարել, դեռ գեղարուեստական գրականութիւնը երբէք չէր հասել ոյժի և ազդեցութեան այն աստիճանին, որ անմիջապէս արձագանք տար կեանքի մէջ, մարմնանար իր գաղափարներով, տենդենցիայով։

Րաֆֆին հասաւ գրական փառքի գագաթնակէտին։ Երախտապարտ, յափշտակուած հասարակութիւնը իր մեծարանքներով պատուեց այն գրողին, որ կարողացել էր յուզել նրան, վառել նրա սրտի մէջ գաղափարի կրակը։ Բայց իհարկէ, առանց փշերի չէր այն ճանապարհը, որ տարաւ հայ վիպագրողին դէպի փառքը։ Նրա դէմ թշնամութիւն էլ կազմուեց, որ ոչինչ ջանք չէր խնայում նրա հռչակը նսեմացնելու համար։ Բայց կայ հասարակական զգացմունք. այդ մեծ ոյժը պաշտպանեց Րաֆֆիին, հաստատ պահեց նրան այն բարձրութեան վրա, որ յատկացրել էր նրան ընթերցողի սիրտը, ժամանակի ոգին։ Եւ Րաֆֆիի փառքը մեր գրականութեան փառքն էր։ Հայերէն վէպը վերածնւում էր, դառնում էր ոյժ. Րաֆֆին կերպարանափոխեց նրան, Րաֆֆին ստեղծեց նրա համար ձև, լեզու, արտայայտութեան նուրբ միջոցներ։ Միևնոյն ժամանակ երևան էր գալիս մեզանում նոր երևոյթ. դա հայ գրողն էր, որ ապրում էր գրական վաստակներով։ Մինչև Րաֆֆին այդպիսի բան չէր եղել։ «Ջալալէդդինը» Րաֆֆիի համար ոչ միայն փառքի դուռը բացեց, այլ և համեմատաբար ապահով հիմքերի վրա դրեց նրա ապագայ գործունէութիւնը։ Այդ վէպերը նա գրեց այն ժամանակ, երբ ուսուցիչ էր Ագուլիսում։ Գրիգոր Արծրունին, տպագրելով «Ջալալէդդինը» իր «Մշակի» մէջ, բերել տուեց Րաֆֆիին Թիֆլիս, ուր սկսեց կանոնաւոր վարձատրութիւն տալ նրան և այդպիսով մի համեստ, բայց անկախ կեանք ապահովեց հայ գրողի համար։

IV

Այս համառօտ տեսութեան մէջ մենք ոչ տեղ ունինք, ոչ էլ հնարաւորութիւն մանրամասն խօսելու Րաֆֆիի վէպերի մասին։ Անցաւ ժամանակ, անցան ոգևորութեան, յափշտակութեան տարիները, կեանքը փորձ բերեց մեզ, գրականութիւնը առաջ գնաց։ Եւ այժմ Րաֆֆին այլևս այն չէ, ինչ որ էր իր կենդանութեան ժամանակ։ Այժմ նրա վէպերի մէջ մենք գտնում ենք շատ պակասութիւններ, նոյն իսկ հիմնական պակասութիւններ։ Մենք գտնում ենք, որ Րաֆֆին շատ անգամ է իր զարմանալի երևակայութեան զոհ դառնում, շատ է սիրում անբնական դրութիւններ, հանգամանքների բարդութիւններ, ինտրիգաների խճճում, հեքիաթական անակնկալութիւններ։ Գեղարուեստական զարգացման ճաշակի տէր ընթերցողը այդ բոլորը համարում է շատ հին, շատ միամիտ ձևեր, որոնցով բաւականանալ չէ կարելի։ Բացի վերոյիշեալ վէպերից, որոնք Րաֆֆիի գրական փառքի իսկական սահմանողներն էին, կան և «Ոսկի Աքաղաղ», «Խաչագողի Յիշատակարանը», «Ղարիբ Մշեցի», վերջապէս և «Սամուէլ» վէպերը, որոնց մէջ փոքր թէ քիչ չափերով արտայայտուած են Րաֆֆիի պակասութիւնները։

Սակայն դրանք, այդ պակասութիւնները, չեն խանգարում, որ մեր նոր վիպագրութեան հայրը իր փառաւոր տեղը կանգնած մնայ։ Պակասութիւններից զերծ չէ գրողը։ Գլխաւորը այն է, թէ ինչ դրական կողմեր ունի նրա գործունէութիւնը։ Իսկ Րաֆֆիի փառքը և մեծ նշանակութիւնը մեզանում հաստատուած են դրական շատ հիմքերի վրա։ Այն, որ նրա վէպերը այնքան ահագին ազդեցութիւն ունեցան անմիջապէս կեանքի վրա, այն, որ նրա ձևակերպած գաղափարները մեր հասարակութեան ակնկալութիւնների, մեր գործունէութեան նպատակի վառ արտայայտութիւններն էին, այն, որ Րաֆֆիի վէպը պատմական նշանակութիւն ունի և ժամանակի պատմագիրը այդ վէպի մէջ պիտի որոնէ հասարակութեան ամբողջ աշխարհայեացքը, հասարակութեան սրտի ամբողջ պատկերը—բաւական է ցոյց տալու համար, թէ որքան սերտ կապերով է կապուած Րաֆֆիի գործունէութիւնը մեր հասարակութեան, մեր ինքնաճանաչութեան, մեր ցաւերի ու խոհերի հետ։ Իսկ դրանից աւելի լաւ վկայական մի կենսունակ, կենդանի, օգտակար գեղարուեստի մասին չէ էլ կարող լինել,

Րաֆֆին ազդեց, Րաֆֆին արտայայտեց, տիրեց, մտքերի վրա։ Որքան էլ բարեյաջող լինէր ժամանակը, որքան էլ հասարակութեան ընդհանուր տրամադրութիւնը պատրաստ լինէր յափշտակուելու, ոգևորուելու, Րաֆֆին չէր կարող անել այն, ինչ արաւ, եթէ զուրկ լինէր տաղանդից։ Տաղանդը հրաշակերտեց, տաղանդը նուաճեց։ Նա էր, որ դրեց Րաֆֆիի վէպերի մէջ հրաշալի նկարագրութիւններ. նա էր, որ տուեց գեղեցիկ կերպով նկարուած և ամբողջացրած տիպեր, որոնք հասարակաց գործունէութեան մէջ մտան և դարձան յայտնի անուններ։ Եւ այսօր մենք, ասելով Քաւոր Պետրոս, Տէր Թօդիկ, Թոմաս Էֆէնդի, հասկանում ենք, թէ ինչ ենք ուզում ասել։

V

Տասն և հինգ տարի սրանից առաջ, ապրիլեան մի խոնաւ ու անձրեւոտ օր, Թիֆլիզի փողոցներով անցնում էր մի տխուր յուղարկաւորութեան բազմամարդ հանդէս։ Հայերը ճանապարհի երկարութեամբ փակել էին իրանց խանութները. փողոցներում տեղ-տեղ կախուած էին կանաչներից հիւսած շարաններ, տեղ-տեղ խունկ էին ծխում։ Հայ ժողովուրդը սգաւոր էր. դրա նշանն էին եօթանասունից աւել պսակները, որոնք հետևում էին դագաղին։ Այդ դագաղի մէջ դրուած էր նախկին սալմաստեցի վաճառականը, որ այժմ հայութեան համար նուիրական Րաֆֆի էր։

Նա մեռաւ 53 տարեկան հասակում։ Մեռաւ ոչ այնքան խիստ հիասթափուած, մեռաւ հաւատացած իր քարոզած գաղափարներին, իր հերոսներին, սարսափելի իրականութիւնը չտեսաւ, չյուսահատուեց, դառնութեան մրուրը չքամեց...

Երանի՛ նրան։

Այժմ Խօջիվանքի գերեզմանատանը բարձրացրած է մի կոլոր մարմարիոնեայ սիւն, որի ծայրը պսակում է մի փոքրիկ քնար։ Րաֆֆին է հանգչում այդ սիւնի տակ։ Պատուանդանի վրա քանդակուած է նրա սեփական խօսքերը.

. . . Քար է քո սիրտը և խիղճդ է մեռած.
Քանի արիւններ, քանի կոտորած
Տեսար, լսեցիր և դարձեալ պայծառ
Հայ երկրի վրա կապում ես կամար։

Այս է ասում նա իր յաւիտենական օթևանից։ Իսկ հայ ընթերցողը այսօր էլ որոնում է իր սիրելի գրողի գործերը, այսօր էլ կարդում է նրանց աննման քաղցրութեամբ։

Լ Է Օ

---

## ՏԻԿԻ՛Ն ՍԻՐԱՆՈՅՇ

(Նրա երեսնամեայ բեմական գործունէութեան առիթով)

Հայ բեմը իր կարճատև կեանքում ունեցել է փառաւոր շրջաններ, երբ, կարծես, հէնց նրա դարկերակը ուժգին և առողջ թափով է բաբախել։ Բայց, դժբաղդաբար, նա միշտ հիւանդ մարդու է նմանուել՝ մերթ ոյժ ու կենսունակութիւն է արտայայտել, մերթ թուլութիւն, անզօրութիւն. մերթ փայլել է լուսաւոր ճաճանչներով, մերթ հանգել մոխրի տակ եղած կայծի նման։

Նրա ամենափայլուն շրջանը, անշուշտ, Ադամեանի օրերը պէտք է համարել։

Այո՛, փայլուն և բաղդաւոր շրջան էր դա, որովհետև ունէր այնպիսի տաղանդաւոր ոյժեր, ինչպիսին էին՝ Ադամեան, Մնակեան, օր. Աստղիկ, տիկ. Սիրանոյշ, տիկ. Հրաչեայ, և օր. Վիրգինէ Գարակաշ։

Ահա դրանք են եղել իսկապէս հայ թատրոնի առաջին զօրեղ սիւ-

ները, դրանք են եղել, որ հայ հասարակութեան աչքում այնքա՜ն բարձրացրել են թատրոնի նշանակութիւնը, սիրելի են դարձրել հայկական բեմը։

Անցել է այդ շրջանը, բայց ասպարէզի վրա դեռ մնացել է նրա ամենափայլուն աստղերից մէկը՝ տիկին Սիրանոյշը, որը և անդուլ ջանքերով, ապշեցնող եռանդով գործում է, մանաւանդ այս վերջին հինգ—վեց տարիների ընթացքում։

Տ. Սիրանոյշը ծնուել է 1862 թուականի Մայիսի 25-ին, Կ. Պոլսում, մի պատուաւոր ընտանիքում։ Նրա ծնողները Վանից են գաղթել Պոլիս, բայց երկար ժամանակ ապրելով մայրաքաղաքում, ընդմիշտ հաստատուել են այնտեղ։

Ժաննա դ՚ Արկի դերում։ Տիկ. Սիրանոյշ։ Մեդէայի դերում։

Այդ ընտանիքում և առհասարակ տ. Սիրանոյշի մօտ շրջաններում թատրոնի սէրը, ըստ երևոյթին, շատ վառ է եղել և գուցէ դա է պատճառը, որ դեռ շատ վաղ, համարեա մանուկ հասակում զարթել է թատրոնի սէրը թէ տ. Սիրանոյշի և թէ նրա մեծ քրոջ, տաղանդաւոր արտիստուհի Աստղիկի մէջ—(այժմ հանգուցեալ)։

Տ. Սիրանոյշը առաջին անգամ բեմ է դուրս եկել ութ տարեկան հասակում, տղայի շորերով, դերասան Փասըլաճեանի առաջնորդութեամբ մի մասնաւոր ներկայացման մէջ։ Բայց նա դեռ դրանից էլ առաջ տեսած է եղել բեմ ու ներկայացում։ «Յիշում եմ, ասում է տ. Սիրանոյշ, երբ ես վեց—եօթ տարեկան հասակումն էի, իմ մեծ մօր դահլիճում իմ մօրաքրոջ որդի Միհրան Քիթափչեան բեմ էր սարքել և իր դպրոցական ընկերներով հայերէն պատմական խաղեր էր ներկայացնում մեր ընտանեկան շրջանում. մի տեսակ հակումն ունէի դէպի այդ՝ մասամբ ինձ ծանօթ, բայց անհասկանալի և անբացատրելի աշխարհը»։

Պարզ է, որ այդպիսի միջավայրը մեծ ազդեցութիւն է թողնում դե-

*) Կենսագրական տեղեկութիւնները տուել է մեզ ինքը տ. Սիրանոյշը, որի համար յայտնում ենք մեր շնորհակալութիւնը։

*ռահաս Սիրանոյշի վրա. նրա բնատուր հակումները աւելի զարգանում են, աւելի ուժեղ թափով արտայայտում: Վերջապէս եօթանասնական թուականներից Սիրանոյշը սկսում է իր բեմական գործունէութեան առաջին շրջանը, ղեկավար ունենալով իրեն մօտ ազգականուհի՝ յայտնի դերասանուհի տ. Հրաչեային և իր քոյր՝ օր. Աստղիկին:*

*Հազիւ տասն և երկու տարին լրացրած, Սիրանոյշը թողնում է դըպրոցական չեմը և մտնում հայ բեմի փշոտ ասպարէզը: «Շատ քիչ ժամանակ, պատմում է ինքը Սիրանոյշ, ազգային վարժարանում հազիւ այբ ու բենը ճանաչելուց յետոյ իմ փոքրիկ քայլերը ուղղուեցին դէպի իմ ճակատագրական ասպարէզը, բոլորովին տգէտ և անուս»:*

*Բայց անդադար աշխատանքը և յառաջադիմութեան տոկուն ցանկութիւնը ամեն բան յաղթեցին և ամեն կրթութեան պակասութիւնը լրացրին:*

*Զուգընթացաբար ծառայելով հայ բեմին՝ նա մինչև վերջը չէ դադարել սովորելուց և իր կրթական պակասութիւնը լրացնելուց: Նա սովորել է եւրոպական լեզուներ, հարստացրել է իր մտաւոր պաշարը եւրոպական ընտիր հեղինակների ընթերցանութեամբ, ճանապարհորդել է մի քանի անգամ Եւրոպայի ամենանշանաւոր կենտրոնները, ամեն տեղ դիտելով լաւն ու գեղեցիկը, հետաքրքրուելով ընթացիկ նորութիւններով և հիմնաւոր կերպով ծանօթանալով բեմական արուեստի հետ:*

*Ահա այդպիսի տոկունութիւնն ու աշխատանքն է, որ Սիրանոյշին մըղել են միշտ դէպի առաջ, բարձրացրել են նրան միշտ դէպի վերև և դարձրել են մի շնորհալի դերասանուհի:*

*Տ. Սիրանոյշն իր բեմական գործունէութեան մեծագոյն մասն անցկացրել է Ռուսաստանից դուրս, գլխաւորապէս Թիւրքիայում և մասամբ Բուլղարիայում, Ռումինայում, Յունաստանում և Եգիպտոսում:*

*Ռուսահայ բեմին նա ծառայել է ընդմիջումներով. առաջին անգամ Կովկաս է եկել 1878 թ. և երկու տարի շարունակ խաղացել է Թիֆլիսի հայոց թատրոնում:*

*Երկրորդ անգամ նա այցելել է Կովկասը 1891 թ. և ծառայել 1891/92 թուականների սեզոնին և ապա վերջին անգամ 1897 թ. Բագու է եկել, որից յետոյ շարունակ, մինչև օրս ծառայել է մեր—ռուսահայերիս բեմին:*

*Բացի երկու մեծ կենտրոններից՝ Թիֆլիսից և Բագուից, տ. Սիրանոյշը եղել և խաղացել է համարեա բոլոր հայաշատ քաղաքներում, այն է՝ Երևան, Ալէքսանդրապօլ, Կարս, Շուշի, Գանձակ, Բաթում, Վլադիկաւկազ, Արմաւիր, Եկատերինօդար, Մօզդօկ, Աստրախան և վերջապէս Ն. Նախիջևան:*

*Երեսուն երկար ու ձիգ տարիներ ծառայելով այդ փշոտ ասպարէզում, տ. Սիրանոյշ շատ արգելքների է հանդիպել. շատ անգամ նախանձի ու հալածանքի առարկայ է դարձել:*

*Բայց նա չէ յուսահատուել, չէ ընկճուել: Սև նախանձի ու հալածանքի տակ նա միշտ էլ կարողացել է մխիթարութեան մի յենարան գտնել ու աշխատել:*

*«Ես տեսել եմ շատ դառն օրեր, ասում է Սիրանոյշ, և մխիթարուել եմ իմ թանգակին ժողովրդի միակ ժպիտով: Ես կրել եմ շատ հալա-*

ծանրներ, բայց քաջալերուել եմ իմ սիրելի հասարակութեան բուռն ծափերով. ես տեսել եմ հիւանդ ընկերոջս քաղցած մեռնելիս և չեմ վըհատուել. արցունքը նոյնքան հոսել է աչքերիցս, որքան ուրախութիւնը բղխել է սրտիցս. ոչ մի հալածանք, ոչ մի հարուած չեն կարողացել ինձ շեղել այն ճանապարհից, որ իմ փոթորկալից կեանքի ուղին է եղել, անդադար և անսպառ շարունակել եմ առաջ գնալ դէպի իմ ձգտած նպատակը և իմ առաջնորդն է եղել աշխատութիւնը»։

Ահա այդ «աշխատութիւնն» է եղել ամեն տեղ և ամեն դէպքում յաղթանակ տանողը. դա է եղել Սիրանոյշին բարձրացնողն ու հռչակ պարգևողը։

Եւ Հայ ժողովուրդը սիրել է նրա գործունէութիւնն ու տաղանդը և ըստ արժանւոյն գնահատել։

Հէնց ինքը տ. Սիրանոյշը չէ ուրանում այն մեծ նշանակութիւնը, որ ունեցել է Կովկասի հայ բեմը իր տաղանդի և առհասարակ իր արտիստիքական աջողութեան վերաբերմամբ։

Ահա թէ նա ինքը ինչ է ասում այդ մասին.—«Թատրոնը գոյութիւն առացել է Պօլսում և եղել է մինչև այն ժամանակ, երբ ներկայացումները տալիս էին հայերէն լեզւով, բայց երբ թիւրքերէն ներկայացումներով տըգէտ տնօրէնները սկսեցին հետևել ժողովրդի ճաշակին, փոխանակ ժողովրդին ընտելացնելու գեղարուեստի գաղափարին՝ այն օրից սկսուել է թատրոնի ճգնաժամը և քիչ ժամանակից յետոյ մեռել իր հերոսներով, որոնց փոխարինող ույժեր չեն երևում երկար տարիներից 'ի վեր։

Ես պարտական եմ իմ գոյութեամբ Կովկասի հասարակութեան, որ փրկել է ինձ, պահպանելով իմ ույժերը և զարթեցնելով իմ մէջ գտնուած ընդունակութիւնը. եթէ շատ անգամ գրում են, թէ ռուսահայ բեմը պարտական է թիւրքահայերին, թիւրքահայ դերասաններն էլ պարտական են ռուսահայերին, որոնք բարոյապէս պահպանել են մասամբ յայտնի դերասանների գոյութիւնը. առանց դրան Ադամեանները, Աստղիկները իրանց հայրենիքում բարոյապէս աւելի շուտ կմեռնէին»։

—

Տ. Սիրանոյշ իր երկարամեայ գործունէութեան ընթացքում ռուսահայ բեմի վրա խաղացել է բազմաթիւ պիէսներ, զանազան ամպլուաների դերերում։ Յատկապէս նրա համար ստեղծուել է մի հարուստ ռեպերտուար՝ այնպիսի պիէսներով, որոնցից շատերի մէջ նա ունեցել է առաւել կամ պակաս յաջողութիւն, իսկ մի քանիսների մէջ արտայայտել է իր խոշոր տաղանդի ամբողջ ստեղծագործական ույժը։

Ահա այդ պիէսներից գլխաւորները՝ «Մարի—Տիւդոր», «Ժաննա դ' Արկ», «Կամելիազարդ տիկին», «Սաֆօ», «Մադամ Սան—Ժէն», «Ֆրու—ֆրու», «Մեդէա», «Շղթաներ», «Անմեղ մեղաւորներ», «Իզէիլ», «Էռնանի», «Սիրուց խելագար», «Դարբնոցապետ», «Հոգով աղքատներ», «Զոքանչ» «Երկրորդ երիտասարդութիւն», «Անսանձի սանձահարում» «Զաւակ», «Հայրենական տուն», «Ռուզան» «Կեանքի արժէքը» «Տօսկա» և վերջապէս «Համլետ»—(Սիրանոյշ Համլետի դերում։)

Այդքան բազմաթիւ ու բազմազան պիէսների մէջ տիկին Սիրանոյշը

միշտ էլ ցոյց է տուել իր ինքնատիպ շնորհքը, իր բարեխիղճ վերաբերմունքն ու աշխատութիւնը։ Նրա գործունէութիւնը եղել է բեղմնաւոր, աշխատութիւնը տուել է առատ պտուղներ։

Թող ուրեմն երկա՛ր, շատ երկար տարիներ գործէ մեր շնորհալի դերասանուհին, թող աշխատի իր տաղանդի ամբողջ թափով զարկ տալ հայկական թատրոնի զարգացմանն ու բարգաւաճմանը։

Ց. ԳԵՆՋԵԱՆ

---

## ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ

Թէ ռուսաց և թէ առհասարակ եւրոպական գրականութեան մէջ դժուար է ցոյց տալ մի հեղինակ, որը այնքան կարճ ժամանակում այնպիսի մեծ հռչակ ձեռք բերած լինի, ինչպիսին Մաքսիմ Գորկին է վայելում։—«Գորկին, ասում է գերմանացի քննադատ Աւգուստ Շօլցը *), յանկարծակի, իբրև մի գլխաւոր փայլուն աստղ երևաց ռուսաց գրականութեան երկնքում և իր վրա կենտրոնացրեց ամենքի ուշադրութիւնը։ Հասարակութիւնը լարուած հետաքրքրութեամբ հետևեց այդ փայլին. հետևեց՝ լի հաւատով ու յուսով»։

Եւ այդ յոյսն ու հաւատը դեռ չէ դադարել. Գորկիի տաղանդը դեռ շարունակում է իր նորանոր նուաճումները և աւելի ու աւելի մեծ թափով է տիրում ընթերցողների վրա։

Այդպէս է այժմ։ Բայց ինչ էր ներկայացնում Գորկին մի քանի տարի առաջ։—Մի կիսակիրթ թափառաշրջիկ, որը աստանդական կեանք էր վարում, գիւղից—գիւղ, քաղաքից քաղաք էր անցնում, որպէս մի գործ ճարէ, իր գոյութիւնը պահպանէ։ Բաղդը չէր ժպտում նրա երեսին. մարդիկ չէին հետաքրքրւում նրա չարքաշ կեանքով։ Եւ այդ կեանքը իբրև մի հեքիաթ, իբրև մի ֆանտաստիկ պատմուածք շարունակում է իր ընթացքը, որը դառնութեան մէջ էլ իր առանձին գրաւչութիւնն ու գեղեցկութիւնն ունէր։

Դեռ մատաղ հասակից է սկսւում Գորկիի չարքաշութիւնը։ Նրա հայրը՝ Մակսիմ Պէշկովը հասարակ արհեստաւոր էր—պաստառագործ, իսկ մայրը Վառվառէն հարուստ ներկարարի՝ Կաշիրինի աղջիկն էր։ Ահա այդ ամուսնութիւնից 1869 թ. Մարտի 14-ին Նիժնիյ Նովգորոդում ծնւում է մի զաւակ, որին Ալեքսէյ անունն են տալիս **)։ Ալեքսէյ Մակսիմովիչ Պեշկով—դա այժմեան Մակսիմ Գորկին էր։

Նա միայն երեք տարեկան էր, երբ մեռաւ հայրը։ Դրանից յետոյ մայրը երկրորդ անգամ է ամուսնանում, բայց երկար չէ վայելում այդ նոր ամուսնութեան քաղցրութիւնները։ Թոքախտը նրան գերեզման է գլորում, բոլորովին որբ թողնելով փոքրիկ զաւակին։ Նա մեծանում է խստասիրտ պապի հսկողութեան տակ՝ առանց մայրական քաղցր խնամքի, առանց հայրական հոգատարութեան։

---

*) «Die Neue Welt» 1902. s 350

**) «Журналъ для всѣхъ» 1903 г. № 2

Մի քանի տարի անցնելուց յետոյ Գորկին սկսում է դպրոց այցելել, գրագիտութիւն սովորել: Սակայն նրա կեանքի այդ նոր շրջանն էլ երկար չէ տևում: Շուտով նա հիւանդանում է ծաղկից և ստիպուած է լինում թողնել դպրոցը. 9 տարեկան հասակում աշակերտ է մտնում մի կօշկավաճառի մօտ, բայց այստեղ էլ եռացրած ջուր է թափում վրան, ուստի և կօշկավաճառը դուրս է արտաքսում նրան: Երբ այրուածքի վէրքերը լաւանում են, Գորկին աշակերտ է մտնում մի նկարչի մօտ. այստեղ էլ նա երկար չէ մնում: Իր վարպետի խիստ վարմունքից զզուած նա հեռանում է և ծառայ է դառնում շոգենաւի վրա: Բարեբաղդաբար այդ շոգենաւի խոհարարը ոչ միայն գրագէտ էր, այլ և ընթերցասէր և ունէր սեփական գրադարան: Շատ բազմազան գրքեր կային այդ գրադարանում՝ Նեկրասովից, Գոգոլից Դիւմայից, Էքստերհաուզէնից սկսած մինչև «Искра»-ի հնացած վէպերը: Գորկին ագահութեամբ կարդում էր այդ գրքերը: Նրա միտքը գործում էր. աշխարհահայեացքը լայնանում: Դրան նպաստում էր ոչ միայն ընթերցանութիւնը. այլ և կեանքի երևոյթները, բնութեան տպաւորութիւնները: Շոգենաւը երթևեկում էր Վոլգայի վրայով և Գորկին հետզհետէ աւելի ու աւելի մօտից էր ծանօթանում նրա երևոյթների, նրա շրջապատ կեանքի հետ: Այդ ամենը զարգացնում են Գորկիի մէջ ուսման ծարաւ և նա 15 տարեկան հասակում տեղափոխւում է Կազան, որպէսզի յագուրդ տայ այդ ծարաւին: Բայց չէ որ այժմեան պայմաններում ուսումն էլ փողով է ձեռք բերւում, իսկ Գորկին դեռ չունէր փող: Հէնց այդ պատճառով էլ ուսումնածարաւ պատանին դպրոցի փոխարէն մի հացթուխի մօտ է մըտնում աշակերտելու՝ ամսական 3 րուբլի վարձով և օրական 18—20 ժամ աշխատելու պայմանով: Այդ դառն կեանքի յիշողութիւնները նա գեղեցիկ կերպով պատկերացրել է իր գրուածքներից մի քանիսում՝ «Կոնովալով»—(Коноваловъ), «Քսան վեց տղամարդ և մէկ աղջիկ»—(Двадцать шесть и одна) և «Վաղեմի մարդիկ»—(Бывшія люди):



Մաքսիմ Գորկի

Այդ միևնոյն ժամանակաշրջանում նա կողմնակի աշխատանքներ էլ էր կատարում՝ բեռներ էր կրում, փայտ էր ջարդում: Նրան շրջապատող մարդիկ էլ նոյնանման չարքաշութեան ու դառնութեան մէջ էին: Նա ապրում էր «բօսեակների»—թափառաշրջիկների ու մուրացկանների հետ: Այդպիսի կենցաղավարութիւնը կամաց-կամաց հաստատում էր նրա ապագայ տաղան-

դի հիմքը։ Այդտեղ Գօրկին տեսնում է կեանքի ,,յատակը'', ուսումնասիրում է նրա մութ ու մռայլ կողմերը։ Այդտեղ նրա առաջ կանգնում է այն «անիծուած հարցը», թէ «ինչու այդ մարդիկ դուրս են արտաքսուած հասարակութիւնից, թէ ինչից է առաջ եկել այդ թափառաշրջիկ կեանքը», թէ ինչպէս են ապրում այդ «բօսեակներն» իրանց որջերում...» Այդ կեղտոտ որջերում նա գտնում է իր հերոսներին՝ հալածուած, բաղդագուրկ, բայց մտածող հերոսներին։

Այդպիսի չարքաշ կեանքը չէր կարող անհետեանք անցնել Գօրկիի համար։ Նրա զգայուն սիրտը, վառ երեւակայութիւնը գործում էին անդադար և աւելի ու աւելի դառնացնում օրերը։ Վերջապէս լցւում է դառնութեան բաժակը և Մակսիմ Գօրկին 1888 թ. ինքնասպանութեան փորձ է անում, կնդակահարելով իր թոքերից մէկը։ Բարեբաղդաբար փորձն անյաջող է անցնում և նա շուտով բժշկւում է՝ նորից իր չարքաշ կեանքը շարունակելու համար։ Նա թափառում է քաղաքից քաղաք, մի առժամանակ խնձոր է վաճառում, մի առժամանակ երկաթուղու ծառայ է դառնում և վերջապէս զինուորագրութեան պատճառով վերադառնում է հայրենի Նիժնիյ Նօվգօրօդ։ Զինուորագրութիւնից ազատուելով, Գօրկին նորից սկսում է իր թափառաշրջիկ կեանքը։ Նա անցնում է Ղրիմ, Բեսարաբիա, Կովկաս և վերջապէս բնակութիւն է հաստատում Թէֆլիսում, գործ գտնելով երկաթուղու արհեստանոցում։ Հէնց այստեղ էլ նա սկսում է իր գրական գործունէութիւնը, 1892 թ. «Кавказъ» լրագրում զետեղելով «Макаръ Чудра» անունով մի պատմուածք։

Դրանից յետոյ սկսնակ գրողը, հայրենիք վերադառնալով, մի քանի նիւթեր է զետեղում տեղական թերթերում։ Այդտեղ՝ Նիժնիյ Նօվգօրօդում նա ծանօթանում է ռուսաց տաղանդաւոր գրող Կօրօլենկօյի հետ։ Այդ ծանօթութիւնը բարերար հետեանք է ունենում։ Կօրօլենկօյի խորհուրդները խոր հետքեր են թողնում. Գօրկին վերջնականապէս կանգնում է գրական լայն ճանապարհի վրա։ Իսկ այդ ճանապարհը արագ կերպով բարձրացնում է նրան փառքի ու պատուի աստիճաններով։

Եւ իսկապէս. Գօրկին այժմ նշանաւոր հեղինակ է համարւում ոչ միայն Ռուսաստանում, այլ և Եւրոպայում, Ամերիկայում, Եապոնիայում—մի խօսքով ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։ Նրա գրուածքներն ընդհանուր հետաքրքրութիւն են զարթեցնում և չտեսնուած արագութեամբ տարածւում։—(,,Պատմուածքների'' վերջին հատորը արդէն 50,000 ից աւելի օրինակներ տարածուել է։)

Իսկ ինչ են ասում այդ նախկին թափառաշրջիկի, ծառայի, բեռնակիրի, խնձորավաճառի գրուածքները, ինչով են գրաւում այդքան հետաքրքրութիւն։

Այդ հարցի պատասխանը գտնելու համար պէտք է աչքի առաջ ունենալ Ռուսաստանի սօցիալական կեանքը իր շարժուն ելէջներով, իր ալեծուփ հոսանքներով, «որ, ինչպէս իրաւացի կերպով նկատում է Ֆիլիպով*, մերթ զսպւում են ճնշող ուժի ազդեցութեան տակ, մերթ դուրս տալիս զօրեղ թափով...». Ահա մի այդպիսի հոսանքի արտայայտիչ է Գօրկին։

*) ,,Научное обозрѣніе'' 1901 № 2.

Նրա գրուածքները կենդանի բողոք են՝ մի ճնշուած տարրի՝ բօսեակների, թափառաշրջիկների բողոքը‘‘…

Գօրկին, երկար տարիներ ապրելով այդ շրջանում, անձամբ ճաշակելով այդ կեանքի բոլոր դառնութիւնները, այժմ կարողանում է շնորհալի ձեռով պատկերացնել բնութեան այդ խորթ զաւակների կենցաղը, նրանց յոյզերն ու խոհերը։ Սակայն նրա պատկերները սովորական խեղճութիւն չեն արտայայտում, այլ մի սպառնական բողոք, մի թարմ ոյժ, որ ձգտում է դէպի վերանորոգութիւն **)։ Ռուսաց հասարակական կեանքում վերջին ժամանակներս մի առանձին թափով է զարգացել այդ ձգտումը և Գօրկին, արձագանք տալով դրան, պատկերաւոր, գեղարուեստական ազդու ձևակերպութիւն է տուել հարստահարութեան ու ճնշումի դէմ բողոքող ձգտումին։

Եւ այդ արձագանքը վերացական կարծիքների, տեսական վարդապետութիւնների վրայ չէ հիմնուած, այլ բղխում է բուն իրականութիւնից։ Գօրկիի պատմուածքները կարդալիս մարդ զգում է, որ ,, съ природой одною онъ жизнью жилъ‘‘.

Նրա հերոսները շարունակ բողոքում են, շարունակ մտրակում անարդարութիւնն ու ճնշումը։ Նրանցից մէկը՝ Фома Գօրդէեվը դառնութեամբ բացականչում է.

,,Մարդը թափւում է բարկութիւնից ու զայրոյթից,
Երբ տեսնում ես մարդկանց կեանքն ու գործերը‘‘…

Նրա գրուածքները մեզ պատմում են, թէ ո՜րքան գեղեցիկ ու հարուստ է բնութիւնը, թէ ո՜րքան լաւ է մարդ-արարածը նոյն իսկ իր կեանքի «կեղտոտ յատակում», մեծ քաղաքների «մութ անկիւններում», թէ միայն ստոր ձգտումները, ագահութիւնը, հարստահարութիւնն ու անարդարութիւնն են նրան այդպիսի կեղտի մէջ գցողը, վատ յատկութիւններ զարգացնողը

Ոչնչացրէք այդ պայմանները, այն ժամանակ մարդը կըլինի լաւ։ Ջախջախեցէք հարստահարութեան ու ճնշման շղթաները և հասարակական կեանքը կը բարեփոխուի։

Ե.

(** Գօրկիի գրուածքների այդ յատկութիւնը շատ լաւ շեշտուած է Կոմս Վօգիւէի յօդուածում՝ ,,Revue des deux mondes‘‘ 1901 Թ. VIII գրքում։

# Պատմագրութիւն *)

## I Նշանաւոր դէպքեր ընդհանուր պատմութիւնից։

Քր. ծն. առ. Թ.

3000 Հերոգլիֆների գործածութիւնը Եգիպտոսում.
2940 Չինաց կայսրութեան սկիզբը.
2100 Բաբելոնի հիմնարկութիւնը։
2000 Փիւնիկեցիք գտնում են այբուբենը
1300 Հրէաները նուաճում են Պաղեստինը.
1200 Տրօյեայի անկումը.
888 Լիկուրգոսը օրէնքներ է տալիս Սպարտային.
800 Գրութեան գիւտը Հնդկաստանում.
776 Ոլիմպիական խաղերի սկիզբը Յունաստանում։ Յունաց դարագլուխը.
753 Հռոմուլոսը հիմնում է Հռոմը.
600 Բուդդան Հնդկաստանում.
594 Սոլոնի օրէնքները.
587 Նաբուգոդոնոսորը աւերում է Երուսաղէմը։ Հրէաստանի թագաւորութեան վերջը.
560 Կիւրոսը հիմնում է Պարսից թագաւորութիւնը.
533 Հրէաները բաբելոնեան գերութիւնից վերադառնում են Պաղեստին.
523 Հին կտակարանը 70-ից ձեռքով թարգմանւում է յունարէն.
510 Հասարակապետութեան սկիզբը Հռոմում.
500 Դարեհը Սկիւթացոց աշխարհում.
490 Մարաթոնի ճակատամարտը.
484 Հերոդոտի ծնունդը († 408).
469 Սոկրատէսի ծնունդը († 399).
452 Գրաւոր օրէնքների սկիզբը Հռոմում.
384 Արիստոտելի ծնունդը († 322).
356 Ալէքսանդր Մակեդոնացու ծնունդը.
323 Ալէքսանդր Մակեդոնացու մահը.
315 Չինական պարսպի շինութեան սկիզբը.
45 Յուլիոս Կեսարը մտցնում է տարուայ սկզբի հաշիւը յունուարի 1-ից.
30 Հռոմի կայսրութեան սկիզբը.

Քր. ծն. յ. Թ.

33 Քրիստոսի խաչելութիւնը.
41 Մատթէոս առաքեալը գրում է Աւետարանը.
44 Հրէաստանը դառնում է Հռոմի գաւառներից մէկը.
47 Ղուկաս առաքեալը գրում է Աւետարանը.
60 Մարկոս առաքեալը գրում է Աւետարանը.
64 Ներոն. առաջին հալածանք քրիստոնեաների դէմ.
66 Ղուկաս առաքեալը գրում է «Գործք Առաքելոց».
67 Պետրոս և Պօղոս առաքեալները նահատակւում են Հռոմում.
70 Տիտոս կայսրը աւերում է Երուսաղէմը.
97 Յովհաննէս առաքեալը գրում է Աւետարանը Եփեսոսում.
120 Պլուտարքոսի մահը.

*) Այս բաժինը կազմելիս օգտուել ենք գերմանների «Die Wichtigsten Thatsachen der Weltgeschichte» գրքոյկից և «Արօր» ու Կ. Պօլսի «Ազգային հիւանդանոցի» օրացոյցներից։

130 Անդրիանոս կայսրը վերանորոգում է Երուսաղէմը.
140 Պտղոմէոս աստղագէտի մահը.
226 Պարթևների թագաւորութեան անկումը Պարսկաստանում և Սասանեան հարստութեան սկիզբը.
321 Սահմանւում է կիրակին տօնել.
325 Առաջին տիեզերական ժողով Նիկիայում.
328 Կ. Պօլսի հիմնարկութիւնը.
347 Յովհաննէս Ոսկեբերանի ծնունդը.
381 Երկրորդ տիեզերական ժողով Կ. Պօլսում.
400 Եկեղեցիներում սկսւում է զանգակների գործածութիւնը.
431 Երրորդ տիեզերական ժողով Եփեսոսում։
451 Չորրորդ տիեզերական ժողով Քաղկեդոնում:
476 Հռօմայեցոց արևմտեան կայսրութեան վերջը.
496 Ֆրանգները ընդունում են քրիստոնէութիւնը.
571 Մահմեդի ծնունդը.
6 22 Մահմեդի փախուստը Մեդինա Մահմեդականների թուականի սկիզբը.
637 Արաբները գրաւում են Երուսաղէմը.
640 Արաբները հնարում են **հողմաղացը**.
670 Մահմեդականները կրօնապէս բաժանւում են երկու մասի՝ **սիւննի** և **շիի**.
700 Թատրոն, երաժշտութիւն և երգեցողութիւն Չինաստանում.
807 Թղթի գործածութիւնը Եւրոպայում.
850 Շաքարի գիւտը (արաբներ).
862 Ռուսական իշխանութեան սկիզբը.
870 Արևմտեան (Հռօմայեցոց) եկեղեցին բաժանւում է Արևելեանից (յունականից).
1000 Ունգարիայի թագաւորութեան սկիզբը.
1000 Պարսից մեծ բանաստեղծ Ֆիրդուսի.
1022 Գվիտօ դ'Արեցցօ վարդապետը հնարում է այժմեան երաժշտական նօտաները.
1072 Սելջուկները առնում են Երուսաղէմը.
1086 Խաչակրաց առաջին արշաւանքը.
1147 Խաչակրաց երկրորդ արշաւանքը.
1171 Առաջին բանկը Եւրոպայում (Վենետիկ).
1189 Խաչակրաց երրորդ արշաւանքը.
1202 Խաչակրաց չորրորդ արշաւանքը.
1223 Ստրկութիւնը ոչնչանում է Ֆրանսիայում.
1228 Խաչակրաց վեցերորդ արշաւանքը.
1248 Առաջին թղթադրամը Եւրոպայում.
1260 Առաջին բժշկական ուսումնարանը (Ֆրանսիայում).
1267 Առաջին ոստիկանութիւնը Եւրոպայում (Պարիզ).
1267 Դիտակի գիւտը,
1291 Խաչակրաց վերջին արշաւանքը.
1295 Իտալացի բանաստեղծ Դանթէն հրատարակում է իր «Աստուածային կատակերգութիւնը».
1301 Կողմնացոյցի գիւտը.
1307 Օսմանը հիմնում է Օսմանեան պետութիւնը.
1321 Դանթէի մահը.
1338 Վառօդի գիւտը.
1380 Թնդանօթի գիւտը.
1384 Լանկթամուրը տիրում է Ասիային.
1415 Յ. Հուսին այրում են կաթօլիկները.
1431 Ժաննա դ'Արք հովուհին, Ֆրանսիայի ազատողը, այրւում է անգլիացիների ձեռքով.
1440 Տպագրութեան գիւտը (Գուտտենբերգ).
1450 Ս. Պետրոս եկեղեցու հիմնարկութիւնը Հռօմում.
1453 Թիւրքերը նուաճում են Կ. Պօլիսը. Բիւզանդեան կայսրութեան վերջը.
1473 Ծնւում է հռչակաւոր գիտնական Կօպերնիկոսը, որ գտնում է երկնային մարմինների շարժողութիւն.
1483 Մարտին Լիւտերի ծնունդը.
1492 Ամերիկայի գիւտը,
1502 Անիւաւոր ժամացոյցի գիւտը.
1506 Քրիստափոր Կօլումբոսի մահը.
1517 Լիւտերը սկսում է բողոքականութիւն քարոզել.
1519 Մագելան առաջին անգամ ճանապարհորդում է երկրի շուրջը.
1520 Մեռնում է տիեզերահռչակ նկարիչ Ռաֆայէլը.
1524 Առաջին ձեռագիր լրագիրը Եւրոպայում.
1540 Իգնատիոս Լօյօլա հիմնում է եզուիտների միաբանութիւնը.
1546 Լիւտերի մահը.

1561 Ամերիկայի Թաբակո կղզու վրայից Եւրոպա են տեղափոխում մի բոյս, որը tabak=**ծխախոտ** անունն է ստանում.

1572 Բարդուղիմէոսեան գիշերը Պարիզում. կաթօլիկները կոտորում են բոլոր հուգենոտներին (բողոքականներին).

1582 Գրիգորեան տօմարի սկիզբը.

1615 Առաջին տպագրած լրագիրը(Ֆրանկֆուրտում).

1616 Շէքսպիրի մահը (ծն. 1564).—Ինկվիզիցիան հերետիկոսական է հրատարակում Գալիլէի այն գիւտը, որ հաստատում էր երկրի պտտուիլը արեգակի շուրջը.

1642 Գալիլէի մահը.

1643 Տօրիչելլ հնարում է օդաչափը—բարօմետրը.

1727 Նիւտօնի մահը.

1761 Անգլիան գրաւում է Հնդկաստանը.

1770 Ջէմս Ուատ հնարում է առաջին շոգեմեքենան.

1776 Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները անկախ տէրութիւն են դառնում.

1779 Օդապարիկի գիւտը.

1789 Ֆրանսիական մեծ յեղափոխութեան սկիզբը.

1790 Գալվանեան ելեկտրականութեան գիւտը.

1796 Ստէօրօտիպի գիւտը.

1800 Մարմնի պատուաստի գիւտը.

1801 Վիմագրութեան գիւտը (Զեննեֆելդ).

1801 Վրաստանը միանում է Ռուսաստանի հետ.

1803 Շոգենաւի գիւտը (Ռօբերտ Ֆուլտօն).

1804 Նապօլէօն I կայսրը Ֆրանսիայում.

1805 Շիլլերի մահը (ծն. 1769).

1809 Գլադստօնի ծնունդը.

1812 Արագատիպ մամուլի գիւտը։—Նապօլէօն I արշաւում է Ռուսաստան.

1821 Նապօլէօն I-ի մահը Ս. Հեղինէի կղզում.

1829 Լօրդ Ստեֆենսօն շինում է շոգեկառքը.

1830 Յունաստանը ազատւում է թիւրքական լծից և անկախ տէրութիւն է դառնում.

1830 Յուլիսեան յեղափոխութիւնը Ֆրանսիայում.

1832 Գէօթէի մահը (ծն. 1749).

1838 Լուսանկարի գիւտը.

1848 Մօրզէ հնարում է ելեքտրական հեռագիրը.

1848 Փետրուարեան յեղափոխութիւնը Ֆրանսիայում.

1853—1855 Արևելեան պատերազմ.

1856 Պարիզեան դաշնադրութիւն. Թիւրքիան պարտաւորւում է իր հպատակ քրիստոնեաների իրաւունքները հաւասարեցնել իսլամ հպատակների իրաւունքին.

1861 Իտալիան միանում և կազմում է մի տէրութիւն.

1865 Ստրկութիւնը և գերեվաճառութիւնը վերանում է Ամերիկայում (Աբրահամ-Լինկօլն).

1869 Բացւում է Սուէզեան ջրանցքը.

1870 Ֆրանս-պրուսական պատերազմը.

1870 Իտալիան գրաւում է Հռոմը, պապի աշխարհական իշխանութիւնը վերջանում է.

1871 Գերմանիան դաշնակցական կայսրութիւն է կազմում.

1875 Հերցօգովինայի մէջ ծագում է ապստամբութիւն թիւրքերի դէմ.

1876 Թիւրքերը մեծ կոտորած և գազանութիւններ են անում Բօլգարիայում.

1877 Ռուս-թիւրքական պատերազմը.

1878 Բերլինի դաշնագրութիւնը.

1879 Ելեքտրական լապտերների գիւտը։

1880 Հեռախօսի (տելեֆօնի) գիւտը.

1881 Ֆօնօգրաֆի գիւտը.

1882 Դարվինի մահը.

1883 Մեռնում է ֆրանսիացի հայրենասէր Գամբետտան.

1885 Վիկտօր Հիւգօյի մահը.

1889 Համաշխարհային ցուցահանդէս Պարիզում.

1892 Խօլերայի մեծ համաճարակը Կովկասում.

1893 Համաշխարհային ցուցահանդէս Չիկագօյում (Ամերիկա).

1895 Սասունի կոտորածը, որը մի ազդանշան դարձաւ հայկական անվերջ արհաւիրքների համար.

1898 Անթել հեռագրի գիւտը.

1898 Թիւրք-յունական պատերազմը. Կրետէի ազատութիւնը.

1898 Սպան-ամերիկական պատերազմը.

1899—1902 Բօէրների պատերազմը անգլիացիների հետ.

1900 Պարիզի համաշխարհային ցուցահանդէս.

1900 Եւրոպացիների արշաւանքը Չինաստան.

1900 Ախալքալաքի մեծ երկրաշարժը.

1902 Հռչակաւոր վիպագրող Էմիլ Զօլայի մահը.

1902 Շամախու մեծ երկրաշարժը.

1902 Անտիլեան Մարտինիկ կղզու Բըհլի հրաբուղխը ժայթքում է և կործանում Սէն Պիէր բազմամարդ քաղաքը (մայիսի 8).

1903 Մակեդոնիայի ապստամբութիւնը.

1903 Մայիսի 28-ին պալատական յեղափոխութիւն Սերբիայում. Աղէքսանդր թագաւորի և Դրագա թագուհու մահը.

## II Նշանաւոր դէպքեր հայկական անցեալից։

Քր. ծն. առ. թ.

2300 Հայկ. Հայոց ազգի սկզբնաւորութիւնը.

1300 Արամ նահապետ.

606 Պարոյր առաջին թագաւոր հայոց

558 Տիգրան Ա.

330 Հայկազանց թագաւորութեան անկումը.

149 Արշակունեաց թագաւորութեան սկիզբը։

89 Տիգրան Բ.

Քր. ծն. յ. թ.

34 Թադէոս առաքեալը քարոզում է Հայաստանում.

43 Առաջին քրիստոնեայ նահատակներ Հայաստանում—Թադէոս առաքեալ, Սանդուխտ կոյս և նրանց հետ 3440 մարդ.

68 Բարդուղիմէոս առաքեալը նահատակւում է Սանատրուկ թագաւորի Ոգոհի քրոջ հետ.

197 Վաղարշ թագաւորը շինում է Վաղարշապատը, ուր և փոխադրում է թագաւորութեան աթոռը.

257 Գրիգոր Լուսաւորչի ծնունդը.

261 Գրիգոր Լուսաւորչի հայր Անակը սպանում է Խոսրով Ա. թագաւորին.

301 Նահատակւում են Հռիփսիմեան և Գայիանեան կոյսերը։—Գրիգոր Լուսաւորիչը մկրտում է Տրդատին և հայերին.

303 Էջմիածնի հիմնարկութիւնը.

325 Լուսաւորչի որդին՝ Արիստակէսը Նիկիայի տիեզերական ժողովից վերադառնում է, բերելով հաւատի հանգանակը։ — Առաջին եկեղեցական ժողով Էջմիածնում՝ Նիկիայի ժողովի որոշումներն ընդունելու համար.

332 Գրիգոր Լուսաւորչի մահը.

345 Թագաւորութեան աթոռը նորից փոխադրւում է Աշտիշատ.

348 Խոսրով Բ. շինում է Դուինը, ուր փոխադրւում է թագաւորական աթոռը.

365 Երկրորդ եկեղեցական ժողով Աշտիշատում՝ աշխարհականները և եկեղեցականները բարեկարգելու համար.

366 Երրորդ եկեղեցական ժողով Վաղարշապատում հայոց կաթուղիկոսների՝ Կեսարիայի աթոռից անկախ լինելու մասին.

387 Հայաստանը բաժանւում է յոյների և պարսիկների մէջ.

390 Գանձիկ ճգնաւորը գտնում է Գրիգոր Լուսաւորչի մասունքը.

402 Չորրորդ եկեղեցական ժողով Վաղարշապատում՝ հայերէն լեզուի համար տառեր հնարելու մասին.

404 Ս. Մեսրոպը գտնում է հայոց տառերը.

426 Հինգերորդ եկեղեցական ժողով Վաղարշապատում՝ եկեղեցական դասակարգի բարեկարգութեան մասին։

432 Արշակունեաց թագաւորութիւնը վերջանում է.

435 Վեցերորդ եկեղեցական ժողով Աշտիշատում՝ Եփեսոսի տիեզերական ժողովի որոշումներն ընդունելու մասին.

436 Ս. Գրքերի թարգմանութիւնը.

440 Ս. Սահակի և Մեսրոպի մահը.

450 Ութերորդ եկեղեցական ժողով Արտաշատում՝ Յազկերտի հրամանով Միհրներսէհի գրած թղթին պատասխանելու համար.

447 Եօթերորդ եկեղեցական ժողով

Ճահապիվանում՝ օրինազանցներին պատժելու համար.

451 Աւարայրի պատերազմը. Վարդանի և նրա 1036 զինակիցների մահը.

451 Իններորդ եկեղեցական ժողով Դվինում՝ կաթողիկոս ընտրելու և աթոռը Դուին փոխադրելու մասին։

452 Կաթողիկոսական աթոռը Էջմիածնից փոխւում է Դուին.

454 Ս. Ղևոնդի և նրա ընկերների նահատակութիւնը Պարսկաստանում.

458 Վարդանի դուստրը — Շուշանիկը նահատակւում է.

481 Վահան Մամիկոնեան սպարապետ (երկրորդ կրօնական պատերազմը). Եղիշէ պատմագրի մահը.

491 Տասներորդ եկեղեցական ժողով Վաղարշապատում, որ մերժում է Քաղկեդոնի տիեզերական ժողովը.

498 Մովսէս Խորենացին մեռնում է.

522 Սաստիկ սով Հայաստանում.

527 Տասնմէկերորդ եկեղեցական ժողով Դուինում՝ ժողովուրդը բարեկարգելու մասին.

551 Հայոց տոմարի նորոգումը։ Այս մասին լինում է 12-րորդ եկեղեցական ժողովը Դուինում.

596 Տասներեքերորդ եկեղեցական ժողով Դուինում՝ Վրաց Կիւրիօն կաթողիկոսի մասին։ Վրացիք բաժանւում են հայերից.

604—606 Դայլ Վահանի յաղթութիւնները.

629 14-րորդ եկեղեցական ժողով Կարինում՝ Քաղկեդոնի ժողովի մասին.

640 Արաբացոց առաջին արշաւանքը.

645 15-րորդ եկեղեցական ժողով Դուինում եկեղեցու բարեկարգութեան մասին.

648 16-րորդ եկեղեցական ժողով Դուինում Քաղկեդոնի ժողովը քննելու համար.

651 17-րորդ եկեղեցական ժողով Մանազկերտում Քաղկեդոնի ժողովի դէմ.

706 Կաշմ ոստիկանը Նախիջևանի եկեղեցում այրում է 800 հայ իշխաններ և Խրամ քաղաքի եկեղեցում 400 իշխաններ.

709 18-րորդ եկեղեց. ժողով Պարտաւ քաղաքում (Աղուանից երկիր) եկեղեցական կանոնների մասին.

719 19-րորդ եկեղեց. ժողով Դուինում եկեղեցու բարեկարգութեան համար.

763—764 Կարկուտ, մորեխ և երաշտ Հայաստանում.

768 20-րորդ եկեղեց. ժողով Պարտաւում եկեղեցու բարեկարգութեան համար.

841 21-րորդ եկեղեց. ժողով Երնջակում՝ Յովհաննէս կաթողիկոսի վարքը քննելու համար.

850 Բուղայ ոստիկանը արշաւում է Հայաստան և քանդում.

854 22-րորդ եկեղեց. ժողով Շիրակաւանում.

86; 23-րորդ եկեղեց. ժողով Շիրակաւանում Քաղկեդոնի ժողովը քննելու համար.

874 Մաշտոց եպիսկոպոսը հիմնում է Սևանի վանքը.

885 Բագրատունեաց թագաւորութեան սկիզբը.

894 Երկրաշարժ Դուինում.

895 Սիւնեաց Յովհաննէս եպիսկոպոսը հիմնարկում է Տաթևի վանքը։

908 Վասպուրականում սկսւում է Արծրունեաց թագաւորութիւնը, որը տևում է 170 տարի.

914 Յուսուփ ոստիկանը սոսկալի տանջանքներով սպանում է Սմբատ Ա. Բագրատունի թագաւորին Երընջակ ամրոցի դիմացը.

961 Անին Բագրատունեաց մայրաքաղաք է դառնում.

962 Սկսւում է Կարս քաղաքի թագաւորութիւնը, որ տևում է 122 տարի։

968 Խոսրովանոյշ թագուհին շինում է Հաղբատը և Սանահինը.

870 24-րորդ եկեղեց. ժողով Անիում Վահան կաթողիկոսի վարքը քննելու համար.

972 25-րորդ եկեղեց. ժողով Անիում.

993 Կաթողիկոսական աթոռը փոխադրւում է Վասպուրականից Անի։— Վերջանում է Անիի մայր եկեղեցու հրաշալի շինութիւնը.

1002 26-րդ և 27-րդ եկեղեց. ժողով՝ Հարք գաւառում՝ Թոնդրակեցի աղանդաւորների դէմ.

1003 Գրիգոր Նարեկացու մահը.

1045 Բագրատունեանց թագաւորութիւնը վերջանում է.

1036 28-րդ եկեղեց. ժողով Անիում՝ Դէոսկորոս կաթողիկոսի վարքը քննելու համար.

1051 29-րդ եկեղեց. ժողով Հարք գաւառում Թոնդրակեցիների դէմ.

1064 Ալփասլանը առնում է Անին։

1072 30-րդ եկեղեց. ժողով Սև-լերան վրա՝ Գէորգ կաթողիկոսը գահընկեց անելու համար.

1080 Հաստատւում է Ռուբինեան իշխանութիւնը Կիլիկիայում.

1114 31-րդ եկեղեց. ժողով Սև-լերան վրա, որ մերժում է Աղթամարի Դաւիթ կաթողիկոսին.

1147 Կաթողիկոսական աթոռը փոխւում է Անիից Հռոմկլայ։

1165 32-րդ եկեղեցական ժողով Հռոմկլայում. Ներսէս Շնորհալին կաթողիկոս է ընտրւում։

1167 33 րդ եկեղեց. ժողով Հռոմկլայում՝ հայոց եկեղեցին յունականի հետ միացնելու մասին։

1170 Բաղաբերդում (Սիւնիք) այլազգիները այրում են 10 հազար ձեռագիր մատեաններ։

1173 Ներսէս Շնորհալու մահը։

1178 34-րդ եկեղեց. ժողով Հռոմկլայում՝ հայոց եկեղեցին յունականի հետ միացնելու մասին։

1186 Լևոն Ռուբինեան իշխանը շինում է Սիս քաղաքը։

1204 35-րդ եկեղեց. ժողով Սիսում, ուր ութ եկեղեցական կանոններ հաստատուեցին։

1205 36-րդ եկեղեց. ժողով Լօռում՝ Սիսի հաստատած ութ կանոնները պահելու մասին։

1207 37-րդ եկեղեց. ժողով Անիում Սիսի 8 կանոնների մասին։

1237 Թաթարների արշաւանքների սկիզբը։

1243 38-րդ եկեղեց. ժողով Սիսում, ուր 25 կանոններ որոշուեցին եկեղեցականների մասին։

1244 39-րդ եկեղեց ժողով Սիսում Ս. Հոգու վերաբերեալ վարդապետութեան մասին։

1271 Հայերը Անիից գաղթում են Լեհաստան։

1276 Մի ամբողջ տարի Վասպուրականում երկրաշարժներ են լինում։

1292 40-րդ եկեղեց. ժողով Սիսում Ծըռազատկի մասին։

1294 Կաթողիկոսական աթոռը փոխադրւում է Հռոմկլայից Սիս։—41-րդ եկեղեց. ժողով Սիւնիքում, ուր Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսին թուղթ գրուեցաւ հայոց եկեղեց. ծէսերը անփոփոխ պահելու մասին։

1307 42-րդ եկեղեց. ժողով Սիսում հաւատի ծէսերի մասին։

1309 43-րդ եկեղեց. ժողով Սիսում՝ նախընթաց ժողովի կանոնները նորից քննելու համար։

1311 Երուսաղէմում սկսւում է հայոց պատրիարքութիւնը։

1316 44-րդ եկեղ. ժողով Ադանայում՝ հաւատի ծէսերի մասին։

1342 45-րդ եկեղեց. ժողով Սիսում Պապի թղթին պատասխանելու համար։

1361 46-րդ եկեղեց. ժողով Սիսում՝ Ս. բաժակում գինու հետ ջուր չխառնելու մասին։

1387 Լանկթամուրը աւերում է Հայաստանը.

1388 Անին իսպառ կործանւում է և ամայանում.

1391 Գրիգոր Տաթևացու մահը.

1393 Ռուբինեան վերջին թագաւոր Լևոն Զ-ի մահը։ Սաստիկ սով Հայաստանում.

1402 Լանկթամուրը, Հայաստանում բոլոր ձեռագիր մատեանները հաւաքելով, տանում է Սամարղանդ և փակում Աշտարակի մէջ.

1441 47-րորդ եկեղեց. ժողով Էջմիածնում. կաթուղիկոսական աթոռը փոխադրւում է Սիսից Էջմիածին.

1461 Հաստատւում է Կ. Պօլսի հայոց պատրիարքութիւնը.

1551 Շահթահմազը աւերում է Հայաստանը.

1567 Դպիր Աբգար Թոքատեցին առաջին անգամ հայերէն սաղմոս է տպագրում Վենետիկում.

1579 Ժանտախտ և սաստիկ սով Հայաստանում և Աղուանից երկրում.

1585 Հայաստանը Օսմանցիների տիրապետութեան տակ.

1600 Ժանտախտ և սով Հայաստանում.

1603 Պարսից Շահաբաս թագաւորը հայերին գերի է տանում Պարսկաստան (Նոր Ջուղայ).

1607 Մորեխ և սով Հայաստանում.

1618 Պարսիկները տարեկան հարկ են դնում Էջմիածնի վրա.

1651 Եկեղեցական ժողով Երուսաղէմում, ուր եկեղեցականների մասին կանոններ հաստատուեցան.

1689 Լեհաստանի հայերը անջատւում են հայ եկեղեցուց.

1718 Ղարաբաղի հայերը պատգամաւորութիւն են ուղարկում ռուսաց Պետրոս Մեծ Կայսրի մօտ և խնդրում են նրա օգնութիւնը պարսից լուծը թօթափելու համար.

1722 Դաւիթ-բէկը գալիս է Սիւնիք և պատերազմներ է սկսում պարսիկների և օսմանցիների դէմ.

1733 Ղարաբաղի Մելիք-Եւանի ղեկավարութեամբ մի գիշերում կոտորւում են օսմանեան ամբողջ զօրքը, որ բռնել էր Գանձակ և Ղարաբաղ: Իւրաքանչիւր հայ նշանակած գիշերը սպանում է իր տանը բնակուած օսմանցի զինւորին.

1765 Սիմէօն կաթուղիկոսը տպարան է հիմնում Էջմիածնում.

1771 Մխիթար Սեբաստացին Վենետիկում հիմնւում է Մխիթարեան միաբանութիւնը.

1789 Հիմնւում է Շուշի բերդը.

1794 Հրատարակւում է առաջին հայերէն պարբերական թերթը՝ «Ազդարար» անունով.

1795 Աղա Մահմադ-խանը աւերում է Թիֆլիսը.

1798 Սով և ժանտախտ Ղարաբաղում: 11,000 հայեր գաղթում են Ղզլար և այլ տեղեր.

1813 Հիմնւում է Մոսկուայում Լազարեան ճեմարանը.

1825 Հիմնւում է Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցը.

1827 Ռուսները գրաւում են Երևանը.

1828 Ռուս-պարսկական պատերազմը: Շուշի բերդի պաշարումը:—40 հազար հայեր գաղթում են ռուսական Հայաստան.

1836 Բացւում է Էջմիածնի Սինօդը.

1857 Ներսէս V կաթուղիկոսի մահը.

1860 Հաստատւում է թիւրքահայերի սահմանադրութիւնը.

1862 Զէյթունում հայերը ապստամբում են թիւրք կառավարութեան դէմ և արիւնահեղ պատերազմներ են մղում.

1863 Բագուի Մարդասիրական ընկերութիւնը հաստատւում է.

1369 Խրիմեան Հայրիկ Կ. Պոլսի պատրիարք է ընտրւում.

1874 Ներսէս Վարժապետեան Կ. Պոլսի պատրիարք է ընտրւում:—Էջմիածնում բացւում է Գէորգեան ճեմարանը.

1876 Թիւրքերը Վանում կրակում են հայոց խանութները.

1877 Ռուս-թիւրքական պատերազմը Թիւրքական Հայաստանում.—Քիւրդերի գազանութիւնները: — Ալաշկերտից 3000 տուն հայեր ռուսաց զօրքի յետևից գալիս են Երևանեան նահանգը.

1878 Բեռլինի վեհաժողովը վաւերացնում է ռուս-թիւրքական հաշտութեան դաշնագիրը, որի 61 յօդուածը վերաբերում է թիւրքահայերի ինքնավարութեան.

1880 Սով Թիւրքահայաստանում.

1881 Հաստատւում է Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը.

1884 Ներսէս պատրիարքը վախճանւում է.

1887 Կովկասեան հայերի մէջ մտցնւում է զինւորագրութիւնը.

1888 Յայտնի վիպագրող Րաֆֆիի մահը.

1892 Խրիմեան Հայրիկ ամենայն հայոց կաթուղիկոս է ընտրւում Էջմիածնում.

1892 Մահ յայտնի հրապարակախօս Գրիգոր Արծրունու.

» Մահ ազգային բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանի.

» » Գաբրիէլ եպ. Սրուանձտեանի.

» » Խորէն արքեպիսկոպոս Նար-Բէյի.

1900 Հրապարակախօս և որբախնամ Գրիգոր Ջանշեանի մահը.

1901 Վախճանւում է Ղ. Վ. Ալիշան, որ ծնուել էր 1820 թ.

1902 Մահ երաժշտագէտ Խ. Կարա-Մուրզայի.

1902 Հ. Ա. արքեպիսկոպոս Այվազեանի մահը.

1903 Յուլիսի 29-ին վախճանւում է գեր. Մելքիսեդէկ արքեպ. Մուրադեանը.

## Ամենայն հայոց կաթողիկոսները:

Հայոց ընդհանուր կաթուղիկոսութեան աթոռը առաքելական է և առաքելահաստատ: Առաջին անգամ քրիստոնէութիւնը հայոց մէջ քարոզել են երկու առաքեալ՝ Ս. Թադէոս և Ս. Բարթուղիմէոս, որոնք և հիմնել են հայոց կաթուղիկոսութիւնը: Ժամանակի ընթացքում կաթուղիկոսական աթոռը զանազան պատճառներով փոխադրուել է մի տեղից մի այլ տեղ և այդպիսով ներկայացրել է հետեւեալ պատկերը.

### Արտազու աթոռ.

35— 43 Ս. Թադէոս Յուդա Ղեփէոս.
44— 60 Ս. Բարթուղիմէոս.
60— 76 Ս. Զաքարիաս.
77— 81 Ս. Զեմենտոս.
82— 95 Ատրներսէհ.
96—126 Մուշեղ.
127—154 Շահէն.
155—175 Շաւարշ.
176—193 Ս. Ղեոնդիոս.
196—223 . . . .
230—260 Ս. Մեհրուժան.
260—280 . . . .
280—300 Հերակլ (*).

### Վաղարշապատ.

301—325 Ս. Գրիգոր Լուսաւորիչ.
325—332 Ս. Արիստակէս Ա. Պարթև.
332—341 Ս. Վրթանէս Ա.
341—347 Ս. Յուսիկ Ա.
348—352 Փառէն Ա. Աշտիշատցի.
353—359 և 363—373 Մեծն Ներսէս
373—377 Շահակ Մանազկերտցի.
377—381 Զաւէն Ա. Մանազկերտցի.
381—386 Ասպուրակէս Ա.
397—439 Ս. Սահակ Ա. Պարթև.
440—452 Ս. Յովսէփ Ա. Հողոցմեցի.
452—456 Մելիտէ Ա. Մանազկերտցի.
456—461 Մովսէս Ա.
461—471 և 471—478 Գիւտ Ա. Արահեզացի.

### Դուին:

478—498 Ս. Յովհաննէս Ա. Մանդակունի.
390—515 Բաբգէն Ա. Ոթմսեցի.
516—526 Սամուէլ Ա. Արծկեցի.
526—534 Մուշէ Ա. Այլաբերեցի
534—539 Սահակ Բ. Ուղկեցի.
539—545 Քրիստափոր Ա. Տիրառիճցի.
545—548 Ղեւոնդ Ա. Եռաստեցի.
548—557 Ներսէս Բ. Բագրատունի.
557—574 Յովհաննէս Բ. Գաբեղեան.
574—604 Մովսէս Բ. Եղիվարդեցի.
607—615 Աբրահամ Ա. Աղբաթանեցի.
615—628 Կոմիտաս Ա. Աղցեցի.
628—630 Քրիստափոր. Բ. Ապահունի.
630—641 Եզր Ա. Փառաժնակերտցի.
641—661 Ներսէս Գ. Իշխանցի «Շինող».
661—667 Անաստաս Ա. Ակոռեցի.
667—677 Իսրայէլ Ա. Ոթմսեցի.
677—703 Սահակ Գ. Ձորափորեցի.
703—717 Եղիա Բ. Արճիշեցի.
717—728 Ս. Յովհ. Դ Օձնեցի «Իմաստասէր».
728—741 Դաւիթ Ա. Արամոնցի.
741—764 Տրդատ Ա. Ոթմայեցի.
764—767 Տրդատ Բ. Դասնաւորացի.
767—775 Սիօն Ա. Բաւոնացի.
775—888 Եսայի Ա. Եղիպատրուշեցի.
788—790 Ստեփաննոս Ա. Դունեցի.
790—791 Յովաբ Ա. Դունեցի.
791—792 Սողոմոն Ա. Գառնեցի.
792—795 Գէորգ Ա. Օշականցի «Հոլոռբուկ».
795—806 Յովսէփ Բ. Փարպեցի «Կարիճ».
806—833 Դաւիթ Բ. Կակաղեցի.
833—855 Յովհաննէս Դ. Ովայեցի.
855—877 Զաքարիայ Ա. Ձագեցի.
877—898 Գէորգ Բ. Գառնեցի.
898—899 Ս. Մաշտոց Ա. Եղիվարդեցի.
899—831 Յովհ. Ե. Դրասխանակերտցի «Պատմաբան».

### Աղթամար.

931—932 Ստեփաննոս Բ. Ռշտունի.
932—938 Թէոդորոս Ա. Ռշտունի.

938—943 Եղիշէ Ա. Ռշտունի.
943—967 Անանիա Ա. Մոկացի.

## Արգինա.

968—969 Վահան Ա. Սիւնի,
969—967 Ստեփաննոս Գ. Սևանցի.
972—992 Խաչիկ Ա. Արշարունի.

## Անի.

992—1019 Սարգիս Ա. Սևանցի.
1019—1045 Պետրոս Ա. «Գետադարձ»
1049—1054 Խաչիկ Ա. Անեցի։
1054—1060 Խաչիկ Բ. Անեցի։
1060—1065 Թափուր։
1065—1105 Գրիգոր Բ. Վկայասէր։

## Սև լեռ (Կիլիկիա)

1105—1113 Բարսեղ Ա. Անեցի·
1113—1166 Գրիգոր Գ. Պահլաւունի.

## Հռոմկլայ։

1116—1173 Ս. Ներսէս «Շնորհալի»
1173—1193 Գրիգոր Դ, «Տղայ».
1193—1194 Գրիգոր Ե. «Քարավէժ»
1194—1203 Գրիգոր Զ. «Ապիրատ».
1203—1221 Յովհ. Զ. Մեծաբարոյ «Խըճկաոր».
1221—1267 Կոստանդին Ա. Բարձրբերդցի.
1267—1286 Յակոբ Ա. Կլայեցի «Գիտնական».
1286—1289 Կոստանդին Բ. Կատուկեցի «Պրօնագործ»,
1290—1293 Ստեփաննոս Դ. Հռոմկլացի.

## Սիս։

1293—1307 Գրիգոր Է. Անաւարզեցի «Ցուրքեցանց».
1307—1322 Կոստանդին Գ. Կեսարացի.
1322—1326 Կոստանդին Դ. Լամբրոնացի
1327—1342 Յակոբ Բ. Տարսոնացի.
1342—1355 Մխիթար Ա. Գռներցի «Միրիկ».
1355—1358 Յակոբ. Բ. (Դարձեալ).
1359—1372 Մեսրոպ Ա. Արտազեցի.
1372—1374 Կոստանդին Ե. Սսեցի.
1374—1387 Պօղոս Ա. Սսեցի.
1387—1392 Թէոդորոս Բ. Կիլիկեցի.
1393—1408 Կարապետ Բ. Կեղեցի «Բոպիկ».
1408—1411 Յակոբ Գ. Սսեցի·
1411—1416 Գրիգոր Ը. Խանձողաց.
1416—1429 Պօղոս Բ. Գառնեցի.
1429—1439 Կոստանդին Զ. Վահկեցի.
1439—1441 Գրիգոր Թ. Մուսաբէկեանց.

## Վաղարշապատ

1441—1443 Կիրակոս Ա Վիրապեցի,
1443—1466 Գրիգոր Ժ. Մակուեցի Ջալալբէկեան.
1466—1470 Արիստակէս Բ. Աթոռակալ.
1470—1474 Սարգիս Բ. «Աջատար».
1474—1484 Յովհաննէս Է. «Աջակիր».
1484—1507 Սարգիս Գ. «Միւսայլ».
1515—1520 Զաքարիա Բ. Վաղարշապատցի.
1520—1537 Սարգիս Դ. Վրաստանցի.
1537—1542 Գրիգոր ԺԱ. Բիւզանդացի.
1542—1564 Ստեփաննոս Է. Սալմաստեցի.
1564—1570 Միքայէլ Ա. Սեբաստացի.
1570—1587 Գրիգոր ԺԲ. Վաղարշապատցի.
1587—1628 Դաւիթ Դ. Վաղարշապատցի։
1629—1632 Մովսէս Գ. Տաթևացի։
1633—1555 Փիլիպպոս Ա. Աղբակեցի։
1655—1682 Յակոբ Դ. Ջուղայեցի.
1682—1691 Եղիազար Ա. Այնթապցի.
1691—1705 Նահապետ Ա. Եդեսիացի.
1706—1714 Աղէքսանդր Ա. Ջուղայեցի.
1715 2725 Աստուածատուր Ա. Համադանցի.
1726—1729 Կարապետ Բ. Ուլնեցի.
1730—1734 Աբրահամ Բ. Խոշաբցի.
1734—1737 Աբրահամ Գ. Կրետացի.
1737—1751 Ղազար Ա. Ջահկեցի.
1751—1753 Մինաս Ա. Ակնեցի.
1753—1759 Աղէքսանդր Բ. Կ. Պօլսեցի.
1759—1763 Յակոբ Ե. Շամախեցի.
1763—1780 Սիմօն Ա. Երևանցի „Տօմարագէտ",
1780—1799 Ղուկաս Ա. Կարնեցի.
1801—1804 Դաւիթ Ե. Էնէգէթցի.
1804—1808 Դանիէլ Ա. Սուրմալեցի,
1809—1831 Եփրեմ Ա. Ձորագեղցի,
1831—1842 Յովհաննէս Ը. Կարբեցի.
1843—1858 Ներսէս Ե. Աշտարակեցի.
1858—1865 Մատթէոս Ա. Կ. Պօլսեցի.
1866—1882 Գէորգ Դ. Կ. Պօլսեցի.
1885—1892 Մակար Ա. Թեղուտցի.
1792— Մկրտիչ Ա. Վանեցի.

**Կ. Պօլսի Հայոց պատրիարքները XIX դարում։**

1800—1813 Յովհաննէս ԺԱ.
1813—1815 Աբրահամ Ա. Գոլեան—Տաթևացի.
1815—1823 Պօղոս Ա. Գրիգորեան Ադրիանուպօլսեցի.
1823—1831 Կարապետ Բ. Պալաթեցի.
1831—1839 Ստեփաննոս Գ. „Աղաւնի“ Զաքարեան.
1839—1840 Յակոբ Դ. կամ Յակոբոս Սերոբեան.
1840—1841 Ստեփաննոս Դ. (դարձեալ).
1841—1844 Աստուածատուր Բ. Կ. Պօլսեցի.
1844—1848 Մատթէոս Բ. Չուխաճեան.
1848—1858 Յակոբոս (դարձեալ).
1858—1860 Գէորգ Բ. Քէրէստէճեան.
1860—1861 Սարգիս Ե. Անդրիանուպօլսեցի.
1861—1863 Ստեփաննոս Մաղաքեան (Տեղապահ).
1863—1769 Պօղոս Բ. Թագթագեան.
1869—1869 Իգնատիոս Ա. Քաքմաճեան.
1869—1874 Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի.
1874—1885 Ներսէս Վարժապետեան Կ. Պօլսեցի.
1885—1888 Յարութիւն Ա. Վեհապետեան
1888—1894 Խորէն Ա. Աշըգեան.
1894—1896 Մատթէոս Գ. Իզմիրլեան.
1896— Մաղաքիա Ա. Օրմանեան.

# Ժողովրդական երգեր

«Սարէն կուգայ ձիաւոր»

Ներդաշնակեց Գ. Միրզայեան




Հրէս եկաւ իմ աղբէր—
Վայ լէ, լէ, լէ,
Երեք օրուան Թագաւոր—
Ինչիլիկ, փնչիլիկ և այլն։

—

Կողրայ քարեր մատան է,
Իմ եարն ինձի բաստան է,
Եյէք տեսէք եարս էկմու,
Մարալ եղը մատաղ է,

—

Կերակուրը կուլ չի գնում,
Մի օր ուրախ չեմ մնում,
Քանի եարս պարիրն է,
Գիշերները չեմ քնում։

## Օ՜յ նազանըմ:

Ներդաշնակեց Ք. Կարա Մուրզա

Allegro



Երկրորդ անգամ pp (pianissimo)

Արագը հեշտացել ա.
Օ՜յ նազանըմ, նազանըմ,
Ճամբէքը կոշտացել ա,
Դիւլ նազանըմ, նազանըմ.
Եար ջան դուն բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Կարմիր ծոյերով եկար:
Խապար տարէք իմ եարին
Օ՜յ նազանըմ, նազանըմ.
Մուշտարիս չատացել ա:
Դիւլ նազանըմ, և այլն:

—

Սև ամպը սարի գլխին,
Կաքաւը քարի գլխին,
Մէկ մէկու խօսք ենք տուել
Էն բարձր դարի գլխին:

—

Սարերի հովին մեռնեմ
Ձէկ տըղի բոյին մեռնեմ.
Էս օր օխտն օր չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնեմ:

# Այլ և այլք

**Էմիլ Զօլայի դաւանանքը.** Աշխարհահռչակ վիպասան Էմիլ Զօլան իր մահուանից (1902) քիչ ժամանակ առաջ մի տիկնոջ յիշատակարանում գրել էր հետեւեալը.

Ի՞նչպիսի մահ կուզենայի:—Յանկարծակի:

Ի՞նչը կլինէր ինձ համար ամենամեծ դժբաղդութիւնը:—Կասկածի մէջ մնալը:

Ո՞րն է իմ սիրած զբաղմունքը: Աշխատանքը:

Ես ի՞նչ կուզենայի:—Միշտ առողջ լինել:

Ո՞րոնք են իմ սիրելի պրօզայիկները:—Նրանք, որոնք ամեն ինչ տեսնում ու արտայայտում են պարզ կերպով:

Ո՞րոնք են իմ սիրած բանաստեղծները:—Նոյնը:

Իմ սիրած նկարիչնե՞րը:—Նոյնը:

Իմ սիրած երաժշտագէտնե՞րը: —Նոյնը:

Ո՞րոնք են իմ սիրած հերոսները վէպերի մէջ:—Նրանք, որոնք հերոսներ չեն:

**Կանանց թերթ.** «Sun» լրագրի տեղով, Չիկագօյում հիմնուած է անգլիերէն լեզուով մի մեծ թերթ՝ «Daily Bullitin» անունով, որը հրատարակւում է, խմբագրւում է, գրւում է, կազմւում, տպւում և տարածւում է բացառապէս կանանց ձեռքով: Խմբագրի պաշտօնը կատարում է տիկին Ֆրանսիս Դիկկենսօն: Յայտարարութիւններ ընդունւում են միմիայն կանանցից: Բաժանորդագրութիւնը մի ամսուայ ընթացքում հասել է արդէն 100,000 դօլլարի:

**Ընկերութիւն Ֆլիրտի դէմ.** Նիւ-Եօրկում կազմակերպուել է «անտիֆլիրտիստների» մի կլուբ: Կլուբի անդամները պարտաւոր են հսկել, որ հրապարակներում, փողոցային Դօն—Ժուանները չ'հետեւեն և յանդուգն կերպով հետամուտ չ'լինեն կանանց: Կլուբի անդամներին տրւում են կարմիր նշաններ. նոյնպիսի նշաններ կարող են ունենալ և այն կանայք, որոնք կ'ցանկանային օգնութիւն ստանալ ընկերութիւնից: Այդ կլուբի անդամների թիւը մինչև այժմ 50-է: Ընդունելութիւնը կատարւում խիստ ընտրողութեամբ, որովհետև այդ ընկերութեան մէջ ընդունւում են միայն անբիծ կեանք վարող անհատները:

**Իբսէնը ճաշի ժամանակ:** Աշխարհահռչակ դրամատուրգ Հենրիկ Իբսէնը յայտնի է իր տարօրինակ բնաւորութեամբ՝ սառնութեամբ ու նոյն իսկ կոպտութեամբ: Նա միշտ մռայլ է, միշտ խոյս է տալիս բազմամարդ շրջաններից: Նրա բնաւորութեան այդ յատկանիշները բաւական պատկերաւոր կերպով նկարագրում է յայտնի գրականագէտ Գէօրգ Բրանդէս.—,,Revue Bleue‘‘-ում զետեղած իր յօդուածում: Իբրև նմուշ նա ի միջի այլոց առաջ է բերում հետեւեալ դէպքը, որ պատահել է 1891 թ.—Խրիստիանիայի մօտակայ Սանդվեկէնում: Այստեղ ապրում էր Բրանդէսը Նորվեգիական մի քանի գեղարւեստագէտների հետ: Նա պատահմամբ իմանում է, որ Իբսէնն էլ այնտեղ է և ընկերների հետ որոշում են ճաշ տալ նրա պատւին: Իբսէնը սկզբում կտրականապէս հրաժարւում է, բայց երբ Բրանդէսը երկար թախանձում է, նա հարց է տալիս.

— Ճաշին քանի՞ մարդ է լինելու:

— Իննը:

— Ես երբէք այդպիսի մեծ հասարակութեան հետ չեմ ճաշում:

— Բայց դրանք բոլորն էլ գեղարուեստագէտներ են, պատասխանում է Բրանդէս, ոչ մի ճնշում չէ կարող լինել: Մենք կարող ենք ճաշել ձեր հիւրանոցում:

Վերջապէս Իբսէնը համաձայնում է: Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածւում է: Բոլորն էլ ուզում են մասնակցել այդ ճաշին: Բրանդէս մերժում է շատ շատերին, բայց անկարող է լինում մերժել և իր մօտիկ բարեկամներին: Նա նորից գնում է Իբսէնի թոյլտուութիւնը խնդրելու և յայտնում է, որ ճաշին մասնակցելու է նաև մի տիկին:

— Երբէք այդ չպէտք է լինի, պատասխանում է Իբսէնը

— Դա մի ուրախ, շատ խելացի, ջահիլ կին է:

— Ես չեմ սիրում ոչ ուրախ, ոչ էլ խելացի ջահիլ կանանց:

— Մի ժամանակ դուք հաւանել էք այդ կնոջ մօրաքրոջը:

— Հա՛, եթէ այդպէս է, թող գայ ուրեմն:

Նշանակուած օրը Բրանդէսը ֆրակ հագած գալիս է և Իբսէնի սենեակի դուռը թրխկթրխկացնում: Իբսէնը նայում է նրա վրա և բարկացած բացականչում.

— Ֆրակո՛վ, բայց ես նոյն իսկ ֆրակ չունեմ:

— Ոչինչ դուք կարող էք գալ սովորական շորերով:

— Իսկ այն տիկինն այնտեղ է:

— Այո, նա և ուրիշ մի քանի կանայք:

— Ուրեմն ընդամենը քանի հոգի են:

— Քսան երկու:

— Դա դաւաճանութիւն է: Դուք ասում էիք ինը: Ես չեմ գայ:

Երկար խնդրելուց յետոյ Բրանդէսը վերջապէս կարողանում է համոզել Իբսէնին, որ վար իջնի և ճաշին մասնակցէ:

Սակայն ծերունու դէմքն այնքան մռայլ էր, որ ոչ ոք չէր համարձակւում նրա ներկայութեամբ բերան բաց անել: Ճաշն այն աստիճան սառն անցաւ, որ դեռ ձուկը ուտելու ժամանակ բաժանեցին շամպայնի գինին և սկսեցին ճառեր արտասանել: Բայց հէնց առաջին խօսքերից յետոյ Իբսէնը ընդհատում է ճառախօսին՝ Բրանդէսին: Վերջինս յարգանօք խնդրում է չընդհատել՝ մինչև որ վերջացնէ խօսքը՝ Նա շարունակում է իր ճառը և Իբսէնին համեմատում է արեգակի և աստղերի հետ: Բայց այդ ոչ մի տպաւորութիւն չի թողնում:

— Ուրիշները կընդիմախօսէին այդ ճառի առիթով, ասում է Իբսէն, բայց ես այդ չեմ անէ:

— Խօսեցէք, մաէստրօ, բացականչում են այս ու այն կողմից:

— Չեմ խօսի, ձայնը բարձրացնելով կրկնում է Իբսէնը. դրանից յետոյ հրաշալի գեղեցկութեան տէր դերասանուհու կշտին նստած մի պարոն ձայն է խնդրում և ասում.

-Իմ գեղանի հարևանուհին խնդրում է ինձանից դրամատիկան բոլոր դերասանների և դերասանուհիների կողմից շնորհակալութիւն յայտնել դօկտօր Իբսէնին և ասել, որ նա ոչ մի դեր այնպիսի բաւականութեամբ չի խաղում, ինչպէս նրա դրամաները:

— Ես դերեր չեմ գրում, բարկացած պատասխանում է Իբսէնը. ես պատկերացնում եմ մարդկանց և երբէք չեմ աշխատում դերասանների կամ դերասանուհիների համար.

Ըստ երևոյթին նա չէր էլ նկատել այդ խիստ խօսքերի տպաւորութիւնը. որովհետև ճաշից վեր կենալիս ասում է.

— Ո՜րքան աջող ճաշ էր: Այո՛, չափազանց աջող...

Գործերի թագաւորութիւն: Այդ վերնագրով (,,The Emdire of business‘‘) հրատարակեց մի գիրք յայտնի միլօնատէր Էնդրին Կարնէջի, որը իրան նպատակ է դրել ազատուել իր միլիօններից: Պէտք է աշխատել հարստանալ, ասում է իր գրքի մէջ Կարնէջին, բայց միայն օգտակար լինելու համար և ոչ թէ հէնց միայն հարստանալու համար: Չը կայ աւելի սուր զգացմունք, աւելի արհամարհելի, քան փողի սէ-

րը, և նա, ով կրում է այդ սէրը իր մէջ, վերջինն է մարդկանցից: Ժառանգական հարստութիւնը հեղինակը աւելի ապականիչ է համարում: Հարուստ մարդկանց զաւակների մեծ մասը ոյժ չէ ունենում դիմադրելու այն փորձութեան, որին ենթարկում է նրան փողը, և կորստի է մատնւում ամենաարհամարհելի գոյութիւն քաշ տալուց յետոյ: Սովորութիւն է դարձել գանգատվել չքաւորութեան դէմ և չարիք համարել նրան: Բայց բոլորը, ինչ որ լաւ և մեծ բան կատարվել է, դա չքաւորների գործն է եղել: Հոգիների այդ ուղեցոյցները, գաղափարների մարտիրոսների, գիւտ անողների, պետական մարդկանց, բանաստեղծների մեծ մասը միլիոնատէրերի և նշանաւոր մարդկանց որդիք չեն եղել: Ոչ մի բան այնքան խոչնդոտ չէ դառնում մեծ գործեր կատարելու համար, որքան ժառանգական հարստութիւնը: Նայելով հարստութեան վրա, որպէս բարի գործեր կատարելու միջոցի վրա, Կարնէգի ասում է, թէ պէտք է հարստութիւնը գործածելու այնպիսի նպատակ գտնել, որը օգտակար լինի իր երկրին և, եթէ հնարաւոր է, առհասարակ մարդկութեանը: Միայն այն ժամանակ միտք կունենայ կեանքը: Ահա հէնց այդ համոզմունքից դրդուած Կարնէջին իւրաքանչիւր տարի խոշոր նուիրատուութիւններ է անում զանազան բարեգործական նպատակների համար: Այսպէս օրինակ՝ նա նուիրել է Շօտլանդիայի համալսարաններին—50,000,000 ֆրանկ. Վաշինգտօնում ազգային համալսարան հիմնելու համար՝ 50,000,000. Պետերբուրգի տեխնիքական ուսումնարանին՝ 35,000,000. Նիւ—Եօրկի քաղաքային գրադարանին ՝26000000 իր գործարանների բանւորների թոշակատու գանձարանին-20,000,000. զանազան գրադարաններին—20,000,000: Ընդամենը՝ 201,000,000 ֆրանկ.

**30 յարկանի տուներ.** Նիւ—Եօրկում 30 յարկանի մի տուն է շինած: Այդ տունը 380 ոտնաչափ բարձրութիւն ունի: Տան շինութեան վրա գործածուել է 8,000 տօնն (տօննը=60 փութ) պողպատ, 8,000,000 աղիւս. տունը ունի 2680 լուսամուտ և 1,770 դուռ:

**Ի՞նչ է հարկաւոր մարդ լինելու համար.** Մի գիտնականի հարցրին, թէ ինչ է հարկաւոր մարդ լինելու համար և նա պատասխանեց՝ մի քիչ **երկինք**—աչքի համար, մի քիչ **բարի խօսք**—ականջի համար, մի քիչ **հաւատ**—հոգու համար, մի քիչ **լոյս**—մտքի համար, մի քիչ **համբերութիւն**—գլխի համար և մի քիչ **սէր**—սրտի համար...

**Եւ** ինչու համար միայն մի **քիչ**:

Որովհետև քչի յետևից կգայ և շատը:

**Խրատական աղիւսակ.** Կան մարդիկ, որոնք ամեն օր մի փոքրիկ գումար են ծախսում ոչ-եղից ըմպելիների համար և կարծում են, թէ դա շատ չնչին բան է: Բայց դրանք մոռանում են, որ եթէ այդ միևնոյն չնչին գումարները խնայողական գանձարան տան, այն ժամանակ կստանան.

| օրակ. | 1 տարում | | 5 տարում | | 10տար. |
|---|---|---|---|---|---|
| կ. | ր. | կ. | ր. | կ. | ր. |
| 5 | 18 | 25 | 100 | 38 | 219 |
| 10 | 36 | 60 | 200 | 76 | 438 |
| 15 | 54 | 75 | 301 | 14 | 657 |
| 20 | 78 | » | 401 | 52 | 886 |
| 24 | 92 | 25 | 501 | 19 | 1095 |

**Հռոմի պապի հարստութիւնը.** Պապի ունեցուածքը գնահատւում է մօտ 2 միլիարդ 120 միլիօն լիրա (լիրան—25 կ. մեր փողերով), որ բերում է տարեկան 120 միլիօն շահ: Պապը ստանում է եկամուտ՝ ամսական 20 միլիօն. շաբաթական—2 միլիօն, օրական—411000 լիրա, մէկ ժամում—17,000 լիրա, մէկ րոպէում—285 լիրա, մէկ վայրկեանում մօտաւորապէս — 5 լիրա:

— **Մակսիմ Գորկին ծառայ.** Ինչպէս յայտնի է ռուսաց տաղանդաւոր գրող Գօրկին տարիներ առաջ շատ նեղ վիճակի մէջ է եղել և շատ չարքաշ կեանք է վարել: Ահա այդ մասին մի հետաքրքիր

միջնադէպ է պատմում «Самарская газ.»-ի աշխատակից պ. Բեզօբլիդնին.

— Ութսունական թուականների վերջերումն էր, գրում է նա. Ռուսաստանի զանազան ծայրերում թափառում էին բազմաթիւ ինտելիգենտ մարդիկ առանց մի որ և է զբաղմունքի։ Ահա այդ ժամանակ Բօրիսօգլէբսկի երկաթուղու կայարանն եկաւ մի երիտասարդ՝ պատառոտած շորերով, թոկով կապած տոպրակը մէջքին։ Դա Ա. Պեշկովն էր, այժմեան Մաքսիմ Գօրկին։ Նա եկել էր պաշտօն որոնելու, բայց չկար։ Մենք երկար մտածեցինք, երկար խորհրդակցեցինք, բայց ոչ մի հնար չգտանք։

— Դուք պէտք է մի քիչ սպասէք, ասացինք նորեկին, մինչև որ ապրանքներ կշռողի պաշտօն բացուի, իսկ մինչև այդ ժամանակ, եթէ ուզում էք, կարող էք ծառայի պաշտօն վարել բեռների բաժանմունքում։

— Ուրախութեամբ, վճռական ձայնով բացականչեց Գօրկին, թէկուզ վաղը առաւօտւանից։

Հետևեալ օրը մենք նրան տուինք մի փոքրիկ գումար, իբրև կանխավճար՝ շորեր գնելու համար, մի յանձնարարական նամակ և ճանապարհ դրինք դէպի «Տօկարևկա»— (թէ «Բուրնայ», լաւ չեմ յիշում)— կայարանը։

Մի քանի ժամանակից յետոյ ես Գօրկիից ստացայ հետևեալ նամակը.

— «Ապրում եմ առաջուայ նըման. իմ պաշտօնակից ծառաների հետ բարեկամացել եմ, պարտականութիւններս հասկացել եմ լի ու լի և կատարում եմ ճշտութեամբ։ Կայարանի կառավարիչը (начальникъ) շատ գոհ է ինձանից և իրեն համակրանքի ու հաւատի նշան ամեն առաւօտ ինձ ստիպում է թափել իր խոհանոցի կեղտոտ ջրերը։ Խնդրում եմ բացատրել, արդեօք այդ էլ իմ պարտականութիւնն է»...

Անցնում է մի քանի ամիս և Գօրկին համեմատաբար աւելի բարձր պաշտօն է ստանում։ Նրան նշանակում են կայարանի աւելների ու բրեզենտների վրա վերահսկիչ։ Դրանից յետոյ նա մի քանի տարի էլ շարունակում է նոյնանման պաշտօնները վարել մինչև որ մտնում է գրական ասպարէզը և իր շնորհալի գրչի շնորհիւ կանգնում փառքի ու պատուի մեծ ճանապարհի վրա...

**Կանանց դաշնակցութիւն տղամարդկանց դէմ։** Աթէնքի մի խումբ գեղեցկուհիներ մօտ ժամանակներս կազմել են մի գաղտնի ընկերութիւն, որի նպատակն է կռիւ մղել տղամարդկանց դէմ և ստիպել նրանց ճանաչելու երկու սեռերի իրաւունքների հաւասարութիւն։ Այդ ընկերութեան մասնակցող օրիորդները հրաժարւում են ամուսնանալուց մինչև որ իրագործուի յիշեալ պահանջը։

**Կոյրերն էլ կտեսնեն։** «Revue des Revus» ամսագրում զետեղած է մի յօդուած պրօֆ. Շտինի նշանաւոր գիւտի մասին, որի շնորհիւ կոյրերն էլ կարող են տեսնել։ Ահա թէ ինչ է պատմում բժիշկ Գացէն այդ առթիւ։

— Պրօֆ. Շտինը ինձ տարաւ մի փոքրիկ, մութ սենեակ և աչքերըս կապեց։ Ես լսում էի, թէ ինչպէս գիտնական պրօֆէսօրը ման է գալիս, վառում է լուցկին, լապտերը և այլն, բայց ոչինչ չէի տեսնում։ Յանկարծ զգացի, որ պրօֆէսօրը մօտեցրեց իմ քունքերին իր հնարած գործիքը. դրա ազդեցութեան տակ ես տեսայ մի անորոշ լոյս և կարողանում էի զանազանել իմ մօտի առարկաները։ Լոյսն հետզհետէ ուժեղանում էր և ես կան րողանում էի պարզ տեսնել նոյնիսկ հեռաւոր առարկաները...»։

Պրօֆ. Շտինի հնարած այդ գործիքը փորձել են և ուրիշ շատ բժիշկներ և բոլորն էլ նոյն տպաւորութիւնն են ստացել, բայց և այնպէս գիտական աշխարհը դեռ վերջնականապէս չէ հաստատել այդ գիւտը, չէ կարողացել գիտականօրէն բացատրել նրա գաղտնիքը։

Իսկ ինքը պրօֆ. Շտինը այսպէս է բացատրում իր գիւտը.

— Մարդը տեսնում է ոչ թէ աչքերով, այլ ուղեղով: Աչքերը միայն ընդունում են առարկայի պատկերը և տեսողական նեարդի միջոցով հաղորդում ուղեղին: Կոյրերը շօշափելիքի շնորհիւ կարող են որոշ պատկերացնել առարկայի արտաքին ձևը: Եթէ մարդը աչքեր չունենար, այն ժամանակ անդամներից մէկ ուրիշը կը կատարէր տեսողութեան գործարանի դերը:

Մի քանի ստորին կենդանիներ տեսողութեան յատուկ գործարան չունեն: Նրանք իրանց ամբողջ մարմնով են ընդունում լոյսի տպաւորութիւնները: Այդ պատճառով եթէ հնար լինի առանց աչքերի օգնութեան ուղեղին հաղորդելու առարկայի կամ տեսարանի պատկերացումը, այն ժամանակ կոյրն էլ կը զգայ նոյնը, ինչ որ առողջ աչքերի տէր մարդը»:

Ահա այդ է պրոֆ. Շարինի գըլխաւոր իդէան: Նրա հնարած գործիքը ունի աչքի ցանցաթաղանթի նման մի էկրան, որի վրա պատկերանում են առարկաներն ու տեսարանները և ապա էլէքտրականութեան միջոցով ազդում ուղեղի վրա: Այդ նշանաւոր գործիքը տեսողութեան վերաբերմամբ նոյն դերըն են կատարում, ինչ որ «հեռախօսը» լսողութեան վերաբերմամբ, այսինքն նրա միջոցով կարելի է տեսնել նոյն իսկ շատ հեռու առարկաներ, որոնք անմատչելի են սովորական տեսողութեանը

**Համբոյրը վնասակար է:** Բժըշկական գիտութիւնը վաղուց արդէն հաստատել է, որ համբոյրի միջոցով շատ անգամ տարածւում են համաճարակ հիւանդութիւնները: Վերջերս բժիշկ Ֆերէն իր յատուկ ուսումնասիրութեամբ ապացուցեց, որ համբոյրը վնասակար է նաև հոգեկան ու նեարդային հիւանդութիւնների վերաբերմամբ: Փոքրահասակ երեխաների թշերին չարունակ թափւում են ծնողների, ծըծմայրի, բարեկամների ու հարևանների համբոյրները, որոնք շատ անգամ զզւանք են զարթեցնում երեխաների մէջ: Շատ անգամ է պատահում, որ երեխան լաց է լինում, երբ նրան համբուրել են ուզում: Իսկ եթէ, այդ բանը յաճախ է կրկնւում, այն ժամանակ երեխան կարող է նոյն իսկ ջղային հիւանդութիւն ստանալ: Բժ. Ֆերէն ուսումնասիրել է այդպիսի մի քանի դէպքեր: Համբոյրների բոլոր տեսակներից միայն հասակաւորների փոխադարձ սիրային համբոյրն է ամենաբնականը: Չինաստանում և Եապոնիայում ծնողները երբէք չեն համբուրում երեխաներին:

**Ամենաթանկագին սիգարներ.** Ամերիկական լրագիրների ասելով աշխարհիս ամենաթանկագին սիգարները 1500 հատ են, որ բերուած են Հաւաննայից Նիւ-Եօրկ: Դրանցից իւրաքանչիւրն արժէ մօտ 8 րուբլի: Այդ նշանաւոր սիգարների ծխախոտը բուսնում է Կուբա կղզու Վուէլդա-Աբայօ գաւառում: Սիգարներից իւրաքանչիւրը 16 մատնաչափ (դիւյմ) երկարութիւն ունի և քաշում է 3/100 կիլոգրամ:

# Մեր պատկերները

Հայ ժողովուրդը, որ այժմ տարագիր ու չարքաշ կեանք է վարում աշխարհիս զանազան կողմերում, մի ժամանակ ունեցել է փառաւոր անցեալ՝ լի ուրախալի երևոյթներով: Այդ անցեալի լուռ վկաներն են հընութեան բեկորները՝ վանքերն ու աւերակները, որոնք իրանց գեղեցկութեամբ ու ամրութեամբ դեռ մինչև օրս հիացմունք են պատճառում նոյն իսկ օտարականներին. Ահա այդպերճախօս բեկորների պատկերներն են, որ իւրաքանչիւր տարի զարդարելու են ,,Լոյսի‘‘ էջերը և իրանց խորհրդաւոր տեսքով ընթերցողին յիշեցնելու են անցած—գնացած օրերի պատմութիւնը:

Ներկայ համարում մենք զետեղել ենք երեք նմուշ այդ բեկորներից՝ Անիի Ս. Փրկիչ և Ս. Գրիգոր Աբուղամրենց եկեղեցիները և Յաղթական Կամարը—Խօշուն:

1. Ս. *Փրկիչ եկեղեցին* ընկած է Անիի հիւսիս-արևելեան կողմում: Նա փոքրիկ է իր տարածութեամբ, բայց գեղեցիկ և հոյակապ իր արտաքինով. շինուած է գորշագոյն սրբատաշ քարերից և ունի ներքուստ ութ անկիւն, իսկ վերևում 12: Եկեղեցու ներսի կողմը բաժանուած է ութ կիսաբոլոր մասերի՝ իւրաքանչիւրի մէջ մի սիւն. լուսամուտների թիւը 12 է, իսկ դռները—2. Ս. Փրկիչ եկեղեցին Անիի ամենահին շինութիւններից մէկն է: Նրա շինութիւնը վերջացել է 1035 թուականին: Շինողն է Աբլղարիբը: Ահա թէ այդ մասին ինչ է ասում եկեղեցու բազմաթիւ արձանագրութիւններից մէկը: «Յամս սատուածապատի. և հոգևոր տեառն Պետրոսի Հայոց Կաթողիկոսի և ի թագաւորութեան Սմպատայ որդւո Գագկա Շահանշահի ՆՁԵ թուականիս ես Աբլղարիբ մարզպան որդի Գրիգորո իշխանի և թոռն Աբուղամրի և եղբայր Վահրամա և Վասակա շինեցի զսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքն Անի շատ ջանիւ և մեծածախ գանձիւ..,»

2- Ս. Գրիգոր Աբուղամրենց. Ծաղկոցաձոր բարձրավանդակի վրա ընկած է մի փոքրիկ եկեղեցի, որը ինքնատիպ գեղեցկութեամբ և բնորոշ պարզութեամբ իր վրա է կենտրօնացնում ճանապարհորդների ուշադրութիւնը: Դա Աբուղամրենց Ս. Գրիգորի եկեղեցին է, որ շինուած է Պահլաւունի հայ իշխանի ձեռքով, Ժ դարում: Շինութեան ճիշտ թուականը յայտնի չէ: Նրա վրայի արձանագրութիւններից ամենահինը կրում է 994 թուականը:

3. Յաղթական կամար. Ահա խորհրդաւոր մի ձոր: Նրա յատակով Ախուրեանն է հոսում և իր տըխուր վշշունով չորս կողմը լցնում. մէկ կողմում Ղօշավանքն է՝ Հոռոմոսի վանքը. իսկ միւս կողմում, մի քանի վերստ հեռու—աւերակ Անին, որ

Կորուցել է թագաւորներ,
Գլխին ժողուել քոռ բուեր...

Իսկ ձորափին, Ղօշավանքից միայն մի վերստ հեռու, միայնակ կանգնած է ,,Յաղթական կամարը‘‘, որ աւելի մեծ խորհրդաւորութիւն է տալիս այդ տարածութեանը: Կամարի երկու կողմերում փոքրիկ քառակուսի սենեակներ են, որոնց գագաթները բոլորաձև գմբէթներով են վերջանում: Հիւսիսային պատի վրա մի արձանագրութիւն կայ, որ կրում է 1102 թուականը: Զանազան կարծիքներ կան այդ կամարի մասին: Ոմանց ասելով, դա զան-

դահլատուն էր՝ հայ նախարարներին խորհրդի հրաւիրելու համար, իսկ ոմանք էլ պնդում են, թէ դա հայ թագաւորների համար զբօսարան էր: Զօրահանդէսի ժամանակ հայոց զօրքերն անցնում էին կամարի տակով, իսկ թագաւորը վերեւում նստած դիտում էր այդ տեսարանը· *)

Ինչ էլ որ լինի, դա հնութեան մի բեկոր է՝ թանկ ու սիրելի հայութեան համար:

Ալպեան հէքիաթ կամ ալպեան Փէա (Նկար Կոնրադ Դիլիցի).

Ժամանակակից Գերմանիայի նըկարիչների մէջ ամե՛նանշանաւորներից մէկը կարելի է համարել նաև Կօնրադ Դիլիցին: Ծնուել է նա Բերլինում 1846-ին: Նկարել է Վիլհելմ կայսեր և Բիսմարկի պատկերները այնքան նման և արտայայտութիւնները այնքա՛ն ճշգրիտ, որ իրաւամբ նրա՛ նկարները համարւում են ամենալաւերը:

Բացի դիմանկարներից, Դիլիցն ունի և ուրիշ պատկերներ, նոյնքան նշանաւոր, և ֆանտազիայի աշխարհներից և հին աշխարհի կեանքից: Բոլոր այդ նկարները գրաւում են նայողի ուշադրութիւնը նախ շատ լաւ մտածուած նիւթով և երկրորդ շատ յաջող վրձինով ու գոյներով: Դիլիցը համարւում է ժամանակակից գերմանական ամենալաւ նկարիչը, որ կարողանում է յաջող ֆանտազիաներ ստեղծել և կտաւի վրա դրոշմել վարպետութեամբ:

Ներկայ պատկերը, որ կոչւում է ,,Ալպեան հէքիաթ կամ Ալպեան փէա'', նրա նորագոյն նկարներից է:

Նիւթը հետևեալն է:

Երիտասարդ և քաջ որսորդը, որ երկար թափառել է լեռների ժայռերի մէջ և հասել վերջապէս անմատչելի բարձրութիւնների, ուր միայն արծիւները կարող են հասնել—յոգնել է երկար վերելքից, դժուար ճանապարհներից ու պառկել է մի սոսկալի ձորի ծայրին դանդաղ չքեղ հարթութեան վրա. նա ժայռին է կռթնեցրել իր աղեղը, մի կողմ դրել վերարկուն ու գաւազանը և քնել է առողջ քնով: Նրա յոգնած երևակայութիւնը նկարում է երազի մէջ իր դիմաց՝ միմեանց յետևից հրաշալի պատկերներ: Երբեմըն երազում է յաջող որս, երբ նա կարողացել է նետահարել եղջերուի, երբեմն անդնդախոր ձորեր, որոնցից նա անցել է...

Բայց ահա մի նոր հրաշալի երազ ևս, որ և նկարիչն արտայայտել է նկարի վրա:

Այստեղ, այդ վայրենի բարձրութիւնների վրա թռել եկել է Ալպեան լեռների փէան և նստել որսորդի գլխի վերևում: Եւ որպիսի՜ հիասքանչ դիցուհի է դա, ինչպիսի՜ դէմք, որքա՛ն փայլուն թևիկներ և որպիսի նուրբ, եթերային ծածկոցի մէջ փաթաթուած: Կռացել է նա դէպի գեղեցկադէմ որսորդը և իր ձեռքի ծաղիկը կպցնել է ուզում նրա յոգնած ճակատին, մինչ դեռ նրա չքեղ մազերը, որ կապուած են ժապաւէնով, ետևի կողմից ծածանւում են մեղմիկ հովից..

—

,,Հիացմունք'' նկար Վ. Բուգուէրոյի: Մարդկային բազմազան զգացմունքների շարքում սէրն է ամենից ուժեղը: Դժուար է ցոյց տալ մի մարդ, որին այդ զգացմունքը երբ և իցէ հալ ու մաշ արած չըլինի: Քանի՜, քանի՜ բանաստեղծներ գեղուն խօսքերով երգել են այդ զգացմունքը, քանի՜ վիպասաններ իրանց վէպերում այս կամ այն ձևով պատկերացրել են դրա պէսպէս կողմերը, քանի՜ նկարիչներ շնորհալի վրձինով պաստառի վրա դրոշմել են սիրային էջերը·

Ահա մի այդպիսի էջ է ներկայացնում յայտնի նկարիչ Բուգուէրոյի նկարը՝ ,,Հիացմունքը'': Ամուրն է, որ սիրոյ նետը ձեռքին, մտախոհ հայեացքով կանգնել է կոյսերի շըրջանում և կամացուկ հնչեցնում է այդ վեհ զգացմունքի մրմունջները: Եւ կոյսերից իւրաքանչիւրը ուշի ուշով, սրտի մի առանձին դողդողով լսում է այդ հնչիւնները. լսում է և հիանում նրանց թովիչ ազդեցու-

*) Տես Հ. Ղևոնդ Ալիշանի ,,Շիրակ', եր. 18

# Ա Ն Ի Ի   Ա Ւ Ե Ր Ա Կ Ն Ե Ր Ի Ց



Ս. Փրկիչ եկեղեցին։



Յաղթական կամար։



Գրիգոր Աբուղամրենց եկեղեցին։

«Ալպեան հեքիաթ»—Նկար Գ. Դիեկլիցի



«Հանգստութիւն»—Նկար Նօնէնբրուխի։

«Ալմէ»—Նկար Ն. Զիխելի։

«Հիացմունք»—Նկար Բուգուէրօի

թեան տակ: Հիացմունք է արտայայտում նրանց բոլորի դէմքերը: Միրոյ առաջին զգացմունքից առաջացած հիացմունք:

,,Ալմէ‘‘—նկար Ն. Զիխելի: Վաղուց անցել գնացել են հին Եգիպտոսի մեծ-մեծ փառքերը. այժմ մնացել են միայն բեկորներ, քարեր ու արձաններ, որոնք իրանց հոյակապ տեսքով ներկայ սերնդին լռելեայն պատմում են այդ անցեալը: Այդ տեսակէտից շատ նշանաւոր են փարաւոնների դամբարանները, որոնց պատերի վրա դեռ մինչև օրս էլ նշմարւում են պէս-պէս արձանագրութիւններ ու քանդակած պատկերներ: Դրանց մէջ հայելու նման անդրադարձել են եգիպտացիների կենցաղն ու սովորութիւնները, փարաւոնների կատարած նշանաւոր գործերն ու ձեռնարկութիւնները:

Այդպիսի պատկերների շարքին է պատկանում և ,,Ալմէն‘‘—մէկը այն երաժշտուհիներից, որոնք իրանց նուագածութեամբ հաճոյք էին պատճառում փարաւոններին:

Հռչակաւոր նկարչի—Զիխելի վրձինը մի այնպիսի շնորհալիութեամբ է վերարտադրել այդ պատկերը, մի այնպիսի հմտութեամբ է ընդգծել նրա ամենադեղեցիկ կողմերը, որ դիտողի առաջ բոլորովին պատկերանում է մարդկային անցեալ պատմութեան մի ամբողջ էջը:

Նայեցէք երաժշտուհու սև ու մելամաղձոտ աչքերին, նրա գործիքի սֆինքս պատուանդանին, նրա մօտ ծխացող քուրային—և այն ժամանակ դուք կյիշէք մի գլուխ փարաւոնների անցած ու գնացած կեանքից:

Զիխելը համաշխարհային հռչակ է վայելում իբրև արևելեան տիպերի (եգիպտ., յոյն, թիւրք, գնչուհիներ և այլն) շնորհալի նկարիչ և ներկայ պատկերը պերճախօս վկայ է այդ շնորհքին:

,,Համեստութիւն,, նկար Մ. Նոննէնբրուխի: Ամառ է. արևն այրում է իր ճառագայթներով և ամեն մի կենդանի արարած մի տեսակ ծանրութիւն ու յոգնածութիւն է զգում շոգ եղանակի ազդեցութեան տակ: Ահա մի այդպիսի յոգնածութիւնից է հանգստանում շնորհալի վրձինով պատկերացած գեղեցկուհին: Սակայն դրա հետ միացած է և մի տեսակ ինքնաբաւականութեան զգացմունք, որ այնպէս ակներև արտայայտւում է ամբողջ դէմքի վրա:

## ՆԿԱՏՈՒԱԾ ԳԼԽԱՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

| Տպագրուած է | Պէտք է լինի |
| --- | --- |
| 233-րորդ էջի վերջին երեք տողից տպագրութեան միջոցին տառեր են թափուել, ուստի և մի քանի սխալներ են առաջացել: | Միայն այս վերջինը կարող է խելացի կերպով լուծել երկու սեռերի բարոյականութեան հարցը: |
| 288-րորդ էջի 11-րորդ տողում—ներքևից—16915 տողեր | 146,915 տողեր: |
| 292-րորդ էջի 15-րորդ տողում—վերևից—ասողութիւն | ուսողութիւն: |
| 383-րորդ էջի 9 րորդ տողում—վերևից—Zührung | Führung. |
| 428-րորդ էջի 13-րորդ տողում—վերևից—ինքնաբոյր | ինքնաբոյս: |
| 432-րորդ էջի 7-րորդ տողում—ներքևից—խաղաղութեամբ | կատաղութեամբ: |
| 433-րորդ էջի 13-րորդ տողում—ներքևից—ինչպէ՞ս | ինչպէ՛ս: |

# Բովանդակութիւն


էջ

**Մի քանի խօսք ընթերցողներին** 3
Տախտակ օրացոյց . . . . . . . . . 9
**Օրացոյց** . . . . . . . . . . .11—54
Ձմեռ—յօդ. Պերճ Պռօշեանցի
Գարուն » » » . . . . . . .21
Ամառ » « › . . . . . . .31
Աշուն » » » . . . . . . .39
Մշտական օրացոյց . . . . . . . . .55
Երկու որոշ ամսաթուերի տարբեր. . .59
**Տօմարագիտութիւն**—յօդ. Մ-ի . . .61
**Կրօնագիտութիւն**—Արշ. Ք. Մինասեանցի . . . . . . . . . .67
Կրօնների վիճակագրութիւն . . . . .71
Հայրապետութիւն ամենայն հայոց . .72
**Տեղեկատու**
Խնայողական դանձարան . . . . . .75
Խնայողական մարկաներ . . . . . .76
Չափերի համեմատութիւն . . . . . .79
Ռուսական չափեր . . . . . . . . .78
Ջերմաչափերի համեմատութիւն . . .79
Դրամների համեմատութիւն . . . . .81
Բնակարանների հարկ . . . . . . .85
Իրաւաբանական տեղեկութիւններ . .87
ա) Ռուսաստանի օրէնքները
բ) Բողոք. գ) Երաշխաւորութիւն
դ) Թափումն եյ Հաւատարմատարերի վարձատրութեան չափը
զ) Դատաստանական պրիստաւների և է) Նօտարների վարձատրութեան չափը:
Մուրհակ . . . . . . . . . . . . .94
Տօկոսների հաշուեցոյց . . . . . . .97
Անցագիր . . . . . . . . . . . . .99
Պօստ . . . . . . . . . . . . . .99
Հեռագիր . . . . . . . . . . . . .110
Նաւագնացութիւն . . . . . . . . .117
Պօստային ճանապարհներ Կովկասում 121
Երթեւեկութիւն պօստային կառքերով
ճանապարհների երկարութիւնը ռուսական սահմանից. . . . . . .122
Կովկասի գլխաւոր քաղաքների հեռաւորութիւնը . . . . . . . .123

էջ

Ամենակարճ ճանապարհներ Թիֆլիսից դէպի Ռուսաստանի գլխաւոր քաղաքները . . . . . . . .126
Կանոններ երկաթուղու մասին . . .127
Անդրկովկասեան երկաթուղիներ . .128
**Խորհրդատու**
Հողագործութիւնից — Գար. Մեծատուրեանի . . . . . . . . .132
Կաթնատնտեսութիւնից—Գ. Ղազարեանի . . . . . . . . . . . . .136
Մեղուաբուծութիւնից—Գ. Ղ. . . . . .143
**Վիճակագրութիւն**
Ռուսաց կայսերական տունը . . . .145
Ռուսաստան . . . . . . . . . . .147
Կովկասի նահանգների տարածութիւնը և ազգաբնակութիւնը . . . .151
Վիճակագրութիւն աշխարհիս գլխաւոր պետութիւնների մասին . . .153
Նշանաւոր գետերի, լեռների և շինութիւնների բարձրութիւնը . .157
Աշխարհիս ամենամեծ քաղաքները .158
Մեծ պետութիւնների ազգաբնակութեան աճումը . . . . . . .158
Ազգաբնակութ շարժումը Եւրոպայում Կանանց և տղամարդկանց համեմատական թիւը: Պօստատների գործունէութիւնը Ռուսաստանում և ուրիշ երկրներում: Մահացութիւնը զանազան երկրներում: . . . . . . . .
**Հայերը**
Հայերի թիւը Կովկասում յօդ. Ա—Դօի 161
Պարսկաստանի հայերը—Հ. Առաքելեանի . . . . . . . . . . . .167
Հայերը Ամերիկայում—Z-ի . . . . .179
Հայերը Բուլղարիայում—Վարդօի . .181
Պարսկական Քիւրդիստանի հայերը— Ե. Փրանգեանի . . . . . . .185
**Տնտեսագիտութիւն**
Նաւթային արդիւնաբերութիւնը Կովկասում . . . . . . . . . .195
Հանքային գործը Կովկասում . . . .217

էջ

Գործարան. արդիւնագործութիւնը Կովկասում . . . . . . . . . . . 221
Գինեգործութիւնը, մեղուապահութիւնը և շերամապահութիւնը Կովկասում . . . . . . . . . . . 223
Աշխարհի հարստութիւնը . . . . . . 224

**Առողջապահութիւն եւ բժշկութիւն**

Մի քանի խօսք սիրոյ մասին—բժ. Ա. Բուդուղեանի . . . . . . . 227
Մանուկների կոտորած—բժ. Վ. Արծրունու . . . . . . . . . . . 237
Սիֆիլիսը իբրև անհատական և ընտանեկան չարիք—դոկտ. Կ. Փաշայեանի. . . . . . . . . . 251
Մի քանի խօսք աչքի առողջապահութեան մասին—բժ. Ք Օհանեանի . . . . . . . . . . . 257

**Կանանց հարցի շուրջը**

Կանանց շարժումը զանազան երկրներում—Տիկ. Հրանոյշի . . . . 262
Պատուանշաններ կանանց համար . . 277
Կարծիքներ կանանց մասին . . . . 278

**Դպրոցական**

Կրթական գործը Եւրոպայում, Ռուսաստանում և Կովկասում—յօդ. Ե.-ի . 281
Հայերի կրթական վիճակը Թիւրքիայում . . . . . . . . . . . . 289
Ղրիմի հայոց ուսումնարանները . . 295
Հայոց հոգևոր դպրոցները Ռուսաստանում . . . . . . . . . . . 296

**Վէպ եւ բանաստեղծութիւն**

Վիշապաձորը—աւանդութիւն Ա. Ահարոնեանի . . . . . . . . . . 299
Դու քո ճամբան գնա—բան. Յով. Թումանեանի . . . . . . . . . . 313
Երջանկութիւն—բան. Ա. Չոբանեանի . 315
Արձանը—պատմուածք Վ. Փափազեանի 317
Մուրացկան—բան. Ա. Ծատուրեանի . 331
Պսակ—բան. Ա. Իսահակեանի . . . . 333
Աղքատը և ամենաբարի կինը—բան. Լ. Մանուէլեանի . . . . . . 335

**Օտար գրականութիւնից**

Նոր տարի—Է. դէ Ամիչիսի . . . . 337
Վարդի սէրը—Մ. Սուլխօնինի . . . . 344
Սատանայի մասին—պատմուածք Մաքսիմ Գորկիի . . . . . . . . 347
Սաղեր և աչեր—Կատուլլ Մենդեսի 357
Ծիծաղ—պատմ. Լ. Անդրէևի-թարգ. Զ. Զամբաղեանի . . . . . . . . . 358
Ո՞րն է իսկական սէրը—Լ. Տոլստոյի . 363
Արձակ բանաստեղծութիւններ — Կ. Տետմայերի . . . . . . . . 367
Անհոգութիւն—Հ. Սենկևիչի . . . . 369

**Հանրագիտական**

Ի՞նչ է փիլիսոփայութիւնը—յօդ. Ե. Թոփչեանի . . . . . . . . . 373
Մանկավարժութիւն—Յով. Տէր-Միրաքեանի . . . . . . . . . . 379
Բժշկականութեան անցեալը—բժ. Լ. Քալանթարեանի . . . . . . 385
Նկարչութիւն—Գ. Բաշինջաղեանի . . 389
Վարդավառ, թէ Վարդաւոր—Ղ. Աղայեանի . . . . . . . . . . . 393

**Քաղաքներ**

Թիֆլիս . . . . . . . . . . . . . 397
Բագու . . . . . . . . . . . . . 403
Կարս . . . . . . . . . . . . . 409

**Նշանաւոր դէպքեր ու դէմքեր**

Հայոց գրերի գիւտի դարադարձը—յօդ. Ստ. Մալխասեանցի . . . . . 415
Րաֆֆի—յօդ. Լէօի . . . . . . . . 421
Տիկին Սիրանոյշ—յօդ. Յ. Գինջեանի . 441
Մաքսիմ Գորկին—յօդ. Ե.-ի . . . . . 449

**Պատմագրութիւն**

Նշանաւոր դէպքեր ընդհանուր պատմութիւնից . . . . . . . . 457
Նշանաւոր դէպքեր հայկական անցեալից . . . . . . . . . . . . 463
Ամենայն հայոց Կաթուղիկոսները . . 471
Կ. Պօլսի հայոց պատրիարքները . . 475

**Ժողովրդական երգեր**

«Սարէն կուգայ ձիաւոր»—Գ. Միրզայեան . . . . . . . . . . . 477
Հօյ, Նազանըմ...—Ք. Կարա-Մուրզա . 479

**Այլ եւ այլք** . . . . . . . . . . 481

**Մեր պատկերները** (բացի բնագրում զետեղածից)։

1. Անիի աւերակներից . . . . . . 493
   Ս. Փրկիչ եկեղեցին . . . . . . . .
   Յաղթական կամարը . . . . . . .
   Գրիգոր Աբուղամրենց եկեղեցին . .
2. Ալպեան հեքիաթ . . . . . . . . 494
3. Այժմ — . . . . . . . . . . 495
   Հանգստութիւն . . . . . . . . .
4. Հիացմունք . . . . . . . . . . 496

# Յայտարարութիւններ

## „ԼՈՅՍ“

Օրացոյց հանդիսում յայտարարութիւններ տպագրւում են հետեւեալ պայմաններով. 1 երեսը 25 րուբլի, 1/2 եր. 15 ր., 1/4 եր.—8 ր. և 1/8 եր.—5 ր.։

Մէկից աւելի երեսների համար առանձին զիջում։

## Վաճառւում են

# „ԼՈՅՍ“

1904 Թ, Օրացոյցները

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑ

Գինը 20 կոպ.։

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ ի ւ ն ը։

1. Տախտակ օրացոյց։ 2. Տօներ եկեղեցական և կայսերական։ 3. Օրացոյց հին և նոր տոմարով. կազմեց Ն. քահանայ Նիկողոսեան։

4. Հայրապետութիւն Ամենայն Հայոց։ Հայ կաթոլիկ և բողոքական համայնքներ 5. Տօնական անուններ։ Հայկական անուններ։ 6. Ժամանակը և նրա չափերը։ 7. Ժամերի համեմատական աղիւսակ։ 8. Չափեր՝ երկարութ., ծանրութեան և այլն։ 9. Կովկաս. քաղաքների ազգաբնակութիւնը։ 10. Աստղագիտութիւն։ 11. Նամակագրութիւն։ 12. Պօստ։ 13. Հեռագիր։ 14. Խնայողական գանձարաններ։ 15. Մարկաներ։ 16. Կանոններ երկաթուղու. ճանապարհորդների համար։ 17. Անդրկովկասեան երկաթուղիների մանրամասն ցուցակը։ 18. Պօստային ճանապարհներ Կովկասում։ 19. Նաւագնացութիւն։ 20. Բնակարանների հարկ։ 21. Անցագիր։ 22. Իրաւաբանական տեղեկութիւններ-կազմեց երդուեալ հաւատարմատար։ 23. Մարհակ։ 24. Տօկոս հաշուելու աղիւսակներ։ 25. Օգտակար ընկերութիւններ—Ե.

Թոփչեանի 26. Ի՞նչ է երազը—բժ. Ա. Բուդուղեանի: 27. Բժշկարան—բժ. Լ. Քալանթարեանի: 28. Ատամնաբոյժի խրատները-Ն. Կաճկաճեանի: 29. Ս. Էջմիածին—գունաւոր պատկերով: 30—33. Կենսագրութիւններ՝ ս. Սահակ ս. Մեսրոպ. Խ. Աբովեան և Ա. Ահարոնեան—գունատիպ պատկերներով—Ե. Թոփչեանի 34—36. Երկրագործակ., կաթնատնտեսակ. և Այգեգործական խորհուրդներ—Գ. Ղազարեանի: 37. Հետաքրքրական: 38. Օգտակար գիտելիքներ: 39. Զուարճալիք: 40. Տնային խորհուրդներ: 41. Յիշատակարան:

## ՊԱՏԻ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ

Գինը 50 կոպ.

Պօստային ճանապարհածախս 10 կոպ,

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ ի ւ ն:

Տախտակը յատկապէս մեր հրատարակութեան համար պատրաստել տուած մի շքեղ պատկեր է, որը ներկայացնում է՝ ներքևում—Ս. Էջմիածինը և Անիի աւերակները, իսկ վերևում և կէնտրում՝ 12 հայ վիպասաններ՝ Աբովեան, Րաֆֆի, Պռօշեան, Աղայեան, Ծերենց, Մուրացան, Շիրվանզադէ, Ահարոնեան, Ճանթ և Նար-Դոս: Ա ռ ա ջ ի ն ե ր ե ս՝ 1. Հայոց եկեղեցական լիակատար օրացոյց: Հին և Նոր տոմար. լուսնի հաշիւ, արևի ծագելու, մայր մտնելու և ցերեկուայ տևողութեան հաշիւ—Կովկասի համար: Ռուսաց եկեղեցական և Կայսերական տօներ: Հայկական առածներ և հանելուկներ: 3 Ժամանակագրութիւն՝ նշանաւոր դէպքեր հայկական կեանքից: 4. Ընտիր մտքեր հայ և օտարազգի նշանաւոր հեղինակներից. 5. Յիշատակարան: Ե ր կ ր ո ր դ ե ր ե ս՝ 1. 12 պատկերներ և ամիսների բացատրութիւնը: 2. Մեր եկեղեցական և ազգային տօները—Արշակ քահ. Մինասեան: 3. «Բժշկի փոքրիկ խրատները».—իւրաքանչիւր շաբաթ մի առանձին խրատ—բժ. Ա. Բուդուղեան: 4. «Խոհարարական խրատներ»՝ մօտ 100 տեսակ կերակուրներ և քաղցրաւենիք պատրաստելու համար—Յ. Ս.-Բախտամեան: 5. «Զուարճալի հատուածներ»—Յ. Պարոնեան: 6. «Ժամանակակից բարքերից» — Շիրվանզադէ: 7. «Ինչից են թափւում տերևները»—Լէօ: 8. «Ասպետ»—Վ. Փափազեան: 9. «Օտարականի երգը»—Ա. Ահարոնեան: «Նսօի դարդը» Ա. Ահարոնեան: «Գաղթակ. պատմուածքից» Ա. Ահարոնեան: «Բանտարկուածի երազը» Ա. Ահարոնեան: 10. «Բանաստեղծական փնջիկ».—(Ա. Ծատուրեանի, Յով. Թումանեանի, Իսահակեանի, Դեմիրճեանի, Չարենցի բանաստեղծութիւններից):11.«Քաղուածական հատուածներ»—Ստ. Նազարեանից, Միք. Նալբանդեանից. Գր. Արծրունուց, Ղ. Աղայեանից և այլն. 12. Ժողովրդական երգեր: 13. Թարգմանական հատընտիր հատուածներ՝ Գորկիից, Տոլստոյից Տուրգենեւից, Պուշկինից, Լերմոնտովից, Կորօլենկօյից, Զուդերմանից, Հաուպտմանից, Հայնէից, Տեամայերից, Շօպէնհաուէրից և այլն: 14. Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ: 15. «Հետաքրքիր թուեր և տեղեկութիւններ»: 16. Արձակ բանաստեղծութիւններ՝ ինքնուրոյն և թարգմանական: 17. Այլ և այլք:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՄՇԱԿ“

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(32-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ **1904** ԹՈՒԱԿԱՆԻՆ

*«Մշակը հրատարակուելու է նոյն պրօգրամով եւ նոյն ուղղութեամբ*

*Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից·*

*Բաժանորդագինը.* «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնմէկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ., և մի ամսուանը՝ 1 ռուբլի։

*Արտասահմանեան բաժանորդագրութիւն.* Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

*«Մշակին»* գրուել կարելի է *Խմբագրատանը* (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս պէտք է գիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ. Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունւում են բոլոր լեզուներով։

*Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։*

Բ Ա Ց Ո Ւ Ա Ծ Է

**1904**

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

# „ՄՈՒՐՃ“

*գրական, հասարակական եւ քաղաքական ամսագիր։*

*(Նոր շրջան, IV-րդ տարի)*

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով.

*Բ ա ժ ա ն ո ր դ ա գ ի ն ը՝*

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Ռուսաստանում* | *տարեկան* | 10 ր. | *Արտասահմանում՝* | 12 ր. |
| „ | *կէս տարին* | 6 „ | „ | 7 „ |
| „ | 1 *ամսուան* | 1 „ | „ | 1 „ 20կ. |

*«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ գրուել.*

*Թիֆլիսում*—*խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ.* №16 *„Գուտտենբերգ և Կենդրոնական“ գրավաճառանոցներում։*

*Բագու*—*«Պրոմէթէոս» գրավաճառանոցում և «Արօր» տպարանում։*

*Կայսրութեան այլ տեղերից պէտք է գրել՝* Тифлисъ, въ редакцію «Мурчъ».

*Արտասահմանից՝* Tiflis rédaction de la revue «Mourtch».

*Ծանօթ. տարեկան բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս*—*մաս։*

*Հեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրութեան, Լեւոն Սարգսեանի անունով։*

## «ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ»

### 1903—1904

Կսիամսեայ նկարազարդ հանդէս
4—6 ՆԿԱՐԱԶԱՐԴ ԳՐՔՈՅԿՆԵՐՈՎ

Տարեկան (այսինքն 2 ռ. 50 կ. միանուագ վճարող) բաժանորդները կստանան նոյնպէս Թիֆլիզի Բժշկական Ընկերութեան հրատարակելիք բրօշիւներն ու թերթիկները, եթէ բաժանորդագրութիւնը յաջող լինի:

Բաժանորդագինն է Ռուսաստանի համար 2 ռ. 50 կ.
Արտասահմանի » 10 ֆր. (3½ ռ.)

Նոր բաժանորդները կստանան բոլոր առաջուայ համարները իրանց յաւելուածներով:

«Առողջապահիկի» գործակալները.

Բագու ու Բալախանի—Գրավաճառանոց ,,Прометеусъ,,
Բաթում—Գ. Մամաջանեան;
Երեւան—Համազասպ Խուդաբաշեան:
Պարսկաստանում դիմել. Թաւրիզ, Մկրտիչ Սահակեանին;
Տրիպօլիսի և շրջակայ քաղաքներում (Ասիական Թիւրքիա) պ. Արտին Ն. Կիլիջեանին այս հասցէով.
Kerassunde (Mere-Noire) Mr. Artin Evrénian pour S. Kilidjian

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція «Арогджапаикъ тертъ»

Արտասահմանից. Tiflis Rédaction de la revue «Arogdjapahik Tert».

### ԴՐ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) . . . . . . . . . 20 կ.,
2) Խօլերայի մասին (սպառուած),
3) Խօլերա . . . . . . . . 5 կ.,
4) Հիպնոտիզմ, հատ. I (սպառուած) . . . . . . . . . . . 25 կ.,
5) Հիպնոտիզմ, հատ. II. . . 15 կ.,
6) Դպրոցական առողջապահութիւն (պատկերազարդ) . . . . . 50 կ.,
7) Առողջ երեխաների խնամատարութիւն . . . . . . . . 25 կ.
8) Սիֆիլիս, Կակուղ շանկր, Սուսունակ . . . . , . . . . . 25 կ.
10) Ամուսնութիւն . . . . . 75 կ.
11) Աղջիկ (առողջապ. և բարոյագիտակ. էտիւդ) . . . . . . 60 կ.

### ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ

№ 1. Մի՛ խմիր, երկ. տ. (նկարներով). . . . . . . . . . . . . 5 կ.
№ 2. Վատ ցաւ (նկ.) . . . . 6 կ.
№ 3. Վարակիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը 23 նկ. . . 15 կ.
№ 4. Թոքախտ կամ բարակցաւ (նկ.) . . . : . . . . . . . . . 10 կ.
№ 5. Դողէրոցք կամ մալարիա (նկ.) . . . . . . . . . . . . 5 կ.
№ 6. Ինֆուլէնցա կամ նոր ցաւ (նկ.) . . . . . . . . . . . . 3 կ.
№ 7. Մի՛ ծխիր . . . . . . . 5 կ.
№ 8. Նորածին մանուկների հիւանդութիւնները (նկ.) . . . . . . 5 կ.
№ 9. Վատ ցաւ կամ սիֆիլիս, երկրորդ հրատարակութիւն Ա. մասն (19 նկ.) . . . . . . . . . . 30 կ.

Հեղինակի հասցէն. Тифлисъ. Д-ру В. М. АРЦРУНИ.

# ԱՂԲԻՒՐ

ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը 1904 թ. հրատարակուելու է նոյն ուղղութեամբ, ծրագրով և աշխատակիցների մասնակցութեամբ, ինչպէս անցած քանի մէկ տարիները: ԱՂԲԻՒՐԸ միակ պարբերական հրատարակութիւնն է ամբողջ ազգի մէջ, որ անընդհատ XXI տարի հրատարակուել է և թևակոխում է XXII-րդ տարեշրջանը, չըփոխելով ոչ իր ներքին և ոչ արտաքին կազմն բովանդակութիւնը և մի վայրկեան անգամ չըդադարեցնելով իր կարկաչը: ԻՒՐԻ նպատակն է հայ մատաղ սերունդը դաստիարակել, ճըշ-իտ լուսաւորութեան շաւիղը նրան ցոյց տալ: Սէր դէպի բը-ութիւնը, գիտութիւնը եւ մերձաւորը—ահա թէ ինչ է ուսուցանում ԲԻՒՐԸ: Բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը եւ ատելութիւն դէպի չարն ու վնասակարը—ահա ԱՂԲԻՒՐԻ ուղղութիւնը: ԱՂԲԻՒՐԻ նոր ծրագիրը հնարաւորութիւն է տալիս մեզ ընդարձակ ծաւալով և բազմազան նոր բովանդակութեամբ լոյս ընծայել մեր հանդէսը և օգտակար ու հետաքրքրական դարձնել այն, եթէ հայերը սոսկ տարեկան 3 ր. իրանց աժանորդագրութեամբ պահպանեն ԱՂԲԻՒՐԸ: 1904 թ պրէմիաները լինելու են՝ 1) Ս. Սահակ, 2) Ս. Մեսրոպ, 3) Վեհափառ Հայրիկը Օշականում—փառաւոր ֆոտո-գրաւիւրներ, 4) Դիցուհին էլեքտրօնկար՝ բոլորովին նորութիւն գեղարուեստական աշխարհում:

Պրէմիան ստանում են Աղբիւր-Տարազ միենոյն հասցէով ստացող բաժանորդները, վճարելով 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.) Միայն ԱՂԲԻՒՐ 3 ր., արտ. 5 ր.: Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում: ԱՂԲԻՒՐԻՆ և ՏԱՐԱԶԻՆ կարելի է բաժանորդ գրուել Թիֆլիսում բացի խմբագրութեան մէջ (Օլգինսկայա, 33) և Բունիաթ-Օղլու ծխախոտի վաճառանոցում՝ Արտիստիկական ընկերութեան թատրոնի տակ:

# ՏԱՐԱԶ

ՏԱՐԱԶ Գեղարուեստական, գրական գիտական քննադատական պատկերազարդ շաբաթաթերթը 1904 թ. հրատարակուելու է նոր և ընդարձակ ծրագրով: Տարազի նպատակը, ուղղութիւնն ու ձգտումը՝ հայերի մէջ տարածել ուղիղ հայեացք դէպի գեղեցիկը, բարին և օգտակարը: Գեղարուեստը, գրականութիւնը, գիտութիւնը, դաստիարակութիւնն ու քննադատութիւնը կազմում են ՏԱՐԱԶԻ հիմքը: Երկրորդական—լրագրական բաժանմունքները՝ յօդուածներ. թղթակցութիւն, հետաքրքիր տեղեկութիւններ, կենսագրական, ճանապարհորդական նորութիւններ, ծրագրներ, ժամանակագրութիւն, խորհրդակցութիւն, այլ և այլք և այլն՝ ՏԱՐԱԶԸ դարձնում են անհրաժեշտ թերթ ժողովրդի բոլոր խաւերի համար: Իսկ գեղարուեստ, զուարճալիք, տընային տնտեսութիւն, կար, ձև, ձեռագործ, երաժշտութիւն, թատրոն և այլն աւելի են մատչելի անում ՏԱՐԱԶԸ ամեն ընտանիքի համար: ՏԱՐԱԶ-ի տարեկան գինը 6 ր. արտասահման 10 ր. ՊՐԷՄԻԱՆԵՐՆ են՝ 1) Սահակ 2) Մեսրոպ, 3) Վեհափառ Հայրիկը Օշականում փառահեղ ֆոտո-գրաւիւրներ՝ պատրաստուած Եւրոպայի ամենանշանաւոր գործարաններում: 4) Դիցուհին, էլեքտրօ չքնաղ նկար պատրաստուած Ամերիկայում, նորութիւն նոյն իսկ Եւրոպայի համար: Բաժանորդներին այս պրէմիաները տրւում են ՏԱՐԱԶԻ №1 ի հետ: Ստանում են միմիայն նրանք, որոնք բաժանորդ են Աղբիւր-Տարազին և վճարել են 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.): Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

Տարազին և Աղբիւրին կարելի է բաժանորդ գրուել Թիֆլիսում բացի խմբագրութեան մէջ (Օլգինսկայա, 33) և Բունիաթ-Օղլու ծխախոտի վաճառանոցում Արտիստիկական ընկերութեան թատրոնի տակ:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала АГБЮРЪ-ТАРАЗЪ, կամ (Tiflis—Caucase) Rédaction de la Revue AGBUR-TARAZ.).

Խմբագիր-հրատարակիչ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

# ԱՆԱՀԻՏ

*Ազգային, Գրական, Գեղարուեստական ամսաթերթ.*

«Անահիտ»-ը հրատարակած է մինչև ցարդ և պիտի շարունակէ հրատարակել. 1-ին. Ուսումնասիրութիւն Հայոց հին և նոր կեանքին վերաբերեալ ամեն տեսակ հարցերու մասին. 2-րդ՝ Յօդուածներ ընկերական իմաստասիրական և բանասիրական խնդիրներու վրայ. 3-րդ. „Արուեստի էջեր" համատիտղոսին տակ գեղարուեստական յօդուածներ, պատկերներով ընկերացած. 4-րդ. Մեր դրացիները վերնագրին տակ՝ ուսումնասիրութիւն Տաճկաստանի մէջ Հայոց հետ քով քովի ապրող օտար ցեղերու մասին. 5-րդ. Թարգմանութիւններ եւրոպական գրականութեան հատընտիր էջերու. 6-րդ. Քննադատականներ հայ նշանակալից դէմքերու, ինչպէս և նոր հրատարակութեանց և հայ բարքերու մասին 7-րդ. „Հայ էջեր" ընդհանուր տիտղոսին՝ հին ձեռագիրնու մէջ անտիպ մնացած զանազան գրուածքներ, ինչպէս և հայ վարպետներու մոռցուած էջեր. 8-րդ Բանաստեղծութիւններ, վիպակներ, ազգային և քաղաքական կեանքի մասին քրոնիկներ ևայլն:

Տարեկան բաժանորդագինն է 10 ֆրանկ Ֆրանսիայի և 12 ֆրանկ օտար երկիրներու համար. 5 րուբլի Ռուսաստանի և 2 տօլլար Ամերիկայի համար: Բաժանորդագինը պէտք է կանխիկ վճարել:

Հասցէ: A. Tchoвanian 17 Rue La Bruyère Paris. Թիֆլիսի գործակալն է՝ Պ. Գ. Գալստեան (Գուտտենբերգ գրավաճառանոց): Բագուի գործակալն է Պ. Ս. Ծոցիկեան:

—

Բացուած է բաժանորդագրութիւն վեցերորդ (1904 թ.) տարեշրջանին համար:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի

## 1904 *տարւոյ*

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—,,Բազմավէպ‘‘-ը օրէ օր կը ձգտի ըլլալ զուտ *ժողովրդական գրական* Թերթ մը. իր նպատակն է ազգային գրականութիւնը ժողովրդականացընել։

Միևնոյն խմբագրութիւնը յառաջ կը վարէ Թերթը և հին ուժերուն հետ կը միանան ուրիշ նորեր ալ, որոնք Թերթին մէջ պիտի ունենան առանձին հետաքրքրական բաժիններ։

,,Բազմավէպ‘‘ կը հրատարակէ. Առաջնորդող, Բանասիրական, Բանաստեղծական, Գրական, Պատմական, Կենսագրական, Թատերական, Գրախօսական, Քննադատական յօդուածներ։ Կը հրատարակէ Ազգային վէպեր, Պարբերական լրագրութեան վրա չահեկան տեղեկութիւններ. Ժամանակակից լուրեր։ Կը շարունակէ եւրոպական դասական տիեզերահռչակ հին և նոր քերթողներու հրաշակերտ բանաստեղծական գրուածներու Թարգմանութիւնը, կողքին Ժամանակագրութիւնը, Մատենագրութիւնն և Ազգային Թերթերու կարևոր յօդուածներու ցանկը։

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | *Բազմավէպ* (առանձին) | *Գեղունի* (առանձին) |
|---|---|---|
| Ոչ ապահովագրեալ | 10 ֆր. | 10 ֆր. |
| Ապահովագրեալ | 13 » | |

*Բազմավէպ Գեղունի միասին*

| | |
|---|---|
| Ոչ ապահովագրեալ | 15 ֆր. |
| Ապահովագրեալ | 18 ֆր.։ |

Հասցէն. Rèdaction de la revue «Basmaveb» T.t Lazare Venise Italie.

# 1904

# „ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

Ուսումնաթերթը իւր տասնութերորդ տարին մտնելով՝ խմբագրութիւնը հայ գիտնական աշխարհին կը ծանուցանէ նոյնին անփոփոխ ուղղութիւնը։ „Հանդէս Ամսօրեայ„ է՛ եւ պիտի մնայ լուրջ ուսումնական եւ բանասիրական թերթ։ Արդէն քաղաքական տնտեսութեան, օգտակար գիտելեաց եւ ուրիշ մէկ երկու նման ոչ-ազգային նիւթերը դադարեցնելով՝ յայտնի ըրաւ „Հանդէսը„ թէ ինքը կը յառաջադիմէ եւ „ժողովրդականութեան„ դիմակին ներքեւ պատսպարուելու պէտքը չի զգար։ Ուրեմն Ուսումնաթերթիս բովանդակութիւնը դարձեալ պիտի մնայ հայութեան կամ հայ-ազգին վերաբերեալ նիւթեր,—ուսումնասիրութիւններ։ Պիտի ծանօթացընէ այն ամէն ազգային եւ օտարազգի (ի մասնաւորի գերմ.) գիտնական բանասէրներուն հմտալից ու հետաքրքրական գրքերն ու գրութիւնները, որ կը հային հայ-ուսման, հայկական բանասիրութեան, գրականութեան, լեզուին, հայագիտութեան,——հայ-ազգին։ Անաչառ քննադատութեան պիտի ենթարկէ հայ-ազգին անցեալն ու ներկան—հայկական պատմութիւնը։ Պեղումներէ, ձեռնագիրներէ եւ արձանագրութիւններէ հանուած հայ-հնագրութիւնն եւ հնախօսութիւնը մեծ տեղ պիտի գրաւեն։ Նոյն չափով պիտի մշակուին հայ-մատենագրական ու մատենախօսական եւ աշխարհագրական ճիւղերը։ Պիտի հրատարակէ հայ-ականաւոր եւ գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւնները—կենդանագիրներով։ Պիտի ջանայ գրքերու կամ կարեւոր նոր հրատարակութեանց վրայ՝ (նոյն իսկ թարգմանածոյ), որ թերթիս իբր նուէր կ'առաքուին, քննադատական համառօտ կամ ընդարձակ տեղեկութիւն տալ եւն, եւն։ Կողքն ալ ազգային գրական նիւթոց եւ ծանուցմանց պիտի յատկացուի։

Այն գրութիւնները կամ թարգմանութիւնները, որ ո՛եւէ կերպով առնչութիւն չունին հայ-ազգին, հայ-աշխարհին եւ հայ-գրականութեան հետ՝ չեն հրատարակուիր։

Տարեկան գինն է 10 ֆր.=4 ռբլ. կանխիկ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ.

A la Rèdaction de la Revue „Handesse“, Vienne (Autriche) VII 2 Mechitharistengasse 4.

# ԲԱՆԲԵՐ

*Գրականութեան եւ արուեստի հանդէս վեցամսեայ*

Հրատարակւում է Պետերբուրգում Ն. Ադոնցի խմբագրութեամբ։

Բաժանորդագինն երկու գրքին 4 ր. Արտասահման 12 ֆրանկ։

Դիմել՝ հրատարակչին՝ Ա. Մելիքեանին.

С. Петербургъ Невскій пр. 55
St. Pétersboupg. Nevsky 55.

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“

*Շաբաթաթերթ Ազգային, Գրական եւ Քաղաքական։*

*ԼԴ. ՏԱՐԻ, 1904։*

Բաժանորդագինն է՝ 12 ֆր.—5 ր.։

Հասցէն՝ M. Mamourian Fils, Smyrne (Turquie d'Asie).

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

*Օրաթերթ։*

Պոլսոյ համար տարեկան բաժնեգինն է 75 ղրշ. վեցամսեայ 40·—Գաւառներու համար 100, վեցամսեայ 50։—Արտասահմանի համար 22 ֆր կիսամեայ 12 ֆր.։ Ձեռքէ կը ծախուի հատը 10 փարայի։

Հասցէն՝ Direction du journ. „SOURHANTAG“ CONSTANTINOPLE, Avenue de la S. Port.

ԱՐՏԵՄԻՍ

*Ընտանեկան եւ գրական ամսահանդէս*

Օրգան XX-րդ դարու հայ կանանց։

Տէր և տնօրէն-խմբագիր՝ Օր. Մառի Պէյլէրեան։

Եգիպտոսի համար

Տարեկան բաժանորդագինն է ղրշ. ողջ. . . . . . . . . . . 40
Վեցամսեայ . . . . . . . . . 25

Արտասահմանի համար
Տարեկան . . . . . . ֆրանկ 12

Հասցէն՝ Rédaction de la Revue des Femmes Arméniennes „Artemis“, le Caire, Egypte.

„ԲԻՒԶԱՆԴԻՈՆ“

*Հայաթերթ ամէնօրեայ։*

Բաժանորդագինն է՝ 7 մէճիտ. Օտար երկիր՝ ֆր. 36։

Հասցէն՝ Direction du Journal „Puzantion“. Bab Ali Djaddéssi, Nr, 23—25. Constantinople.

„ՄԱՍԻՍ“

*Շաբաթաթերթ Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական։*

Բաժանորդագինն է՝ 44 ղր. արծ. Օտար երկիր՝ ֆր. 12։

Հասցէն՝ Redaction de la „MASSIS:“ Galata, Constantinople.

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

IX և X գրքերի բաժանորդագինն է 3 ր.

Դիմել՝ Ервасду Лалаянцъ. Тифлисъ, Саперная, կամ Семинарія Нерсисянъ.

## Վաճառւում են

### Դ. ԱՂԱՅԵԱՆԻ

Հետեւեալ աշխատութիւնները.

1) Ուսումն Մայրենի լեզուի Ա. . . . . . . . . . . տարի 25 կ.
2) Ուսումն Մայրենի լեզուի Բ. . . . . . . . . . . տարի 30 կ.
3) Ուսումն Մայրենի լեզուի Գ. և յաջորդ տարիների համար 65 կ.

Այդ երեք դասագրքերն էլ պատշաճաւոր իշխանութիւնից թոյլատրըւած են դպրոցներում գործածելու համար։

4) «Պատկերաւոր այբբենարան» մեծերի և փոքրերի համար 13 կ.

—

Պահեստը Թիֆլիսի Կենդրօնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ—(Թիֆլիս Սուրբ Նշանի փողոց, № 2)։

## ԼՈՅՍ ԵՒ ՏԵՍԻԼ

### Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆՑԻ

Հետեւեալ աշխատութիւնները

1. Հաօ Կինը . . . . . 40 կոպ.
2. Բաչօն (պատմուած) գինը 5 կ.
3. Պատկերներ (պատմ.) » 1 ր.
4. Մխիթարեան Միաբանութիւն . . . . » 5 կ.
5. Խեղճերը . . . . . » 1 ր.
6. Մայրերը . . . . . » 20 կ.
7. Մրրկի սուրբը : . . » 1 ր.

Հեղինակի հասցէն Тифлисъ. Редакція „Мурчъ"

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ

*Ժողովածու*

Գինը 3 րուբլի։

Հեղինակի հասցէն. Тифлисъ. Бебутовская Ул. № 50.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

Հրատարակութիւնները.

1. Բեօրնսօն—կազմեց Ե. Թօփչեան. գինն է 10 կոպ.
2. Մահմեդ—կազմեց Ե. Թօփչեան գինն է 7 կոպ.
3. Մեսրոպ Մաշտոց—կազմեց Ե. Թ. գինն է 5 կոպ.
4. Սահակ Պարթև—կազմեց Ե. Թ. գինն է 5 կոպ.
5. Հաուպտման—կազմեց Ե. Թ. գինն է 15 կոպ.
6. Մեծն Ներսէս—կազմեց Ե. Թ. գինն է 15 կոպ.
7. Զրադաշտ. կազմ. Մ. Թամամշեան—գինն է 7 կոպ.

Շուտով լոյս են տեսնելու նոր կենսագրութիւններ։

Հրատարակչի հասցէն՝ С.-Петербургъ: Ивану Арамянцъ, Ямская 38.

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

## *Աշխատութիւնները*

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.) . . . 5 կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ . . . . . . . . . . 5 »
3. Ի՞նչ է սիֆիլիսը . . . . . . . . . . . . . . 5 »
4. Առողջապահական զրոյցներ . . . . . . . . . . 5 »
5. Ի՞նչ է ժուժկալութիւնը . . . . . . . . . . . 5 »
6. Ի՞նչ է անառակութիւնը . . . . . . . . . . . 5 »
7. Վեներական ախտեր . . . . . . . . . . . . . 5 »
8. Աշակերտի առողջապահութիւն (թարգմ.) . . . . . 2 »
9. Մեր նեարդերը . . . . . . . . . . . . . . . 10 »
10. Սիֆիլիս (բարեփոխուած) . . . . . . . . . . 10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ . . . . . . . 10 »
12. Գեղձախտ (զօլոտուխա) . . . . . . . . . . . 10 »
13. Ո՞վ է յանցաւորը . . . . . . . . . . . . . 15 »
14. Կարիք և բարեգործութիւն . . . . . . . . . 15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն . . 15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ . . . . 15 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով) . . . . . 20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց . . . 20 »
19 Կինը և տղամարդը . . . . . . . . . . . . . 15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա . . 5 »
21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը . . . . . . . . 15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն . . . . . . . 15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին . . . . . . 20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի) . . . . . 20 »
25. Ստամոքսի կատարը . . . . . . . . . . . . . 20 »
26. Քուն և երազ . . . . . . . . . . . . . . . 25 »

—

*Պատրաստ են տպագրութեան համար*

1. Իրաւունք և կռիւ.
2. Սնապաշտութիւն և կախարդութիւն:
3. Բնութեան ույժը ինչպէս բժիշկ.
4. Նուէր հայ զինւորին.
5. Գործարա՞ն, թէ երկրագործութիւն:

*Դիմել՝* Թիֆլիս „Գուտտենբերգ" և „Կենտրոնական" գրավաճառանոցները:

—

*Հեղինակի* հասցէն. С. Петербургъ Владимірскій пр. № 3 Доктору А, Будугову.

*Առանձին գրքոյկներով լոյս են տեսել*

**Ե. ԹՈՓՉԵԱՆԻ**

Հետևեալ աշխատութիւնները.

1.) *Յունաստանի անցեալից* (յեղափոխ. պատմութ.) — սպառուած . . . . . . . . . . . . 20 կ.
2.) *Զարա*—թարգ. Իւրիյ Կազիբէկից (սպառ.) . . . . . . 5 կ.
3). *Ուլամ...* սպառուած . 30 կ.
4). Սահակ Պարթև . . . . 5 կ.
5) Մեսրոպ Մաշտոց . . . 5 կ.
6). Հաուպտման . . . . 15 կ.
7). Բեօրնսօն . . . . . . 10 կ.
8). Մահմեդ . . . . . . . 7 կ.
9). Մեծն Ներսէս . . . . 10 կ.
10). Dr. W. Totomjanz und E. Toptschian. «Die sozial ökonomische Türkei» . . . . 2 մարկ։

Ստանալու համար դիմել գրավաճառներին։

---

*Տպագրվում է*

**«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ**

Ժողովածուն, որ պարունակելու է բոլոր հին հայ պատմագիրները (յիսունից աւելի), ձեռագիրների բաղդատութեամբ։

Հրատարակութիւնը ձեռնարկուած է ի յիշատակ հայոց գրերի գիւտի 1500-ամեակին։

Մանրամասն յայտարարութիւն և բաժանորդագրութեան պայմանները կըհրատարակուին առանձին։

Տեղեկութիւնների համար դիմել Թիֆլիս, Ստ. Մալխասեանցին։

---

*Վաճառվում են*

# Լեօի

Հետևեալ աշխատութիւնները.

1 Գլադստօն—կենսագրութիւն 80 կ.
2 Հայկական տպագրութիւն. երկրորդ հատոր, I մաս 1 ր. 50 կ.
3 Յովսէփ Կաթողիկոս Արղութեան կենսագրութիւն . . . . . 60 կ.
4 Ստեփաննոս Նազարեան կենսագրութիւն 2 հատոր 1 ր. 50 կ.
5 Գրիգոր Արծրունի—I և II հատոր. բոլոր 3 հատորի բաժանորդագինը . . . . . . . . . 4 ր.

Դիմել՝ Тифлисъ. Редакція «Мшакъ»

---

Թիֆլիսում, «Կենտրոնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներում, իսկ Բաքւում՝ «Պրոմէթէոս» և Ց. Ղազանչեանի գրավաճառանոցում ծախվում են

**Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ**

աշխատութիւնները։

1. *Ուրանիա*, Ֆլամմարիօնի, թարգմ. 1 րուբլի։
2. *Հայրենի հող*, վէպ, թարգ. 50 կ.
3. *Զէյթուն*, գինն է 20 կ.
4. *Գալիլէյ*, » է 30 կ.
5. *Միլտոն* » է 20 կ.

Նոյնտեղ վաճառվում է և *Շանրիար*-ի վէպը «Ջհուդ Թուչան»-գինն է . . . . . . . . 1 ր.

Կարելի է դիմել և հեղինակին՝ «Մշակի» խմբագատուն։

# Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցի

*Պահեստում վաճառւում են հետեւեալ հայերէն գրքերը՝*

Արծրունի Վահ. բժշկ., 1. *Աղջիկ—(առողջապահական և բարոյագիտական. էտիւդ). պատկերներով, Թիֆլ.* 1903 *թ. գ.* 60 *կ.*, 2. *Մի խմիր, երկ տիպ,(նկարներով)*—5 *կ.*, 3. *Վարակիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը* 23 *նկ.*—15 *կ*, 4. *Թոքախտ կամ բարակացաւ (նկ.)*—10 *կ.*, 5 *Դողէրոցք կամ մալարիա (նկ.)*—5 *կ.*, 6. *Ինֆուլէնցիա կամ Նոր ցաւ (նկ.)*—3 *կ.*, 7. *Մի ծխիր*—5 *կ.* և 8. *Նորածին մանուկների հիւանդութիւնները (նկ.)*—5 *կոպ.*

Ախվերդեան Գ., *Սայեաթ—Նովա—ժողովրդական ասելուկների, երգերի, բառբառների հաւաքածու*—50 *կ.*

Աղայեան Ղ., *Յարութիւն և Մանուէլ, վէպ. երեք գիրքը միասին լրիւ հրատարակութիւն*—60 *կ.*, 2. *Բանաստեղծութիւններ*—1 *ռ.* 50 *կ.*, 3., *Իմ կեանքի գլխաւոր դէպքերը*—1 *ռ.* 20 *կ. և Անահիտ, Բ. տիպ*—30 *կ.*

Այվազեան Բ., *Հիւսիսի արծիւը, պատմական վէպ* 1801—1829 *թ.*—1 *ռ.*

Այվազեան Գ. արխեպս. *Թարգ. Կռիլովի առակները—ինն գրքով*—80 *կ.*

Աշըգ Ջիւանի. *Աշըղ—Ղարիբի հէքիաթը հանդերձ երգերով* 6-*րդ տիպ*—40 *կ.*, 2. *Շահ—Իսմայէլի հէքիաթը հանդերձ երգերով, բ. տիպ*—30 *կ.*, 3. *Քերամի և Ասլիի հէքիաթը հանդերձ երգերով, գ. տիպ*—60 *կ.* 4. *Մէլիք - Շահի հէքիաթը հանդերձ երգերով*—25 *կ.* և 6. *Աամանի ու Զէյլջանի հէքիաթը*—25 .:

Ատրպետ, 1. *Խև-Կարապետ*—1 *ռ.* 2. *Քու-Եղիկ*—30 *կ.*, 3. *Ծխնոց*—30 *կ.*, 4. *Ժառանգներ*—30 *կ.*, 5. *Շուշան—ողբերգութիւն*—1 *ռ.*, 6. *Սարրաֆ—ողբերգութիւն*—40 *կ.* 7. *Բէրսայի Առաքելը*—25 *կ.*, և *Թուլումբաջիներ*—10 *կ.*:

Բագրատունի Արս. քահ., 1 *Տասն պատգամք կամ բարոյական պարտացոյց*—25 *կ.*, 2. *Վերջին յուշիկ*—30 *կ.*:

Բալուղեան Ջ., *Բանաստեղծութիւններ*—50 *կ.*,

Բայրըն լորդ., *Դոն—Ժուան, երգ առաջին, հեղինակի պատկերով,*—50 *կ.*:

Բարխուդարեան Մակ. եպիս. *Արցախ—Մեծն Հայաստանի* 15 *նահանգներից մէկը*—1 *ռ.* 50 *կ.*:

Բարխուդարեան Յովհ., *Մանկական խաղեր, նկարներով,*—50 *կ.*:

Բերնես Ֆր., *Փոքրիկ լորդի պատմութիւնը, պատկերազարդ վէպիկ,*—1 *ռ.*:

Բուդուղեան Ա. Բժ., 1. *Քուն և երազ* 1 *պատկերով*—25 *կ.*, 2. *Մեծադիր պատկեր «Քուն և երազ» չքեղ թղթի վրա առանձին*—10 *կ.*, 3. *Ստամոքսի կատարրը*—20 *կ.*, 4. *Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի)*—20 *կ.*. 5. *Առողջ ու հիւանդ երեխայի ոգին*—20 *կ.*, 6. *Երիտասարդութիւն և ծերութիւն*—15 *կ*, 7. *Ի՞նչ է կոչու հիւանդութիւնը*—15 *կ.*, 8. *Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա*—5 *կ.*, 9. *Առողջապահական նուէր նորատի կանանց*—20 *կ.*, 10. *Մարմնամարզութիւն (*—25 *պատկերներով)* —20 *կ.*, 11 *Մանկավարժական համառօտ զրոյցներ*—15 *կ.*, 12. *Ժառանգութիւն և դաստիարակութիւն*—15 *կ.*. 13. *Կարիք և բարեգործութիւն*—15 *կ.*, 14. *Ո՞վ է յանցաւորը*—15 *կ.*, 15. *Ցեղձախտ (զոլոտուխա)*—10 *կ.*, և 16. *Առողջ հոգին առողջ մարմնի մէջ*—10 *կ.*:

Բօգդանով Մ. պրօֆ., *Արծուի մտածմունքը*—5 *կ.*:

**Բիւզանդացի Ն.**, *Կորիւն վարդապետ, Եւթաղ Աղէքսանդրացի, Ագաթանգեղոս և Փաւստոս Բիւզանդ:—*

**Երիցեան Աղէքս.**, 1. *Ամենայն Հայոց կաթուղիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX-րդ դարում, ա. և բ. մասերը*—4 ռ., 2. *Ներսէս Ե-ի կենսագրութիւնը, 3 տետրով*—75 կ., 3. Патріархъ всѣхъ Армянъ Нерсесъ V-й—съ фототипями—3 р. և 4. *Գրիգոր Արծրունի և նրա 25 ամբուայ գրական գործունէութիւնը*—25 կ.:

**Զէյթունցի Ս.**, 1. *Պաւող չորդանիկը 16 նկարով*—5 կ., 2. *Հաւ*—5 կ., 3. *Գետնանուշ, երկ. տիպ*—4 կ., 4. *Ջորի*—5 կ. և *Պառուսառ*—5 կ.:

**Թառայեան Ս.**, *Բանաստեղծ—փղէափիսո Շիլլէր, պատկերազարդ ա. հատ. 1 ռ. 50 կ., կազմով—2 ռ. 50 կ., բ. հատոր—1 ռ. 50 կ. կազմով—2 ռ. 50 կ., երկու հատորը միասին 3 ռ., չքեղ կազմով—4 ռ.:*

**Թոփչեան Եղիշէ**, 1. *Մեծն Ներսէս* 1 *պատկերով*—10 կ., 2. *Միսրոպ Մաշտոց* 1 *պատկերով*—5 կ., 3. *Սահակ Պարթև* 1 *պատ.*—5 կ., *Հաուպտման* 1 *պատ.*—15 կ., 5. *Բիօրնսօն* 1 *պատկ.*—10 կ. և 6. *Մահմեդ* 2 *պատկերով* 7 կ.:

**Լեռենց**, *Բանաստեղծութիւններ*—60 կ.:

**Լըկուվէ.** *Բարոյախօսութիւն գկանանց*—1 ռ. 20 կ.:

**Խաչատուր Աբովեանի** *երկերը, հեղինակի պատկերով (Վէրք Հայաստանի և ուրիշները)*—1 ռ.:

**Խատիսեան Գ.**, *Մանկավարժական խորհրդածութիւններ*—60 կ.

**Խատիսեան Մ.**, 1. *Նոր ճանապարհի վրա, վէպիկ*—1 ռ. և 2. *Փեսայ որսողներ, վէպ*—50 կ.:

**Խրիմեան Հայրիկ**, 1. *Դրախտի ընտանիք 5 տիպ*—60 կ., 2. *Պապիկ և Թոռնիկ*—60 կ., 3. *Յիսուսի վերջին շաբաթը՝ խաչի ճառ*—30 կ., 4. *Մարգարիտ արքայութեան երկնից*—30 կ. և 5. *Վերջալոյսի ձայներ*—1 ռ.:

**Կոմբ.** *Խնամատարութիւն երեխայոց՝ մարմնական և բարոյական*—1 ռ. 20 կ.:

**Կորելլի Մ.**, 1. *Մի մանկան հոգու պատմութիւն, վէպիկ*—1 ռ. և 2. *Բարաբբա, Քրիստոսի ժամանակակից վէպ, երկու մասից*—1 ռ. 50 կ.:

**Հուֆլէյ**, *Տարերք բնական գիտութեանց*—40 կ.:

**Ճանիկեան Յ.**, *Դժողք*—40 կ.:

**Մուրացան**, *Հայ բողոքականի ընտանիքը*—40 կ.:

**Մուրադեան Մելք. եպիս.**, *Հովուական աստուածաբանութիւն*—1 ռ. 20 կ.:

**Մխիթար**, *գեղարուեստական չքեղ հրատարակութիւն, ընտիր թղթի վրա*—2 ռ. 50 կ.:

**Նազարեան Էմ. քահ.**, *Ոտանաւորներ երեխաների համար, պատկերազարդ, 15-ի չափ*—50 կ., *կազմով*—75 կ.:

**Նաւասարդեան Բ. բժ.**, *Բժշկական և առողջապահական ամենակարևոր գիտելիքներ*—40 կ.

**Ճահազիզ**, *Մկրտիչ Յովսէփեան Էմին—կենսագրական—գրական տեսութիւն*—60 կ.

**Շանթ**, *Դերասանուհին*—40 կ., *Երազ օրեր*—40 կ., *Դարձ*—40 կ. և *Վերժին*—60 կ.:

**Շիլլեր**, *Դոն Կարլոս դրամատիկ. բանաստ. 5 գործողութեամբ*—1 ռ.:

**Շիրվանզադէ**, 1. *Նամուս. բ. տիպ*—1 ռ., 2. *Քաօս, վէպ*—1 ռ., 50 կ., 3. *Յաւագարը*—30 կ. և 4. *Ջուր յոյսեր*—1 ռ.:

**Շէրքեր**, *Տնային բժշկական մարմնամարզութիւն 45 պատկերով*—40 կ.:

**Չեխ**, *Գիւղի սուրբը*—10 կ.:

**Պռօշեան Պ.**, 1. *Յունօն—վիպակ*—1 ռ., 2. *Նա*—20 կ., 3. *Միքէլ աղենց Արփիկը*—20 կ., 4. *Աքցիզչի*—25 կ., 5. *Կռուածաղիկ*—1 ռ. 30 կ., 6. *Ցեցեր*—1 ռ., 7. *Բղդէ*—1 ռ. 20 կ. և 8. *Յուշիկներ*—1 ռ.:

**Պարոնեան Յ.**, 1. *Մեծապատիւ մուրացկաններ, հեղինակի պատկերով*—

40 կ., 2. Քաղաքավարութեան վնասները—75 կ., 3. Հոսհոսի ձեռատետրը, հեղինակի պատկերով—1 ռ. և Ազգային ջոջեր, գ. տիպ, հեղինակի պատկերով—1 ռ.:

Ռեօսկին Ջօն, Սեզամ և Շուշան—երեք դասախօսութիւններ—40 կ.:

Սպիրի Ե., Հայրենազուրկ, գերմ. Թարգ. Իս. Յարութիւնեան, գ.—50 կ.:

Սարգսեան Ս., Ագուլեցոց բարբառը (զօկերի լեզուն)—2 ռ.:

Սեդրակեան Ա. եպիս., Քահանայական խնդիր—1 ռ.:

» Յովհաննէս եպիս. Շահխաթունեանցի կենսագրութիւնը—1 ռ.:

Սիւլիւկ, Նոր-Նախիջևանի հիմնարկութեան պատմութիւնը—50 կ.

Սկօտ Վ., Կղզիների լորդը—1 ռ.:

Վարդանեան Փ. թարգ., 1. Բնաւորութիւն—1 ռ. 50 կ., 2. Ինքնօգնութիւն—1 ռ. 50 կ., 3. Սիրտ—1 ռ., 4. Մահմեդի կեանքը—1 ռ. 20 կ., 5. Հոմերի Իլիականը, պատկերներով—1 ռ., 6. Հոմերի Ոդիսականը—1 ռ. 20 կ., 7. Ռէյնիկէ աղուէսը—60 կ., 8. Ալպէններից մինչև Անդերը—20 կ., 9. Ռուստեմ և Զոհրաբ—20 կ., 10. Աւազակներ—ողբերգութիւն—50 կ., 11. Ռօբինզօն—փոքրերի համար—20 կ., 12. Կոլումբ, փոքրերի համար—15 կ., 13. Բէաթրիչէ, վէպիկ—30 կ. և 14. Նօնցայի բերդը, վէպիկ—30 կ.:

Տեվկանց Ա. վրդ., Հայերգ, մեղեդիք, տաղք և երգք—60 կ.:

Տէր-Պետրոսեան Մ. քհ., Արիստակէս Լաստիվերտցի վարդապետի Հայոց պատմութիւնը—60 կ.

» Ղազար Փարպեցու Հայոց պատմութիւնը և Վահան Մամիկոնեանի գրած թուղթը—80 կ.:

Տէր-Աւետիքեան Ն., Վերածնութեան դար—1 ռ.:

» Փայտաշէն խրճթից մինչև սպիտակ տունը—50 կ.:

Տէր-Աւետիքեան Ս., 1. Նահատակը—20 կ., 2. Ղեկավարներ—40 կ. և Սամիտարնի—20 կ.:

Տուրգենև Ի., Յաղթական սիրոյ երգը—30 կ.:

Րաֆֆի, 1. Ոսկի աքաղաղ ա. և բ. մաս, հեղինակի պատկերով, բ. տիպ—1 ռ., 2. Զահրումար—2 ռ., 3. Տաճկահայք—50 կ., 4. Վէպիկներ և պատկերներ—երկ. հատոր—2 ռ. և 5. Կայէնի կտակը—1 ռ. 20 կ.:

Փափազեան Վ., 1. Էմմա, վէպ ժամանակակից բարքերից—1 ռ., 2. Պատմուածքներ—50 կ., 3. Հայ բօշաներ (ազգագրական ուսումնասիրութիւն)—50 կ. և 4. Սանթօ (հայ բօշաների կեանքից)—30 կ.:

Քամալեանց Ս., Երկասիրութիւններ, առաջին պրակ, ժողովածու—50 կ.:

Օդեսայի հայ ուսանող, Ջօրջ Ստեֆէնսօն, երկաթուղի հնարողի կեանքը և արած գործերը—1 ռ.:

Օնէ Ժօրժ, Դօկտոր Ռամօ, գոյութեան կռիւներ—80 կ.:

Տէր-Ասատրեան Ն., Հայ գործիչների ալբոմ, 32 պատկեր—3 ռ.:

Դիմել Тифлисъ, въ Центральную книжную торговлю.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՇԻՐՎԱՆԶԱԴԷ
### ,,ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՐԿԵՐ‘‘

*Արդէն լոյս են տեսել I և II հատորները, որ պարունակում 12 վէպեր և պատմուածքներ և «Եւգինէ» դրաման։*

*Մամուլի տակ է III հատորը, որ կըպարունակէ «Արսէն Դիմաքսեան» վէպը։*

*Բաժանորդագրութիւնը շարունակւում է. չորս հատորների գինը Թիֆլիսում 4 ր. 50 կ.*

*Օտար քաղաքներում 5 ր. 50 կ.*

*Ընտիր թղթի վրայ 8 ր. և 10 ր.*

*Առանձին հատորների գինն է 1 ր- 50 կ. և 2 ր. 50 կոպ. ճանապարհածախսով։*

*Ուսանողներին և աշակերտներին զիջում, եթէ դիմեն ուղղակի հեղինակին։*

*Կարելի է գրուել Կենդրոնական և Գուտտենբերգ գրավաճառանոցներում, նաև հեղինակի մօտ*—Тифлисъ-Ширванзадэ

*Միւս չորս հատոների համար կը բացուի առանձին բաժանորդագրութիւն։*

#### ԵՐԵՒԱՆՈՒՄ

*Նոր բացուած է գրավաճառանոց և թղթախանութ*

*,,ԱՐԱՐԱՏ‘‘*

*Վաճառւում են ամեն տեսակ գըրքեր և ուսումնական պիտոյքներ։ Կոմիսիայով վաճառելու համար ընդունւում են հայերէն գրքեր։*

*Դիմել՝* Эривань, книжный магазинъ ,,Араратъ“.

#### ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ

*Վահրամեանցի գրավաճառանոցում*

*Վաճառւում են հայերէն և ռուսերէն գրքեր, թղթեղէն և զանազան ուսումնական պիտոյքներ։*

*Ընդունւում են գրքեր կոմիսիայով վաճառելու համար։*

*Հասցէ.* Александрополь, книжная торговля Вахрамянца.

Ներկայ տարուանից բացուած

# Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

## լուսատպարանը

Գեղարուեստական գործերի հրատարակիչներին հրաւիրում է ամենաձեռնտու պայմաններով ստանալ՝

1. Նկարչական գործեր և խորհուրդներ
2. Լուսանկարչական ժողովածու ըստ պահանջի
3. Լուսատիպ (*фототипія*) հաւանելի հրատարակութիւններ՝ բաց նամակներ, ալբոմներ և այլն:
4. Ցինկոգրաֆիական կլիշէներ:

Լուսատպարանը արդէն ունի մի շարք հրատարակութիւններ մեծադիր և բաց նամակներով, որոնց ձեռք բերողներին զիջումն է լինում գումարի համեմատ:

Մանրամասնութիւնների համար դիմում են՝ Тифлись, Художественная фототипія С. А. Согомоняна.

## ՄԵՐ ՖՕՏՕՏԻՊ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՆՈՑԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ս. Պետերբուրգում, Նորին Կայսերական Մեծութեան Թագաժառանգի հովանաւորութեան տակ բացուած միջազգային ցուցահանդէսում արժանացան բրօնզեայ մեդալի:

Պարտք ենք համարում յայտնել ի գիտութիւն պ. պ. հեղինակներին, խմբագիրներին, հրատարակիչներին ու այլոց, որոնք կըցանկան, որ իրենց հրատարակութեանց նկարները լինեն շատ մաքուր, կարող են դիմել մեզ:

Ցանձն ենք առնում կատարել յոբելեանական կամ որ և է տօնական հանդէսների կամ երեկոյթների համար զարդաշրջանակներով նկարներ վինետկաներ, նոյնպէս և գրքերի երեսի համար՝ ճաշակաւոր հայկական կամ որ և է այլ ոճով և շատ մատչելի գներով,

Ամենաընտիր—նպատակայարմար տօնական նուէրներ հայ ընտանիքների համար կարող են լինել մեր հետեւեալ հրատարակութիւնները.

Ս. Էջմիածին 30—40 սանտ. մեծութեան—30 կոպ.
Հայ գործիչների բաց նամակներ 100 հատ. 3 ր..
Չքեղ Ալբոմ Գ-րդ պրակ . . . . . 1 ր. 40 կ.
Ա. և Բ. պրակները բոլորովին սպառուած են:
Ադամեան 30—40 սանտ. մեծութեան 30 կոպ.

և այլ ընտիր գեղարուեստական նկարներ՝ մինչև մի րուբլի արժողութեան իւրաքանչիւրը: Թէ որքան մաքուր ու ճաշակաւոր են մեր արհեստանոցի աշխատութիւնները, ապացոյց կարող են լինել ամենակարճ միջոցում հազարաւոր օրինակներով սպառուած մեր շքեղ ալբոմները, և տասնեակ հազարներով բաց նամակները: Աւելի ընդարձակ տեղեկութիւններ կարելի է ստանալ նամակով:

Մեծաքանակ գնողներին կըլինի որոշ զեղջ:

Մեր հասցէն՝ Тифлисъ. Художественная фототипія Гнуни—Маримъ.

## ԿԱԶՄԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

### ԹՈՎՄԱՍ ՏԷՐ ԱՌԱՔԵԼԵԱՆՑԻ

Գանովսկիյ փողոց, տուն Քամոյեանցի № 11, ընդունում է կազմարարական ամեն տեսակի պատուէրներ՝ սկսած բրօշիւրներից մինչև ամենափառայեղ կազմեր՝ շատ չափաւոր գներով:

## Կովկասեան Կենտրոնական Լաբորատորիա

### Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Դոկտոր քիմիական գիտութեանց

—

Ամեն տեսակ հանքերի ու նիւթերի անալիզներ:
Հանքային և մետալուրգիական հետախուզութիւններ և ուսումնասիրութիւններ:
Տեխնիկական փորձեր և խորհուրդներ:
Тифлисъ, Вельяминовская ул. № 19.

# ԹԻՖԼԻՍՈՒՄ


## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

## Բ. Նաւասարդեանի

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հան-դէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

Առաւօտները

Բ. Ա. Նաւասարդեանի—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Չիկովանի—9—10 ժ. մորթու, վեներական և վերաբուժութիւն։

Մ. Գ. Աւետիսեանց—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբու-ժութիւն։

Ջ. Ի. Բարանասեանց—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և ե-րեխայոց հ.

Կ. Ի. Գզելիև—12—1 ժ. ական-ջի, քթի և կոկորդի հ.

Դ. Ա. Թարխանեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեքշ., ուրբաթ։

Ա. Ա. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ, երեքշ. հինգշ. շաբաթ։

Երեկոները

Ն. Ն. Րոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.

Գ. Ս. Լեվի—6—7 ժ. նեար-գային (ելեքտրաբուժութիւն), ներ-քին և վեներական հ.

Կին-բժիշկ Ձերբինինա—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

Գ. Ա. Թարխանեանց—7½—8 ժ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորներին ձրի։ Համախորհուրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի — տանը. ծաղկահաս. և բժշկական մարմնա-մարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝ բժշկապետ Նաւասարդեան

---

ԲԺՇԿԱՊԵՏ

## ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻ

ականջի, քթի և կոկորդի հիւան-դութիւններ

Ընդունելութիւնը

Առաւօտեան 9—10½ ժամը

Երեկոյան 5—7 ժ.

Գանովսկայա, № 26. տ. Թամամ-շեանի։

---

ԲԺՇԿԱՊԵՏ

## Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինօվսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։

---

ԱԿՆԱԲՈՅԺ

## Ց. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Ընդունելութիւնը ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 6

Ա Մադաթեան փ. Արովեանցի տ. № 11 Ալէքսանդրեան այգու դիմաց։

---

ԲԺՇԿԱՊԵՏ

## Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

*Ներքին եւ ջղային հիւանդու-թիւններ*

Ընդունելութիւնը 9—11 ժ. ա-ռաւօտը և 5—7 ժ. երեկոյեան։

Վելեամինօվսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13.

---

ԲԺԻՇԿ

## ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

*Աչքի հիւանդութիւններ*

Ընդունելութիւնը 12½—1½ ժ.

Լաբօրատօրնայա փող. № 11.

**ФАБРИЧНЫЙ СКЛАДЪ**

АКЦІОНЕРНАГО ОБЩЕСТВА

ПИСЧЕБУМАЖНОЙ

ФБАРИКИ

# Г. І. ПАЛЛИЗЕНЪ

Товарищества Ржевской писчебумажной фабрики

акціонернаго общества

**КОШЕЛЕВСКИХЪ ПИСЧЕБУМАЖНЫХЪ ФАБРИКЪ.**

*Тифлисъ—Головинскій просп., д. Манташева*

*Баку—Ольгинская, д. городской управы.*

Бумага почтовая, писчая, книжная, альбомная, бутылочная, печатная, газетная, мундштучная, оберточная, книги, конверты, письменныя и канцелярскія принадлежности. Телефонъ № 67.

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ

# Գ. Ի. ՊԱԼԻԶԵՆԻ

*Թղթի գործարանի ակցիոներական ընկերութեան,*

**Ռժևի թղթի գործարանի ընկերութեան,**

*Կոշելևի թղթի գործարանների ակցիոներական ընկերութեան*

Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպ. տ. Մանթաշեանի,

Բագու, Օլգինսկայա փող., տ. քաղաքային վարչութեան։

Պօստի, գրելու, գրքերի, ալբօմների, տպագրական, լրագրական, մունդշտուկի, փաթաթելու թղթեր, մատեաններ, ծրարներ, գրելու և դիւանական պարագաներ։ Տելեֆօն 67.

0021761
2013
5142
ՀՀ Ազգային գրադարան
NL0021761

Գինն է 1 ռուբլի

Կազմով 1 ր. 25 կոպ.

Փոստային ճանապարհածախսի համար առանձին

25 կոպ.

# „ԼՈՅՍ“

**Օրացոյցերին** աշխատակցել ցանկացողները պէտք է յօդուածներն ուղարկեն մինչև 1904 թ. Մարտ ամսի սկիզբը։

Առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի։ Մնացած դէպքերում վարձատրութեան չափը որոշում է խմբագիրը։

Խմբագիրն իրաւունք ունի յօդուածները փոփոխելու կամ կրճատելու։ Տեղագրական (հայրենական գաւառների, հնութիւնների) յօդուածների հետ պէտք է ուղարկել նաև համապատասխան նկարներ, որպէսզի կարելի լինի յօդուածը պատկերազարդել։

Նոյնանման հրատարակութիւններին անպայման արգելւում է „ԼՈՅՍԻՑ“ արտատպումներ անել։

Բոլոր նիւթերն ու թղթակցութիւնները պէտք է ուղարկել խմբագրի հասցէով՝ Тифлисъ. Троицкая № 11 Е. Топчяну. իսկ արտասահմանից՝ Tiflis. Troizkaia № 11 E. Toptschian.

720 ԹՈՓՉԵԱՆ Ե.

Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1904 թուականի: Տեղեկատու, վիճակագրական, առողջապահական, գրականական, գիտական, գեղարուեստական եւ այլ յաւելուածներով: Թիֆլիս, տպ. Վերիչեւ եւ Կամենմախերի, Òèôëèñ, òèï. Âåðåè÷åâü è Êàìåíìàõåðü, 1903: 504 երեկսյուն, 21 չհ էջ, նկ., շարվ. 20X11,5 սմ, գ. 1 ռ. 25 կոպ.:

ՀԳ: Մ: ՊՀ